1382

ԱՒԵՏԱՐԱՆՔ
ԵՒ
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

22
Ա-79
1884

№ 7

2010

22
Ա-79

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

ԽՆԱՄՈՔ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՅՈՅՆ ԲՆԱԳՐԷ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك رخصتیله
۲۲ ربیع الاول ۳۰۱ و ۱۰ كانون ثانی ۹۹ نومرو ۹۲۶
مصارفی انكلیز بیبل شركتی طرفندن تسویه اولنه‌رق

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻՒՔ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

1884

29580-Կ.Հ

2001

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

12624-58

ՑԱՆԿ

ՉՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ
ԵՒ
ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆ		ԳԼՈՒԽ		ԵՐԵՍ
Ըստ Մատթէոսի	ունի	28	էջէն	1
Ըստ Մարկոսի -	,,	16	,,	90
Ըստ Ղուկասու	,,	24	,,	147
Ըստ Յօհաննու	,,	21	,,	242
Գործք Առաքելոց	,,	28	,,	313

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Յիսուսի Քրիստոսի՝ Դաւթի որդու՝ Աբրահամի
որդու ծննդեան գիրքը։
2 Աբրահամը ծնաւ Իսահակին. Իսահակը ծնաւ
Յակոբին. Յակոբը ծնաւ Յուդային եւ նորա եղ-
3 բայրներին. Յուդան ծնաւ Փարէսին եւ Զարա-
յին Թամարից. Փարէսը ծնաւ Եզրոնին. Եզրոնը
4 ծնաւ Արամին. Արամը ծնաւ Ամինադաբին. Ա-
մինադաբը ծնաւ Նաասոնին. Նաասոնը ծնաւ
5 Սաղմոնին. Սաղմոնը ծնաւ Բոոսին Ռախաբից.
Բոոսը ծնաւ Օբէդին Հռութից. Օբէդը ծնաւ
Յեսսէին. Յեսսէն ծնաւ Դաւիթ թագաւորին։
6 Դաւիթ թագաւորը ծնաւ Սողոմոնին Ուրիայի
7 կնոջից. Սողոմոնը ծնաւ Ռոբովամին. Ռոբովամը
8 ծնաւ Աբիային. Աբիան ծնաւ Ասային. Ասան
ծնաւ Յոսափատին. Յոսափատը ծնաւ Յորամին.
9 Յորամը ծնաւ Ոզիային. Ոզիան ծնաւ Յովա-
թամին. Յովաթամը ծնաւ Աքազին. Աքազը
10 ծնաւ Եզեկիային. Եզեկիան ծնաւ Մանասէին.
Մանասէն ծնաւ Ամոնին. Ամոնը ծնաւ Յօսիա-
11 յին։ Յօսիան ծնաւ Յեքոնիային՝ եւ նորա եղ-
բայրներին, Բաբելոնի գերութեան ժամանակին։
12 Բաբելոնի գերութիւնից յետոյ Յեքոնիան ծնաւ

Սաղաթիէլին. Սաղաթիէլը ծնաւ Զօրաբաբէլին։
13 Զօրաբաբէլը ծնաւ Աբիուդին. Աբիուդը ծնաւ
14 Եղիակիմին. Եղիակիմը ծնաւ Ազօրին. Ազօրը
ծնաւ Սադօկին. Սադօկը ծնաւ Աքիմին. Աքիմը
15 ծնաւ Եղիուդին. Եղիուդ ծնաւ Եղիազարին.
Եղիազարը ծնաւ Մատթանին. Մատթանը ծնաւ
16 Յակոբին. Յակոբը ծնաւ Յովսէփին՝ Մարիամի
մարդին, որից ծնուեցաւ Յիսուսը, որ ասւում է
17 Քրիստոս։ Արդ՝ բոլոր ազգերը Աբրահամից մին-
չեւ Դաւիթ տասնուչորս ազգ են, եւ Դաւիթից
մինչեւ Բաբիլոնի գերութիւնը տասնուչորս ազգ,
եւ Բաբիլոնի գերութիւնից մինչեւ Քրիստոս
տասնուչորս ազգ։
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն այսպէս էր.
այսինքն նորա մայրը՝ Մարիամ նշանուած լինե-
լով Յովսէփին՝ դեռ մինչեւ նորանց իրար մօտ
19 գալը Սուրբ Հոգուցը յղացած գտնուեցաւ։ Եւ
Յովսէփ նորա մարդը արդար լինելով, եւ նորան
խայտառակել չուզելով, խորհեց ծածուկ արձա-
20 կել նորան։ Եւ մինչդեռ նա մտածում էր այս,
ահա Տիրոջ հրեշտակն երազում երեւեցաւ նո-
րան եւ ասաց. Յովսէփ՝ Դաւթի որդի, մի վա-
խենար քեզ մօտ առնել քո կին՝ Մարիամին, վասն
21 զի նորանում ծնուածը Սուրբ Հոգուցն է։ Եւ
նա որդի կ՚ծնի, եւ նորա անունը Յիսուս դնես.
վասն զի նա իր ժողովրդին կ՚փրկէ իրանց մեղ-
22 քերիցը։ Եւ այս ամենը եղաւ, որ կատարուի
Տիրոջից ասուածը մարգարէի ձեռովն, որ աս-
23 ում է. Ահա՛ կոյսը կ՚յղանայ եւ որդի կ՚ծնի. եւ
նորա անունը Էմմանուէլ կ՚կանչեն. որ թարգ-
24 մանւում է՝ Աստուած մեզ հետ։ Եւ Յովսէփը
քնիցը զարթնելով այնպէս արաւ, ինչպէս Տիրոջ

ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

հրեշտակը հրամայեց իրան. եւ առաւ իր կինը
25 իր մօտ։ Եւ չէր գիտում նորան մինչեւ որ նա
իր անդրանիկ որդին ծնաւ. եւ նորա անունը
կոչեց Յիսուս։

ԳԼ. Բ

1 Եւ երբոր Յիսուս ծնուեցաւ Հրէաստանի Բեթ-
ղէհէմումը՝ Հերովդէս թագաւորի օրերումը, ահա
2 արեւելքից մոգեր եկան Երուսաղէմ, Եւ ասա-
ցին. Ո՞րտեղ է Հրէաների ծնուած թագաւորը.
վասն զի մենք տեսանք նորա աստղը արեւելք-
3 ումը, եւ եկանք նորան երկրպագելու։ Եւ երբոր
Հերովդէս թագաւորը լսեց՝ շփոթուեցաւ, եւ բոլոր
4 Երուսաղէմը նորա հետ։ Եւ բոլոր քահանայա-
պետներին եւ ժողովրդի դպիրներին ժողովելով՝
նորանցից հարցրեց, թէ ո՞ր տեղ պիտի ծնուի
5 Քրիստոսը։ Եւ նորանք ասացին նորան. Հրէ-
աստանի Բեթղէհէմումը. վասն զի այսպէս է
6 գրուած մարգարէի ձեռովն. Եւ դու, Բեթղէ-
հէմ՝ Յուդայի երկիր, բնաւ փոքրագոյն չես Յու-
դայի իշխանների մէջ. վասն զի քեզանից իշ-
խան պիտի դուրս գայ, որ իմ Իսրայէլ ժողո-
7 վուրդը հովուէ։ Այն ժամանակ Հերովդէսը մոգե-
րին թագուն կանչելով, նորանցից ստուգեց այն
8 երեւող աստղի ժամանակը։ Եւ նորանց Բեթ-
ղէհէմ ուղարկելով ասաց. Գնացէք ստոյգ իմա-
ցէք այն երեխայի համար, եւ երբոր գտնէք,
ինձ իմացրէք, որ ես էլ գամ երկրպագեմ նո-
9 րան։ Եւ նորանք՝ երբոր լսեցին թագաւորիցը՝
գնացին. եւ ահա՛ այն աստղն, որ տեսան արեւ-
ելքումը, նորանց առջեւ գնում էր, մինչեւ որ

եկաւ կանգնեց այն տեղի վերայ, ուր էր երե-
10 խան։ Եւ երբոր այն աստղը տեսան, մեծ ու-
11 րախութիւնով ուրախացան շատ։ Եւ երբոր
տունը մտան, *գտան երեխային իր մայր՝ Մա-
րիամի հետ, եւ ընկած երկրպագեցին նորան,
եւ իրանց գանձերը բացին՝ ընծայ տւին նորան՝
12 ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս։ Եւ երազում հը-
րաման առին յետ չդառնալ Հերովդէսի մօտ. և-
ւրիշ ճանապարհով գնացին իրանց երկիրը։
13 Եւ երբոր նորանք այն տեղից գնացին. ահա
Տիրոջ հրեշտակն երեւեցաւ երազում Յովսէփին
եւ ասաց. Վեր կաց վեր առ երեխային եւ նորա
մօրը, եւ փախիր Եգիպտոս, եւ մնա այնտեղ,
մինչեւ որ ասեմ քեզ. վասն զի Հերովդէսը որո-
14 նելու է այդ երեխային որ կորցնէ նորան։ Եւ
նա վեր կացաւ վեր առաւ երեխային եւ նորա
մօրը գիշերով, եւ տեղափոխուեցաւ գնաց Եգիպ-
տոս, եւ այնտեղ էր մինչեւ Հերովդէսի վախճա-
15 նը. Որ կատարուի Տիրոջից ասուածը մարգա-
րէի ձեռովը, որ ասում է. Եգիպտոսից կանչեցի
իմ որդին։
16 Այն ժամանակ Հերովդէսը տեսնելով թէ խաբ-
ուեցաւ մոգերից, շատ բարկացաւ. եւ ուղար-
կեց կոտորեց այն ամեն երեխաներին, որ Բեթ-
ղեհէմում եւ նորա չորս կողմերումն էին երկու-
տարեկաններին եւ նորանից ցածերը, այն ժամա-
17 նակին նայելով որ ստուգեց մոգերից։ Այն ժա-
մանակ կատարուեցաւ Երեմիա մարգարէի ձե-
18 ռով ասածն, որ ասում է. Ձայն լսուեցաւ Հը-
ռամայի մէջ՝ ողբ եւ լաց եւ կոծ. Հռաքէլը

*Ոմանք՝ տեսան

իր որդոց վերայ լաց էր լինում, եւ չէր կամե-
նում մխիթարուել, վասն զի չկան։
19 Եւ երբոր Հերովդէսը մեռաւ, ահա Տիրոջ հը-
րեշտակն երազում երեւեցաւ Յովսէփին Եգիպ-
20 տոսումը, Եւ ասաց. Վեր կաց վեր առ երեխա-
յին եւ նորա մօրը եւ գնա Իսրայէլի երկիրը.
քանզի երեխայի կեանքը որոնողները մեռել են։
21 Եւ նա վեր կացաւ վեր առաւ երեխային եւ նո-
22 րա մօրը եւ եկաւ Իսրայէլի երկիրը։ Եւ լսելով
թէ Արքեղայոսն է թագաւորում Հրէաստանի
վերայ իր հօր՝ Հերովդէսի տեղ, վախեց գնալ այն
տեղ, եւ երազում պատգամ առնելով՝ գնաց Գա-
23 լիլեայի կողմերը. եւ եկաւ բնակեց այն քաղա-
քում՝ որ Նազարէթ է ասւում, որ կատարուի
մարգարէների ձեռով ասուածը թէ՝ Նազօրեցի
կ'կոչուի։

Գլ. Գ

1 Այն օրերումն եկաւ Յովհաննէս մկրտիչը քա-
2 րոզում էր Հրէաստանի անապատումը, Եւ աս-
ում. Ապաշխարեցէք, վասն զի մօտեցել է եր-
3 կնքի թագաւորութիւնը։ Վասն զի սա է այն
ասուածը Եսայի մարգարէի ձեռովը, որ ասում
է. Ձայն կանչողի անապատումը. պատրաստ ա-
րէք Տիրոջ ճանապարհը, ուղիղ արէք նորա շա-
4 ւիղները։ Եւ ինքն Յովհաննէս իր հագուստը ու-
նէր ուղտի բրդից, եւ կաշիէ գօտիկ իր մէջքին,
եւ նորա կերակուրն էր մարախ եւ վայրի մեղր։
5 Այն ժամանակ դուրս էին գնում նորա մօտ Ե-
րուսաղէմը եւ բոլոր Հրէաստանը եւ Յորդանա-
6 նի բոլոր կողմերը, Եւ մկրտւում էին Յորդանա-

նի մէջ նորանից՝ իրանց մեղքերը խոստովանե-
7 լով։ Եւ երբոր տեսաւ որ Փարիսեցիներից եւ
Սադուկեցիներից շատերը գալիս էին իր մկր-
տութեանը, ասաց նորանց. Իժի զաւակներ, ո՞վ
ցոյց տուեց ձեզ փախչիլ այն գալու բարկու-
8 թիւնիցը։ Արդ ապաշխարութեան արժանի պը-
9 տուղ արէք։ Եւ մի կարծէք ասել ձեր միջումը՝
Մենք հայր ունինք Աբրահամին. վասն զի աս-
ում եմ ձեզ, թէ Աստուած կարող է այս քարե-
10 րից որդիք յարուցանել Աբրահամի համար։ Ար-
դէն կացինն էլ ծառերի արմատին դրած է. արդ
ամեն ծառ որ բարի պտուղ չէ բերում, կ՚կըտ-
11 րուի ու կրակի մէջ կ՚գցուի։ Ես ջրով եմ մկր-
տում ձեզ ապաշխարութեան համար. բայց իմ
ետեւից եկողն ինձանից զօրաւոր է, որի կօշիկ-
ները վեր առնելու ես արժանի չեմ. նա ձեզ կը
12 մկրտէ Սուրբ Հոգով եւ կրակով։ Որ հասելին
նորա ձեռին է, եւ կ՚սրբէ իր կալը եւ իր ցորե-
նը կ՚հաւաքէ շտեմարանը, իսկ յարդը կ՚այրէ
անանցանելի կրակով։
13 Այն ժամանակ եկաւ Յիսուսը Գալիլեայից
Յորդանան Յօհաննէսի մօտ նորանից մկրտուե-
14 լու։ Եւ Յօհաննէսն արգելում էր նորան եւ աս-
ում. Ինձ պէտք է քեզանից մկրտուիլ, եւ դու
15 ի՞նձ մօտ ես գալիս։ Եւ Յիսուսը պատասխան
տուաւ եւ ասաց նորան. Թող տուր հիմա, վասն
զի այսպէս է վայելում մեզ, որ ամեն արդա-
16 րութիւն կատարենք։ Յայնժամ թող տուաւ նո-
րան։ Եւ մկրտուելուց յետոյ Յիսուսը շուտով
դուրս եկաւ ջրիցը. եւ ահա երկինքը բացուե-
ցաւ նորա համար, եւ տեսաւ Աստուծոյ Հո-
գուն որ վայր էր իջնում աղաւնու պէս եւ

17 գալիս նորա վերայ։ Եւ ահա երկնքից ձայն
էկաւ, որ ասում էր. Դա է իմ սիրելի Որդին,
որին հաւանեցի։

Գլ. Դ

1 Այն ժամանակ Յիսուսը Հոգուցն անապատը
2 տարուեցաւ, որ փորձուի սատանայից։ Եւ քա-
ռասուն օր եւ քառասուն գիշեր ծոմ պահելուց
3 յետոյ սովեց։ Եւ փորձիչը նորա մօտ գալով ա-
սաց. Եթէ Աստուծոյ Որդի ես, ասա որ այս
4 քարերը հաց լինին։ Նա էլ պատասխան տուաւ
եւ ասաց. Գրուած է՝ Ոչ միայն հացով կ՚ապրի
մարդ, այլ ամեն խօսքով, որ դուրս է գալիս
Աստուծոյ բերանից։
5 Այն ժամանակ սատանան նորան տարաւ տա-
րաւ սուրբ քաղաքը, եւ կանգնեցրեց նորան
6 տաճարի աշտարակի վերայ, Եւ ասաց նորան.
Եթէ Աստուծոյ Որդի ես, քեզ այս տեղից վայր
գցիր. վասն զի գրուած է՝ Թէ իր հրեշտակնե-
րին կ՚հրամայէ քեզ համար, եւ ձեռների վերայ
կ՚բարձրացնեն քեզ, որ քո ոտքը քարի չդիպ-
7 չընես երբէք։ Յիսուսը նորան ասաց. Դարձեալ
գրուած է. թէ Մի փորձիր Տիրոջը՝ քո Աստու-
ծոյն։
8 Դարձեալ առաւ տարաւ նորան սատանան մի
շատ բարձր լեառ՝ եւ ցոյց տուաւ նորան աշ-
խարհքի բոլոր թագաւորութիւնները եւ նորանց
9 փառքը, Եւ ասաց նորան. Սորանց ամենը քեզ
10 կ՚տամ, եթէ ընկած երկրպագես ինձ։ Այն ժա-
մանակ ասաց նորան Յիսուսը. *Գնա՛ գնա, սա-

*Ոմանք՝ յետս

տանայ. վասն զի գրուած է թէ Տիրոջը՝ քո Աս-
տուծոյն երկրպագիր և միայն նորան պաշտիր։
11 Այն ժամանակ սատանան թողեց նորան, և ա-
հա հրեշտակներ մօտ եկան և ծառայում էին
նորան։
12 Եւ երբոր Յիսուսը լսեց, թէ Յօհաննէսը մատ-
13 նուեցաւ, հեռացաւ գնաց Գալիլեա։ Եւ Նազա-
րէթը թողած եկաւ բնակեց Կափառնայում՝ ծո-
վեզերեայ քաղաքումը. Զաբուղօնի և Նեփթաղի-
14 մի սահմաններումը. Որ կատարուի Եսայի մար-
15 գարէի ձեռով ասուածը, որ ասում է. Զաբու-
ղօնի երկիրը և Նեփթաղիմի երկիրը՝ ծովու ճա-
նապարհը՝ Յորդանանի այն կողմը, հեթանոսաց
16 Գալիլեան. ժողովուրդն, որ խաւարի մէջ նստած
էր, մեծ լոյս տեսաւ. և նորանց՝ որ մահի երկրու-
17 մը և ստուերումը նստած էին, լոյս ծագեց։ Այն
ժամանակից Յիսուսն սկսեց քարոզել և ասել.
Ապաշխարեցէք, վասն զի մօտեցել է երկնքի
թագաւորութիւնը։
18 Եւ Յիսուսը Գալիլեացոց ծովի եզրում ման
գալիս՝ տեսաւ երկու եղբարց՝ Սիմօնին որ Պետ-
րոս է կոչուած, և նորա Անդրէաս եղբօրը, որ
ուռկան էին գցում ծովը, վասն զի ձկնորս էին.
19 Եւ ասաց նորանց. Իմ ետեւից եկէք, և ձեզ
20 մարդկանց որսորդ կ՚շինեմ։ Եւ նորանք շուտով
իրանց ուռկանները թողած նորա ետեւից գնա-
21 ցին։ Եւ այնտեղից առաջ գնալով ուրիշ երկու
եղբայրներին տեսաւ, Զեբեդեան Յակոբսին և
նորա եղբայր Յօհաննէսին նաւումն իրանց հայր՝
Զեբեդէոսի հետ իրանց ուռկանները շինելիս,
22 և նորանց կանչեց։ Նորանք էլ շուտով նաւն
և իրանց հօրը թողած, նորա ետեւից գնացին։

23 Եւ Յիսուսը ման էր գալիս բոլոր Գալիլեան՝
սովորեցնելով նորանց ժողովարաններումը և
քարոզելով արքայութեան աւետարանը, և ժո-
ղովրդի մէջ եղած ամեն հիւանդութիւն և ա-
24 մեն ցաւ բժշկելով։ Եւ նորա համբաւը դուրս
եկաւ բոլոր Սիւրիա. և նորա մօտ բերին ամեն
հիւանդներին որ կերպ կերպ ցաւերով և տան-
ջանքներով նեղվում էին, և դիւահարներ և
լուսնոտներ և անդամալոյծներ, և նորանց բը-
25 ժշկեց։ Եւ նորա ետեւից շատ ժողովուրդներ
էին գնում Գալիլեայից և Դեկապօլիսից՝ և Ե-
րուսաղէմից և Հրէաստանից և Յորդանանի
այն կողմից։

ԳԼ. Ե

1 Եւ ժողովուրդները տեսնելով վեր ելաւ լեառը.
և երբոր նստեց, նորա աշակերտներն ե-
2 կան նորա մօտ։ Եւ իր բերանը բանալով նորանց
սովորեցնում էր և ասում.
3 Երանի հոգով աղքատներին, վասն զի նորանցն
4 է երկնից թագաւորութիւնը։ Երանի սգաւորնե-
5 րին, վասն զի նորանք կ՚մխիթարուին։ Երանի
հեզերին, վասն զի նորանք կ՚ժառանգեն երկի-
6 րը։ Երանի նորանց, որ սոված և ծարաւ են
արդարութեան, վասն զի նորանք կ՚կշտանան։
7 Երանի ողորմածներին, վասն զի նորանք ողոր-
8 մութիւն կ՚գտնեն։ Երանի նորանց, որ սրտով
մաքուր են, վասն զի նորանք Աստուծոյն կը
9 տեսնեն։ Երանի խաղաղութիւն անողներին,
վասն զի նորանք Աստուծոյ որդիք կ՚կոչուին։
10 Երանի նորանց՝ որ արդարութեան համար հա-

լածուած են, վասն զի նորանցն է երկնից ար-
11 քայութիւնը։ Երանի է ձեզ, երբոր կ'նախատեն
ձեզ եւ կ'հալածեն եւ ամեն չար բան սուտ տե-
12 ղը կ'ասեն ձեր վերայ իմ պատճառովը։ Ուրա-
խացէք եւ ցնծացէք, վասն զի ձեր վարձքը շատ
է երկնքումը. որովհետեւ այսպէս հալածեցին
մարգարէներին, որ ձեզանից առաջ կային։
13 Դուք էք երկրի աղը. եթէ աղն անհամանայ,
ի՞նչով կ'աղանուի. այլ եւս ոչինչի պէտք չէ, մի-
այն թէ դուրս ձգուի եւ մարդկանցից ոտնակոխ
14 լինի։ Դուք էք աշխարհքի լոյսը. չէ կարող
թաքչել մի քաղաք, որ լեռան վերայ կենում է։
15 Եւ ճրագը չեն վառել եւ դնել գրուանի տակ,
այլ ճրագակալի վերայ, եւ լոյս կ'տայ ամենին՝
16 որ տան մէջ են։ Այսպէս լուսաւորէ ձեր լոյսը
մարդկանց առջեւ, որ ձեր բարի գործքերը տես-
նեն, եւ փառաւորեն ձեր Հօրն որ երկնքումն է։
17 Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգա-
րէները քանդելու. չեկայ քանդելու, այլ կատա-
18 րելու։ Վասն զի ճշմարիտ ասում եմ ձեզ, մին-
չեւ երկինքն եւ երկիրը անց կենան, օրէնքիցն
մէկ կէտ կամ մէկ պզտիկ նշանագիր չի անցնիլ
19 մինչեւ որ բոլորը կատարուի։ Արդ՝ ով որ այս
ամենափոքր պատուիրանքներից մէկը քանդէ եւ
մարդկանց այնպէս սովորեցնէ, նա փոքրագոյն
20 կ'կոչուի երկնից արքայութիւնումը։ Վասն զի ա-
սում եմ ձեզ. Եթէ չաւելանայ ձեր արդարու-
թիւնը աւելի քան դպիրներինը եւ փարիսեցինե-
րինը, բնաւ չէք մտնիլ երկնից արքայութիւնը։
21 Լսել էք, որ առաջիններին ասուեցաւ. Մի
սպանիր, եւ ով որ սպանէ, պարտական կը
22 լինի դատաստանին։ Բայց ես ասում եմ ձեզ՝

թէ ամեն ով որ զուր տեղը բարկանայ իր եղ-
բօրը, պարտական կ'լինի դատաստանին. եւ ով
որ իր եղբօրն ասէ Ցիմար, պարտական կ'լինի
ատեանին. եւ ով որ իր եղբօրն ասէ՝ Մորոս,
23 պարտական կ'լինի գեհենի կրակին։ Արդ՝ եթէ
մատուցանես սեղանի վերայ քո ընծան, եւ այն
տեղ յիշես, թէ քո եղբայրն քեզ դէմ մէկ բան
24 ունի, Թող այնտեղ քո ընծան սեղանի առջեւ.
եւ գնա առաջ հաշտուիր քո եղբօր հետ. եւ յե-
25 տոյ եկ ընծադ մատուցրու։ Քո ոսոխի հետ շու-
տով միաբանուիր, քանի որ նորա հետ ճանա-
պարհումն ես. որ մի գուցէ ոսոխը քեզ դատա-
ւորին մատնէ, եւ դատաւորը քեզ մատնէ դահ-
26 ճին, եւ բանտը գցուիս։ Ճշմարիտ ասում եմ
քեզ. Դուրս չես գալ այնտեղից, մինչեւ որ վեր-
ջի նաքարակիտը վճարես։
27 Լսել էք որ ասուեցաւ առաջիններին. Մի Շը-
28 նութիւն մի՛ անիր։ Բայց ես ասում եմ ձեզ.
թէ Ամեն ով որ մի կնոջ վերայ մտիկ տայ նո-
րան ցանկանալու համար, նա արդէն շնացաւ
29 նորա հետ իր սրտի մէջ։ Եւ եթէ քո աջ աչքը
գայթակղեցնում է քեզ, հանիր նորան եւ քեզա-
նից դէն գցիր, վասն զի լաւ է քեզ համար, որ
քո անդամներից մէկը կորչի, եւ քո բոլոր մար-
30 մինը չգցուի գեհենը։ Եւ եթէ քո աջ ձեռքը
գայթակղեցնում է քեզ, կտրիր նորան եւ քեզա-
նից դէն գցիր. վասն զի լաւ է քեզ համար՝ որ
քո անդամներից մէկը կորչի, եւ քո բոլոր մար-
31 մինը չգցուի գեհենը։ Այս էլ ասուեցաւ՝ թէ Ով
որ իր կինը արձակէ, Թող արձակման թուղթ
32 տայ նորան. Բայց ես ասում եմ ձեզ. թէ Ով որ
իր կինը արձակէ առանց պոռնկութեան պատ-

ճառի, նա նորան շնութիւն անել է տալիս. և
ով որ մի արձակածին առնէ, շնութիւն է ա-
նում։
33 Դարձեալ լսել էք՝ որ ասուեցաւ առաջիննե-
րին. Սուտ երդում մի անիր, բայց Տիրոջը վը-
34 ճարիր քո երդմունքը։ Բայց ես ասում եմ ձեզ.
Բնաւ երդում մի՛ անիր. ոչ երկնքովն՝ վասն զի
35 աթոռ է Աստուծոյ. Եւ ոչ երկրովը՝ վասն զի
պատուանդան է նորա ոտքերի. և ոչ Երուսա-
ղէմովն՝ վասն զի քաղաք է մեծ թագաւորի։
36 Եւ ո՛չ քո գլխովն երդում արա՝ վասն զի կարող
37 չես մէկ մազ սպիտակ անել կամ սև։ Բայց
ձեր խօսքը լինի, այո այո և ոչ ոչ. և սորա-
նից աւելին չարիցն է։
38 Լսել էք՝ որ ասուեցաւ աչք աչքի տեղ, և
39 ատամ ատամի տեղ։ Բայց ես ասում եմ ձեզ.
Չարին հակառակ մի կենաք, այլ ով որ ապտակ
տայ քո աջ երեսին, միւսն էլ նորան դարձրու։
40 Եւ ով որ ուզէ քեզ հետ դատ վարել և քո շա-
պիկն առնել, քո բաճկոնն էլ թող նորա մօտ։
41 Եւ ով որ քեզ պահակ բռնած մէկ մղոն քշէ,
42 նորա հետ երկուսը գնա։ Քեզանից բան ուզողին
տուր. քեզանից փոխ առնել կամեցողից երես
մի դարձնիր։
43 Լսել էք որ ասուեցաւ, քո ընկերին սիրիր,
44 և քո թշնամուն ատիր։ Բայց ես ասում եմ ձեզ.
Սիրեցէք ձեր թշնամիներին. օրհնեցէք ձեզ ա-
նիծողներին. բարի արէք ձեզ ատողներին. և
աղօթք արէք ձեզ չարչարողների և ձեզ հալա-
45 ծողների համար. Որ որդիք լինիք ձեր Հօրն,
որ երկնքումն է. վասն զի նա իր արեգակը ծա-
գեցնում է չարերի և բարիների վերայ, և անձ-

րև է ածում արդարների և անիրաւների վե-
46 րայ։ Որովհետև՝ եթէ ձեզ սիրողներին սիրէք,
ի՞նչ վարձք ունիք. չէ՞ որ մաքսաւորներն էլ
47 նոյնն են անում։ Եւ եթէ միայն ձեր եղբայր-
ներին բարև տաք, ի՞նչ աւելի բան էք անում.
չէ՞ որ մաքսաւորներն էլ են այնպէս անում։
48 Արդ դուք կատարեալ եղիք, ինչպէս ձեր Հայրը
որ երկնքումն է, կատարեալ է։

Գլ. Զ

1 Զգոյշ կացէք, որ ձեր ողորմութիւնը մարդկանց
առջև չանէք, նորանցից տեսնուելու համար,
եթէ ոչ՝ վարձք չունիք ձեր Հօրից որ երկըն-
2 քումն է։ Արդ՝ երբոր ողորմութիւն անես, փող
մի հնչեցնիր քո առջևը. ինչպէս կեղծաւորներն
են անում ժողովարանների մէջ և փողոցների
մէջ, որ փառաւորուին մարդկանցից. ճշմարիտ
ասում եմ ձեզ. նորանք իրանց վարձքն առած
3 են։ Բայց դու երբոր ողորմութիւն անես, թող
չիմանայ քո ձախ ձեռը, թէ ինչ է գործում քո
4 աջը. Որպէս զի քո ողորմութիւնը ծածուկ լի-
նի, և քո Հայրն՝ որ ծածուկ տեղը տեսնում է,
յայտնապէս կ'հատուցանէ քեզ։
5 Եւ երբոր աղօթք անես, չլինիս ինչպէս կեղ-
ծաւորները, վասն զի նորանք սիրում են ժողո-
վարանների մէջ և հրապարակների անկիւննե-
րումը կանգնած աղօթք անել, որ երևան մարդ-
կանց։ Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նորանք
6 իրանց վարձքն առած են։ Բայց դու երբոր
աղօթք անես, մտիր քո սենեակը և դուռդ փա-
կած աղօթք արա դէպի քո Հայրը, որ ծածու-

կումն է. եւ քո Հայրն՝ որ ծածուկ տեղը տես-
7 նում է, յայտնապէս կ'հատուցանէ քեզ։ Եւ ա-
ղօթք անելիս շատախօս մի լինիք ինչպէս հե-
թանոսները, վասն զի նորանք կարծում են, թէ
8 իրանց շատ խօսելու համար կ'լսուին։ Արդ նո-
րանց մի նմանիք. վասն զի ձեր Հայրը գիտէ
թէ ի՞նչ բաներ պէտք են ձեզ, ձեր նորանից
9 խնդրելուցն առաջ։ Արդ դուք այսպէս աղօթք
արէք.

Մեր Հայր, որ երկնքումն ես. սուրբ լինի քո
10 անունը. Գայ քո արքայութիւնը, լինի քո կամ-
քը, ինչպէս երկնքումն՝ այնպէս էլ երկրի վերայ։
11 Մեր ամեն օրուայ հացն տուր մեզ այսօր։ (12) Եւ
թող մեզ մեր պարտքերը, ինչպէս մենք էլ թող-
13 ում ենք մեր պարտականներին։ Եւ մի տանիր
մեզ փորձութեան մէջ. այլ ազատիր մեզ չարի-
ցը. վասն զի քո է թագաւորութիւնը եւ զօրու-
թիւնը եւ փառքը յաւիտեան. Ամէն։
14 Վասն զի եթէ դուք մարդկանց իրանց յան-
ցանքները թողէք, կ'թողէ ձեզ էլ ձեր երկնա-
15 ւոր Հայրը։ Իսկ եթէ դուք մարդկանց չէք թո-
ղիլ նորանց յանցանքները, ձեր Հայրն էլ չի թո-
ղիլ ձեր յանցանքները։
16 Եւ երբոր ծոմ էք պահում, տրտում մի լինիք
ինչպէս կեղծաւորները, վասն զի նորանք իրանց
երեսները տխրեցնում են, որ մարդկանց ծոմ
պահող երեւան. ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ
17 նորանք իրանց վարձքն առած են։ Բայց դու ծոմ
պահելիս, իւղով օծիր քո գլուխը եւ երեսդ լուա.
18 Որ մարդկանց չերեւաս ծոմ պահող, այլ քո Հօրը՝
որ ծածուկումն է. եւ քո Հայրն, որ ծածուկ տեղը
տեսնում է, յայտնապէս կ'հատուցանէ քեզ։

19 Ձեզ համար գանձեր մի դիզէք երկրիս վերայ.
ուր որ ցեցն եւ ժանիկն ապականում են, եւ ուր
20 որ գողերը պատը ծակում են եւ գողանում։ Բայց
ձեզ համար գանձեր դիզեցէք երկնքումը, ուր
ո՛չ ցեց եւ ո՛չ ժանիկ չեն ապականում, եւ ուր
որ գողերը պատը չեն ծակում եւ չեն գողանում։
21 Վասն զի ինչ տեղ որ ձեր գանձն է, այնտեղ կը
22 լինի եւ ձեր սիրտը։ Մարմնոյ ճրագն աչքն է.
արդ թէ որ քո աչքն պարզ լինի, քո բոլոր
23 մարմինը լուսաւոր կ'լինի։ Բայց թէ որ քո աչ-
քը չար լինի, քո բոլոր մարմինը խաւար կ'լինի։
Ուրեմն՝ այն լոյսն՝ որ քեզանում է՝ խաւար է,
24 այս խաւարն ո՞րքան աւելի։ Ոչ ով չէ կարող
երկու տէրերի ծառայել. վասն զի կամ մէկին
կ'ատէ՝ եւ միւսին կ'սիրէ, կամ մէկին կ'մեծարէ
եւ միւսին կ'արհամարհէ։ Չէք կարող Աստու-
25 ծոյն ծառայել եւ մամոնային։ Սորա համար աս-
ում եմ ձեզ. Հոգս մի՛ անէք ձեր անձի համար թէ
ի՞նչ պիտի ուտէք, եւ ի՞նչ պիտի խմէք. եւ ո՛չ
ձեր մարմնոյ համար՝ թէ ի՞նչ պիտի հագնիք։
Չէ՞ որ հոգին աւելի է կերակուրից, եւ մար-
26 մինը հագուստից։ Մտիկ արէք երկնքի թռ-
չուններին, որ չեն սերմանում, եւ ոչ էլ հնձում,
եւ ոչ ամբարների մէջ ժողովում, եւ ձեր երկ-
նաւոր Հայրը կերակրում է նորանց. չէ՞ որ դուք
27 նորանցից աւելի լաւ էք։ Հիմա՝ ձեզանից ո՞վ
կարող է հոգս անելով իր հասակի վերայ մէկ
28 կանգուն աւելացնել։ Եւ հագուստի համար ի՞նչ
էք հոգս անում. Մտիկ արէք դաշտի շուշաննե-
րին, թէ ինչպէս են մեծանում. ոչ ջանք են ան-
29 ում՝ եւ ոչ մանում։ Բայց ասում եմ ձեզ. թէ
Սողոմոնն էլ իր բոլոր փառքի մէջ նորանց մէկի

30 նման չհագաւ։ Իսկ թէ որ դաշտի խոտը, որ
այսօր կայ եւ էգուց փուռն է գցվում, Աստուած
այնպէս է հագցնում, չէ՞ որ շատ աւելի ձեզ,
31 թերահաւատներ։ Ուրեմն հոգս մի անէք ասե-
լով. Թէ ի՞նչ պիտի ուտենք, կամ ի՞նչ պիտի խը-
32 մենք, կամ ի՞նչ պիտի հագնենք։ Վասն զի այդ
ամենքը հեթանոսներն են խնդրում. որովհետեւ
գիտէ ձեր երկնաւոր Հայրը, թէ այդ ամենքը
33 պէտք է ձեզ։ Սակայն առաջ Աստուծոյ արքա-
յութիւնը եւ նորա արդարութիւնը խնդրեցէք.
34 եւ այդ ամենքը կ'տրուի ձեզ։ Ուրեմն էգուց-
վայ համար հոգս մի անէք, վասն զի էգուցվայ
օրն իր համար հոգս կ'անէ. օրի համար բաւա-
կան է իր նեղութիւնը։

ԳԼ. Է

1 Մի դատէք, որ չդատուիք։ (2) Վասն զի ինչ
դատաստանով որ դատում էք, նորանով պիտի
դատուիք. եւ ինչ չափով որ չափում էք, նորա-
3 նով կ'չափուի ձեզ։ Եւ ինչո՞ւ քո եղբօր աչքի
միջի ծեղը տեսնում ես, եւ քո աչքի միջի գե-
4 րանը չես նշմարում։ Կամ ի՞նչպէս կ'ասես քո
եղբօրը. Թող աչքիցդ ծեղը հանեմ, եւ ահա
5 գերանը քո աչքի մէջ է։ Կեղծաւոր, առաջ քո
աչքիցը գերանը հանիր, եւ յետոյ մտիկ կ'տաս
քո եղբօր աչքիցը ծեղը հանելու։
6 Սուրբ բանը մի տաք շներին, ոչ էլ գցեցէք
ձեր մարգարիտները խոզերի առջեւ. որ նորանց
կոխ չտան իրանց ոտքերովը եւ յետ դառնան ձեզ
պատառեն։
7 Խնդրեցէք եւ կ'տրուի ձեզ. որոնեցէք եւ կը

8 գտնէք, — թակեցէք եւ կ'բացուի ձեզ։ Վա-
սըն զի ամեն խնդրող առնում է, եւ որոնողը
9 գտնում է. եւ — թակողին կ'բացուի։ Կամ
ո՞վ է ձեզանից այն մարդն, որ եթէ նորանից իր
10 որդին հաց ուզէ, միթէ քա՞ր կ'տայ նորան։ Եւ
11 եթէ ձուկ ուզէ, միթէ օ՞ձ կ'տայ նորան։ Արդ՝
եթէ դուք չար լինելով, գիտէք բարի պարգեւ-
ներ տալ ձեր որդոցն, ո՞րքան աւելի ձեր Հայ-
րըն, որ երկնքումն է, բարիքներ կ'տայ նորանց,
որ խնդրում են իրանից։
12 Ամեն ինչ՝ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն
մարդիկը, այնպէս էլ դուք արէք նորանց. վասն
13 զի այս է օրէնքը եւ մարգարէքը։ Նեղ դռնովը
ներս մտէք. վասն զի լայն է դուռը եւ ընդար-
ձակ ճանապարհը՝ որ կորուստն է տանում. եւ
14 շատեր են նորանով գնացողները։ *Քանի՜ նեղ է
դուռը՝ եւ նեղուածք է ճանապարհը, որ կեան-
քըն է տանում. եւ քիչ են նորան գտնողները։
15 Զգոյշ կացէք սուտ մարգարէներիցն, որ գա-
լիս են ձեզ մօտ ոչխարների հանդերձներով, բայց
16 ներսեւանց յափշտակող գայլեր են։ Իրանց պը-
տուղներիցը նորանց †ճանաչեցէք. միթէ փշե-
րից խաղող են քաղում. կամ տատասկից թուզ։
17 Այսպէս ամեն բարի ծառ բարի պտուղ է բե-
18 րում, եւ չար ծառը չար պտուղ է բերում։ Չէ
կարող բարի ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար
19 ծառը բարի պտուղ բերել։ Ամեն ծառ որ բարի
պտուղ չէ բերում, կտրվում է եւ կրակի մէջ
20 գցվում։ Ուրեմն իրանց պտուղներիցը †ճանա-
չեցէք նորանց։

*Ոմանք՝ քանզի †կ'ճանաչէք

Библиотека АН Арм. ССР им. А. Мясникяна
1262-58

21 Ոչ թէ ամէն ինձ Տէ՛ր Տէ՛ր ասողը կ'մտնէ
երկնքի արքայութիւնն . այլ նա որ կատարում
22 է իմ Հօր կամքը, որ երկնքումն է ։ Շատերը
կ'ասեն ինձ այն օրը, Տէր Տէր, չէ որ քո անու-
նովը մարգարէացանք, եւ քո անունովը դեւեր
հանեցինք, եւ քո անունովը շատ զօրութիւններ
23 գործեցինք ։ Եւ այն ժամանակ պարզ կ'ասեմ
նորանց . թէ Երբէք ձեզ չեմ ճանաչել . ինձանից
դէն գնացէք, ով անօրէնութիւն գործողներ ։
24 Արդ ամէն ով որ իմ այս խօսքերը լսում է
եւ նորանց կատարում, կ'նմանացնեմ նորան մի
իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի
25 վերայ ։ Եւ անձրեւն էլ եկաւ, գետերն էլ վա-
րարեցին, քամիներն էլ փչեցին եւ այն տանը
զարկեցին, եւ չկործանուեցաւ . վասն զի ժայռի
26 վերայ հաստատուած էր ։ Եւ ամէն ով որ իմ
այս խօսքերը լսում է եւ նորանց չէ կատարում,
նա կ'նմանուի մի անխելք մարդու, որ իր տու-
27 նը շինեց աւազի վերայ ։ Եւ անձրեւն էլ եկաւ,
գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին,
եւ այն տանը զարկեցին, եւ կործանուեցաւ,
եւ նորա կործանումը մեծ էր ։
28 Եւ եղաւ երբոր Յիսուսը այս խօսքերը վեր-
ջացրեց, ժողովուրդները զարմանում էին նորա
29 վարդապետութեան վերայ ։ Վասն զի իշխանու-
թիւն ունեցողի պէս էր սովորեցնում նորանց,
եւ ոչ թէ դպիրների պէս ։

ԳԼ. Ը

1 Եւ երբոր լեռնիցն իջաւ, շատ ժողովուրդներ
2 գնացին նորա ետեւից ։ Եւ ահա մի բորոտ գա-

լով երկրպագում էր նորան եւ ասում . Տէր, թէ
3 որ կամենաս, կարող ես ինձ սրբել ։ Եւ Յիսու-
սը ձեռը մեկնելով նորան դիպաւ եւ ասաց . Կա-
մենում եմ՝ սրբուիր . եւ շուտով նորա բորո-
4 տութիւնը սրբուեցաւ ։ Եւ Յիսուսը ասաց նո-
րան . Զգոյշ կաց՝ ոչ ոքի չասես, այլ գնա քեզ
ցոյց տուր քահանային, եւ Մօսէսից հրամայուած
ընծան մատուցրու, նորանց վկայութիւն լինելու
համար ։
5 Եւ երբոր Յիսուսը մտաւ Կափառնայում . մի
հարիւրապետ եկաւ նորա մօտ, աղաչում էր նո-
6 րան, Եւ ասում . Տէր, իմ ծառան անդամալոյծ
7 ընկած է տանը եւ չարաչար տանջվում է ։ Յի-
սուսն էլ ասաց նորան . Ես կ'գամ եւ կ'բժշկեմ
8 նորան ։ Եւ հարիւրապետը պատասխանելով ա-
սաց . Տէր, արժանի չեմ, որ իմ յարկի տակը
մտնես, այլ միայն մի խօսք ասա՝ եւ իմ ծառան
9 կ'բժշկուի ։ Վասն զի ես էլ իշխանութեան տակ
լինող մարդ եմ . եւ իմ ձեռքի տակ զինուորներ
ունիմ . եւ ասում եմ սորան՝ Գնա . եւ գնում է,
եւ ուրիշին՝ Եկ, եւ գալիս է . եւ ծառայիս՝ Այս
10 բանն արա, եւ անում է ։ Եւ երբոր Յիսուսը
լսեց, զարմացաւ եւ ասաց իր ետեւից եկողնե-
րին . Ճշմարիտ ասում եմ ձեզ . Իսրայէլի մէջ
11 էլ այսպիսի հաւատք չգտայ ։ Եւ ասում եմ ձեզ .
Որ շատերը արեւելքից եւ արեւմուտից կ'գան, եւ
կ'նստեն Աբրահամի եւ Իսահակի եւ Յակոբի
12 հետ երկնքի արքայութիւնումը, Իսկ արքայու-
թեան որդիքը դուրս կ'գցուեն դրսի խաւարը .
այնտեղ կ'լինի լացը եւ ատամների կրճտելը ։
13 Եւ Յիսուսն ասաց հարիւրապետին . Գնա, եւ
ինչպէս որ հաւատացիր՝ թող այնպէս լինի քեզ,

եւ առողջացաւ նորա տղան այն ժամումը։
14 Եւ երբոր Յիսուսն եկաւ Պետրոսի տունը,
տեսաւ նորա զոքանչը պառկած ջերմում էր։
15 Եւ նորա ձեռիցը բռնեց, եւ ջերմը թողեց նո-
րան, եւ նա վեր կացաւ եւ ծառայում էր նո-
րանց։
16 Եւ երբոր իրիկուն եղաւ, շատ դիւահարներ
բերին նորա մօտ, եւ խօսքով հանեց ոգիները,
17 եւ ամեն հիւանդներին բժշկեց. Որ կատարուի
Եսայի մարգարէի ձեռով ասուածը, որ ասում
է. Նա մեր հիւանդութիւնները վեր առաւ եւ
մեր ցաւերը կրեց։
18 Եւ երբոր Յիսուսը շատ ժողովուրդներ տե-
սաւ իր չորս կողմովը, հրամայեց այն կողմն
19 գնալ։ Եւ մէկ դպիր մօտենալով նորան. Վար-
դապետ, ես քո ետեւիցը կ՚գամ, որ տեղ էլ որ
20 գնաս։ Յիսուսն էլ ասաց նորան. Աղուէսները
որջեր ունին, եւ երկնքի թռչունները՝ բներ.
բայց Որդին մարդոյ չունի տեղ որ իր գլուխը
21 դնէ։ Եւ նորա աշակերտներից մի ուրիշն ասաց
նորան. Տէր, ինձ հրաման տուր՝ գնամ առաջ
22 իմ հօրը թաղեմ։ Եւ Յիսուսը նորան ասաց. Իմ
ետեւից եկ, եւ թող մեռելները թաղեն իրանց
մեռելներին։
23 Եւ երբոր մտաւ նաւը, նորա աշակերտները
24 գնացին նորա ետեւից։ Եւ ահա մեծ ալեկոծում
եղաւ ծովի մէջ, որ նաւն էլ ծածկվում էր ա-
25 լիքներիցը. եւ ինքն քնած էր։ Եւ նորա աշա-
կերտները մօտենալով նորան զարթնեցրին եւ ա-
26 սացին. Տէր, փրկիր մեզ, կորչում ենք։ Եւ նո-
րանց ասաց. Ինչո՞ւ վախկոտ էք, սակաւահա-
ւատներ։ Այն ժամանակ վեր կացաւ սաստեց

քամիներին եւ ծովին եւ մեծ խաղաղութիւն ե-
27 ղաւ։ Իսկ մարդիկը զարմացան եւ ասում էին.
Սա ի՞նչպիսի մարդ է՝ որ քամիներն եւ ծովն էլ
հնազանդում են սորան։
28 Եւ երբոր նա այն կողմը՝ Գերգեսացոց երկիրն
անցաւ, երկու դիւահարներ պատահեցան նորան,
գերեզմաններիցը դուրս եկած՝ և շատ չար, մին-
չեւ որ մէկը չէր կարող այն ճանապարհովն անց-
29 նել։ Եւ ահա աղաղակեցին եւ ասացին. Քեզ
ի՞նչ բան կայ մեզ հետ, Յիսուս Որդի Աստու-
ծոյ, եկել ես այս տեղ ժամանակից առաջ մեզ
30 տանջելու։ Եւ նորանցից հեռու շատ խոզե-
31 րի երամակ կար՝ որ արածում էր։ Եւ դեւերն
աղաչում էին նորան եւ ասում. Եթէ մեզ հան-
ում ես, հրաման տուր մեզ այն խոզերի երամա-
32 կը գնալու։ Եւ նորանց ասաց՝ Գնացէք. եւ նո-
րանք դուրս ելան եւ գնացին խոզերի երամակի
մէջ եւ ահա խոզերի բոլոր երամակն այն զա-
հավէժ տեղից վազեց ծովը, եւ ջրերի մէջ մե-
33 ռան։ Եւ խոզարածները փախան, եւ քաղաքը
գնալով պատմեցին ամենը եւ դիւահարների բա-
34 նըն էլ։ Եւ ահա բոլոր քաղաքը դուրս եկաւ
Յիսուսի առջեւը, եւ երբոր նորան տեսան, ա-
ղաչեցին որ գնայ իրանց սահմաններիցը։

ԳԼ. Թ

1 Եւ նաւը մտնելով անցաւ այն կողմը, եւ եկաւ
2 իր քաղաքը։ Եւ ահա մի անդամալոյծ բերին
նորա մօտ՝ մահճի մէջ դրած. Յիսուսը նորանց
հաւատքը տեսնելով՝ անդամալոյծին ասաց. Քա-
ջացիր, որդեակ, քո մեղքերը թողուած են քեզ։

3 Եւ ահա դպիրներից ոմանք իրանց մէջ ասացին․
4 Դա հայհոյում է։ Եւ Յիսուսը նորանց խորհուրդ-
ները տեսնելով, ասաց․ Ինչո՞ւ էք չար բաներ
5 խորհում ձեր սրտերումը։ Վասն զի ո՞րն է ա-
ւելի հեշտ․ ասել՝ Քո մեղքերդ թողուած են
6 քեզ, թէ ասել՝ Վեր կաց եւ ման եկ։ Բայց որ
իմանաք, թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի
երկրիս վերայ մեղքեր թողելու․ այն ժամանակ
անդամալոյծին ասաց․ Վեր կաց քո մահիճը վեր
7 առ եւ գնա քո տունը։ Եւ նա վեր կացաւ գը-
8 նաց իր տունը։ Եւ ժողովուրդները տեսնելով
զարմացան, եւ Աստուծոյն փառաւորում էին,
որ այնպիսի իշխանութիւն է տուել մարդկանց։
9 Եւ Յիսուսն այն տեղից առաջ գնալով, տեսաւ
մի մարդ, որ նստած էր մաքսատունը, անունը
Մատթէոս, եւ նորան ասաց․ Իմ ետեւից եկ․
10 եւ նա վեր կացաւ գնաց նորա ետեւից։ Եւ ե-
ղաւ՝ երբոր նա տանը սեղանի վերայ նստած էր,
եւ ահա շատ մաքսաւորներ եւ մեղաւորներ ե-
կել բազմել էին Յիսուսի եւ նորա աշակերտնե-
11 րի հետ։ Եւ Փարիսեցիքը տեսնելով՝ նորա ա-
շակերտներին ասացին․ Ինչո՞ւ համար մաքսա-
ւորների եւ մեղաւորների հետ ուտում է ձեր
12 վարդապետը։ Բայց Յիսուսն երբոր լսեց, նո-
րանց ասաց․ Կարողները բժշկի կարօտ չեն, այլ
13 հիւանդները։ Գնացէք սովորեցէք՝ թէ ինչ է․
Ողորմութիւն եմ կամենում՝ եւ ոչ զոհ․ վասն զի
ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղա-
ւորներին ապաշխարութեան։
14 Այն ժամանակ Յօհաննէսի աշակերտները նո-
րա մօտ եկան եւ ասացին․ Ինչո՞ւ մենք եւ Փա-
րիսեցիքը շատ ծոմ ենք պահում, եւ քո աշա-

15 կերտները ծոմ չեն պահում։ Եւ Յիսուսը նո-
րանց ասաց․ Միթէ կարող են հարսանիքի որ-
դիքը սուգ անել, քանի որ փեսան նորանց հետ
է․ բայց օրեր կ՚գան, որ փեսան նորանցից վեր
16 կ՚առնուի, եւ այն ժամանակ ծոմ կ՚պահեն։ Ոչ
ով չլուացուած կապերտից կարկատան չի դցել
հին հանդերձի վերայ, վասն զի նորա լրութիւ-
նը (կարկատանը) կ՚առնէ հանդերձիցը, եւ պա-
17 տառուածքը էլ աւելի չար կ՚լինի։ Եւ նոր գի-
նին էլ հին տիկերի մէջ չեն ածիլ․ ապա թէ ոչ՝
տիկերը կ՚պատառուեն՝ եւ գինին կ՚թափուի, եւ
տիկերը կ՚կորչին, այլ նոր գինին նոր տիկերի մէջ
կ՚ածեն, եւ երկուսն էլ կ՚պահուին։
18 Նա այս բաները նորանց հետ խօսելիս․ ահա
մի իշխան եկաւ նորան երկրպագեց եւ ասաց․ Իմ
աղջիկը արդէն մեռաւ, միայն թէ եկ եւ ձեռդ նո-
19 րա վերայ դիր՝ եւ կ՚ապրի։ Եւ Յիսուսը վեր կացաւ
գնաց նորա ետեւից եւ նորա աշակերտներն էլ։
20 Եւ ահա մի տասներկու տարուայ տեռատես
կին ետեւիցը մօտ գալով՝ նորա հանդերձի ծայ-
21 րին դիպաւ։ Վասն զի իր մտքումն ասում էր՝
Եթէ միայն նորա հանդերձին դիպչիմ՝ կ՚փրկուիմ։
22 Բայց երբոր Յիսուսը յետ դարձաւ նորան տեսաւ
եւ ասաց․ Քաջացիր, դուստր, քո հաւատքը քեզ
ապրեցրեց․ եւ ազատուեցաւ կինը նոյն ժամից։
23 Եւ երբոր Յիսուսն եկաւ իշխանի տունը եւ տեսաւ
24 փող փչողները եւ չփոթուած ամբոխը․ Նորանց ա-
սաց․ Դէն գնացէք, վասն զի այդ աղջիկը մեռած
չէ, այլ քնած է։ Եւ նորանք ծաղր էին անում նորան։
25 Եւ երբոր ամբոխը դուրս գցուեցաւ, Յիսուս ներս մը-
տաւ՝ նորա ձեռիցը բռնեց, եւ աղջիկը վերկացաւ։
26 Եւ այս համբաւը դուրս եկաւ այն բոլոր երկիրը։

27 Եւ Յիսուսն այն տեղից անցնելիս, երկու կոյր
նորա ետեւից գնում էին, աղաղակում եւ աս-
28 ում. Ողորմիր մեզ Որդի Դաւթի: Եւ երբոր
տուն մտաւ, կոյրերը նորա մօտ եկան. եւ Յի-
սուսը նորանց ասաց. Հաւատո՞ւմ էք որ կարող
29 եմ այդ անել: Նորան ասացին. Այո, Տէր: Այն
ժամանակ նորանց աչքերին դիպաւ եւ ասաց.
30 Ձեր հաւատքի պէս թող լինի ձեզ: Եւ նորանց
աչքերը բացուեցան: Եւ Յիսուսը նորանց սաս-
տեց եւ ասաց. Զգոյշ կացէք, ոչ ոք չիմանայ:
31 Իսկ նորանք դուրս գնացին հռչակեցին նորան
այն բոլոր երկրումը:
32 Եւ երբոր նորանք դուրս էին գնում, ահա մի
33 համր դիւահար մարդ բերին նորա մօտ: Եւ երբ-
որ դեւը դուրս հանուեցաւ, համրը խօսեց. եւ
ժողովուրդները զարմացան եւ ասացին. Թէ Եր-
բէք Իսրայէլի մէջ այսպիսի բան չերեւեցաւ:
34 Բայց Փարիսեցիքն ասում էին. Դեւերի իշխա-
նովն է հանում դեւերը:
35 Եւ Յիսուսն ամեն քաղաքները եւ գիւղերը
ման էր գալիս, նորանց ժողովարաններումը սո-
վորեցնելով, եւ արքայութեան աւետարանը քա-
րոզելով, եւ ժողովրդի մէջ ամեն ցաւ եւ ա-
36 մեն հիւանդութիւնը բժշկելով: Եւ ժողովուրդ-
ներին տեսնելով, գթաց նորանց վերայ որ յոգ-
նած եւ ցրուցան եղած էին, ինչպէս ոչխարներ
37 որ հովիւ չունին: Այն ժամանակ իր աշակերտ-
ներին ասաց. Հունձքը շատ է, բայց մշակները
38 քիչ: Արդ աղաչեցէք հնձի Տիրոջն, որ մշակներ
հանէ իր հունձի մէջ:

ԳԼ. Ժ

1 Եւ իր տասներկու աշակերտներին իր մօտ կան-
չեց, եւ նորանց իշխանութիւն տուաւ պիղծ հո-
գիների վերայ, որ նորանց հանեն. եւ ամեն ցաւ
եւ ամեն հիւանդութիւն բժշկեն:
2 Եւ այն տասներկու առաքելոց անուններն այս
են. առաջինը Սիմոն՝ Պետրոս կոչուածը եւ նո-
3 րա եղբայրն Անդրէաս: Յակոբոս Զեբեդեանն՝
եւ նորա եղբայրը՝ Յօհաննէս. Փիլիպպոս եւ
Բարթուղիմէոս. Թօմաս եւ Մատթէոս մաքսա-
ւորը. Յակոբոս Ալփեան. եւ Ղեբէոս որ Թա-
4 դէոս մականուանուեցաւ: Սիմոն Կանանացին՝
եւ Յուդա Իսկարիօտացին, որ մատնեց էլ նո-
րան:
5 Այս տասներկուսին ուղարկեց Յիսուսը, նո-
րանց պատուէր տուաւ եւ ասաց. Հեթանոսնե-
րի ճանապարհ չգնաք, եւ Սամարացոց քաղաք
6 չմտնէք. Բայց աւելի գնացէք Իսրայէլի տան
7 կորած ոչխարների մօտ: Եւ երբոր կ'գնաք, քա-
րոզեցէք եւ ասացէք. Թէ Երկնքի արքայութիւ-
8 նը մօտեցել է: Հիւանդներին բժշկեցէք, բորոտ-
ներին սրբեցէք, մեռեալներին յարուցէք, դեւե-
9 րը հանեցէք. ձրի առել էք, ձրի տուէք: Վեր
մի առնէք ոսկի, եւ ոչ արծաթ, եւ ոչ պղինձ
10 փող ձեր գօտիների մէջ. Ոչ ճանապարհի պարկ,
եւ ոչ երկու հանդերձ, եւ ոչ կօշիկներ, եւ ոչ
գաւազան. վասն զի մշակն իր կերակրին ար-
11 ժանի է: Եւ որ քաղաք՝ կամ գիւղ որ մտնէք,
հարցրէք թէ նորանում ով է արժանի, եւ այն
տեղ կացէք՝ մինչեւ որ այն տեղից դուրս գնաք:
12 Եւ երբոր տունը կ'մտնէք, բարեւ տուէք նո-

13 բան։ Եւ եթէ այն տունն արժանի է, ձեր բա-
րեւը նորա վերայ գայ, բայց եթէ արժանի չէ,
14 ձեր բարեւը յետ դառնայ դէպի ձեզ։ Եւ ով որ
ձեզ չընդունի եւ ոչ էլ ձեր խօսքին ականջ դնէ,
երբոր այն տանից կամ քաղաքից դուրս գնաք,
15 ձեր ոտների փոշին թօթափեցէք։ Ճշմարիտ
ասում եմ ձեզ, որ Սոդոմացոց եւ Գոմորա-
ցոց երկրի համար աւելի հեշտ կ'լինի դատաս-
տանի օրումը քան թէ այն քաղաքին։
16 Ահա ես ուղարկում եմ ձեզ ինչպէս ոչխար-
ներ գայլերի մէջ, ուստի խորագէտ եղիք ինչ-
17 պէս օձերը, եւ միամիտ՝ ինչպէս աղաւնիքը։ Եւ
զգոյշ կացէք մարդկանցից. վասն զի ձեզ դա-
տաստանի կ'մատնեն, եւ իրանց ժողովարանների
18 մէջ կ'ծեծեն ձեզ, Եւ կուսակալների եւ թա-
գաւորների առջեւ կ'տարուիք իմ պատճառովը,
որ նորանց եւ հեթանոսներին վկայութիւն
19 լինի։ Բայց երբոր մատնեն ձեզ, հոգս մի անէք՝
20 թէ ինչպէս կամ ինչ պիտի խօսիք։ Քանզի չէ
թէ դուք էք խօսողները, բայց ձեր Հօր Հոգին,
21 որ ձեզանում խօսում է։ Եւ եղբայր եղբօրը
մահու կ'մատնէ, եւ հայրը որդուն, եւ որդիքը
վեր կ'կենան իրանց ծնողաց վերայ՝ եւ կ'սպանեն
22 նորանց։ Եւ ամենից կ'ատուիք իմ անուանի հա-
մար. բայց ով որ կ'համբերէ մինչեւ վերջը, նա
23 կ'ապրի։ Եւ երբոր հալածեն ձեզ այս քաղաքու-
մը, փախէք ուրիշը. վասն զի ճշմարիտ ասում
եմ ձեզ. Չէք վերջացնիլ Իսրայէլի քաղաքները
24 մինչեւ որ Որդին մարդոյ կ'գայ։ Աշակերտը վար-
դապետից բարձր չէ, եւ ոչ ծառան բարձր է
25 իր տիրոջից։ Բաւական է աշակերտին, որ իր
վարդապետի նման լինի, եւ ծառան իր տիրոջ

նման։ Եթէ տան տիրոջը Բէեղզեբուղ կոչեցին,
26 ապա ո՞րքան աւելի նորա ընտանիքը։ Ուստի
մի վախենաք նորանցից. վասն զի ոչինչ չկայ
ծածուկ, որ չյայտնուի, եւ թագուն բան որ չի-
27 մացուի։ Ինչ որ ասում եմ ձեզ խաւարումը,
լոյսի մէջ ասացէք. եւ ինչ որ ականջում լսում
28 էք, կտուրների վերայ քարոզեցէք։ Եւ մի վախե-
նաք նորանցից, որ մարմինն սպանում են եւ
հոգին չեն կարող սպանել, բայց աւելի վախե-
ցէք նորանից, որ կարող է հոգին էլ մարմինն
29 էլ կորցնել գեհենի մէջ։ Չէ՞ որ երկու ճնճղուկ
մի դանկի են ծախվում, եւ նորանցից մէկը չի
30 ընկնիլ գետնին առանց ձեր Հօր։ Իսկ ձեր գլխի
31 ամեն մազերն էլ համարուած են։ Ուրեմն մի
վախենաք. դուք շատ ճնճղուկներից աւելի լաւ
32 էք։ Արդ ամեն ով որ ինձ մարդկանց առջեւ
դաւանէ, ես էլ նորան կ'դաւանեմ իմ Հօր ա-
33 ռջեւ որ երկնքումն է։ Եւ ով որ ինձ ուրանայ
մարդկանց առջեւ, ես էլ կ'ուրանամ նորան իմ Հօր
34 առջեւ որ երկնքումն է։ Մի կարծէք՝ թէ եկայ
երկրիս վերայ խաղաղութիւն գցելու, չեկայ
35 խաղաղութիւն գցելու, այլ սուր։ Վասն զի ե-
կայ բաժանելու մարդն իր հօր դէմ, եւ աղջիկն
36 իր մօր դէմ, եւ հարսն իր սկեսրի դէմ։ Եւ մար-
37 դոյ թշնամիներն իր ընտանիքը կ'լինին։ Ով որ
հօրը կամ մօրը ինձանից աւելի է սիրում,
նա ինձ արժանի չէ. եւ ով որ իր որդին կամ
աղջիկն ինձանից աւելի է սիրում, նա ինձ ար-
38 ժանի չէ։ Եւ ով որ չէ առնում իր խաչն եւ իմ
39 ետեւից գալիս, նա ինձ արժանի չէ։ Ով որ
իր անձը գտնում է՝ կ'կորցնէ նորան եւ ով որ
իր անձն ինձ համար կորցրեց՝ կ'գտնէ նորան։

40 Ով որ ձեզ ընդունում է, ինձ է ընդունում. եւ
ով որ ինձ ընդունում է, ինձ ուղարկողին է ըն-
41 դունում։ Ով որ մարգարէ է ընդունում մար-
գարէի անունով, նա մարգարէի վարձք կ'առնէ.
եւ ով որ արդար է ընդունում արդարի անու-
42 նով, արդարի վարձք կ'առնէ։ Եւ ով որ այս փո-
քրներից մէկին միայն մի աման ցուրտ ջուր
խմեցնէ աշակերտի անունով, ճշմարիտ ասում
եմ ձեզ, նա չի կորցնիլ իր վարձքը։

ԳԼ. ԺԱ

1 Եւ եղաւ երբոր Յիսուսն իր տասներկու աշա-
կերտներին պատուէր տալը վերջացրեց, այն տե-
ղից գնաց նորանց քաղաքներումը սովորեցնելու
եւ քարոզելու։
2 Եւ Յօհաննէսը բանտումը Քրիստոսի գործքե-
րը լսելով, իր աշակերտներից երկուսն ուղար-
3 կեց։ Եւ նորան ասաց. Դո՞ւ ես այն որ գալու
4 էիր, թէ ուրիշի՞ սպասենք։ Եւ Յիսուսը պա-
տասխան տուաւ եւ նորանց ասաց. Գնացէք Յօ-
հաննէսին պատմեցէք ինչ որ լսում էք եւ տես-
5 նում էք. Կոյրերը տեսնում են, եւ կաղերը գը-
նում են, բորոտները սրբվում են, եւ խուլերը
լսում են, մեռելները յարութիւն են առնում,
6 եւ աղքատներին աւետարան է քարոզվում։ Եւ
երանելի է նա, որ ինձ վերայ չի գայթակղիլ։
2 Բայց երբոր նորանք գնացին, Յիսուսն սկսեց
ժողովուրդներին ասել Յօհաննէսի համար. Ի՞նչ
տեսնելու դուրս գնացիք անապատը, մի եղէ՞գ քա-
8 մուց շարժուած։ Ապա ի՞նչ տեսնելու դուրս գնա-
ցիք. մի մա՞րդ փափուկ հանդերձներով հագուած,

ահա փափուկ հագնողները թագաւորաց տներ-
9 ումն են։ Բայց ի՞նչ տեսնելու դուրս գնացիք,
մի մարգարէ՞. այո, ասում եմ ձեզ, մարգարէից
10 էլ շատ աւելին։ Վասն զի սա այն է՝ որի հա-
մար գրուած է. Ահա ես իմ հրեշտակը ուղար-
կում եմ քո երեսի առջեւ, որ քո ճանապարհը
11 քո առջեւ պատրաստէ։ Ճշմարիտ ասում եմ
ձեզ. Կանանց ծնածների մէջ չէ վեր կացել Յօ-
հաննէս մկրտչից մի մեծը, բայց երկնքի արքա-
12 յութեան միջի փոքրը նորանից մեծ է։ Բայց
Յօհաննէս մկրտչի օրերից մինչեւ հիմա եր-
կընքի արքայութիւնն ուժով է առնվում, եւ ու-
13 ժեղներն յափշտակում են նորան։ Վասն զի ա-
մեն մարգարէքն եւ օրէնքը մինչեւ Յօհաննէսը
14 մարգարէացան. Եւ եթէ կամենում էք ընդու-
15 նիլ՝ նա է Եղիան, որ գալու էր։ Ով որ լսելու
16 ականջ ունի՝ թող լսէ։ Բայց ո՞ւմ նմանեցնեմ այս
ազգը, այն տղայոց նման է, որ փողոցներումը
17 նստած իրանց ընկերներին կանչում են, Եւ աս-
ում. Փող փչեցինք ձեզ համար, եւ պար չե-
կաք. ողբացինք ձեզ համար, եւ կոծ չարիք։
18 Վասն զի Յօհաննէսն եկաւ, ոչ ուտում էր եւ
ոչ խմում էր. եւ ասում են. Դեւ կայ նորան-
19 ում։ Եկաւ Որդին մարդոյ, ուտում է եւ խըմ-
ում է, եւ ասում են. Ահա ուտող եւ գինի խը-
մող մարդ, մաքսաւորների եւ մեղաւորների բա-
րեկամ, եւ իմաստութիւնն արդարացաւ իր որ-
դիներից։
20 Այն ժամանակ սկսեց նախատել այն քաղաք-
ներին, որոնցում եղան նորա հրաշքների շատե-
21 րը, վասն զի չապաշխարեցին։ Վա՜յ քեզ, Քո-
րազին. վայ քեզ, Բեթսայիդա. վասն զի եթէ

Տիւրոսի եւ Սիդոնի մէջ եղած լինէին այն հը-
րաշքներն որ ձեր մէջ եղան, շատոնց քրձով եւ
22 մոխրով ապաշխարել էին։ Բայց ասում եմ ձեզ,
Տիւրոսին եւ Սիդոնին աւելի հեշտ կ՚լինի դա-
23 տաստանի օրումը քան թէ ձեզ։ Եւ դու, Կա-
փառնայում, որ մինչեւ երկինքը բարձրացած
ես, մինչեւ դժոխքը կ՚ցածանաս, վասն զի եթէ
Սոդոմի մէջ եղած լինէին այն հրաշքներն որ
քեզանում եղան, մինչեւ այսօր դեռ կ՚մնային։
24 Բայց ասում եմ ձեզ, որ Սոդոմացոց երկրի հա-
մար աւելի հեշտ կ՚լինի դատաստանի օրումն,
քան թէ քեզ։
25 Նոյն ժամանակին Յիսուսը պատասխան տը-
ուաւ եւ ասաց. Գոհանում եմ քեզանից, ով
Հայր երկնքի եւ երկրի Տէր. որ իմաստուննե-
րիցն եւ գիտուններիցն այս բաները ծածկեցիր
26 եւ տղայոց յայտնեցիր։ Այո, ով Հայր, վասն զի
27 այսպէս հաճոյ եղաւ քո առջեւ։ Ամեն բան ինձ
տրուեցաւ իմ Հօրիցը. եւ ոչ ով չէ ճանաչում
Որդոյն՝ բայց միայն Հայրը. եւ ոչ ով չէ ճանա-
չում Հօրը՝ բայց միայն Որդին. եւ ում Որդին
28 կամենայ յայտնել։ Ինձ մօտ եկէք, ամեն վաս-
տակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հան-
29 գիստ կ՚տամ ձեզ։ Ձեզ վերայ առէք իմ լուծը
եւ ինձանից սովորեցէք. վասն զի ես հեզ եմ
եւ սրտով խոնարհ. եւ ձեր անձերի համար հան-
30 գըստութիւն կ՚գտնէք։ Վասն զի իմ լուծը քաղցր
է, եւ իմ բեռը թեթեւ։

ԳԼ. ԺԲ

1 Այն ժամանակ Յիսուսը շաբաթ օրը գնաց հո-

րանց արտերի միջովը, եւ նորա աշակերտները
սովեցին եւ սկսեցան հասկ պոկել եւ ուտել։
2 Եւ երբոր Փարիսեցիքը տեսան, նորան ասա-
ցին. Ահա քո աշակերտներն անում են, ինչ որ
3 արժան չէ շաբաթ օրն անել։ Նա էլ ասաց նորանց.
Դուք չէ՞ք կարդացել, թէ ինչ արաւ Դաւիթը,
երբոր ինքը սովեց եւ նորա հետ լինողներն էլ։
4 Թէ ինչպէս Աստուծոյ տունը մտաւ եւ առաջա-
ւորութեան հացը կերաւ, որ օրինաւոր չէր նո-
րան ուտել, եւ ոչ էլ նորա հետ լինողներին,
5 բայց միայն քահանաներին։ Կամ չէ՞ք կարդացել
օրէնքումը, որ քահանայքը շաբաթ օրերումն
տաճարի մէջ շաբաթը պղծում են եւ անմեղ են։
6 Բայց ասում եմ ձեզ՝ Որ տաճարիցն էլ մեծն է
7 այս տեղ։ Բայց եթէ գիտէիք՝ ինչ է ողորմու-
թիւն եմ ուզում եւ ոչ թէ զոհ. դուք չէիք
8 դատապարտիլ անմեղներին. Վասն զի շաբաթի
էլ տէրն է Որդին մարդոյ։
9 Եւ Յիսուսը այն տեղից գնաց՝ եկաւ նորանց
10 ժողովարանը։ Եւ ահա մի մարդ կար՝ ձեռը
չորացած. նորան հարցրին եւ ասացին՝ թէ Շա-
բաթ օրումն արժա՞ն է բժշկութիւն անել. որ
11 նորանից չարախօսեն։ Եւ նա ասաց նորանց.
Ո՞վ կ՚լինի ձեզանից այն մարդն, որ մէկ ոչխար
ունենայ, եւ եթէ նա ընկնի փոսի մէջ շաբաթ
12 օրը, մի՞թէ չի բռնիլ նորան եւ վեր հանել։ Ա-
պա ո՞րքան առաւել է մարդը ոչխարից. ապա
ուրեմն արժան է շաբաթ օրը բարիք գործել։
13 Այն ժամանակ ասաց այն մարդուն. Ձեռդ մեկնիր,
նա էլ մեկնեց, եւ նա ողջ եղաւ ինչպէս միւսը։
14 Բայց Փարիսեցիքը դուրս գնացին եւ նորա դէմ
խորհուրդ արին, թէ ինչպէս կորցնեն նորան։

15 Եւ Յիսուս իմանալով հեռացաւ այն տեղից,
եւ շատ ժողովուրդներ գնացին նորա ետեւից.
16 եւ նորանց ամենին բժշկեց: Եւ նորանց սաստեց
17 որ նորան յայտնի չանեն. Որ կատարուի Եսայի
18 մարգարէի ձեռով ասուածը որ ասում է. Ահա
իմ ծառան, որին ես ընտրեցի, եւ իմ սիրելին՝
որին իմ անձը հաւանել է. իմ Հոգին նորա վե-
րայ կ'դնեմ, եւ հեթանոսներին իրաւունք կը
19 պատմէ: Ոչ կ'հակառակէ, եւ ոչ կ'աղաղակէ,
եւ ոչ էլ հրապարակների մէջ մէկը նորա ձայնը
20 կ'լսէ: Ջախջախուած եղէգը չի փշրել, եւ հանգ-
չող պատրոյգը չի հանգցնել մինչեւ որ դատաս-
21 տանը յաղթութեան հանէ: Եւ նորա անունին
հեթանոսները յոյս կ'դնեն:
22 Այն ժամանակ մի կոյր եւ համր դիւահար
բերուեցաւ նորա մօտ, եւ նա նորան բժշկեց.
այնպէս որ կոյրը եւ համրը խօսեց էլ տեսաւ
23 էլ: Եւ բոլոր ժողովուրդները զարմացան եւ աս-
24 ում էին. Միթէ սա է Դաւթի որդին: Բայց
Փարիսեցիքը լսելով ասացին. Դա դեւերն ուրիշ
բանով չէ հանում, բայց միայն Բէեղզեբուղ՝ դեւե-
25 րի իշխանի ձեռովը: Եւ Յիսուս նորանց խոր-
հուրդներն իմանալով, ասաց նորանց. Ամեն թա-
գաւորութիւն, որ իր դէմ բաժանուած է, կ'ա-
ւերուի, եւ ամեն քաղաք կամ տուն, որ իր
26 դէմ բաժանուած է՝ չի մնալ: Եւ թէ որ սատա-
նան սատանային հանում է, իր դէմ բաժանուե-
ցաւ. էլ ի՞նչպէս նորա թագաւորութիւնը կ'կե-
27 նայ: Եւ եթէ ես Բէեղզեբուղով եմ հանում
դեւերը, ապա ձեր որդիքն ի՞նչով են հանում.
սորա համար նորանք կ'լինին ձեր դատաւորներ:
28 Բայց եթէ ես Աստուծոյ Հոգովն եմ հանում դե-

ւերը, ուրեմն Աստուծոյ արքայութիւնը ձեզ վե-
29 րայ հասել է: Կամ ի՞նչպէս մէկը կարող է զօ-
րաւոր մարդու տունը մտնել՝ եւ նորա կարասի-
ները յափշտակել, եթէ առաջ չկապէ այն զօրա-
30 ւորին, եւ յետոյ նորա տունը կ'յափշտակէ: Ո՛վ
որ ինձ հետ չէ, ինձ հակառակ է. եւ ով որ ինձ
31 հետ չէ ժողովում, ցրւում է: Սորա համար աս-
ում եմ ձեզ. Ամեն մեղք եւ հայհոյանք կ'թող-
ուի մարդկանց, բայց Հոգոյն դէմ հայհոյանքը
32 չի՛ թողուիլ մարդկանց: Եւ ո՛վ որ մարդոյ Որ-
դոյն դէմ բան ասէ՝ կ'թողուի նորան. բայց ով
որ Սուրբ Հոգոյն դէմ ասէ, նորան չի՛ թողուիլ,
ոչ այս աշխարհքումը եւ ոչ գալոց աշխարհքումը:
33 Կամ ծառը բարի արէք՝ եւ նորա պտուղն էլ
բարի, կամ ծառը չար արէք՝ եւ նորա պտուղն
էլ չար. վասն զի ծառն իր պտղից կ'ճանաչուի:
34 Իժերի զաւակներ, դուք ի՞նչպէս կարող էք բա-
րի բաներ խօսիլ՝ որ չար էք. վասն զի սրտի ա-
35 ւելացածից կ'խօսի բերանը: Բարի մարդն իր
սրտի բարի գանձից բարիքները կ'հանէ, եւ չար
մարդն իր սրտի չար գանձից չար բաներ կ'հա-
36 նէ: Բայց ասում եմ ձեզ, թէ Ամեն դատարկ
խօսքի համար, որ մարդիկ խօսեն, նորա համար
37 պատասխան պիտի տան դատաստանի օրը: Վասն
զի քո խօսքից կ'արդարանաս, եւ քո խօսքից
կ'դատապարտուիս:
38 Այն ժամանակ դպիրներից եւ Փարիսեցինե-
րից ոմանք պատասխան տուին եւ ասացին. Վար-
դապետ, ուզում ենք քեզանից մի նշան տեսնել:
39 Նա էլ պատասխան տուաւ եւ նորանց ասաց.
Չար եւ շնացող ազգը նշան է ուզում, եւ նշան
չի տրուիլ նորան, բայց միայն Յօնան մարգարէի

40 նշանը։ Վասն զի ինչպէս Յովնանը երեք օր եւ
երեք գիշեր կէտի փորումն էր, այնպէս կ'լինի
Որդին մարդոյ երեք օր եւ երեք գիշեր երկրի
41 սրտումը։ Նինուէացի մարդիկը վեր կ'կենան
դատաստանումը այս ազգի հետ, եւ կ'դատա-
պարտեն սորան. վասն զի նորանք Յովնանու քա-
րոզութիւնովը ապաշխարեցին. եւ ահա Յովնա-
42 նից մեծն է այս տեղ։ Հարաւի թագուհին վեր
կ'կենայ դատաստանումը այս ազգի հետ, եւ կը
դատապարտէ սորան. վասն զի երկրի ծայրերից
եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. եւ ահա
Սողոմոնից էլ մեծն է այս տեղ։
43 Եւ երբոր պիղծ ոգին դուրս է գալիս մար-
դուց, անջուր տեղերում ման է գալիս հան-
44 գիստ խնդրելով, եւ չէ գտնում։ Այն ժամանակ
ասում է. Յետ դառնամ իմ տունը՝ որտեղից
դուրս եկայ, եւ գալիս նորան գտնում է պա-
45 րապ, սրբուած եւ յարդարուած։ Այն ժամանակ
գնում է իրանից էլ աւելի չար եօթն ուրիշ ո-
գիներ է առնում իր հետ, եւ մտնում բնակւում
է այն տեղ. եւ այն մարդու յետինն աւելի չար
է լինում քան թէ առաջինը. այսպէս կ'լինի եւ
այս չար ազգին։
46 Եւ նա տակաւին ժողովուրդների հետ խօսե-
լիս, ահա նորա մայրը եւ նորա եղբարքը դուրսը
47 կանգնած՝ ուզում էին նորա հետ խօսել։ Եւ մէկն
ասաց նորան. Ահա մայրդ եւ եղբարքդ դուրսը
48 կանգնած՝ ուզում են քեզ հետ խօսել։ Նա էլ
պատասխան տուաւ իրան ասողին եւ ասաց.
49 Ո՞վ է իմ մայրը, եւ ո՞վ են իմ եղբարքը։ Եւ
իր ձեռը դէպի իր աշակերտները մեկնելով ա-
50 սաց. Ահա իմ մայրը եւ իմ եղբարքը։ Վասն զի

ով որ իմ Հօր կամքը կատարէ որ երկնքումն
է, նա է իմ եղբայրը, քոյրը եւ մայրը։

ԳԼ. ԺԳ

1 Այն օրումն Յիսուսը տանիցը դուրս գալով ծո-
2 վի մօտ նստեց։ Եւ շատ ժողովուրդներ նորա
մօտ ժողովուեցան, մինչեւ որ նա նաւը մտաւ
նստեց. եւ բոլոր ժողովուրդը ծովի եզրին կանգ-
3 նել էր։ Եւ նորանց հետ շատ բաներ խօսեց ա-
ռակներով ասելով.
4 Ահա սերմ ցանողը դուրս գնաց սերմ ցանե-
լու. եւ նա սերմելիս՝ մի քանիսը ճանապարհի
մօտ ընկաւ, եւ երկնքի թռչուններն եկան եւ
5 կերան նորանց։ Եւ ուրիշներն ընկան քարքա-
րուտ տեղ, ուր շատ հող չկար, եւ շուտով բու-
6 սան՝ խոր հող չունենալու պատճառովը։ Բայց
երբոր արեգակը ծագեց, տաքացաւ, եւ որով-
7 հետեւ արմատ չունէին՝ չորացան։ Եւ ուրիշներն
ընկան փշերի մէջ, եւ փուշերը դուրս եկան եւ
8 խեղդեցին նորանց։ Եւ ուրիշներն ընկան բարի
երկրի վերայ, եւ պտուղ էին տալիս. որը հար-
9 իւր, եւ որը վաթսուն, եւ որը երեսուն։ Ով
որ լսելու ականջ ունի, թող լսէ։
10 Եւ աշակերտները մօտ գալով ասացին նորան.
11 Ինչո՞ւ առակներով ես խօսում նորանց հետ։ Նա
էլ պատասխան տուաւ եւ ասաց նորանց. Որով-
հետեւ ձեզ տրուած է երկնքի արքայութեան
խորհուրդները գիտենալ, բայց նորանց չէ տըր-
12 ուած։ Վասն զի ով որ ունի՝ նորան կ'տրուի եւ
կ'աւելանայ. եւ ով որ չունի ունեցածն էլ կ'առ-
13 նուի նորանից. Նորա համար եմ առակներով

խօսում նորանց հետ, որ տեսնելով չեն տեսնում,
14 եւ լսելով չեն լսում, եւ չեն իմանում։ Եւ նո-
րանց վրայ կատարվում է Եսայեայ մարգարէ-
ութիւնն, որ ասում է. Լսելով կ՚լսէք, եւ չէք
իմանալ, եւ տեսնելով կ՚տեսնէք, եւ չէք տես-
15 նել։ Վասն զի թանձրացաւ այս ժողովրդի սիր-
տը, եւ իրանց ականջներովը ծանր լսեցին եւ ի-
րանց աչքերը խփեցին, մի գուցէ աչքերով տես-
նեն՝ եւ ականջներով լսեն, եւ սրտով իմանան,
16 եւ յետ դառնան, եւ ես նորանց բժշկեմ։ Բայց
երանելի են ձեր աչքերը՝ որ տեսնում են, եւ ձեր
17 ականջները՝ որ լսում են։ Վասն զի ճշմարիտ
ասում եմ ձեզ, որ շատ մարգարէներ եւ արդար-
ներ ցանկացան տեսնել ինչ որ տեսնում էք՝ եւ
չտեսան, եւ լսել ինչ որ լսում էք՝ եւ չլսեցին։
18 Դուք հիմա լսեցէք սերմ ցանողի առակը։
19 Այն ամենից՝ որ արքայութեան խօսքը լսում է
եւ չէ իմանում, գալիս է չարը՝ եւ յափշտակում
նորա սրտի մէջ սերմածը. սա է ճանապարհի
20 մօտ սերմածը։ Եւ քարքարուտ տեղը սերմածը
նա է, որ խօսքը լսելիս շուտով ուրախութիւ-
21 նով ընդունում է նորան. Բայց արմատ չունի
իր մէջ, այլ ժամանակաւոր է. եւ երբոր նեղու-
թիւն կամ հալածանք են լինում այն խօսքի հա-
22 մար, շուտով գայթակղում է։ Եւ փշերի մէջ
սերմածը նա է, որ խօսքը լսում է, եւ այս աշ-
խարհի հոգսերն ու հարստութեան խաբեբայու-
թիւնը խեղդում են այն խօսքը եւ անպտուղ
23 է լինում։ Բայց բարի երկրումը սերմածը նա
է, որ խօսքը լսում է եւ իմանում. որ եւ պը-
տուղ է տալիս, որը հարիւր, եւ որը վաթսուն
եւ որը երեսուն։

24 Մի ուրիշ առակ նորանց առջեւ դրաւ եւ ա-
սաց. Երկնքի արքայութիւնը նմանուեցաւ մի
մարդու, որ իր արտումը բարի սերմ ցանեց։
25 Եւ մարդիկը քնանալիս, նորա թշնամին եկաւ
26 եւ ցորենի մէջ որոմներ ցանեց եւ գնաց։ Եւ
երբոր խոտը բուսաւ՝ եւ պտուղ տուաւ, այն
27 ժամանակ որոմներն էլ երեւեցան։ Եւ տան տի-
րոջ ծառաները մօտ գալով ասացին նորան. Տէր,
մի՞թէ դու քո արտումը բարի սերմ չսերմեցիր,
28 ապա ի՞նչ տեղից են որոմները։ Նա էլ ասաց
նորանց. Թշնամի մարդ է արել այդ։ Ծառաներն
էլ ասացին նորան. Հիմա կամենո՞ւմ ես որ գը-
29 նանք քաղենք՝ նորանց դուրս հանենք։ Նա էլ
ասաց. Ոչ, մի գուցէ որոմները քաղելիս, ցո-
30 րենն էլ նորանց հետ պոկէք։ Թող տուէք որ
երկուսը միասին մեծանան մինչեւ հունձքը, եւ
հնձի ժամանակին հնձողներին կ՚ասեմ. Առաջ ո-
րոմները քաղեցէք եւ նորանց խուրձ խուրձ կա-
պեցէք այրելու, իսկ ցորենը ժողովեցէք իմ ամ-
բարի մէջ։
31 Մի ուրիշ առակ դրաւ նորանց առջեւ եւ ա-
սաց. Երկնքի արքայութիւնը նման է մանանե-
խի հատի, որ մի մարդ առաւ իր արտի մէջ
32 սերմեց. Որ ամեն սերմանքից փոքրն է, բայց
երբոր կ՚աճի, բոլոր բանջարներից մեծ է, եւ ծառ
է լինում, այնպէս որ երկնքի թռչունները գա-
լիս նորա ճղերումը հանգիստ են առնում։
33 Մի ուրիշ առակ խօսեց նորանց եւ ասաց. Եր-
կընքի արքայութիւնը նման է խմորի՝ որ մի կին
առաւ՝ եւ երեք չափ ալիւրի մէջ թաքցրեց մին-
չեւ որ բոլորը խմորուեցաւ։
34 Այս բոլորը Յիսուս առակներով խօսեց ժո-

ժողովուրդների հետ, եւ առանց առակի չէր խօս֊
35 ում նորանց հետ, Որ մարգարէի ձեռով ասուա֊
ծը կատարուի՝ որ ասում է. Առակներով կ'բա֊
նամ իմ բերանը, և դուրս կ'բղխեմ աշխարհքի
սկզբից ծածկուած բաները:
36 Այն ժամանակ Յիսուս ժողովուրդներին թո֊
ղելով եկաւ տուն, եւ նորա աշակերտները նորա
մօտ եկան եւ ասացին. Մեկնիր մեզ արտի ո֊
37 րոմների առակը: Նա էլ պատասխան տուաւ եւ
ասաց նորանց. Բարի սերմը ցանողը Որդին մար֊
38 դոյ է: Եւ արտը աշխարհքս է, եւ բարի սերմը
նորանք են, որ արքայութեան որդիքն են. եւ
39 որոմները չարի որդիքն են: Եւ թշնամին որ նո֊
րանց սերմեց, սատանան է. եւ հունձքը աշ֊
խարհքի վերջն է, եւ հնձողները հրեշտակներն
40 են: Արդ ինչպէս որ որոմները հաւաքվում են
եւ կրակով այրվում, այնպէս կ'լինի աշխարհքի
41 վերջումը: Որդին մարդոյ կ'ուղարկէ իր հրեշ֊
տակները, եւ նորա արքայութիւնից կ'հաւա֊
քեն բոլոր գայթակղութիւնները եւ անօրէնու֊
42 թիւն գործողներին: Եւ կ'գցեն նորանց կրակի
փուռը մէջ. այնտեղ կ'լինի լացը եւ ատամների
43 կրճտելը: Այն ժամանակ արդարները կ'ծագեն
ինչպէս արեգակը իրանց Հօր արքայութեան մէջ:
Ով որ լսելու ականջ ունի թող լսէ:
44 Դարձեալ նման է երկնքի արքայութիւնը մի
արտի մէջ թաքցրուած գանձի, որ նորան մի
մարդ գտնելով թաքցրեց, եւ ուրախութիւնից
գնում ամեն ինչ որ ունի ծախում է, եւ արտը
առնում:
45 Դարձեալ նման է երկնքի արքայութիւնը մի
վաճառական մարդու, որ գեղեցիկ մարգարիտ֊

46 ներ է որոնում. Որ մի թանգագին մարգարիտ
գտնելով, գնաց ամեն ինչ որ ունէր՝ ծախեց, եւ
առաւ նորան:
47 Դարձեալ նման է երկնքի արքայութիւնը ծո֊
վը գցուած ուռկանի, որ ամեն տեսակից ժողո֊
48 վում է. Որ երբոր լցուեցաւ ցամաքը հանեցին,
ու նստեցին լաւերը ժողովեցին ամանների մէջ,
49 եւ անպէտքները դուրս գցեցին: Այսպէս կ'լինի
աշխարհքի վերջումը, հրեշտակները դուրս կը
50 գան եւ կ'ջոկեն չարերին արդարների միջից. Եւ
կ'գցեն նորանց կրակի փուռը մէջ. այնտեղ կը
լինի լացը եւ ատամների կրճտելը:
51 Յիսուսը ասաց նորանց. Իմացա՞ք այդ բոլորը:
52 Ասացին նորան. Այո՛, Տէր: Նա էլ ասաց նո֊
րանց. Սորա համար ամեն դպիր, որ երկնքի ար֊
քայութեանն է աշակերտել, նման է տանտէր մար֊
դու, որ հանում է իր գանձից նոր եւ հին բաներ:
53 Եւ եղաւ՝ երբոր Յիսուսը այս առակները վեր֊
54 ջացրեց, գնաց այնտեղից: Եւ գալով իր հայրե֊
նիքը, նորանց ժողովարանումը սովորեցնում էր
նորանց, այնպէս որ զարմանում էին նորանք եւ
ասում. Ո՞րտեղից է սորան այս իմաստութիւնը
55 եւ զօրութիւնները: Չէ՞ որ սա հիւսան որդին
է. չէ՞ որ սորա մայրը Մարիամ է կոչվում. եւ
եղբարքը՝ Յակոբոս եւ Յօսէս եւ Սիմօն եւ Յու֊
56 դաս: Եւ չէ՞ որ սորա ամեն քոյրերը մեզ մօտ
են, ապա ո՞րտեղից է սորան այս ամեն բաները:
57 Եւ գայթակղվում էին նորա վերայ: Յիսուսն էլ
նորանց ասաց. Մի մարգարէ անարգուած չէ,
58 բայց միայն իր հայրենիքի եւ իր տան մէջ: Եւ
այնտեղ շատ զօրութիւններ չարաւ նորանց ան֊
հաւատութեան պատճառովը:

ԳԼ. ԺԴ

1 Նոյն ժամանակը Հերովդէս չորրորդապետը Յի-
2 սուսի համբաւը լսեց. Եւ ասաց իր ծառաներին.
Նա Յովհաննէս Մկրտիչն է. նա մեռելների միջից
յարութիւն է առել. եւ նորա համար զօրութիւն-
ներ են գործվում նորանով ։
3 Վասն զի Հերովդէսը բռնեց Յովհաննէսին, կա-
պեց նորան եւ բանտի մէջ դրաւ՝ իր եղբայր
4 Փիլիպպոսի կնոջ Հերովդիայի համար ։ Վասն զի
Յովհաննէսը նորան ասում էր. Թէ Արժան չէ քեզ,
5 որ դորան կին ունենաս ։ Եւ ուզում էր նորան ըս-
պանել, բայց ժողովրդից վախում էր, վասն զի
6 նորան ընդունում էին ինչպէս մարգարէ ։ Եւ երբ-
որ Հերովդէսի ծննդեան օրն եղաւ, Հերովդիայի
աղջիկը հանդէսի մէջ պարեց՝ եւ հաճոյ թուեցաւ
7 Հերովդէսին ։ Ուստի երդումով խոստացաւ նորան
8 տալ ինչ որ ուզէ ։ Նա էլ առաջ իր մօրից խը-
րատ առած՝ ասաց. Տուր այստեղ սկուտեղի վե-
9 րայ Յովհաննէս Մկրտչի գլուխը ։ Եւ թագաւորը
տրտմեցաւ, բայց իր երդմանց եւ իր հետ նըս-
10 տողների համար՝ հրամայեց որ տրուի ։ Եւ ու-
11 ղարկեց գլխատեց Յովհաննէսին բանտումը ։ Եւ
նորա գլուխը բերին սկուտեղի վերայ, եւ տուին
12 աղջկանը. եւ նա տարաւ իր մօրը ։ Եւ նորա
աշակերտները եկան մարմինը վեր առին եւ թա-
ղեցին նորան. եւ եկան պատմեցին Յիսուսին ։
13 Եւ Յիսուսը լսելով այնտեղից նաւով գնաց
առանձին մի անապատ տեղ ։ Եւ ժողովուրդներն
երբոր լսեցին, այն քաղաքներից ոտով գնացին
նորա ետեւից ։
14 Եւ երբոր Յիսուսը դուրս եկաւ, շատ ժողո-

մուրդ տեսաւ, եւ գթաց նորանց վերայ, եւ բը-
ժշկեց նորանց հիւանդներին ։
15 Եւ երբոր իրիկուն եղաւ, աշակերտները նո-
րա մօտ եկան եւ ասացին. Տեղս անապատ է,
եւ ժամանակն արդէն անցել է. ժողովուրդներն
արձակիր որ գնան գիւղերն իրանց համար կե-
16 րակուր առնեն ։ Յիսուսն էլ ասաց նորանց.
Պէտք չէ որ գնան, դուք տուէք դորանց ուտել ։
17 Նորանք էլ ասացին նորան. Մենք այստեղ բան
չունինք, բայց միայն հինգ հաց եւ երկու ձուկ ։
18 Նա էլ ասաց. Նորանք այստեղ բերէք ինձ մօտ ։
19 Եւ հրամայեց որ ժողովուրդները խոտերի վերայ
նստին. եւ հինգ հացը եւ երկու ձուկն առաւ
դէպի երկինքը նայեց՝ օրհնեց, եւ կոտրեց, տը-
ւաւ աշակերտներին հացերը, եւ աշակերտները
20 ժողովուրդներին ։ Եւ ամենքը կերան եւ կշտա-
ցան, եւ կտորների աւելցածը տասներկու քթոց
21 լիքը վեր առին ։ Եւ ուտողները հինգ հազարի
չափ մարդիկ էին՝ բացի կանանցից եւ երեխա-
ներից ։
22 Եւ Յիսուսը շուտով իր աշակերտներին ստի-
պեց, որ նաւը մտնեն եւ իրանից առաջ անցնեն
այն կողմը, մինչեւ որ ինքն այն ժողովուրդնե-
23 րին արձակէ ։ Եւ երբոր ժողովուրդներին արձա-
կեց, վեր ելաւ լեռը՝ առանձին աղօթք անե-
լու. եւ երբոր իրիկուն եղաւ միայն ինքն էր
24 այնտեղ ։ Բայց նաւն արդէն ծովի մէջտեղն էր
և ալէկոծվում էր, վասն զի քամին ներհակ էր ։
25 Եւ գիշերի չորրորդ պահին Յիսուսը նորանց մօտ
26 եկաւ ծովի վերայ գնալով ։ Եւ աշակերտներն
երբոր տեսան նորան ծովի վերայ գնալիս, շը-
փոթուեցան եւ ասացին, թէ աչքի երեւոյթ բան

27 է, եւ վախից աղաղակեցին: Եւ Յիսուսը շու-
տով խօսեց նորանց հետ եւ ասաց. Քաջ եղէք,
28 ես եմ՝ մի վախենաք: Եւ Պետրոսը պատասխան
տուաւ նորան եւ ասաց. Տէր, եթէ դու ես,
հրամայիր ինձ, որ ջրերի վերայով քեզ մօտ գամ:
29 Նա էլ ասաց. Եկ: Եւ Պետրոսը նաւիցը իջնե-
լով ջրերի վերայովը գնաց, որ գայ Յիսուսի
30 մօտ: Եւ տեսնելով որ քամին սաստիկ է, վա-
խեցաւ, եւ երբոր սկսեց ընկղմուիլ, աղաղակեց
31 եւ ասաց. Տէր, փրկիր ինձ: Եւ շուտով Յիսու-
սը իր ձեռը մեկնեց՝ նորան բռնեց եւ ասաց նո-
32 րան. Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցիր: Եւ երբ-
33 որ նաւը մտան, քամին հանդարտեց: Եւ նաւի մէջ
եղողները մօտ գալով նորան երկրպագեցին եւ
ասացին. Ճշմարիտ՝ դու Աստուծոյ Որդին ես:
34 Եւ միւս կողմն անցնելով եկան Գեննեսարէթի
35 երկիրը: Եւ այնտեղի մարդիկը նորան ճանաչե-
լով, ուղարկեցին բոլոր շրջակայքը եւ ամեն հի-
36 ւանդները նորա մօտ բերին: Եւ նորան աղաչում
էին՝ որ միայն հանդերձի ծայրին դիպչին. եւ
նորանք որ դիպան, փրկուեցան:

ԳԼ. ԺԵ

1 Այն ժամանակ Յիսուսի մօտ եկան Երուսաղէ-
մացի դպիրները եւ Փարիսեցիները, եւ ասացին.
2 Ինչո՞ւ համար քո աշակերտները ծերերի աւան-
դութիւնը զանց են անում, վասն զի իրանց ձեռ-
3 ները չեն լուանում, երբոր հաց են ուտում: Նա
էլ պատասխան տուաւ եւ ասաց նորանց. Ապա
դուք ինչո՞ւ էք Աստուծոյ պատուիրանքը զանց
4 անում ձեր աւանդութեան համար: Վասն զի

Աստուած պատուիրեց եւ ասաց. Պատուիր քո
5 հօրը եւ մօրը: Եւ իր հօրը կամ մօրը բամբա-
6 սողը մահով մեռնի: Բայց դուք ասում էք, Թէ
Ով որ հօրը կամ մօրը ասէ՝ Պատարագ է այն
որ ինձանից պիտի շահուէիր, նա թող չպատուէ
իր հօրը կամ մօրը: Եւ ձեր աւանդութեան հա-
7 մար Աստուծոյ պատուէրը խափանել էք: Կեղ-
ծաւորներ, լաւ մարգարէացաւ ձեր մասին Եսա-
8 յին ասելով. Այս ժողովուրդը իր բերանովը է
մօտենում ինձ, եւ շրթունքներովը է ինձ պատ-
ւում, բայց իրանց սիրտն ինձանից հեռացած
9 ջոկուած է: Զուր տեղն են պաշտում ինձ, վար-
դապետութիւններ սովորեցնելով, որ մարդկանց
պատուէրներ են:
10 Եւ ժողովուրդներին իր մօտ կանչելով, ասաց
11 նորանց. Լսեցէք եւ իմացէք. Ոչ թէ բերանը
մտնողն է պղծում մարդուն, այլ բերանիցը դուրս
եկողը, նա է պղծում մարդուն:
12 Այն ժամանակ նորա աշակերտները մօտ գա-
լով ասացին նորան. Գիտե՞ս՝ որ Փարիսեցիներն
13 այն խօսքը լսելով գայթակղեցին: Նա էլ պա-
տասխան տուաւ եւ ասաց. Ամեն տունկ, որ
14 իմ երկնաւոր Հայրը չտնկեց, կ'պոկուի: Թող
տուէք նորանց. կոյր առաջնորդներ են կոյրերի,
եւ երբոր կոյրը կոյրին առաջնորդէ, երկուսն էլ
15 փոսի մէջ կ'ընկնին: Պետրոսը նորա պատասխան
տուաւ եւ ասաց. Մեկնիր մեզ այս առակը:
16 Յիսուսն էլ ասաց. Դո՞ւք էլ տակաւին անխելք
17 էք: Տակաւին չէք հասկանում, թէ ամեն ինչ
որ բերանն է մտնում, փորն է գնում եւ ար-
18 տաքնոցն է գցվում: Բայց բերանիցը դուրս ե-
կող բաները սրտիցն են դուրս գալիս եւ նորանք

19 են մարդուն պղծում։ Վասն զի սրտիցն դուրս
են գալիս չար խորհուրդներ, սպանութիւններ,
շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ,
20 սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ։ Սո-
րանք են մարդուն պղծողը, բայց անլուայ ձեռ-
քով ուտելը մարդուն չէ պղծում։
21 Եւ Յիսուսը այնտեղից դուրս ելաւ գնաց Տիւ-
22 րոսի եւ Սիդօնի կողմերը։ Եւ ահա մի Քանա-
նացի կին այն սահմաններից դուրս եկած աղա-
ղակում էր նորան եւ ասում. Ողորմիր ինձ, Տէր,
որդի Դաւթի, իմ աղջիկը չարաչար դիւահար-
23 ւում է։ Եւ նա նորան մէկ խօսք պատասխան
չտուաւ. եւ նորա աշակերտները մօտ գալով ա-
ղաչում էին նորան եւ ասում. Արձակիր դորան,
24 վասն զի մեր ետեւիցն աղաղակում է։ Նա էլ
պատասխան տուաւ եւ ասաց. Ես չեմ ուղարկ-
ուել՝ եթէ ոչ Իսրայէլի տան կորած ոչխարների
25 մօտ։ Այն կինն էլ եկաւ՝ նորան երկրպագում էր
26 եւ ասում. Տէր, օգնիր ինձ։ Նա էլ պատաս-
խան տուաւ եւ ասաց. Լաւ չէ երեխաների հացն
27 առնել եւ շներին գցել։ Նա էլ ասաց. Այո՛,
Տէր, սակայն շներն էլ իրանց տէրերի սեղանից
28 ընկած փշրանքներիցն են ուտում։ Այն ժամա-
նակ Յիսուսը պատասխան տուաւ եւ ասաց նո-
րան. Ով կին, մեծ է քո հաւատքը. լինի քեզ
ինչպէս ուզում ես. եւ նորա աղջիկը բժշկուեց
նոյն ժամից։
29 Եւ Յիսուսը այնտեղից գնալով Գալիլեայի ծո-
վի մօտ եկաւ, եւ վեր ելաւ լեառն՝ այնտեղ նըս-
30 տեց։ Եւ շատ ժողովուրդներ եկան նորա մօտ,
որ իրանց հետ ունէին կաղեր, կոյրեր, համրեր,
հաշմանդամներ, եւ ուրիշ շատեր, եւ նորանց

գցեցին Յիսուսի ոտքերը, եւ նորանց բժշկեց։
31 Մինչեւ որ ժողովուրդները զարմանում էին,
տեսնելով համրերին խօսելիս, հաշմանդամներին
առողջ, կաղերին գնալիս եւ կոյրերին տեսնե-
լիս. եւ փառաւորեցին Իսրայէլի Աստուծոյն։
32 Եւ Յիսուսը իր աշակերտները մօտ կանչելով
ասաց. Գութս շարժւում է այս ժողովրդի վերայ,
վասն զի արդէն երեք օր է իմ մօտս են եւ բան
մը չունին որ ուտեն. եւ նորանց սոված ճանա-
պարհ գցել չեմ ուզում, մի գուցէ նուաղեն ճա-
33 նապարհում։ Եւ նորա աշակերտները նորան
ասացին. Ո՞րտեղից է մեզ այս անապատում
այնչափ հաց, որ այդքան ժողովուրդը կշտա-
34 ցրնենք։ Եւ Յիսուսը նորանց ասաց. Քանի՞ հաց
ունիք. նորանք էլ ասացին. Եօթը եւ մի քանի
35 փոքր ձկներ։ Եւ հրամայեց ժողովուրդներին,
36 որ գետնի վերայ նստեն։ Եւ այն եօթն հացը
եւ ձկներն առաւ, գոհացաւ կոտրեց եւ իր աշա-
կերտներին տուաւ, եւ աշակերտները ժողո-
37 վրդին։ Եւ ամենքը կերան եւ կշտացան. եւ
կտորների աւելցածը եօթը զամբիւղ վեր առին։
38 Եւ ուտողները չորս հազար մարդիկ էին՝ կա-
նանցից եւ երեխաներից ջոկ։
39 Եւ ժողովուրդներն արձակելուց յետոյ մտաւ
նաւն եւ եկաւ Մագդաղէի սահմանները։

Գլ. ԺԶ

1 Եւ Փարիսեցիներն եւ Սադուկեցիները նորա
մօտ եկան, եւ փորձելով նորանից ուզում էին
2 երկնքից մի նշան ցոյց տալ նորանց։ Նա էլ
պատասխան տուաւ եւ ասաց նորանց. Իրիկուն

դառած ժամանակ ասում էք՝ Պարզ կ՚լինի, վասն
3 զի երկինքը կարմրել է։ Եւ առաւօտը. Այսօր
մրրիկ կ՚լինի, վասն զի երկինքը պղտորած կար-
մրացել է։ Կեղծաւորներ երկնքի երեսը գիտէք
քննել, բայց ժամանակների նշանները չէ՞ք կա-
4 րող։ Չար եւ շնացող ազգը նշան է խնդրում.
եւ նշան չի տրուիլ նորան, բայց միայն Յօնան
մարգարէի նշանը։ Եւ նորանց թողեց գնաց։
5 Եւ նորա աշակերտները այն կողմը գնալիս
6 մոռացան հաց վեր առնել։ Եւ Յիսուսը նորանց
ասաց. Տեսէք եւ զգոյշ կացէք Փարիսեցոց եւ
7 Սադուկեցոց խմորիցը։ Իսկ նորանք իրանց մի-
ջումը միտք էին անում եւ ասում. թէ Հաց չենք
8 վեր առել։ Եւ Յիսուսը այս իմանալով ասաց.
Ինչո՞ւ էք միտք անում ձեր միջումը, թերահա-
9 ւատներ, թէ հաց չէք վեր առել։ Տակաւին չէ՞ք
իմանում, եւ չէ՞ք էլ յիշում այն հինգ հացը հինգ
հազար մարդկանցը, եւ քանի՞ քթոց վեր առիք։
10 Ոչ էլ այն եօթը հացը չորս հազար մարդկանցը,
11 եւ քանի՞ զամբիւղ վեր առիք։ Ի՞նչպէս չէք ի-
մանում, որ հացի համար չասացի ձեզ՝ զգոյշ կե-
12 նալ Սադուկեցոց եւ Փարիսեցոց խմորիցը։ Այն
ժամանակ հասկացան, որ չասաց հացի խմորիցն
զգոյշ կենալ, այլ Փարիսեցոց եւ Սադուկեցոց
վարդապետութիւնիցը։
13 Եւ Յիսուսը դուրս գնաց Փիլիպպեայ Կեսա-
րիայի կողմերը, եւ աշակերտներին հարցնում էր
եւ ասում. Մարդիկ ինձ համար ո՞վ են ասում,
14 որ Որդին մարդոյ լինի։ Նորանք էլ ասացին.
Ոմանք՝ Յօհաննէս Մկրտիչն է. իսկ միւսները՝
Եղիան. և ուրիշներն էլ Երեմիան, կամ Մար-
15 գարէից մէկը։ Նորանց ասաց. Իսկ դուք ո՞վ էք

16 ասում ինձ համար, որ լինիմ։ Սիմօն Պետրոսը
պատասխան տուաւ եւ ասաց. Դու ես Քրիս-
17 տոսը կենդանի Աստուծոյ Որդին։ Եւ Յիսուսը
պատասխան տուաւ եւ ասաց. Երանի քեզ, Սիմօն՝
որդի Յօնանի, վասն զի մարմին եւ արիւն չյայտ-
18 նեց քեզ, բայց իմ Հայրը որ երկնքումն է։ Ես
էլ ասում եմ քեզ, որ Դու ես *Պետրոս, եւ այդ
վիմի վերայ կ՚շինեմ իմ եկեղեցին, եւ դժոխքի
19 դռները չեն յաղթիլ նորան։ Եւ կ՚տամ քեզ
երկնքի արքայութեան բանալիները, եւ այն որ
կապես երկրի վերայ, կապուած կ՚լինի երկնքու-
մը. եւ այն որ երկրի վերայ արձակես, արձակ-
20 ուած կ՚լինի երկնքումը։ Այն ժամանակ իր ա-
շակերտներին պատուիրեց, որ ոչ ոքի չասեն,
թէ նա Յիսուսն է Քրիստոսը։
21 Այնուհետեւ Յիսուսը սկսեց աշակերտներին
յայտնել. թէ պէտք է նորան Երուսաղէմ գնալ
եւ ծերերիցն եւ քահանայապետներիցն եւ դպիր-
ներիցն շատ չարչարանքով չարչարուիլ, սպան-
22 ուիլ եւ երրորդ օրումն յարութիւն առնել։ Եւ
Պետրոսը նորան մի կողմ տանելով սկսեց նորան
յանդիմանել եւ ասել՝ Քաւ լիցի քեզ, Տէր, այդ
23 բանը չլինի քեզ։ Եւ նա դարձաւ ասաց Պետ-
րոսին. Յետիս գնա, սատանայ, գայթակղու-
թիւն ես ինձ. վասն զի դու միտք չես անում
Աստուծոյ այլ մարդկանց բաները։
24 Այն ժամանակ Յիսուսը իր աշակերտներին
ասաց. Եթէ մէկը կամենում է իմ ետեւից գալ,
թող իր անձն ուրանայ իր խաչն առնէ, եւ իմ
25 ետեւից գայ։ Վասն զի ով որ իր անձը ուզէ

---

*Վէմ,

ազատել, կ'կորցնէ նորան, եւ ով որ իր անձն
26 կորցնէ ինձ համար կ'գտնէ նորան: Վասն զի
ի՞նչ օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարհքն բը-
ռանայ եւ իր անձն կորցնէ. կամ ի՞նչ գին կը
27 տայ մարդ իր անձը փրկելու համար: Վասն զի
Որդին մարդոյ գալու է իր Հօր փառքումն իր
հրեշտակների հետ. եւ այն ժամանակ ամեն մէ-
28 կին կ'հատուցանէ իր գործքերի համեմատ: Ճըշ-
մարիտ ասում եմ ձեզ. Այստեղ կանգնողներից
կան ոմանք, որ մահ չեն ճաշակել, մինչեւ որ
Որդին մարդոյ տեսնեն իր թագաւորութիւնովը
գալիս:

ԳԼ. ԺԷ

1 Եւ վեց օրից յետոյ Յիսուսը Պետրոսին եւ Յա-
կոբին եւ նորա եղբայր Յօհաննէսին իր հետ ա-
ռաւ, եւ նորանց առանձին մի բարձր լեառ հա-
2 նեց: Եւ նորանց առջեւը կերպարանափոխուե-
ցաւ, եւ նորա երեսը փայլեց ինչպէս արեգակը,
եւ նորա հանդերձները լուսոյ պէս սպիտակ ե-
3 ղան: Եւ ահա երեւեցան նորանց Մօսէսը եւ Ե-
4 ղիան, որ նորա հետ խօսում էին: Եւ Պետրոսը
պատասխանեց եւ ասաց Յիսուսին. Տէ՛ր, լաւ
է որ մենք այստեղ լինենք. եթէ կամենաս այս-
տեղ երեք տաղաւար շինենք, մէկը քեզ համար,
5 մէկը՝ Մօսէսին, եւ մէկը՝ Եղիային: Եւ նա տա-
կաւին խօսելիս, ահա մի լուսաւոր ամպ հովանի
եղաւ նորանց վերայ. եւ ահա մի ձայն եղաւ այն
ամպից եւ ասաց. Դա է իմ սիրելի Որդին, ո-
6 րին հաւանել եմ, դորան լսեցէք: Եւ աշակերտա-
ները լսելով՝ իրանց երեսների վերայ ընկան, եւ

7 շատ վախեցան: Եւ Յիսուսը մօտեցաւ նորանց
բռնեց եւ ասաց. Վերկացէք եւ մի վախենաք:
8 Եւ իրանց աչքերը բարձրացրին, — ո՛չ ով չտե-
սան, բայց միայն Յիսուսին:
9 Եւ նորանք լեռնից իջնելիս, Յիսուսը նորանց
պատուիրեց եւ ասաց. Ոչ ոքի չասէք այդ տե-
սիլքը, մինչեւ որ Որդին մարդոյ մեռելների մի-
10 ջից յարութիւն առնէ: Եւ նորա աշակերտները
հարցրին նորանից եւ ասացին. Ապա ինչո՞ւ դը-
պիրները ասում են. թէ Առաջ Եղիան պէտք է
11 գայ: Յիսուսն էլ պատասխանեց եւ ասաց նո-
րանց. Իրաւ առաջ Եղիան կ'գայ եւ ամեն բան
12 կ'վերանորոգէ: Բայց ասում եմ ձեզ, որ Եղիան
արդէն եկել է, եւ նորան չճանաչեցին, այլ ինչ
որ ուզեցին՝ նորան արին. այնպէս էլ Որդին
13 մարդոյ չարչարուելու է նորանցից: Այն ժամա-
նակ աշակերտները հասկացան, թէ Յօհաննէս
Մկրտչի համար ասաց նորանց:
14 Եւ երբոր նորանք ժողովրդի մօտ եկան, մի
մարդ մօտեցաւ նորան եւ առջեւը ծունկ դնե-
15 լով՝ Ասում էր. Տէր, իմ որդուն ողորմիր, որ
լուսնոտում է՝ եւ չարաչար տանջվում է. վասն
զի շատ անգամ կրակն է ընկնում, եւ շատ ան-
16 գամ ջուրը: Եւ նորան քո աշակերտների մօտ
17 բերի, եւ չկարողացան նորան բժշկել: Յիսուսն
էլ պատասխանեց եւ ասաց. Ով անհաւատ եւ
խոտորեալ ազգ, մինչեւ ե՞րբ պիտի ձեզ հետ լի-
նիմ, մինչեւ ե՞րբ պիտի ձեզ համբերեմ. նորան
18 ինձ մօտ բերէք այստեղ: Եւ Յիսուսը նորան
սաստեց. եւ դեւը նորանից դուրս եկաւ, եւ
19 տղան նոյն ժամից բժշկուեցաւ: Այն ժամանակ
աշակերտներն առանձին Յիսուսի մօտ եկան եւ

տուացին. Մենք ինչո՞ւ չկարողացինք հանել նո-
20 րան։ Յիսուսն էլ ասաց նորանց. Ձեր անհաւա-
տութեան համար. վասն զի ճշմարիտ ասում
եմ ձեզ՝ թէ որ մանանեխի հատի չափ հաւատք
ունենաք, այս լեռան կ՚ասէք՝ Փոխադրուիր այս-
տեղից այնտեղ, եւ կ՚փոխադրուի. եւ ոչինչ ան-
21 կարելի չլինիլ ձեզ համար։ Բայց այս ցեղը ու-
րիշ բանով դուրս չի գալ եթէ ոչ աղօթքով եւ
ծոմով։
22 Եւ երբոր նորանք Գալիլեայի մէջ ման էին
գալիս, Յիսուսը նորանց ասաց. Որդին մարդոյ
23 մարդկանց ձեռքն է մատնուելու։ Եւ նորան
կ՚սպանեն, եւ երրորդ օրումը յարութիւն կ՚առ-
նէ. եւ նորանք շատ տրտմեցան։
24 Եւ երբոր նորանք Կափառնայում եկան, երկ-
դրամեան հարկի ուզողները Պետրոսի մօտ եկան
եւ ասացին. Ձեր վարդապետն երկդրամեանը
25 չէ՞ վճարում։ Նա ասաց՝ Այո։ Եւ երբոր տունը
մտաւ, Յիսուսը նորանից առաջ սկսեց եւ ա-
սաց. Քեզ ի՞նչպէս է երեւում, Սիմոն, երկրի
թագաւորներն ումի՞ց են առնում հարկը կամ
տուրքը, իրանց որդիքների՞ցը, թէ օտարների-
26 ցը։ Պետրոսը ասաց նորան. Օտարներիցը։ Յի-
սուսը նորան ասաց. Ապա ուրեմն ազատ են որ-
27 դիները։ Բայց որպէս զի նորանց չգայթակղե-
ցընենք, գնա ծովը եւ կարթը գցիր, եւ առաջի
եկող ձուկն առ՝ բերանը բաց, եւ մի սատեր կը
գտնես. այն առ տուր նորանց իմ եւ քո տեղ։

ԳԼ. ԺԸ

1 Այն ժամումը աշակերտները Յիսուսի մօտ ե-

կան եւ ասացին. Ո՞վ է մեծ երկնքի արքայու-
2 թեան մէջ։ Եւ Յիսուսը իր մօտ մի երեխայ
կանչելով, նորան կանգնեցրեց նորանց մէջ տեղը.
3 Եւ ասաց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթէ դարձի
չգաք եւ չլինիք երեխաների նման, չէք մտնել
4 երկնքի արքայութիւնը։ Արդ ով որ իր անձը
այս երեխայի նման խոնարհեցնէ, նա է մեծ եր-
5 կնքի արքայութեան մէջ։ Եւ ով որ մի այսպի-
սի երեխայ ընդունի իմ անունովը, ինձ է ըն-
6 դունում։ Եւ ով որ գայթակղեցնէ այս փոքր-
ներից մէկին, որ հաւատում են ինձ, աւելի լաւ
է նորան, որ մի իշու ջաղացի քար նորա վզիցը
կախուի եւ ծովի անդունդում ընկղմուի։
7 Վա՜յ աշխարհքիս գայթակղութիւնների համար.
վասն զի պէտք է որ գայթակղութիւնները գան,
սակայն վա՜յ այն մարդուն, որի ձեռովը կ՚գայ
8 գայթակղութիւնը։ Եւ եթէ քո ձեռը կամ քո
ոտքը քեզ գայթակղեցնում է, կտրիր նորան եւ
քեզանից դէն գցիր. լաւ է քեզ կաղ կամ հաշմ-
անդամ մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք
եւ երկու ոտք ունենալ՝ եւ յաւիտենական կրակը
9 գցուիլ։ Եւ թէ որ քո աչքը քեզ գայթակղեց-
նում է, հանիր նորան եւ քեզանից դէն գցիր,
լաւ է քեզ մէկ աչքով մտնել կեանքը, քան թէ
երկու աչք ունենալ՝ եւ կրակի գեհենը գցուիլ։
10 Զգոյշ կացէք, որ այս փոքրներից մէկին չա-
նարգէք. վասն զի ասում եմ ձեզ. որ նորանց
հրեշտակներն երկնքումը միշտ տեսնում են իմ
11 Հօր երեսը որ երկնքումն է։ Վասն զի Որդին
12 մարդոյ եկաւ, որ ազատեցնէ կորածը։ Ի՞նչպէս
է երեւում ձեզ, եթէ մի մարդի հարիւր ոչխար
լինի, եւ նորանցից մէկը մոլորի, նա չի թողնի

իննսուն եւ ինն ոչխարը լեռներումը եւ գնալ այն
13 մոլորածին որոնել։ Եւ եթէ լինի որ գտնէ նո-
րան, ճշմարիտ ասում եմ ձեզ. որ նորա վերայ
աւելի կ՚ուրախանայ քան թէ այն իննսուն եւ
14 իննի վերայ որ չեն մոլորած։ Այնպէս ձեր Հայ-
րը՝ որ երկնքումն է, չէ կամենում, որ այս փո-
քրերից մէկը կորչի։
15 Եթէ քո եղբայրը քեզ դէմ մեղանչէ, գնա նո-
րան յանդիմանիր՝ երբոր դու եւ նա մենակ լի-
16 նիք. եթէ քեզ լսէ, քո եղբայրը շահեցիր։ Բայց
եթէ չլսէ, վեր առ մի կամ երկու ուրիշն էլ քեզ
հետ, վասն զի երկու կամ երեք վկայի բերա-
17 նով ամէն բան կ՚հաստատուի։ Բայց եթէ նո-
րանց էլ չլսէ, ասա եկեղեցուն. ապա եթէ ե-
կեղեցուն էլ չլսէ, թող լինի քեզ համար ինչպէս
հեթանոս եւ մաքսաւոր։
18 Ճշմարիտ ասում եմ ձեզ. ինչ որ երկրի վե-
րայ կապէք, երկնքումն էլ կապուած կ՚լինի, եւ
ինչ որ երկրի վերայ արձակէք երկնքումն էլ
19 արձակուած կ՚լինի։ Դարձեալ ասում եմ ձեզ՝ Ե-
թէ ձեզանից երկուսը երկրի վերայ միաբանուին՝
ամէն ինչ բանի համար որ խնդրեն, կ՚լինի նո-
20 րանց իմ Հօրիցն որ երկնքումն է։ Վասն զի
ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունովը ժո-
ղովուած լինին՝ ես այնտեղ նորանց մէջ եմ։
21 Այն ժամանակ Պետրոսը նորա մօտ գալով ա-
սաց. Տէր, քանի՞ անգամ եթէ իմ եղբայրն ինձ
դէմ մեղք անէ, եւ ես ներեմ նորան. մինչեւ
22 եօ՞թն անգամ։ Յիսուսը նորան ասաց. Չեմ աս-
ում քեզ, մինչեւ եօթն անգամ, այլ մինչեւ եօ-
23 թանասուն անգամ եօթն։ Սորա համար երկնքի
արքայութիւնը նմանուեցաւ մի թագաւոր մար-

դու, որ ուզեց իր ծառաների հետ հաշիւ տեսնել։
24 Եւ երբոր սկսեց հաշիւը տեսնել, նորա մօտ մէկը
բերուեցաւ տասն հազար քանքար պարտական։
25 Բայց որովհետեւ չունէր վճարելու, նորա տէրը
հրամայեց՝ որ նա եւ նորա կինն եւ նորա որ-
դիքն եւ ամէն ինչ որ ունէր ծախուի եւ պարտքը
26 վճարուի։ Եւ ծառան էլ երեսի վերայ ընկնելով
երկրպագում էր նորան եւ ասում. Տէր, համ-
բերիր ինձ համար, եւ բոլորը կ՚հատուցանեմ
27 քեզ։ Տէրն էլ գթաց այն ծառայի վերայ՝ նորան
28 արձակեց, եւ պարտքն էլ շնորհեց նորան։ Եւ
երբոր այն ծառան դուրս եկաւ, իր ծառայակից-
ներից մէկին գտաւ՝ որ իրան հարիւր դահեկան
պարտական էր, եւ նորան բռնած խեղդում էր
եւ ասում. Վճարիր ինձ ինչ որ պարտական ես։
29 Հիմա նորա այն ծառայակիցը նորա ոտներն ըն-
կաւ, նորան աղաչում էր եւ ասում. Համբերիր
30 ինձ համար եւ բոլորը կ՚հատուցանեմ քեզ։ Բայց
նա չէր կամենում, այլ գնաց նորան գցեց բան-
31 տը, մինչեւ որ պարտքը վճարէ։ Երբոր նորա
ծառայակիցները տեսան եղած բաները շատ տրտ-
մեցան եւ եկան իրանց տիրոջը յայտնեցին բոլոր
32 եղածը։ Այն ժամանակ նորա տէրը մօտը կան-
չեց նորան եւ ասաց. Չար ծառայ, ես այն բո-
լոր պարտքը շնորհեցի քեզ, որովհետեւ դու ա-
33 ղաչեցիր ինձ։ Պէտք չէ՞ր որ դու էլ քո ծառա-
յակցին ողորմէիր՝ ինչպէս որ ես էլ քեզ ողոր-
34 մեցի։ Եւ նորա տէրը բարկանալով՝ նորան մատ-
նեց դահիճներին, մինչեւ որ բոլոր պարտքը վը-
35 ճարէ նորան։ Այնպէս էլ իմ երկնաւոր Հայրը
կ՚անէ ձեզ, եթէ դուք ամէն մէկդ իր եղբօրը՝
ձեր բոլոր սրտից չթողէք նորանց յանցանքը։

Գլ. ԺԹ

1 Եւ եղաւ երբոր Յիսուսը այս խօսքերը վերջացրեց, Գալիլեայից վեր կացաւ եւ Հրէաստանի
2 կողմերն եկաւ, Յորդանանի այն կողմը։ Եւ շատ
ժողովուրդներ նորա ետեւից գնացին, եւ նորանց այնտեղ բժշկեց։
3 Եւ Փարիսեցիները նորա մօտ եկան եւ նորան
փորձելով ասում էին նորան. Արժա՞ն է արդեօք մարդուս, որ իր կնոջն արձակէ ամեն որ եւ
4 է պատճառի համար։ Նա էլ պատասխանեց եւ
ասաց նորանց. Չէ՞ք կարդացել թէ նա որ սկզբիցն ստեղծեց, արու եւ էգ ստեղծեց նորանց,
5 եւ ասաց. Սորա համար մարդ էր հայրը կամ
մայրը կ'թողէ եւ իր կնոջը կ'յարի, եւ երկուսը
6 կ'լինին մէկ մարմին։ Ուստի այլ եւս երկու չեն,
այլ մէկ մարմին. արդ այն որ Աստուած միաւո
7 րեց, թող մարդը չբաժանէ։ Նորան ասացին.
Ապա ինչո՞ւ Մօսէսը պատուիրեց մեզ արձակ
8 ման թուղթ տալ եւ արձակել նորան։ Նորանց
ասաց. թէ Մօսէսը ձեր քարասրտութեան համար հրաման տուաւ ձեզ՝ ձեր կանայքն արձա
9 կել. բայց սկզբիցն այնպէս չեղաւ։ Եւ ասում
եմ ձեզ. թէ Ամեն ով որ իր կնոջն արձակէ առանց պոռնկութեան պատճառի եւ ուրիշն առնէ,
շնութիւն է գործում. եւ արձակուածն առնողը
10 շնութիւն է գործում։ Իր աշակերտները նորան
ասացին. Եթէ այդպէս է մարդու բանը կնոջ
11 հետ, լաւ չէ ամուսնանալ։ Նա էլ ասաց նորանց. Ամենքը չեն տանում այդ բանը, բայց ո
12 րոնց որ տրուած է։ Վասն զի կան ներքինիք,
որ մօր որովայնից այնպէս են ծնուել. եւ կան

ներքինիք՝ որ մարդկանցից են ներքինացրուել.
եւ կան ներքինիք՝ որ իրանց ներքինացրին երկնքի արքայութեան համար. ով որ կարող է
տանել՝ թող տանի։
13 Այն ժամանակ երեխաներ բերուեցան նորա
մօտ՝ որ ձեռքերը դնէ նորանց վերայ եւ աղօթք
անէ. իսկ աշակերտները յանդիմանում էին նո
14 րանց։ Բայց Յիսուսն ասաց. Թող տուէք այդ
երեխաներին՝ եւ դորանց մի արգելէք ինձ մօտ
գալ. վասն զի այդպիսիներին է երկնքի արքա
15 յութիւնը։ Եւ նորանց վերայ ձեռք դրաւ, եւ
այնտեղից գնաց։
16 Եւ ահա մէկն եկաւ նորա մօտ եւ ասաց. Բարի վարդապետ, ի՞նչ բարի բան գործեմ՝ որ յա
17 ւիտենական կեանքն ունենամ։ Նա էլ ասաց նորան. Ինչո՞ւ ես ինձ բարի ասում. ոչ ոք է բարի բայց միայն մէկն՝ Աստուած, իսկ թէ որ կամիս յաւիտենական կեանքը մտնել, պահիր պատ
18 ուիրանքները։ Նորան ասաց. Ո՞րոնք։ Յիսուսն
էլ ասաց. Սորանք, Մի՛ սպանաներ, Մի՛ շնար,
19 Մի՛ գողանար, Մի՛ սուտ վկայեր. Պատուիր քո
հօրը եւ քո մօրը, եւ սիրիր քո ընկերին քո ան
20 ձի պէս։ Պատանին նորան ասաց. Այդ ամենն
իմ երեխայութիւնից պահեցի. էլ ի՞նչ բանով
21 եմ պակաս։ Յիսուսը նորան ասաց. Եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա ունեցածներդ
ծախիր՝ եւ տուր աղքատներին, եւ գանձ կ'ու
22 նենաս երկնքումը, եւ եկ հետեւիր ինձ։ Երբոր
պատանին այս խօսքը լսեց, տրտմած գնաց,
վասն զի շատ ստացուածք ունէր։
23 Յիսուսն էլ ասաց իր աշակերտներին. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ հարուստը դժուար կը

24 մտնէ երկնքի արքայութիւնը։ Բայց դարձեալ
ասում եմ ձեզ. Աւելի հեշտ է, որ մի ուղտ ա-
սեղի ծակովն անցնի, քան թէ մի հարուստ Աս-
25 տուծոյ արքայութիւնը մտնէ։ Եւ նորա աշա-
կերտներն երբոր լսեցին, շատ զարմացան եւ ա-
26 սացին. Ապա ո՞վ կարող է փրկուիլ։ Յիսուսն
էլ նորանց մտիկ տալով ասաց. Մարդկանց կող-
մանէ դա անկարելի է, բայց Աստուծոյ կողմա-
նէ ամեն բան կարելի է։
27 Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց եւ ա-
սաց նորան. Ահա մենք ամեն բանէր թողինք եւ
28 քո ետեւից եկանք. հիմա ի՞նչ կ՚լինի մեզ։ Յի-
սուսն էլ ասաց նորանց. Ճշմարիտն ասում եմ
ձեզ, թէ դուք՝ իմ ետեւից եկողներդ վերստին
ծննդումը՝ երբոր Որդի մարդոյ իր փառաց ա-
թոռի վերայ կ՚նստի, դուք էլ տասներկու ա-
թոռի վերայ կ՚նստիք՝ եւ Իսրայէլի տասներկու
29 ցեղերը կ՚դատէք։ Եւ ամեն ով որ թողեց տու-
ներ, կամ եղբարք՝ կամ քոյրեր, կամ հայր, կամ
մայր կամ կին կամ որդիք կամ արտեր իմ ա-
նուանի համար, հարիւրապատիկ կ՚առնէ եւ յա-
30 ւիտենական կեանքը կ՚ժառանգէ։ Եւ շատ ա-
ռաջիններ յետինք կ՚լինին, եւ յետիններ առա-
ջինք։

ԳԼ. Ի

1 Վասն զի նման է երկնքի արքայութիւնը մի
տանուտէր մարդու, որ առաւօտանց կանուխ
դուրս եկաւ իր այգու համար մշակներ բռնելու։
2 Եւ մշակների հետ օրը մի դահեկանի խօսելով,
3 ուղարկեց նորանց իր այգին։ Եւ ժամը երեքի

մօտ դուրս եկաւ՝ ուրիշներ տեսաւ, որ հրապա-
4 րակում պարապ կանգնել էին։ Նորանց էլ ասաց.
Դուք էլ գնացէք այգին, եւ ինչ որ արժան է կ՚տամ
5 ձեզ։ Նորանք էլ գնացին. եւ դարձեալ ժամը
վեցին եւ իններին դուրս գալով նոյնպէս արաւ։
6 Եւ ժամը տասնումէկին մօտ էլ դուրս գալով
ուրիշները գտաւ պարապ կանգնած եւ ասաց
նորանց. Ինչո՞ւ էք այստեղ բոլոր օրը պարապ
7 կանգնել։ Նորան ասացին. Որովհետեւ ոչ ոք
մեզ չվարձեց։ Նորանց ասաց. Դուք էլ գնացէք
8 այգին, եւ ինչ որ արժան է՝ կ՚առնէք։ Եւ երբ-
որ իրիկուն եղաւ, այգու տէրն իր տան վերա-
կացուին ասաց. Մշակներին կանչիր եւ նորանց
վարձքը տուր՝ յետիններիցն սկսած մինչեւ ա-
9 ռաջինները։ Եւ ժամը տասնումէկինները գալով,
10 մի մի դահեկան առին։ Առաջիններն էլ եկան՝
եւ կարծեցին, թէ աւելի կ՚առնեն, եւ նորանք
11 էլ մի մի դահեկան առին։ Բայց երբոր առին.
12 տան տիրոջից տրտնջում էին եւ ասում. Թէ
այդ յետինները մէկ ժամ գործեցին, եւ դորանց
մեզ հետ հաւասար արիր, որ օրի ծանրութիւնը
13 եւ տաքութիւնը քաշեցինք։ Նա էլ պատասխա-
նեց նորանցից մէկին եւ ասաց. Ընկեր, չեմ
զրկում քեզ. չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանի
14 համաձայնեցիր։ Քոնը առ եւ գնա. բայց ես ուզ-
15 ում եմ, որ այս յետինին տամ ինչպէս քեզ։ Կամ
մի՞թէ ես իշխանութիւն չունիմ՝ անելու ինչ որ
ուզեմ իմ ստացուածքին. կամ թէ քո աչքը չա՞ր է
16 որ ես բարերար եմ։ Այսպէս յետիններն առաջինք
կ՚լինին, եւ առաջիններն յետինք. վասն զի շա-
տեր են կանչուած, բայց քչեր են ընտրուած։
17 Երբոր Յիսուսը վեր էր ելնում Երուսաղէմ,

տասներկու աշակերտներին առանձին իր հետ ա-
18 ռաւ ճանապարհումը եւ ասաց նորանց. Ահա
վեր ենք ելնում Երուսաղէմ. եւ Որդին մարդոյ
կ'մատնուի քահանայապետներին եւ դպիրներին
19 եւ կ'դատապարտեն նորան մահու. Եւ կ'մատնեն
նորան հեթանոսներին խայտառակելու եւ ծեծե-
լու եւ խաչ հանելու. եւ երրորդ օրումը յարու-
թիւն կ'առնէ։
20 Այն ժամանակ Զեբեդեայի որդոց մայրը իր
որդոցը հետ նորա մօտ եկաւ երկրպագեց, եւ
21 նորանից մի բան խնդրեց։ Նա էլ ասաց նորան.
Ի՞նչ ես ուզում։ Նորան ասաց. Ասա որ իմ այս
երկու որդիքը նստեն մէկը քո աջ կողմը՝ եւ մէկը
22 ձախ կողմը քո արքայութիւնումը։ Յիսուսն էլ
պատասխանեց եւ ասաց. Չէք գիտում՝ թէ ի՞նչ
էք խնդրում. կարո՞ղ էք այն բաժակը խմել որ
ես եմ խմելու, կամ այն մկրտութիւնովը մկրտ-
ուիլ՝ որ ես եմ մկրտուելու։ Նորան ասացին.
23 կարող ենք։ Եւ ասաց նորանց. Իմ բաժակը կը
խմէք, եւ այն մկրտութիւնովը որ ես պիտի
մկրտուիմ կ'մկրտուիք. բայց իմ աջ եւ ձախ կող-
մը նստեցնելն՝ իմս չէ տալ. այլ նորանց՝ որ իմ
24 Հօրիցը պատրաստուած է։ Եւ այն տասներն երբ-
որ լսեցին, նեղացան այն երկու եղբարց վերայ։
25 Յիսուսն էլ նորանց իրան մօտ կանչելով ասաց.
Գիտէք, որ ազգերի իշխանները տիրում են նո-
րանց վերայ, եւ մեծամեծները իշխում են նո-
26 րանց վերայ. Բայց այնպէս չլինի ձեր մէջ, այլ
ձեզանից ով որ կամենայ մեծ լինել, թող ձեզ
27 ծառայ լինի։ Եւ ձեզանից ով որ կամենայ ա-
28 ռաջին լինել, թող ձեզ ծառայ լինի։ Ինչպէս
Որդին մարդոյ չեկաւ որ իրան ծառայեն, այլ որ

ինքը ծառայէ, եւ շատերի փոխանակ իր անձն
փրկանք տայ։
29 Եւ երբոր նորանք Երիքովից դուրս եկան,
30 շատ ժողովուրդներ գնացին նորա ետեւից։ Եւ
ահա երկու կոյր այն ճանապարհի վերայ նստած
էին. երբոր լսեցին՝ թէ Յիսուսն է անց կենում,
աղաղակեցին եւ ասացին. Ողորմիր մեզ, Տէր,
31 որդի Դաւթի։ Իսկ ամբոխն յանդիմանեց նորանց
որ լռեն. բայց նորանք էլ առաւել էին աղաղա-
կում եւ ասում. Ողորմիր մեզ, Տէր, որդի Դաւ-
32 թի. Եւ Յիսուսը կանգնեց՝ կանչեց նորանց եւ
33 ասաց. Ի՞նչ էք ուզում որ անեմ ձեզ։ Նորան
34 ասացին. Տէր, որ մեր աչքերը բացուին։ Յի-
սուսն էլ գթաց՝ նորանց աչքերին դիպաւ, եւ
շուտով տեսան նորանց աչքերը, եւ նորա ետեւ-
ից գնացին։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ երբոր Երուսաղէմին մօտեցան՝ եւ Բեթփա-
գէ եկան Ձիթենեաց լեռան մօտ, այն ժամանակ
2 Յիսուսը երկու աշակերտ ուղարկեց, Եւ ասաց
նորանց. Գնացէք այդ գիւղը՝ որ ձեր առջեւն է,
եւ շուտով այնտեղ մի էշ կ'գտնէք կապած եւ
մի յաւանակ նորա հետ. արձակեցէք բերէք ինձ
3 մօտ։ Եւ եթէ մէկը բան ասէ ձեզ, ասացէք.
թէ Նորանք Տիրոջը պէտք են. եւ շուտով կ'ու-
4 ղարկէ նորանց։ Բայց այս ամենը եղաւ, որ կա-
տարուի մարգարէի ձեռով խօսուածն, որ աս-
5 ում է. Ասացէք Սիօնի աղջկանը. Ահա քո թա-
գաւորը քեզ մօտ է գալիս, հեզ՝ եւ էշն ու յա-
6 ւանակի քուռակը հեծած։ Աշակերտներն էլ գը-
նացին եւ արին ինչպէս որ Յիսուսը հրամայեց

7 նորանց. էշը եւ յաւանակը բերին՝ եւ իրանց
հանդերձները նորանց վերայ գցեցին, եւ նորանց
8 վերայ նստեց։ Եւ խիստ շատ ժողովուրդներ ի-
րանց հանդերձները ճանապարհի վերայ փռեցին.
ուրիշներն էլ ծառերից ճիւղեր էին կտրում եւ
9 ճանապարհումը փռում։ Եւ առաջից եւ ետեւից
գնացող ժողովուրդները աղաղակում էին եւ աս-
ում. Ովսաննա Որդւոյ Դաւթի, օրհնեալ է Տէրո-
ջը անունովը եկողը. Ովսաննա 'ի բարձունս։
10 Եւ երբոր նա Երուսաղէմ մտաւ, բոլոր քա-
11 ղաքը դղրդաց եւ ասաց. Սա ո՞վ է։ Եւ ժողո-
վուրդներն ասում էին. Սա Յիսուս մարգարէն
է՝ Գալիլեայի Նազարէթիցը։
12 Եւ Յիսուսը մտաւ Աստուծոյ տաճարը եւ
դուրս արաւ տաճարի մէջ բոլոր ծախողներին
եւ առնողներին, եւ փող փոխողների սեղաննե-
րը եւ աղաւնի ծախողների աթոռները կործա-
13 նեց. Եւ ասաց նորանց. Գրուած է՝ Իմ տունը
աղօթքի տուն պիտի կոչուի. եւ դուք աւա-
զակների այր էք արել դորան։
14 Եւ տաճարի մէջ կոյրեր եւ կաղեր եկան նո-
15 րա մօտ՝ եւ նորանց բժշկեց։ Երբոր քահանայա-
պետները եւ դպիրները տեսան այն հրաշքները,
որ արաւ, եւ այն երեխաներն էլ տաճարումն
աղաղակելիս եւ ասելիս՝ Ովսաննա Որդւոյ Դաւ-
16 թի, նեղացան. Եւ ասացին նորան. Լսո՞ւմ ես՝
դորանք ի՞նչ են ասում։ Յիսուսն էլ ասաց նո-
րանց. Այո, դուք երբէք չէ՞ք կարդացել՝ թէ
Մանուկների եւ կաթնկերների բերանից օրհնու-
թիւն հաստատեցիր։
17 Եւ նորանց թողելով՝ գնաց քաղաքիցը դուրս
Բեթանիա եւ գիշերն այնտեղ անցուց։

18 Եւ առաւօտանց երբոր յետ էր դառնում քա-
19 ղաք, սովեց։ Եւ այն ճանապարհի վերայ մի
թզենի տեսնելով, գնաց նորա մօտ, եւ նորա
վերայ մի բան չգտաւ բայց միայն տերեւ. եւ
նորան ասաց. Այլ եւս քեզանից պտուղ չլինի
20 յաւիտեան. եւ իսկոյն չորացաւ թզենին։ Եւ ա-
շակերտները տեսնելով զարմացան եւ ասացին.
21 Ի՞նչպէս իսկոյն չորացաւ թզենին։ Յիսուսն էլ
պատասխանեց եւ ասաց նորանց. Ճշմարիտ
ասում եմ ձեզ. Թէ որ հաւատք ունենաք եւ
չերկմտիք, ոչ թէ միայն կ'անէք թզենուն եղա-
ծը, այլ թէ որ այդ լեռան էլ ասէք՝ վեր կաց
22 եւ ընկիր ծովը, կ'լինի։ Եւ ամեն ինչ որ ա-
ղօթքի մէջ խնդրէք հաւատալով, կ'առնէք։
23 Եւ երբոր եկաւ տաճարը, նա սովորեցնելիս,
քահանայապետները եւ ժողովրդի ծերերը նորա
մօտ եկան եւ ասացին. Ի՞նչ իշխանութիւնով
ես անում այդ բաները, եւ ո՞վ տուաւ քեզ այդ
24 իշխանութիւնը։ Յիսուսն էլ պատասխանեց եւ
ասաց. Ես էլ ձեզանից մէկ բան կ'հարցնեմ. ե-
թէ այն ինձ ասէք, ես էլ ձեզ կ'ասեմ Թէ ի՞նչ
25 իշխանութիւնով եմ անում այս բաները։ Յօհան-
նէսի մկրտութիւնը ո՞րտեղից էր, երկնքի՞ց թէ
մարդկանցի՞ց. եւ նորանք իրանց մէջ միտք էին
26 անում եւ ասում. Եթէ ասենք՝ Երկնքից, կ'ասէ
մեզ՝ Ապա ինչո՞ւ չհաւատացիք նորան. իսկ ե-
թէ ասենք՝ Մարդկանցից, ժողովրդիցը վախե-
նում ենք, վասն զի ամենքը Յօհաննէսին մար-
27 գարէի տեղ են ընդունում։ Եւ պատասխանեցին
Յիսուսին եւ ասացին. Չենք գիտում։ Նա էլ
նորանց ասաց. Ես էլ չեմ ասիլ ձեզ. Թէ ի՞նչ
իշխանութիւնով եմ անում այս բաները։

28 Բայց ի՞նչպէս է երեւում ձեզ. մի մարդ եր-
կու որդի ունէր. եւ եկաւ առաջինին ասաց.
29 Որդի, գնա այսօր իմ այգումը բան արա։ Նա
էլ պատասխանեց եւ ասաց. Չեմ կամենում,
30 բայց յետոյ զղջացաւ եւ գնաց։ Եւ միւսի մօտ
գնաց եւ ասաց այնպէս. Նա էլ պատասխանեց
31 եւ ասաց. Կ'գնամ, Տէր. եւ չգնաց։ Հիմա այս
երկուսից ո՞րն արաւ իր հօր կամքը։ Նորան ա-
սացին. Առաջինը։ Յիսուս նորանց ասաց. Ճըշ-
մարիտ ասում եմ ձեզ, որ մաքսաւորները եւ
պոռնիկները ձեզանից առաջ կ'մտնեն Աստուծոյ
32 արքայութիւնը։ Վասն զի Յօհաննէսն եկաւ ձեզ
մօտ արդարութեան ճանապարհով, եւ չհաւա-
տացիք նորան, բայց մաքսաւորները եւ պոռ-
նիկները հաւատացին նորան. եւ դուք տեսնե-
լով չզղջացիք յետոյ, որ հաւատաք նորան։
33 Մի ուրիշ առակ լսեցէք. Մի տանուտէր մարդ
կար՝ որ այգի տնկեց եւ նորան ցանգով պատեց.
եւ նորա մէջ հնձան փորեց եւ աշտարակ շինեց.
եւ տուաւ նորան մշակների, եւ գնաց հեռու
34 աշխարհք։ Եւ երբոր պտղի ժամանակը մօտե-
ցաւ, ուղարկեց իր ծառաները մշակների մօտ՝
35 նորա պտուղները առնելու։ Եւ մշակները ծա-
ռաներին բռնեցին՝ մէկին տանջեցին, մէկին ըս-
36 պանեցին, մէկին քարկոծեցին։ Դարձեալ ուղար-
կեց ուրիշ ծառաներ առաջիններից շատ, եւ նո-
37 րանց էլ այնպէս արին։ Վերջապէս իր որդուն
նորանց մօտ ուղարկեց ասելով. Իմ որդուցը կ'ա-
38 մաչեն։ Բայց մշակները որդուն տեսնելով, ի-
րանք իրանց ասացին. Սա է ժառանգը, եկէք
սորան սպանենք, եւ նորա ժառանգութեանը
39 տիրենք։ Եւ բռնեցին նորան, այգուցը դուրս

40 հանեցին եւ սպանեցին։ Արդ՝ երբոր այն այգու
41 տէրը գայ, ի՞նչ կ'անէ այն մշակներին։ Նորան
ասացին. Չարերին չարաչար կ'կորցնէ, եւ այգին
կ'տայ ուրիշ մշակների, որ պտուղները կ'տան
42 նորան իրանց ժամանակներումը։ Յիսուս նո-
րանց ասաց. Երբէք դուք չէ՞ք կարդացել գըր-
քումը՝ Այն քարն, որ շինողներն անարգեցին,
նա եղաւ անկիւնի գլուխ. սա Տիրոջից եղաւ՝
43 եւ մեր աչքերի առջեւ զարմանալի է։ Սորա
համար ասում եմ ձեզ. որ Աստուծոյ արքայու-
թիւնը ձեզանից վեր կ'առնուի եւ մի ազգի կը
44 տրուի, որ նորա պտուղները կ'բերէ։ Եւ այս
քարի վերայ ընկնողը կ'փշրուի. եւ ում վերայ
որ նա ընկնի՝ կ'ջարդէ նորան։
45 Եւ երբոր քահանայապետները եւ Փարիսեցի-
ները նորա առակները լսեցին, հասկացան՝ որ ի-
46 րանց համար է ասում։ Եւ որոնում էին որ բռ-
նեն նորան, բայց ժողովուրդներիցը վախեցան.
որովհետեւ նորան մարգարէի տեղ էին ընդու-
նում։

Գլ. ԻԲ

1 Եւ Յիսուս պատասխանեց եւ դարձեալ ասաց
2 նորանց առակներով, ասելով. Երկնքի արքայու-
թիւնը նմանեցաւ մի թագաւոր մարդու, որ իր
3 որդոյն հարսանիք արաւ։ Եւ իր ծառաներն ու-
ղարկեց՝ որ հարսանիքի կանչեն հրաւիրուածնե-
4 րին. եւ նորանք չկամեցան գալ։ Դարձեալ ու-
րիշ ծառաներ ուղարկեց եւ ասաց. Ասացէք հը-
րաւիրուածներին. Ահա իմ ճաշը պատրաստեցի.
իմ արջառները եւ մացուները մորթուած են,

5 և բոլորը պատրաստ է. եկէք հարսանիքը։ Իսկ
նորանք անհոգ լինելով՝ գնացին, մէկն իր ար-
6 տը, միւսն իր առուտուրին։ Եւ մնացածները
նորա ծառաներին բռնեցին՝ նախատեցին և ըս-
7 պանեցին։ Բայց թագաւորը լսելով բարկացաւ,
և իր զօրքն ուղարկեց այն սպանողներին սա-
8 տակեցրեց, և նորանց քաղաքն այրեց։ Այն
ժամանակ իր ծառաներին ասաց. Հարսանիքը
պատրաստ է, բայց հրաւիրուածներն արժանի
9 չէին։ Արդ գնացէք դէպի ճանապարհների անց-
քերը, և ում որ էլ գտնէք, կանչեցէք հարսա-
10 նիքը։ Եւ այն ծառաները դուրս գնացին ճանա-
պարհները, և ժողովեցին ամենին ում որ գտան՝
չարը և բարին, և հարսանիքը բազմականնե-
11 րով լցուեցաւ։ Բայց երբոր թագաւորը մտաւ՝
որ բազմականներին մտիկ անէ, այնտեղ մի մարդ
12 տեսաւ՝ հարսանիքի հանդերձ չհագած. Եւ նո-
րան ասաց. Ընկեր, ի՞նչպէս մտար այստեղ, որ
հարսանիքի հանդերձ չունիս. և նա պապանձ-
13 ուեցաւ։ Այն ժամանակ թագաւորն ասաց ծա-
ռաներին. Դորա ոտները և ձեռները կապեցէք.
վեր առէք դորան դրսի խաւարը գցեցէք. այնտեղ
14 կ՚լինի լացը և ատամների կրճտելը։ Վասն զի
շատեր են կանչուած, բայց քիչեր՝ ընտրուած։
15 Այն ժամանակ Փարիսեցիները գնացին նորա
համար խորհուրդ արին, թէ ի՞նչպէս խօսքով ո-
16 րոգայթ գնեն նորան։ Եւ իրանց աշակերտներին
Հերովդէսականների հետ նորա մօտ ուղարկեցին
և ասացին. Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ
ես՝ և Աստուծոյ ճանապարհը ճշմարտութիւնով
սովորեցնում ես, և ոչ մի մարդուց հոգս չու-
նիս. վասն զի մարդու երեսպաշտութիւն չես

17 անում։ Արդ՝ ասա մեզ, ի՞նչպէս է երևում քեզ,
18 կայսրին հարկ տալ պէ՞տք է, թէ չէ։ Եւ Յի-
սուսը նորանց չարութիւնն իմանալով ասաց.
19 Ինչո՞ւ էք փորձում ինձ, կեղծաւորներ։ Ցոյց
տուէք ինձ հարկի սատկը, և նորանք մի դա-
20 հեկան բերին տուին նորան։ Եւ նորանց ասաց.
21 Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է։ Ասացին նո-
րան. Կայսեր։ Այն ժամանակ ասաց. Ուրեմն
կայսրինը կայսրին տուէք, Աստուծոյնը Աստու-
22 ծոյն։ Եւ լսելով, զարմացան. և նորան թողին
գնացին։
23 Այն օրը Սադուկեցիները նորա մօտ եկան՝ որ
ասում են թէ յարութիւն չկայ. և նորան հարց-
24 րին, Եւ ասացին. Վարդապետ, Մովսէսն ասաց.
Եթէ մի մարդ առանց զաւակի մեռնէ, թող նո-
րա եղբայրը նորա կինն առնէ, և իր եղբօր հա-
25 մար զաւակ յարուցանէ։ Հիմա մեզ մօտ եօթն
եղբարք կային. և առաջինը կին առաւ և մե-
ռաւ, և որովհետև զաւակ չունէր՝ իր կինը
26 թողեց իր եղբօրը։ Այնպէս էլ երկրորդ եղբայրը
27 և երրորդը՝ մինչև եօթներորդը։ Եւ ամենից
28 յետոյ կինը մեռաւ։ Հիմա յարութեան ժամանակին
այն եօթից ո՞րին կ՚լինի կին. վասն զի ամենքը
29 նորան կին առին։ Յիսուսն էլ պատասխանեց և
ասաց նորանց. Մոլորուած էք, որ գրքերը չէք
30 գիտում, և ոչ Աստուծոյ զօրութիւնը։ Վասն
զի յարութեան ժամանակին ոչ կին են առնում,
և ոչ մարդու գնում. այլ երկնքումն Աստուծոյ
31 հրեշտակների նման են։ Իսկ մեռելների յարու-
թիւն առնելու համար, չէ՞ք կարդացել այն Աս-
32 տուածանից ձեզ խօսուածը որ ասում է. Ես եմ
Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուա-

ծը, եւ Յակոբի Աստուածը. Աստուած մեռել-
33 ների Աստուած չէ, այլ կենդանիների։ Եւ ժո-
ղովուրդները լսելով զարմանում էին նորա վար-
դապետութեան վերայ։
34 Բայց Փարիսեցիներն երբոր լսեցին, թէ Սա-
դուկեցիներին պապանձեցրեց, հաւաքուեցան
35 մէկտեղ։ Եւ նորանցից մէկը՝ մի օրինական հարց-
36 րեց փորձելով նորան եւ ասաց. Վարդապետ,
37 ո՞ր պատուիրանքն է մեծ օրէնքումը։ Յիսուսն
էլ ասաց նորան. Սիրիր քո Տէր Աստուածը քո
բոլոր սրտովը եւ քո բոլոր անձովը՝ եւ քո բոլոր
38 մտքովը։ Սա է առաջին եւ մեծ պատուիրանքը։
39 Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերը
40 քո անձի պէս։ Այս երկու պատուիրանքից կախ-
ուած են բոլոր օրէնքը եւ մարգարէքը։
41 Եւ երբոր Փարիսեցիները հաւաքուած էին,
42 Յիսուսը նորանցից հարցրեց եւ ասաց. Ձեզ ի՞նչ-
պէս է երեւում Քրիստոսի համար. ո՞ւմ որդին
43 է։ Նորան ասացին. Դաւթի։ Նորանց ասաց.
Ապա ի՞նչպէս Դաւիթը հոգով նորան Տէր է կոչ-
44 ում, ասելով. Տէրն իմ Տիրոջն ասաց. Իմ աջ
կողմը նստիր, մինչեւ քո թշնամիները քո ոտից
45 պատուանդան դնեմ։ Արդ եթէ Դաւիթը նորան
46 Տէր է կոչում, ի՞նչպէս է նորա որդի։ Եւ ոչ
ոք չէր կարողանում մի բան պատասխան տալ
նորան. եւ այն օրից յետոյ էլ մէկը չէր համար-
ձակում նորանից մի բան հարցնելու։

Գլ. ԻԳ.

1 Այն ժամանակ Յիսուսը ժողովուրդների եւ իր
2 աշակերտների հետ խօսեց եւ ասաց. Մօսէսի

աթոռի վերայ դպիրները եւ Փարիսեցիները նըս-
3 տեցան։ Արդ՝ ինչ էլ որ ասեն ձեզ պահել, պա-
հեցէք եւ արէք, բայց նորանց գործերի պէս մի
4 անէք. վասն զի ասում են եւ չեն անում։ Վասն
զի ծանր եւ դժուարակիր բեռներ են կապում
եւ դնում մարդկանց ուսերին, բայց իրանց մա-
5 տովը չեն ուզում շարժել նորանց։ Եւ իրանց
բոլոր գործքերն անում են մարդկանց երեւելու
համար. իրանց գրապանակները լայնացնում են
եւ իրանց հանդերձի քղանցքները մեծացնում.
6 Սիրում են ընթրիքներումն առաջին բազմոցը,
եւ ժողովարաններումն առաջին աթոռները, եւ
7 փողոցների մէջ բարեւներ առնելը։ Եւ մարդկան-
8 ցից Ռաբբի Ռաբբի կոչուիլը։ Բայց դուք Ռաբ-
բի չկանչուիք, վասն զի մէկն է ձեր ուսուցիչը,
այսինքն Քրիստոս. եւ դուք ամենքդ եղբայր էք։
9 Եւ երկրիս վերայ մէկին ձեզ հայր չկանչէք.
վասն զի մէկն է ձեր Հայրը նա որ երկինքումն
10 է։ Ոչ էլ ուսուցիչներ կանչուեցէք, վասն զի
11 մէկն է ձեր ուսուցիչը այսինքն Քրիստոս։ Եւ ձե-
12 զանից մեծը թող ձեր ծառան լինի։ Ով որ իր
անձը բարձրացնէ՝ կ'խոնարհուի. եւ ով որ իր
անձը խոնարհեցնէ՝ կ'բարձրանայ։
13 Իսկ վայ ձեզ, դպիրներ եւ Փարիսեցիներ՝
կեղծաւորներ, որ փակում էք երկնքի արքայու-
թիւնը մարդկանց առջեւ, վասն զի ինքներդ
չէք մտնում, եւ մտնողներին էլ թոյլ չէք տալիս
14 մտնել։ Վայ ձեզ, դպիրներ եւ Փարիսեցիներ՝
կեղծաւորներ, որ ուտում էք որբեւայրիների
տուները, եւ պատճառանքով երկար աղօթք ա-
նում. նորա համար աւելի դատապարտութիւն
15 կ'առնէք։ Վայ ձեզ, դպիրներ Փարիսեցիներ՝

կեղծաւորներ, որ չուր էք գալիս ծովն ու ցա-
մաքը, որ մէկը նորահաւատ անէք. եւ երբոր
լինում է, նորան ձեզանից երկու տակ աւելի
16 գեհենի որդի էք անում։ Վայ ձեզ, կոյր առաջ-
նորդներ, որ ասում էք. Ով որ տաճարովն եր-
դում անէ, մի բան չէ. բայց ով որ տաճարի ոս-
17 կովն երդում անէ, պարտական է։ Յիմարներ
եւ կոյրեր. ո՞րն է արդեօք աւելի մեծ, ոսկի՞ն
18 թէ տաճա՞րը, որ սրբում է ոսկուն։ Եւ, ով որ
սեղանովն երդում անէ, մի բան չէ. բայց ով որ
նորա վերայ լինող պատարագովն երդում անէ,
19 պարտական է։ Յիմարներ եւ կոյրեր. ո՞րն է
արդեօք աւելի մեծ, պատարա՞գը թէ սեղանը,
20 որ սրբում է պատարագին։ Արդ սեղանովն եր-
դում անողը, նորանով՝ եւ այն բոլոր բաներովն է
21 երդում անում որ նորա վերայ են։ Եւ տաճա-
րովն երդում անողը նորանով եւ նորանում բնա-
22 կողովն է երդում անում։ Եւ երկնքովն երդում
անողը Աստուծոյ աթոռովն է երդում անում եւ
23 նորա վերայ նստողովը։ Վայ ձեզ, դպիրներ եւ
Փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ անանուխի եւ
սամիթի եւ չամանի տասանորդը տալիս էք, եւ
թողում էք օրէնքի ծանր ծանր բաները՝ դատաս-
տանը եւ ողորմութիւնը եւ հաւատքը. սա պէտք
24 էր անել՝ եւ այն չթողել։ Կոյր առաջնորդներ,
որ մժեղը քամում էք, բայց ուղտը կուլ էք տա-
25 լիս։ Վայ ձեզ, դպիրներ եւ Փարիսեցիներ՝ կեղ-
ծաւորներ, որ մաքրում էք բաժակի եւ սկաւա-
ռակի դրսի կողմը, բայց ներսեւանց լիքն են
26 յափշտակութիւնով եւ անիրաւութիւնով։ Կոյր
Փարիսեցի, առաջ մաքրիր բաժակի եւ սկաւա-
ռակի մէջը, որ նորանց դուրսն էլ մաքուր լի-

27 նի։ Վայ ձեզ, դպիրներ եւ Փարիսեցիներ՝ կեղ-
ծաւորներ, որ նման էք ծեփած գերեզմանների,
որ դրսեւանց գեղեցիկ են երեւում, բայց ներ-
սեւանց լիքն են մեռելների ոսկերքով եւ ամեն
28 պղծութիւնով։ Այնպէս էլ դուք՝ դրսեւանց ար-
դար էք երեւում մարդկանց, բայց ներսեւանց
լիքն էք կեղծաւորութիւնով եւ անօրէնութիւ-
29 նով։ Վայ ձեզ, դպիրներ եւ Փարիսեցիներ՝ կեղ-
ծաւորներ, որ մարգարէների տապանները շի-
նում էք՝ եւ արդարների գերեզմանները զարդա-
30 րում. Եւ ասում էք. Եթէ լինէինք մեր հարանց
օրերումը, մասնակից չէինք լինիլ նորանց հետ
31 մարգարէների արիւնին։ Ուրեմն դուք ձեր մա-
սին վկայում էք, թէ որդիք էք մարգարէների
32 սպանողներին։ Եւ դուք ձեր հարանց չափը լըց-
33 րէք։ Օձեր, իժերի զաւակներ, ի՞նչպէս կը փախ-
34 չիք գեհենի դատաստանից։ Դորա համար, ա-
հա ես ձեզ մօտ մարգարէներ եւ իմաստուններ
եւ դպիրներ կ'ուղարկեմ. եւ նորանցից կ'սպա-
նէք եւ կ'խաչէք եւ նորանցից ձեր ժողովարան-
ներում կ'տանջէք՝ եւ քաղաքից քաղաք կ'հալա-
35 ծէք։ Որպէս զի ձեզ վերայ գայ ամեն արդար
արիւն, որ երկրի վերայ թափուել է՝ արդար Ա-
բէլի արիւնից մինչեւ Բարաքիայի որդու Զա-
քարիայի արիւնը, որին սպանեցիք տաճարի եւ
36 սեղանի մէջտեղը։ Ճշմարիտ ասում եմ ձեզ.
Այս բոլորը կ'գայ այս ազգի վերայ։
37 Երուսաղէմ Երուսաղէմ, մարգարէները կոտո-
րող, եւ քեզ մօտ ուղարկուածները քարկոծող.
քանի անգամ կամեցայ քո երեխաները ժողովել,
ինչպէս հաւն ժողովում է իր ձագերը թեւերի
38 տակ, եւ դուք չկամեցաք։ Ահա ձեր տունն ա-

39 ւերուած կ'թողուի ձեզ։ Վասն զի ասում եմ
ձեզ. Թէ այսուհետեւ չէք տեսնիլ ինձ՝ մինչեւ որ
ասէք. Օրհնեալ է Տէրոջը անունովը եկողը։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Յիսուսը դուրս ելած գնում էր տաճարից,
եւ աշակերտները մօտ եկան՝ որ ցոյց տան նո-
2 րան տաճարի շինուածքը։ Յիսուսն էլ պատաս-
խանեց եւ ասաց նորանց. Չէ՞ք տեսնում այդ
ամենը. ճշմարիտ ասում եմ ձեզ. այդտեղ քար
քարի վերայ չի թողուիլ որ չքանդուի։
3 Եւ երբոր նա Ձիթենեաց լեռան վերայ նստած
էր, աշակերտներն առանձին նորա մօտ եկան
4 եւ ասացին. Ասա մեզ, այդ երբ կ'լինի. Յի-
սուսն էլ պատասխանեց եւ ասաց նորանց. Զգու-
5 շացէք, որ մէկը ձեզ չխաբէ։ Վասն զի
շատերը կ'գան իմ անունովը կ'ասեն՝ Ես եմ
6 Քրիստոսը. եւ շատերին կ'մոլորեցնեն։ Կռիւ-
ներ եւ կռիւների համբաւներ էք լսելու, զգուշ
կացէք, որ չշփոթուիք. վասն զի ամենը պէտք
7 է լինի. բայց դեռ վերջը չէ։ Վասն զի ազգ
ազգի վերայ վեր կ'կենայ, եւ թագաւորու-
թիւն թագաւորութեան վերայ. եւ սովեր կ'լի-
նին. եւ սաստիկ մահեր՝ եւ տեղ տեղ երկրա-
8 շարժութիւններ կ'լինին։ Բայց այս ամենը ցա-
9 ւերի սկիզբն է։ Այն ժամանակ ձեզ նեղութեան
կ'մատնեն. եւ ձեզ կ'սպանեն, եւ իմ անունի
10 համար ամեն ազգերից ատուած կ'լինիք։ Եւ
այն ժամանակ շատերը կ'գայթակղին, եւ իրար
11 կ'մատնեն եւ իրար կ'ատեն։ Եւ շատ սուտ մար-
գարէք դուրս կ'գան՝ եւ շատերին կ'մոլորեցնեն։

12 Եւ անօրէնութեան շատանալու պատճառաւ՝
13 շատերի սէրը կ'պաղի։ Բայց ով որ մինչեւ վեր-
14 ջը համբերէ՝ նա կ'փրկուի։ Եւ արքայութեան
այս աւետարանը բոլոր աշխարհքումը կ'քարոզ-
ուի ամեն հեթանոսներին վկայութիւն լինելու
համար, եւ այն ժամանակ կ'գայ վերջը։
15 Արդ երբոր տեսնէք աւերածի պղծութիւնը,
Դանիէլ մարգարէի ձեռքով ասուածը, սրբութեան
16 տեղումը կանգնած. կարդացողը մտածէ։ Այն
ժամանակ նորանք, որ Հրէաստանումն են, թող
17 փախչին լեռները։ Ով որ կտրի վերայ լինի՝ թող
18 վեր չգայ մի բան վեր առնելու իր տանիցը։ Եւ
ով որ յանդումն է՝ թող յետ չդառնայ իր հան-
19 դերձները վեր առնելու։ Բայց վայ յղիներին եւ
20 ծիծ տուողներին այն օրերում։ Եւ աղօթք ա-
րէք, որ ձեր փախչիլը ձմեռը չլինի, ոչ էլ շա-
21 բաթ օրը։ Քանզի այն ժամանակ մեծ նեղու-
թիւն կ'լինի. որ այնպիսին աշխարհքիս սկզբից
մինչեւ հիմա չեղաւ, եւ ոչ էլ երբէք կ'լինի։
22 Եւ եթէ այն օրերն չկարճացնուէին, ոչ մի մար-
մին չէր փրկուիլ. բայց ընտրուածների համար
23 այն օրերը կ'կարճացնուին։ Այն ժամանակ եթէ
մէկն ասէ ձեզ՝ Ահա այստեղ է Քրիստոսը, կամ
24 այնտեղ, չհաւատաք։ Վասն զի սուտ Քրիստոս-
ներ եւ սուտ մարգարէներ վեր կ'կենան, եւ մեծ
նշաններ եւ հրաշքներ ցոյց կ'տան, մինչեւ որ ե-
թէ կարելի լինէր, ընտրուածներին էլ կ'մոլորե-
25 ցնէին։ Ահա կանխաւ ասացի ձեզ։ (26) Արդ ե-
թէ ասեն ձեզ. Ահա անապատումն է, դուրս չը
գնաք. Ահա ներսի սենեակումն է, չհաւատաք։
27 Վասն զի ինչպէս կայծակը դուրս է գալիս ա-
րեւելքից եւ երեւում մինչեւ արեւմուտք. այն-

28 պէս էլ կ'լինի Որդոյ մարդոյ գալուստը։ Վասն
զի որտեղ մեռած մարմինը լինի, այնտեղ կ'հա-
ւաքուին արծիւները։
29 Եւ շուտով այն նեղութեան օրերիցն յետոյ
արեգակը կ'խաւարի, եւ լուսինն իր լոյսը չի
տայ, եւ աստղերը երկնքից վայր կ'ընկնին եւ
30 երկնքի զօրութիւնները կ'շարժուին։ Եւ այն
ժամանակ կ'երեւի Որդոյ մարդոյ նշանը եր-
կընքումը, եւ այն ժամանակ կոծ կ'անեն երկրի
բոլոր ազգերը, եւ կ'տեսնեն Որդին մարդոյ գա-
լիս երկնքի ամպերի վերայ զօրութիւնով եւ շատ
31 փառքով։ Եւ կ'ուղարկէ իր հրեշտակները մե-
ծաձայն փողով, եւ նորա ընտրուածներին կ'ժո-
ղովեն չորս կողմից՝ երկնքի ծայրերից մինչեւ
նորա միւս ծայրերը։
32 Թզենուցը սովորեցէք առակը. երբոր նորա
ճղերն արդէն կակուղացել են եւ տերեւը բու-
33 սել, գիտէք որ մօտ է ամառը։ Այսպէս էլ դուք.
երբոր այս ամենը տեսնէք, իմացէք որ մօտ է՝
34 դռներին է։ Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ Այս ազ-
35 գը չի անցնիլ, մինչեւ որ այս ամենը լինի։ Եր-
կինքը ու երկիրս կ'անցնեն, բայց իմ խօսքերս
չեն անցնիլ։
36 Իսկ այն օրուայ եւ ժամի համար ոչ ով չգի-
տէ, ոչ էլ երկնքի հրեշտակները, բայց միայն
37 իմ Հայրը։ Եւ ի՛նչպէս եղան Նոյի օրերն, այն-
38 պէս կ'լինի եւ Որդոյ մարդոյ գալուստը։ Վասն
զի ինչպէս որ էին ջրհեղեղից առաջ եղած օրե-
րը, ուտում էին եւ խմում էին, կին էին ա-
նում եւ մարդու էին գնում, մինչեւ այն օրն,
39 որ Նոյը մտաւ տապանը. Եւ չգիտացին, մինչեւ
որ ջրհեղեղն եկաւ, եւ ամենքը վեր առաւ. այն-

40 պէս կ'լինի եւ Որդոյ մարդոյ գալուստը։ Այն
ժամանակ երկու հոգի կ'լինի արտումը, մէկը
41 կ'առնուի՝ եւ մէկը կ'թողուի։ Եւ երկու հոգի մի
ջաղացում կ'աղան՝ մէկը կ'առնուի եւ մէկը կը
թողուի։
42 Արդ արթուն կացէք. վասն զի չգիտէք թէ
43 ո՞ր ժամում ձեր Տէրը կ'գայ։ Բայց այս իմացէք,
որ եթէ տան տէրը գիտենար թէ որ պահում կը
գայ գողը, արթուն կ'կենար եւ թող չէր տալ
44 որ իր տունը ծակեն։ Սորա համար դուք էլ
պատրաստ կացէք. վասն զի այն ժամին, որ
45 դուք չէք կարծում, Որդին մարդոյ կ'գայ։ Ու-
րեմն ո՞վ է այն հաւատարիմ եւ իմաստուն ծա-
ռան, որին իր տէրն՝ իր ծառաների վերայ դրաւ,
46 որ նորանց կերակուրը տայ ժամանակին։ Երանի
այն ծառային, որ նորա տէրը երբոր գայ, նո-
47 րան այնպէս անելիս գտնէ։ Ճշմարիտ ասում
եմ ձեզ, որ նորան իր ամեն ունեցածների վե-
48 րայ կ'դնէ։ Բայց եթէ այն չար ծառան իր սըր-
49 տումն ասէ. Իմ տէրը գալը ուշացնում է. Եւ
սկսէ իր ծառայակիցներին ծեծել՝ եւ արբեցող-
50 ների հետ ուտել եւ խմել։ Այն ծառայի տէրը
մի օր կ'գայ, որ նա չէ սպասում, եւ մի ժամ՝
51 որ նա չգիտէ. Եւ նորան միջից կ'կտրէ, եւ
նորա բաժինը կեղծաւորների հետ կ'դնէ. այն-
տեղ կ'լինի լացը եւ ատամների կրճտելը։

ԳԼ. ԻԵ

1 Այն ժամանակ կ'նմանի երկնքի արքայութիւնը
տասն կուսանաց, որ իրանց լապտերները վեր
առին եւ դուրս եկան փեսային դիմաւորելու։

2 Նորանցից հինգը իմաստուն էին եւ հինգը յի-
3 մար։ Այն յիմարները վեր առին իրանց լապ-
տերները, բայց ձէթ վեր չառին իրանց հետ։
4 Սակայն իմաստունները իրանց ամաններումը
ձէթ վեր առին իրանց լապտերների հետ մէկ-
5 տեղ։ Եւ երբոր փեսան ուշացաւ ամենքը թըմ-
6 բեցան եւ քնեցին։ Եւ կէս գիշերին աղաղակ ե-
ղաւ՝ թէ Ահա փեսան գալիս է. դուրս եկէք նո-
7 րան դիմաւորելու։ Այն ժամանակ ամեն կու-
սանքը վեր կացան եւ իրանց լապտերները պատ-
8 րաստեցին։ Բայց յիմարներն ասացին իմաստու-
ններին. Տուէք մեզ ձեր իւղիցը, վասն զի մեր
9 լապտերները հանգչում են։ Իմաստուններն էլ
պատասխանեցին եւ ասացին. Մի գուցէ մեզ եւ
ձեզ բաւական չլինի. բայց աւելի լաւ՝ գնացէք
10 ծախողների մօտ եւ գնեցէք ձեզ համար։ Եւ
երբոր նորանք գնացին գնելու, փեսան եկաւ.
եւ պատրաստները նորա հետ հարսանիքը մտան,
11 եւ դուռն փակուեցաւ։ Եւ յետոյ այն միւս կու-
սանքն էլ եկան եւ ասացին. Տէր, Տէր, բաց
12 մեզ։ Նա էլ պատասխանեց եւ ասաց. Ճշմարիտ
13 ասում եմ ձեզ. Ես չեմ ճանաչում ձեզ։ Արդ՝
արթուն կացէք. որովհետեւ չէք գիտում ոչ օրը
եւ ոչ ժամը, որ նորանում Որդին մարդոյ կը
գայ։

14 Վասն զի ինչպէս մի մարդ, որ օտար երկիր
էր գնում, իր ծառաներին կանչեց, եւ իր ու-
15 նեցածը նորանց յանձնեց, Եւ մէկին հինգ քան-
քար տուաւ, եւ միւսին երկու, եւ միւսին մէկ,
իւրաքանչիւրին իր կարողութեան չափ, եւ շու-
16 տով գնաց։ Եւ այն հինգ քանքար առնողը գը-
նաց նորանցով բան արաւ եւ ուրիշ հինգ քան-

17 քար էլ շահեց։ Այնպէս էլ նա՝ որ երկուսն ա-
18 ռաւ, ուրիշ երկուս էլ շահեց։ Իսկ այն մէկն
առնողը գնաց՝ գետինը փորեց՝ եւ իր տիրոջ ար-
19 ծաթը թաքցրեց։ Եւ շատ ժամանակից յետոյ
գալիս է այն ծառաների տէրը եւ նորանցից հա-
20 շիւ առնում։ Եւ այն հինգ քանքար առնողը
մօտ եկաւ. ուրիշ հինգ քանքար էլ առաջ բե-
րաւ եւ ասաց. Տէր, ինձ հինգ քանքար տուիր,
տես, ուրիշ հինգ քանքար էլ շահեցի նորանց
21 վերայ։ Իր տէրն էլ ասաց նորան. Լա՛ւ, ծա-
ռայ՝ բարի եւ հաւատարիմ, քիչ բաների վերայ
հաւատարիմ էիր, քեզ շատ բաների վերայ կը
22 դնեմ. մըտիր քո տիրոջ ուրախութիւնը։ Եւ այն
երկու քանքար առնողն էլ մօտ եկաւ եւ ասաց.
Տէր, ինձ երկու քանքար տուիր. տես, երկու
23 ուրիշ քանքար էլ շահեցի նորանց վերայ։ Իր
տէրը նորան ասաց. Լա՛ւ, ծառայ՝ բարի եւ հա-
ւատարիմ. քիչ բաների վերայ հաւատարիմ էիր,
24 քեզ շատ բաների վերայ կ՚դնեմ. մտիր քո տիրոջ
ուրախութիւնը։ Եւ այն մէկ քանքար առնողն
էլ մօտ եկաւ եւ ասաց. Տէ՛ր, ճանաչում էի քեզ,
որ դու մի պինդ մարդ ես. հնձում ես ուր որ
չսերմեցիր, եւ հաւաքում ես, ուր որ չփռեցիր։
25 Եւ վախենալով գնացի, թաքցրի քո քանքարը
26 գետնի մէջ. ահա առ քոնը։ Նորա տէրն էլ պա-
տասխանեց եւ ասաց նորան. Ծառայ՝ չար եւ
ծոյլ, գիտէիր որ հնձում եմ ուր որ չսերմեցի,
27 եւ հաւաքում եմ ուր որ չփռեցի։ Ուրեմն պէտք
էր որ իմ արծաթը սեղանաւորներին տայիր՝ եւ
28 ես կը գայի տոկոսով կ՚առնէի իմը։ Արդ՝ առէք
դորանից քանքարը, եւ տուէք տասը քանքարն
29 ունեցողին։ Վասն զի ամէն ով որ ունի՝ նորան

կ'արուի եւ կ'աւելանայ, բայց նա որ չունի նո-
30 րանից այն ունեցածն էլ վեր կ'առնուի: Եւ այն
անպիտան ծառային հանեցէք դրսի խաւարը,
այնտեղ կ'լինի լացը եւ ատամների կրճտելը:
31 Եւ երբոր Որդին մարդոյ իր փառքովը կ'գայ
եւ ամեն սուրբ հրեշտակները նորա հետ, այն
32 ժամանակ իր փառաց աթոռի վերայ կ'նստի. Եւ
ամեն ազգերը կ'ժողովուին նորա առջեւը, եւ
նորանց կ'բաժանէ իրարից ինչպէս հովիւը բա-
33 ժանում է ոչխարներն այծերից. Եւ ոչխարնե-
րըն իր աջ կողմին կ'կանգնեցնէ, իսկ այծերը՝
ձախ կողմին:
34 Այն ժամանակ Թագաւորը կ'ասէ իր աջ կող-
միններին, Եկէք, ով իմ Հօր օրհնածները, ժա-
ռանգեցէք աշխարհքի սկզբից ձեզ համար պատ-
35 րաստուած թագաւորութիւնը: Վասն զի սովեցի,
եւ տուիք ինձ ուտել, ծարաւեցի եւ խմեցրիք
36 ինձ, օտար էի, եւ ինձ ձեզ մօտ առիք. Մերկ
էի, եւ հագցրիք ինձ. հիւանդ էի, եւ ինձ այցե-
37 լեցիք. բանտի մէջ էի, եւ ինձ մօտ եկաք: Այն
ժամանակ արդարները կ'պատասխանեն նորան
եւ կ'ասեն. Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ սոված, եւ
38 կերակրեցինք, կամ ծարաւ, եւ խմեցրինք: Ե՞րբ
տեսանք քեզ օտար, եւ մեզ մօտ առինք, կամ
39 մերկ, եւ հագցրինք: Ե՞րբ տեսանք քեզ հիւանդ,
40 կամ բանտի մէջ, եւ եկանք քեզ մօտ: Թագա-
ւորն էլ կ'պատասխանէ եւ կ'ասէ նորանց. Ճշ-
մարիտ ասում եմ ձեզ, Որովհետեւ այս իմ փոքր
եղբայրներից մէկին արիք, ինձ արիք:
41 Այն ժամանակ կ'ասէ ձախ կողմիններին էլ.
Ինձանից դէն գնացէք, ով անիծեալներ, յաւիտե-
նական կրակին մէջ, որ պատրաստուած է սա-

42 տանայի եւ նորա հրեշտակների համար: Վասն
զի ես սովեցի, եւ չտուիք ինձ ուտել, ծարա-
43 ւեցի, եւ ինձ չխմեցրիք: Օտար էի, եւ ինձ
ձեզ մօտ չառիք. մերկ էի, եւ ինձ չհագցրիք.
հիւանդ եւ բանտի մէջ էի, եւ ինձ չայցելեցիք:
44 Այն ժամանակ նորանք էլ կ'պատասխանեն եւ
կ'ասեն. Տէ՛ր, քեզ ե՞րբ տեսանք սոված, կամ
ծարաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ,
կամ բանտի մէջ, եւ քեզ ծառայութիւն չարինք:
45 Այն ժամանակ կ'պատասխանէ նորանց եւ կ'ասէ.
Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ Որովհետեւ այս փո-
քրներից մէկին չ'արիք, ինձ էլ չ'արիք:
46 Եւ սորանք կ'գնան յաւիտենական տանջանքը,
իսկ արդարները յաւիտենական կեանքը:

ԳԼ. ԻԶ

1 Եւ եղաւ երբոր Յիսուսը այս ամեն խօսքերը
2 վերջացրեց, իր աշակերտներին ասաց. Գիտէք,
որ երկու օրից յետոյ զատիկ կ'լինի. եւ Որդին
մարդոյ կ'մատնուի խաչուելու:
3 Այն ժամանակ քահանայապետները եւ դպիր-
ները եւ ժողովրդի ծերերը ժողովուեցան այն
4 քահանայապետի սրահն, որի անունը Կայիափա
5 էր: Եւ խորհուրդ արին որ Յիսուսին բռնեն
նենգութեամբ եւ սպանեն: Բայց ասում էին,
Այս տօնին ոչ, որ ժողովրդի մէջ խռովութիւն
չլինի:
6 Եւ երբոր Յիսուսը Բեթանիա էր՝ Սիմոն բո-
7 րոտի տանը, Նորա մօտ մի կին եկաւ, որ մի
շիշ ծանրագին իւղ ունէր, եւ նորա գլխի վերայ
8 թափեց, երբոր նա սեղան նստած էր: Նորա ա-

շակերտներն էլ տեսնելով նեղացան եւ ասացին.
9 Ինչո՞ւ եղաւ այդ կորուստը։ Վասն զի կարող էր
10 այդ իւղը շատ ծախուիլ եւ աղքատներին տըր-
ուիլ։ Յիսուսն էլ իմանալով ասաց նորանց. Ին-
չո՞ւ էք այդ կնոջը նեղութիւն տալիս, վասն զի
11 դա մի բարի բան գործեց Ինձ վերայ։ Վասն զի
ամեն ժամանակ աղքատներն ունիք ձեզ հետ.
12 բայց Ինձ միշտ ձեզ հետ չունիք։ Դա այդ իւղն
13 Իմ մարմնի վերայ թափելով, Իմ թաղուելու նշա-
նը արաւ։ Բայց ճշմարիտ ասում եմ ձեզ, ուր
որ էլ բոլոր աշխարհքի մէջ այս աւետարանը
քարոզուի, կ'խօսուի նա էլ, որ դա արաւ՝ դորա
յիշատակի համար։
14 Այն ժամանակ տասներկուսից մէկը, որ Յու-
դա Իսկարիովտացի էր ասվում, գնաց քահանայա-
15 պետների մօտ եւ ասաց. Ի՞նչ էք կամենում
Ինձ տալ, եւ ես ձեզ մատնեմ Նորան։ Եւ նո-
16 րանք երեսուն արծաթ կշռեցին տուին Նորան։
Եւ այնուհետեւ յարմար ժամանակ էր որոնում,
որ Նորան մատնէ։
17 Եւ բաղարջակերաց առաջին օրը աշակերտա-
ները Յիսուսի մօտ եկան եւ ասացին Նորան,
Ո՞րտեղ ես կամենում, որ քեզ համար զատիկը
18 պատրաստենք ուտելու։ Նա էլ ասաց. Գնացէք
քաղաքն՝ այս ինչի մօտ, եւ ասացէք նորան,
Վարդապետն ասում է՝ Իմ ժամանակը մօտ է.
քեզ մօտ կ'անեմ զատիկն Իմ աշակերտների հետ։
19 Եւ աշակերտներն արին ինչպէս Յիսուսը հրա-
մայեց նորանց. եւ զատիկը պատրաստեցին։
20 Եւ երբոր իրիկուն եղաւ տասներկուսի հետ
21 սեղան նստեց։ Եւ նորանք ուտելիս, ասաց. Ճըշ-
մարիտ ասում եմ ձեզ, որ ձեզանից մէկը կ'մատ-

22 նէ Ինձ։ Եւ շատ տրտմած՝ նորանց ամեն մէկն ըս-
23 կսեցին Նորան ասել. Մի՞թէ ե՞ս եմ, Տէր։ Նա
էլ պատասխանեց եւ ասաց. Նա որ Ինձ հետ
24 իր ձեռն սկուտակի մէջ մտցրեց, նա կ'մատնէ
Ինձ։ Իրաւի մարդոյ Որդին կ'գնայ, ինչպէս նո-
րա համար գրուած է. բայց վա՜յ այն մարդոյն,
որի ձեռքով Որդին մարդոյ կ'մատնուի. լաւ էր
25 նորան, թէ այն մարդը ծնուած չլինէր։ Յուդան
էլ՝ Նորա մատնողը՝ պատասխանեց եւ ասաց.
Մի՞թէ ե՞ս եմ, Վարդապետ։ Նորան ասաց. Դու
ասացիր։
26 Եւ նորանք դեռ ուտում էին, Յիսուսը հացն ա-
ռաւ եւ օրհնելով կտրեց, եւ աշակերտներին տուաւ
եւ ասաց. Առէ՛ք կերէք, այս է Իմ մարմինը։
27 Եւ բաժակն առաւ, գոհացաւ, նորանց տուաւ
28 եւ ասաց. Խմեցէ՛ք դորանից ամենքդ։ Վասն զի
այդ է Իմ արիւնը նոր ուխտի, որ թափվում է
29 շատերի համար 'ի թողութիւն մեղաց։ Միայն ա-
սում եմ ձեզ. թէ Այսուհետեւ որթի այս բերքի-
ցըն էլ չեմ խմիլ մինչեւ այն օրն, որ դորան ձեզ
հետ նոր կը խմեմ Իմ Հօր արքայութեան մէջ։
30 Եւ օրհներգելուց յետոյ դուրս ելան Ձիթենեաց
31 լեառը։ Այն ժամանակ Յիսուսն նորանց ասաց.
Դուք ամենքդ այս գիշեր կ'գայթակղիք Ինձանից.
32 վասն զի գրուած է՝ Հովիւը կ'զարնեմ՝ եւ հօ-
տի ոչխարները կ'ցրուին։ Բայց Իմ յարութիւն
առնելուցն յետոյ ձեզանից առաջ կ'գամ Գալիլեա։
33 Պետրոսը պատասխանեց եւ ասաց նորան. Թէ
եւ ամենքն էլ գայթակղին քեզանից, ես երբէք
34 չեմ գայթակղիլ։ Յիսուսը նորան ասաց. Ճշմա-
րիտ ասում եմ քեզ. Այս գիշեր դեռ հաւը
35 չխօսած՝ երեք անգամ կ'ուրանաս Ինձ։ Պետրո-

ար նորան ասաց․ Եթէ քեզ հետ մեռնելու էլ լի-
նիմ, չեմ ուրանալ քեզ, այնպէս էլ բոլոր աշա-
կերտներն էին ասում։
36 Այն ժամանակ Յիսուսը նորանց հետ մի տեղ
եկաւ՝ անունը Գեթսեմանի, եւ ասաց աշակերտա-
ներին․ Այդ տեղ նստեցէք, մինչեւ որ գնամ ա-
37 ղօթք անեմ այնտեղ։ Եւ Պետրոսին եւ Զեբե-
դեայի երկու որդկանց իր հետ առաւ, սկսեց
38 տրտմիլ եւ վշտանալ։ Այն ժամանակ նորանց
ասաց․ Հոգիս մեռնելու չափ տրտմած է․ այս-
39 տեղ մնացէք, եւ ինձ հետ արթուն կացէք։ Եւ
մի քիչ առաջ գնալով իր երեսին վրայ ընկաւ,
աղօթք էր անում եւ ասում․ Իմ Հայր, եթէ
կարելի է, թող այս բաժակն ինձանից անցնի․
սակայն ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչ-
40 պէս դու։ Եւ աշակերտներին մօտ է գալիս, եւ
նորանց քնի մէջ է գտնում եւ ասում Պետրո-
սին․ Այդպէս՝ մէկ ժամ է՞լ չկարացիք ինձ հետ
41 արթուն կենալ։ Արթուն կացէք եւ աղօթք ա-
րէք, որ փորձութեան մէջ չմտնէք․ հոգին յօժար
42 է, բայց մարմինը տկար։ Դարձեալ երկրորդ ան-
գամ Յիսուսը գնաց, աղօթք արաւ՝ եւ ասաց․
Իմ Հայր, եթէ կարելի չէ, որ այս բաժակն ին-
ձանից անցնի առանց իմ նորան խմելուս, քո
43 կամքը լինի։ Եւ գալով նորանց դարձեալ քնի
մէջ է գտնում․ վասն զի նորանց աչքերը ծան-
44 րացել էին։ Նորանց թողեց՝ դարձեալ գնաց, եւ
45 երրորդ անգամ աղօթք արաւ եւ միեւնոյն խօս-
քըն ասաց։ Այն ժամանակ իր աշակերտներին
մօտ է գալիս եւ նորանց ասում․ Այսուհետեւ
քնեցէք եւ հանգստացէք․ վասն զի ահա հասել
46 է ժամը, եւ Որդին մարդոյ մատնվում է մեղա-

ւորաց ձեռքը։ Վեր կացէք գնանք, ահա հասաւ
ինձ մատնողը։
47 Եւ նա տակաւին խօսում էր, ահա Յուդան,
այն տասներկուսից մէկը եկաւ, եւ նորա հետ
մեծ ամբոխ սրերով եւ բրերով, քահանայապետ-
48 ների եւ ժողովրդի ծերերի կողմից։ Եւ նորան
մատնողը նորանց նշան էր տուել եւ ասել․ Ո-
49 րին որ համբուրեմ, նա է, բռնեցէք նորան։ Եւ
շուտով Յիսուսի մօտ եկաւ եւ ասաց․ Բարեւ,
50 վարդապետ․ եւ նորան համբուրեց։ Յիսուսն էլ
ասաց նորան․ Ընկեր, ինչո՞ւ համար եկար․ եւ
այն ժամանակ մօտ եկան՝ Յիսուսին ձեռք ձգե-
51 ցին՝ եւ բռնեցին նորան։ Եւ ահա Յիսուսի հետ
լինողներից մէկը ձեռք մեկնեց, իր սուրը հա-
52 նեց, եւ քահանայապետի ծառային զարկելով
ականջը կտրեց։ Այն ժամանակ Յիսուսը նորան
ասաց․ Սուրդ տեղը դիր․ վասն զի բոլոր սուր
53 վեր առնողները սրով պիտի կորչին։ Կամ կար-
ծո՞ւմ ես, թէ չեմ կարող հիմա իմ Հօրն աղա-
չել, որ հասցնէ ինձ աւելի քան տասներկու
54 գունդ հրեշտակներ։ Բայց ի՞նչպէս կ'կատարուին
գրքերը, թէ այսպէս պէտք է լինել։
55 Այն ժամին Յիսուսն այն ամբոխներին ասաց․
Ինչպէս մի աւազակի՞ վերայ սրերով եւ բրերով
դուրս եկաք ինձ բռնելու․ ամեն օր ձեզ մօտ
նստում էի եւ տաճարումը սովորեցնում, եւ
56 չբռնեցիք ինձ։ Բայց այս ամենը եղաւ, որ մար-
գարէների գրքերը կատարուին․ Այն ժամանակ
բոլոր աշակերտները նորան թողին փախան։
57 Բայց նորանք Յիսուսին բռնեցին տարան Կա-
յիափա քահանայապետի մօտ, ուր որ դպիրնե-
58 րը եւ ծերերը ժողովուած էին։ Պետրոսն էլ դը-

գնում էր նորա ետեւից հեռուանց մինչեւ քահա-
նայապետի սրահը, եւ ներս մտաւ, ծառաների
59 հետ նստեց վերջը տեսնելու։ Բայց քահանայա-
պետները եւ ծերերը եւ բոլոր ատեանը Յիսուսի
դէմ սուտ վկայութիւն էին որոնում, որ նորան
60 սպանեն եւ չգտան։ Եւ թէպէտ շատ սուտ վկա-
ներ էին եկել, բայց չգտան․ վերջապէս երկու
61 սուտ վկաներ առաջ եկան, Եւ ասացին․ Սա
ասաց ես կարող եմ Աստուծոյ տաճարը քանդել՝
62 եւ երեք օրումը շինել նորան։ Եւ քահանայա-
պետը վեր կացաւ նորան ասաց․ Ոչինչ չե՞ս
պատասխանում ինչ որ դորանք քեզ դէմ վկա-
63 յում են։ Եւ Յիսուսը լուռ էր կենում։ Եւ քա-
հանայապետը պատասխանեց եւ ասաց նորան․
Երդում եմ տալիս քեզ կենդանի Աստուծովը
64 որ մեզ ասես, թէ դո՞ւ ես Քրիստոսը Աստուծոյ
Որդին։ Յիսուսն էլ նորան ասաց․ Դու ասացիր․
սակայն ասում եմ ձեզ, որ հիմիկուց յետոյ կ'տես-
նէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը նստած՝
65 եւ երկնքի ամպերի վերայ գալիս։ Այն ժամանակ
քահանայապետն իր հանդերձները պատառեց եւ
ասաց, թէ Հայհոյեց․ էլ ի՞նչ պէտք են մեզ վկայք․
66 ահա հիմա դորա հայհոյանքը լսեցիք։ Ի՞նչպէս է
երեւում ձեզ։ Նորանք էլ պատասխանեցին եւ ա-
67 սացին․ Մահապարտ է։ Այն ժամանակ թքեցին
նորա երեսին, եւ բռնցքով ծեծեցին նորան, ո-
68 մանք էլ ապտակ տուեցին նորան, ասելով․ Մարգա-
րէացիր մեզ, Քրիստոս, ո՞վ էր քեզ զարկողը։
69 Եւ Պետրոսը դուրսը նստած էր սրահումը,
եւ մէկ աղախին եկաւ նորա մօտ եւ ասաց․
70 Դու էլ Գալիլեացի Յիսուսի հետ էիր։ Նա էլ
բոլորի առջեւը ուրացաւ եւ ասաց․ Չեմ գիտում

71 թէ ինչ ես ասում։ Եւ երբոր նա դուրսը բակը
գնաց, մի ուրիշ կին նորան տեսաւ եւ այնտեղ
լինողներուն ասաց․ Սա էլ էր Նազօրեցի Յի-
72 սուսի հետ։ Եւ դարձեալ ուրացաւ երդումով,
73 թէ Ես այն մարդը չեմ ճանաչում։ Եւ քիչ ժա-
մանակից յետոյ այնտեղ կանգնողները եկան եւ
Պետրոսին ասացին․ Ճշմարիտ՝ դու էլ նորանցից
ես․ վասն զի քո խօսելն էլ յայտնի է անում
74 քեզ։ Այն ժամանակ սկսեց անիծել եւ երդուել՝
թէ Այն մարդուն չեմ ճանաչում, եւ շուտով
75 հաւը խօսեց։ Եւ Պետրոսը յիշեց Յիսուսի այն
խօսքն, որ ասաց․ թէ Հաւը խօսելուց առաջ՝
երեք անգամ կ'ուրանաս ինձ․ եւ դուրս գնաց
դառնապէս լաց եղաւ։

Գլ․ ԻԷ

1 Եւ երբոր առաւօտ եղաւ, բոլոր քահանայա
պետները եւ ժողովրդի ծերերը Յիսուսի դէմ
2 խորհուրդ արին, որ սպանեն նորան։ Եւ նորան
կապելով տարան, եւ Պոնտացի Պիղատոս՝ կու-
սակալին յանձնեցին։
3 Այն ժամանակ նորա մատնիչ՝ Յուդան տես-
նելով, որ դատապարտուեցաւ, զղջացած այն ե-
րեսուն արծաթը յետ դարձրեց քահանայապետ-
4 ներին եւ ծերերին, Եւ ասաց․ Մեղք գործեցի՝
անմեղ արիւն մատնելով։ Նորանք էլ ասացին,
5 Մե՞զ ինչ․ դո՛ւ տես։ Եւ արծաթը գցեց տաճա-
6 րի մէջ՝ հեռացաւ, եւ գնաց խեղդուեցաւ։ Եւ
քահանայապետներն որ արծաթն առին՝ ասա-
ցին․ Արժան չէ՛ դորան գանձանակի մէջ ընդու-
7 նել, որովհետեւ արիւնի գին է։ Եւ խորհուրդ
արին եւ նորանով բրուտի արտատեղն առին, գ-

8 տարականների գերեզմանատեղի համար։ Նորա
համար այն արտատեղը Արիւնի արտ կոչուեցաւ
9 մինչեւ այսօր։ Այն ժամանակ կատարուեցաւ
Երեմիա մարգարէի ձեռով ասուածը, Եւ երեսուն
արծաթն առին՝, այն ծախուածի գինը՝ որ Իս-
10 րայէլի որդիքներից առել էին, Եւ նորան բրու-
տի արտին տուին, ինչպէս հրամայեց ինձ Տէրը։
11 Եւ Յիսուսը կանգնեց կուսակալի առջեւը. եւ
կուսակալը հարցրեց նորան եւ ասաց. Դո՞ւ ես
Հրէից թագաւորը։ Յիսուսն էլ ասաց նորան.
12 Դու ես ասում։ Եւ երբոր քահանայապետներից
եւ ծերերից ամբաստանվում էր՝ ոչ ինչ չպա-
13 տասխանեց։ Այն ժամանակ Պիղատոսը ասաց
նորան. Չե՞ս լսում՝ ո՞րչափ բաներ են քեզ հա-
14 կառակ վկայում։ Եւ նորան խսկի մէկ բան էլ
չպատասխանեց. մինչեւ որ կուսակալն էլ շատ
զարմացաւ։
15 Բայց սովորութիւն էր կուսակալին տօնի ժա-
մանակում մէկ կապուած արձակել ժողովրդի հա-
16 մար. որին որ ուզում էին։ Եւ այն ժամանակ
մի նշանաւոր բանտարկեալ ունէին, անունը Բա-
17 րաբբա։ Արդ երբոր նորանք հաւաքուեցան, Պի-
ղատոսը ասաց նորանց. Ո՞րն էք ուզում, որ ձեզ
համար արձակեմ. Բարաբբայի՞ն, թէ Յիսուսին,
18 որ Քրիստոս է կոչվում։ Վասն զի գիտէր, որ
նախանձով էին մատնել նորան։
19 Եւ երբոր նա ատեան նստած էր, նորա կինն
մարդ ուղարկեց նորա մօտ եւ ասաց. Այդ ար-
դար մարդոյ հետ դու բան չունիս. վասն զի շատ
բաներ քաշեցի այսօր նորա պատճառով։
20 Բայց քահանայապետները եւ ծերերը ժողո-
վրդին համոզեցին, որ Բարաբբային ուզեն, իսկ

21 Յիսուսին կորցնեն։ Եւ կուսակալը պատասխա-
նեց եւ ասաց նորանց. Այս երկուսից ո՞րն էք
ուզում, որ արձակեմ ձեզ համար։ Եւ նորանք
22 ասացին, Բարաբբային։ Պիղատոսն ասաց նո-
րանց. Ապա ի՞նչ անեմ Յիսուսին որ Քրիստոս
23 է կոչվում։ Ամենքն ասացին. Թող խաչուի։ Եւ
կուսակալն ասաց, Ապա ի՞նչ չար բան է արել։
Բայց նորանք էլ աւելի էին աղաղակում եւ ա-
24 սում, Խաչուի։ Պիղատոսն էլ երբոր տեսաւ, թէ
ոչինչ օգուտ չէ անում, այլ աւելի խռովութիւն
է լինում, ջուր առաւ՝ ձեռները լուաց ժողովրդի
առջեւը եւ ասաց. Ես այդ արդարի արիւնից
25 անմեղ եմ, դուք տեսէք։ Եւ բոլոր ժողովուրդը
պատասխանեց եւ ասաց. Դորա արիւնը մեզ վե-
26 րայ եւ մեր որդոց վերայ։ Այն ժամանակ Բա-
րաբբային արձակեց նորանց համար, եւ Յիսու-
սին ծեծելուց յետոյ յանձնեց որ խաչուի։
27 Այն ժամանակ կուսակալի զինուորները Յի-
սուսին տարան պալատը, եւ բոլոր զօրագունդը
28 հաւաքեցին նորա վերայ։ Եւ նորան մերկացնե-
լով նորա վերայ մի կարմիր քղամիդ գցեցին։
29 Եւ փշերից մի թագ ոլորեցին՝ նորա գլխին դրին,
եւ նորա աջ ձեռին մի եղէգ. եւ նորա առջեւը
ծունր դնելով ծաղր էին անում եւ ասում. Ողջ
30 լեր, Հրէից թագաւոր։ Եւ նորա վերայ թքելով՝
եղէգն առնում էին եւ նորա գլուխը ծեծում։
31 Եւ երբոր ծաղր արին նորան, կարմիր քղամիդը
նորանից հանեցին՝ եւ նորան հագցրին իր հան-
դերձները, եւ տարան նորան խաչելու։
32 Եւ երբոր դուրս եկան, մի Կիւրենացի մարդ
գտան՝ անունը Սիմօն, նորան պահակ բռնեցին,
33 որ նորա խաչը վեր առնէ։ Եւ երբոր Գողգոթա

տուած տեղն եկան, որ գանկի տեղ ասել է.
34 Նորան լեղու հետ խառնած գինի տուին խմել.
35 եւ երբոր ճաշակեց, չէր կամենում խմել: Նո-
րան խաչողներն էլ բաժանեցին նորա հանդերձ-
ները՝ վիճակ գցելով, որ կատարուի մարգարէից
ձեռով ասուածը՝ Իմ հանդերձներն իրանց մէջ
բաժանեցին, եւ իմ պատմուճանի վերայ վիճակ
36 էին գցում: Եւ նստած պահում էին նորան այն-
37 տեղ: Եւ նորա յանցանքը գրուած դրին իր գըլ-
խիցը վերեւ. ՍԱ Է ՅԻՍՈՒՍ՝ ՀՐԷԻՑ ԹԱԳԱՒՈՐԸ:
38 Այն ժամանակ նորա հետ երկու աւազակներ խաչ-
ուեցան՝ մէկը աջ կողմին եւ միւսը ձախ կողմին:
39 Եւ անցնող դարձողները հայհոյում էին նորան,
40 իրանց գլխները շարժելով, եւ ասում. Ով տա-
ճարը քանդող՝ եւ երեք օրում շինող, ազատիր
քեզ. եթէ Աստուծոյ Որդի ես, իջիր խաչիցը:
41 Այնպէս էլ քահանայապետներն էին ծաղր անում
42 դպիրների եւ ծերերի հետ եւ ասում. Ուրիշնե-
րին ազատեց, ինքն իրան չէ կարողանում ազա-
տել. թէ որ Իսրայէլի թագաւորն է, իջնէ հիմա
43 խաչիցը, եւ կ՚հաւատանք դորան: Աստուծոյն
յուսացաւ, հիմա թող փրկէ դորան, եթէ ուզում
է դորան. վասն զի ասաց, թէ Աստուծոյ Որդի
44 եմ: Միեւնոյնն էլ աւազակներն, որ նորա հետ
խաչուած էին, նախատում էին նորան:
45 Եւ ժամը վեցից խաւար եղաւ բոլոր երկրի
46 վերայ մինչեւ ինն ժամը: Եւ ժամը իննի դէմ,
Յիսուսն մեծ ձայնով աղաղակեց եւ ասաց. Էլի՛
Էլի՛ լա՛մա սաբաքթանի. այսինքն, Իմ Աստուած՝
47 իմ Աստուած, ինչո՞ւ թողիր ինձ: Այնտեղ կանգ-
նածներից ոմանք էլ երբոր լսեցին, ասում էին՝
48 թէ Եղիային է կանչում դա: Եւ շուտով նորան-

ցից մէկը վազեց՝ մի սպունգ առաւ քացախով
լցրեց, եղէգի վերայ անցրեց՝ եւ նորան տուաւ,
49 որ խմէ. Եւ միւսներն ասում էին, Թող՝ տես-
նենք, թէ Եղիան կ՚գա՞յ՝ դորան փրկէ:
50 Յիսուսը դարձեալ մեծ ձայնով կանչեց՝ եւ ար-
ձակեց հոգին:
51 Եւ ահա տաճարի վարագոյրն ճղեց երկու ճըղ-
ուեցաւ վերեւից մինչեւ ցածը, եւ երկիրը շար-
52 ժեց. եւ քարերը պատառուեցան. Եւ գերեզ-
մանները բացուեցան. եւ շատ սուրբ ննջեցելոց
53 մարմիններ յարութիւն առին. Եւ գերեզմաննե-
րից դուրս գալով, նորա յարութիւնից յետոյ,
սուրբ քաղաքը մտան, եւ շատերին երեւեցան:
54 Բայց հարիւրապետը եւ նորանք, որ նորա հետ
Յիսուսին պահում էին, երբոր երկրաշարժը եւ
այն եղածները տեսան, շատ վախեցան եւ ասա-
ցին. Ճշմարիտ որ սա Աստուծոյ Որդի էր:
55 Եւ այն տեղ շատ կանայք կային, որ հեռուանց
մտիկ էին տալիս, որ Գալիլեայից Յիսուսի ե-
56 տեւից եկան նորան ծառայութիւն անելու: Սո-
րանց միջումն էր Մարիամ Մագդաղենացին՝ եւ
Մարիամ Յակոբի եւ Յօսէի մայրը՝ եւ Զեբեդիայի
որդոց մայրը:
57 Եւ երբոր իրիկուն եղաւ Արեմաթիայից մի
հարուստ մարդ եկաւ՝ անունը Յօսէփ, որ ինքն
58 էլ աշակերտ եղած էր Յիսուսին: Սա գնաց Պի-
ղատոսի մօտ եւ Յիսուսի մարմինը խնդրեց. այն
ժամանակ Պիղատոս հրամայեց որ մարմինը տըր-
59 ուի: Եւ Յօսէփը մարմինն առնելով մաքուր կը-
60 տաւով պատանեց, Եւ դրաւ իր նոր գերեզմանի
մէջ, որ վէմի մէջ փորել էր. եւ գերեզմանի դը-
61 րանը մի մեծ քար թաւալեց գնաց: Եւ այնտեղ

էր Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը,
գերեզմանի դիմացը նստած։
62 Եւ հետեւեալ օրը որ ուրբաթից յետոյ է, քա-
հանայապետները եւ Փարիսեցիները հաւաքուե-
63 ցան Պիղատոսի մօտ, Եւ ասացին. Տէր, յիշում-
ենք որ այն մոլորեցուցիչը, դեռ կենդանի, ա-
սում էր. Երեք օրից յետոյ յարութիւն կ'առնեմ։
64 Ուրեմն հրամայիր, որ մինչեւ երրորդ օրը գե-
րեզմանն զգուշութիւնով պահեն. մի գուցէ ա-
շակերտները գիշերը գան՝ նորան գողանան. եւ
ժողովրդին ասեն՝ Մեռելներից յարութիւն առաւ,
եւ յետին մոլորութիւնը չար լինի քան թէ ա-
65 ռաջինը։ Պիղատոսն էլ ասաց նորանց. Ունիք
պահապան զինուորներ, գնացէք՝ զգոյշ պահե-
66 ցէք՝ ինչպէս գիտէք։ Նորանք էլ գնացին գե-
րեզմանին պահպանութիւն արին, քարը կնքելով
պահապան զինուորների հետ։

ԳԼ. ԻԸ

1 Եւ շաբաթ իրիկունն՝ որ միաշաբաթ էր լուսա-
նում, Մարիամ Մագդաղենացին եկաւ՝ եւ միւս
2 Մարիամը գերեզմանը տեսնելու։ Եւ ահա մեծ
շարժ եղաւ, վասն զի Տիրոջը հրեշտակը երկն-
քից իջաւ գնաց դռնիցն այն քարը հեռու թա-
3 ւալեց, եւ նորա վերայ նստեց։ Եւ նորա կեր-
պարանքը փայլակի պէս էր, եւ նորա հագուս-
4 տը ձիւնի պէս սպիտակ։ Եւ նորա ահից պա-
հապանները չփոթուեցան, եւ մեռելի նման ե-
5 ղան։ Եւ հրեշտակը պատասխանեց եւ այն կա-
նանցն ասաց, Մի՛ վախենաք դուք, գիտեմ որ
6 խաչուած Յիսուսին էք որոնում։ Այստեղ չէ. վա-

ղըն զի յարութիւն առաւ, ինչպէս ասաց. եկէք,
7 տեսէք այնտեղը, ուր Տէրը պառկած էր։ Եւ
շուտով գնացէք նորա աշակերտներին ասացէք,
թէ յարութիւն առաւ մեռելներից. եւ ահա նա
ձեզանից առաջ Գալիլեա կ'գնայ. այնտեղ նո-
8 րան կը տեսնէք. ահա ասացի ձեզ։ Եւ շուտով
գերեզմանիցը դուրս եկան՝ վախով եւ մեծ ու-
րախութիւնով վազում էին՝ նորա աշակերտնե-
9 րին պատմելու։ Եւ երբոր գնում էին որ նորա
աշակերտներին պատմեն, եւ ահա Յիսուսը պա-
տահեց նորանց եւ ասաց. Ողջոյն ձեզ. եւ նո-
րանք մօտ եկան, նորա ոտները բռնեցին եւ նո-
10 րան երկրպագութիւն արին։ Այն ժամանակ Յի-
սուսը նորանց ասաց. Մի վախենաք. գնացէք
իմ եղբայրներին պատմեցէք, որ գնան Գալիլեա,
եւ այնտեղ կ'տեսնեն ինձ։
11 Եւ երբոր նորանք գնացին. ահա պահապան
զինուորներից ոմանք եկան քաղաքը եւ պատ-
12 մեցին քահանայապետներին բոլոր եղածները։ Եւ
նորանք ծերերի հետ հաւաքուած խորհուրդ արին,
13 եւ շատ փող տուին զինուորներին, Եւ ասացին.
Ասացէք, թէ Նորա աշակերտները գիշերը եկան
14 գողացան նորան, երբոր մենք քնած էինք։ Եւ
եթէ այդ լուրը կուսակալին հասնէ, մենք կ'հա-
15 մոզենք նորան եւ ձեզ անհոգ կ'անենք։ Եւ նո-
րանք փողն առնելով, այնպէս արին ինչպէս սո-
վորեցրուած էին. եւ այս բանը հռչակուեցաւ
Հրէաների մէջ մինչեւ այսօր։
16 Բայց տասնումէկ աշակերտները գնացին Գա-
լիլեա այն լեռան որ Յիսուսը նորանց հրամայել
17 էր։ Եւ երբոր նորան տեսան. երկրպագութիւն
18 արին նորան, եւ ոմանք երկմտեցան։ Եւ Յի-

սուսը մօտ գալով նորանց հետ խօսեց եւ ասաց·
Ամեն իշխանութիւնն ինձ տրուեցաւ երկնքումն
19 եւ երկրումս· Ուրեմն գնացէք բոլոր ազգերը
աշակերտեցէք, նորանց մկրտելով յանուն Հօր
20 եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ· Նորանց սովորեցնե-
լով, որ ամեն ինչ որ ձեզ պատուիրեցի՝ պահեն·
եւ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր· մինչեւ աշ-
խարհքի վերջը։ Ամէն։

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Աստուծոյ Որդի՝ Յիսուսի Քրիստոսի աւետա-
րանի սկիզբը։
2 Ինչպէս գրուած է մարգարէներումն· Ահա ես
իմ հրեշտակն ուղարկում եմ քո երեսի առջեւից,
3 որ պատրաստէ քո ճանապարհը քո առջեւ· Կան-
չողի ձայն անապատումը՝ պատրաստ արէք Տի-
րոջ ճանապարհը, եւ շիտակ արէք նորա շաւիղ-
4 ները։ Յօհաննէսը անապատումը մկրտում էր,
եւ ապաշխարութեան մկրտութիւն քարոզում՝
5 մեղաց թողութեան համար։ Եւ գնում էր նորա
մօտ Հրէաստանի բոլոր երկիրն եւ ամեն Երու-
սաղէմացիք, եւ ամենքը նորանից մկրտվում էին

Յորդանան գետումն, իրանց մեղքերը խոստո-
6 վանելով։ Եւ Յօհաննէսը ուղտու բուրդ էր հա-
գած, եւ կաշուց գօտիկ իր մէջքին, եւ նորա
7 կերակուրը մարախ եւ վայրի մեղր· Եւ քարո-
զելով ասում էր, Ինձանից զօրաւորը գալիս է
իմ ետեւից, որին ես արժանի չեմ խոնարհուիլ
8 եւ նորա կօշիկների կապն արձակել։ Ես ջրով
մկրտեցի ձեզ, բայց նա Սուրբ Հոգով կ'մկրտէ
ձեզ։
9 Եւ եղաւ այն օրերումն՝ որ Յիսուսը եկաւ
Գալիլեայոց Նազարէթիցն, եւ մկրտուեցաւ Յօ-
10 հաննէսից Յորդանանի մէջ։ Եւ շուտով որ ջը-
րից դուրս է գալիս՝ տեսաւ երկինքը ճղուած,
եւ Աստուծոյ Հոգին աղաւնու պէս՝ որ իջնում
11 էր նորա վերայ։ Եւ ձայն եղաւ երկնքից՝ Դու
ես իմ սիրելի Որդին, որին ես հաճեցայ։
12 Եւ շուտով Հոգին նորան անապատը հանեց։
13 Եւ նա այնտեղ անապատումն էր քառասուն օր
սատանայից փորձուելով· եւ գազանների հետ
էր, եւ հրեշտակները ծառայում էին նորան։
14 Եւ Յօհաննէսը մատնուելուց յետոյ, Յիսուսը
եկաւ Գալիլեա, Աստուծոյ աւետարանը քարո-
15 զում էր եւ ասում· Թէ ժամանակը կատարուել
է, եւ Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է· ա-
պաշխարեցէք, եւ հաւատացէք աւետարանին։
16 Գալիլեայոց ծովի մօտովը անցկենալիս, տե-
սաւ Սիմօնին եւ նորա եղբայր՝ Անդրէասին, որ
ուռկան էին գցում ծովը· վասն զի ձկնորս էին։
17 Եւ Յիսուսը նորանց ասաց· Իմ ետեւից եկէք,
եւ ես կանեմ ձեզ, որ մարդկանց որսորդ լինիք։
18 Եւ շուտով իրանց ուռկանները թողին եւ նորա
19 ետեւից գնացին։ Եւ այնտեղից մի քիչ առաջ

գնալով, Յակոբոս Զեբեդեանին եւ նորա եղբայր՝
Յօհաննէսին տեսաւ, որոնք էլ նաւի մէջ ուռ-
կանները շինում էին, եւ շուտով նորանց կան-
20 չեց: Եւ նորանք իրանց հօրը՝ Զեբեդէոսին վարձ-
կանների հետ նաւի մէջ թողելով, նորա ետե-
ւից գնացին:
21 Եւ մտնում են Կափառնայում. եւ շուտով
շաբաթ օրը ժողովարանը մտաւ եւ սովորեցնում
22 էր: Եւ զարմանում էին նորա վարդապետու-
թեան վերայ. վասն զի սովորեցնում էր նորանց՝
ինչպէս իշխանութիւն ունեցող եւ ոչ թէ դպիր-
23 ների պէս: Եւ նորանց ժողովարանումը մի մարդ
կար՝ պիղծ ոգւով բռնուած, եւ աղաղակեց եւ
24 ասաց. Թող տուր. ի՞նչ բան ունիս մեզ հետ,
Յիսուս Նազօրեցի. եկար մեզ կորցնելո՞ւ. գի-
25 տեմ քեզ, Բէ ով ես, Աստուծոյ Սուրբդ: Եւ Յի-
սուսը սաստեց նորան եւ ասաց. Պապանձիր,
26 եւ դորանից դուրս ել: Եւ պիղծ ոգին սաստիկ
թափահարեց նորան, եւ մեծ ձայնով աղաղակե-
27 լով դուրս եկաւ նորանից: Եւ ամենքը զարմա-
ցան, մինչեւ որ իրանց մէջ հարցուփորձ էին
անում եւ ասում. Սա ի՞նչ է. ի՞նչ նոր վար-
դապետութիւն է դա, որ իշխանութիւնով պիղծ
ոգիներին էլ սաստում է՝ եւ հնազանդում են իրան:
28 Եւ նորա համբաւը շուտով դուրս գնաց Գալի-
լեայի ամեն կողմերը:
29 Եւ շուտով ժողովարանից դուրս գալով, եկան
Սիմօնի եւ Անդրէասի տունը՝ Յակոբի եւ Յօհաննէ-
30 սի հետ: Եւ Սիմօնի զոքանչը տենդած պառկած
էր, եւ շուտով նորա համար ասացին նորան:
31 Եւ մօտ եկաւ վերկացրեց նորան՝ ձեռիցը բռնե-
լով. եւ շուտով տենդը թողեց նորան, եւ նա

32 ծառայում էր նորանց: Եւ երբոր իրիկուն եղաւ,
արեգակը մտնելիս, բոլոր հիւանդները եւ դի-
33 ւահարները նորա մօտ բերին: Եւ բոլոր քաղա-
34 քը ժողովուած էր դրան առջեւը: Եւ շատ հի-
ւանդներին բժշկեց կերպ կերպ ցաւերով, եւ
շատ դեւեր հանեց. եւ թոյլ չէր տալիս դեւերին
որ խօսին. վասն զի գիտում էին նորան:
35 Եւ լուսածագին առաւօտանց շատ կանուխ
վերկացաւ՝ դուրս եկաւ գնաց մի անապատ տեղ,
եւ այնտեղ աղօթք էր անում:
36 Եւ նորա ետեւից գնացին Սիմօնը եւ նորա
37 հետ լինողները: Եւ երբոր նորան գտան. ասա-
38 ցին նորան, թէ Ամենքը որոնում են քեզ: Եւ
նորանց ասաց. Եկէ՛ք այդ գիւղաքաղաքներն էլ
39 գնանք, որ այնտեղ էլ քարոզեմ. վասն զի սորա
համար եմ եկած: Եւ բոլոր Գալիլեայի մէջ նո-
րանց ժողովարաններումը քարոզում էր, եւ
դեւերը հանում:
40 Եւ մի բորոտ եկաւ նորա մօտ, աղաչում էր
նորան եւ ծունր էր դնում առջեւը եւ ասում
նորան. Թէ որ կամենաս կարող ես ինձ սրբել:
41 Յիսուսն էլ գթալով ձեռը մեկնեց, նորան դի-
42 պաւ, եւ ասաց նորան. Կամենում եմ սրբուիր:
Եւ երբոր ասաց նորան, շուտով բորոտութիւնը
43 գնաց նորանից, եւ սրբուեցաւ: Եւ նորան սաս-
տելով՝ շուտով դուրս հանեց նորան, եւ ասաց
44 նորան. Զգոյշ կաց ոչ ոքի ոչինչ չասես. այլ
գնա՝ քեզ ցոյց տուր քահանային, եւ քո սրբու-
թեան համար մատուցիր այն, որ Մօսէսը հրա-
45 մայեց, նորանց վկայութիւն լինելու համար: Եւ
նա դուրս գնալով, սկսեց շատ բաներ քարոզել
եւ այն բանը տարածել, մինչեւ որ նա այլեւս

չէր կարողանում յայտնապէս քաղաքը մտնել, այլ
դուրսը անապատ տեղերում էր, եւ ամեն կող-
մերից գալիս էին նորա մօտ ։

ԳԼ. Բ

1 Եւ դարձեալ մտաւ Կափառնայում մի քանի օրից
2 յետոյ. Եւ լսուեցաւ թէ տանն է, եւ շուտով
շատ մարդիկ ժողովուեցան, մինչեւ որ տեղ չկար
3 եւ ոչ էլ դրան մօտ. եւ խօսում էր նորանց Աս-
տուծոյ խօսքը ։ Եւ գալիս էին նորա մօտ, եւ
մի անդամալոյծ էին բերում չորս հոգով վեր
4 առած ։ Եւ երբոր չկարողացան մօտենալ նորան
ամբոխի պատճառաւը, այն տան ծածքը քան-
դեցին, ուր էր Յիսուսը, եւ ծակ բանալով այն
մահիճն իջեցրին, որի վերայ անդամալոյծը պառ-
5 կած էր ։ Յիսուսն էլ նորանց հաւատքը տեսնե-
լով, ասաց անդամալոյծին. Որդեակ, թողուած
6 լինին քեզ քո մեղքերը ։ Եւ դպիրներից ոմանք
այնտեղ նստած էին. եւ իրանց սրտերումը միտք
7 էին անում. Ինչո՞ւ համար սա այսպէս հայհոյու-
թիւններ է խօսում. ո՞վ կարող է մեղք թողնել,
8 եթէ ոչ մէկը՝ Աստուած ։ Եւ Յիսուսը իր հոգու
մէջ շուտով գիտաց, թէ իրանց սրտումն այս-
պէս են միտք անում, եւ ասաց նորանց. Ինչո՞ւ
9 էք ձեր սրտերումն այդ բաները մտածում ։ Ո՞րն
է հեշտ. անդամալոյծին ասել՝ Թողուած լինին
քեզ քո մեղքերը, կամ ասել՝ Վեր կաց, քո մա-
10 հիճն առ եւ ման եկ ։ Բայց որ իմանաք, թէ
Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վերայ
11 մեղքեր թողնելու. (անդամալոյծին ասաց). Ա-

սում եմ քեզ. Վեր կաց, քո մահիճն առ եւ գնա
12 քո տունը ։ Եւ նա շուտով վերկացաւ, մահիճն
առաւ, եւ ամենի առջեւը դուրս գնաց. մինչեւ
որ ամենքը զարմանում էին եւ Աստուծոյն փա-
ռաւորում ասելով, թէ Երբէք այսպիսի բան չենք
տեսել ։
13 Եւ դարձեալ դէպի ծովի եզրը դուրս գնաց,
եւ բոլոր ժողովուրդը նորա մօտ էր գալիս. եւ
14 սովորեցնում էր նորանց ։ Եւ անցնելիս տեսաւ
Ղեւի Ալփեանին՝ նստած մաքսաւորութեան. եւ
նորան ասաց. Իմ ետեւից եկ. եւ վերկացաւ
15 գնաց նորա ետեւից ։ Եւ եղաւ, երբոր նորա տանը
սեղանի վերայ նստած էր, շատ մաքսաւորներ
եւ մեղաւորներ էլ Յիսուսի եւ նորա աշակերտա-
ների հետ սեղան էին նստած, վասն զի շատ
16 մարդիկ էին, որ նորա ետեւից գնում էին ։ Բայց
դպիրները եւ Փարիսեցիները տեսնելով որ մաք-
սաւորների եւ մեղաւորների հետ ուտում է, ա-
սացին նորա աշակերտներին. Այդ ի՞նչ է, որ
մաքսաւորների եւ մեղաւորների հետ ուտում է
17 եւ խմում է ։ Եւ Յիսուսը երբոր լսեց, ասաց
նորանց. Առողջներին բժիշկ պէտք չէ, այլ հի-
ւանդներին. չեկայ արդարներին այլ մեղաւոր-
ներին կանչել ապաշխարութեան ։
18 Եւ Յօհաննէսի աշակերտները եւ Փարիսեցինե-
րինը ծոմ էին պահում. եւ եկան նորան ասացին.
Ինչո՞ւ Յօհաննէսի ու Փարիսեցիների աշակերտա-
ները ծոմ են պահում, բայց քո աշակերտները
19 ծոմ չեն պահում ։ Եւ Յիսուսը նորանց ասաց.
Մի՞թէ կարող են հարսանիքի որդիքը ծոմ պա-
հել՝ քանի որ փեսան նորանց հետ է. քանի որ
փեսան իրանց հետ ունին, չեն կարող ծոմ պա-

20 հել։ Բայց օրեր կ'գան, որ փեսան նորանցից
վեր կ'առնուի, եւ ապա այն օրերումը կ'պա-
21 հեն։ Եւ ոչ ով չլուացուած կապերտից կարկա-
տան չի դցել հին հանդերձի վերայ, ապա թէ
ոչ՝ նորն իր ուժովն այն հնիցն կ'առնէ, եւ պա-
22 տառուածքն էլ աւելի չար կ'լինի։ Եւ ոչ ով նոր
գինին հին տիկերի մէջ չի ածել. ապա թէ ոչ՝
նոր գինին տիկերը կ'պատառէ, եւ գինին կ'թափ-
ուի, տիկերն էլ կ'կորչին. այլ նոր գինին նոր
տիկերի մէջ պէտք է ածուի։

23 Եւ եղաւ որ նա շաբաթ օրումն արտերի մէ-
ջովն անցնում էր եւ նորա աշակերտներն սկսե-
24 ցին գնալ հասկ պոկելով։ Եւ Փարիսեցիներն
ասացին նորան. Տես, ի՞նչ են գործում շաբաթ
25 օրը, որ արժան չէ։ Եւ նա ասաց նորանց.
Դուք երբէք չէ՞ք կարդացել, թէ Դաւիթն ինչ
արաւ, երբոր պէտք ունէր, եւ սովեց ինքն եւ
26 նորա հետն լինողներն։ Ինչպէս Աստուծոյ տունը
մտաւ Աբիաթար քահանայապետի օրին. եւ ա-
ռաջաւորութեան հացերը կերաւ, որ ուրիշի օ-
րէնք չէր ուտել, բայց միայն քահանայից. եւ
27 իր հետ լինողներին էլ տուաւ։ Եւ նորանց ա-
սաց. Շաբաթը մարդոյ համար եղաւ, եւ ոչ թէ
28 մարդը շաբաթի համար։ Ուրեմն Որդին մարդոյ
շաբաթի էլ տէրն է։

ԳԼ. Գ

1 Եւ դարձեալ ժողովարանը մտաւ, եւ այնտեղ
2 մի մարդ կար՝ ձեռքը չորացած։ Եւ սպասում
էին նորան՝ թէ արդեօք շաբաթ օրումն կ'բժշկէ՞
3 նորան՝ որ չարախօսեն նորանից։ Եւ ասաց ձեռ-
4 քը չորացած մարդուն. Կանգնիր մէջ տեղը։ Եւ

ասաց նորանց. Արժա՞ն է շաբաթ օրը բարի գոր-
ծել՝ թէ չար գործել. մի հոգի ապրեցնե՞լ թէ
5 սպանել. իսկ նորանք լռեցին։ Նա էլ բարկու-
թիւնով չորս կողմովը նորանց մտիկ տալով նո-
րանց սրտերի կուրութեան համար տրտմած՝ այն
մարդուն ասաց. Ձեռդ մեկնիր. եւ նա մեկնեց,
6 եւ նորա ձեռքը ողջացաւ ինչպէս միւսը։ Եւ
Փարիսեցիները շուտով դուրս գնացին Հերոդէս-
եանների հետ նորա դէմ խորհուրդ էին անում,
թէ ինչպէս կորցնեն նորան։

7 Եւ Յիսուսը իր աշակերտների հետ ծովի մօտ
գնաց. եւ շատ բազմութիւն նորա ետեւից գնում
8 էին Գալիլեայից եւ Հրէաստանից, Եւ Երուսա-
ղէմից, եւ Եդոմայից, եւ Յորդանանի այն կող-
մից, եւ նորանք էլ որ Տիւրոսի եւ Սիդոնի շըր-
ջակայիցն էին, շատ բազմութիւն, երբոր լսում
էին, թէ ինչ բաներ էր անում, նորա մօտ էին
9 գալիս։ Եւ իր աշակերտներին ասաց, որ մի
պըզտիկ նաւ պատրաստ լինի իրան համար այն
10 ամբոխի պատճառով, որ չնեղեն նորան։ Վասն
զի շատերին բժշկեց. մինչեւ որ նորա վերայ
էին թափվում, որ նորան դիպչին, որոնք որ
11 ցաւ ունէին։ Եւ պիղծ ոգիները, երբոր նորան
տեսնում էին, ընկնում էին նորա առջեւը, ա-
12 ղաղակում էին եւ ասում. Թէ Դու ես Աստու-
ծոյ Որդին. եւ նա շատ սաստում էր նորանց,
որ իրան չյայտնեն։

13 Եւ վեր ելաւ լեառը եւ իր մօտ կանչեց որոնց
14 որ ինքը կամեցաւ. եւ նորա մօտ գնացին։ Եւ
տասներկու հոգի կարգեց, որ իր հետ լինին,
15 եւ որ նորանց ուղարկէ՝ քարոզելու։ Եւ իշխա-
նութիւն ունենան ցաւերը բժշկելու՝ եւ դեւերը

16 հանելու։ Եւ Սիմոնի անունը Պետրոս դրաւ․ (17)Եւ
Զեբեդեան Յակոբին՝ եւ Յակոբի եղբայր Յովհան֊
նէսին՝ նորանց անունները Բաներգէս դրաւ,
18 որ է որոտմունքի որդիք․ Եւ Անդրէասին, եւ
Փիլիպպոսին, եւ Բարթուղիմէոսին, եւ Մատ֊
թէոսին, եւ Թոմասին, եւ Յակոբոս Ալփեանին,
19 եւ Թադէոսին, եւ Սիմոն Կանանացուն, Եւ
Յուդա Իսկարիովտացուն, նա որ մատնեց էլ նո֊
րան։
20 Եւ եկան տուն, եւ դարձեալ հաւաքուեցաւ
ամբոխը, մինչեւ որ չկարողացան հաց էլ ուտել։
21 Եւ նորա ընտանիքը լսելով դուրս եկան նորան
բռնելու․ վասն զի ասում էին թէ գժուել է։
22 Եւ դպիրներն որ Երուսաղէմիցն իջել էին, ա֊
սում էին, թէ Բէեղզեբուղ ունի եւ թէ դեւերի
23 իշխանովն է հանում դեւերը։ Եւ նորանց իր
մօտ կանչելով՝ առակներով ասում էր նորանց․
Ի՞նչպէս սատանայ կարող է սատանային հանել։
24 Եւ եթէ մի թագաւորութիւն իր միջումը բա֊
ժանուի, այն թագաւորութիւնը կարող չէ կե֊
25 նալ։ Եւ եթէ մի տուն իր միջումը բաժանուի,
26 այն տունը կարող չէ կենալ։ Եւ եթէ սատա֊
նան իր անձի վերայ վերկացաւ եւ բաժանուած
27 է, կարող չէ կենալ, այլ վերջացած է։ Ոչ ոք
կարող չէ մի զօրաւորի տունը մտնելով, նորա
կարասիքը յափշտակել, եթէ առաջ այն զօրա֊
ւորին չկապէ, եւ ապա նորա տունը կ՚յափշտա֊
28 կէ։ Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ Մարդկանց
որդոցն ամեն մեղքերը եւ հայհոյանքները, որ֊
29 քան որ հայհոյեն էլ, կ՚թողուին․ Բայց ով որ
Սուրբ Հոգոյն հայհոյէ, յաւիտեան թողութիւն
չի ունենալ․ այլ յաւիտենական դատապարտու֊

30 թեան պարտական կը լինի։ Վասն զի ասում
էին․ թէ Պիղծ ոգի կայ նորանում։
31 Եւ յետոյ նորա եղբարքը եւ մայրը եկան, եւ
դուրսը կանգնած՝ նորա մօտ ուղարկեցին կան֊
32 չեցին նորան։ Եւ ժողովուրդը նորա չորս կող֊
մովը նստած էր․ եւ ասացին նորան․ Ահա
33 մայրդ եւ եղբարքդ դուրսը քեզ ուզում են։ Եւ
նորանց պատասխանեց եւ ասաց․ Ո՞վ է իմ մայրը
34 կամ իմ եղբարքը։ Եւ իր չորս կողմովը նստած֊
ներին մտիկ տուաւ եւ ասաց․ Ահա իմ մայրը
35 եւ իմ եղբարքը։ Վասն զի ով որ կատարէ Աս֊
տուծոյ կամքը, նա է իմ եղբայրը եւ քոյրը եւ
մայրը։

ԳԼ․ Դ

1 Եւ դարձեալ սկսեց ծովի մօտ սովորեցնել եւ
շատ ամբոխ հաւաքուեցաւ նորա մօտ, մինչեւ
որ նաւի մէջ մտաւ․ եւ ծովի վերայ նստաւ․ եւ
բոլոր ամբոխը ծովի մօտ ցամաքի վերայ էին։
2 Եւ շատ բաներ էր սովորեցնում նորանց առակ֊
ներով․ եւ իր վարդապետութեան մէջ ասում
3 էր նորանց․ Լսեցէք, ահա սերմ ցանողը դուրս
4 գնաց սերմ ցանելու։ Եւ եղաւ որ սերմանելու
ժամանակին մի քանին ճանապարհի մօտ ընկաւ,
եւ երկնքի թռչունները եկան եւ կերան նորան։
5 Եւ ուրիշն ընկաւ քարքարուտ տեղ, շատ հող
չկար, եւ շուտով բուսաւ՝ հողը խոր չլինելուն
6 համար։ Եւ երբոր արեգակը ծագեց՝ տաքացաւ
7 եւ արմատ չունենալուն համար չորացաւ։ Եւ
ուրիշն ընկաւ փշերի մէջ, եւ փուշերն դուրս ե֊
կան եւ խեղդեցին նորան․ եւ պտուղ չտուաւ։
8 Եւ ուրիշն ընկաւ բարի երկիրը, եւ պտուղ էր

տալիս, որ դուրս եկաւ եւ աճեցաւ, եւ մէկը
բերում էր երեսուն՝ եւ մէկը վաթսուն՝ եւ մէկը
9 հարիւր։ Եւ ասում էր նորանց. Ով որ լսելու
ականջ ունի, թող լսէ։
10 Եւ երբոր մենակ էր, նորա մօտինները այն
տասներկուքի հետ հարցրին նորան այն առակը։
11 Եւ ասաց նորանց. Ձեզ տրուած է Աստուծոյ
արքայութեան խորհուրդը գիտել, բայց նորանց
որ դրսի են, ամեն բան առակներով է լինում.
12 Որ տեսնելով տեսնեն՝ եւ չտեսնեն, եւ լսելով
լսեն եւ չիմանան. մի գուցէ դառնան եւ մեղ-
13 քերը թողուին նորանց։ Եւ նորանց ասաց. Չէ՞ք
գիտում այս առակը. եւ ի՞նչպէս ամեն առակ-
14 ները կ'գիտենաք։ Սերմողը խօսքն է սերմում։
15 Եւ նորանք են ճանապարհի վերայինները, ուր
բանը սերմվում է, եւ երբոր լսում են, շուտով
գալիս է սատանան եւ վեր առնում նորանց սըր-
16 տերումը սերմուած խօսքը։ Նոյնպէս էլ քար-
քարուտ տեղը սերմուածները նորանք են, ո-
րոնք, երբոր խօսքը լսում են, շուտով ուրա-
17 խութիւնով ընդունում են նորան. Եւ իրանց
մէջ արմատ չունին, այլ առժամանակեայ են.
յետոյ երբոր այն խօսքի համար նեղութիւն կամ
հալածմունք է լինում, շուտով գայթակղում են։
18 Եւ փշերի մէջ սերմուածները նորանք են, որ
19 խօսքը լսում են, բայց աշխարհքիս հոգսերը եւ
հարստութեան խաբէութիւնը եւ ուրիշ բաների
ցանկութիւնները մտնում են՝ խօսքը խեղդում,
20 եւ անպտուղ է լինում։ Բայց այն բարի երկրի
վերայ սերմուածները նորանք են, որ խօսքը լը-
սում են, եւ ընդունում են, եւ պտուղ են տալիս՝
մէկը երեսուն, եւ մէկը վաթսուն, եւ մէկը հարիւր։

21 Եւ ասաց նորանց. Մի՞թէ ճրագը գալիս է,
որ գրուանի կամ մահճի տակ դրուի. չէ՞ թէ որ
22 ճրագակալի վերայ դրուի։ Վասն զի ծածուկ
բան չկայ, որ չյայտնուի. եւ մի թաքուն բան
23 չեղաւ որ դէպի յայտնութիւն չգայ։ Եթէ մէկը
լսելու ականջ ունի, թող լսէ։
24 Եւ ասաց նորանց. Տեսէք՝ ինչ էք լսում. ինչ
չափով որ չափէք, նորանով էլ ձեզ կ'չափուի,
25 եւ կ'աւելանայ ձեզ լսողներիդ։ Վասն զի ով որ
ունի, նորան կ'տրուի. եւ ով որ չունի, այն էլ
որ ունի՝ վեր կ'առնուի նորանից։
26 Եւ ասում էր. Այսպէս է Աստուծոյ արքայու-
թիւնն, որպէս թէ մի մարդ սերմ գցէր հողի
27 մէջ։ Եւ գիշեր ցերեկ քնէ եւ վերկենայ. եւ
սերմը բուսնէ եւ աճի. այնպէս որ չէ գիտում։
28 Վասն զի երկիրն ինքն իրան պտուղ է բերում,
առաջ խոտը, յետոյ հասկը, եւ նորանից յետոյ
29 լցուած ցորեն հասկի մէջ։ Բայց երբոր պտուղը
կ'տայ, շուտով կ'ուղարկէ մանգաղը, վասն զի
հունձքը հասել է։
30 Եւ ասում էր. Ինչի՞ նմանեցնենք Աստուծոյ
արքայութիւնը, կամ ի՞նչ առակով առակի բե-
31 րենք նորան։ Նման է մանանեխի հատի, որ
երբոր հողի մէջ սերմվում է, երկրիս վերայ ե-
32 ղած ամեն սերմերից փոքր է. Եւ երբոր սերմ-
վում է, բուսնում է եւ ամեն բանջարից աւելի
մեծ է լինում, եւ մեծ մեծ ճիւղեր է արձակում,
մինչեւ որ կարողանում են երկնքի թռչունները
նորա հովանու տակ բնակել։
33 Եւ շատ այսպիսի առակներով խօսում էր նո-
րանց հետ խօսքը, ինչպէս որ նորանք կարող էին
34 լսել։ Եւ առանց առակի չէր խօսում նորանց

հետ, բայց առանձին իր աշակերտներին ամեն
բան մեկնում էր։
35 Եւ այն օրն, երբոր իրիկուն էր լինում, նո-
36 րանց ասաց. Եկէ՛ք անցնենք այն կողմը։ Եւ ժո-
ղովուրդը թողին, և նորան նաւումն առին, ինչ-
պէս էր նաւումը. և ուրիշ նաւակներ էլ կային
37 նորա հետ։ Եւ քամու մեծ փոթորիկ էր լինում,
և ալիքները թափում էր նաւի մէջ, մինչև որ
38 համարեա արդէն լցվում էր։ Եւ ինքը նաւի յետի
կողմումը բարձի վերայ քնած էր. և նորան
զարթնեցնում են և ասում նորան. Վարդա-
39 պետ, հոգդ չէ՞, որ կորչում ենք։ Եւ նա զարթ-
նելով քամուն սաստեց, և ասաց ծովին. Լռիր,
պապանձուիր. և քամին դադարեց, և մեծ
40 խաղաղութիւն եղաւ։ Եւ ասաց նորանց. Ինչո՞ւ
այդպէս վախկոտ էք. ի՞նչպէս հաւատք չունիք։
Եւ մեծ վախով վախեցան, և իրար ասում էին.
Սա ո՞վ է արդեօք. որ քամին էլ ծովն էլ հնա-
զանդում են սորան։

ԳԼ. Ե

1 Եւ եկան ծովի այն կողմը՝ Գադարացոց երկի-
2 րը։ Եւ երբոր նաւիցը դուրս եկաւ, նորան իս-
կոյն պատահեց գերեզմաններիցը մի մարդ պիղծ
3 դևով բռնուած։ Որի բնակութիւնը գերեզման-
ներումն էր, և ոչ ոք շղթաներով էլ չէր կարող
4 նորան կապել։ Որովհետև շատ անգամ ոտից
կապերով և շղթաներով կապուել էր, բայց նա
շղթաները կտրատել և ոտից կապերը փշրել
5 էր, և ոչ ոք կարող չէր նորան նուաճել։ Եւ
միշտ գիշեր ու ցերեկ գերեզմաններումն և

լեռներումն աղաղակում էր և ինքն իրան ծե-
6 ծում քարերով։ Բայց երբոր հեռուանց Յիսու-
սին տեսաւ, վազեց նորան երկրպագութիւն ա-
7 րաւ. Եւ մեծ ձայնով աղաղակելով ասաց. Քեզ
ի՞նչ բան կայ ինձ հետ, Յիսուս՝ Որդի Աստու-
ծոյ բարձրելոյ. Աստուծով երդւում եմ տալիս
8 քեզ, մի տանջիր ինձ։ (Վասն զի ասում էր նո-
րան. Դուրս եկ, պիղծ ոգի այդ մարդուցը։)
9 Եւ հարցրեց նորան. Անունդ ի՞նչ է. և նա պա-
տասխանեց և ասաց. Լէգէոն է իմ անունը.
10 վասն զի մենք շատ ենք։ Եւ շատ աղաչում է-
ին նորան, որ իրանց այն աշխարհքիցը դուրս
11 չուղարկէ։ Եւ այնտեղ լեռան մօտ խոզերի մի
12 մեծ երամակ կար, որ արածում էր։ Եւ բոլոր
դևերը նորան աղաչեցին և ասացին. Ուղար-
կիր մեզ այն խոզերի մէջ, որ նորանց մէջ մտա-
13 նենք։ Եւ Յիսուսը հրաման տուաւ նորանց շու-
տով. և պիղծ դևերը դուրս եկան խոզերի մէջ
մտան. և երամակն այն զահավէժ տեղիցը ծո-
վի մէջ վազեց. և երկու հազարի չափ էին. և
14 ծովումը խեղդվում էին։ Եւ խոզարածները փա-
խան և քաղաքումը և արտերումը պատմեցին.
և դուրս եկան տեսնելու թէ ինչ է այդ եղա-
15 ծը։ Եւ Յիսուսի մօտ եկան, և դիւահարին տե-
սան նստած հագուած և խելքը գլուխը եկած,
16 նա՝ որ լէգէոնն ունեցել էր. և վախեցան։ Եւ
նորանց պատմեցին տեսնողները, թէ ինչ եղաւ
17 այն դիւահարին, և խոզերի մասին։ Եւ սկսե-
ցին աղաչել նորան, որ իրանց սահմաններիցը
18 դուրս գնայ։ Եւ երբոր նա նաւը մտաւ, դիւա-
հարն աղաչում էր նորան, որ նորա հետ լինի։
19 Բայց Յիսուսը թոյլ չտուաւ նորան, այլ ասաց

նորան. Գնա՛ քո տունը քո ընտանեաց մօտ, եւ
նորանց պատմիր, թէ ինչ բաներ արաւ քեզ Տէ-
20 րը, եւ ողորմեց քեզ։ Եւ նա գնաց եւ սկսեց
Դեկապօլիսի մէջ քարոզել, ինչ բաներ որ Յի-
սուսը իրան արել էր, եւ ամենքը զարմանում
էին։
21 Եւ երբոր Յիսուսը նաւով դարձեալ այն կողմն
անցաւ, շատ ժողովուրդ նորա մօտ ժողովուե-
22 ցան, եւ նա ծովի մօտ էր։ Եւ ահա գալիս է
ժողովրդապետներից մէկը՝ անունը Յայրոս. եւ
23 երբոր նորան տեսաւ, ընկաւ նորա ոտները. Եւ
նորան շատ աղաչում էր եւ ասում. Թէ Աղջիկս
վախճանելու մօտ է, որ գաս, ձեռքդ նորա վե-
24 րայ դնես, որպէս զի ազատուի եւ ապրի։ Եւ
նորա հետ գնաց. եւ շատ ժողովուրդ նորա ե-
տեւից գնում էին, եւ նորան նեղում էին։
25 Եւ մի կին, որ արիւնի տեղատուութեան մէջ
26 էր տասներկու տարի։ Եւ շատ բժիշկներից շատ
չարչարուել էր, եւ իր բոլոր ունեցածը ծախսել
եւ ոչինչ օգուտ չէր տեսել, այլ էլ աւելի էր
27 դէպի վատը գնացել. Երբոր Յիսուսի համար
լսեց, ամբոխի մէջ ետեւիցն եկաւ դիպաւ նորա
28 հանդերձին։ Վասն զի ասում էր. որ Եթէ մի-
29 այն նորա հանդերձին մօտենամ, կ՚փրկուիմ։ Եւ
շուտով նորա արիւնի աղբիւրը ցամաքուեցաւ.
եւ մարմնումն իմացաւ որ այն տանջանքից
30 բժշկուեցաւ։ Եւ շուտով Յիսուս իր անձումն
իմացաւ, որ իրանից զօրութիւն դուրս գնաց,
դարձաւ ամբոխի մէջ եւ ասաց. Ո՞վ դիպաւ իմ
31 հանդերձին։ Եւ նորա աշակերտներն ասացին
նորան. Տեսնում ես այդ ամբոխը որ նեղացնում
է քեզ, եւ ասում ես թէ Ո՞վ իմ հանդերձին դի-

32 պաւ։ Եւ չորս կողմն նայում էր, որ տեսնէ
33 այս բանն անողին։ Կինն էլ վախենալով եւ դո-
ղալով, որովհետեւ գիտէր ինչ էլաւ իրան, եկաւ
ընկաւ նորա առջեւը, եւ բոլոր ճշմարտութիւնն
34 ասաց նորան։ Նա էլ ասաց նորան. Դուստր,
քո հաւատքն ազատեց քեզ, գնա խաղաղու-
թեամբ, եւ քո տանջանքիցն առողջ եղիր։
35 Նա դեռ խօսելիս, ժողովրդապետի տանից
գալիս են եւ ասում. Թէ Աղջիկդ մեռաւ, էլ ին-
36 չո՞ւ ես աշխատեցնում վարդապետին։ Եւ Յի-
սուսը ասած բանն իսկոյն լսելով, ժողովրդապե-
տին ասաց. Մի՛ վախենար, բայց միայն հաւա-
37 տա։ Եւ ոչ ոքի թոյլ չտուաւ որ իր հետ գնայ,
բայց միայն Պետրոսին եւ Յակոբին եւ Յակոբի
38 եղբայր Յօհաննէսին. Եւ եկաւ ժողովրդապետի
տունն, եւ այնտեղ մեծ ամբոխ տեսաւ եւ լա-
39 ցողներ, եւ շատ աղաղակ անողներ. Եւ ներս
մտաւ՝ նորանց ասաց. Ինչո՞ւ էք շփոթվում եւ
լաց լինում, երեխան մեռած չէ, բայց քնած է։
40 Եւ ծիծաղում էին նորա վերայ. բայց նա բոլո-
րին դուրս հանեց, եւ առնելով երեխայի հօրը
եւ մօրը եւ իր հետ լինողներին՝ մտաւ այն տեղն
41 ուր երեխան պառկած էր։ Եւ երեխայի ձեռիցը
բռնելով ասաց նորան. Տալիթա կումի. որ կը
թարգմանուի, Ով աղջիկ, (քեզ եմ ասում,) վեր
42 կաց։ Եւ շուտով վերկացաւ աղջիկը եւ ման էր
գալիս, վասն զի տասներկու տարեկանի չափ
43 էր, եւ մեծ զարմանքով զարմացան։ Եւ նորանց
շատ պատուիրեց, որ ոչ ոք չիմանայ այս. եւ
ասաց, որ նորան բան տան ուտելու։

ԳԼ. Զ

1 Եւ այնտեղից դուրս գնաց, եկաւ իր հայրենի-
քը. եւ նորա աշակերտները նորա ետեւից գը-
2 նում էին։ Եւ որովհետեւ շաբաթ էր՝ սկսեց ժո-
ղովարանի մէջ սովորեցնել. եւ շատերը լսելով
զարմանում էին եւ ասում. Սորան ո՞րտեղից է
այս բաները, կամ սա ի՞նչ իմաստութիւն է՝ որ
տրուած է սորան, որ այսպիսի զօրութիւններ
3 էլ են լինում սորա ձեռքովը։ Չէ՞ որ սա է հիւ-
սը՝ Մարիամի որդին, Յակոբի եւ Յօսէի եւ Յու-
դայի եւ Սիմօնի եղբայրը. եւ չէ՞ որ դորա քոյ-
րերը այստեղ մեզ մօտ են. եւ նորա վերայ գայ-
4 ղում էին։ Յիսուս էլ նորանց ասաց. Թէ Մար-
գարէ անարգ չէ, բայց միայն իր հայրենեաց եւ
5 իր ազգականների եւ իր տան մէջ։ Եւ չէր կա-
րողանում այնտեղ ոչ մի զօրութիւն անել. բայց
միայն մի քանի հիւանդների վերայ ձեռք դրաւ
6 եւ բժշկեց։ Եւ նորանց անհաւատութեան հա-
մար զարմանում էր։ Եւ չորս կողմի գիւղերը
ման էր գալիս եւ սովորեցնում։
7 Եւ տասներկուսին իր մօտ կանչեց, եւ սկսեց
նորանց երկու երկու ուղարկել, եւ նորանց իշ-
խանութիւն էր տալիս պիղծ ոգիների վերայ։
8 Եւ նորանց համար պատուիրում էր, որ ճանա-
պարհի համար ոչինչ վեր չառնեն, բայց միայն
մի գաւազան. ոչ պարկ, ոչ հաց, ոչ պղնձէ փող
9 գօտու մէջ. Այլ հողաթափ հագնեն. եւ երկու
10 հանդերձ չհագնիք։ Եւ նորանց ասում էր. Որ
տուն որ մանէք, այնտեղ մնացէք, մինչեւ որ
11 այնտեղից դուրս գնաք։ Եւ որոնք որ ձեզ չըն-
դունեն, եւ ձեզ ականջ էլ չդնեն, այնտեղից

դուրս գալիս՝ ձեր ոտների տակի փոշին թօթա-
փեցէք, նորանց վկայութիւն լինելու համար։
Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ Սոդոմի եւ Գոմորի
համար աւելի հեշտ կ՚լինի դատաստանի օրումը
քան թէ այն քաղաքին։
12 Եւ դուրս ելան, քարոզում էին, որ ապաշ-
13 խարեն։ Եւ շատ դեւեր էին հանում, եւ շատ
հիւանդներին իւղով օծում էին՝ եւ նորանց բժըշ-
կում էին։
14 Եւ Հերօդէս թագաւորը լսեց, (վասն զի նորա
անունը յայտնի եղաւ.) եւ ասում էր, թէ Յօ-
հաննէս Մկրտիչը մեռելների միջից յարութիւն
առաւ, եւ նորա համար զօրութիւններ են գործ-
15 վում նորանով։ Ուրիշներն ասում էին, թէ Ե-
ղիան է. ուրիշներն էլ ասում էին, թէ Մարգա-
16 րէ է, կամ թէ մարգարէներից մէկի պէս։ Եւ
երբոր Հերօդէսը լսեց, ասաց. Սա Յօհաննէսն
է՝ որի գլուխը ես կտրեցի. նա մեռելների միջից
յարութիւն է առել։
17 Վասն զի Հերօդէս ինքն ուղարկեց, Յօհան-
նէսին բռնեց եւ նորան կապեց բանտի մէջ իր
եղբօր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Հերօդիայի համար, վա-
18 սըն զի կին էր առել նորան։ Վասն զի Յօհան-
նէսը Հերօդէսին ասում էր. Թէ Օրէնք չէ քեզ՝
19 քո եղբօր կնոջն ունենալ։ Եւ Հերօդիան նորա
դէմ ոխ էր պահում, եւ ուզում էր սպանել
20 նորան, եւ չէր կարողանում։ Քանզի Հերօդէսը
Յօհաննէսից վախում էր՝ նորան արդար եւ սուրբ
մարդ ճանաչելով. եւ պահում էր նորան. եւ
նորանից լսելով՝ շատ բան էր անում, եւ քաղց-
21 րութիւնով լսում էր նորան։ Եւ մի յարմար օր
պատահելով, երբոր Հերօդէսը իր ծննդի օրումն

ընթրիք էր տալիս իր նախարարներին եւ զօրա-
22 պետներին եւ Գալիլեացոց մեծամեծներին. Եւ
երբոր իսկ Հերոդիայի աղջիկն մտաւ՝ պար եկաւ,
եւ Հերոդէսին եւ նորա հետ նստածներին հա-
ճոյ եղաւ. Թագաւորն ասաց աղջկանը. Խնդրիր
23 ինձանից ինչ որ ուզես, եւ կ'տամ քեզ։ Եւ եր-
դում արաւ նորան՝ թէ Ինչ բան որ դու խնդրես
ինձանից, կ'տամ քեզ, մինչեւ իմ թագաւորու-
24 թեան կէսը։ Նա էլ դուրս գնաց ասաց իր մօրը.
Ի՞նչ խնդրեմ. եւ նա էլ ասաց. Յովհաննէս Մը-
25 կրտչի գլուխը։ Եւ իսկոյն շտապելով թագա-
ւորի մօտ գնաց խնդրեց եւ ասաց. Կամենում
եմ որ հէնց հիմա սկուտեղի վերայ տաս ինձ
26 Յովհաննէս Մկրտչի գլուխը։ Եւ թագաւորն շատ
տրտմեցաւ. բայց իր երդմունքի եւ կանչուած
մարդկանց համար չկամեցաւ անարգել նորան։
27 Եւ թագաւորը շուտով դահիճ ուղարկեց եւ հը-
րամայեց նորա գլուխը բերել. նա էլ գնաց գլու-
28 խը կտրեց բանտի մէջ։ Եւ նորա գլուխը սկու-
տեղով բերաւ եւ աղջկանը տուաւ նորան, աղ-
29 ջիկն էլ տուաւ իր մօրը։ Եւ երբոր նորա աշա-
կերտները լսեցին, եկան նորա մարմինը վեր ա-
ռին եւ գերեզմանի մէջ դրին։
30 Եւ առաքեալները Յիսուսի մօտ ժողովուեցան,
եւ պատմեցին նորան բոլորը՝ թէ ինչ որ արել,
31 թէ ինչ որ սովորեցրել էին։ Եւ ասաց նորանց.
Դուք առանձին անապատ տեղ եկէք, եւ մի
քիչ հանգիստ առէք. քանզի եկող եւ գնացող-
ները շատ էին, եւ հաց ուտելու էլ ժամանակ
32 չունէին։ Եւ նաւով առանձին անապատ տեղ
33 գնացին։ Եւ ժողովուրդները տեսան նորանց որ
գնում էին, եւ շատերը ճանաչեցին նորան. եւ

ամեն քաղաքներից ոտով այնտեղ էին վազում,
եւ նորանից առաջ եկան եւ նորա մօտ հաւաք-
34 ուեցան։ Եւ երբոր Յիսուսը դուրս եկաւ շատ
ամբոխ տեսաւ, եւ նորանց վերայ գթաց. վասն
զի հովիւ չունեցող ոչխարների պէս էին, եւ
սկսեց նորանց շատ բաներ սովորեցնել։
35 Եւ երբոր արդէն շատ ժամանակ անցաւ, նո-
րա աշակերտները մօտն եկան եւ ասացին. Թէ
Այստեղը անապատ է, եւ ժամանակն էլ արդէն
36 ուշ։ Արձակիր դորանց որ չորս կողմի շէներն
եւ գիւղերը գնան իրանց համար հաց առնեն.
37 քանզի այստեղ ուտելու բան չունին։ Նա էլ
պատասխանեց եւ նորանց ասաց. Դուք տուէք
դորանց ուտել. նորանք էլ ասացին նորան. Գը-
նա՞նք երկու հարիւր դահեկանի հաց առնենք,
38 եւ դորանց տանք որ ուտեն։ Նա էլ նորանց
ասաց. Քանի՞ հատ հաց ունիք. գնացէք եւ տե-
սէք. երբոր գիտացին, նորան ասացին. Հինգ,
39 եւ երկու ձուկ։ Եւ հրամայեց նորանց՝ որ ամեն-
քը գունդ գունդ կանաչ խոտի վերայ նստեն։
40 Եւ դաս դաս նստեցին, հարիւր հարիւր՝ եւ յի-
41 սուն յիսուն։ Եւ այն հինգ հացն եւ երկու ձուկն
առած դէպի երկինքը նայեց՝ օրհնեց կտրեց հա-
ցերը, եւ իր աշակերտներին տուաւ որ դնեն
նորանց առջեւը. եւ այն երկու ձուկը բաժանեց
42 ամենին։ Եւ ամենքը կերան եւ կշտացան, (43) Եւ
փշրանքներից տասներկու կողով վեր առին, եւ
44 ձկներիցն էլ։ Եւ հացը ուտողները հինգ հազարի
չափ մարդիկ էին։
45 Եւ շուտով ստիպեց իր աշակերտներին, որ
նաւը մտնեն, եւ իրանից առաջ այն կողմը՝ Բեթ-
սայիդա գնան, մինչեւ որ ինքն ժողովրդին ար-

46 ձակէ։ Եւ նորանցից բաժանուելով, վեր ելաւ
47 լեառը՝ աղօթք անելու։ Եւ երբոր երեկոյն ե-
ղաւ, նաւը ծովի մէջտեղն էր, և ինքն միայն
48 ցամաքումը։ Եւ տեսաւ նորանց, որ նաւելիս
ալէկոծվում էին, քանզի քամին ներհակ էր նո-
րանց. և գիշերուայ չորրորդ պահին ծովի վե-
րայ գնալով՝ նորանց մօտ եկաւ, և ուզում էր
49 նորանցից անցնել։ Նորանք էլ, երբոր տեսան
ծովի վերայ գնալիս՝ կարծեցին թէ աչքի երեւ-
50 ույթ բան լինի, և աղաղակ բարձրացրին։ Վասն
զի ամէնքը նորան տեսան՝ և չփոթուեցան. և
շուտով խօսեց նորանց հետ և ասաց. Քաջ ե-
51 ղէք, ես եմ, մի վախենաք։ Եւ վեր ելաւ նաւը
նորանց մօտ՝ և քամին դադարեց, և իրանց
մէջ խիստ չափազանց ապշել էին, և զարմա-
52 նում էին. Վասն զի այն հացի վերայ էլ չիմա-
ցան. քանզի նորանց սիրտը թմրած էր։
53 Եւ այն կողմն անցնելով, Գեննեսարեթի եր-
54 կիրը եկան, և նաւը խարիսխը գցեցին։ Եւ երբ-
որ նորանք նաւից դուրս եկան, այն տեղացիք
55 շուտով ճանաչեցին նորան, Եւ գաւառի կողմերը
վազելով՝ սկսեցին հիւանդներին մահիճներով բե-
56 րել, որ տեղ որ լսում էին՝ թէ այնտեղ է։ Եւ
որ տեղ որ մտնում էր՝ գիւղեր թէ քաղաքներ
թէ ագարակներ, հիւանդներին հրապարակների
մէջ էին դնում, և նորան աղաչում որ գոնէ
հանդերձի ծայրին մօտենան. և որոնք որ մօ-
տեցան նորան, փրկուեցան։

Գլ. Է

1 Եւ ժողովուեցան նորա մօտ Փարիսեցիները և

դպիրներից ոմանք, որ Երուսաղէմից եկել էին։
2 Եւ երբոր տեսան, որ նորա աշակերտներից մի
քանիսը խառնակ ձեռքով, այսինքն առանց լը-
3 ուանալու հաց էին ուտում, բամբասեցին։ Վասն
զի Փարիսեցիները և բոլոր Հրէաները թէ որ
մի լաւ չլուանան ձեռները հաց չեն ուտում. ո-
րովհետև ծերերի աւանդութիւնն են պահում։
4 Եւ հրապարակից որ գալիս են, եթէ չլուացուին,
չեն ուտում. և ուրիշ շատ բաներ կան, որ ըն-
դունեցին պահել, բաժակների և անօթների և
պղնձէ ամանների և մահիճների լուացմունք-
5 ներ։ Յետոյ Փարիսեցիները և Դպիրները հարց-
րին նորան. թէ Ինչո՞ւ քո աշակերտները ծերե-
րի աւանդութեան համեմատ չեն գնում. այլ
6 անլուայ ձեռքով հաց են ուտում։ Նա էլ պա-
տասխանեց և ասաց նորանց. թէ Եսային լաւ
մարգարէացաւ ձեզ կեղծաւորներիդ վերայ, ինչ-
պէս գրուած է. Այս ժողովուրդը շրթունքնե-
րով է պատւում ինձ, իսկ նորանց սիրտը ին-
7 ձանից հեռացած ջոկուած է։ Եւ զուր տեղն են
պաշտում ինձ. սովորեցնելով այնպիսի վարդա-
պետութիւններ որ մարդկանց պատուէրներ են։
8 Վասն զի Աստուծոյ պատուիրանքը թողած՝ պա-
հում էք մարդկանց աւանդութիւնը, անօթների
և ամանների լուացմունքներ՝ և սորանց նման
9 էլ ուրիշ շատ բաներ էք անում։ Եւ նորանց ա-
սաց. Լաւ էք անարգում Աստուծոյ պատուի-
րանքը, որ ձեր աւանդութիւնը պինդ պահէք։
10 Վասն զի Մօսէս ասաց. Պատուիր քո հօրը և
քո մօրը. և նա որ հօրիցը կամ մօրիցը չարա-
11 խօսութիւն անէ, թող մահով մեռնի։ Բայց դուք
ասում էք. Եթէ մարդս հօրը կամ մօրը ասէ.

Կորբան, (այսինքն պատարագ) այն որ ինձանից
12 պէտք է շահուիս։ Եւ այլ եւս թոյլ չէք տալիս
նորան որ մի բան անէ իր հօրը կամ իր մօրը։
13 Եւ Աստուծոյ խօսքն անարգում էք ձեր աւան-
դութիւնովը, որ աւանդեցիք. եւ սորան նման
ուրիշ էլ շատ բաներ էք անում։
14 Եւ բոլոր ժողովուրդն իր մօտ կանչելով ա-
սաց նորանց. Ամենքդ ինձ լսեցէք, եւ հասկա-
15 ցէք։ Ոչինչ չկայ մարդից դուրս նորա մէջ մըտ-
նող, որ կարողանայ պղծել նորան, այլ նորան-
ցից այն դուրս եկողներն են որ մարդուն պըղ-
16 ծում։ Ով որ լսելու ականջ ունի, թող լսէ։
17 Եւ երբոր ամբոխից տուն եկաւ, նորա ա-
շակերտները հարցրին նորան այն առակի հա-
18 մար։ Եւ ասաց նորանց. Դո՞ւք էլ այդչափ ան-
միտ էք. չէ՞ք իմանում, որ ամեն ինչ որ դրսից
մտնում է մարդու մէջ՝ չէ կարող նորան պղծել։
19 Վասն զի նորա սիրտը չէ մտնում, այլ փորը,
եւ դուրս է գնում արտաքնոցը՝ ամեն կերակուր-
20 ները սրբելով։ Եւ ասում էր՝ թէ Մարդուցը
21 դուրս եկողն է պղծում մարդուն։ Վասն զի ներ-
սից՝ մարդկանց սրտից են դուրս գալիս չար
խորհուրդներ, շնութիւններ, պոռնկութիւններ,
22 Սպանութիւններ, գողութիւններ, ագահութիւն-
ներ, չարութիւններ, նենգութիւն, պիղծ ցան-
կութիւն, չար աչք, հայհոյութիւն, ամբարտա-
23 ւանութիւն, անզգամութիւն։ Այս ամեն չար
բաները ներսից է դուրս գալիս, եւ մարդուն
պղծում։
24 Եւ այն տեղից վեր կացաւ՝ եւ եկաւ Տիւրոսի
եւ Սիդօնի կողմերը. եւ տուն որ մտաւ՝ չէր ու-
զում որ մէկն իմանայ, բայց չկարողացաւ ծած-

25 կուիլ. Վասն զի նորա համար լսեց մի կին, որի
աղջիկը պիղծ ոգի ունէր. եկաւ նորա ոտքերի
26 առջեւը ընկաւ։ Եւ այն կինը Յոյն էր՝ ազգաւ
Փիւնիկ Ասորացի. եւ աղաչում էր նորան, որ
27 դեւն իր աղջկանից դուրս հանէ։ Յիսուս էլ
ասաց նորան. Թող առաջ երեխաները կշտանան.
վասն զի լաւ չէ՝ երեխաների հացն առնել եւ
28 շներին գցել։ Նա էլ պատասխանեց եւ ասաց
նորան. Այո, Տէր, վասն զի շուներն էլ սեղանի
29 տակին երեխաների փշրանքից են ուտում։ Եւ
ասաց նորան. Այս խօսքի համար գնա, դեւը
30 դուրս եկաւ քո աղջկանից։ Եւ իր տունը որ
գնաց, գտաւ դեւը դուրս եկած, եւ աղջիկը
մահճի վերայ պառկած։
31 Եւ դարձեալ Տիւրոսի եւ Սիդոնի կողմերից
դուրս գնաց, եւ Գալիլեացոց ծով եկաւ՝ Դեկա-
32 պօլիսի միջի կողմերը։ Եւ մի խուլ եւ դժուա-
րախօս բերին նորան, եւ աղաչում էին, որ ձե-
33 ռը դնէ նորա վերայ։ Եւ նորան ամբոխից մի
կողմ տարաւ, իր մատները նորա ականջների
մէջ դրաւ եւ թքեց, եւ նորա լեզուին դիպաւ։
34 Եւ դէպի երկինքը նայելով հառաչեց եւ ասաց
35 նորան. Եփփաթա՝ այսինքն բացուիր։ Եւ շու-
տով ականջները բացուեցան, եւ նորա լեզուի
36 կապն արձակուեցաւ, եւ խօսում էր ուղիղ։ Եւ
նորանց պատուիրեց՝ որ ոչ ոքի չասեն. եւ որ-
չափ նա պատուիրում էր նորանց, նորանք էլ
37 աւելի էին քարոզում։ Եւ չափից դուրս զար-
մանում էին եւ ասում. Սա ամեն բան լաւ գոր-
ծեց. խուլերին լսել է տալիս՝ եւ համրներին
խօսել։

ԳԼ. Ը

1 Այն օրերին՝ երբոր խիստ շատ ժողովուրդ կար
եւ բան չունէին ուտելու, Յիսուսը իր աշակերտ-
2 ներին կանչեց՝ եւ ասաց նորանց. Խղճս է գա-
լիս այս ժողովրդի վերայ. վասն զի արդէն ե-
րեք օր է ինձ մօտ են, եւ բան չունին որ ու-
3 տեն. Եւ եթէ նորանց սոված արձակեմ իրանց
տուները, կ'թուլանան ճանապարհին. վասն զի
4 դորանցից ոմանք հեռու տեղից են եկել: Նորա
աշակերտները պատասխանեցին նորան. Ո՞րտե-
ղից կարող է մէկը հացով կշտացնել դորանց
5 այստեղ՝ անապատումս: Եւ նորանց հարցրեց՝
Քանի՞ հաց ունիք: Եւ նորանք ասացին՝ Եօթն:
6 Եւ ժողովրդին հրամայեց, որ գետնի վերայ նըս-
տեն. եւ այն եօթն հացը առաւ, գոհացաւ, կըտ-
րեց, եւ իր աշակերտներին էր տալիս, որ դնեն.
7 եւ դրեցին ժողովրդի առջեւը: Մի քիչ փոքր
ձուկեր էլ ունէին. եւ օրհնեց եւ ասաց որ նո-
8 րանց էլ դնեն: Կերան եւ կշտացան. եւ կտոր-
9 ների աւելցածը եօթը զամբիւղ վեր առին: Եւ
ուտողները չորս հազարի չափ էին. եւ նորանց
10 արձակեց: Եւ շուտով իր աշակերտների հետ
նաւը մտաւ՝ եւ Դաղմանութայի կողմերն եկաւ:
11 Եւ Փարիսեցիներն դուրս եկան եւ սկսեցին նո-
րա հետ վիճել. եւ նորան փորձելով՝ նորանից
12 նշան էին ուզում երկնքից: Եւ նա շատ զայ-
րացաւ իր հոգու մէջ եւ ասաց. Ի՞նչ է որ այս
ազգը նշան է ուզում. ճշմարիտ ասում եմ ձեզ,
13 որ այս ազգին նշան չի տրուիլ: Եւ նորանց թո-
ղեց, դարձեալ նաւը մտաւ՝ եւ այն կողմը գնաց:
14 Եւ մոռացան հաց վեր առնել, եւ բայց ի մէկ

15 հացից չունէին իրանց հետ նաւի մէջ: Եւ նո-
րանց պատուիրում էր եւ ասում. Զգոյշ կացէք
Փարիսեցիների խմորիցը եւ Հերովդէսեաններէ խը-
16 մորիցը: Եւ իրար հետ միտք էին անում եւ աս-
17 ում. Որովհետեւ հաց չունինք: Եւ Յիսուսը ի-
մանալով՝ ասաց նորանց. Ի՞նչ էք միտք անում
թէ հաց չունիք. տակաւին չէ՞ք իմանում եւ
չէ՞ք յիշում. տակաւին թմրա՞ծ է ձեր սիրտը:
18 Աչք ունիք՝ եւ չէ՞ք տեսնում. եւ ականջ ունիք՝
19 եւ չէ՞ք լսում. եւ չէ՞ք յիշում: Երբոր այն հինգ
հացը հինգ հազարի համար կտրեցի, քանի՞ կո-
ղով լիքն վեր առիք նորա կտորները. եւ նորան
20 ասացին՝ Տասներկու: Եւ երբոր եօթը հացը չորս
հազարին համար, քանի՞ զամբիւղ լիքն վեր ա-
ռիք նորա կտորները. եւ նորանք ասացին. Եօ-
21 թըն: Եւ նորանց ասաց. Ապա ի՞նչպէս չէք ի-
մանում:
22 Եւ գալիս է Բեթսայիդա. եւ նորա առջեւը մի
կոյր են բերում եւ նորան աղաչում, որ դպչի
23 նորան: Եւ կուրի ձեռքիցը բռնեց՝ չէնիցը դուրս
հանեց, եւ նորա աչքերի մէջ թքելով, եւ ձեռը
վերան դնելով նորան հարցրեց, թէ մի բան տես-
24 նո՞ւմ է: Եւ նա մտիկ տուաւ եւ ասում էր.
Մարդիկը տեսնում եմ որ իբր ծառերի պէս՝ ման
25 գալիս են: Յետոյ ձեռները դարձեալ նորա
աչքերի վերայ դրաւ եւ նորան նայել տուաւ.
եւ նա ողջացաւ՝ եւ ամեն բան համարձակ
26 տեսնում էր: Եւ նորան ուղարկեց իր տունն եւ
ասաց. Ոչ գեղը մտնես, ոչ էլ գեղի մէջ մէկին
ասես:
27 Եւ Յիսուսը իր աշակերտների հետ դուրս գը-
նաց Փիլիպպեան Կեսարիայի գեղերը. եւ ճանա-

պարհին հարցնում էր իր աշակերտներին եւ ասում. Մարդիկ ինձ համար ո՞վ են ասում, թէ
28 եմ։ Նորանք էլ պատասխանեցին. Յովհաննէս
Մկրտիչը, եւ ուրիշները Եղիան, ուրիշներն էլ
29 մարգարէից մէկը։ Նա էլ ասաց նորանց. Ապա
դուք ո՞վ էք ասում ինձ համար, թէ եմ։ Պետ-
րոսը պատասխանեց, եւ նորան ասաց. Դու ես
30 Քրիստոսը։ Եւ նորանց սաստեց, որ ոչ ոքի բան
չասեն իրան համար։
31 Եւ սկսեց սովորեցնել նորանց, թէ Պէտք է
Որդին մարդոյ շատ չարչարուի, եւ անարգուի
ծերերիցը եւ քահանայապետներիցը եւ դպիրնե-
րիցը, եւ սպանուի եւ երեք օրից յետոյ յարու-
32 թիւն առնէ։ Եւ համարձակ խօսում էր այս խօս-
քը. եւ Պետրոսը նորան մի կողմ քաշեց՝ եւ սկը-
33 սեց սաստել նորան։ Եւ նա դարձաւ իր աշա-
կերտներին տեսաւ՝ Պետրոսին սաստեց եւ ա-
սաց. Յե՛տս գնա, սատանայ, վասն զի դու Աս-
տուծոյ բաները չես միտք անում, այլ մարդկանց
բաները։
34 Եւ ժողովուրդն իր աշակերտների հետ իր մօտ
կանչեց՝ եւ նորանց ասաց. Ով որ ուզում է իմ
ետեւից գայ՝ թող իր անձն ուրանայ, եւ իր խա-
35 չը վեր առնէ, եւ իմ ետեւից գայ։ Վասն զի
ով որ կամենայ իր անձն ազատել՝ կ'կորցնէ
նորան. եւ ով որ իր անձն ինձ համար եւ ա-
ւետարանի համար կորցնէ, նա կ'ազատէ նո-
36 րան։ Քանզի ի՞նչ օգուտ է մարդու, եթէ բոլոր
աշխարհքս ստանայ՝ եւ իր անձին վնաս տայ։
37 Կամ ի՞նչ փրկանք կ'տայ մարդ իր անձին հա-
38 մար։ Վասն զի ով որ ինձ եւ իմ խօսքերը ա-
մօթ համարէ այս շնացող եւ մեղաւոր ազգի մէջ,

Որդին մարդոյ էլ նորան ամօթ կ'համարէ երբոր
գայ իր Հօր փառքովը եւ սուրբ հրեշտակներո-
39 վը։ Եւ նորանց ասաց. Ճշմարիտ ասում եմ
ձեզ. թէ այստեղ կանգնածներից ոմանք կան,
որ մահ չեն ճաշակիլ, մինչեւ որ տեսնեն Աս-
տուծոյ արքայութիւնը զօրութիւնով եկած։

ԳԼ. Թ

1 Եւ վեց օրից յետոյ Յիսուսը իր հետ առաւ
Պետրոսին եւ Յակոբին եւ Յովհաննէսին, եւ հա-
նեց նորանց մինակ առանձին մի բարձր լեռ
2 եւ այլակերպուեցաւ նորանց առջեւը։ Եւ նորա
հանդերձները փայլուն եղան՝ ձիւնի պէս շատ
սպիտակ, որ երկրիս վերայ թափիչը չէ կարող
3 այնպէս սպիտակացնել։ Եւ երեւեցաւ նորանց
Եղիան Մովսէսի հետ եւ խօսում էին Յիսուսի
4 հետ։ Եւ Պետրոսը պատասխանեց եւ ասաց Յի-
սուսին. Ռա՛բբի, լաւ է որ մենք այստեղ լինինք.
եւ երեք տաղաւար շինենք, մէկը քեզ եւ մէկը
5 Մովսէսին եւ մէկը Եղիային։ Վասն զի չէր գի-
տում թէ ինչ խօսէր, որովհետեւ զարհուրել է-
6 ին։ Եւ մի ամպ նորանց վերայ հովանի եղաւ,
այն ամպից ձայն եկաւ՝ եւ ասաց. Դա է իմ
7 սիրելի Որդին. դորան լսեցէք։ Եւ շուտով որ
իրանց չուրջը նայեցան, ոչ ոք չտեսան, բայց
8 միայն Յիսուսին իրանց հետ։ Եւ լեռնիցն իջ-
նելիս, նորանց պատուիրեց, որ ոչ մէկին չպատ-
մեն ինչ որ տեսան, բայց միայն այն ժամանակն
որ Որդին մարդոյ մեռելների միջից յարութիւն
9 առնէ։ Եւ այն խօսքը պահեցին իրանց մօտ, եւ
իրար հարցնում էին. թէ ի՞նչ է այն մեռելների

10 միջից յարութիւն առնելը։ Եւ նորան հարցրին
եւ ասացին. Ի՞նչ է, որ դպիրներն ասում են. թէ
11 Պէտք է առաջ Եղիան գայ։ Նա էլ պատասխա-
նեց եւ ասաց նորանց. Իրաւ Եղիան առաջ կը
գայ, եւ ամեն բան կարգի կ՚դնէ. եւ ինչպէս
գրուած է Որդոյ մարդոյ համար, թէ շատ պիտի
12 չարչարուի եւ անարգուի։ Միայն ասում եմ ձեզ՝
թէ Եղիան եկաւ էլ, եւ ինչեր ուզեցին, նորան
արին էլ. ինչպէս նորա համար գրուած էր։
13 Եւ երբոր եկաւ աշակերտների մօտ, նորանց
չորս կողմովը շատ ամբոխ տեսաւ, եւ դպիրնե-
14 րին, որ նորանց հետ վիճում էին։ Եւ շուտով
բոլոր ժողովուրդը տեսնելով նորան, շատ զար-
մացան եւ առաջ վազելով՝ նորան բարեւում է-
15 ին։ Եւ հարցրեց դպիրներին. Ի՞նչ էիք վիճում
16 նորանց հետ։ Եւ ժողովրդի միջից մէկը պա-
տասխանեց եւ ասաց. Վարդապետ, իմ որդին
17 քեզ մօտ բերի, որ համր ոգի ունի։ Եւ որտեղ
որ նորան հասնում է, գետնով է տալիս նորան.
եւ փրփրեցնում է՝ եւ ատամները կրճտեցնում
է եւ ցամաքում է, եւ քո աշակերտներին ասա-
18 ցի, որ հանեն նորան, բայց չկարողացին։ Նա
էլ պատասխանեց եւ ասաց նորան. Ով անհա-
ւատ ազգ, մինչեւ ե՞րբ ձեզ հետ պիտի լինիմ.
մինչեւ ե՞րբ ձեզ պիտի համբերեմ. նորան ինձ
19 մօտ բերէք։ Եւ նորան բերին նորա մօտ. եւ
նորան որ տեսաւ, շուտով ոգին թափահարեց
նորան. եւ գետինն ընկած թաւալում էր փրփը-
20 րեցնելով։ Նորա հօրը հարցրեց. Քանի՞ ժամա-
նակ է, որ այդ եղաւ դորան. նա էլ ասաց՝ Ե-
21 րեխայութիւնիցը։ Եւ շատ անգամ էլ կրակի
մէջ գցեց եւ ջրի մէջ, որ դորան կորցնէ, այ-

կայն եթէ մի բան կարող ես, օգնիր մեզ՝ գթա-
22 լով մեզ վերայ։ Յիսուսն էլ նորան ասաց. Այն
եթէ կարող ես հաւատալ, ամեն բան կարելի է
23 հաւատացողին։ Եւ շուտով տղայի հայրն աղա-
ղակեց՝ եւ արտասուքով ասաց. Հաւատում եմ,
24 Տէր, իմ անհաւատութեանն օգնիր։ Եւ երբոր
Յիսուսը տեսաւ՝ թէ ամբոխը դիզվում է, պիղծ
ոգուն սաստեց եւ ասաց նորան. Համր եւ խուլ
ոգի, ես հրամայում եմ քեզ, դորանից դուրս եկ,
25 եւ այլ եւս դորա մէջ չմտնես։ Եւ աղաղակելով
եւ սաստիկ թափահարելով նորան, դուրս եկաւ.
եւ նա մեռելի պէս եղաւ. մինչեւ որ շատերն
26 ասում էին՝ թէ Մեռաւ։ Եւ Յիսուսը նորա ձե-
ռիցը բռնեց, վերկացրեց նորան. եւ նա կանգ-
27 նեց։ Եւ երբոր նա տուն մտաւ՝ աշակերտներն
առանձին հարցրին նորան. թէ Մենք ինչո՞ւ չը
28 կարողացինք հանել նորան։ Եւ ասաց նորանց.
Այդ ցեղը ուրիշ բանով անկարելի է դուրս գայ,
եթէ ո՛չ աղօթքով եւ ծոմով։
29 Եւ այնտեղից դուրս եկած՝ Գալիլեայի միջովն
անցնում էին. եւ չէր ուզում որ մէկն իմանայ։
30 Քանզի իր աշակերտներին սովորեցնում էր՝ եւ
նորանց ասում՝ թէ Որդին մարդոյ մարդկանց
ձեռքը պիտի մատնուի, եւ նորան կ՚սպանեն.
բայց երբոր սպանուի, երրորդ օրումն յարու-
31 թիւն կառնէ։ Իսկ նորանք այն խօսքը չէին ի-
մանում. եւ վախում էին հարցնել նորան։
32 Եւ Կափառնայում եկաւ. եւ երբոր տանն էր,
նորանց հարցնում էր՝ Ի՞նչ էիք ճանապարհին
33 վիճում իրար հետ։ Բայց նորանք լռում էին,
վասն զի ճանապարհին իրար հետ վիճում էին
34 թէ ո՛վ է մեծը։ Եւ նստեց տասներկուսին կան-

չեց եւ ասաց նորանց. Եթէ մէկն ուզում է ա-
ռաջին լինել, թող ամենից յետին եւ ամենի
35 պաշտօնեայ լինի։ Եւ մի երեխայ առաւ, կանգ-
նեցրեց նորան նորանց միջումը. եւ նորան գըր-
36 կելով՝ ասաց նորանց. Ով որ այսպիսի երեխա-
ներից մէկին իմ անունովս ընդունի՝ ինձ է ըն-
դունում. եւ ով որ ինձ ընդունի՝ ինձ չէ ընդու-
37 նում, այլ ինձ ուղարկողին։ Եւ Յօհաննէսը նո-
րան պատասխանեց եւ ասաց. Վարդապետ, մէ-
կին տեսանք որ քո անունովը դեւեր էր հան-
ում, եւ մեր ետեւից չէր գալիս, եւ արգելե-
ցինք նորան, որովհետեւ մեր ետեւից չէր գա-
38 լիս։ Յիսուսն էլ ասաց. Մի արգելէք նորան.
վասն զի ոչ ով չկայ՝ որ իմ անունովը մի զօ-
րութիւն անէ, եւ կարողանայ շուտով հայհոյել
39 ինձ։ Վասն զի ով որ մեզ հակառակ չէ, մեր
40 կողմն է։ Որովհետեւ ով որ մի բաժակով ջուր
խմեցնէ ձեզ իմ անունովը թէ դուք Քրիստոսի-
նըն էք, ճշմարիտ ասում եմ ձեզ. Նա չի կոր-
41 ցընիլ իր վարձքը։ Եւ ով որ գայթակղեցնէ այս
փոքրներից մէկին, որ ինձ հաւատում են, աւե-
լի լաւ էր նորան, որ նորա վզիցը մի ջաղացի
42 քար անցնուի, եւ ծովը գցուի։ Եւ եթէ քո
ձեռքը քեզ գայթակղեցնէ՝ կտրիր նորան, վասն
զի լաւ է քեզ՝ որ խեղ մտնես յաւիտենական
կեանքը, քան երկու ձեռքն ունենաս՝ եւ գեհե-
43 նը գնաս այն անանցանելի կրակի մէջ. Որտեղ
նորանց որդը չէ մեռնում՝ եւ կրակը չէ անց-
44 նում։ Եւ եթէ քո ոտքը քեզ գայթակղեցնէ՝
կտրիր նորան. լաւ է քեզ որ կաղ մտնես յաւի-
տենական կեանքը, քան թէ երկու ոտքն ունե-
նաս՝ եւ գեհենը ընկնիս՝ այն անանցանելի կրա-

45 կի մէջ. Որտեղ նորանց որդը չէ մեռնում՝ եւ
46 կրակը չէ անցնում։ Եւ եթէ քո աչքը քեզ գայ-
թակղեցնէ, դուրս հանիր նորան. լաւ է քեզ՝ որ
մէկ աչքով Աստուծոյ արքայութիւնը մտնես,
քան թէ երկու աչք ունենաս՝ եւ կրակի գեհենն
47 ընկնիս։ Որտեղ նորանց որդը չէ մեռնում՝ եւ
48 կրակը չէ անցնում։ Քանզի բոլորը կրակով պէտք
է աղանուի, եւ ամեն զոհ աղով պէտք է ա-
49 ղանուի։ Աղը բարի է. իսկ եթէ աղն անհամա-
նայ, ինչո՞վ պիտի համովացնէք. աղ ունեցէք
ձեր անձերումը, եւ իրար հետ խաղաղութիւն
արէք։

Գլ. Ժ

1 Եւ այն տեղից վերկացաւ եկաւ Հրէաստանի
կողմերը՝ Յորդանանի այն կողմովը. եւ ժողո-
վուրդները դարձեալ հաւաքվում էին նորա մօտ,
եւ ինչպէս սովոր էր՝ դարձեալ սովորեցնում էր
նորանց։
2 Բայց Փարիսեցիները մօտ եկան, նորան հարց-
րին. թէ Արժա՞ն է մարդուս որ կինը արձակէ.
3 եւ փորձում էին նորան։ Նա էլ պատասխանեց
եւ ասաց նորանց. Մօսէսն ի՞նչ պատուիրեց
4 ձեզ։ Նորանք էլ ասացին. Մօսէս հրաման տը-
ուաւ՝ արձակման թուղթ գրել, եւ արձակել։
5 Եւ Յիսուսը պատասխանեց եւ ասաց նորանց.
Ձեր քարասրտութեանն համար այն պատուի-
6 րանքը գրեց։ Բայց ստեղծագործութեան սկզբից
Աստուած նորանց արու եւ էգ արաւ, եւ ասաց.
7 Սորա համար մարդ իր հօրը եւ մօրը կ՚թողէ, եւ
8 իր կնկան կ՚յարի. Եւ երկուքը մէկ մարմին կը

լինին․ այնպէս որ այլ եւս երկու չեն՝ բայց մէկ
9 մարմին։ Ուրեմն ինչ որ Աստուած միաւորեց՝
10 թող մարդը չբաժանէ։ Եւ տանը աշակերտները
11 դարձեալ միեւնոյն բանը հարցրին նորանից։ Եւ
ասաց նորանց․ Ով որ կինն արձակէ եւ մի ու-
12 րիշն առնէ շնութիւն է գործում նորա դէմ։ Եւ
եթէ մի կին իր մարդուն արձակէ եւ ուրիշ մար-
դու գնայ, շնութիւն է գործում։
13 Եւ նորա մօտ երեխաներ էին բերում՝ որ դիպ-
չի նորանց․ բայց աշակերտները սաստում էին
14 բերողներին։ Իսկ երբոր Յիսուսը տեսաւ, բար-
կացաւ, եւ ասաց նորանց․ Թո՛յլ տուէք երեխա-
ներին ինձ մօտ գան, եւ մի արգելէք դորանց․
վասն զի այդպիսիներին է Աստուծոյ արքայու-
15 թիւնը։ Ճշմարիտ ասում եմ ձեզ, Ով որ Աս-
տուծոյ արքայութիւնը չընդունի ինչպէս երե-
16 խայ, նա չի մտնիլ նորա մէջ։ Եւ նորանց գիրկն
առաւ, ձեռը դրաւ նորանց վերայ, եւ օրհնեց
նորանց։
17 Եւ այնտեղից ճանապարհը գնալիս, մէկը վա-
զելով եկաւ՝ ծունր դրաւ, նորան հարցնում էր
եւ ասում․ Բարի վարդապետ, ի՞նչ գործեմ, որ
18 յաւիտենական կեանքը ժառանգեմ։ Յիսուսն էլ
ասաց նորան․ Ինչո՞ւ ես ինձ բարի ասում․ ոչ
ով բարի չկայ, բայց միայն մէկը՝ Աստուած։
19 Պատուիրանքները գիտես՝ Մի շնար, Մի սպա-
նաներ, Մի գողանար, Մի սուտ վկայեր, Մի
20 զրկեր, Քո հօրը եւ մօրը պատուիր։ Նա էլ պա-
տասխանեց եւ ասաց նորան․ Վարդապետ, այդ
21 ամենն իմ երեխայութիւնից պահել եմ։ Յիսուսն
էլ նորան մտիկ տուաւ՝ նորան սիրեց, եւ ասաց
նորան․ Մէկ բան պակաս է քեզ, գնա, ինչ որ

ունիս ծախիր եւ աղքատներին տուր․ եւ գանձ
կ՚ունենաս երկնքումը․ եւ խաչն առած՝ եկ ինձ
22 հետեւիր։ Նա էլ այն խօսքի համար դժուարա-
ցած՝ գնաց տրտմած․ վասն զի շատ ապրանքի
23 տէր էր։ Եւ Յիսուսը չուրջը նայելով՝ ասաց իր
աշակերտներին․ Ի՞նչքան դժուար է, որ ապ-
րանք ունեցողներն Աստուծոյ արքայութիւնը
24 մտնեն։ Եւ աշակերտները զարմացել էին նորա
խօսքերի վերայ․ բայց Յիսուսը դարձեալ պա-
տասխանեց եւ ասաց նորանց․ Որդեակներ, ո՜ր-
քան դժուար է, որ իրանց ապրանքի վերայ յու-
25 սացողները Աստուծոյ արքայութիւնը մտնեն։ Ա-
ւելի հեշտ է, որ ուղտն ասեղի ծակով անցնէ,
քան հարուստն Աստուծոյ արքայութիւնը մտնէ։
26 Եւ նորանք առաւել եւս զարմանում էին, իրար
27 ասելով․ Ապա ո՞վ կարող է փրկուիլ։ Յիսուսն
էլ նորանց մտիկ տուաւ եւ ասաց․ Մարդկանց
կողմանէ է անկարելի, այլ ոչ թէ Աստուծոյ կող-
մանէ․ վասն զի ամեն բան կարելի է Աստուծոյ
28 կողմանէ։ Եւ Պետրոսը սկսեց նորան ասել․ Ա-
հա մենք ամեն բան թողինք եւ քո ետեւից ե-
29 կանք։ Յիսուսն էլ պատասխանեց եւ ասաց․
Ճշմարիտ ասում եմ ձեզ, ոչ ով չկայ, որ թո-
ղեց տուն կամ եղբայրները կամ քոյրերը կամ
մայր կամ կին կամ որդիք կամ արտերը ինձ հա-
30 մար կամ աւետարանի համար։ Որ հարիւրապա-
տիկ հիմա այս ժամանակումը չառնէ տուներ եւ
եղբայրներ եւ քոյրեր եւ մայրեր եւ որդիք եւ
արտեր հալածանքի հետ, եւ գալու աշխարհքու-
31 մը՝ յաւիտենական կեանքը։ Վասն զի շատ ա-
ռաջիններ յետինք կ՚լինին, եւ յետինները առա-
ջինք։

32 Եւ ճանապարհի վերայ Երուսաղէմ էին գըն-
ում, եւ Յիսուսը նորանցից առաջ էր գնում,
եւ նորանք զարմանում էին եւ ետեւից գնա-
լով վախենում էին։ Եւ տասներկուսին դարձ-
եալ առանձին առաւ մօտը, սկսեց նորանց ա-
33 սել, թէ ինչ բաներ են իրան պատահելու. Թէ
ահա վեր ենք ելլում Երուսաղէմ. եւ Որդին
մարդոյ կ'մատնուի քահանայապետներին եւ դը-
պիրներին. եւ նորան մահով կ'դատապարտեն,
34 եւ նորան հեթանոսներին կ'մատնեն։ Եւ նորան
ծաղր կ'անեն, եւ նորան կ'ծեծեն, եւ նորա վե-
րայ կ'թքնեն, եւ կ'սպանեն նորան. եւ երրորդ
օրումն յարութիւն կ'առնէ։
35 Եւ Զեբեդիայի որդիքն՝ Յակոբոս եւ Յօհաննէս
նորա մօտ են գնում եւ ասում. Վարդապետ,
ուզում ենք որ՝ ինչ որ քեզանից խնդրենք՝ մեզ
36 անես։ Նա էլ նորանց ասաց. Ի՞նչ էք ուզում
37 որ ես ձեզ անեմ։ Նորանք էլ ասացին նորան.
Տուր մեզ, որ մէկը աջ կողմդ եւ միւսը ձախ
38 կողմդ նստենք քո փառքումը։ Յիսուսն էլ ա-
սաց նորանց. Չէք գիտում՝ ինչ էք խնդրում.
կարո՞ղ էք խմել այն բաժակը որ ես պիտի խը-
մեմ, կամ այն մկրտութիւնովը մկրտուիլ՝ որով
39 պիտի մկրտուիմ։ Նորանք էլ ասացին նորան.
Կարող ենք։ Յիսուսն էլ ասաց նորանց. Այն
բաժակը որ ես պիտի խմեմ, կ'խմէք, եւ այն
մկրտութիւնովն՝ որ ես պիտի մկրտուիմ՝ կ'մը-
40 կրտուիք։ Բայց իմ աջ եւ իմ ձախ կողմն նըս-
տելն իմս չէ, որ տամ. այլ նորանց, որ պատ-
41 րաստուած է։ Եւ այն տասները լսելով սկսեցին
42 բարկանալ Յակոբի եւ Յօհաննէսի մասին։ Յի-
սուսն էլ նորանց իր մօտ կանչեց, եւ ասաց նո-

րանց. Գիտէք՝ որ հեթանոսների իշխան համար-
ուողները տիրում են նորանց վերայ, եւ նորանց
43 մեծամեծները իշխում են նորանց վերայ։ Այն-
պէս չի պիտի լինի ձեր միջումը. այլ ձեզանից
ով որ կամենայ մեծ լինել՝ թող ձեզ պաշտօնեայ
44 լինի։ Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լի-
45 նել, թող ամենի ծառայ լինի։ Որովհետեւ Որդին
մարդոյ էլ չեկաւ, որ իրան ծառայեն, այլ ինքն
ծառայէ, եւ իր անձը փրկանք տայ շատերի տեղ։
46 Եւ գալիս են Երիքով. եւ երբոր նա եւ նորա
աշակերտները եւ շատ ժողովուրդ Երիքովից
դուրս էին գալիս, Տիմէի որդի Բարտիմէոս կոյրը
47 ճանապարհի վերայ նստած մուրանում էր։ Եւ
լսելով թէ Յիսուս Նազօրեցին է, սկսեց աղա-
ղակել եւ ասել. Յիսուս՝ որդի Դաւթի, ողորմիր
48 ինձ։ Եւ շատ մարդիկ սաստում էին նորան, որ
լուռ կենայ. բայց նա էլ աւելի էր աղաղակում.
49 Որդի Դաւթի, ողորմիր ինձ։ Եւ Յիսուսը կանգ-
նեց եւ ասաց, որ նորան կանչեն. եւ կոյրին
կանչեցին՝ եւ ասացին նորան. Քաջ եղիր, վեր
50 կաց, քեզ կանչում է։ Նա էլ իր հանդերձը դէն
51 դցեց՝ վեր կացաւ եւ Յիսուսի մօտ եկաւ։ Եւ
Յիսուսը պատասխանեց եւ նորան ասաց. Ի՞նչ
ես կամենում, որ անեմ քեզ։ Կոյրն էլ նորան
52 ասաց. Ռաբբունի, որ տեսնեմ։ Յիսուսն էլ ա-
սաց նորան. Գնա՝ քո հաւատքը քեզ ազատեց.
եւ շուտով տեսնում էր, եւ ճանապարհումը Յի-
սուսի ետեւից գնում էր։

ԳԼ. ԺԱ

1 Եւ երբոր Երուսաղէմին մօտեցան, Բեթփագէ

եւ Բեթանիա՝ Ձիթենեաց լեռան մօտ իր աշա-
2 կերտներից երկուսին ուղարկեց։ Եւ ասաց նո-
րանց. Գնացէք այդ ձեր առջեւի գիւղը. եւ շու-
տով երբոր նորա մէջ մտնէք, մի կապած յաւա-
նակ կ'գտնէք որի վերայ ոչ ոք չէ նստած. նո-
3 րան արձակեցէք բերէք։ Եւ եթէ մէկը ձեզ ա-
սէ. Ինչո՞ւ համար էք այդ անում. ասացէք՝ թէ
Նա պէտք է Տիրոջը. եւ շուտով նորան այստեղ
4 կ'ուղարկէ։ Գնացին, եւ յաւանակը գտան դուրսը
փողոցի մէջ դրան մօտ կապած, եւ նորան ար-
5 ձակեցին։ Եւ այնտեղ կանգնածներից ոմանք ա-
սացին նորանց. Ի՞նչ էք անում դա, որ արձա-
6 կում էք այդ յաւանակը։ Նորանք էլ ասացին նո-
րանց, ինչպէս Յիսուսը հրամայեց. եւ թոյլ տը-
7 ուին նորանց։ Եւ յաւանակը Յիսուսի մօտ բե-
րին. եւ նորա վերայ գցեցին իրանց հանդերձ-
8 ները, եւ նորա վերայ նստեց։ Շատերն էլ ի-
րանց հանդերձները ճանապարհին փռում էին,
ուրիշներն էլ ծառերից ճիւղեր էին կտրում եւ
9 ճանապարհին փռում։ Եւ առաջից գնացողները
եւ ետեւից եկողները աղաղակում էին եւ աս-
ում. Ովսաննա. օրհնեալ է Տիրոջ անունով ե-
10 կողը. Օրհնեալ է Տիրոջ անունով մեր Դաւիթ
հօր եկող թագաւորութիւնը. Ովսաննա 'ի բար-
ձունս։

11 Եւ Յիսուսը մտաւ Երուսաղէմ՝ եւ տաճարի
մէջ. եւ չորս կողմով ամեն բանի մտիկ տուաւ.
եւ որովհետեւ արդէն իրիկուան ժամանակ էր,
դուրս գնաց Բեթանիա տասներկուսի հետ։

12 Եւ հետեւեալ օրն երբոր Բեթանիայից դուրս
13 էին գալիս, նա սովեց։ Եւ հեռուանց մի թզի
ծառ տեսնելով, որ տերեւներ ունէր. գնաց թէ

արդեօք նորա վերայ մի բան կ'գտնէ. եւ երբոր
եկաւ, մի բան չի գտաւ բայց միայն տերեւներ.
14 վասն զի թզի ժամանակ չէր։ Յիսուսը պատաս-
խանեց եւ ասաց նորան. Այլ եւս ոչ ոք քեզա-
նից յաւիտեան պտուղ չուտէ. եւ նորա աշա-
կերտները լսում էին։

15 Եւ եկան Երուսաղէմ. եւ Յիսուսը տաճարը
մտաւ, սկսեց դուրս հանել տաճարումը ծախող-
ներին եւ առնողներին. եւ սատակ փոխողների
սեղանները, եւ աղաւնի ծախողների աթոռները
16 կործանեց։ Եւ չէր թողում, որ մէկը մի անօթ
17 անցկացնէ տաճարի միջով։ Եւ սովորեցնում էր
եւ ասում նորանց. Գրուած չէ՞ թէ Իմ տունը
աղօթքի տուն պիտի կոչուի ամեն ազգերի հա-
մար, իսկ դուք աւազակների բոյն արիք դորան։
18 Եւ դպիրները եւ քահանայապետները լսեցին,
եւ ուզում էին թէ ի՞նչպէս կորցնեն նորան.
վասն զի վախում էին նորանից. քանզի բոլոր
ժողովուրդը նորա վարդապետութեան վերայ
19 զարմացել էր։ Եւ երբոր իրիկուն եղաւ, քաղա-
քից դուրս եկաւ։

20 Եւ առաւօտանց անցնելիս՝ տեսան այն թզի
21 ծառն արմատից չորացած։ Եւ Պետրոսը յիշե-
լով ասաց նորան. Ռաբբի, տես այն թզենին,
22 որ անիծեցիր, չորացաւ։ Եւ Յիսուսը պատաս-
խանեց եւ ասաց նորանց. Աստուծոյ հաւատքն
23 ունեցէք։ Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
Ով որ այս լեռան ասէ՝ Վեր կաց եւ ծովն ըն-
կիր, եւ իր սրտումն չերկմտի, բայց հաւատայ՝
թէ ինչ որ ասում է՝ կ'լինի նորան, կ'լինի ինչ
24 որ ասէ։ Սորա համար ասում եմ ձեզ՝ թէ Ամեն
ինչ որ աղօթք անելով խնդրէք, հաւատացէք

25 թէ կ՚առնէք, եւ կ՚լինի ձեզ։ Եւ որ ժամանակ
որ կանգնէք՝ աղօթք անէք, ներեցէք եթէ մէկի
դէմ բան ունենաք. որպէս զի ձեր Հայրն էլ՝ որ
26 երկնքումն է, ձեր յանցանքը թողէ ձեզ։ Բայց
եթէ դուք չներէք, ձեր հայրն էլ որ երկնքումն
է, ձեր յանցանքը չի ներել ձեզ։
27 Եւ դարձեալ Երուսաղէմ եկան. եւ նա տա-
ճարումը ման գալիս, քահանայապետները եւ
28 դպիրները եւ ծերերը նորա մօտ եկան. Եւ ա-
սացին նորան. Ի՞նչ իշխանութիւնով ես անում
այդ. եւ ով տուաւ քեզ այդ իշխանութիւնը որ
29 այդ անես։ Յիսուսն էլ պատասխանեց եւ ա-
սաց նորանց. Ես էլ ձեզանից մէկ բան հարցնեմ
եւ ինձ պատասխան տուէք, եւ ես էլ կ՚ասեմ
ձեզ՝ թէ ի՞նչ իշխանութիւնով եմ անում այս։
30 Յօհաննէսի մկրտութիւնն երկնքի՞ցն էր թէ մարդ-
31 կանցից, պատասխան տուէք ինձ։ Եւ իրար հետ
միտք էին անում եւ ասում. Եթէ ասենք՝ Եր-
կընքից, կ՚ասէ. Ապա ինչո՞ւ չհաւատացիք նո-
32 րան։ Այլ թէ ասենք՝ Մարդկանցից, ժողովրդի-
ցը վախենում ենք. վասն զի ամենքն ընդունում
33 էին Յօհաննէսին՝ թէ իրաւի մարգարէ էր։ Եւ
պատասխանեցին եւ ասացին Յիսուսին. Չենք
գիտում։ Յիսուսն էլ նորանց պատասխանեց եւ
ասաց. Ես էլ չեմ ասիլ ձեզ, թէ ի՞նչ իշխանու-
թիւնով եմ անում այս։

Գլ. ԺԲ

1 Եւ սկսեց նորանց հետ առակներով խօսիլ՝ ա-
սաց. Մի մարդ այգի տնկեց, եւ նորան պարիս-
պով չրջապատեց, եւ հնձան փորեց, եւ աշտա-

րակ շինեց, եւ նորան մշակների տուաւ, եւ օ-
2 տար երկիր գնաց։ Եւ ժամանակին այն մշակ-
ների մօտ մի ծառայ ուղարկեց, որ մշակներից
3 այգու պտղից առնէ։ Նորանք էլ բռնեցին՝ նո-
րան ծեծեցին, եւ դատարկ ճանապարհ դրին։
4 Եւ դարձեալ մի ուրիշ ծառայ ուղարկեց նորանց
մօտ. եւ քարկոծելով նորա գլուխը պատա-
5 ռեցին եւ անպատուած արձակեցին։ Եւ դարձ-
եալ ուրիշն ուղարկեց՝ եւ նորան սպանեցին, եւ
շատ ուրիշներին, ոմանց ծեծում եւ ոմանց սպա-
6 նում էին։ Հիմա դեռ իր մէկ սիրելի որդի ու-
նենալով, նորան էլ ուղարկեց նորանց մօտ վեր-
ջապէս եւ ասաց. թէ Իմ որդուցս կ՚ամաչեն։
7 Բայց այն մշակներն իրար ասացին. թէ Սա է
ժառանգը. եկէք սորան սպանենք, եւ ժառան-
8 գութիւնը մեզ կ՚լինի։ Եւ նորան բռնեցին՝ ըս-
9 պանեցին եւ հանեցին այգուցը դուրս։ Արդ այ-
գու տէրն ի՞նչ կ՚անէ. կ՚գայ եւ մշակներին կը
10 կորցնէ եւ այգին ուրիշներին կ՚տայ։ Եւ դուք
չէ՞ք կարդացել այն գրածը՝ թէ Այն քարն՝ որ
շինողներն անարգեցին՝ նա եղաւ անկիւնի գը-
11 լուխ։ Տէրից եղաւ այս, եւ մեր աչքերի առ-
ջեւն զարմանալի է։
12 Եւ ուզում էին նորան բռնել, բայց ժողովըր-
դից վախեցան. վասն զի իմացան՝ թէ այն ա-
ռակն իրանց համար ասաց. եւ նորան թողին եւ
գնացին։
13 Եւ Փարիսեցիներից եւ Հերօդէսեաններից մի
քանի հոգի նորա մօտ ուղարկեցին, որ խօսքով
14 որսան նորան։ Եւ նորանք եկան եւ ասացին նո-
րան. Վարդապետ, գիտենք՝ որ ճշմարիտ ես, եւ
ոչ ոքից հոգս չունիս, վասն զի մարդոց երես-

պաշտութիւն չես անում, այլ Աստուծոյ ճանա-
պարհը ճշմարտութիւնով սովորեցնում ես։ Ար-
ժա՞ն է Կայսրին հարկ տալ, թէ չէ․ տա՞նք թէ
15 չտանք։ Նա էլ իմանալով նորանց կեղծաւորու-
թիւնը, ասաց նորանց․ Ինչո՞ւ էք փորձում ինձ,
մի դահեկան բերէք ինձ՝ որ տեսնեմ։ Նորանք
16 էլ բերին։ Եւ ասաց նորանց․ Այս պատկերը
կամ գիրը ո՞ւմն է։ Նորանք էլ ասացին նորան․
17 Կայսրին։ Յիսուսն էլ պատասխանեց եւ ասաց
նորանց․ Կայսրինը կայսրին տուէք, եւ Աստու-
ծոյնը՝ Աստուծոյն։ Եւ զարմացան նորա վերայ։
18 Եւ նորա մօտ եկան Սադուկեցիք, որ ասում
են՝ թէ Յարութիւն չկայ․ նորան հարցրին եւ
19 ասացին․ Վարդապետ, Մօսէս մեզ համար գրեց
որ եթէ մէկի եղբայրը մեռնի, եւ կին թողէ, եւ
որդիք չթողէ՝ որ նորա եղբայրը նորա կինն առ-
նէ, եւ իր եղբօր համար զաւակ յարուցանէ։
20 Արդ եօթը եղբարք կային, եւ առաջինը կին ա-
21 ռաւ՝ եւ մեռնելիս զաւակ չթողեց։ Եւ երկրոր-
դը նորան առաւ՝ եւ մեռաւ, եւ նա էլ զաւակ
22 չթողեց․ այսպէս էլ երրորդը։ Եւ այն եօթն էլ
նորան առին եւ զաւակ չթողին․ եւ ամենից
23 վերջը կինն էլ մեռաւ։ Արդ յարութեան ժամա-
նակին երբոր յարութիւն կ'առնեն, նորանցից ո-
րի՞ն կ'լինի կին․ վասն զի այն եօթն էլ նորան
24 կին առին։ Եւ Յիսուսը պատասխանեց եւ ա-
սաց նորանց․ Չէ՞ որ իսկ դորա համար մոլոր-
ուած էք, որ ոչ գիրքն էք գիտում եւ ոչ Աս-
25 տուծոյ զօրութիւնը։ Քանզի երբոր մեռելների
միջից յարութիւն կ'առնեն, ոչ կին կ'առնեն՝ եւ
ոչ մարդու կ'գնան, այլ հրեշտակների պէս են
26 որ երկնքումն են։ Սակայն մեռելների համար՝

թէ յարութիւն կ'առնեն, դուք չէ՞ք կարդացել
Մօսէսի գրքումը մորենու մէջ, թէ Աստուած
ինչպէս խօսեց նորան եւ ասաց․ Ես եմ Աբրա-
համի Աստուածը, եւ Իսահակի Աստուածը, եւ
27 Յակոբի Աստուածը։ Եւ Աստուած մեռելներին
չէ, բայց կենդանիների Աստուած, ուրեմն դուք
շատ մոլորուած էք։
28 Եւ դպիրներից մէկը մօտ եկաւ, լսելով որ վի-
ճում էին, եւ երբոր տեսաւ թէ լաւ պատաս-
խանեց նորանց, նորան հարցրեց․ Ո՞րն է ամե-
29 նից առաջին պատուիրանքը։ Յիսուսն էլ նորան
պատասխանեց․ Թէ Ամէն պատուիրանքներից
առաջինը սա է․ Լսիր, Իսրայէլ, մեր Տէր Աստ-
30 ուածը մէկ Տէր է։ Եւ սիրիր քո Տէր Աստու-
ծոյն բոլոր սրտիցդ, եւ բոլոր անձիցդ, եւ բոլոր
մտքիցդ, եւ բոլոր զօրութիւնիցդ․ սա է առա-
31 ջին պատուիրանքը։ Եւ երկրորդը սորան նման․
Սիրիր քո ընկերը քո անձին պէս․ սորանցից ա-
32 ւելի մեծ պատուիրանք չկայ։ Եւ դպիրը նորան
ասաց․ Լաւ, վարդապետ, ճշմարտութեամբ ա-
սացիր՝ թէ մէկ է Աստուած․ նորանից բաց ու-
33 րիշ չկայ։ Եւ նորան սիրելը բոլոր սրտից եւ բո-
լոր մտքից եւ բոլոր անձից եւ բոլոր զօրութիւ-
նից, եւ ընկերը անձին պէս սիրելը՝ աւելի է
34 քան թէ ամեն ողջակէզները եւ զոհերը։ Եւ Յի-
սուսը նորան տեսնելով, որ իմաստութեամբ պա-
տասխանեց, ասաց նորան․ Դու հեռու չես Աս-
տուծոյ արքայութիւնիցը։ Եւ այլ եւս ոչ ոք չէր
համարձակում նորան մի բան հարցնել։
35 Եւ Յիսուսը պատասխանեց եւ ասաց․ երբոր
տաճարումը սովորեցնում էր․ Ի՞նչպէս են ա-
սում դպիրները, թէ Քրիստոս Դաւթի որդի է։

36 Վասն զի ինքը Դաւիթ Սուրբ Հոգովն ասում է.
Տէրն իմ Տիրոջն ասաց. Իմ աջ կողմը նստիր,
մինչև որ քու թշնամիները ոտիցդ պատուան-
37 դան դնեմ։ Արդ Դաւիթ ինքն նորան Տէր է ա-
սում՝ ապա ի՞նչպէս նորա որդի է, և շատ ժո-
ղովուրդը քաղցրութեամբ լսում էր նորան։
38 Եւ իր վարդապետութեան մէջ ասում էր նո-
րանց. Զգոյշ կացէք դպիրներից, որ կամենում
են պայծառ հագուստներով ման գալ, և հրա-
39 պարակներումը բարևներ ընդունել. Եւ ժողո-
վարանների մէջ առաջին աթոռներ, և ընթրիք-
40 ներում առաջին բազմոցներ։ Որ որբևայրիների
տուները ուտում են, և պատճառանքով երկար
աղօթք են անում. դորանք աւելի ևս դատա-
պարտութիւն կ'առնեն։
41 Եւ Յիսուսը գանձանակի դիմացը նստած մը-
տիկ էր անում, թէ ժողովուրդն ինչպէս էր պը-
ղինձ գցում գանձանակը, և շատ հարուստներ
42 շատ բաներ էին գցում։ Եւ մի աղքատ որբե-
այրի եկաւ երկու լումայ գցեց, որ մի նաքարա-
43 կիտ է։ Եւ իր աշակերտներին իր մօտ կանչեց,
և ասաց նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝
թէ այս աղքատ որբևայրին գանձանակը գցող-
44 ների ամենից աւելի գցեց։ Վասն զի ամենքն ի-
րանց աւելորդից գցեցին. բայց սա իր չքաւո-
րութիւնից ամեն ինչ որ ունէր գցեց, իր կեան-
քի բոլոր ապրուստը։

ԳԼ. ԺԳ

1 Եւ երբոր նա տաճարից դուրս էր գալիս, նո-
րա աշակերտներից մէկը նորան ասաց. Վար-

դապետ, տես ի՞նչպիսի քարեր են և ի՞նչպիսի
2 շինուածներ։ Եւ Յիսուսը պատասխանեց և ա-
սաց նորան. Տեսնո՞ւմ ես այդ մեծ շինուածնե-
րը. քար քարի վերայ չթողուի՝ որ չքանդուի։
3 Եւ երբոր նա Ձիթենեաց լեռան վերայ նըս-
տած էր տաճարի դիմացը, Պետրոսը և Յակո-
բոսը և Յօհաննէսը և Անդրէասը առանձին
4 հարցնում էին նորան. Ասա մեզ, դորանք ե՞րբ
կ'լինին. և նշանն ի՞նչ է, երբոր այդ բոլոր բա-
5 ները կատարուին։ Յիսուսն էլ պատասխանեց և
սկսեց նորանց ասել. Զգոյշ կացէք, մի դուցէ
6 մէկը ձեզ խաբէ։ Վասն զի շատերը կ'գան իմ
անունովը, և կ'ասեն՝ թէ Ես եմ. և շատերը
7 կ'մոլորեցնեն։ Բայց երբոր պատերազմներ և
պատերազմի համբաւներ կ'լսէք, մի շփոթուիք,
վասն զի պէտք է որ լինին. բայց դեռ վերջը
8 չէ։ Քանզի ազգ ազգի վերայ վեր կ'կենայ, և
թագաւորութիւն թագաւորութեան վերայ. և
տեղ տեղ երկրաշարժներ կ'լինին, և սովեր և
խռովութիւններ կ'լինին. սորանք նեղութեանց
9 սկիզբն են։ Բայց դուք զգոյշ կացէք ձեր ան-
ձերին, վասն զի ձեզ ատեանների կ'մատնեն, և
ժողովարանների մէջ կ'տանջուիք, և կուսակալ-
ների և թագաւորների առջև կ'կանգնիք ինձ
10 համար նորանց 'ի վկայութիւն. Եւ բոլոր ազգե-
րին պէտք է առաջ Աւետարանը քարոզուի։
11 Բայց երբոր ձեզ կ'տանին որ մատնեն, առաջուց
հոգս չանէք թէ ի՞նչ պիտի խօսիք, և ոչ մտա-
ծեցէք. այլ ինչ որ այն ժամումը կ'տրուի ձեզ,
այն խօսեցէք. քանզի դուք չէք՝ խօսողները,
12 բայց Սուրբ Հոգին։ Եւ եղբայր եղբօրը կ'մատ-
նէ մահու, և հայրը որդուն. և որդիք վեր կը

կենան ծնողաց վերայ, եւ նորանց կ'սպաննեն։
13 Եւ ամենին ատելի կ'լինիք իմ անունի համար.
բայց ով որ մինչեւ վերջը համբերէ՝ նա կ'ազատի։
14 Եւ երբոր տեսնէք աւերածի պղծութիւնը, որ
ասուած է Դանիէլ մարգարէից, կանգնած այն
տեղումը որ արժան չէ. (ով որ կարդում է,
միտք առնէ.) այն ժամանակ նորանք որ Հրէաս-
15 տանումն են, թող լեռները փախչին։ Եւ ով
որ կտրի վերայ է, թող չիջնէ տան մէջ, եւ չը
16 մանէ իր տանից մի բան վեր առնելու։ Եւ յան-
դումը լինողը թող յետ չդառնայ իր հանդերձը
17 առնելու։ Բայց վայ այն օրերումը յղացածներին
18 եւ ծիծ տուողներին։ Եւ աղօթք արէք, որ ձեր
19 փախչիլը ձմեռ ժամանակին չլինի։ Վասն զի այն
օրերը նեղութիւններ կ'լինին, որ այնպիսիներ աշ-
խարհի սկզբից, որ Աստուած ստեղծել է, մին-
20 չեւ հիմա չեն եղած, եւ երբէք չեն լինիլ։ Եւ
եթէ Տէրն այն օրերը չէր կարճացրել, ոչ մի
մարմին չէր ապրիլ, բայց ընտրուածների հա-
մար, որոնց ընտրեց, այն օրերը կարճացրեց։
21 Եւ այն ժամանակ եթէ մէկը ձեզ ասէ. Ահա
այստեղ է Քրիստոսը, կամ ահա այնտեղ, մի հա-
22 ւատաք։ Վասն զի սուտ քրիստոսներ եւ սուտ
մարգարէներ վեր կ'կենան. եւ նշաններ եւ հր-
աշքներ կ'տան, որ եթէ կարելի լինէր, ընտ-
23 րուածներին էլ մոլորեցնեն։ Բայց դուք զգոյշ
կացէք, ահա ասացի առաջուց բոլորը։
24 Բայց այն օրերումն այն նեղութիւնից յետոյ
արեգակը կ'խաւարի, եւ լուսինն իր լոյսը չի
25 տալ։ Եւ երկնքի աստղերը կ'թափուեն, եւ եր-
26 կնքումը լինող զօրութիւնները կ'շարժուեն։ Եւ
այն ժամանակ կ'տեսնեն Որդին մարդոյ ամպե-

27 րով գալիս շատ զօրութիւնով եւ փառքով։ Եւ
այն ժամանակ իր հրեշտակները կ'ուղարկէ, եւ
իր ընտրուածներին չորս կողմից կ'ժողովէ, երկ-
28 րի ծայրից մինչեւ երկնքի ծայրը։ Բայց թզե-
նուցը սովորեցէք առակը. երբոր նորա ճղերը
արդէն կ'կակղին եւ տերեւները կ'արձակուեն,
29 գիտէք թէ ամառը մօտ է։ Այնպէս էլ դուք,
երբոր տեսնէք այս բոլորը լինելիս, իմացէք թէ
30 մօտիկ է դռներին։ Ճշմարիտ ասում եմ ձեզ,
թէ այս ազգը չի անցնիլ, մինչեւ որ այս բոլորը
31 լինի։ Երկինքն եւ երկիրն կ'անցնին, բայց իմ
32 խօսքերը չեն անցնիլ։ Միայն այն օրուայ եւ
ժամի համար ոչ ով չը գիտէ, ոչ հրեշտակները
երկնքումը եւ ոչ Որդին, բայց միայն Հայրը։
33 Զգուշացէք, արթուն կացէք. վասն զի չգի-
34 տէք թէ ժամանակը ե՞րբ է։ Ինչպէս մի մարդ,
որ հեռու աշխարհք գնալիս իր տունը թողէ,
եւ իր ծառաներին իշխանութիւն տայ, եւ ա-
մեն մէկին իր գործը, եւ դռնապանին հրա-
35 ման տայ, որ արթուն կենայ։ Արդ արթուն
կացէք, վասն զի չգիտէք թէ տանտէրը երբ կը
գայ, իրիկո՞ւնը, թէ կէս գիշերը, թէ հաւի խօ-
36 սելու ժամանակին, թէ առաւօտանց։ Որ չըլ-
37 նի թէ յանկարծ գալով ձեզ քնած գտնէ։ Բայց
ինչ որ ձեզ ասում եմ, ամենին եմ ասում. Ար-
թուն կացէք։

ԳԼ. ԺԴ

1 Եւ երկու օրից յետոյ զատիկն էր եւ բաղար-
ջակերք, եւ քահանայապետներն եւ դպիրները
որոնում էին, թէ ի՞նչպէս նորան նենգութեամբ

2 բանեն սպանեն։ Բայց ասում էին՝ Թէ Տօնումն
ոչ, մի գուցէ ժողովրդի մէջ խռովութիւն լինի։
3 Եւ երբոր Բեթանիա էր, Սիմօն բորոտի տան
սեղան նստած, մի կին եկաւ՝ որ մի շիշ ազնիւ
թանգագին նարդոսի իւղ ունէր, եւ շիշը կոտրեց
4 նորա գլխի վերայ թափեց։ Բայց կային ոմանք
որ իրանց մէջ դժուարացան, ասելով․ Ինչո՞ւ ե-
5 ղաւ իւղի այդ կորուստը։ Վասն զի կարելի էր
դորան երեք հարիւր դահեկանից աւելի թանգ
ծախել, եւ աղքատներին տալ, եւ շատ զայրա-
6 նում էին նորա վերայ։ Յիսուսն էլ ասաց․ Թող
տուէք դորան․ ինչո՞ւ էք նեղութիւն տալիս դո-
7 րան․ Դա մի բարի բան գործեց ինձ վերայ։ Վա-
սըն զի ամեն ժամանակ աղքատներին ձեզ հետ
ունիք, եւ երբոր կամենաք՝ կարող էք նորանց
բարի անել․ բայց ինձ ամեն ժամանակ ձեզ հետ
8 չունիք։ Դա ինչ որ ունէր, արաւ․ առաջուց
9 իմ մարմին օծեց՝ թաղման համար։ Ճշմարիտ
ասում եմ ձեզ, ուր որ այս աւետարանը քարոզ-
ուի, բոլոր աշխարհքի մէջ դորա յիշատակի հա-
մար նա էլ կ'խօսուի որ դա արաւ։
10 Եւ Յուդա Իսկարիօտացին՝ այն տասներկու-
սից մէկը՝ քահանայապետների մօտ գնաց, որ
11 նորան մատնէ նորանց։ Նորանք էլ երբոր լսե-
ցին՝ ուրախացան՝ եւ խոստացան նորան արծաթ
տալ․ եւ որոնում էր թէ ի՞նչպէս յարմար ժա-
մանակով մատնէ նորան։
12 Եւ բաղարջակերաց առաջին օրը, երբոր զատ-
կի գառն մորթում էին, նորա աշակերտները նո-
րան ասացին․ Ի՞նչ տեղ ես կամենում, որ գը-
13 նանք պատրաստենք, որ զատիկն ուտես։ Եւ իր
աշակերտներից երկուսին ուղարկեց եւ ասաց

նորանց․ Գնացէք քաղաքը եւ մի մարդ կ'պա-
տահի ձեզ՝ ջրի կուժն ուսի վերայ տանիլ, նորա
14 ետեւից գնացէք։ Եւ ուր որ մտնէ, այն տան
տիրոջն ասացէք․ թէ Վարդապետն ասում է՝
Ո՞ւր է այն իջեւանը, ուր զատիկն ուտեմ ա-
15 շակերտներիս հետ։ Եւ նա մի մեծ զարդարուած
պատրաստ վերնատուն ցոյց կ'տայ ձեզ․ այնտեղ
16 պատրաստեցէք մեզ համար։ Եւ նորա աշակերտ-
ները ելան ու եկան քաղաքը, եւ գտան ինչպէս
նորանց ասաց․ եւ զատիկը պատրաստեցին։
17 Եւ երբոր իրիկուն եղաւ, եկաւ տասներկուսին
18 հետ։ Եւ երբոր սեղան նստեցին եւ ուտում է-
ին, ասաց Յիսուսը․ Ճշմարիտ ասում եմ ձեզ,
որ ձեզանից մէկը կ'մատնէ ինձ․ նա որ ինձ հետ
19 ուտում է։ Նորանք էլ սկսեցին տրտմել եւ մէ-
կը մէկից յետոյ նորան ասել․ Մի՞թէ ես եմ․ եւ
20 միւսը՝ Մի՞թէ ես եմ։ Նա էլ պատասխանեց եւ ա-
սաց նորանց․ Տասներկուսից մէկը՝ նա որ ձե-
21 ռը ինձ հետ սկուտակի մէջ կոխեց։ Բայց Որ-
դին մարդոյ կ'գնայ՝ ինչպէս նորա համար գըր-
ուած է, սակայն վայ այն մարդուն, որի ձեռովն
Որդին մարդոյ կ'մատնուի, լաւ էր նորան, ծըն-
ուած չլինէր եթէ այն մարդը։
22 Եւ նորանք ուտելիս, Յիսուսը հաց առաւ՝
օրհնեց՝ կտրեց եւ տուաւ նորանց եւ ասաց․ Ա-
23 ռէք կերէք․ այս է իմ մարմինը։ Եւ բաժակն
առաւ՝ գոհացաւ, տուաւ նորանց, եւ ամենքը
24 խմեցին նորանից։ Եւ ասաց նորանց․ Այս է իմ
արիւնը նոր ուխտի, որ շատերի համար թափ-
25 վում է։ Ճշմարիտ ասում եմ ձեզ․ թէ Այլ եւս
որթի բերքիցը չեմ խմել մինչեւ այն օրն, երբոր
նորան նոր խմեմ Աստուծոյ արքայութեան մէջ։

26 Եւ օրհներգելուց յետոյ դուրս ելան Ձիթեն-
27 եաց լեառը։ Եւ Յիսուսը նորանց ասաց. թէ Ա-
մենքդ այս գիշեր կ'գայթակղիք ինձանից. վասն
զի գրուած է՝ թէ Հովիւը կ'զարկեմ՝ եւ ոչխար-
28 ները կ'ցրուին։ Բայց իմ յարութիւն առնելուց
29 յետոյ ձեզանից առաջ կ'գնամ Գալիլեա։ Պետ-
րոսն էլ ասաց նորան. Թէեւ ամենքն էլ գայ-
30 թակղին, բայց ես ոչ։ Յիսուսն էլ նորան ասաց.
Ճշմարիտ ասում եմ քեզ, թէ այս օր, հէնց այս
գիշերումը հաւը երկու անգամ չխօսած, երեք
31 անգամ կ'ուրանաս ինձ։ Բայց նա շատ աւելի
եւս ասում էր. Եթէ քեզ հետ մեռնել էլ պէտք
լինի ինձ, քեզ չեմ ուրանալ. այնպէս էլ ամենքն
էին ասում։
32 Եւ եկան մի գիւղ՝ որի անունը Գեթսեմանի
էր. եւ իր աշակերտներին ասաց. այստեղ նըս-
33 տեցէք, մինչեւ ես աղօթք անեմ։ Եւ Պետրոսին
եւ Յակոբին եւ Յօհաննէսին իր հետ առաւ, եւ
34 սկսեց զարհուրիլ եւ տխրիլ։ Եւ ասաց նորանց.
Իմ անձը մահու չափ խիստ տրտմած է. այստեղ
35 մնացէք եւ արթուն կացէք։ Եւ մի քիչ առաջ
գնաց, գետնի վերայ ընկաւ, եւ աղօթք էր ան-
ում, որ եթէ կարելի է, այն ժամն իրանից ան-
36 ցընէ։ Եւ ասում էր. Աբբա, Հայր, ամեն բան
կարելի է քեզ. այս բաժակն ինձանից անցուր.
բայց ոչ թէ ինչ որ ես եմ կամենում, այլ ինչ
37 որ դու։ Եւ գալիս է գտնում նորանց քնած եւ
ասում Պետրոսին. Սիմօն, քնո՞ւմ ես, չկարացի՞ր
38 մէկ ժամ արթուն կենալ։ Արթուն կացէք եւ
աղօթք արէք, որ փորձութեան մէջ չմտնէք.
39 հոգին յօժար է, բայց մարմինը տկար։ Եւ դարձ-
եալ գնաց աղօթք արաւ, նոյն խօսքն ասելով։

40 Եւ եա դարձաւ՝ նորանց դարձեալ քնած գտաւ,
վասն զի նորանց աչքերը ծանրացել էին, եւ չէ-
41 ին գիտում՝ թէ ինչ պատասխանեն նորան։ Եւ
երրորդ անգամն է գալիս եւ ասում նորանց.
Այսուհետեւ քնեցէք եւ հանգիստ առէք. բա-
ւական է. ժամն եկաւ. ահա Որդին մարդոյ
42 մատնվում է մեղաւորաց ձեռքը։ Վեր կացէք,
գնանք, ահա մօտեցաւ ինձ մատնողը։
43 Եւ շուտով՝ դեռ նա խօսելիս՝ եկաւ Յուդան՝
այն տասներկուսից մէկը, եւ նորա հետ շատ
ամբոխ սրերով եւ բրերով՝ քահանայապետնե-
44 րիցն եւ դպիրներիցն եւ ծերերից։ Նորան մատ-
նողն էլ նորանց նշան էր տուել՝ եւ ասել. Թէ
Որին որ ես համբուրեմ, նա է, նորան բռնեցէք
45 եւ զգուշութեամբ տարէք։ Եւ եկաւ՝ շուտով
մօտեցաւ նորան եւ ասաց. Ռա՛բբի, Ռա՛բբի,
46 եւ համբուրեց նորան։ Եւ նորանք իրանց ձեռ-
47 քը գցեցին նորա վերայ եւ բռնեցին նորան։ Եւ
նորա մօտ կանգնածներից մէկը սուրը քաշեց՝
քահանայապետի ծառային զարկեց, եւ ականջը
48 կտրեց։ Եւ Յիսուսը պատասխանեց եւ ասաց
նորանց. Ինչպէս մի աւազակի՞ վերայ սրերով եւ
49 բրերով դուրս եկաք ինձ բռնելու։ Ամեն օր
ձեզ մօտ էի տաճարումն սովորեցնելով. եւ ինձ
չբռնեցիք. բայց որպէս զի գրքերը կատարուին։
50 Եւ ամենքը նորան թողին փախան։ (51) Եւ մէկ
երիտասարդ նորա ետեւից գնում էր, որ կտաւ
էր գցել մերկ մարմնոյ վերայ, եւ երիտասարդնե-
52 ները բռնում էին նորան։ Իսկ նա կտաւը թո-
ղեց՝ եւ մերկ փախաւ նորանցից։
53 Եւ Յիսուսին տարան քահանայապետի մօտ,
եւ բոլոր քահանայապետները եւ դպիրները եւ

54 ծերերը նորա մօտ էին գալիս։ Եւ Պետրոսն էլ
հեռուանից գնաց նորա ետեւից մինչեւ քահանա-
յապետի սրահի ներսը, եւ սպասաւորների հետ
55 նստել էր եւ լուսոյ մօտ տաքանում էր։ Բայց
քահանայապետներն եւ բոլոր ատեանը Յիսուսի
դէմ վկայութիւն էին որոնում, որ նորան սպա-
56 նեն. բայց չէին գտնում։ Վասն զի շատերը սուտ
վկայութիւն էին տալիս նորան դէմ, բայց վկա-
57 յութիւններն իրար յարմար չէին։ Եւ ոմանք վեր
կացան եւ նորան դէմ սուտ վկայում էին եւ
58 ասում. Թէ մենք լսեցինք դորանից, որ ասում
էր՝ թէ Ես այդ ձեռագործ տաճարը կ՚քանդեմ
եւ երեք օրում ուրիշը կ՚շինեմ անձեռագործ։
59 Սակայն այնպէս էլ նորանց վկայութիւնն իրար
60 յարմար չէր։ Եւ քահանայապետը վերկացած
մէջտեղը՝ Յիսուսին հարցրեց եւ ասաց. Ոչինչ
չե՞ս պատասխանում. ի՞նչ են վկայում դորանք
61 քեզ դէմ։ Իսկ նա լուռ էր կենում՝ եւ ոչինչ
պատասխան չէր տալիս. քահանայապետը դարձ-
եալ նորան հարցնում էր եւ ասում. Դո՞ւ ես
62 Քրիստոսը՝ Որդի օրհնելոյն։ Յիսուսն էլ պատաս-
խանեց եւ ասաց. Ես եմ. եւ կ՚տեսնէք Որդին
մարդոյ զօրութեան աջ կողմը նստած, եւ եր-
63 կնքի ամպերումն եկած։ Եւ քահանայապետն իր
հանդերձները պատռելով ասաց. Էլ ի՞նչ պէտք
64 է մեզ վկաներ։ Լսեցիք հայհոյանքը. ի՞նչպէս
է երեւում ձեզ. նորանք էլ ամենքը դատապար-
տեցին նորան, թէ Մահապարտ է։
65 Եւ ոմանք սկսեցին նորա երեսին թքել. եւ ե-
րեսը ծածկել. եւ բռունցքով ծեծել նորան եւ
նորան ասել. Մարգարէացիր. եւ սպասաւորնե-
րը նորան ապտակ էին տալիս։

66 Եւ երբոր Պետրոսը վարը սրահումն էր, քա-
67 հանայապետի աղախիններից մէկը գալիս է, Եւ
տեսնում Պետրոսին, որ տաքանում է, մտիկ է
տալիս նորան՝ եւ ասում. Դու էլ էիր Յիսուս
68 Նազորեցոյն հետ։ Բայց նա ուրացաւ եւ ասաց.
Չեմ ճանաչում, եւ չեմ էլ հասկանում, թէ դու
ինչ ես ասում. եւ դուրս գնաց նախասրահը եւ
69 հաւը խօսեց։ Եւ աղախինը նորան տեսաւ և
դարձեալ սկսեց ասել այնտեղ կանգնածներին.
70 թէ Սա նորանցից է։ Բայց նա դարձեալ ուրա-
ցաւ. եւ մի քիչ յետոյ այնտեղ կանգնածները
դարձեալ ասացին Պետրոսին. Ճշմարի՛տ դու էլ
նորանցից ես, վասն զի Գալիլեացի ես եւ քո
71 գրոյցն էլ նման է։ Բայց նա սկսեց անիծել եւ
երդում անել թէ Չեմ ճանաչում այն մարդին, որ
72 դուք ասում էք։ Եւ հաւն երկրորդ անգամ խօ-
սեց։ Եւ Պետրոսը յիշեց այն խօսքը, որ Յիսու-
սը նորան ասաց. թէ Հաւն դեռ երկու անգամ
չխօսած՝ դու երեք անգամ կ՚ուրանաս ինձ. եւ
սկսեց լալ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ շուտով առաւօտանց քահանայապետները
ծերերի եւ դպիրների հետ՝ եւ բոլոր ատեանը
խորհուրդ արին, Յիսուսին կապեցին՝ եւ տարան
2 մատնեցին Պիղատոսին։ Եւ Պիղատոսը նորան
հարցրեց. Դո՞ւ ես Հրէից Թագաւորը. նա էլ
պատասխանեց եւ ասաց նորան. Դու ես աս-
3 ում։ Եւ քահանայապետները շատ ամբաստա-
4 նութիւններ էին անում նորանից. Եւ Պիղատո-
սը դարձեալ հարցրեց նորան եւ ասաց. Ոչինչ

պատասխան չե՞ս տալիս, տես որքան են վկա-
5 յում քեզ դէմ։ Բայց Յիսուս դարձեալ ոչինչ
չպատասխանեց, մինչեւ որ Պիղատոսը զարմա-
ցաւ։
6 Բայց ամէն տօնի ժամանակին մէկ բանտարկ-
եալ էր արձակում նորանց համար, որին որ խնդ-
7 րում էին։ Եւ Բարաբբաս ասուած մէկը կար
այն խռովարարների հետ կապուած, որ իրանց
խռովութիւնումը մարդասպանութիւն էին ա-
8 րել։ Եւ ամբոխն սկսեց բարձր ձայնով աղաղա-
կել եւ խնդրել, որ անէ ինչպէս միշտ անում էր
9 նորանց։ Պիղատոսն էլ պատասխանեց նորանց
եւ ասաց. Կամենո՞ւմ էք՝ Հրէից թագաւորը կ'ար-
10 ձակեմ ձեզ համար։ Վասն զի գիտէր որ նա-
խանձով էին մատնել նորան քահանայապետները։
11 Բայց քահանայապետները ամբոխին գրգռեցին,
որ աւելի Բարաբբային արձակէ նորանց համար։
12 Եւ Պիղատոսը դարձեալ պատասխանեց նորանց
եւ ասաց. Արդ ի՞նչ էք ուզում որ անեմ նո-
13 րան որին ասում էք Հրէից թագաւոր։ Եւ նո-
րանք դարձեալ աղաղակեցին. Խաչիր նորան։
14 Պիղատոսն էլ նորանց ասաց. Արդ ի՞նչ չար բան
է արել. եւ նորանք առաւել եւս աղաղակում
15 էին, Խաչիր զորան։ Բայց Պիղատոսը՝ որովհետեւ
կամենում էր ամբոխի կամքը հաճել, արձակեց
նորանց համար Բարաբբային. եւ Յիսուսին ծե-
ծեց նորանց յանձնեց, որ խաչուի։
16 Եւ զինուորները նորան տարան սրահի ներսը
այսինքն պալատը. եւ բոլոր գունդը մէկտեղ
17 կանչեցին։ Եւ նորան ծիրանի հագցրին եւ փշ-
18 ներից շինած պսակ դրին նորա գլխին. Եւ սկսե-
ցին նորան ողջոյն տալ. Բարեւ քեզ, Հրէից թա-

19 գաւոր։ Եւ նորա գլուխն եղէգով ծեծում էին,
եւ նորա երեսին թքում էին՝ եւ ծունկ դնելով
20 երկրպագում էին նորան։ Եւ երբոր ծաղր արին
նորան, այն ծիրանին նորանից հանեցին, եւ իր
հանդերձները հագցրին, եւ դուրս տարան որ
խաչեն նորան։
21 Եւ պահակ բռնեցին Սիմօն Կիւրենացւոյն, Ա-
ղէքսանդրի եւ Ռուփոսի հօրն՝ որ արտից գա-
լով այնտեղից անցնում էր, որ նորա խաչը վեր
22 առնէ։ Եւ տարան նորան մի Գողգոթա ասուած
23 տեղ, որ կ'թարգմանուի գանկի տեղ։ Եւ նորան
զմուռած գինի էին տալիս խմելու, բայց նա չա-
24 ռաւ։ Եւ նորան խաչեցին եւ բաժանեցին նորա
հանդերձները վիճակ գցելով նորանց վերայ՝ թէ
25 ով ինչ պիտի առնէ։ Եւ ժամը երրորդն էր՝ եւ
26 նորան խաչեցին։ Եւ նորա յանցանքի գիրը գըր-
27 ուած էր՝ Հրէից թագաւորը։ Եւ նորա հետ եր-
կու աւազակ խաչեցին, մէկը նորա աջ կողմին
28 եւ մէկը ձախ կողմին. Եւ կատարուեցաւ այն
գիրն, որ ասում է. Անօրէնների հետ համար-
29 ուեցաւ։ Եւ այնտեղով անցնողները նորան հայ-
հոյում էին, իրանց գլուխները շարժելով եւ ա-
սելով. Վա՜հ, ով տաճարը քանդող եւ երեք օ-
30 րումը շինող, Ազատեցրու քո անձը եւ իջիր խա-
31 չիցդ։ Նոյնպէս էլ քահանայապետները դպիրնե-
րի հետ միասին ծաղր էին անում եւ ասում.
Ուրիշներին ազատեցրեց՝ իր անձը չէ կարողանում
32 ազատել։ Քրիստոսը՝ Իսրայէլի թագաւորը թող
հիմա խաչիցը իջնէ, որ տեսնենք եւ հաւատանք.
եւ նորա հետ խաչուածներն էլ էին նորան նա-
խատինք տալիս։
33 Եւ երբոր ժամը վեցը եկաւ, խաւար եղաւ

34 բոլոր երկրի վերայ մինչեւ ինն ժամը։ Եւ ին-
ներորդ ժամին Յիսուսը մեծ ձայնով աղաղակեց
եւ ասաց. Էլի Էլի լամա սաբաքթանի. որ կը
թարգմանուի՝ իմ Աստուած, իմ Աստուած, ին-
35 չո՞ւ թողիր ինձ։ Եւ այնտեղ կանգնածներից ո-
մանք, երբոր լսեցին, ասում էին. Ահա Եղիային
36 է կանչում։ Եւ մէկը վազեց մի սպունգ քացա-
խով լցրեց, եւ եղէգի վերայ դրաւ, տուաւ նո-
րան՝ որ խմէ, եւ ասաց. Թողէք տեսնենք, Ե-
ղիան կ'գա՞յ որ նորան վայր բերէ։
37 Եւ Յիսուսը մեծ ձայն արձակեց՝ եւ հոգին
38 տուաւ։ Եւ տաճարի վարագոյրն երկու կտոր պա-
39 տառուեցաւ՝ վերեւից մինչեւ ցածը։ Եւ հարիւ-
րապետն, որ այնտեղ նորա դիմացը կանգնած
էր, երբոր տեսաւ թէ Յիսուսը այսպէս աղաղակեց
եւ հոգի տուաւ, ասաց. Ճշմարիտ, այս մարդն
40 Աստուծոյ Որդի էր։ Կանայք էլ կային, որ հե-
ռուանց մտիկ էին տալիս, որոնց միջումն էր
Մարիամ Մագդաղենացին, եւ Մարիամ փոքր
41 Յակոբի եւ Յօսէի մայրը, եւ Սաղոմէն, Որոնք
եւ, երբոր նա Գալիլեա էր, նորա ետեւից գը-
նում եւ նորան ծառայում էին. եւ ուրիշ շատ
կանայք էլ, որ նորա հետ Երուսաղէմ էին եկել։
42 Եւ երբոր արդէն իրիկուն եղաւ, որովհետեւ
43 ուրբաթ էր՝ այսինքն շաբաթից առջի օրը. Ե-
կաւ Արիմաթացի Յօսէփը՝ մի երեւելի խորհըր-
դական, որ ինքն էլ Աստուծոյ արքայութեանն
սպասում էր. համարձակելով մտաւ Պիղատոսի
44 մօտ, եւ խնդրեց Յիսուսի մարմինը։ Եւ Պիղա-
տոսը զարմացաւ, թէ արդէն մեռել է. եւ
հարիւրապետին իր մօտ կանչեց, նորան հարց-
45 րեց եւ ասաց. թէ Շատո՞նց է որ մեռաւ։ Եւ

հարիւրապետից տեղեկանալով, մարմինը Յօ-
46 սէփին շնորհեց։ Եւ Յօսէփը կտաւ առաւ եւ նո-
րան իջեցրեց կտաւով պատեց, եւ նորան մի
գերեզմանի մէջ դրաւ, որ փորուած էր քարից.
եւ մի քար թաւալեց գերեզմանի դրան վերայ։
47 Եւ Մարիամ Մագդաղենացին եւ Յօսէի մայր Մա-
րիամն էլ տեսան այնտեղը, ուր որ դրուեցաւ։

Գլ. ԺԶ

1 Եւ երբոր շաբաթն անցաւ, Մարիամ Մագդա-
ղենացին եւ Յակոբի մայրը Մարիամը եւ Սաղո-
2 մէն խունկեր առին, որ գան նորան օծեն։ Եւ
մէկշաբթի առաւօտանց շատ կանուխ արեգակը
3 ծագելիս՝ գալիս են գերեզմանը։ Եւ իրար աս-
ում էին. Ո՞վ կ'թաւալեցնէ քարը մեզ համար
4 գերեզմանի դռնիցը։ Եւ նայեցան տեսան, որ
քարը գերեզմանից հեռու էր թաւալած, վասն
5 զի շատ մեծ էր։ Եւ երբոր գերեզմանը մտան,
մի երիտասարդ տեսան՝ աջ կողմը նստած՝ սպի-
տակ պատմուճան հագած. եւ շատ զարհուրե-
6 ցան։ Եւ նա ասաց նորանց. Մի զարհուրիք,
դուք Յիսուսը Նազօրեցի խաչուածն էք որոն-
ում. յարութիւն առաւ, այստեղ չէ, ահա այն
7 տեղը՝ ուր որ նորան դրին։ Բայց գնացէք, նորա
աշակերտներին եւ Պետրոսին ասացէք, թէ նա
ձեզանից առաջ կ'գնայ Գալիլեա. այնտեղ կ'տես-
8 նէք նորան ինչպէս նա ձեզ ասաց։ Եւ շուտով
դուրս եկան փախան գերեզմանիցը, եւ նորանք
դողով եւ սարսափով բռնուած էին, եւ ոչ ոքի
ոչինչ չասացին. վասն զի վախենում էին։
9 Եւ Յիսուսը երբոր յարութիւն առաւ՝ մէկշաբ-

թի առաւօտանց առաջ երեւեցաւ Մարիամ Մագ-
10 դաղենացոյն, որից եօթը դեւ էր հանել։ Եւ նա
գնաց պատմեց նորա հետ լինողներին, որ սուգ
11 էին անում եւ լաց լինում։ Նորանք էլ լսելով,
թէ կենդանի է, եւ երեւեցաւ նորան, չհաւա-
տացին ։
12 Սորանից յետոյ ուրիշ կերպարանքով երեւե-
ցաւ նորանցից երկուսին, որ ման գալով յանդն
13 էին գնում։ Նորանք էլ գնացին այն միւսներին
պատմեցին, բայց նորանց էլ չհաւատացին ։
14 Վերջապէս երբոր այն տասնումէկը սեղան էին
նստած, նորանց երեւեցաւ եւ նորանց անհաւա-
տութիւնը եւ քարասրտութիւնը յանդիմանեց,
որ չհաւատացին նորանց, որ նորան յարութիւն
առած տեսել էին ։
15 Եւ նորանց ասաց. Գնացէք բոլոր աշխարհք,
16 աւետարանը քարոզեցէք ամեն արարածի։ Ով որ
հաւատաց եւ մկրտուեցաւ կ'փրկուի. եւ ով որ
17 չհաւատաց կ'դատապարտուի։ Նորանց էլ, որ
հաւատացին, այս նշանները կ'հետեւեն. իմ ա-
նունովը դեւեր կ'հանեն, նոր լեզուներ կ'խօսեն ։
18 Օձեր վեր կառնեն, եւ եթէ մի մահացեղ խմեն,
նորանց վնաս չի տալ. հիւանդների վերայ ձեռք
կ'դնեն, եւ կ'առողջանան ։
19 Արդ Տէրը նորանց հետ խօսելուց յետոյ, եր-
կինքն համբարձաւ, Աստուծոյ աջ կողմը նստեց ։
20 Նորանք էլ դուրս գնացին, ամեն տեղ քարոզ-
ում էին, եւ Տէրը գործակցում էր նորանց եւ
խօսքը հաստատում էր այն նշաններովը, որ հե-
տեւում էին ։ Ամէն ։

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Որովհետեւ շատերը ձեռնարկեցին մեր մէջ հաս-
տատուած բաների պատմութիւնը վերստին կար-
2 գել. Ինչպէս մեզ աւանդեցին սկզբիցն ակնա-
3 տես եւ խօսքին սպասաւոր լինողները. Ես էլ,
որ սկզբիցն բոլոր բաներին ճշմարտութիւնով հե-
տեւեցի, կամեցայ կարգաւ գրել քեզ, ո՛վ պատ-
4 ուական Թէոփիլէ. Որ իմանաս այն բաների
ստուգութիւնը, որ սովորեցիր ։
5 Հրէաստանի թագաւոր՝ Հերովդէսի օրերումը մի
քահանայ եղաւ անունը Զաքարիա, Աբիայի դասա-
կարգութիւնիցը, եւ նորա կինն Ահարօնի աղջիկ-
6 ներիցը, եւ նորա անունը Եղիսաբեթ ։ Երկուսն
էլ Աստուծոյ առջեւն արդար էին, եւ Տիրոջ բոլոր
պատուիրանքներումն եւ իրաւունքներումն գըն-
7 ում էին անարատ ։ Եւ նորանք զաւակ չունէին,
քանզի Եղիսաբեթը ամուլ էր. եւ երկուսն էլ ի-
րանց օրերը անց էին կացրել ։
8 Եւ եղաւ, երբոր նա քահանայութիւն էր ան-
ում իրան հասած դասակարգութեան օրերումը Աս-
9 տուծոյ առջեւն, Քահանայութեան սովորութեան
պէս, իրան ընկաւ որ Տիրոջ տաճարը մանէ խըն-
10 կարկութիւն անելու ։ Եւ ժողովրդի բոլոր բազ-

մութիւնը դուրսն աղօթք էին անում խնկար-
11 կութեան ժամանակին։ Եւ Տիրոջ հրեշտակն ե-
րեւեցաւ նորան՝ կանգնած խնկի սեղանի աջ կող-
12 մին։ Եւ Զաքարիան տեսնելով շփոթուեցաւ, եւ
13 վախ ընկաւ նորա վերայ։ Եւ հրեշտակն ասաց
նորան. Մի վախենար, Զաքարիա, վասն զի քո
աղօթքը լսուեցաւ, եւ քո կինն Եղիսաբեթ մի
որդի կ՚ծնի քեզ, եւ նորա անունը Յօհաննէս կը
14 կանչես։ Եւ քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն
կ՚լինի, եւ շատերը նորա ծնունդովը կ՚ուրախա-
15 նան։ Բանզի նա մեծ կ՚լինի Տիրոջ առջեւ. եւ
գինի եւ օղի չի խմել, եւ դեռ իր մօր փորիցը
16 Սուրբ Հոգով կ՚լցուի։ Եւ Իսրայէլի որդիքներից
շատերին կ՚դարձնէ դէպի իրանց Տէր Աստուա-
17 ծը։ Եւ ինքն կ՚գայ նորա առջեւից Եղիայի Հո-
գովն եւ զօրութիւնովն, որ հարանց սրտերը
դէպի որդիքը դարձնէ. եւ անհնազանդները ար-
դարների իմաստութեան մէջ, որ Տիրոջ համար
18 բարեկարգ ժողովուրդ պատրաստէ։ Եւ Զաքա-
րիան ասաց հրեշտակին. Ինչո՞վ ճանաչեմ այդ
բանը. վասն զի ես ծեր եմ, եւ իմ կինն իր օ-
19 րերը անց է կացրել։ Եւ հրեշտակը պատասխա-
նեց եւ ասաց նորան. Ես Գաբրիէլն եմ, որ Ա-
ստուծոյ առջեւ կանգնում եմ, եւ ուղարկուեցայ
քեզ հետ խօսելու եւ այս բաները քեզ աւետիք
20 տալու։ Եւ ահա համր կ՚լինիս, եւ չես կարե-
նալ խօսել, մինչեւ այն օրն՝ որ այս բաները կը
լինի. վասն զի չհաւատացիր իմ այս խօսքերին՝
21 որ իրանց ժամանակին կ՚կատարուին։ Եւ ժողո-
վուրդը սպասում էր Զաքարիային, եւ զարմա-
նում էին նորա տաճարի մէջումն ուշանալու
22 համար։ Եւ երբոր դուրս եկաւ, չէր կարենում

խօսել նորանց հետ. եւ իմացան՝ որ տաճարի
մէջ տեսիլք է տեսել. եւ նա նշաններով էր խօ-
23 սում նորանց հետ, եւ մնում պապանձուած։ Եւ
եղաւ, երբոր նորա պաշտօնի օրերը կատարուե-
24 ցան, գնաց իր տունը։ Եւ այն օրերից յետոյ
նորա Եղիսաբեթ կինը յղացաւ, եւ հինգ ամիս
25 իր անձը ծածուկ պահում էր եւ ասում. Թէ
այսպէս արաւ ինձ Տէրն այս օրերումն, որ ինձ
վերայ նայեց՝ որ իմ նախատինքը մարդկանց մի-
ջից վեր առնէ։
26 Եւ վեցերորդ ամսումը Գաբրիէլ հրեշտակն Աստ-
ուածանից ուղարկուեցաւ Գալիլեայի մի քաղաք,
27 որի անունը Նազարէթ էր, Մի կոյսի մօտ, որ
նշանուած էր մի մարդոյ, որի անունը Յօսէփ
էր՝ Դաւթի տանիցը. եւ այն կոյսի անունը Մա-
28 րիամ էր։ Եւ հրեշտակը նորա մօտ գալով ասաց.
Ողջոյն քեզ, ով շնորհընկալ. Տէրը քեզ հետ.
29 օրհնեալ ես դու կանանց մէջ։ Եւ նա նորան
տեսնելով շփոթուեցաւ նորա խօսքի համար, թէ
30 ինչպիսի բա՞ն պիտի լինի այս ողջոյնը։ Եւ հրեշ-
տակը ասաց նորան. Մի վախենար, Մարիամ,
31 քանզի Աստուածանից շնորհք գտար։ Եւ ահա
կ՚յղանաս եւ որդի կ՚ծնիս. եւ անոր անունը Յի-
32 սուս կ՚կանչես։ Նա մեծ կ՚լինի, եւ Որդի Բարձ-
րելոյն կ՚կոչուի. եւ Տէր Աստուած նորա Դաւ-
թի հօր աթոռը կ՚տայ նորան. եւ կ՚թագաւորէ
33 Յակոբի տան վերայ յաւիտեան. Եւ նորա թա-
34 գաւորութեանը վերջ չի լինիլ։ Եւ Մարիամը ա-
սաց հրեշտակին. Սա ի՞նչպէս կ՚լինի. ըստ ո-
35 րում ես այր չեմ գիտում։ Հրեշտակը պատաս-
խանեց եւ ասաց նորան. Սուրբ Հոգին կ՚գայ
քեզ վերայ, եւ Բարձրելոյն զօրութիւնը քեզ վե-

րայ կ՚հովանաւորէ, վասն որոյ եւ այն ծնուած
36 սուրբն էլ Աստուծոյ Որդի կ՚կոչուի։ Եւ ահա
քո ազգականն՝ Եղիսաբեթը, նա էլ մի որդիով
յղի է իր ծերութիւնումը․ եւ սա այն ամուլ
37 կոչուածի վեցերորդ ամիսն է։ Վասն զի Աս-
38 տուծոյ առջեւ ոչ մի բան անկարելի չէ։ Մա-
րիամն էլ ասաց․ Ահա Տիրոջ աղախինն եմ․ թող
քո խօսքի պէս լինի ինձ։ Եւ հրեշտակը գնաց
նորանից։
39 Մարիամն այն օրերումը վերկացաւ՝ շտապե-
40 լով լեռնակողմը գնաց՝ Յուդայի քաղաքը․ Եւ
Զաքարիայի տունը մտաւ, եւ Եղիսաբեթին բա-
41 րեւեց։ Եւ եղաւ, երբոր Եղիսաբեթը Մարիամի
բարեւը լսեց, երեխան նորա որովայնումը խա-
ղաց․ եւ Եղիսաբեթը Սուրբ Հոգով լցուեցաւ։
42 Եւ մեծ ձայնով աղաղակեց եւ ասաց․ Օրհնեալ
ես դու կանանց մէջ․ եւ օրհնեալ է քո որովայ-
43 նի պտուղը․ Եւ սա ի՞նչ տեղից է ինձ, որ իմ
44 Տիրոջ մայրն ինձ մօտ եկաւ։ Վասն զի ահա,
երբոր քո բարեւի ձայնն իմ ականջներին հա-
սաւ, երեխան որովայնումս ուրախանալով խա-
45 ղաց։ Եւ երանի նորան, որ հաւատաց, թէ այն
բաները կ՚կատարուին, որ Տէրիցն իրան ասուած
46 են։ Եւ Մարիամը ասաց․ Թող իմ անձը փա-
47 ռաւորէ Տիրոջը։ Եւ իմ հոգին ուրախացաւ իմ
48 Փրկիչ Աստուծովը։ Վասն զի իր աղախնոյ խո-
նարհութեանը մտիկ տուաւ, քանզի ահա այսու-
49 հետեւ բոլոր ազգերը կ՚երանեն ինձ։ Վասն զի
Հզօրը մեծամեծ բաներ արաւ ինձ, եւ սուրբ է
50 նորա անունը։ Եւ նորա ողորմութիւնը ազգից
51 ազգ նորանից վախեցողներին վերայ է։ Զօրու-
թիւն արաւ իր բազուկովը, ցրուեց ամբարտա-

52 ւաններին իրանց սրտի մտածմունքովը։ Զօրա-
ւորներին աթոռներից իջեցրեց, եւ խոնարհնե-
53 րին բարձրացրեց։ Սովածներին բարիքներով լըց-
54 րեց, եւ հարուստներին դատարկ արձակեց։ Իր
Իսրայէլ ծառային պաշտպանեց եւ ողորմութիւնը
55 յիշելով․ Ինչպէս մեր հարանց հետ խօսեց, Աբ-
րահամին եւ նորա զաւակին՝ մինչեւ յաւիտեան։
56 Եւ Մարիամն մնաց նորա մօտ երեք ամսի
չափ․ եւ յետոյ դարձաւ իր տունը։
57 Եւ Եղիսաբեթի ծնելու ժամանակն լրացաւ,
58 եւ որդի ծնաւ։ Եւ նորա դրացիները եւ ազգա-
կանները լսեցին, թէ Տէրն իր ողորմութիւնը
մեծ արաւ նորա վերայ․ եւ ուրախանում էին
նորա հետ։
59 Եւ եղաւ՝ ութերորդ օրումն եկան երեխային
թլփատելու, եւ նորան իր հօր անունովը Զա-
60 քարիա էին կոչում։ Եւ նորա մայրը պատաս-
խանեց եւ ասաց․ Ոչ, այլ Յօհաննէս կոչուի։
61 Եւ ասացին նորան․ թէ Ոչ ոք չկայ քո ազգու-
62 մը, որ այդ անունովը կոչուի։ Եւ նշաններով
հարցնում էին նորա հօրը, թէ ի՞նչ է կամենում
63 որ նա կոչուի։ Եւ նա տախտակ խնդրեց, գրեց
եւ ասաց․ Դորա անունը Յօհաննէս է․ եւ ա-
64 մենքը զարմացան։ Եւ իսկոյն նորա բերանը եւ
լեզուն բացուեցաւ․ եւ խօսում էր՝ Աստուծոյն
65 օրհնելով։ Եւ ահ ընկաւ ամենքի վերայ, որ նո-
րանց չորս կողմովը բնակում էին․ եւ Հրէաս-
տանի բոլոր լեռնակողմումը այս ամեն բաները
66 պատմվում էին։ Եւ բոլոր լսողներն իրանց սըր-
տերումն էին դնում եւ ասում․ Այս երեխան ի՞նչ
պիտի լինի։ Եւ Տիրոջ ձեռը նորա հետ էր։
67 Եւ նորա հայրը՝ Զաքարիան Սուրբ Հոգով լըց-

68 ուեցաւ, մարգարէացաւ եւ ասաց. Օրհնեալ է
Իսրայէլի Տէր Աստուածը, որ այցելութեան ե-
կաւ, եւ փրկութիւն արաւ իր ժողովրդի հա-
69 մար։ Եւ փրկութեան եղջիւր վերկացրեց մեզ
70 համար իր Դաւիթ ծառայի տանը։ Ինչպէս որ
խօսեց ի յաւիտենից իր սուրբ մարգարէների բե-
71 րանովը, Փրկութիւն մեր թշնամիներիցը. եւ
72 բոլոր մեզ ատողների ձեռքիցը. Որ մեր հարանց
վերայ ողորմութիւն անէ, եւ իր սուրբ ուխտը
73 յիշէ. Այն երդումը, որ մեր հայր՝ Աբրահամին
74 երդուաւ, որ մեզ տայ, Որ մեր թշնամիների
ձեռքիցն ազատուած՝ աներկիւղ պաշտենք իրան
75 Սրբութիւնով եւ արդարութիւնով նորա առջեւ
76 մեր կենաց բոլոր օրերումը։ Եւ դու, երեխայ,
Բարձրեալոյն մարգարէ կ'կոչուիս. քանզի կ'գնաս
Տիրոջ երեսի առջեւից նորա ճանապարհները
77 պատրաստելու, Որ նորա ժողովրդին տաս փըր-
կութեան գիտութիւնը իրանց մեղաց թողու-
78 թեան մէջ, Մեր Աստուծոյ գթած ողորմութեան
համար, որով ծագող արեգակը վերեւից այցե-
79 լեց մեզ. Որ երեւի խաւարումն եւ մահի ըստ-
ուերումը նստողներին. որ մեր ոտներն դէպի
խաղաղութեան ճանապարհն ուղղէ։
80 Եւ երեխան աճում էր եւ զօրանում էր հո-
գով. եւ անապատներումն էր, մինչեւ այն օրն
որ նա երեւեցաւ Իսրայէլին։

Գլ. Բ

1 Եւ այն օրերումն եղաւ, որ հրաման դուրս ե-
կաւ Օգոստոս կայսերից, որ բոլոր աշխարհ գըր-
2 ուի։ Սա առաջին աշխարհագիրն եղաւ Կիւրենի

3 Սիւրիայի կուսակալութեան ժամանակումը։ Եւ
ամենքը գնում էին գրուելու՝ ամեն մէկն իր քա-
4 ղաքը։ Յօսէփն էլ Գալիլեայիցը՝ Նազարէթ քա-
ղաքիցը գնաց Հրէաստան Դաւթի քաղաքն, որ
Բէթղեհէմ է կոչվում. վասն զի նա Դաւթի տա-
5 նիցն եւ ազգիցն էր. Որ գրուի իր նշանուած
6 կնոջ Մարիամի հետ, որ յղի էր։ Եւ եղաւ երբ-
որ նորանք այնտեղ էին. նորա ծնելու օրերը լը-
7 րացան։ Եւ իր անդրանիկ որդին ծնաւ, եւ պա-
տեց խանձարուրներով եւ մսուրի մէջ դրաւ. ո-
րովհետեւ այն իջեւանումը տեղ չկար նորանց
համար։
8 Եւ այն տեղումը հովիւներ կային դաշտումը
կացող, որ գիշերն իրանց հօտերը պահում էին։
9 Եւ ահա Տիրոջ հրեշտակը կանգնեց նորանց առ-
ջեւ, եւ Տիրոջ փառքը նորանց չուրջը ծագեց.
10 եւ մեծ վախով վախեցան։ Եւ հրեշտակն ասաց
նորանց. Մի վախենաք, վասն զի ահա մեծ ու-
րախութիւն եմ աւետում ձեզ, որ բոլոր ժողո-
11 վըրդին պիտի լինի. Թէ այսօր ձեզ Փրկիչ ծըն-
ուաւ Դաւթի քաղաքումը. որ է Քրիստոս Տէ-
12 րը։ Եւ այս լինի ձեզ նշան. մի երեխայ կ'գտնէք
խանձարուրներով պատած եւ մսուրի մէջ դրած։
13 Եւ յանկարծակի այն հրեշտակի հետ եղաւ երկ-
նաւոր զօրաց մի բազմութիւնն, որ Աստուծոյն
14 օրհնում էին եւ ասում. Փառք Աստուծոյ 'ի
բարձունս, եւ երկրի վերայ՝ խաղաղութիւն, եւ
15 մարդկանց մէջ՝ հաճութիւն։ Եւ եղաւ երբոր
հրեշտակները նորանցից վերացան երկինքը, այն
հովիւ մարդիկն իրար ասացին. Եկէք գնանք
մինչեւ Բէթղեհէմ, եւ տեսնենք այս եղած բա-
16 նը, որ Տէրը ցոյց տուաւ մեզ։ Եւ շտապելով

եկան և գտան Մարիամին և Յովսէփին, և ե-
17 րեխային՝ մսուրի մէջ դրած։ Եւ երբոր տեսան
իմացրին այն բանը, որ այս երեխայի համար աս-
18 ուեցաւ նորանց։ Եւ բոլոր լսողները զարմացան
այն բաների համար, որ հովիւները նորանց հետ
19 խօսեցան։ Իսկ Մարիամ այս բոլոր բաները պա-
20 հում էր, և իր սրտումը մտածում էր։ Եւ հո-
վիւները ետ դարձան. Աստուծոյն փառաբանում
և օրհնում էին այն բոլոր բաների համար, որ
լսեցին և տեսան, ինչպէս որ նորանց ասուե-
ցաւ։

21 Եւ երբոր ութ օր լրացաւ, որ մանուկը թլփատ-
ուէր, նորա անունը Յիսուս կոչուեցաւ, այն որ
հրեշտակիցը կոչուած էր՝ նա դեռ արգանդումը
չյղացուած։

22 Եւ երբոր նորա սրբութեան օրերը լրացան,
Մովսէսի օրէնքի պէս, նորան տարան Երուսա-
23 ղէմ, որ Տիրոջ առջև կանգնեցնեն։ Ինչպէս
Տիրոջ օրէնքումը գրուած է. Թէ Ամէն արու որ
24 արգանդ բանայ, Տիրոջ սուրբ պիտի կոչուի։ Եւ
որ Տիրոջ օրէնքումը ասածին պէս պատարագ
բերին մի զոյգ տատրակ, կամ աղաւնու երկու
ձագ։

25 Եւ ահա Երուսաղէմը մի մարդ կար, որի ա-
նունը Սիմէօն էր, և այս մարդը արդար և
Աստուածավախ էր, և սպասում էր Իսրայէլի
մխիթարութեանը, և Սուրբ Հոգի կար նորա
26 վերայ։ Եւ նորան պատգամ էր եղած Սուրբ Հո-
գուցը, որ մահ չտեսնէ, մինչև որ Տիրոջ Քրիս-
27 տոսին տեսնէ։ Եւ Հոգովը եկաւ տաճարը, և
երբոր ծնողքը Յիսուս երեխային բերին, որ օ-
րէնքի սովորութեան պէս նորա վերայ անեն։

28 Եւ նա առաւ նորան ընդունեց իր գիրկը, և
29 Աստուծոյն օրհնեց, և ասաց. Հիմա արձակում
ես քո ծառային, ով Տէր, քո խօսքի պէս խա-
30 ղաղութիւնով. Վասն զի իմ աչքերը տեսան քո
31 փրկութիւնը, Որ պատրաստեցիր ամեն ժողո-
32 վուրդների առջև։ Լոյս՝ հեթանոսներին լուսա-
ւորելու, և փառք՝ քո Իսրայէլ ժողովրդի հա-
33 մար։ Եւ Յովսէփը և նորա մայրը զարմացել էին
այն բաների վերայ, որ նորա համար խօսվում
34 էին։ Եւ Սիմէօնն օրհնեց նորանց, և նորա մայր՝
Մարիամին ասաց. Ահա սա կայ Իսրայէլի մէջ
շատերի համար ընկնելու և կանգնելու պատճառ
35 և հակառակութեան նշան։ Եւ իսկ քո անձովը
սուր կ'անցնէ, որ շատ սրտերից խորհուրդներ
յայտնուին։

36 Եւ այնտեղ էր Աննա մարգարէուհին՝ Փանու-
էլի աղջիկն՝ Ասերի ցեղից. սա ինքն շատ օրեր
էր անցրել, և իր կուսութեան ժամանակիցն
37 եօթն տարի էր ապրել մարդոյ հետ. Եւ ութ-
սուն և չորս տարոյ չափ որբևայրի էր, որ տա-
ճարից չէր հեռանում. Բայց ծոմերով և աղօթք-
ներով գիշեր ու ցերեկ ծառայում էր Աստուծոյն։
38 Սա էլ նոյն ժամումը վերկացաւ՝ Տէրից գոհա-
նում էր, և նորա համար խօսում էր ամենի հետ,
որ Երուսաղէմի մէջ փրկութեանն սպասում էին։

39 Եւ երբոր ամենը Տիրոջ օրէնքի պէս կատա-
րեցին, ետ դարձան Գալիլեա՝ իրանց Նազարէթ
40 քաղաքը։ Երեխան էլ աճում էր և զօրանում
հոգով իմաստութիւնով լցուած. և Աստուծոյ
շնորհքը նորա վերայ էր։

41 Եւ նորա ծնողքը տարուց տարի Երուսաղէմ
42 էին գնում զատկի տօնին։ Եւ երբոր նա տասն-

երկու տարեկան եղաւ, նրանք տօնի սովորու-
43 թեան պէս Երուսաղէմ գնացին, Եւ երբոր օրե-
րը կատարելուց յետոյ ետ դարձան, Յիսուս տը-
ղան Երուսաղէմումը մնաց. եւ չիմացաւ Յովսէ-
44 փը եւ նորա մայրը, Եւ կարծելով, թէ նա ճա-
նապարհակիցների հետ կ'լինի, մի օրուայ ճա-
նապարհ եկան՝ եւ նորան որոնում էին ազգա-
45 կանների եւ ծանօթների մէջ։ Եւ երբոր նորան
չգտան, ետ դարձան Երուսաղէմ եւ որոնում է-
46 ին նորան։ Եւ երեք օրից յետոյ եղաւ, որ նո-
րան տաճարի մէջ գտան, վարդապետների մէջ
նստած՝ նորանց ականջ էր դնում, եւ նորանցից
47 հարցնում էր։ Եւ ամենքն, որ նորանից լսում
էին, զարմանում էին նորա իմաստութեան եւ
48 պատասխանների վերայ։ Եւ երբոր նորան տե-
սան շատ սքանչացան. եւ նորա մայրն ասաց
նորան. Որդեակ, ինչո՞ւ համար մեզ այսպէս ա-
րիր. ահա, հայրդ եւ ես ցաւելով որոնում էինք
49 քեզ։ Եւ նորանց ասաց. Ինչո՞ւ համար էիք ինձ
որոնում. չէի՞ք գիտում՝ թէ պէտք է, որ ես իմ
50 Հօր տանը լինիմ։ Եւ նորանք չհասկացան այն
51 խօսքը որ նորանց հետ խօսեց։ Եւ նորանց հետ
իջաւ, եւ գնաց Նազարէթ. եւ նորանց հնա-
զանդ էր. եւ նորա մայրը այս բոլոր բանները
պահում էր սրտումը։
52 Եւ Յիսուսը զարգանում էր իմաստութիւնով
եւ հասակով, եւ շնորհքով Աստուծոյ եւ մարդ-
կանց մօտ։

ԳԼ. Գ

1 Տիբերիոս կայսեր տէրութեան տասն եւ հինգ-

երորդ տարումը, Պոնտացի Պիղատոսի Հրէաս-
տանի վերայ կուսակալութեան ժամանակին, եւ
Հերօդէսի՝ Գալիլեայի վերայ չորրորդապետու-
թեան ժամանակին, եւ Լիւսանիայի Աբիլենացոց
2 վերայ չորրորդապետութեան ժամանակին, Ան-
նայի եւ Կայիափայի քահանայապետութեան օրե-
րումը Աստուծոյ խօսքն եղաւ Զաքարիայի որդի
3 Յօհաննէսին անապատումը։ Եւ նա եկաւ Յորդա-
նանի ամեն կողմերն, ապաշխարութեան մկրտու-
4 թիւնը քարոզելով մեղաց թողութեան համար։
Ինչպէս Եսայի մարգարէի խօսքերի գրքումն գըր-
ուած է՝ որ ասում է. Կանչողի ձայն անապա-
տումը. պատրաստ արէք Տիրոջ ճանապարհը,
5 եւ ուղիղ արէք նորա շաւիղները։ Ամեն ձոր
լցուի, եւ ամեն լեառ եւ բլուր խոնարհուի. եւ
դժուարները հեշտ լինին, եւ խորտուբորտները
6 հարթ ճանապարհներ լինին։ Եւ ամեն մարմին
Աստուծոյ փրկութիւնը տեսնէ։
7 Եւ այն ժողովուրդներին, որ դուրս էին եկած
նորանից մկրտուելու, ասաց. Իժերի զաւակներ,
ո՞վ սովորեցրեց ձեզ փախչիլ այն գալու բար-
8 կութիւնից։ Արդ ապաշխարութեան արժանի
պտուղներ արէք. եւ մի սկսէք ասել ձեր միջու-
մը մենք Աբրահամն ունինք հայր. քանզի աս-
ում եմ ձեզ. թէ Աստուած կարող է այս քա-
9 րերից որդիք հանել Աբրահամի համար։ Բայց
արդէն կացինն էլ ծառերի արմատի մօտ դրած
է. արդ ամեն ծառ, որ բարի պտուղ չէ բեր-
10 ում, կ'կտրուի եւ կրակի մէջ կ'գցուի։ Եւ ժո-
ղովուրդները նորան հարցնում էին եւ ասում.
11 Ապա ի՞նչ անենք։ Եւ պատասխանեց եւ ասաց
նորանց. Նա որ երկու հանդերձ ունի, թող

չունեցողին տայ. եւ նա էլ, որ կերակուր ու-
12 նի, թող նոյնպէս անէ։ Եւ մաքսաւորներն էլ
եկան մկրտուելու, եւ նորան ասացին. Վարդա-
13 պետ, մենք ի՞նչ անենք։ Նա էլ ասաց նորանց.
Ձեզ հրամայածից աւելի ոչ մի բան մի առնէք։
14 Եւ զինուորներն էլ էին հարցնում նորան եւ ա-
սում. Ապա մենք ի՞նչ անենք, նորանց էլ ասաց.
Ոչ մէկին մի հարստահարէք, ոչ էլ զրպարտու-
թիւն արէք, եւ ձեր թոշակովը բաւականացէք։
15 Ժողովուրդն էլ դեռ սպասելիս եւ ամենքն ի-
րանց սրտերումն մտածելիս՝ Յօհաննէսի համար,
16 մի գուցէ նա լինի Քրիստոսը։ Յօհաննէսն ամե-
նեին պատասխանեց եւ ասաց. Ես ջրով եմ մը-
կրտում ձեզ, բայց ինձանից աւելի զօրաւորն
է գալիս, որ ես արժանի չեմ նորա կօշիկների
կապերը լուծելու. Նա ձեզ Սուրբ Հոգով եւ կը-
17 րակով կ'մկրտէ։ Որ հոսելին նորա ձեռին է, եւ
իր կալը կ'սրբէ, եւ ցորենն իր ամբարը կ'ժողո-
18 վէ, իսկ դարմանը կ'այրէ անշէջ հրով։ Եւ ու-
րիշ էլ շատ բաներ յորդորելով աւետիք էր տա-
լիս ժողովրդին։
19 Բայց Հերովդէս չորրորդապետը՝ նորանից յան-
դիմանուած իր եղբօր Փիլիպպոսի կնոջ Հերո-
դիայի մասին, եւ այն ամեն չար գործքերի հա-
20 մար, որ Հերովդէսը արաւ, Ամենի վերայ սա էլ
աւելացրեց, որ Յօհաննէսին բանտի մէջ դրաւ։
21 Եւ բոլոր ժողովրդի մկրտուելու ժամանակին ե-
ղաւ, որ երբոր Յիսուսն էլ մկրտուեցաւ՝ եւ ա-
22 ղօթք էր անում, երկինքը բացուեցաւ, Եւ Սուրբ
Հոգին մարմնաւոր տեսիլքով աղաւնու պէս իջաւ
նորա վերայ. եւ երկնքից ձայն եղաւ, որ ասում
էր. Դու ես իմ սիրելի Որդին, քեզ հաճեցայ։

23 Եւ ինքն Յիսուս սկսած էր երեսուն տարե-
կանի չափ լինել, որ ինչպէս կարծվում էր, Յօ-
սէփի որդին էր. եւ նա Հեղիին. եւ նա Մատ-
24 թատի. Եւ նա Ղեւիի. եւ նա Մեղքիի. եւ նա
25 Յաննէի. եւ նա Յօսէփի. Եւ նա Մատտաթի.
եւ նա Ամոսի. եւ նա Նաւումի. եւ նա Եսղիի.
26 եւ նա Նանգէի. Եւ նա Մահաթի. եւ նա Մատ-
տաթի. եւ նա Սեմէի. եւ նա Յօսէփի. եւ նա
27 Յուդայի. Եւ նա Յօհաննայի. եւ նա Ռէսայի. եւ
նա Զօրաբաբելի. եւ նա Սաղաթիէլի. եւ նա
28 Ներէի. Եւ նա Մեղքիի. եւ նա Ադդէի. եւ նա
29 Կոսամի. եւ նա Եղմոդամի. եւ նա Էրի. Եւ նա
Յօսէի. եւ նա Եղիազարի. եւ նա Յօրէմի. եւ
30 նա Մատթատի. եւ նա Ղեւիի. Եւ նա Սիմեօ-
նի. եւ նա Յուդայի. եւ նա Յօսէփի. եւ նա
31 Յօնանի. եւ նա Էղիակիմի. Եւ նա Մելեայի.
եւ նա Մայնանի. եւ նա Մատտաթի. եւ նա
32 Նաթանի. եւ նա Դաւթի. Եւ նա Յեսսէի. եւ
նա Յօբէդի. եւ նա Բոոսի. եւ նա Սաղմոնի, եւ
33 նա Նաասոնի. Եւ նա Ամինադաբի. եւ նա Ա-
րամի. եւ նա Էսրոնի. եւ նա Փարեսի. եւ նա
34 Յուդայի. Եւ նա Յակոբի. եւ նա Իսահակի. եւ
նա Աբրահամի. եւ նա Թարայի. եւ նա Նաքո-
35 րի. Եւ նա Սերուքի. եւ նա Ռագաւի. եւ նա
36 Փաղեկի. եւ նա Եբերի. եւ նա Սաղայի. Եւ
նա Կայնանի. եւ նա Արփաքսատի. եւ նա Սե-
37 մի. եւ նա Նոյի. եւ նա Ղամեքի. Եւ նա Մա-
թուսաղայի. եւ նա Ենոքի. եւ նա Յարեդի. եւ
38 նա Մաղաղիէլի. եւ նա Կայնանի. Եւ նա Ենո-
սի. եւ նա Սէթի. եւ նա Ադամի. եւ նա Աս-
տուծոյ։

Գլ. Դ

1 Եւ Յիսուսը Սուրբ Հոգով լցուած Յորդանանից
ետ դարձաւ եւ Հոգուն տարուեցաւ անապատը։
2 Քառասուն օր սատանայից փորձուեցաւ. եւ
այն օրերումը ոչինչ չկերաւ, եւ երբոր նորանք
լրացան վերջապէս սովեց։
3 Եւ սատանան նորան ասաց. Եթէ Որդի ես
4 Աստուծոյ, ասա այդ քարերին որ հաց լինի։ Եւ
Յիսուսը նորան պատասխանեց եւ ասաց. Գըր-
ուած է, թէ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ,
այլ Աստուծոյ ամեն խօսքովը։
5 Եւ սատանան նորան մի բարձր լեառ հանեց՝
եւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցոյց
6 տուաւ նորան մի վայրկեանի մէջ։ Եւ սատանան
ասաց նորան. Այս բոլոր իշխանութիւնները եւ
սորանց փառքը քեզ կ'տամ. վասն զի ինձ է տըր-
7 ուած. եւ ում որ կամենում եմ, տալիս եմ սորան։
Արդ դու, եթէ իմ առջեւը ընկած երկրպագութիւն
8 անես, բոլորը քոնը կ'լինի։ Եւ Յիսուսը նորան
պատասխանեց եւ ասաց. Գնա յետս, սատանայ.
գրուած է, թէ Քո Տէր Աստուծոյն երկրպագու-
թիւն անես, եւ նորան միայն պաշտես։
9 Եւ տարաւ նորան Երուսաղէմ, եւ տաճարի
աշտարակի վերայ կանգնեցրեց եւ ասաց նորան.
Եթէ Որդի ես Աստուծոյ, այստեղից քեզ վայր
10 գցիր։ Վասն զի գրուած է. թէ Իր հրեշտակ-
ներին կ'հրամայէ քեզ համար, որ քեզ պահեն։
11 Եւ որ ձեռների վերայ քեզ վեր առնեն, որ եր-
12 բէք քո ոտը քարի չդպցնես։ Յիսուսը նորան
պատասխանեց եւ ասաց. թէ Ասուած է՝ Մի
13 փորձիր քո Տէր Աստուծոյն։ Եւ սատանան երբ-

որ բոլոր փորձութիւնը կատարեց, հեռացաւ նո-
րանից մինչեւ մի ժամանակ։
14 Եւ Յիսուսը Հոգոյ զօրութիւնովը ետ դար-
ձաւ Գալիլեա. եւ նորա համբաւը դուրս գնաց
15 այն գաւառի ամեն կողմերը։ Եւ նա սովորեց-
նում էր նորանց ժողովարաններումը, եւ ամե-
նից փառաւորվում էր։
16 Եւ եկաւ Նազարէթ, ուր որ մեծացել էր. եւ
իր սովորութեան պէս շաբաթ օրը ժողովարանը
17 մտաւ, եւ կանգնեց որ կարդայ։ Եւ Եսայի մար-
գարէի գիրքը տուին նորան. եւ երբոր գիրքը
18 բացաւ՝ այն տեղը գտաւ՝ ուր գրուած էր. Տի-
րոջ Հոգին ինձ վերայ է. որի համար էլ օծեց
ինձ. նա ինձ ուղարկել է աղքատներին աւետիք
19 տալ, սրտով կոտրուածներին բժշկել, Գերինե-
րին թողութիւն քարոզել, եւ կոյրերին տեսու-
թիւն։ խոցուածներին արձակել ազատելով, Տի-
20 րոջ ընդունելի տարին քարոզել։ Եւ գիրքը խը-
փեց՝ պաշտօնեային տուաւ, նստեց, եւ ժողո-
վարանի մէջ ամենքի աչքերը նորան էին մտիկ
21 տալիս։ Եւ սկսեց ասել նորանց. թէ Այսօր
այս գիրքը կատարուեցաւ ձեր ականջներումը։
22 Եւ ամենքը վկայում էին նորան, եւ զարմանում
էին այն շնորհաց խօսքերի վերայ, որ դուրս է-
ին գալիս նորա բերանիցը. եւ ասում էին. Չէ՞
23 որ սա Յօսէփի որդին է։ Եւ նորանց ասաց. Ի
հարկէ՝ այս առակը կ'ասէք ինձ. Բժի՛շկ, քո ան-
ձը բժշկիր. որչափ բաներ լսեցինք՝ Կափառնա-
յումի մէջ եղած. քո հայրենիքումը՝ այս տեղ
24 էլ արա։ Եւ ասաց. Ճշմարիտ ասում եմ
ձեզ. թէ ոչ մի մարգարէ ընդունելի չէ իր հայ-
25 րենիքումը։ Եւ ճշմարտութեամբ ասում եմ ձեզ,

Թէ Եղիայի օրերին Իսրայէլի մէջ շատ որբեւայ-
րիներ կային, երբոր երկինքը երեք տարի եւ
վեց ամիս փակուեցաւ, այնպէս որ բոլոր երկրի
26 վերայ մեծ սով եղաւ ։ Եւ Եղիան նորանից ոչ
ոքի մօտ չուղարկուեցաւ, բայց միայն Սիդոնա-
27 ցոց Սարեփթան մի որբեւայրի կնոջ մօտ ։ Եւ
շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ Եղիսէ մար-
գարէի ժամանակին. եւ նորանից ոչ ոք սրբուե-
28 ցաւ, բայց միայն Նէեման Սիւրիացին ։ Եւ ամենքը
բարկութիւնով լցուեցան ժողովարանի մէջ, երբոր
29 այս լսեցին ։ Եւ վերկացան՝ նորան քաղաքից դուրս
հանեցին, եւ տարան նորան մինչեւ լեռան գը-
լուխը՝ որի վերայ նորանց քաղաքը շինուած էր,
30 որ բարձր տեղիցը վայր գցեն նորան ։ Իսկ նա
նորանց միջովն անցաւ գնաց ։
31 Եւ իջաւ Կափառնայում՝ Գալիլեացոց քաղա-
քը, եւ շաբաթ օրը սովորեցնում էր նորանց ։
32 Եւ զարմանում էին նորա վարդապետութեան
վերայ, քանզի նորա խօսքը իշխանութիւնով էր ։
33 Եւ ժողովարանումը մի մարդ կար, որ պիղծ դեւ
34 ունէր, եւ մեծ ձայնով աղաղակեց, Եւ ասաց.
Թող տուր. ի՞նչ բան ունիս մեզ հետ, Յիսուս
Նազովրեցի. եկար մեզ կորցնելո՞ւ. գիտեմ քեզ,
35 Թէ դու ով ես, ով Աստուծոյ Սուրբ ։ Յիսուսը
սաստեց նորան եւ ասաց. Պապանձիր եւ դուրս
եկ դորանից. եւ դեւը նորան գետինն զարկեց
մէջտեղը՝ եւ դուրս եկաւ նորանից, եւ ոչ մի
36 վնաս չտուաւ նորան ։ Եւ զարմանք եղաւ ա-
մենքի վերայ, եւ իրար հետ խօսում էին եւ աս-
ում. Սա ի՞նչ բան է, որ իշխանութիւնով եւ
զօրութիւնով պիղծ ոգիներին սաստում է, եւ
37 դուրս են գալիս ։ Եւ նորա համբաւը գնում էր
շրջակայքի ամեն տեղը ։

38 Եւ վերկացաւ ժողովարանիցը ; եւ մտաւ Սի-
մոնի տունը. Սիմոնի զոքանչն էլ սաստիկ տեն-
դով բռնուած էր. եւ նորան աղաչեցին նորա
39 համար ։ Եւ նորա մօտ կանգնեց՝ սաստեց տեն-
դին. եւ տենդը թողեց նորան. եւ նա իսկոյն
վերկացաւ եւ ծառայում էր նորանց ։
40 Եւ արեգակը մարը մտնելիս՝ ամենքն, որ կերպ
կերպ ցաւերով հիւանդներ ունէին, նորանց բե-
րում էին նորա մօտ. նա էլ նորանց ամեն մէկի
վերայ ձեռք էր դնում՝ եւ բժշկում նորանց ։
41 Շատերից էլ դեւեր էին դուրս գալիս, աղաղա-
կում եւ ասում. Թէ Դու ես Քրիստոս Աստու-
ծոյ Որդին. եւ նա սաստելով նորանց թոյլ չէր
տալիս, որ խօսէին. վասն զի գիտէին, թէ նա
Քրիստոսն է ։
42 Եւ երբոր ցերեկ եղաւ, դուրս եկաւ գնաց ա-
նապատ տեղ. եւ ժողովուրդները որոնում էին
նորան, եւ եկան մինչեւ նորա մօտ. եւ արգե-
43 լում էին նորան, որ չգնայ իրանցից ։ Նա էլ ա-
սաց նորանց. Ես ուրիշ քաղաքներին էլ պէտք
է Աստուծոյ արքայութիւնը աւետարանեմ, վասն
44 զի իսկ սորա համար ուղարկուեցայ ։ Եւ քարո-
զում էր Գալիլեայի ժողովարանների մէջ ։

Գլ. Ե

1 Եւ եղաւ, երբոր ժողովուրդը նորա վերայ կիտ-
վում էր, Աստուծոյ խօսքը լսելու, եւ ինքն
2 Գեննեսարէթի ծովակի մօտ կանգնած էր. Եւ
երկու նաւ տեսաւ՝ ծովակի մօտ կանգնած, ձըկ-
նորսներն էլ նորանցից դուրս էին եկած՝ եւ ուռ-
3 կանները լուանում էին ։ Եւ մտաւ այն նաւերի
մէկի մէջ որ Սիմոնինն էր, եւ խնդրեց նորան

նաւը ցամաքից մի քիչ ներս տանել. Նստեց եւ
նաւից սովորեցնում էր ժողովուրդներին։
4 Եւ երբոր խօսելուց դադարեց, Սիմօնին ա-
սաց. Նաւ-ը դէպի խորը տար, եւ ձեր ուռկան-
5 ները գցեցէք որսի։ Եւ Սիմօնը պատասխանեց
եւ ասաց նորան. Վարդապետ, բոլոր գիշերն
աշխատեցանք՝ եւ ոչինչ չբռնեցինք, բայց քո
6 խօսքի համար ուռկանը կ՚ձգեմ։ Եւ երբոր այս
արին, ձկների մի մեծ բազմութիւն ներս փա-
7 կեցին եւ նորանց ուռկանը պատառւում էր։ Եւ
նշան էին անում միւս նաւի մէջ լինող ընկեր-
ներին, որ գան իրանց օգնեն. եւ եկան, եւ եր-
8 կու նաւը լցրին, մինչեւ որ թաղւում էին։ Սի-
մօն Պետրոսն էլ տեսնելով ընկաւ Յիսուսի ծըն-
կների առջեւ եւ ասաց. Ինձանից դուրս գնա, վա-
9 սըն զի ես մեղաւոր մարդ եմ, Տէր։ Քանզի ահ պա-
տեց նորան եւ ամենքին էլ, որ նորա հետ էին, այն
10 ձկների որսի համար որ բռնեցին։ Այնպէս էլ Զե-
բեդեայի որդիքներին՝ Յակոբին եւ Յօհաննէսին,
որ Սիմօնի ընկերներն էին, եւ Յիսուսը Սիմօնին
11 ասաց. Մի վախենար այսուհետեւ մարդիկ որսող
կ՚լինես։ Եւ նաւերը հանեցին ցամաքը, ամեն
բաները թողին, եւ նորա ետեւից գնացին։
12 Եւ եղաւ, երբոր նա քաղաքներից մէկումն
էր, ահա մի մարդ՝ բորոտութիւնով լիքն, երբոր
Յիսուսին տեսաւ, երեսի վերայ ընկնելով, նորան
աղաչեց եւ ասաց. Տէր, եթէ կամենաս, կարող
13 ես ինձ սրբել։ Եւ նա իր ձեռը մեկնելով հաս-
ցրեց նորան եւ ասաց. Կամենում եմ, սրբուիր.
եւ շուտով բորոտութիւնը հեռացաւ նորանից։
14 Եւ ինքն պատուիրեց նորան, ոչ ոքի չասէ, այլ
թէ՝ Գնա, անձդ ցոյց տուր քահանային, եւ քո

սրբութեան համար ընծան բեր, ինչպէս Մօ-
15 սէսը հրամայեց՝ նորանց ի վկայութիւն։ Բայց
նորա վերայ խօսակցութիւնը առաւել եւս տա-
րածվում էր, եւ շատ ժողովուրդներ ժողովվում
էին՝ որ լսեն, եւ իրանց հիւանդութիւնները բը-
16 ժըշկուէին նորանով։ Իսկ նա քաշվում էր անա-
պատ տեղերանք, եւ աղօթք էր անում։
17 Եւ մէկ օր եղաւ, որ ինքը սովորեցնում էր.
եւ Փարիսեցիներն եւ օրինաց վարդապետները
նստած էին, որ Գալիլեայի ամեն գիւղաքաղաք-
ներից եւ Հրէաստանից եւ Երուսաղէմից հա-
ւաքուած էին. եւ Տիրոջ զօրութիւնը կար նո-
18 րանց բժշկելու համար։ Եւ ահա մարդիկ մահի-
ճով մի մարդ էին բերում, որ անդամալոյծ էր,
եւ ուզում էին նորան ներս տանել, եւ նորա
19 առջեւը դնել։ Եւ երբոր չգտան թէ որ տեղով
նորան ներս տանեն՝ այն ամբոխի պատճառովը,
վեր ելան կտուրը, եւ օձորքից կախեցին նո-
20 րան մահիճովը մէջտեղը Յիսուսի առջեւ։ Եւ
նորանց հաւատքը տեսնելով նորան ասաց. Ով
21 մարդ, քո մեղքերը թողուած լինին քեզ։ Եւ
դպիրները եւ Փարիսեցիներն սկսեցին խորհել
եւ ասել. Սա ո՞վ է, որ հայհոյանք է խօսում.
ո՞վ կարող է մեղք թողել՝ բայց ի միայն Աստուած։
22 Յիսուսն էլ երբոր նորանց խորհուրդներն իմա-
ցաւ, պատասխանեց նորանց եւ ասաց. Ի՞նչ էք
23 խորհում ձեր սրտերումը։ Ո՞րն է աւելի հեշտ.
ասել՝ Մեղքերդ թողուած լինին քեզ, թէ ասել՝
24 Վեր կաց եւ ման եկ։ Բայց որ իմանաք, թէ
Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վերայ
մեղքեր թողելու. անդամալուծին ասաց. Քեզ
եմ ասում. Վեր կաց եւ մահիճդ առ, եւ գնա

25 քո տունը։ Եւ իսկոյն նորանց առջեւը վերկա-
ցաւ, իր վերայ առաւ այն որի վերայ պառկած
էր, գնաց իր տունը՝ Աստուծոյն փառաւորելով։
26 Եւ զարմանք բռնեց ամենքին, եւ փառք էին
տալիս Աստուծոյն. եւ ահով լցուեցան, եւ աս-
ում էին, թէ Նորանշան բաներ տեսանք այսօր։
27 Եւ նորանից յետոյ Յիսուսը դուրս գնաց եւ մի
մաքսաւոր տեսաւ՝ անունը Ղեւի, մաքսատանը
28 նստած, եւ նորան ասաց. Իմ ետեւից եկ։ Եւ
նա ամեն բան թողեց, վերկացաւ գնաց նորա
29 ետեւից։ Եւ Ղեւին նորան մեծ ընդունելութիւն
արաւ իր տան մէջ. եւ շատ բազմութիւն կար
մաքսաւորների եւ ուրիշների, որ նորանց հետ
30 սեղան էին նստել։ Եւ նորանց դպիրները եւ
Փարիսեցիները տրտնջում էին նորա աշակերտ-
ների մօտ եւ ասում. Ինչո՞ւ էք մաքսաւորների
31 եւ մեղաւորների հետ ուտում եւ խմում։ Եւ
Յիսուսը պատասխանեց եւ ասաց նորանց. Ա-
ռողջները կարօտ չեն բժշկի, այլ հիւանդները։
32 Չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղաւոր-
ներին ապաշխարութեան։
33 Նորանք էլ ասացին նորան. Ինչո՞ւ Յօհաննէ-
սի աշակերտները սաէպ պաս են պահում եւ ա-
ղօթքներ են անում, նոյնպէս էլ Փարիսեցիներինը.
34 իսկ քո աշակերտները ուտում են եւ խմում։ Նա
էլ ասաց նորանց. Մի՞թէ կարող էք հարսանիքի
տղաներին, քանի որ փեսան նորանց հետ է,
35 ծոմ պահել տալ։ Բայց օրեր կ'գան, եւ երբոր
փեսան վեր կ'առնուի նորանցից. ապա այն օր-
36 ումը ծոմ կ'պահեն։ Մի առակ էլ ասաց նորանց.
թէ Ոչ ով մի նոր հանդերձի կարկատան հին
հանդերձի վերայ չի գցիլ. ապա թէ ոչ, այն նորն

էլ կ'պատառէ, եւ հնի հետ չմիաբանուիլ այն
37 կտորն որ նորիցն է։ Եւ ոչ ով նոր գինին հին
տիկերի մէջ չի ածիլ. ապա թէ ոչ, նոր գինին
տիկերը կ'պատառէ. ինքն էլ կ'թափուի, տիկերն
էլ կ'կորչին։ Այլ նոր գինին նոր տիկերի մէջ
38 պէտք է ածուի, եւ երկուքն էլ կ'պահուին։ Եւ
ոչ ով չկայ, որ հինը խմէ չուտով նորը կամե-
նայ, վասն զի ասում է. թէ Հինն աւելի քաղցր է։

Գլ. Զ

1 Եւ երկրորդի առաջին շաբաթ օրումն եղաւ որ
նա անցնում էր արտերի մէջով, եւ նորա աշա-
կերտներն հասկ էին պոկում՝ ափի մէջ չփում
2 եւ ուտում։ Եւ Փարիսեցիներից ոմանք ասացին
նորանց. Այդ ինչ էք անում, որ շաբաթ օրն օ-
3 րէնք չէ։ Եւ Յիսուսը նորանց պատասխանեց եւ
ասաց. Դուք չէ՞ք կարդացել այն որ Դաւիթն
արաւ, երբոր սովեց ինք եւ նորա հետ լինող-
4 ները. Ի՞նչպէս նա Աստուծոյ տունը մտաւ, եւ
առաջաւորութեան հացերն առաւ եւ կերաւ, եւ
իր հետ լինողներին էլ տուաւ. որոնց օրէնք չէ
5 ուտել, բացի միայն քահանաներին։ Եւ ասաց
նորանց. թէ Տէր է Որդին մարդոյ շաբաթի էլ։
6 Եւ միւս շաբաթ օրն էլ եղաւ, որ ժողովա-
րանը մտաւ՝ եւ սովորեցնում էր. եւ այնտեղ մի
7 մարդ կար, եւ նորա աջ ձեռը չորացած էր։ Եւ
դպիրները եւ Փարիսեցիները սպասում էին նո-
րան, թէ շաբաթ օրումը կ'բժշկէ՞, որ նորանից
8 չարախօսելու պատճառ գտնեն։ Նա էլ գիտում
էր նորանց խորհուրդները, եւ այն մարդուն, ո-
րի ձեռը չորացած էր, ասաց. Վեր կաց եւ կանգ-

9 նիր մէջտեղը. եւ նա վերկացաւ կանգնեց։ Արդ
Յիսուսը ասաց նորանց. Հարցնում եմ ձեզա-
նից. Ի՞նչ է արժան շաբաթ օրը, բարի՞ քան ա-
նել՝ թէ չար գործել. հոգի ազատե՞լ՝ թէ կոր-
10 ցնել։ Եւ չորս կողմովը նորանց ամենի վերայ
նայելով ասաց այն մարդուն. Ձեռդ մեկնիր, նա
էլ այնպէս արաւ. եւ նորա ձեռքը առողջացաւ
11 միւսի պէս։ Նորանք էլ կատաղութիւնով լցուե-
ցան, եւ իրար հետ խօսում էին, թէ ի՞նչ անեն
Յիսուսին։
12 Եւ այն օրերումն եղաւ, որ ելաւ լեառը ա-
ղօթք անելու, եւ բոլոր գիշերն անցրեց աղօթք
13 անելով դէպի Աստուած։ Եւ երբոր առաւօտ ե-
ղաւ, կանչեց իր աշակերտները, եւ ընտրեց նո-
րանցից տասներկուսին, որոնց առաքեալ էլ ան-
14 ուանեց. Սիմոնին, որին Պետրոս էլ անուանեց,
եւ նորա եղբայրը՝ Անդրէասին, Յակոբին եւ Յո-
հաննէսին, Փիլիպպոսին եւ Բարթուղիմէոսին։
15 Մատթէոսին եւ Թովմասին, Յակոբոս Ալփեանին,
16 եւ նախանձայոյզ կոչուած Սիմոնին. Եւ Յակոբի
Յուդային, եւ Յուդայ Իսկարիովտացուն, որ մատ-
17 նիչ էլ դառաւ։ Եւ իջաւ նորանց հետ՝ մի տա-
փարակ տեղ կանգնեց. եւ այնտեղ էր նորա աշա-
կերտների ժողովը եւ ժողովրդի մեծ բազմու-
թիւն բոլոր Հրէաստանից եւ Երուսաղէմից եւ
18 Տիւրոսի եւ Սիդոնի ծովեզերքից, Որ եկան նո-
րանից լսելու, եւ իրանց հիւանդութիւններից
բժշկուելու. եւ պիղծ ոգիներից չարչարուողնե-
19 րը. եւ բժշկվում էին։ Եւ բոլոր ժողովուրդը
ուզում էր դպչել նորան, վասն զի նորանից զօ-
րութիւն էր դուրս գալիս եւ ամենին բժշկում էր։
20 Եւ նա իր աչքերը դէպի իր աշակերտները

բարձրացրեց՝ եւ ասաց. Երանի՜ ձեզ աղքատնե-
րիդ, վասն զի ձերն է Աստուծոյ արքայութիւ-
21 նը։ Երանի՜ ձեզ, որ հիմա սոված էք, վասն զի
պիտի կշտանաք. երանի՜ ձեզ, որ հիմա լաց էք
22 լինում, վասն զի պիտի ծիծաղիք։ Երանի ձեզ,
երբոր մարդիկ ձեզ ատեն, եւ երբոր ձեզ ջոկեն
եւ նախատեն, եւ ձեզ վերայ չար անուն հանեն՝
23 Որդոյ մարդոյ պատճառով։ Ուրախ եղէք այն
օրումն եւ ցնծացէք, վասն զի ահա ձեր վարձքը
շատ է երկնքումը. որովհետեւ այդպէս էին ան-
24 ում մարգարէներին իրանց հայրերը։ Բայց վայ
ձեզ՝ հարուստներիդ, վասն զի ձեր մխիթարու-
25 թիւնն ընդունեցիք։ Վայ ձեզ՝ որ կշտացել էք,
վասն զի պիտի սովիք. վայ ձեզ՝ որ հիմա ծի-
ծաղում էք, վասն զի սուգ պիտի անէք, եւ լաց
26 պիտի լինիք։ Վայ ձեզ՝ երբոր ամեն մարդիկ ձե-
զանից բարի ասեն, վասն զի այդպէս էին ան-
ում սուտ մարգարէներին նորանց հայրերը։
27 Բայց ձեզ՝ որ լսում էք, ասում եմ. Սիրեցէք
ձեր թշնամիները, բարի արէք ձեզ ատողներին։
28 Օրհնեցէք ձեզ անիծողներին, աղօթք արէք ձեզ
29 նեղացնողների վերայ։ Քո մէկ երեսին զարկողին
միւսն էլ դէմ արա. եւ նա՝ որ քո վերարկուն
քեզանից հանում է, շապիկդ էլ մի արգելեր նո-
30 րանից։ Ամենին՝ որ ուզում է քեզանից, տուր,
31 եւ քոնը առնողից ետ մի առներ։ Եւ ինչպէս
կամենում էք՝ որ մարդիկ ձեզ անեն, նոյնպէս
32 էլ դուք արէք նորանց։ Եւ եթէ դուք ձեզ սի-
րողներին սիրէք, ի՞նչ շնորհք է ձեզ, վասն զի
մեղաւորներն էլ են իրանց սիրողներին սիրում։
33 Եւ եթէ ձեր բարերարներին բարի անէք, ի՞նչ
շնորհք է ձեզ. վասն զի մեղաւորներն էլ են

34 այնպէս անում: Եւ եթէ փոխ էք տալիս նո-
րանց՝ որ նորանցից յետ առնելու յոյս ունիք,
ի՞նչ շնորհք է ձեզ. վասն զի մեղաւորներն էլ
են մեղաւորներին փոխ տալիս, որ հաւասար չա-
35 փը ետ առնեն: Բայց սիրեցէք ձեր թշնամինե-
րին, եւ բարի արէք եւ փոխ տուէք ոչինչ ա-
կընկալելով. եւ ձեր վարձքը շատ կ՚լինի, եւ
Բարձրելոյն որդիք կ՚լինիք. վասն զի նա քաղցր
36 է երախտամոռների եւ չարերի վերայ: Ուրեմն
ողորմած եղէք, ինչպէս ձեր հայրն էլ ողորմած
37 է: Եւ մի դատէք, եւ չէք դատուիլ. եւ մի դա-
տապարտէք, եւ չէք դատապարտուիլ. արձակե-
38 ցէք՝ եւ կ՚արձակուիք: Տուէք եւ կ՚տրուի ձեզ.
լաւ չափով՝ թափ տրուած շարժուած լիփլիքը
կ՚տան ձեր գոգը. վասն զի այն չափով որ չա-
փէք, նորանով կ՚չափուի ձեզ:
39 Մի առակ էլ ասաց նորանց. Մի՞թէ կարող է
կոյրը կոյրին առաջնորդել, չէ՞ որ երկուքն էլ
40 փոսը կ՚ընկնին: Աշակերտն իր վարդապետից
բարձր չէ. բայց ամեն կատարեալն իր վարդա-
պետի պէս կ՚լինի:
41 Եւ ինչո՞ւ քո եղբօր աչքումը շիւղը տեսնում
ես, եւ քո աչքի միջի գերանը չես նշմարում:
42 Կամ ի՞նչպէս կարող ես եղբօրդ ասել. Եղբայր,
թող քո աչքի միջի շիւղը հանեմ, բայց քո աչ-
քի միջի գերանը չես տեսնում. կեղծաւոր, ա-
ռաջ քո աչքից գերանը հանիր, եւ ապա մտիկ
կ՚տաս, որ քո եղբօր աչքից շիւղը հանես:
43 Քանզի բարի ծառ չկայ, որ չար պտուղ բերէ.
44 եւ ոչ էլ չար ծառ, որ բարի պտուղ բերէ: Քան-
զի ամեն մէկ ծառ իր պտղից է ճանաչվում.
վասն զի փշերից թուզ չեն քաղում, եւ ոչ մո-

45 րենուցը խաղող են կթում: Բարի մարդն իր
սրտի բարի գանձից բարիք է բղխում, եւ չար
մարդն իր սրտի չար գանձից չարն է բղխում,
վասն զի սրտի աւելացածից է խօսում նորա
բերանը:
46 Եւ ինչո՞ւ էք ինձ Տէր Տէր կոչում, եւ չէք
47 անում այն որ ասում եմ: Ամեն ով որ ինձ մօտ
է գալիս եւ իմ խօսքերը լսում՝ եւ նորանց ան-
48 ում, ցոյց տամ ձեզ՝ թէ ո՞ւմ նման է: Նման է
մի տուն շինող մարդու, որ փորեց եւ խորաց-
րեց, եւ հիմը քարի վերայ դրաւ, եւ երբոր ջրի
հեղեղներ եղան, գետն այն տանը զարկեց, եւ
չկարաց շարժել նորան, վասն զի քարի վերայ
49 էր հիմնուած: Բայց իմ խօսքերը լսող եւ չանո-
ղը, նման է մի մարդու՝ որ տունը հողի վերայ
շինեց առանց հիմի. որ գետը նորան զարկեց,
եւ շուտով վայր ընկաւ, եւ այն տան կործա-
նումը մեծ եղաւ:

ԳԼ. Է

1 Եւ իր բոլոր խօսքերը ժողովրդի ականջներին
խօսելը կատարելուց յետոյ Կափառնայում մը-
2 տաւ: Եւ մի հարիւրապետի ծառայ հիւանդա-
ցած մեռնելու մօտ էր, որ պատուական էր նո-
3 րա համար: Եւ Յիսուսի համար լսելով, Հրէա-
ներից ծերեր նորա մօտ ուղարկեց՝ նորան աղա-
4 չելով որ գայ իր ծառային ապրեցնէ: Նորանք
էլ Յիսուսի մօտ եկան՝ նորան թախանձանօք
աղաչում էին եւ ասում. թէ Արժանի է նա, որ
5 այս շնորհքն անես նորան: Վասն զի մեր ազգին
սիրում է, եւ ժողովարանն էլ նա շինեց մեզ

6 համար։ Եւ Յիսուսը նորանց հետ գնաց. երբոր
նա տանիցը տակաւին շատ հեռու չէր, հարիւ-
րապետը բարեկամներ ուղարկեց նորա մօտ եւ
ասաց նորան. Տէր, մի յոգնիր, քանզի արժանի
7 չեմ, որ իմ յարկի տակ մտնես։ Նորա համար
ես իմ անձն էլ արժանաւոր չհամարեցի՝ քեզ
մօտ գալու. այլ խօսքով ասա, եւ ծառաս կը
8 բժշկուի։ Վասն զի ես էլ իշխանութեան տակ
դրուած մարդ եմ, որ իմ ձեռքի տակ զինուոր-
ներ ունիմ, եւ սորան ասում եմ՝ Գնա, եւ նա
գնում է. եւ ուրիշին՝ Եկ, եւ գալիս է. եւ իմ
9 ծառային՝ Այս բանն արա, եւ անում է։ Եւ Յի-
սուսը այս լսելով՝ զարմացաւ նորա վերայ, եւ
դարձաւ իր ետեւից գնացող ժողովրդին ասաց.
Ասում եմ ձեզ՝ թէ Իսրայէլի մէջ էլ այսպիսի
10 հաւատք չգտայ։ Եւ այն ուղարկուած ծառաները
ետ դարձան տուն, եւ հիւանդ ծառային բժշկը-
ուած գտան։

11 Եւ յետեւի օրը եղաւ, որ Նային ասուած քա-
ղաքն էր գնում, եւ նորա հետ գնում էին նորա
12 աշակերտներից շատերը եւ շատ ժողովուրդ։ Եւ
երբոր մօտեցաւ քաղաքի դրան, եւ ահա մի
մեռեալ էին դուրս բերում՝ իր մօր միածնունդ
որդին. եւ նա որբեւայրի էր. եւ քաղաքիցն էլ
13 մի մեծ բազմութիւն կար նորա հետ։ Եւ Տէրը
նորան տեսաւ՝ գթաց նորա վերայ եւ ասաց նո-
14 րան. Մի լար։ Եւ մօտ եկաւ՝ դագաղին դպաւ.
եւ տանողները կանգնեցին, եւ ասաց. Երիտա-
15 սարդ, քեզ եմ ասում՝ Վեր կաց։ Եւ մեռեալը
վերկացաւ, նստեց եւ սկսեց խօսել. եւ նորան
16 տուաւ իր մօրը։ Եւ ահ բռնեց ամենքին, եւ
Աստուծոյն փառք էին տալիս եւ ասում. թէ

Մի մեծ մարգարէ է վեր կացել մեր մէջ, եւ թէ
17 Աստուած իր ժողովրդին այցելել է։ Եւ այս
ձայնը նորա համար դուրս գնաց բոլոր Հրէաս-
տանը եւ բոլոր չրջակայքը։

18 Եւ Յօհաննէսին պատմեցին իր աշակերտները
19 այս բոլոր բաների համար։ Եւ Յօհաննէս իր ա-
շակերտներից երկուսին կանչեց իրան մօտ, ու-
ղարկեց Յիսուսի մօտ եւ ասաց. Դո՞ւ ես այն որ
20 գալու է, թէ ուրիշի սպասենք։ Այն մարդիկն
էլ նորա մօտ գալով ասացին. Յօհաննէս մկրտի-
չը մեզ ուղարկել է քեզ մօտ՝ եւ ասում է. Դո՞ւ
21 ես այն որ գալու է, թէ ուրիշին սպասենք։ Եւ
այն ժամին շատերին բժշկեց հիւանդութիւննե-
րից եւ չարչարանքից եւ չար ոգիներից, եւ շատ
22 կոյրերին տեսնել շնորհեց։ Եւ Յիսուսը պատաս-
խանեց եւ ասաց նորանց. Գնացէք Յօհաննէսին
պատմեցէք ինչ որ տեսաք եւ լսեցիք. որ կոյ-
րերը տեսնում են, կաղերը գնում են, բորոտ-
ները սրբվում են, խուլերը լսում են, մեռելները
յարութիւն են առնում, աղքատներին աւետա-
23 րան է քարոզվում։ Եւ երանելի է նա, որ ինձ
վերայ չի գայթակղիլ։

24 Եւ երբոր Յօհաննէսի ուղարկած մարդիկը գը-
նացին, սկսեց ժողովուրդների հետ Յօհաննէսի
համար ասել. Ի՞նչ տեսնելու դուրս գնացիք ա-
25 նապատը, մի եղէ՞գ քամուց շարժուած։ Ապա
ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մի մա՞րդ՝ փա-
փուկ հանդերձներ հագած. ահա նորանք որ փա-
ռաւոր հանդերձներում եւ փափկութիւնում են՝
26 թագաւորների պալատներումն են։ Ապա ի՞նչ
տեսնելու դուրս գնացիք, մի մարգարէ՞. այո,
27 ասում եմ ձեզ, որ մարգարէից էլ աւելին։ Սա

այն է, որի համար գրուած է. թէ Ահա իմ հր-
րեշտակին ուղարկում եմ քո առջեւից, որ պատ-
28 րաստէ քո ճանապարհը քո առջեւ։ Քանզի աս-
ում եմ ձեզ, որ կանանց ծնունդների մէջ Յո-
հաննէս մկրտչից աւելի մեծ մարգարէ ոչ ով չը
կայ. բայց Աստուծոյ արքայութեան միջի փոք-
րագոյնը նորանից մեծ է։
29 Եւ բոլոր ժողովուրդն երբոր այս լսեցին՝ եւ
մաքսաւորները՝ Աստուծոյն արդարացրին Յոհան-
30 նէսի մկրտութիւնովը մկրտուելով. Բայց Փարի-
սեցիները եւ օրէնսականները անարգեցին Աստու-
ծոյ խորհուրդն իրանց անձերի համար նորանից
չմկրտուելով։
31 Տէրն էլ ասաց. Արդ ո՞ւմ նմանեցնեմ այս ազ-
32 գի մարդիկը. եւ ո՞ւմ են նման։ Նման են այն
տղայոց, որ հրապարակներումը նստած են եւ
իրար կանչում են եւ ասում. Փող հնչեցինք ձեզ
համար՝ եւ պար չեկաք, ողբ երգեցինք եւ չը
33 լացիք։ Վասն զի Յոհաննէս մկրտիչն եկաւ, ոչ
հաց էր ուտում, ոչ էլ գինի խմում, եւ ասում
34 էք՝ Դեւ ունի։ Որդին մարդոյ եկաւ, ուտում է
եւ խմում է, եւ ասում էք. Ահա ուտող եւ գի-
նի խմող մարդ, մաքսաւորների եւ մեղաւորների
35 բարեկամ։ Եւ իմաստութիւնն արդարացաւ բո-
լոր իր որդիքներիցը։
36 Փարիսեցիներից մէկն աղաչում էր նորան, որ
հաց ուտէ իր հետ. եւ մտաւ Փարիսեցու տունը
37 սեղան նստեց։ Եւ ահա այն քաղաքումը մի կին
կար, որ մեղաւոր էր, երբոր իմացաւ, թէ Փա-
րիսեցու տանը սեղան է նստած, մի շիշ անու-
38 շահոտ իւղ բերաւ։ Եւ նորա ոտից մօտ նորա
ետեւից կանգնած, լաց էր լինում, եւ սկսեց ար-

տասունքով նորա ոտները թրջել, եւ իր գլխի
մազերովը սրբում էր, եւ նորա ոտները համ-
39 բուրում էր, եւ իւղովն օծում։ Եւ Փարիսեցին
էլ, որ նորան կանչել էր, երբոր տեսաւ, իր
մտքումն ասում էր. Սա եթէ մի մարգարէ էր,
ապա կ'գիտէր՝ թէ ով կամ ինչպիսի կին է նա,
40 որ իրան մօտենում է, քանզի մեղաւոր է։ Եւ
Յիսուսը պատասխանեց եւ ասաց նորան. Սի-
մօն, մի բան ունիմ քեզ ասելու. Նա էլ ասաց.
41 Ասա, Վարդապետ. եւ ասաց. Մի փոխ տուող
երկու պարտական ունէր, մէկը հինգ հարիւր
42 դահեկան էր պարտական եւ միւսը յիսուն։ Եւ
երբոր նորանք բան չունէին վճարելու, երկու-
քին էլ շնորհեց. արդ նորանից ո՞րն աւելի կը
43 սիրէ նորան, ասա։ Սիմօնն էլ պատասխանեց
եւ ասաց. Ինձ այնպէս է երեւում, թէ նա՝ որ
նորան շատ շնորհեց. Նա էլ ասաց նորան. Ու-
44 ղիղ դատեցիր. Եւ դառնալով դէպի կինը, Սի-
մօնին ասաց. Տեսնո՞ւմ ես այս կինը. քո տունը
մտայ, իմ ոտիցը դու ջուր չես տուել, բայց սա
իր արտասունքովը ոտներս թրջեց, եւ իր գլխի
45 մազերովը սրբեց։ Դու ինձ համբոյր չես տուել.
իսկ սա՝ քանի որ այստեղ եմ մտել՝ ոտներս համ-
46 բուրելուց չդադարեց։ Դու իւղով չօծեցիր իմ
գլուխը, սա անուշահոտ իւղով օծեց իմ ոտնե-
47 րը. Վասն որոյ ասում եմ քեզ. Սորա շատ մեղ-
քերն իրան թողուած կ'լինին, վասն զի շատ սի-
րեց. բայց որին որ քիչ կ'թողուի՝ նա քիչ կ'սի-
48 րէ։ Եւ նորան ասաց. Քո մեղքերը թողուած
49 լինին քեզ։ Եւ նորա հետ սեղան նստողներին
սկսեցին իրանց մտքումն ասել. Սա ո՞վ է, որ
50 մեղք էլ է թողում։ Եւ նա ասաց այն կնոջը.

Քո հաւատքն ապրեցրեց քեզ. գնա խաղաղու-
թիւնով:

ԳԼ. Ը

1 Եւ նորանից յետոյ եղաւ որ նա էր գալիս քա-
ղաքները եւ գիւղերը քարոզելով եւ Աստուծոյ
արքայութիւնն աւետարանելով. եւ այն տասն-
2 երկուքն էլ նորա հետ, Եւ մի քանի կանայք,
որք չար ոգիներից եւ հիւանդութիւններից բը-
ժշկուած էին. Մագդաղենացի կոչուած Մարիա-
մը, որ նորանից եօթը դեւ էին դուրս եկել.
3 Եւ Յօհաննան՝ Հերովդէսի տան տեսուչ Քուզայի
կինը, եւ Շուշաննան, եւ շատ ուրիշներ, որ ի-
րանց ստացուածքներից նորան ծառայութիւն
էին անում:
4 Եւ երբոր մեծ բազմութիւն էր հաւաքուած,
եւ ամէն քաղաքից նորա մօտ եկան, առակով
5 ասաց. Սերմ ցանողը դուրս գնաց իր սերմը ցա-
նելու. եւ նա սերմը ցանելիս՝ որը ճանապարհի
մօտ ընկաւ՝ եւ կոխուեցաւ, եւ երկնքի թռ-
6 չունները նորան կերան: Եւ ուրիշը ապառաժի
վերայ ընկաւ. եւ բուսնելու ժամանակին չորա-
7 ցաւ՝ հիւթի պակասութեան պատճառովը: Եւ
ուրիշն ընկաւ փշերի մէջ, եւ փուշերը նորա
8 հետ բուսան եւ խեղդեցին նորան: Եւ ուրիշն
ընկաւ այն բարի եւ պարարտ երկրի վերայ. եւ
բուսաւ՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ. այս
բաները խօսելիս՝ աղաղակեց. Ով որ լսելու ա-
կանջ ունի՝ թող լսէ:
9 Աշակերտներն էլ նորան հարցնում էին. Թէ
10 Ի՞նչ է այն առակը: Նա էլ ասաց. Ձեզ տրուած

է Աստուծոյ արքայութեան խորհուրդները գի-
տել, բայց ուրիշներին առակներով. որ տեսնեն՝
եւ չտեսնեն, եւ լսեն՝ եւ չիմանան:
11 Արդ առակն այս է. Սերմը Աստուծոյ խօսքն
12 է: Ճանապարհի մօտերն էլ նորանք են, որ լը-
սում են. եւ յետոյ սատանան գալիս է եւ խօս-
քը նորանց սրտից հանում է, որ չհաւատան՝
13 եւ փրկուին: Ապառաժի վրայինները էլ նորանք
են, որ երբոր լսեն, խօսքը ուրախութիւնով ըն-
դունում են. եւ սորանք արմատ չունին. մի առ
ժամանակ հաւատում են, բայց փորձութեան
14 ժամանակին հեռանում են: Փշերի մէջ ընկածն
էլ նորանք են, որ խօսքը լսած են լինում, բայց
կեանքի հոգսերից եւ հարստութիւնից եւ զը-
ւարճութիւններից՝ գնալով խեղդւում են, եւ
15 անպտուղ են լինում: Բայց այն պարարտ երկրի
միջինը նորանք են, որ բարի եւ յօժար սրտով
խօսքը լսում եւ ընդունում են, եւ համբերու-
թիւնով պտուղ են տալիս:
16 Ոչ ով ճրագ չվառիլ եւ անօթով թաքցնիլ՝
կամ մահճի տակ դնիլ. այլ ճրագակալի վերայ
17 կ'դնէ, որ ներս մտնողները լոյսը տեսնեն: Քան-
զի ծածուկ բան չկայ որ չյայտնուի. եւ ոչ թա-
18 քուն բան, որ չիմացուի եւ յայտնուի: Ուրեմն
տեսէք թէ ինչպէս էք լսում. վասն զի ով որ
ունի, նորան կ'տրուի, եւ ով որ չունի, նա էլ
որ կարծում է՝ թէ ունի, նորանից վեր կ'առ-
նուի:
19 Եւ նորա մայրը եւ նորա եղբարքը նորա մօտ
եկան, եւ չէին կարողանում նորա մօտ հասնել
20 բազմութեան պատճառով: Նորան իմաց արին
եւ ասացին. Մայրդ եւ եղբարքդ դուրսը կանգ-

21 նած են՝ եւ ուզում են քեզ տեսնել։ Նա էլ պա-
տասխանեց եւ ասաց նորանց․ Իմ մայրը եւ իմ
եղբայրքը նորանք են, որ Աստուծոյ խօսքը լը-
սում են եւ անում։
22 Եւ մէկ օր եղաւ, որ նա նաւ մտաւ, եւ նո-
րա աշակերտներն էլ եւ ասաց նորանց․ Անց կե-
նանք ծովակի միւս կողմը, եւ ճանապարհ ըն-
23 կան։ Եւ երբոր նաւով գնում էին՝ նա քնեց․ եւ
քամու փոթորիկ ընկաւ այն ծովակի մէջ, եւ
24 նաւը լցվում էր, եւ վտանգի մէջ էին։ Եւ մօտ
եկան, նորան արթնացրին եւ ասացին․ Վարդա-
պետ, վարդապետ, կորչում ենք․ Նա էլ վերկա-
ցաւ, եւ քամուն ու ջրի ալեկոծութեանը սաս-
տեց եւ հանդարտեցին, եւ խաղաղութիւն ե-
25 ղաւ։ Եւ ասաց նորանց․ Ո՞ւր է ձեր հաւատքը,
եւ խիստ վախեցան զարմացան, եւ իրար ասում
էին․ Սա ո՞վ է արդեօք որ քամիներին եւ ջրե-
րին էլ է հրաման տալիս, եւ հնազանդում են
նորան։
26 Եւ նաւով գնացին Գադարացոց երկիրը, որ
27 Գալիլեայի դիմացի կողմն է։ Եւ նա ցամաքը
դուրս գնալիս, քաղաքիցը մի մարդ պատահեց
նորան, որ դեւեր ունէր բաւական ժամանակից
հետէ, եւ հագուստ չէր հագած եւ տան մէջ չէր
28 կենում, այլ գերեզմաններումը։ Եւ Յիսուսին որ
տեսաւ, աղաղակեց եւ նորա առջեւ ընկաւ, եւ
մեծ ձայնով ասաց․ Քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ,
Յիսուս՝ Որդի Բարձրեալն Աստուծոյ, աղաչում
29 եմ քեզ՝ մի տանջիր ինձ։ Քանզի նա պիղծ ո-
գուն հրամայում էր որ այն մարդուցը դուրս
գայ․ որովհետեւ շատ ժամանակ էր որ յափշտա-
կել էր նորան, եւ շղթաներով եւ ոտնակապերով

կապուած պահվում էր, բայց կապանքները կըտ-
րում էր, եւ դեւիցը անապատ տեղեր էր տար-
30 վում։ Յիսուսն էլ նորան հարցրեց՝ եւ ասաց․
Անունդ ի՞նչ է․ նա էլ ասաց․ Լէգէոն, քանզի
31 շատ դեւեր էին մտած նորա մէջ։ Եւ աղաչում
էին նորան, որ չհրամայէ նորանց գնալ անդուն-
32 դը։ Եւ այնտեղ շատ խոզերի մի երամակ կար,
որ այն լեռան վերայ արածում էին, եւ աղա-
չում էին նորան, որ հրաման տայ մտնել նորանց
33 մէջ․ եւ հրաման տուաւ նորանց։ Դեւերն էլ այն
մարդուցը դուրս եկան՝ խոզերի մէջ մտան․ եւ
երամակն այն դահավէժ տեղիցը վազեց ծովակի
34 մէջ՝ եւ խեղդուեցաւ։ Խոզարածներն էլ որ տե-
սան այն եղած բաները, փախան եւ գնացին քա-
35 ղաքի եւ շէների մէջ պատմեցին։ Եւ դուրս ե-
լան այն եղած բանը տեսնելու։ Եւ Յիսուսի մօտ
եկան, եւ նստած գտան այն մարդը որից դեւե-
րը դուրս էին եկել, հագուած եւ զգաստացած
36 Յիսուսի ոտների մօտ․ եւ վախեցան։ Եւ նո-
րանք էլ որ տեսել էին, պատմեցին նորանց, թէ
37 ինչպէս փրկուեցաւ դիւահարը։ Եւ Գադարացոց
շրջակայքի բոլոր բազմութիւնը աղաչեցին նո-
րան, որ իրանցից գնայ, վասն զի մեծ ահով բըռ-
38 նուած էին․ Նա էլ նաւ մտաւ՝ ետ դարձաւ։ Եւ
այն մարդն էլ, որից դեւերը դուրս էին եկել,
նորան աղաչում էր, որ նորա հետ լինի․ բայց
39 Յիսուսը արձակեց նորան եւ ասաց․ Դարձիր
քո տունը, եւ պատմիր ինչ որ Աստուած քեզ
արաւ․ եւ նա գնաց քարոզում էր բոլոր քաղա-
քումը ինչ որ Յիսուսը իրան արաւ։
40 Եւ եղաւ երբոր Յիսուսը ետ դարձաւ, ժողո-
վուրդն ընդունեց նորան, վասն զի ամենքն բա-

41 սպասում էին նորան։ Եւ ահա մի մարդ եկաւ՝
անունն Յայրոս, եւ նա ժողովարանի իշխանն էր.
եւ Յիսուսի ոտներն ընկնելով աղաչում էր նո-
42 րան, որ իր տունը մտնէ։ Քանզի մի միածը-
նունդ աղջիկ ունէր, իբր տասներկու տարեկան,
եւ մեռնում էր. եւ նորա գալու ժամանակ՝ ժո-
ղովուրդները նեղում էին նորան։
43 Եւ մի կին կար տասներկու տարուց հետէ
տեռատեսութեան մէջ, որ իր բոլոր ապրանքը
բժիշկների ծախսելով չէր կարացել ոչ մէկից բը-
44 ժշկուիլ։ Սա մօտ եկաւ ետեւից, նորա հան-
դերձի ծայրին դպաւ. եւ իսկոյն նորա արիւնի
45 վազելը կանգնեց։ Եւ Յիսուսը ասաց. Ով է որ
ինձ դպաւ. եւ երբոր ամենքն ուրանում էին,
ասաց Պետրոսը եւ նորա հետ լինողները. Վար-
դապետ, ժողովուրդները սղմում են քեզ եւ նե-
ղում, եւ դու ասում ես. Ո՞վ է որ ինձ դպաւ։
46 Եւ Յիսուսը ասաց. Մէկը դպաւ ինձ. վասն զի
ես իմացայ որ զօրութիւն դուրս եկաւ ինձանից։
47 Եւ երբոր տեսաւ կինը, որ ծածուկ չմնաց, դո-
ղալով եկաւ՝ նորա առջեւը ընկաւ, եւ բոլոր ժո-
ղովրդի առջեւ պատմեց նորան, թէ ինչ պատ-
ճառով նորան դպաւ, եւ թէ ինչպէս իսկոյն բը-
48 ժշկուեցաւ։ Նա էլ ասաց նորան. Քաջացիր,
դուստր, քո հաւատքը բժշկեց քեզ, գնա խա-
ղաղութիւնով։
49 Եւ նա տակաւին խօսելիս ժողովրդապետի
տանիցն մէկն եկաւ, եւ նորան ասաց. Թէ Աղ-
ջիկդ մեռաւ, մի աշխատցներ վարդապետին։
50 Բայց Յիսուսը երբոր լսեց, նորան պատասխա-
նեց եւ ասաց. Մի վախենար, միայն հաւատա,
51 եւ կ՚ապրի։ Եւ երբոր տունն էր մտնում, ոչ ո-

քի չթողեց ներս մտնել, բայց միայն Պետրոսին,
եւ Յակոբին եւ Յօհաննէսին, եւ երեխայի հօրը
52 եւ մօրը։ Եւ ամենքը լաց էին լինում եւ նորա
վերայ սուգ անում. եւ նա ասաց. Լաց մի լի-
53 նէք, մեռած չէ, այլ քնած է։ Բայց ծաղր էին
54 անում նորան, գիտելով՝ որ մեռել է։ Իսկ նա
ամենքին դուրս հանեց, եւ նորա ձեռիցը բռնե-
55 լով՝ կանչեց եւ ասաց. Աղջիկ, վեր կաց. Եւ
նորա հոգին դարձաւ, եւ իսկոյն կանգնեց. եւ
56 հրամայեց, որ նորան բան տան ուտելու։ Եւ
նորա ծնողքը զարմացան. եւ նա պատուիրեց,
որ ոչ ոքի չասեն եղածը։

ԳԼ. Թ

1 Եւ իր տասներկու աշակերտներին կանչեց իր
քով, եւ նորանց զօրութիւն եւ իշխանութիւն
տուաւ բոլոր դեւերի վերայ, եւ հիւանդութիւն-
2 ներ բժշկելու։ Եւ նորանց ուղարկեց Աստուծոյ
արքայութիւնը քարոզելու, եւ հիւանդներին բը-
3 ժշկելու։ Եւ ասաց նորանց. Ոչինչ վեր չառ-
նէք ճանապարհի համար. ոչ գաւազաններ, ոչ
պարկ, ոչ հաց, ոչ արծաթ, ոչ կրկին վերարկու
4 ունենալ։ Եւ որ տուն որ մտնէք՝ այնտեղ մնա-
5 ցէք, եւ այնտեղից դուրս գնացէք։ Եւ որոնք
որ ձեզ չընդունեն, այն քաղաքից դուրս գնա-
լիս, ձեր ոտներից փոշին էլ թօթափեցէք՝ նո-
6 րանց վկայութիւն լինելու համար։ Եւ դուրս
գնացին՝ եւ ման էին գալիս գիւղերը աւետարա-
նը քարոզելով, եւ ամեն տեղ բժշկութիւններ
անելով։
7 Եւ Հերովդէս չորրորդապետը լսեց նորանից ե-

ղած բոլոր գործերը․ եւ տարակուսանաց մէջ էր
8 նորա համար՝ որ ոմանք ասում էին․ Թէ Յօ֊
հաննէսը մեռելներից յարութիւն է առել, եւ ո֊
մանք էլ, թէ Եղիան յայտնուել է․ եւ ուրիշնե֊
րը․ թէ Առաջի մարգարէներից մէկը յարութիւն
9 է առել․ Եւ Հերոդէսն ասաց․ Յօհաննէսին ես
գլխատեցի․ բայց սա ո՞վ է, որի մասին այս֊
պիսի բաներ եմ լսում․ եւ ուզում էր տեսնել
նորան։
10 Եւ առաքեալները դարձան եւ պատմեցին նո֊
րան ինչ որ արին․ եւ նորանց առաւ եւ գնաց
առանձին մի անապատ տեղ՝ մի քաղաքի մօտ,
11 որ կոչվում էր Բեթսայիդա։ Եւ ժողովուրդներն
իմանալով, նորա ետեւից գնացին․ եւ նորանց
հետ Աստուծոյ արքայութեան մասին խօսում
էր, եւ նորանց՝ որ բժշկութեան կարօտ էին՝
բժշկում էր։
12 Եւ օրն սկսեց մթնել․ տասներկուքն էլ մօտ
եկան եւ ասացին նորան․ արձակիր այդ ժողո֊
վուրդը, որ շրջակայ գիւղերը եւ շէները գնան,
հանգիստ առնեն, եւ կերակուր գտնեն․ վասն զի
13 այստեղ անապատ տեղում ենք։ Եւ նորանց ա֊
սաց․ Դուք տուէք դորանց ուտել․ նորանք էլ
ասացին․ Մենք հինգ հացից եւ երկու ձկնից ա֊
ւելի չունինք, եթէ ոչ՝ գնանք այդ բոլոր ժողո֊
14 վրդի համար կերակուր գնենք։ Վասն զի հինգ
հազարի չափ մարդիկ էին․ եւ իր աշակերտնե֊
րին ասաց․ Նստեցրէք դորանց դաս դաս յիսուն
15 յիսուն։ Եւ այնպէս արին, եւ ամենքին նստե֊
16 ցին։ Եւ այն հինգ հացն եւ երկու ձուկն ա֊
ռաւ, դէպի երկինքը նայեց, օրհնեց նորանց եւ
կոտրեց, եւ տալիս էր աշակերտներին, որ ժողո֊

17 վրդի առջեւ դնեն։ Ամենքը կերան եւ կշտա֊
ցան․ եւ կոտորների փշրանքները վեր առին տասն
երկու քթոց։
18 Եւ եղաւ, երբոր նա առանձին աղօթք էր ան֊
ում, աշակերտներն էլ նորա հետ էին․ եւ հարց֊
րեց նորանց եւ ասաց․ Ժողովուրդներն ինձ հա֊
19 մար ո՞վ են ասում, թէ լինիմ։ Նորանք էլ պա֊
տասխանեցին եւ ասացին․ Յօհաննէս մկրտիչը,
ուրիշներն էլ՝ Եղիան, ուրիշներն էլ․ թէ Առաջի
20 մարգարէներից մէկը յարութիւն է առել։ Եւ նո֊
րանց ասաց․ Բայց դուք ո՞վ էք ասում ինձ հա֊
մար թէ լինիմ․ Պետրոսը պատասխանեց եւ ա֊
21 սաց․ Աստուծոյ Քրիստոսը։ Նա էլ սաստեց նո֊
րանց, եւ պատուիրեց՝ որ այս բանը ոչ ոքի չա֊
22 սեն։ Եւ ասաց․ Թէ Պէտք է Որդին մարդոյ շատ
չարչարուի եւ անարգուի ծերերից եւ քահա֊
նայապետներից եւ դպիրներից, եւ սպանուի
23 եւ երրորդ օրումը յարութիւն առնէ։ Եւ ամեն֊
քին ասում էր․ Եթէ մէկը կամենում է իմ ե֊
տեւից գալ, թող իր անձն ուրանայ եւ ամեն օր
24 իր խաչն առնէ եւ իմ ետեւից գայ։ Վասն զի
ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կ'կորցնէ
նորան․ եւ ով որ իր անձն կորցնէ ինձ համար՝
25 նա կ'ապրեցնէ նորան։ Քանզի ի՞նչ օգուտ է
մարդոյ, որ բոլոր աշխարհքս ստանայ, եւ իր
26 անձը կորցնէ, կամ վնասուի։ Վասն զի ով որ
ինձ եւ իմ խօսքերն ամօթ համարէ, Որդին մար֊
դոյ էլ նորան ամօթ կ'համարէ, երբոր գայ իր
27 Հօրը եւ սուրբ հրեշտակների փառքովը։ Բայց
ճշմարիտ ասում եմ ձեզ․ Այստեղ կանգնածնե֊
րից ոմանք կան, որ մահ չեն ճաշակիլ, մինչեւ
որ Աստուծոյ արքայութիւնն տեսնեն։

28 Եւ եղաւ, որ այս խօսքերիցն ութ օրի չափ
յետոյ, Պետրոսին եւ Յօհաննէսին եւ Յակոբին
29 առաւ՝ եւ վեր ելաւ լեառը աղօթք անելու ։ Եւ
եղաւ որ նա աղօթք անելիս, նորա երեսի կեր-
պարանքն ուրիշ կերպ եղաւ. եւ նորա հագուս-
30 տը սպիտակ փայլուն եղաւ ։ Եւ ահա երկու
մարդ խօսում էին նորա հետ. որ Մօսէսն եւ
31 Եղիան էին, Նորանք փառքով երեւեցած խօս-
ում էին նորա վախճանի համար, որ Երուսաղէ-
32 մումն կատարելու էր ։ Բայց Պետրոսը եւ նորա
հետ լինողները քնով ծանրացած էին, եւ երբոր
զարթնեցան՝ տեսան նորա փառքը, եւ այն եր-
33 կու մարդկանց որ նորա մօտ կանգնած էին ։ Եւ
եղաւ որ նորանք նորանից հեռանալիս, Պետրոսն
ասաց Յիսուսին. Վարդապետ, լաւ է մեզ հա-
մար այստեղ կենալ, եւ երեք տաղաւար շինենք,
մէկը քեզ համար. եւ մէկը Մօսէսին, եւ մէկը
34 Եղիային, եւ չէր գիտում՝ ինչ է խօսում ։ Եւ
երբոր նա այս ասում էր, մի ամպ եղաւ եւ նո-
րանց վերայ հովանի արաւ. եւ վախեցան երբոր
35 այն ամպի մէջ մտան ։ Եւ ձայն եղաւ ամպից,
որ ասաց. Դա է իմ սիրելի Որդին, դորան լսե-
36 ցէք ։ Եւ այն ձայնն որ եղաւ, Յիսուսը մէնակ
գտնուեցաւ. եւ նորանք լռեցին, եւ այն օրեր-
ումն ոչ ոքի ոչինչ չպատմեցին այն բաներից,
որ տեսան ։
37 Եւ հետեւեալ օրը եղաւ որ նորանք լեառնից
իջնելիս, շատ ժողովուրդ նորա առջեւն ելաւ ։
38 Եւ ահա ժողովրդից մի մարդ աղաղակեց եւ
ասաց. Վարդապետ, աղաչում եմ քեզ, մտիկ
39 տուր իմ որդոյն, որովհետեւ միածնունդս է ։ Եւ
ահա ոգի բռնում է նորան, եւ յանկարծ գոռում

է, եւ նորան գետնով է տալիս փրփրեցնելով, եւ
հազիւ հեռանում է նորանից՝ նորան կոտրատե-
40 լուց յետոյ ։ Եւ ես քո աշակերտներին աղաչեցի,
41 որ հանեն նորան, բայց չկարացին ։ Յիսուսն էլ
պատասխանեց եւ ասաց. Ով անհաւատ եւ թիւր
ազգ, մինչեւ ե՞րբ ձեզ հետ պիտի լինիմ եւ համ-
42 բերեմ ձեզ. քո որդին այստեղ բեր ։ Եւ նա դեռ
մօտ գալիս՝ դեւը գետնով զարկեց նորան եւ շատ
43 սաստիկ թափահարեց ։ Իսկ Յիսուսը սաստեց
պիղծ ոգուն, եւ տղային բժշկեց. եւ նորան տը-
44 ուաւ իր հօրը ։ Եւ ամենքը զարմանում էին Աս-
տուծոյ մեծափառութեան վերայ ։
Եւ երբոր ամենքը զարմանում էին այն բոլոր
բաների վերայ, որ Յիսուսը անում էր, իր աշա-
կերտներին ասաց. Այս խօսքերը դուք ձեր ա-
կանջներում դրէք. վասն զի Որդին մարդոյ
45 մարդկանց ձեռքն է մատնուելու ։ Բայց նորանք
չէին իմանում այն խօսքը եւ ծածկուած էր նո-
րանցից, որ չհասկնան նորան. եւ վախում էին
հարցնել նորան այն բանի համար ։
46 Մի խորհուրդ էլ մտաւ նորանց մէջ՝ այն թէ
47 նորանցից ով լինի մեծը ։ Յիսուսն էլ նորանց
սրտերի մտածմունքներն իմանալով մի երեխայ
48 առաւ՝ եւ նորան կանգնեցրեց իրան մօտ, Եւ
ասաց նորանց. Ով որ այս երեխային ընդունի
իմ անունովը. ինձ է ընդունում. եւ ով որ ինձ
ընդունի, ինձ ուղարկողին է ընդունում. քանզի
ով որ ձեր ամենից մէջ շատ փոքրն է, նա մեծ
կ՚լինի ։
49 Յօհաննէսն էլ պատասխանեց եւ ասաց. Վար-
դապետ, մէկը տեսանք, որ քո անունովը դեւեր
էր հանում, եւ արգելեցինք նորան, քանզի մեզ

50 հետ չէ ման գալիս։ Եւ Յիսուսը նորանց ասաց.
Մի արգելէք նորան. քանզի ով որ մեզ հակա-
ռակ չէ, մեր կողմն է։
51 Եւ եղաւ, երբոր նորա վերանալու օրերը կա-
տարվում էին, եւ նա իր երեսը հաստատեց՝ որ
52 գնայ Երուսաղէմ։ Եւ իր երեսի առջեւն պատ-
գամաւորներ ուղարկեց. եւ գնացին՝ Սամարա-
ցոց մի գիւղը մտան, որ նորա համար բան պատ-
53 րաստեն։ Բայց չընդունեցին նորան, վասն զի
նորա երեսը ուղղուած էր Երուսաղէմ գնալու։
54 Երբոր նորա աշակերտները Յակոբոս եւ Յօհան-
նէս տեսան՝ ասացին. Տէր՝ կամենո՞ւմ ես ասենք,
կրակ իջնէ երկնքից եւ նորանց սատկեցնէ,
55 ինչպէս Եղիան էլ արաւ։ Նա էլ դարձաւ՝ սաս-
տեց նորանց եւ ասաց. Չէ՛ք գիտում՝ որ հոգոյ
56 էք դուք։ Քանզի Որդին մարդոյ չեկաւ՝ մարդ-
կանց հոգիները կորցնելու, այլ ապրեցնելու. եւ
գնացին ուրիշ գիւղ։
57 Եւ եղաւ որ նորանք գնալիս, ճանապարհին
մի մարդ նորան ասաց. Ես քո ետեւից կ'գամ՝
58 որ տեղ որ գնաս, Տէր։ Յիսուսն էլ նորան ա-
սաց. Աղուէսները որջեր ունին, եւ երկնքի թըռ-
չունները բոյներ. բայց Որդին մարդոյ տեղ չու-
նի, որ գլուխը դնէ։
59 Մի ուրիշին էլ ասաց. Իմ ետեւիցն եկ. եւ նա
ասաց. Տէր, հրաման տուր, որ գնամ առաջ իմ
60 հայրը թաղեմ։ Յիսուսը նորան ասաց. Թող մե-
ռելներն իրանց մեռելներին թաղեն. իսկ դու
գնա Աստուծոյ արքայութիւնը քարոզիր։
61 Մի ուրիշն էլ ասաց. Տէր, քո ետեւից կը
գամ. միայն թէ առաջ հրաման տուր ինձ, որ
62 իմ տանը բարեւ մնա անեմ։ Յիսուսն էլ նորան

ասաց. Ոչ ով որ ձեռքը մաճի վերայ է դնում
եւ ետեւին մտիկ անում, յարմար չէ Աստուծոյ
արքայութեան համար։

Գլ. Ժ

1 Սորանցից յետոյ Տէրն ուրիշ եօթանասուն հոգի
էլ կարգեց, եւ նորանց երկու երկու իր երեսի
առջեւ ուղարկեց այն բոլոր քաղաքներն եւ տե-
2 ղերն, որ տեղ որ ինքն գնալու էր։ Եւ ասում
էր նորանց. Հունձքը շատ է, բայց մշակները
քիչ. ուրեմն աղաչեցէք հնձի Տիրոջն, որ մշակ-
3 ներ հանէ իր հունձի մէջ։ Գնացէք. ահա ես ու-
ղարկում եմ ձեզ ինչպէս գառներ գայլերի մէջ։
4 Վեր մի առնէք ոչ քսակ, ոչ պարկ, ոչ կօշիկ-
5 ներ. եւ ճանապարհին ոչ ոքի բարեւ չտաք։ Եւ
որ տուն որ մտնէք, առաջ ասացէք՝ Խաղաղու-
6 թիւն այս տանը։ Եւ թէ որ այնտեղ խաղաղու-
թեան որդի լինի, ձեր խաղաղութիւնը նորա վե-
րայ կ'մնայ. ապա թէ ոչ՝ դէպի ձեզ ետ կ'դառ-
7 նայ։ Եւ այն տանը մնացէք, նորանց ունեցածի-
ցը կերէք եւ խմեցէք. քանզի մշակն իր վարձ-
8 քին արժանի է. տանից տուն մի փոխուիք։ Եւ
որ քաղաք որ մտնէք, եւ ձեզ ընդունին, կերէք՝
9 ինչ որ կ'դնեն ձեր առջեւն։ Եւ նորա միջի հի-
ւանդներին բժշկեցէք. եւ նորանց ասացէք՝ Թէ
Աստուծոյ արքայութիւնը մօտացել է ձեզ վե-
10 րայ։ Բայց որ քաղաք որ մտնէք, եւ ձեզ չըն-
դունին՝ դուրս նորա հրապարակները գալով ա-
11 սացէք. Այն փոշին էլ. որ ձեր քաղաքից մեր
ոտներին է կպել, թօթափում ենք ձեզ վերայ.
միայն թէ սա գիտացէք, որ Աստուծոյ արքայու-

12 թիւնը մօտեցել է ձեզ։ Եւ ասում եմ ձեզ․ որ
Սոդոմացոց համար աւելի հեշտ կ'լինի այն օր-
13 ումը՝ քան թէ այն քաղաքին։ Վայ քեզ, Քո-
րազին․ վայ քեզ, Բեթսայիդա․ քանզի եթէ Տիւ-
րոսի եւ Սիդօնի մէջ եղած լինէին այն զօրու-
թիւնները՝ որ ձեր մէջ եղան, վաղուց քուրձի
14 եւ մոխրի մէջ նստած ապաշխարել էին։ Սա-
կայն Տիւրոսի եւ Սիդօնի համար աւելի հեշտ կը
15 լինի դատաստանումը քան թէ ձեզ։ Եւ դու՝
Կափառնայում, որ մինչեւ երկինքը բարձրացած
16 ես, մինչեւ դժոխքը պիտի ցածնաս։ Ով որ
ձեզ է լսում, ինձ է լսում․ եւ ով որ ձեզ է ան-
արգում, ինձ է անարգում․ եւ ով որ ինձ է ան-
արգում, ինձ ուղարկողին է անարգում։
17 Եւ այն եօթանասունքը ուրախութիւնով ետ
դարձան եւ ասացին․ Տէր, դեւերն էլ հնազան-
18 դում են մեզ քո անունով։ Եւ նորանց ասաց․
Տեսնում էի սատանային, որ կայծակի պէս եր-
19 կնքից վայր էր ընկնում։ Ահա իշխանութիւնը
տուի ձեզ, որ կոխէք օձերի եւ կարիճների վե-
րայ եւ թշնամու բոլոր զօրութեանը վերայ, եւ
20 ձեզ ոչինչ վնաս չի անիլ։ Սակայն նորա համար
մի ուրախանաք՝ որ ոգիները ձեզ հնազանդում
են, բայց աւելի ուրախացէք, որ ձեր անուն-
ները երկինքումն գրուած են։
21 Նոյն ժամումն Յիսուսը Հոգովը ցնծաց եւ ա-
սաց․ Գոհանում եմ քեզանից, Հայր, երկնքի եւ
երկրի Տէր, որ իմաստուններից եւ գիտուններից
այս բաները ծածկեցիր եւ տղայոց յայտնեցիր։
Այո, ով Հայր․ վասն զի այսպէս հաճոյ եղաւ
22 քո առջեւ։ Ամեն բան տրուեցաւ ինձ իմ Հօրի-
ցը․ եւ ոչ ով չէ գիտում՝ թէ ով է Որդին, բայց

միայն Հայրը․ եւ ով է Հայրը՝ բայց միայն Որ-
դին, եւ ում Որդին կամենայ յայտնել։
23 Եւ դարձաւ դէպի աշակերտներն առանձին՝
եւ ասաց․ Երանի այն աչքերին՝ որ տեսնում են
24 այն որ դուք տեսնում էք։ Վասն զի ասում եմ
ձեզ․ թէ Շատ մարգարէներ եւ թագաւորներ
կամեցան տեսնել այն որ դուք էք տեսնում, եւ
չտեսան․ եւ լսել այն որ դուք էք լսում, եւ
չլսեցին։
25 Եւ ահա մէկ օրինական վերկացաւ՝ նորան
փորձում էր ասելով․ Վարդապետ, ի՞նչ գործեմ
26 որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։ Նա էլ
ասաց նորան։ Օրէնքումն ի՞նչ է գրուած, ինչ-
27 պէս ես կարդում։ Նա էլ պատասխանեց եւ ա-
սաց․ Սիրիր քո Տէր Աստուածը քո բոլոր սըր-
տիցը, քո բոլոր անձիցը, քո բոլոր զօրութիւ-
նիցը, եւ քո բոլոր մտքիցը․ եւ քո ընկերը քո
28 անձի պէս։ Եւ նորան ասաց․ Ուղիղ պատաս-
29 խանեցիր․ այդ արա՝ եւ կ'ապրիս։ Իսկ նա՝ ո-
րովհետեւ կամենում էր իր անձն արդարացնել՝
30 Յիսուսին ասաց․ Եւ իմ ընկերն ո՞վ է։ Յիսուսն
էլ պատասխանեց եւ ասաց․ Մի մարդ Երուսա-
ղէմից իջնում էր Երիքով․ եւ աւազակների ձեռք
ընկաւ, նորանք էլ մերկացրին նորան՝ եւ խոցո-
31 տեցին նորան, կիսամահ թողին՝ գնացին։ Եւ
դիպուածով մի քահանայ էր իջնում նոյն ճանա-
32 պարհովը, եւ նորան տեսաւ՝ անցաւ։ Նոյնպէս
էլ մի Ղեւտացի այն տեղն հասաւ՝ եկաւ եւ տե-
33 սաւ անցաւ։ Մի Սամարացի էլ, որ ճանապար-
հորդում էր, եկաւ այնտեղ եւ նորան տեսնելով
34 գթաց։ Եւ մօտ եկաւ՝ նորա խոցերը փաթաթեց
վերան ձէթ եւ գինիածելով․ եւ իր անասունի

վերայ դրած տարաւ նորան մի իջեւան, եւ նո-
35 րան հոգ տարաւ։ Եւ հետեւեալ օրն երբոր այն
տեղիցն դուրս էր գնում, երկու դահեկան հա-
նեց եւ իջեւանի տիրոջը տուաւ եւ ասաց նո-
րան. Դորան հոգ տար, եւ ինչ որ դորա համար
ծախք անես, ես միւսանգամ ետ դառնալիս կը
36 վճարեմ քեզ։ Հիմա այն երեքից ո՞րն է երեւ-
ում քեզ՝ թէ ընկեր է եղել այն աւազակների
37 ձեռք ընկած մարդուն։ Նա էլ ասաց. Նա՛ որ
ողորմութիւն արաւ նորան։ Ապա Յիսուսը նո-
րան ասաց. Գնա, դու էլ այնպէս արա։
38 Եւ եղաւ որ նորանք գնալիս, ինքն էլ մի գիւղ
մտաւ. եւ մի կին՝ անունը Մարթա՝ ընդունեց
39 նորան իր տունը։ Եւ նա մի քոյր ունէր՝ անունը
Մարիամ. եւ սա Տիրոջ ոտների մօտ նստեց,
40 եւ նորա խօսք լսում էր։ Մարթան էլ ծառա-
յութեան համար շատ զբաղմունքի մէջ էր. էկա-
կանգնեց եւ ասաց. Տէր, հոգդ չէ՞ որ քոյրս ինձ
մենակ թողեց ծառայելու. ուրեմն ասա դորան
41 որ օգնէ ինձ։ Պատասխանեց Յիսուսը եւ ասաց
նորան. Մարթա Մարթա՝ դու հոգս ես քաշում
42 եւ շատ բաներով զբաղուած ես. Բայց մէկ բան
է պէտք. Մարիամը բարի բաժինն ընտրեց, որ
վեր չի առնուիլ նորանից։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղաւ որ մի տեղ աղօթք էր անում. եւ
երբոր դադարեց, իր աշակերտներից մէկը ասաց
նորան. Տէր, սովորեցրու մեզ աղօթք անել,
ինչպէս Յոհաննէսն էլ իր աշակերտներին սովո-
2 րեցրեց։ Եւ ասաց նորանց. Երբոր աղօթք ա-
նէք, ասացէք. Մեր Հայր, որ երկնքումն ես,

քո անունը սուրբ լինի, քո արքայութիւնը գայ։
Քո կամքն լինի՝ ինչպէս երկնքումն այնպէս էլ
3 երկրիս վերայ։ Մեր ամեն օրուայ հացը օրէց օր
4 տուր մեզ։ Եւ թող մեզ մեր մեղքերը. քանզի
մենք էլ թողում ենք ամենին, որ պարտական
է մեզ. եւ մեզ փորձանքի մէջ մի տանիր, այլ
փրկիր մեզ չարից։
5 Եւ նորանց ասաց. Ձեզանից ո՞վ է, որ բա-
րեկամ ունենայ, եւ կէս գիշերին նորա մօտ գը-
նայ, եւ նորան ասէ. Բարեկամ, ինձ երեք հաց
6 փոխ տուր. Որովհետեւ իմ բարեկամն ինձ մօտ
եկաւ ճանապարհից, եւ բան չունիմ՝ որ նորա
7 առջեւ դնեմ։ Եւ նա պատասխանէ ներսից եւ
ասէ. Մի յոգնեցներ ինձ. դուռն արդէն փակ-
ուած է, եւ երեխաներս ինձ հետ անկողնումն
8 են. չեմ կարող վեր կենալ եւ տալ քեզ։ Ասում
եմ ձեզ. Եթէ վեր էլ չկենայ եւ նորան տայ,
նորա բարեկամ լինելու համար, սակայն նորա
աներեսութեան համար վեր կ'կենայ եւ կ'տայ
9 նորան ինչ որ էլ պէտք լինի։ Եւ ես ասում եմ
ձեզ. Խնդրեցէք՝ եւ կ'տրուի ձեզ, որոնեցէք եւ
կ'գտնէք, դուռը թակեցէք՝ եւ կ'բացուի ձեզ։
10 Վասն զի ամեն ով որ խնդրում է՝ առնում է,
եւ ով որ որոնում է՝ գտնում է, եւ ով որ դու-
11 ռը թակում է՝ բացւում է նորան։ Եւ ձեզանից
ո՞ր հօրից իր որդին հաց ուզէ, մի՞թէ քար կը
տայ նորան. կամ եթէ ձուկ՝ մի՞թէ ձկան տեղ
12 օձ կ'տայ նորան։ Եւ կամ ձու ուզէ, մի՞թէ կա-
13 րիճ կ'տայ նորան։ Արդ եթէ դուք, որ չար էք՝
գիտում էք բարի պարգեւներ տալ ձեր որդոցը,
էլ ո՞րքան աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին
կ'տայ նորանց, որ ուզում են նորանից։

14 Եւ մի դեւ էր հանում, որ համր էր․ եւ եղաւ
որ դեւը դուրս գալիս համրը խօսեց․ եւ ժողո-
15 վուրդները զարմացան։ Եւ նորանցից ոմանք ա-
սացին․ Դա դեւերի իշխան Բէեղզեբուղով է
16 հանում դեւերը։ Ուրիշներն էլ փորձելով մի
17 նշան էին խնդրում նորանից երկնքից։ Բայց
նա նորանց մտածմունքները իմանալով ասաց նո-
րանց․ Ամեն թագաւորութիւն որ իր մէջ բաժան-
ուած է՝ կ'աւերուի, եւ տուն՝ տան դէմ բաժան-
18 ուած կ'կործանուի։ Ապա եթէ սատանան ինքն
իրան դէմ բաժանուած է, նորա թագաւորու-
թիւնն ինչպէս կ'կենայ․ վասն զի ասում էք,
19 ես Բէեղզեբուղով եմ հանում դեւերը։ Եթէ ես
Բէեղզեբուղով եմ հանում դեւերը, ապա ձեր
որդիքն ինչով են հանում․ դորա համար նորանք
20 կ'լինին ձեր դատաւորները։ Բայց եթէ Աստու-
ծոյ մատով եմ հանում դեւերն․ ուրեմն Աստու-
21 ծոյ արքայութիւնը ձեզ վերայ հասել է։ Երբոր
զօրաւորը զինուորուած իր տունը պահէ, նորա
22 ստացուածքը խաղաղութեան մէջ են։ Բայց ե-
թէ նորանից էլ աւելի զօրաւորը գայ՝ նորան
յաղթէ, նորա զէնքերը՝ որ յոյսն նորանց վերայ
23 էր դրել, կ'հանէ եւ նորա աւարը կ'բաժանէ։ Ով
որ ինձ հետ չէ՝ ինձ հակառակ է, եւ ով որ ինձ
հետ չէ ժողովում՝ ցրւում է։

24 Երբոր պիղծ ոգին դուրս է գալիս մարդուցը՝
անջուր տեղերանքում ման է գալիս եւ հան-
գիստ որոնում․ եւ երբոր չէ գտնում՝ ասում է․
Ես դառնամ իմ տունը՝ որտեղից դուրս եկայ։
25 Եւ գալիս՝ նորան սրբուած եւ զարդարուած է
26 գտնում։ Այն ժամանակ գնում է եւ իրանից էլ
աւելի չար եօթն ոգիներ է առնում՝ եւ մտնում

բնակվում է այնտեղ, եւ այն մարդու յետինն ա-
ւելի չար է լինում քան թէ առաջինը։

27 Եւ եղաւ որ նա այս խօսելիս, ժողովրդի մի-
ջիցը մի կին ձայն բարձրացրեց եւ ասաց․ Երա-
նի այն փորին՝ որ քեզ կրեց, եւ այն ծծերին՝
28 որ քեզ ծծեցրին։ Նա էլ ասաց․ Այո՛, երանի
նորանց, որ Աստուծոյ խօսքը լսում են եւ նո-
րան պահում։

29 Եւ երբոր ժողովուրդները նորա վերայ դիզվում
էին, սկսեց ասել․ Այս ազգը չար է․ նշան է
խնդրում, եւ նշան չի տրուիլ նորան՝ բայց մի-
30 այն Յօնան մարգարէի նշանը։ Վասն զի ինչպէս
Յօնան նշան եղաւ Նինուէացոց համար, այնպէս
31 էլ Որդին մարդոյ այս ազգին կ'լինի։ Հարաւի
թագուհին դատաստանումը վեր կ'կենայ այս ազ-
գի մարդկանց հետ եւ կ'դատապարտէ նորանց,
որովհետեւ երկրի ծայրերիցն եկաւ Սողոմոնի ի-
մաստութիւնը լսելու, եւ ահա Սողոմոնիցն էլ
32 աւելին է այստեղ։ Նինուէի մարդիկը դատաս-
տանումը վեր կ'կենան այս ազգի հետ եւ կ'դա-
տապարտեն նորան, որովհետեւ նորանք Յօնա-
նու քարոզութիւնով ապաշխարեցին․ եւ ահա
Յօնանից էլ աւելին է այստեղ։

33 Ոչ ով ճրագը չէ վառում եւ թաքուն տեղ դը-
նում եւ ոչ գրուանի տակ, այլ ճրագակալի վե-
34 րայ, որ ներս մտնողները լոյսը տեսնեն։ Մարմ-
նոյ ճրագն աչքն է, արդ երբոր աչքդ պարզ է,
բոլոր մարմինդ պարզ կ'լինի․ բայց երբոր չար
35 է, մարմինդ էլ խաւար կ'լինի։ Ուրեմն զգոյշ
կաց, մի գուցէ այն լոյսն որ քեզանում է, խա-
36 ւար լինի։ Եթէ բոլոր մարմինդ լուսաւոր է, եւ
ոչ մի խաւար մասն չկայ, բոլորը լուսաւոր կը

լինի․ ինչպէս երբոր ճրագն իր ճառագայթովը
լուսաւորէ քեզ։
37 Եւ նա այս խօսելիս, մէկ Փարիսեցի աղա-
չում էր նորան, որ նորա մօտ հաց ուտէ․ եւ
38 նա մտաւ սեղան նստեց։ Փարիսեցին էլ տես-
նելով զարմացաւ, որ ճաշից առաջ չլուացուեց։
39 Տէրն էլ ասաց նորան․ Հիմա դուք Փարիսեցիներդ
բաժակի եւ պնակի դրսի կողմը սրբում էք․ բայց
ձեր ներսը լիքն է յափշտակութիւնով եւ չարու-
40 թիւնով։ Անմիտներ, չէ՞ որ դուրսը անողը ներսն
41 էլ արաւ։ Բայց ջեր ունեցածից ողորմութիւն
տուէք, եւ ահա ամէն բաներ սուրբ են ձեզ համար։
42 Բայց վայ ձեզ Փարիսեցիներիդ, որ անանուխի եւ
փեգենայի եւ ամէն բանջարի տասանորդ էք տա-
լիս, եւ Աստուծոյ իրաւունքը եւ սէրը զանց էք
անում․ այս պէտք էր անել, եւ նորանք չթողել։
43 Վայ ձեզ Փարիսեցիներիդ, որ ժողովարանների
մէջ առաջի աթոռներն էք սիրում, եւ հրապա-
44 րակներում բարեւները։ Վայ ձեզ՝ դպիրներիդ
եւ Փարիսեցիներիդ, կեղծաւորներ, որ դուք այն
գերեզմանների պէս էք, որ անյայտ են, եւ մար-
դիկը որ նորանց վերայ գնում են՝ չեն գիտում։
45 Եւ պատասխանեց օրէնսականներից մէկը եւ
ասաց նորան․ Վարդապետ այդ ասելով մեզ էլ
46 ես նախատինք տալիս։ Նա էլ ասաց․ Եւ ձեզ
օրէնսականներիդ էլ վայ․ քանզի դժուար տա-
նելի բեռներ էք բեռնում մարդկանց, եւ դուք
ձեր մատների մէկովը չէք մօտենում այն բեռ-
47 ներին։ Վայ ձեզ, որ մարգարէների գերեզման-
ները շինում էք, եւ հէնց ձեր հարքն սպանեցին
48 նորանց։ Ապա ուրեմն վկայում էք եւ հաւան-
ում էք ձեր հարանց գործքերին․ որովհետեւ նո-

րանք կոտորեցին նորանց, եւ դուք շինում էք
49 նորանց գերեզմանները։ Սորա համար Աստու-
ծոյ իմաստութիւնն էլ ասաց․ Մարգարէներ եւ
առաքեալներ կ՚ուղարկեմ նորանց մօտ, եւ նո-
50 րանցից կ՚սպանեն եւ կ՚հալածեն։ Որ բոլոր մար-
գարէների արիւնն, որ աշխարհքի սկզբիցը թափ-
51 ուած է, այս ազգիցը պահանջուի, Աբէլի ար-
իւնիցը մինչեւ Զաքարիայի արիւնը, որ սեղանի
եւ տաճարի մէջ կորաւ․ Այո՛, ասում եմ ձեզ,
52 այս ազգիցը կ՚պահանջուի։ Վայ ձեզ՝ օրէնսական-
ներիդ, որ գիտութեան բանալիքը վեր էք ա-
ռել․ դուք չէք մտել, եւ մտնողներին էլ արգե-
լել էք։
53 Եւ երբոր այս բաներն ասում էր նորանց, դպ-
իրները եւ Փարիսեցիներն սկսեցին սաստիկ
ստիպել, եւ շատ բաների համար նորա հետ հա-
54 կառակել․ Եւ նորան աչքի տակ առած՝ ուզում
էին նորա բերանիցը մի բան որսալ, որ ամբաս-
տանեն նորան։

Գլ․ ԺԲ

1 Այն միջոցին երբոր հազարներով ժողովուրդ-
ները գիզվում էին՝ մինչեւ որ իրար կոխ էին
տալիս, սկսեց իր աշակերտներին ասել․ Առաջ
ձեր անձերը զգոյշ պահեցէք Փարիսեցոց խմորի-
2 ցը, որ է կեղծաւորութիւնը։ Վասն զի ոչինչ
չկայ ծածուկ, որ չյայտնուի․ եւ թաքուն, որ
3 չիմացուի։ Ուստի ինչ որ խաւարումն ասեցիք,
լուսոյ մէջ կ՚լսուի․ եւ ինչ որ ներսի սենեակ-
ներումն ականջում խօսեցիք, կտուրների վերայ
4 կ՚քարոզուի։ Բայց ասում եմ ձեզ՝ իմ սիրելինե-

րին․ Մի վախենաք նորանցից՝ որ մարմինն ըս-
պանում են, եւ նորանից յետոյ աւելի բան չու-
5 նին՝ որ անեն։ Բայց ցոյց տամ ձեզ, թէ ումից
պէտք է վախենաք․ Նորանից վախեցէք, որ ըս-
պանելուց յետոյ իշխանութիւն ունի գեհենի մէջ
գցելու․ այո՛, ասում եմ ձեզ՝ Նորանից վախե-
6 ցէք։ Չէ՞ որ հինգ ճնճղուկ երկու դանգի են
ծախվում․ եւ նորանցից մէկն էլ Աստուծոյ ա-
7 ռաջեւ մոռացուած չէ։ Բայց ձեր գլխի բոլոր մա-
զերն էլ համարուած են․ ուրեմն մի վախենաք,
վասն զի դուք շատ ճնճղուկներից աւելի լաւ
8 էք։ Իսկ ասում եմ ձեզ․ թէ Ամեն ով որ ինձ
մարդկանց առջեւ դաւանէ, Որդին մարդոյ էլ
նորան կ՚դաւանէ Աստուծոյ հրեշտակների առ-
9 ջեւ։ Եւ ով որ ինձ ուրանայ մարդկանց առջեւ,
նա էլ կ՚ուրացուի Աստուծոյ հրեշտակների առ-
10 ջեւ։ Եւ ամեն ով որ Որդոյ մարդոյ դէմ բան
ասէ, կ՚թողուի նորան․ բայց ով որ Սուրբ Հո-
11 գոյն դէմ հայհոյեց, նորան չի թողուիլ։ Եւ երբ-
որ տանեն ձեզ ժողովարանները եւ դատաւոր-
ների եւ պետութիւնների առջեւ, հոգս մի ա-
նէք՝ թէ ինչպէս ու ինչ պատասխանէք, կամ
12 ինչ ասէք։ Վասն զի Սուրբ Հոգին նոյն ժամու-
մը կ՚սովորեցնէ ձեզ՝ թէ ինչ պէտք է խօսել։
13 Եւ ժողովրդից մէկն ասաց նորան․ Վարդա-
պետ, իմ եղբօրն ասա, որ ժառանգութիւնն ինձ
14 հետ բաժանէ։ Նա էլ ասաց․ Մարդ, ո՞վ կար-
գեց ինձ ձեզ վերայ դատաւոր կամ բաժանարար։
15 Եւ նորանց ասաց․ Տեսէք եւ զգոյշ կացէք ա-
գահութիւնից, քանզի մարդուս ապրանքների
16 առաւելութիւնից չէ նորա կեանքը։ Եւ նորանց
մի առակ խօսեց եւ ասաց․ Մի հարուստ մար-

17 դոյ արտը առատ պտուղ տուաւ։ Եւ իր մըտ-
քումը մտածում էր եւ ասում․ Ի՞նչ անեմ, որ
տեղ չունիմ որ իմ պտուղներն այնտեղ ժողո-
18 վեմ։ Եւ ասաց․ Այս կ՚անեմ․ իմ շտեմարանները
քանդեմ, եւ աւելի մեծերը շինեմ, եւ իմ բոլոր
19 բերքերն ու բարիքները այնտեղ ժողովեմ։ Եւ
իմ անձին ասեմ․ Ով անձն, շատ բարիքներ ու-
նիս շատ տարիների համար ամբարուած․ հանգ-
20 չիր, կեր, խմիր, զուարճացիր։ Բայց Աստուած
նորան ասաց․ Անմիտ․ իսկ այս գիշերումը հո-
գիդ քեզանից ետ կ՚պահանջեն․ ապա այս որ
21 պատրաստեցիր՝ ո՞ւմ կ՚լինի։ Այսպէս էլ նա՝ որ
իր անձին համար գանձ է հաւաքում, եւ Աս-
տուծով չէ հարուստ։
22 Իր աշակերտներին էլ ասաց․ Դորա համար
ասում եմ ձեզ․ Հոգս մի անէք ձեր անձի հա-
մար՝ թէ ինչ պիտի ուտէք․ ոչ էլ մարմնոյ հա-
23 մար՝ թէ ինչ պիտի հագնիք։ Հոգին աւելի է
24 կերակուրից, եւ մարմինը հագուստից։ Մտիկ
արէք ագռաւներին․ որ ոչ սերմանում են եւ ոչ
հնձում են․ որոնք ոչ շտեմարաններ ունին եւ
ոչ ամբարներ, եւ Աստուած կերակրում է նո-
րանց․ դուք ո՞րքան աւելի էք թռչուններից։
25 Ձեզանից ո՞վ կարող է իր հոգս անելովն իր հա-
26 սակի վերայ մէկ կանգուն աւելացնել։ Արդ եթէ
ամենափոքր բանի համար կարող չէք, ի՞նչու էք
27 ուրիշ բաների համար հոգս անում։ Մտիկ արէք
շուշաններին․ ինչպէս են մեծանում․ ոչ ջանք
են անում եւ ոչ մանում․ բայց ես ասում եմ
ձեզ Սողոմոնն էլ իր բոլոր փառքի մէջ նորանց
28 մէկի նման չհագաւ։ Իսկ եթէ յանդի խոտն, որ
այսօր կայ եւ էգուց փուռն մէջ է գցվում, Աստ-

ուած այնպէս է հագցնում, ո՞րքան եւս առաւել
29 ձեզ, թերահաւատներ։ Եւ դուք մի որոնէք թէ
ինչ ուտէք կամ ինչ խմէք, եւ մի զրգռուիք։
30 Բանզի այդ բոլոր բաներն աշխարհքի հեթանոսներն են որոնում. բայց ձեր հայրը գիտում է՝
31 որ դորանք ձեզ պէտք են։ Սակայն Աստուծոյ
արքայութիւնն խնդրեցէք, եւ այդ բոլորը կ'ա-
32 ւելանայ ձեզ։ Մի վախենար, փոքր հօտ. վասն
զի ձեր Հայրն հաճեցաւ, որ արքայութիւնը տայ
33 ձեզ։ Ձեր ստացուածքը ծախեցէք եւ ողորմու-
թիւն տուէք. ձեզ համար չհինացող քսակներ
շինեցէք՝ անպակաս գանձ՝ երկինքումն, որտեղ
գող չէ մօտենում եւ ոչ էլ ցեց է ապականում։
34 Բանզի որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր
35 սիրտերը կ'լինին։ Թող ձեր գօտիները մէջք
կապուած լինին մէջքին, եւ ճրագները վառ-
36 ուած։ Եւ դուք նման եղէք մարդկանց, որ ըս-
պասում են իրանց տիրոջը, թէ երբ ետ կ'դառ-
նայ հարսանիքից. որ երբոր գայ եւ դուռը թա-
37 կէ, շուտով բանան նորա համար։ Երանի այն
ծառաներին, որ տէրը գալիս՝ արթուն գանէ նո-
րանց. ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ գօտիկը
մէջքը կ'կապէ եւ նորանց սեղան կ'նստեցնէ եւ
38 առաջ եկած կ'ծառայէ նորանց։ Եւ եթէ երկրորդ
կամ երրորդ պահին գայ՝ եւ այնպէս գանէ, ե-
39 րանի այն ծառաներին։ Բայց սա իմացէք, որ
եթէ տան տէրը գիտէր՝ թէ գողն ո՛ր ժամին կը
գայ. արթուն կ'կենար եւ թող չէր տալ իր տու-
40 նը ծակել։ Արդ դուք էլ պատրաստ եղէք, վասն
զի այն ժամին, որ չէք կարծում, Որդին մար-
դոյ կ'գայ։
41 Եւ Պետրոսն ասաց նորան. Տէր, այդ առակը

42 մե՞զ ես ասում, թէ ամենքին էլ։ Տէրն էլ ա-
սաց. Ո՞ւրեմն ով է այն հաւատարիմ եւ իմաս-
տուն տնտեսն, որին իր տէրը իր գերդաստանի
վերայ կարգեց, որ նորանց կերակուր տայ ժա-
43 մանակին։ Երանի այն ծառային, որ իր տէրը
44 երբոր գայ, այնպէս անելիս գանէ նորան։ Ճըշ-
մարիտ ասում եմ ձեզ, թէ իր բոլոր ստաց-
45 ուածքի վերայ կ'դնէ նորան։ Բայց եթէ այն ծա-
ռան իր սրտումն ասէ. Իմ տէրն ուշանում է
գալ, եւ սկսէ ծառաներին եւ աղախիններին ծե-
46 ծել, ուտել ու խմել եւ արբենալ։ Կ'գայ այն ծա-
ռայի տէրն այն օրը, որ նա չէ սպասում, եւ
այն ժամին, որ նա չէ գիտում, եւ նորա միջիցը
կ'կտրէ, եւ նորա բաժինը անհաւատների հետ
47 կ'դնէ։ Եւ այն ծառան, որ իր տիրոջ կամքը
գիտենալով չէ պատրաստել եւ ոչ արել նորա
48 կամացը պէս, շատ ծեծ կ'ուտէ։ Եւ նա որ չը
գիտենալով ծեծի արժանի բան գործեց, քիչ կը
ծեծուի. այն ամենին որ շատ տուեց՝ նորանից
շատ կ'ուզուի. եւ ում որ շատ պահ տուեցաւ՝
նորանից էլ աւելի կ'պահանջեն։
49 Ես եկայ որ կրակ գցեմ երկրիս վերայ. եւ
ի՞նչ ուզում եմ, որ արդէն խոկ բորբոքուէր։
50 Բայց մի մկրտութիւն ունիմ մկրտուելու. եւ
ի՞նչպէս հոգս եմ քաշում, մինչեւ որ կատար-
51 ուի։ Կարծո՞ւմ էք թէ եկայ խաղաղութիւն տալ
երկրիս վերայ. Ոչ, ասում եմ ձեզ, այլ բաժանումնք։
52 մունք։ Վասն զի այսուհետեւ հինգ հոգի մէկ
տան մէջ բաժին բաժին կ'լինին, երեքն երկուսի
53 դէմ։ Հայրը կ'բաժանուի որդուցը, եւ որդին հօ-
րիցը, մայրն աղջկանիցը, եւ աղջիկը մօրիցը,
սկեսուրը հարսիցը, եւ հարսն իր սկեսրիցը։

54 Եւ ժողովուրդներին էլ ասաց. Երբոր տեսնում
էք արեւմուտքից ամպ դուրս գալիս, շուտով ա-
սում էք. Անձրեւ կ'գայ, եւ այնպէս է լինում.
55 Եւ հարաւային քամին փչելիս, ասում էք՝ թէ
56 Տօք կ'լինի, եւ այնպէս է լինում. Կեղծաւոր-
ներ, երկրի եւ երկնքի երեսը գիտէք փորձել.
57 բայց ի՞նչպէս չէք այս ժամանակը փորձում։ Եւ
ինչո՞ւ իսկ ձեզանից էլ չէք ընտրում արժանին։
58 Երբոր քո հակառակ ոսոխի հետ իշխանի մօտ
ես գնում, ճանապարհին տուր տալիքը, որ նո-
րա ձեռքից ազատուես. մի գուցէ քեզ դատա-
ւորի մօտ քաշէ, եւ դատաւորը քեզ դահճին
59 մատնէ, եւ դահիճը բանտի մէջ գցէ։ Ասում եմ
քեզ. Այնտեղից դուրս չես գալ, մինչեւ որ վեր-
ջի դանկն էլ չվճարես։

ԳԼ. ԺԳ.

1 Նոյն ժամանակումը եկան ոմանք եւ պատմե-
ցին նորա այն Գալիլեացիների մասին, որոնց
արիւնը Պիղատոս նորանց մատաղի հետ խառ-
2 նեց։ Յիսուսն էլ պատասխանեց եւ ասաց նո-
րանց. Կարծո՞ւմ էք, թէ այդ Գալիլեացիները
աւելի մեղաւոր էին քան թէ բոլոր Գալիլեա-
3 ցիները, որ այդպիսի բաներ քաշեցին։ Ոչ, ա-
սում եմ ձեզ. այլ եթէ չապաշխարէք, ամենքդ
4 էլ այնպէս կ'կորչիք. Կամ այն տասնեւութ հոգին,
որոնց վերայ Սելովամի միջի աշտարակը վայր
ընկաւ, եւ նորանց սպանեց. կարծո՞ւմ էք թէ
նորանք աւելի պարտաւոր էին քան թէ Երու-
5 սաղէմումն բնակող բոլոր մարդիկը։ Ոչ, ասում
եմ ձեզ, այլ եթէ չապաշխարէք, ամենքդ էլ այն-
պէս կ'կորչիք։

6 Այս առակն էլ ասաց. Մի մարդ իր այգու
մէջ մի թզենի էր տնկել. եւ եկաւ, նորա վե-
7 րայ պտուղ որոնելու, եւ չգտաւ։ Եւ այգեպա-
նին ասաց. Ահա երեք տարի է, որ գալիս եմ
պտուղ որոնելու այդ թզենու վերայ, եւ չեմ
գտնում. կտրիր դորան, ինչո՞ւ դա երկիրն էլ
8 խափանէ։ Նա էլ պատասխանեց եւ ասաց. Տէր,
այս տարի էլ թող դորան, մինչեւ որ դորա չորս
9 կողմովը փորեմ եւ աղբ ածեմ։ Թերեւս պտուղ
բերէ, ապա եթէ ոչ, եկող տարի կտրիր դորան։
10 Եւ ժողովարաններից մէկումը սովորեցնում էր
11 շաբաթ օրը։ Եւ ահա մի կին կար, որ հիւան-
դութեան ոգի ունէր տասնեւութ տարի. եւ
կծկուած էր, եւ ամենեւին չէր կարում դէպի
12 վեր նայել։ Եւ Յիսուսը նորան տեսնելով, իրան
մօտ կանչեց եւ ասաց նորան. Ով կին, ար-
13 ձակուած ես քո հիւանդութիւնից։ Եւ ձեռքը
դրաւ նորա վերայ, եւ շուտով ուղղուեցաւ,
14 եւ փառաւորում էր Աստուծոյն։ Իսկ ժողովա-
րանի գլխաւորը շատ բարկացած, որ Յիսուսը
շաբաթ օրը բժշկեց, պատասխանեց եւ ասաց
ժողովրդին. Վեց օր կայ, որ նորանցում պէտք
է գործել. հիմա այն օրերը եկէք բժշկուեցէք, եւ
15 ոչ թէ շաբաթ օրը։ Տէրն էլ պատասխանեց նո-
րան եւ ասաց. Կեղծաւոր, ձեզանից ամեն մէկը
շաբաթ օրն իր եզը կամ էշը չէ՞ արձակում մը-
16 սուրից եւ տանում ջուր տալիս։ Բայց սա՝
Աբրահամի աղջիկը լինելով, որին սատանան ա-
հա տասնեւութը տարի է, որ կապել էր. արժան
չէ՞ր որ շաբաթ օրն այն կապանքից արձակ-
17 ուէր։ Եւ երբոր նա այս ասաց, ամօթով էին
լինում ամենքն, որ հակառակում էին նորան.

և բոլոր ժողովուրդն ուրախանում էր այն ա-
մեն փառաւոր գործերի համար, որ նորանով լի-
նում էին։
18 Եւ ասում էր. Աստուծոյ արքայութիւնն ին-
19 չի՞ նման է. և ինչի նմանեցնեմ նորան։ Մա-
նանեխի հատի նման է, որն մի մարդ առաւ իր
պարտէզի մէջ ցանեց. և մեծացաւ և մեծ
ծառ եղաւ, և երկնքի թռչունները նորա ճղերի
վերայ բնակեցան։
20 Եւ դարձեալ ասաց. Ինչի՞ նմանեցնեմ Աստու-
21 ծոյ արքայութիւնը. Նման է խմորի. որ նորան
մի կին առաւ և երեք չափ ալիւրի մէջ թաք-
ցրեց, մինչև որ բոլորը խմորուեցաւ։
22 Եւ ման էր գալիս քաղաքները և գիւղերը՝
և սովորեցնում էր. և ճանապարհ ընկած գը-
23 նում էր դէպի Երուսաղէմ. Եւ մէկն ասաց նո-
րան. Տէր, մի՞թէ քիչ են փրկուողները. Նա էլ
24 ասաց նորանց. Ջանք արէք որ նեղ դռնովը ներս
մանէք. քանզի՝ ասում եմ ձեզ. Շատերը կ՚ու-
25 զեն մանել և չեն կարենալ։ Նորանից յետոյ
որ տան տէրն կ՚ելլէ և դուռը կ՚փակէ. և կը
սկսէք դուրսը կանգնել և դուռը թակել և ա-
սել. Տէր, Տէր, բաց մեզ. և պատասխանելով
կ՚ասէ ձեզ. Չեմ ճանաչում ձեզ, թէ ինչ տեղից
26 էք։ Այն ժամանակ կ՚սկսէք ասել. Մենք քո առ-
ջև կերանք և խմեցինք, և դու մեր հրապա-
27 րակներումը սովորեցրիր։ Եւ կ՚ասէ. Ասում եմ
ձեզ. Ես չեմ ճանաչում ձեզ, թէ ինչ տե-
ղից էք. հեռու կացէք ինձանից, բոլոր անիրա-
28 ւութեան գործողներդ։ Այնտեղ կ՚լինի լացը և
ատամների կրճտելն. երբոր դուք կ՚տեսնէք Աբ-
րահամին և Իսահակին և Յակոբին և բոլոր

մարգարէներին Աստուծոյ արքայութեան մէջ,
29 իսկ ձեզ՝ դուրս հանած։ Եւ կ՚գան արևելքից
և արևմուտից, և հիւսիսից և հարաւից, և կը
30 նստեն Աստուծոյ արքայութիւնումը։ Եւ ահա
յետիններ կան՝ որ առաջիններ կ՚լինին. և ա-
ռաջիններ կան՝ որ յետիններ կ՚լինին։
31 Նոյն օրումը մի քանի Փարիսեցիք մօտ եկան
և նորան ասացին. Դուրս եկ և գնա այստե-
ղից. քանզի Հերովդէս կամենում է քեզ սպա-
32 նել։ Եւ նորանց ասաց. Գնացէք ասացէք այն
աղուէսին. Ահա դևեր եմ հանում և բժշկու-
թիւններ եմ կատարում այսօր և էգուց. և եր-
33 րորդ օրը կ՚կատարուիմ։ Սակայն այսօր և էգուց
և միւս օրը պէտք է գնամ. քանզի կարելի չէ
որ մի մարգարէ Երուսաղէմից դուրս կորչի։
34 Երուսաղէմ Երուսաղէմ, մարգարէները կոտո-
րող, և քեզ մօտ ուղարկուածները քարկոծող.
քանի՞ անգամ կամեցայ քո որդիները ժողովել
ինչպէս հաւն իր ձագերը թևերի տակն է ժողո-
35 վում. և չկամեցաք։ Ահա ձեր տունը աւերակ
է թողվում ձեզ. բայց ճշմարիտն ասում եմ ձեզ.
թէ ինձ էլ չէք տեսնիլ, մինչև գայ ժամանակն,
որ ասէք. Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը։

Գլ. ԺԴ

1 Եւ եղաւ, երբոր նա մի շաբաթ օր Փարիսեցոց
իշխաններից մէկի տունը մտաւ հաց ուտելու. և
2 նորանք սպասում էին նորան։ Եւ ահա մի ջըր-
3 գողուած մարդ կար նորա առջև։ Եւ Յիսուսը
պատասխանեց և օրինականներին և Փարիսե-
ցիներին ասաց. թէ Արժա՞ն է շաբաթ օրը բը-

4 ժշկութիւն անել։ Եւ նորանք լռեցին․ եւ բռ-
5 նեց բժշկեց նորան եւ արձակեց։ Եւ պատաս-
խանեց նորանց եւ ասաց․ Ձեզանից որի՞ էշը
կամ եզը ջրհորի մէջ ընկնի, եւ նա շուտով չի
6 հանիլ նորան շաբաթ օրումն։ Եւ չկարողացան
պատասխանել նորան այդ բանի համար։
7 Եւ այն կանչուած մարդկանց էլ մի առակ խօ-
սեց, տեսնելով՝ թէ ինչպէս առաջի տեղերն էին
8 ընտրում․ եւ ասաց նորանց․ Երբոր մէկից հար-
սանիք ես կանչվում, մի նստիր առաջի բարձի
վերայ․ մի գուցէ քեզանից մի առաւել պատուա-
9 ւորը լինի կանչուած նորա կողմից։ Եւ նա՝ որ
քեզ եւ նորան կանչեց, գայ եւ քեզ ասէ․ Սո-
րա տեղ տուր․ եւ այն ժամանակ սկսես ամօ-
10 թով վերջի տեղը նստել։ Բայց երբոր կանչվում
ես, գնա վերջի տեղը նստիր․ որպէս զի երբոր
քեզ կանչողը գայ, ասէ քեզ․ Բարեկամ, վերեւ
նստիր․ այն ժամանակ քեզ հետ նստողների առ-
11 ջեւ փառք կ՚լինի քեզ։ Վասն զի ամեն ով որ
իր անձը բարձրացնում է՝ կ՚խոնարհուի, եւ ով
որ իր անձը խոնարհացնում է, կ՚բարձրանայ։
12 Եւ իրան կանչողին էլ ասաց․ Երբոր ճաշ կամ
ընթրիք ես անում, մի կանչիր քո բարեկամնե-
րից, եւ ոչ քո եղբայրներից, եւ ոչ քո ազգա-
կաններից, եւ ոչ քո հարուստ հարեւաններից,
մի գուցէ նորանք էլ նորա փոխարէն կանչեն
13 քեզ եւ հատուցում լինի քեզ։ Այլ երբոր հաց-
կերութիւն ես անում, կանչիր աղքատներին,
14 խեղերին, կաղերին, կոյրերին։ Եւ երանելի կը
լինիս․ որովհետեւ բան չունին որ փոխարէն վը-
ճարեն քեզ․ քանզի արդարների յարութեան ժա-
մանակին կ՚լինի քեզ հատուցումն։

15 Եւ երբոր սեղան նստողներից մէկն այս բա-
ները լսեց, նորան ասաց․ Երանի նորան, որ
16 Աստուծոյ արքայութիւնումը հաց կ՚ուտէ։ Եւ
նա ասաց նորան․ Մի մարդ մեծ ընթրիք արաւ
17 եւ շատերին հրաւիրեց։ Եւ ընթրիքի ժամանա-
կին իր ծառան ուղարկեց, որ հրաւիրածներին
ասէ․ Եկէք, որովհետեւ արդէն ամենը պատ-
18 րաստ է։ Եւ ամենքն սկսեցին մէկ մէկ եւ քաշ-
ուիլ․ առաջինն ասաց նորան․ Ագարակ առի,
եւ պէտք է գնամ՝ նորան տեսնեմ․ աղաչում եմ
19 քեզ, ինձ հրաժարուած համարիր։ Եւ միւսն ա-
սաց․ Հինգ լուծ եզ առի, եւ գնում եմ որ նո-
րանց փորձեմ․ աղաչում եմ քեզ ինձ հրաժար-
20 ուած համարիր։ Եւ միւսն ասաց․ Կին եմ ա-
21 ռել, եւ նորա համար չեմ կարող գալ։ Եւ այն
ծառան եկաւ, այս բաներն պատմեց իր տիրոջը․
այն ժամանակ տան տէրը բարկացած ասաց իր
ծառային․ Դուրս գնա շուտով քաղաքի հրապա-
րակները եւ փողոցները, եւ աղքատներին եւ
խեղերին, եւ կաղերին եւ կոյրերին մտցրու այս-
22 տեղ։ Եւ ծառան ասաց․ Տէր, եղաւ ինչպէս հը-
23 րամայեցիր, եւ դեռ էլ տեղ կայ․ Եւ Տէրն ա-
սաց ծառային․ Դուրս գնա ճանապարհները եւ
ցանգերը, եւ ստիպիր այստեղ մտնեն, որ իմ
24 տունը լցուի։ Քանզի ասում եմ ձեզ․ թէ Այն
կանչուած մարդկանցից ոչ մէկն իմ ընթրիքը չի
ճաշակիլ։
25 Եւ շատ ժողովուրդներ գնում էին նորա հետ․
26 եւ դարձաւ նորանց ասաց․ Եթէ մէկն ինձ մօտ
գայ․ եւ չատէ իր հօրը եւ մօրը, կնոջը եւ որ-
դիներին, եւ եղբայրներին եւ քոյրերին, եւ
հէնց իր անձին էլ․ նա չէ կարող իմ աշակերտ

27 լինել։ Եւ ով որ իր խաչը վեր չառնէ եւ իմ ետեւ-
28 ից գայ, նա չէ կարող իմ աշակերտ լինել։ Վասն
զի ձեզանից ո՞վ է որ կամենայ աշտարակ շի-
նել, եւ առաջ չ'նստի եւ ծախսը հաշուէ թէ ա-
29 ւարտելու համար բաւական բան ունի՞։ Որ մի գու-
ցէ երբոր հիմքը դնէ եւ չկարողանայ աւարտել,
ամէն տեսնողները սկսեն ծաղր անել նորան,
30 Եւ ասել. Թէ Այս մարդն սկսեց շինել, եւ չը
31 կարողացաւ աւարտել։ Կամ ո՞ր թագաւոր է, որ
գնայ ուրիշ թագաւորի հետ պատերազմ անելու.
մի՞թէ չնստել առաջ խորհուրդ անել՝ թէ տասն
հազարով կարող է դէմ կենալ նորան, որ քսան
32 հազարով գալիս է իր վերայ։ Ապա թէ ոչ, քա-
նի որ նա հեռու է, պատգամաւոր կ'ուղարկէ՝
33 եւ կ'աղաչէ, որ խաղաղութիւն անէ։ Արդ այս-
պէս էլ ձեզանից ամէն մէկն, որ իր բոլոր ապ-
րանքիցը չհրաժարուի, չէ կարող ինձ աշակերտ
34 լինել։ Աղը լաւ բան է. բայց եթէ աղն անհա-
35 մանայ, ինչո՞վ պիտի համեմանայ։ Ոչ հողի հա-
մար է պիտանի եւ ոչ աղբի համար, դուրս
կ'գցեն նորան. ով որ լսելու ականջ ունի, թող
լսէ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ բոլոր մաքսաւորներն եւ մեղաւորները մօ-
2 տենում էին նորան, որ լսեն նորանից։ Եւ փա-
րիսեցիներն եւ դպիրները տրտնջում էին եւ աս-
ում. Թէ Սա ընդունում է մեղաւորներին եւ նո-
րանց հետ ուտում։
3 Եւ այս առակն ասաց նորանց։ (4) Ձեզանից
ո՞վ է այն մարդն, որ հարիւր ոչխար ունենայ,

եւ նորանցից մէկը կորցնէ, չի՞ թողնիլ իննսուն
եւ ինը անապատումն, եւ այն կորածի ետեւից
5 գնալ, մինչեւ որ գտնէ նորան։ Եւ երբոր գտնէ,
ուրախանալով իր ուսերի վերայ կ'դնէ նորան։
6 Եւ տուն գալով, բարեկամներին եւ դրացիներին
կ'կոչէ եւ նորանց կ'ասէ. Ուրախացէք ինձ հետ.
7 վասն զի իմ կորած ոչխարը գտայ։ Ասում եմ
ձեզ. Թէ Այսպէս ուրախութիւն կ'լինի երկն-
քումն մէկ մեղաւորի համար, որ ապաշխարէ,
քան թէ իննսուն եւ ինն արդարների համար, ո-
8 րոնց ապաշխարութիւն պէտք չէ։ Կամ ո՞վ է
այն կինն, որ տասն դրամ ունենայ, եւ եթէ մէկ
դրամ կորցնէ, ճրագ չի՞ վառիլ եւ տունն աւե-
9 լել եւ սաստիկ որոնել, մինչեւ որ գտնէ։ Եւ երբ-
որ կ'գտնէ, բարեկամներին եւ դրացիներին կ'կանչէ
եւ կ'ասէ. Ուրախացէք ինձ հետ. վասն զի դրամը
10 գտայ, որ կորցրել էի։ Ասում եմ ձեզ. այսպէս
էլ Աստուծոյ հրեշտակների առջեւ ուրախութիւն
կ'լինի մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարէ։
11 Եւ ասաց. Մի մարդ երկու որդի ունէր.
12 Եւ նորանցից փոքրն ասաց հօրը. Հայր, տուր
ինձ ինչ որ բաժին կ'հասնէ ինձ ապրանքներիցդ,
13 եւ նա էլ ապրանքը բաժանեց նորանց։ Եւ շատ
օր չանցած փոքր որդին ամէն բաները ժողո-
վեց հեռու երկիր գնաց. եւ այնտեղ իր ստաց-
14 ուածքը վատնեց, անառակ ապրելով։ Եւ երբոր
բոլորը հատցրեց, սաստիկ սով եղաւ այն երկ-
15 րումը եւ ինքն սկսեց չքաւորել։ Եւ գնաց այն
երկրի քաղաքացիների մէկի մօտ մտաւ. եւ նա
16 նորան ուղարկեց իր յանդն, որ խոզ արածեցնէ։
Եւ նա ցանկանում էր՝ իր փորն լցնել այն
եղջիւրներովը որ խոզերն ուտում էին, բայց

17 ոչ ով չէր տալիս նորան։ Եւ ինքն իրան գալով
ասաց. Քանի՜ վարձկաններ ունի իմ հայրը՝ հա-
ցով լցուած. և ես այստեղ սովամահ կորչում
18 եմ։ Վեր կենամ գնամ իմ հօր մօտ, և նորան
ասեմ. Հայր, մեղայ երկնքի դէմ և քո առջև։
19 Եւ այլ ևս արժանի չեմ քո որդի կոչուելու. ինձ
20 քո վարձկաններից մէկի պէս արա։ Եւ վերկացաւ
եկաւ իր հօր մօտ։ Եւ դեռ որ նա հեռու էր,
հայրը տեսաւ նորան և գութը շարժեց. և վա-
զեց՝ նորա վզովն ընկաւ, և համբուրեց նորան։
21 Եւ որդին ասաց նորան. Հայր, մեղանչեցի եր-
կնքի դէմ և քո առջև, և այլ ևս չեմ ար-
22 ժանի քո որդի կոչուելու։ Հայրն էլ ասաց իր
ծառաներին. Առաջի պատմուճանը հանեցէք և
հագցրէք նորան, և մատանի դրէք նորա ձե-
23 ռին, և կօշիկներ նորա ոտներին։ Եւ մսացու
եզը բերէք մորթեցէք, և ուտենք՝ ուրախ լի-
24 նինք։ Վասն զի այս իմ որդին մեռած էր, և
կենդանացաւ. և կորած էր, և գտնուեցաւ.
25 և սկսեցին զուարճանալ։ Եւ նորա մեծ որդին
յանդումն էր. և երբոր եկաւ տանը մօտեցաւ,
26 երգերի և պար գալու ձայնը լսեց։ Եւ ծառա-
ներից մէկին կանչեց իրան մօտ, հարցնում էր
27 թէ այդ ի՞նչ է։ Նա էլ ասաց նորան. թէ Եղ-
բայրդ եկել է, և քո հայրը մսացու եզը մոր-
թեց, որովհետև ողջ և առողջ ընդունեց նո-
28 րան։ Եւ նա բարկացաւ, և չէր ուզում ներս
մտնել, բայց հայրը դուրս եկաւ, աղաչում էր
29 նորան։ Նա էլ պատասխանեց և ասաց հօրը.
Ահա այսքան տարի է, որ քեզ ծառայում եմ,
և քո պատուէրից երբէք դուրս չեմ եկել. բայց
ինձ երբէք մի ուլ չտուիր, որ իմ բարեկամների

30 հետ ուրախ լինիմ։ Իսկ երբոր այդ քո որդին ե-
կաւ, որ քո ապրանքը պոռնիկների հետ կերաւ,
31 մսացու եզը մորթեցիր դորա համար։ Նա էլ ա-
սաց նորան. Որդեակ, դու ամեն ժամանակ ինձ
32 հետ ես, և ամեն ինչ որ իմս է՝ քոնն է։ Բայց
ուրախ լինել և խնդալ պէտք էր. վասն զի այս
քո եղբայրը մեռած էր և կենդանացաւ. կորած
էր և գտնուեցաւ։

Գլ. ԺԶ

1 Եւ իր աշակերտներին էլ ասաց. Մի մարդ կար
հարուստ, որ մի տնտես ունէր. և նորանից
գանգատ եղաւ նորան, իբր թէ նա վատնում է
2 նորա ստացուածքը։ Եւ նորան կանչեց և ա-
սաց. Սա ի՞նչ է որ լսում եմ քեզանից. տուր
քո տնտեսութեան համարը. վասն զի այլ ևս
3 կարող չես տնտես լինել։ Տնտեսն էլ իր մտա-
քումն ասաց. Ի՞նչ անեմ, որ իմ տէրը տնտե-
սութիւնն ինձանից առնում է. Երկիր հերկել չեմ
4 կարող, մուրանալ ամաչում եմ։ Գիտեմ ինչ կ'ա-
նեմ, որ՝ երբոր տնտեսութիւնից դուրս գամ,
5 մարդիկ ընդունեն ինձ իրանց տները։ Եւ իր տի-
րոջ պարտականներին մէկ մէկ իրան մօտ կան-
չեց և ասաց առաջինին. Ի՞նչքան ես պար-
6 տական իմ տիրոջը։ Նա էլ ասաց. Հարիւր մար
ձէթ. և նորան ասաց. Առ գիրդ, և նստիր՝
7 շուտով գրիր յիսուն։ Յետոյ միւսին ասաց. Դու՞
ինչքան ես պարտական. նա էլ ասաց. Հարիւր
քոռ ցորեն. և նորան ասաց. Առ գիրդ և գրիր
8 ութսուն։ Եւ տէրը գովեց անիրաւ տնտեսին,
որ իմաստութիւնով գործեց. վասն զի այս աշ-

խարհքի որդիքը լուսոյ որդիներիցն աւելի իմաս-
9 տուն են իրանց ցեղի մէջ։ Եւ ես ասում եմ
ձեզ․ Անիրաւ մամոնայից բարեկամներ արէք
ձեզ համար․ որ երբոր պակասուիք, յաւիտենա-
10 կան բնակարանների մէջ ընդունեն ձեզ։ Քիչ
բանի մէջ հաւատարիմը, շատ բանի մէջ էլ հա-
ւատարիմ է․ եւ քիչ բանի մէջ անիրաւը, շատ
11 բանի մէջ էլ անիրաւ է։ Արդ թէ որ անիրաւ
մամոնայի մէջ հաւատարիմ չեղաք․ ճշմարիտն
12 ո՞վ կ'տայ ձեր ձեռքը։ Եւ եթէ օտար բանի մէջ
հաւատարիմ չեղաք, ձերն ո՞վ կ'տայ ձեզ։
13 Ոչ մի ծառայ չէ կարող երկու տիրոջ ծառայել․
վասն զի կամ մէկին կ'ատէ եւ միւսին կ'սիրէ․
կամ մէկին կ'պատուէ եւ միւսին կ'արհամարհէ․
կարող չէք Աստուծոյ ծառայել եւ մամոնային։
14 Այս բոլոր բաները լսում էին Փարիսեցիները,
որ արծաթասէր էին, եւ ծիծաղում էին նորա
15 վերայ։ Եւ նորանց ասաց․ Դուք էք, որ մարդ-
կանց առջեւ ձեր անձերը արդարացնում էք,
բայց Աստուած գիտէ ձեր սրտերը․ վասն զի
մարդկանց առջեւ բարձրը պիղծ է Աստուծոյ առ-
16 ջեւ։ Օրէնքը եւ մարգարէքը մինչեւ Յօհաննէսն
են․ նորանից յետոյ Աստուծոյ արքայութիւնն է
աւետարանվում, եւ ամեն մարդ ուժով է մանում
17 նորա մէջ։ Եւ աւելի հեշտ է որ երկինքն եւ
երկիրս անցնեն, քան թէ օրէնքի մէկ պզտիկ
18 նշանագիրը վայր ընկնէ։ Ամեն ով որ արձակում
է իր կինը եւ ուրիշն առնում, շնութիւն է գոր-
ծում, եւ ամեն ով որ արձակուածն առնում է,
շնութիւն է գործում։
19 Եւ մի մարդ կար հարուստ, եւ շատ ազնիւ
ծիրանի եւ բեհեզ էր հագնում․ եւ ամեն օր զը-

20 ւարճութիւն էր անում փառաւոր։ Մի աղքատ
մարդ էլ կար, անունը Ղազարոս․ որ նորա դրան
21 մօտ գցուած էր խոցերով լիքն․ Եւ ցանկանում
էր իրան կշտացնել այն փշրանքներիցն, որ հա-
րուստի սեղանիցն ընկնում էին․ այլ եւ շներն էլ
22 գալիս էին եւ նորա խոցերը լիզում էին։ Եւ ե-
ղաւ որ աղքատը մեռաւ, եւ հրեշտակները տա-
րան նորան Աբրահամի գոգը․ հարուստն էլ մե-
23 ռաւ՝ եւ թաղուեցաւ։ Եւ դժոխքումն՝ մինչ տան-
ջանքի մէջ էր գտնվում, իր աչքերը բարձրաց-
րեց, Աբրահամին տեսաւ հեռուանց, եւ Ղազա-
24 րոսին էլ նորա գոգումը․ Եւ նա աղաղակեց եւ
ասաց․ Հայր Աբրահամ, ինձ ողորմիր, եւ Ղա-
զարոսին ուղարկիր, որ իր մատի ծայրը թրջէ
ջրով, եւ իմ լեզուն հովացնէ․ վասն զի այս կրա-
25 կի բոցի մէջ տանջվում եմ։ Աբրահամն էլ ա-
սաց․ Որդեակ, յիշիր, որ դու ընդունեցիր քո
բարիքը քո կեանքումը, եւ նմանապէս էլ Ղա-
զարոսը՝ չարչարանքները․ եւ հիմա սա այս տեղ
26 մխիթարվում է, իսկ դու տանջվում ես։ Եւ 'ի
վերայ այսր ամենայնի մեր եւ ձեր մէջ մեծ ան-
դունդ է հաստատուած, որ այս տեղից ձեզ մօտ
անցնել ուզողները չ'կարողանան, եւ ոչ էլ այդ
27 տեղից մեզ մօտ անցնեն։ Եւ ասաց․ Ուրեմն
աղաչում եմ քեզ, հայր, որ դորան ուղարկես
28 իմ հօր տունը։ Վասն զի ես հինգ եղբայր ու-
նիմ․ որ նորանց վկայութիւն տայ, որ նորանք
29 էլ չ'գան այս տանջանքի տեղը։ Աբրահամն ա-
սաց նորան․ Նորանք Մօսէսին եւ մարգարէնե-
30 րին ունին, թող նորանց լսեն։ Նա էլ ասաց․
Ոչ, հայր Աբրահամ, այլ եթէ մեռելներից մէկը
31 նորանց մօտ գնայ, կ'ապաշխարեն։ Եւ նորան

ասաց· Եթէ Մովսէսին եւ մարգարէներին ականջ
չեն դնում, չեն էլ համոզուիլ, եթէ մեռելներից
մէկը յարութիւն առնէ։

Գլ. ԺԷ

1 Եւ աշակերտներին ասաց· Անկարելի է, որ
գայթակղութիւններ չգան· բայց վայ նորան որի
2 ձեռովը կ'գան։ Աւելի լաւ է նորան, որ նորա
վզիցը մի իշու ջաղացի քար կախուէր եւ ծովը
գցուէր, քան թէ այս փոքրներից մէկին գայ֊
թակղեցնէ։
3 Զգոյշ կացէք անձերիդ· եթէ քո եղբայրը
մեղանչէ քեզ դէմ, յանդիմանիր նորան· եւ եթէ
4 ապաշխարէ, ներիր նորան։ Եւ եթէ օրն եօթն
անգամ քեզ դէմ մեղանչէ՝ եւ եօթն անգամ քեզ
մօտ դառնայ եւ ասէ՝ Ապաշխարում եմ, ներիր
նորան։
5 Եւ առաքեալներն ասացին Տիրոջն· Մեր հա֊
6 ւատքն աւելցրու։ Եւ Տէրն ասաց· Եթէ մա֊
նանեխի հատի չափ հաւատք ունենայիք, եւ այս
թզենուն կ'ասէիք· Պոկուիր եւ ծովի մէջ տըն֊
կուիր, եւ կ'հնազանդուէր ձեզ։
7 Բայց ձեզանից ո՞վ է նա, որ մի հողագործ
կամ հովիւ ծառայ ունենայ, որ երբոր յանդիցը
գայ տուն մանէ, չուտով ասէ նորան, թէ Եկ սե֊
8 ղան նստիր։ Այլ չի՞ ասիլ նորան, Թէ Պատրաս֊
տիր ինչ որ ընթրիքս պիտի ուտեմ, եւ գօտիդ
կապիր ինձ ծառայիր, մինչեւ որ ուտեմ եւ խը֊
9 մեմ, եւ յետոյ դու էլ կ'ուտես եւ կ'խմես։ Մի՞֊
թէ այն ծառայից շնորհակալ կ'լինի, որ այն
բոլոր իրան հրամայուածներն արաւ· չ'կարծեմ։
10 Այնպէս էլ դուք, երբոր բոլոր ձեզ հրամայուած

բաներն անէք, ասացէք· Թէ Մենք անպիտան
ծառաներ ենք· վասն զի այն ենք արել, ինչ որ
պարտական էինք անելու։
11 Եւ եղաւ՝ երբոր նա Երուսաղէմ էր գնում,
ինքն Սամարիայի եւ Գալիլեայի միջովն էր անց֊
12 նում։ Եւ նա մի գիւղ մանելիս, տասն բորոտ
մարդիկ պատահեցան նորան, որ հեռուանց կանգ֊
13 նեցին, Եւ իրանց ձայնը բարձրացրին եւ ասա֊
14 ցին· Յիսուս՝ Վարդապետ, մեզ ողորմիր։ Եւ
երբոր տեսաւ՝ ասաց նորանց· Գնացէք ձեր ան֊
ձերը քահանաներին ցոյց տուէք· եւ եղաւ, որ
15 նորանք գնալիս՝ սրբուեցան։ Եւ նորանցից մէկն,
երբոր տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դարձաւ բար֊
16 ձր ձայնով փառաւորում էր Աստուծոյն։ Եւ իր
երեսի վերայ ընկաւ նորա ոտների առջեւ, եւ
գոհանում էր նորանից· եւ ինքն Սամարացի էր։
17 Յիսուսն էլ պատասխանեց եւ ասաց· Չէ՞ որ
տասն էլ սրբուեցան· ապա այն ինն ո՞ւր են։
18 Չ'գտնուեցան ետ դարձողներ, որ Աստուծոյն
19 փառք տան, բացի այս այլազգին։ Եւ ասաց նո֊
րան· Վեր կաց՝ գնա· քո հաւատքն ապրեցրեց
քեզ։
20 Երբոր Փարիսեցիներիցն հարցուեցաւ, թէ Աս֊
տուծոյ արքայութիւնն ե՞րբ պիտի գայ, պատաս֊
խանեց նորանց եւ ասաց· Աստուծոյ արքայու֊
21 թիւնը դրսի նշանով չի գալ։ Ոչ էլ կ'ասեն, Թէ
Ահա այս տեղ է, կամ՝ ահա այն տեղ է· քանզի
ահա Աստուծոյ արքայութիւնը հէնց ձեր ներ֊
սումն է։
22 Աշակերտներին էլ ասաց· Օրեր կ'գան, որ
դուք կ'ցանկանաք Որդոյ մարդոյ օրերից մէկը
23 տեսնել, եւ չէք տեսնիլ։ Եւ ձեզ կ'ասեն՝ Ահա

այս տեղ է, կամ՝ Ահա այն տեղ է, չգնաք եւ
24 հետեւից չհետեւիք։ Վասն զի ինչպէս կայծակն
որ փայլում երկնքի տակիցը լոյս է տալիս մին-
չեւ երկնքի միւս տակը, այնպէս էլ կ'լինի Որ-
25 դին մարդոյ իր օրումը։ Բայց առաջ պէտք է՝
նա շատ չարչարուի եւ անարգուի այս ազգիցը։
26 Եւ ինչպէս եղաւ Նոյի օրերումն, այնպէս էլ կը
27 լինի Որդոյ մարդոյ օրերումը։ Ուտում էին՝ խը-
մում էին՝ կին էին առնում՝ եւ մարդու էին գը-
նում, մինչեւ այն օրն՝ որ Նոյ մտաւ տապանը.
28 եւ ջրհեղեղն եկաւ եւ ամենքին կորցրեց։ Նմա-
նապէս էլ ինչպէս Ղովտի օրերումն եղաւ. ու-
տում էին, խմում էին, առնում էին՝ ծախում
29 էին, տնկում էին՝ շինում էին։ Եւ այն օրն որ
Ղովտը Սոդոմիցը դուրս եկաւ, կրակ եւ ծծումբ
30 տեղաց երկնքիցը եւ ամենին կորցրեց։ Նոյն
կերպով էլ կ'լինի այն օրերումը, որ Որդին
31 մարդոյ կ'յայտնուի։ Այն օրերումն ով որ կտրի
վերայ լինի եւ իր բաները տան մէջ, թող չիջնէ
նորանց առնելու. եւ յանդումն լինողն էլ այն-
32 պէս թող ետ չդառնայ։ Յիշեցէք Ղովտի կինը։
33 Ով որ ուզէ իր անձն ապրեցնել, կ'կորցնէ նո-
րան. եւ ով որ կորցնէ նորան, կ'ապրեցնէ նո-
34 րան։ Ասում եմ ձեզ. Նոյն գիշերումն երկու հոգի
մէկ մահճի մէջ կ'լինին, մէկը կ'առնուի եւ միւսը
35 կ'թողուի։ Երկու հոգի միասին աղալու վերայ
կ'լինին, մէկը կ'առնուի եւ միւսը կ'թողուի. եւ
երկու հոգի յանդումն կ'լինին, մէկը կ'առնուի
36 եւ միւսը կ'թողուի։ Եւ պատասխանեցին եւ
37 նորան ասացին. Տէր, ո՞ր տեղ։ Նա էլ ասաց
նորանց. Որ տեղ մարմինն է, արծիւներն էլ
այնտեղ կ'հաւաքուին։

ԳԼ. ԺԸ

1 Մի առակ էլ ասաց նորանց՝ նորա վերայ թէ
պէտք է ամեն ժամանակ աղօթք անել եւ չձանձ-
2 րանալ։ Եւ ասաց. Մի դատաւոր կար մի քա-
ղաքում, որ Աստուածանից չէր վախենում, եւ
3 մարդկից չէր ամաչում։ Եւ մի որբեւայրի էլ կար
այն քաղաքումը, եւ նորա մօտ էր գալիս եւ աս-
4 ում, Իրաւունք արա ինձ իմ ոսոխիցը։ Եւ նա մի
ժամանակ չկամեցաւ. նորանից յետոյ իր մտքումն
ասաց. Թէ եւ Աստուածանից չեմ վախենում, եւ
5 մարդկանցից չեմ ամաչում, Սակայն որովհետեւ
այս որբեւայրին յոգնեցնում է ինձ, իրաւունք
անեմ նորան, որ վերջապէս չգայ ինձ ձանձրա-
6 ցընէ։ Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դա-
7 տաւորն ինչ է ասում։ Բայց Աստուած մի՞թէ
իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ
ցերեկ եւ գիշեր աղաղակում են դէպի նա, թէ
8 եւ նորանց վերայ երկայնամիտ էլ լինի։ Ասում
եմ ձեզ, թէ Շուտով իրաւունք կ'անէ նորանց
համար։ Սակայն Որդին մարդոյ գալիս՝ արդեօք
հաւատք կ'գտնէ՞ երկրի վերայ։
9 Ոմանց էլ, որ իրանցում վստահ էին, թէ ար-
դար են եւ ուրիշներին ոչ ինչ էին համարում,
10 այս առակն ասաց. Երկու մարդ վեր ելան տա-
ճարն աղօթք անելու. մէկը Փարիսեցի եւ միւսը
11 մաքսաւոր։ Փարիսեցին առանձին կանգնած այս
աղօթք էր անում. Ով Աստուած, գոհանում եմ
քեզանից, որ չեմ ինչպէս ուրիշ մարդիկը՝ յա-
փըշտակող, անիրաւ, շնացող, կամ ինչպէս էլ
12 այս մաքսաւորը։ Շաբաթը երկու անգամ ծոմ
եմ պահում, եւ իմ բոլոր ստացուածքներիցը տա-

13 սանորդ եմ տալիս ։ Եւ մաքսաւորը հեռու կանգ-
նած իր աչքերն էլ չէր կամենում դէպի երկինքը
բարձրացնել. այլ իր կուրծքը ծեծում էր եւ ա-
սում. Ով Աստուած, քաւիր ինձ մեղաւորիս ։
14 Ասում եմ ձեզ, թէ Սա արդարացած իջաւ իր
տունը քան թէ նա. քանզի ամեն ինքն իրան
բարձրացնողը կ՚խոնարհուի, եւ ինքն իրան խո-
նարհեցնողը կ՚բարձրանայ ։
15 Երեխաներ էլ էին բերում նորա մօտ, որ նո-
րանց դպչի. աշակերտներն էլ երբոր տեսան,
16 յանդիմանում էին նորանց ։ Բայց Յիսուսը նո-
րանց իրան մօտ կանչեց, եւ ասաց. Թոյլ տուէք
երեխաներին ինձ մօտ գալ, եւ մի արգելէք դո-
րանց. վասն զի այդպիսիներին է Աստուծոյ ար-
17 քայութիւնը ։ Ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ Ով
որ Աստուծոյ արքայութիւնը չ՚ընդունի ինչպէս
երեխայ՝ նա չի մտնիլ նորա մէջ ։
18 Եւ մէկ իշխան հարցրեց նորան եւ ասաց.
Բարի վարդապետ, ի՞նչ գործեմ, որ յաւիտենա-
19 կան կեանքը ժառանգեմ ։ Յիսուսն էլ նորան ա-
սաց. Ի՞նչու ես ինձ բարի ասում. ոչ ով բարի
20 չէ բացի մէկը՝ Աստուած ։ Պատուիրանքները գի-
տես. Մի շնար, Մի սպանաներ, Մի գողանար,
Մի սուտ վկայեր, Պատուիր քո հօրը եւ մօրը ։
21 Նա էլ ասաց. Այդ ամենն իմ երեխայութիւնիցը
22 պահել եմ ։ Յիսուսն էլ երբոր այս լսեց՝ նորան
ասաց. Մէկ բան տակաւին պակաս է քեզ. ա-
մեն ինչ որ ունիս՝ ծախիր, եւ աղքատներին
տուր, եւ գանձ կ՚ունենաս երկնքումը, եւ եկ
23 հետեւիր ինձ ։ Նա էլ այս լսելով տրտմեցաւ.
24 վասն զի սաստիկ հարուստ էր ։ Յիսուսն էլ երբ-
որ նորան տրտմած տեսաւ, ասաց. Ի՞նչպէս դըժ-

ուար կ՚մտնեն Աստուծոյ արքայութիւնը նորանք,
25 որ ստացուածքներ ունին ։ Վասն զի աւելի հեշտ
է որ ուղտն ասեղի ծակով անցնէ, քան թէ հա-
26 րուստն Աստուծոյ արքայութիւնը մտնէ ։ Եւ նո-
րանք որ լսեցին՝ ասում էին. Էլ ո՞վ կարող է
27 ապրել ։ Նա էլ ասաց. Այն բաներն որ կարելի
չեն մարդկանց մօտ, կարելի են Աստուծոյ մօտ ։
28 Եւ Պետրոսը ասաց. Ահա մենք բոլորը թողինք
29 եւ քո ետեւից եկանք ։ Նա էլ ասաց նորանց.
Ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ Ոչ ով չկայ, որ
թողել է տուն, կամ ծնողներ, կամ եղբայրներ,
կամ կին, կամ որդիք՝ Աստուծոյ արքայութեան
30 համար. Որ բազմապատիկ չ՚առնէ այս ժամա-
նակումը, եւ այն գալու աշխարհքումը յաւի-
տենական կեանքը ։
31 Եւ այն տասներկուսին մօտն առաւ եւ ասաց
նորանց. Ահա վեր ենք ելլում Երուսաղէմ. եւ
կ՚կատարուին մարգարէների ձեռովն Որդոյ մար-
32 դոյ համար բոլոր գրուածները ։ Վասն զի հեթա-
նոսներին կ՚մատնուի, եւ ծաղր կ՚լինի, կ՚հայհոյ-
33 ուի, եւ նորա վերայ կ՚թքուի ։ Եւ կ՚ծեծեն եւ
կ՚սպանեն նորան. եւ երրորդ օրը յարութիւն
34 կ՚առնէ ։ Եւ նորանք սորանցից ոչինչ չիմացան,
եւ խօսքը ծածկուած էր նորանցից, եւ ասած
բաները չէին իմանում ։
35 Եւ եղաւ, որ նա Երիքովին մօտենալիս, մի
կոյր ճանապարհի վերայ նստած մուրանում էր ։
36 Եւ երբոր ժողովրդի անցնելը լսեց, հարցնում
37 էր՝ թէ Դա ի՞նչ է ։ Եւ պատմեցին նորան, թէ
38 Յիսուս Նազորեցին է անցնում ։ Եւ նա աղաղա-
կեց եւ ասաց. Յիսուս՝ Որդի Դաւթի, ինձ ո-
39 ղորմիր ։ Եւ նորանք՝ որ առջեւից գնում էին,

յանդիմանում էին նորան, որ լռէ. իսկ նա էլ
աւելի էր աղաղակում. Որդի Դաւթի, ինձ ո-
40 ղորմիր։ Յիսուսն էլ կանգնեց եւ հրամայեց, որ
նորան իրան մօտ բերեն. եւ երբոր նա մօտ եկաւ
41 հարցրեց նորան եւ ասաց. Ի՞նչ ես ուզում, որ
42 անեմ քեզ. եւ նա ասաց. Տէր, որ տեսնեմ։ Եւ
Յիսուսն էլ ասաց նորան. Տես. քո հաւատքը
43 ապրեցրեց քեզ։ Եւ իսկոյն տեսնում էր, եւ նո-
րա ետեւից գնում էր՝ Աստուծոյն փառաւորե-
լով. եւ բոլոր ժողովուրդը որ տեսաւ՝ օրհնու-
թիւն էր տալիս Աստուծոյն։

ԳԼ. ԺԹ

1 Եւ մտաւ՝ Երիքովի միջովն անցնում էր։ (2) Եւ
ահա մի մարդ՝ անունը Զաքէոս կոչուած, որ
3 նա մաքսապետ էր, եւ ինքն հարուստ էր։ Եւ
ուզում էր Յիսուսին տեսնել թէ ով է, բայց
բազմութեան պատճառով չէր կարողանում. քան-
4 զի հասակով կարճ էր։ Եւ առաջ վազեց՝ վեր ելաւ
մի ժանտաթզենու վերայ, որ տեսնէ նորան. վասն
5 զի այնտեղովն պիտի անցնէր։ Եւ երբոր այն
տեղն եկաւ, Յիսուսը վեր նայեց եւ նորան ա-
սաց. Զաքէ, շուտ արա, իջիր. վասն զի պէտք
6 է ինձ այսօր քո տանը կենալ։ Նա շտապելով
7 իջաւ եւ ուրախութիւնով ընդունեց նորան։ Եւ
բոլոր տեսնողները տրտնջում էին եւ ասում. թէ
Մեղաւոր մարդու մօտ մտաւ հանգիստ առնե-
8 լու։ Զաքէոսն եկաւ կանգնեց եւ Տիրոջն ասաց.
Տէր, ահա իմ ապրանքների կէսն աղքատներին
կ'տամ. եւ եթէ մէկին զրկել եմ՝ չորեքպատիկ
9 կ'վճարեմ։ Յիսուսն էլ նորան ասաց. թէ Այսօր

փրկութիւն եղաւ այս տանը. վասն զի սա էլ
10 Աբրահամի որդի է։ Վասն զի Որդին մարդոյ ե-
կաւ, որ որոնէ եւ ապրեցնէ կորածին։
11 Եւ դեռ որ նորանք այս բաները լսում էին,
մի առակ աւելցրեց եւ ասաց, որովհետեւ Երու-
սաղէմին մօտենում էր, եւ նորանք կարծում էին,
թէ Աստուծոյ արքայութիւնը իսկոյն յայտնուելու
12 է։ Ապա ասաց. Մի ազնուական գնաց հեռու
երկիր, որ թագաւորութիւն առնէ իրան համար
13 եւ ետ դառնայ։ Եւ իր տասն ծառաներին կան-
չեց, տասն մնաս տուաւ նորանց, եւ ասաց նո-
14 րանց. Բանեցրէք մինչեւ որ գամ։ Բայց նորա
քաղաքացիներն ատում էին նորան. եւ նորա ե-
տեւից պատգամաւորներ ուղարկեցին եւ աս-
ացին. Չենք ուզում որ դա թագաւորէ մեզ վե-
15 րայ. Եւ եղաւ՝ որ նա թագաւորութիւնն առած
ետ դարձաւ. եւ ասաց որ կանչեն այն ծառա-
ներին, որոնց տուել էր արծաթը, որ գիտնայ,
16 թէ ով շահուեցաւ։ Եւ առաջինն եկաւ եւ ա-
17 սաց. Տէր, քո մնասը շահեց տասն մնաս։ Եւ
նորան ասաց. Լա՛ւ, բարի ծառայ, որովհետեւ
քիչումը հաւատարիմ եղար, տասն քաղաքի վե-
18 րայ իշխանութիւն ունեցիր։ Եւ երկրորդն եկաւ
եւ ասաց. Տէր, քո մնասը հինգ մնաս շահեց։
19 Նորան էլ ասաց. Դու էլ հինգ քաղաքի վերայ
20 եղիր։ Եւ ուրիշն էլ եկաւ եւ ասաց. Տէր, ահա
քո մնասը՝ որ վարշամակի մէջ պատած պահում
21 էի։ Վասն զի վախենում էի քեզանից. որովհե-
տեւ դու պինդ մարդ ես. վեր ես առնում ինչ
որ չես դրել, եւ հնձում ես ինչ որ չես սերմել։
22 Եւ ասաց նորան. Քո բերանիցը քեզ դատում
եմ, չար ծառայ. գիտէիր որ ես պինդ մարդ եմ,

որ վեր եմ առնում ինչ որ չեմ դրել, եւ հնձում
23 եմ ինչ որ չեմ սերմել։ Էլ ինչո՞ւ իմ արծաթը
սեղանաւորներին չտուիր, որ ես գալի շահով ետ
24 առնէի նորան։ Եւ այնտեղ կանգնողներին ա-
սաց. Առէք դորանից մնասը, եւ տուէք տասն
25 մնասն ունեցողին։ Եւ նորան ասացին. Տէր,
26 տասն մնաս ունի։ Քանզի ասում եմ ձեզ. թէ
Ամեն ունեցողին կ'տրուի. եւ չունեցողից նա
27 էլ որ ունի, վեր կ'առնուի։ Իսկ այն իմ թշնա-
միներին, որ չէին ուզում, որ ես նորանց վերայ
թագաւորեմ, այստեղ բերէք եւ սպանեցէք իմ
28 առջեւ։ Եւ երբոր այս ասաց, առաջ գնաց, որ
վեր ելլէ Երուսաղէմ։
29 Եւ եղաւ երբոր Բեթփագէին եւ Բեթանիա-
յին մօտեցաւ, այն լեռան մօտ՝ որ Ձիթենեաց
լեռ է կոչվում, իր աշակերտներից երկուսին
30 ուղարկեց եւ ասաց. Գնացէք այդ դիմացի գիւղը,
եւ երբոր մէջը մտնէք, մի կապած յաւանակ կը
գտնէք, որի վերայ երբէք ոչ մի մարդ նստած
31 չէ. նորան արձակեցէք բերէք։ Եւ եթէ մէկը
հարցնէ ձեզ՝ թէ ինչո՞ւ էք արձակում, նորան
32 այսպէս ասացէք՝ թէ Տիրոջը պէտք է սա։ Ու-
ղարկուածներն էլ երբոր գնացին, այնպէս գտան
33 ինչպէս նորանց ասաց։ Եւ նորանք յաւանակն
արձակելիս՝ նորա տէրերն ասացին նորանց. Ին-
34 չո՞ւ էք արձակում այդ յաւանակը։ Նորանք էլ
35 ասացին. Տիրոջը պէտք է սա։ Եւ նորան բերին
Յիսուսի մօտ. եւ իրանց հանդերձները յաւանա-
36 կի վերայ գցեցին, եւ Յիսուսին հեծեցրին։ Եւ
նորա գնալու ժամանակին իրանց հանդերձները
37 փռում էին ճանապարհի վերայ։ Եւ երբոր նա
արդէն մօտեցաւ Ձիթենեաց լեռան զառիվայրին,

աշակերտների բոլոր բազմութիւնն ուրախու-
թիւնով սկսեց օրհնել Աստուծոյն բարձր
ձայնով՝ այն բոլոր զօրութիւնների համար, որ
38 տեսել էին։ Եւ ասում էին. Օրհնեալ է Տիրոջ
անունովը եկող թագաւորը. խաղաղութիւն լինի
39 երկնքումը եւ փառք ՚ի բարձունս։ Եւ Փարիսե-
ցիներից ոմանք ժողովրդի միջիցը նորան ասա-
ցին. Վարդապետ յանդիմանիր աշակերտներիդ։
40 Եւ նա պատասխանեց եւ ասաց՝ Ասում եմ ձեզ՝
որ եթէ սորանք լռեն, քարերն են աղաղակելու։
41 Եւ երբոր մօտեցաւ, տեսաւ քաղաքին, լացաւ
42 նորա վերայ եւ ասաց. Եթէ դու էլ իմանայիր՝
գոնեա քո այս օրուան օրը քո խաղաղութեան
մասին. բայց հիմա ծածկուեցաւ քո աչքերիցը։
43 Վասն զի օրեր կ'գան քեզ վերայ, եւ քո թըշ-
նամիներդ չորս կողմովդ պատնէշ կ'պատեն, եւ
կ'պաշարեն քեզ եւ ամեն կողմից քեզ կ'նեղա-
44 ցընեն. Եւ հիմնայատակ կ'անեն քեզ եւ քո որ-
դիքն էլ քո միջումը. եւ չեն թողլ քո միջումը
քար քարի վերայ. փոխանակ որ՝ չճանաչեցիր
քեզ այցելելու ժամանակը։
45 Եւ տաճարը մտաւ սկսեց դուրս հանել նորա-
46 նում ծախողներին եւ առնողներին. Եւ նորանց
ասաց. Գրուած է՝ թէ Իմ տունն աղօթքի տուն
է, դուք նորան աւազակների այր էք արել։
47 Եւ ամեն օր սովորեցնում էր նորանց տաճա-
րումը. բայց քահանայապետները եւ դպիրները
ուզում էին կորցնել նորան, ժողովրդի գլխա-
48 ւորներն էլ։ Եւ չէին գտնում, թէ ինչ անեն.
քանզի բոլոր ժողովուրդը նորանից կախուած էր
լսելով։

Գլ. Ի

1 Եւ եղաւ որ այն օրերի մէկին նա տաճարումը
ժողովրդին սովորեցնելիս, քահանայապետները
2 եւ դպիրները ծերերին հետ վերայ հասան։ Եւ
ասացին նորան. Ասա մեզ, ինչ իշխանութի-
նով ես անում այդ բաները, կամ ո՞վ է այդ իշ-
3 խանութիւնը քեզ տուողը։ Եւ նա պատասխանեց
եւ ասաց նորանց. Ես էլ ձեզ մէկ բան հարցնեմ,
4 եւ ասացէք ինձ։ Յօհաննէսի մկրտութիւնը եր-
5 կնքի՞ցն էր, թէ մարդկանցից։ Եւ նորանք ի-
6 րանց միջումը միտք արին եւ ասացին. Եթէ ա-
սենք. Երկնքիցը. կ'ասէ. Ապա ինչո՞ւ չհաւա-
տացիք. եւ եթէ ասենք. Մարդկանցից, բոլոր
ժողովուրդը կ'քարկոծէ մեզ, վասն զի համոզ-
7 ուած են թէ Յօհաննէսը մարգարէ է։ Եւ պա-
8 տասխանեցին չգիտել, թէ որտեղից է։ Եւ Յի-
սուսն էլ նորանց ասաց. Ես էլ ձեզ չեմ ասիլ՝
թէ ինչ իշխանութիւնով եմ անում այս բաները։
9 Եւ սկսեց այս առակն ասել ժողովրդին. Մի
մարդ այգի տնկեց, եւ մշակների տուաւ նորան,
եւ ինքն օտարութիւն գնաց շատ ժամանակով։
10 Եւ ժամանակին մի ծառայ ուղարկեց մշակների
մօտ, որ այգու պտղից իրան տան. բայց մշակ-
ները ծեծեցին նորան եւ դատարկ ետ ուղար-
11 կեցին։ Եւ նորա վերայ մի ուրիշ ծառայ էլ ու-
ղարկեց. եւ նորանք նորան էլ ծեծեցին, անպա-
12 տիւ արին եւ դատարկ ետ ուղարկեցին։ Եւ նորա
վերայ մի երրորդին էլ ուղարկեց. նորանք նո-
13 րան էլ վիրաւորեցին դուրս հանեցին։ Եւ այգու
տէրն ասաց. Ի՞նչ անեմ. իմ սիրելի որդին ու-
14 ղարկեմ. գուցէ նորան տեսնելով ամաչեն։ Բայց

մշակներն երբոր նորան տեսան՝ իրար հետ խոր-
հուրդ արին եւ ասացին. Սա է ժառանգը. ե-
կէք սպանենք սորան. որ ժառանգութիւնը մերը
15 լինի։ Եւ այգուցը դուրս հանեցին նորան եւ
սպանեցին. արդ այգու տէրն ի՞նչ կ'անէ նորանց։
16 Կ'գայ եւ այն մշակներին կ'կորցնէ, եւ այգին
ուրիշներին կ'տայ։ Լսողներն էլ ասացին. Քաւ
17 լիցի։ Իսկ նա մտիկ տուաւ նորանց եւ ասաց.
Ապա ի՞նչ է այն գրուածը, Թէ Այն քարն՝ որ
շինողներն անարգեցին, նա անկիւնի գլուխ ե-
18 ղաւ։ Ամեն այս քարի վերայ ընկողը կ'փշրուի,
եւ ում վերայ որ նա ընկնի, կ'ջարդէ նորան։
19 Եւ քահանայապետներն եւ դպիրները նոյն ժա-
մումն ուզում էին ձեռք ձգել նորա վերայ, բայց
ժողովրդիցը վախեցան. վասն զի իմացան, որ
իրանց համար ասաց այն առակը։
20 Եւ դարանամուտ լինելով խաբերայ մարդիկ
ուղարկեցին, որ կեղծաւորութիւնով իրանց ան-
ձերն արդար էին ցոյց տալիս, որ խօսքով բռնե-
նեն նորան՝ տէրութեան եւ կուսակալի իշխա-
21 նութեանը նորան մատնելու համար։ Եւ նորան
հարցրին եւ ասացին. Վարդապետ, գիտենք որ
ուղիղ ես խօսում եւ սովորեցնում, եւ երես-
պաշտութիւն չես անում. այլ ճշմարտութիւնով
22 սովորեցնում ես Աստուծոյ ճանապարհը։ Արժա՞ն
23 է մեզ՝ Կայսրին հարկ տալ թէ ոչ։ Նորանց խո-
րամանկութիւնը հասկանալով, ասաց նորանց.
24 Ինչո՞ւ էք փորձում ինձ. Ցոյց տուէք ինձ մի
դահեկան. Ո՞ւմ պատկերն եւ գիրն ունի սա։
25 Պատասխանեցին եւ ասացին. Կայսեր։ Եւ նա
ասաց նորանց. Ուրեմն կայսրինը կայսրին տուէք,
26 եւ Աստուծոյնը Աստուծոյն։ Եւ չ'կարացին խօս-

քով բռնել նորան ժողովրդի առջեւը. եւ նորա
պատասխանի վերայ զարմանալով լռեցին:
27 Սադուկեցիներից, որ հակառակում են թէ
յարութիւն չ'կայ, ոմանք մօտ եկան եւ հարցրին
28 նորան, Եւ ասացին. Վարդապետ, Մօսէս գրեց
մեզ, Եթէ մէկի եղբայրը մեռնէ, որ կին ունե-
նայ, եւ ինքն անորդի մեռնէ, որ նորա եղբայրն
այն կնոջն առնէ եւ իր եղբօր համար զաւակ յա-
29 րուցանէ: Հիմա եօթն եղբարք կային, եւ ա-
ռաջինն կին առաւ եւ առանց զաւակի մեռաւ:
30 Եւ երկրորդն առաւ այն կինը, եւ նա էլ մեռաւ
31 առանց զաւակի: Երրորդն էլ առաւ նորան. այս-
պէս հէնց այն եօթն էլ, եւ որդիք չ'թողին, եւ
32 մեռան: Եւ ամենից յետոյ այն կինն էլ մեռաւ:
33 Արդ յարութեան ժամանակին նորանցից ո՞րին
պիտի լինի կին. վասն զի այն եօթն էլ կին ա-
34 ռին նորան: Եւ Յիսուսը պատասխանեց եւ ա-
սաց նորանց. Այս աշխարհքի որդիքը կին են
35 առնում եւ մարդու են գնում: Բայց նորանք որ
արժանի լինին այն աշխարհքին հասնելու եւ մե-
ռելներից յարութիւն առնելու, ոչ կին կ'առնեն
36 եւ ոչ մարդու կ'գնան: Եւ ոչ իսկ այլ եւս կարող են
մեռնել, վասն զի հրեշտակների հաւասար են
եւ Աստուծոյ որդիք, յարութեան որդիք լինե-
37 լով: Բայց թէ մեռելները յարութիւն կ'առնեն,
Մօսէսն էլ մարգարէացաւ մորենու մօտ, ինչպէս
Տիրոջ համար ասում է՝ Աստուած Աբրահամու
եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակո-
38 բայ: Իսկ Աստուած մեռելների չէ, այլ կենդա-
նիների. վասն զի ամենքը կենդանի են նորան:
39 Դպիրներից ոմանք պատասխանեցին եւ ասա-
40 ցին. Վարդապետ, լաւ ասացիր. Եւ այլ եւս

չէին համարձակւում նորանից ոչ մի բան հար-
ցընելու:
41 Եւ նորանց ասաց. Ի՞նչպէս են ասում Քրիս-
42 տոսի համար՝ թէ Դաւթի որդի է: Եւ Դաւիթ
ինքն Սաղմոսաց գրքումն ասում է. Տէրն իմ
43 Տիրոջն ասաց՝ Իմ աջ կողմը նստիր, Մինչեւ որ
քո թշնամիները ոտիդ պատուանդան դնեմ:
44 Արդ եթէ Դաւիթ Տէր է կոչում նորան, ապա
ի՞նչպէս է նորա որդի:
45 Եւ երբոր բոլոր ժողովուրդը լսում էր, ասաց
46 իր աշակերտներին. Զգոյշ կացէք դպիրներից,
որ փառաւոր պատմուճաններով կամենում են
ման գալ եւ սիրում են հրապարակներումը բարեւ
առնելը, եւ ժողովարաններումը առաջին աթոռ-
47 ները, եւ ընթրիքներումը վերեւի տեղերը: Որ
որբեւայրիների տուներն ուտում են, եւ պատ-
ճառանքով երկար աղօթք են անում. նորանք
աւելի դատապարտութիւն կ'ընդունեն:

ԳԼ. ԻԱ

1 Եւ մտիկ տուաւ, տեսաւ հարուստներին, որ
2 իրանց տուրքը գանձանակն էին գցում: Մի որբ-
եւայրի աղքատ կին էլ տեսաւ, որ երկու լու-
3 մայ գցեց այնտեղ: Եւ ասաց. Ճշմարիտ ասում
եմ ձեզ, թէ այս աղքատ որբեւայրին ամենիցն
4 աւելի գցեց: Վասն զի նորանք ամենքն իրանց
աւելցածներիցը գցեցին Աստուծոյ ընծաների
մէջ, իսկ սա իր կարօտութիւնիցն իր բոլոր ապ-
րուստն՝ որ ունէր՝ գցեց:
5 Եւ երբոր ոմանք ասում էին տաճարի համար,
թէ Գեղեցիկ քարերով եւ աշտարակներով զար-

6 դարուած է, ասաց. Այդ բոլորը որ տեսնում
էք, օրեր կ'գան, որ այդտեղ քար քարի վերայ
7 չի թողուիլ որ չքանդուի: Եւ հարցրին Նորան եւ
ասացին. Վարդապետ, ե՞րբ կ'լինին սորանք
8 եւ ի՞նչ է նշանը՝ երբոր այդ լինի: Նա էլ ա-
սաց. Զգոյշ կացէք՝ մի խաբուիք. վասն զի շա-
տերը կ'գան իմ անունովը եւ կ'ասեն, թէ Ես եմ.
եւ ժամանակը մօտեցաւ. արդ նորանց ետեւից
9 մի գնաք: Բայց երբոր պատերազմներ եւ խռո-
վութիւններ կ'լսէք, մի զարհուրիք. քանզի պէտք
է, որ առաջ նա լինի, բայց դեռ շուտով վերջը
10 չէ: Այն ժամանակ նորանց ասաց. Ազգ ազգի
վերայ վեր կ'կենայ եւ թագաւորութիւն թագա-
11 ւորութեան վերայ: Եւ մեծամեծ գետնաշարժ-
ներ եւ տեղ տեղ սովեր եւ սաստիկ մահեր կը
լինին. եւ երկնքից ահաւոր բաներ եւ մեծա-
12 մեծ նշաններ կ'լինին: Բայց այս բոլոր բաների-
ցըն առաջ իրանց ձեռները ձեզ վերայ կ'ձգեն եւ
կ'հալածեն. և ժողովարանների եւ բանտերի
մէջ կ'մատնեն, եւ կ'տանեն թագաւորների եւ
13 կուսակալների առջեւ՝ իմ անուան համար: Եւ
14 — կ'լինի ձեզ վկայութեան համար: Արդ ձեր
սրտի մէջ դրէք, որ առաջուց հոգս չանէք պա-
15 տասխանելու համար: Վասն զի ես բերան եւ
իմաստութիւն կ'տամ ձեզ. որին չեն կարողա-
նալ հակառակ խօսիլ եւ ոչ ընդդիմանալ ձեր հա-
16 կառակորդները: Եւ կ'մատնուիք ծնողներից եւ
եղբայրներից եւ ազգականներից եւ բարեկամ-
17 ներից էլ եւ ձեզանից կ'սպանեն: Եւ բոլորին
18 ատելի կ'լինիք իմ անուան համար: Եւ ձեր գլ-
19 խիցը մէկ մազ չի կորչիլ: Եւ ձեր համբերու-
թեամբը կ'շահէք ձեր հոգիները:

20 Բայց երբոր կ'տեսնէք Երուսաղէմը զօրքերով
շրջապատուած, այն ժամանակ գիտացէք, թէ
21 նորա աւերումը մօտ է: Այն ժամանակ նորանք
որ Հրէաստանումն են, թող լեռները փախչին.
եւ նորանք, որ նորա միջումն են, թող հեռա-
նան. եւ նորանք, որ նորա գաւառներումն են,
22 թող չմտնեն նորա մէջ: Վասն զի այն օրերը
վրէժխնդրութեան օրեր են, որ ամեն գրուած-
23 ները կատարուին: Բայց այն օրերումը վայ յղի-
ներին եւ ծիծ տուողներին. քանզի մեծ նեղու-
թիւն կ'լինի երկրիս վերայ, եւ բարկութիւն այդ
24 ժողովրդի վերայ: Եւ սրի բերանով կ'ընկնին,
եւ բոլոր հեթանոսների մէջ գերի կ'տարուին.
եւ Երուսաղէմը հեթանոսներից ոտնակոխ կ'լի-
նի, մինչեւ որ հեթանոսների ժամանակները կա-
25 տարուին: Եւ նշաններ կ'լինին արեգակումը եւ
լուսնումը եւ աստղներումը, եւ երկրի վերայ
հեթանոսների խռովութեան տագնապով, ծովը
26 կ'գոչէ, եւ կ'ծփան ալիքները: Որովհետեւ մարդ-
կանց սրտերը կ'նուաղին վախից եւ այն բաների
սպասելուցն, որ բոլոր աշխարհքի վերայ պիտի
գան. վասն զի երկնքի զօրութիւնները կ'շար-
27 ժուին: Եւ այն ժամանակ կ'տեսնեն Որդին մար-
դոյ ամպերի վերայ եկած զօրութեամբ եւ մեծ
28 փառքով: Եւ երբոր այս բաները կ'սկսեն լինել,
վեր հանեցէք եւ բարձրացրէք ձեր գլուխները.
վասն զի ձեր փրկութիւնը մօտ է:
29 Եւ նորանց մի առակ ասաց. Տեսէք թզենին
30 եւ բոլոր ծառերը. Երբոր արդէն բողբոջած են,
տեսնելով՝ ինքներդ իմանում էք, թէ ամառը
31 մօտ է: Այնպէս էլ դուք, երբոր այս բոլոր բա-
ները եղած տեսնէք, գիտացէք, որ Աստուծոյ

32 արքայութիւնը մօտ է։ Ճշմարիտն ասում եմ
ձեզ. թէ Այս ազգը չի անցնիլ, մինչեւ այս բո-
33 լորը լինի։ Երկինքն եւ երկիրս կ'անցնեն, բայց
34 իմ խօսքերը չեն անցնիլ։ Զգոյշ կ'ացէք անձնե-
րիդ, մի գուցէ ձեր սրտերը ծանրանան շատա-
կերութեամբ եւ արբեցութեամբ եւ ապրուստի
հոգսերով, եւ այն օրը յանկարծ հասնէ ձեզ վե-
35 րայ. Վասն զի որոգայթի պէս կ'հասնէ այն ա-
մենքի վերայ, որ բոլոր երկրի երեսի վերայ բը-
36 նակած են։ Ուրեմն արթուն կացէք, եւ ամեն
ժամանակ աղօթք արէք, որ արժանի լինիք ա-
զատուիլ այն բոլոր բաներիցն, որ պիտի լինին,
եւ կանգնել Որդոյ մարդոյ առջեւ։
37 Եւ ցերեկները տաճարումը սովորեցնում էր
եւ գիշերները դուրս էր գալիս եւ կենում այն
38 լեռանումն, որ Ձիթենեաց լեռ էր կոչվում։ Եւ
բոլոր ժողովուրդն առաւօտանց կանուխ գնում
էր տաճարն նորա մօտ նորանից լսելու։

Գլ. ԻԲ

1 Եւ բաղարջակերաց տօնը մօտեցաւ, որ զատիկ
2 է կոչվում։ Եւ քահանայապետներն եւ դպիրները
որոնում էին, թէ ինչպէս սպանեն նորան. վասն
զի ժողովրդից վախենում էին։
3 Սատանան էլ մտաւ Իսկարիօտացի ասուած
4 Յուդայի մէջ, որ տասներկուսի թւիցն էր։ Եւ
գնաց քահանայապետների եւ իշխանների հետ
խօսք կապեց, թէ նորան ինչպէս մատնէ նորանց։
5 Եւ նորանք ուրախացան եւ խոստացան՝ արծաթ
6 տալ նորան։ Եւ նա խօսք տուաւ եւ յարմար
ժամանակ էր որոնում՝ որ նորան մատնէ նորանց
առանց ամբոխի։

7 Եւ բաղարջակերաց օրն եկաւ, որում պէտք
8 էր զատիկը մորթել։ Եւ Պետրոսին եւ Յօհաննէսին
ուղարկեց եւ ասաց. Գնացէք զատիկը պատ-
9 րաստեցէք մեզ համար որ ուտենք։ Եւ նորանք
ասացին. Ի՞նչ տեղ ես կամենում, որ պատրաս-
10 տենք։ Նա էլ ասաց նորանց. Ահա երբոր քա-
ղաքը կ'մտնէք, մի մարդ կ'պատահի ձեզ, որ ջրի
կուժ է կրում. նորա ետեւից գնացէք այն տու-
11 նըն, որ նա կ'մտնէ։ Եւ տան տիրոջն ասացէք.
Վարդապետն ասում է քեզ. Ո՞ւր է այն օթե-
ւանը, ուր զատիկն ուտեմ աշակերտներիս հետ։
12 Եւ նա ձեզ մի մեծ վերնատուն ցոյց կ'տայ զար-
13 դարուած. այնտեղ պատրաստեցէք։ Եւ գնացին
այնպէս գտան, ինչպէս ասաց նորանց. եւ զա-
տիկը պատրաստեցին։
14 Եւ երբոր ժամն եղաւ, սեղան նստեց. եւ
15 տասներկու առաքեալներն էլ նորա հետ։ Եւ նո-
րանց ասաց. Ցանկանալով ցանկացայ՝ այս զա-
տիկը ձեզ հետ ուտել իմ չարչարվելուցն առաջ։
16 Վասն զի ասում եմ ձեզ, թէ սորանից էլ երբէք
չեմ ուտիլ, մինչեւ որ կատարուի Աստուծոյ ար-
17 քայութիւնումը։ Եւ բաժակն առաւ՝ գոհացաւ եւ
ասաց. Առէք դորան եւ ձեր միջումը բաժանե-
18 ցէք։ Վասն զի ասում եմ ձեզ, թէ որթի բեր-
քիցն էլ չեմ խմիլ, մինչեւ որ Աստուծոյ արքա-
յութիւնը գայ։
19 Եւ հաց առաւ, գոհացաւ, կոտրեց եւ նորանց
տուաւ, եւ ասաց. Այս է իմ մարմինը, որ ձեզ
համար տրվում է. այս արէք իմ յիշատակի հա-
20 մար։ Այնպէս էլ ընթրիքից յետոյ բաժակն ա-
ռաւ, եւ ասաց. Այս բաժակը նոր ուխտն է իմ
արիւնովը, որ ձեզ համար թափվում է։

21 Սակայն ահա իմ մատնողի ձեռն ինձ հետ սե-
22 ղանի վերայ է։ Եւ Որդին մարդոյ գնում է ինչ-
պէս սահմանուած է. բայց վայ այն մարդուն,
23 որի ձեռովը կ'մատնուի։ Եւ նորանք սկսեցին
հարցափորձ անել իրանց մէջ, թէ իրանցից ո՞վ
է արդեօք նա, որ այն բանը գործելու է։
24 Նորանց միջումն հակառակութիւն էլ եղաւ,
25 թէ իրանցից ո՞վ պիտի մեծ համարուի։ Եւ նա
ասաց նորանց. Ազգերի թագաւորները տիրա-
պետում են նորանց վերայ, եւ նորանց վերայ
իշխանութիւն անողները բարերար են կոչվում։
26 Բայց դուք ոչ այնպէս. այլ ձեր միջի մեծը՝ թող
փոքրագոյնի պէս լինի, եւ առաջնորդը ծառայո-
27 ղի պէս։ Քանզի ո՞վ է մեծ. սեղան նստո՞ղը թէ
ծառայո՞ղը. չէ՞ որ սեղան նստողը. բայց ես ձեր
28 միջումը ծառայողի պէս եմ։ Իսկ դուք էք, որ
միշտ ինձ հետ կենում էիք իմ փորձութիւններ-
29 ումը։ Եւ ես ուխտում եմ ձեզ Թագաւորութիւն՝
ինչպէս իմ Հայրն էլ ինձ թագաւորութիւն ուխ-
30 տեց. Որ ուտէք եւ խմէք իմ սեղանի վերայ իմ
արքայութիւնումը, եւ աթոռների վերայ նստէք՝
Իսրայէլի տասներկու ցեղին դատաստան անե-
լու համար։
31 Եւ Տէրն ասաց. Սիմոն Սիմոն. ահա սատա-
32 նան ձեզ ուզեց, որ խախալէ ցորենի պէս. Բայց
ես աղաչեցի քեզ համար, որ քո հաւատքը չպա-
կասի. եւ դու երբ դառնաս, եղբայրներիդ հաս-
33 տատիր։ Նա էլ ասաց նորան. Տէր, ես պատ-
րաստ եմ քեզ հետ բանտը եւ մահն էլ գնալու։
34 Եւ նա ասաց. Ասում եմ քեզ, Պետրոս, այսօր
հաւը չի խօսիլ, մինչեւ որ դու երեք անգամ
կ'ուրանաս՝ չգիտել ինձ։

35 Եւ նորանց ասաց. Երբոր ուղարկեցի ձեզ ա-
ռանց քսակի, եւ պարկի եւ կօշիկների, մի՞թէ
36 կարօտացաք մի բանի։ Նորանք էլ ասացին. Ոչ-
ինչի. ապա ասաց նորանց. Բայց հիմա քսակ
ունեցողը թող առնէ, այնպէս էլ պարկը. եւ
չունեցողը՝ թող իր հանդերձը ծախէ եւ իրան
37 համար սուր առնէ։ Վասն զի ասում եմ ձեզ,
թէ դեռ այս գրուածն էլ պէտք է կատարուի
ինձանում. թէ Անօրէնների հետ համարուեցաւ.
քանզի ինչ որ ինձ համար գրուած է, կատար-
38 վում է։ Նորանք էլ ասացին. Տէր, ահա այս-
տեղ երկու սուր կայ. եւ նա ասաց նորանց. Բա-
ւական է։
39 Եւ դուրս ելաւ իր սովորութեան պէս գնաց
Ձիթենեաց լեառը, Եւ աշակերտներն էլ նորա
40 ետեւից գնացին։ Եւ երբոր այն տեղը հասաւ,
նորանց ասաց. Աղօթք արէք, որ փորձութեան
41 մէջ չմտնէք։ Եւ ինքն նորանցից հեռացաւ մի
քարընկեցի չափ, ծունկ դրաւ, աղօթք էր ան-
42 ում, Եւ ասում. Հայր, եթէ կամիս այս բաժա-
կը անցրու ինձանից. սակայն ոչ թէ իմ կամքը՝
43 բայց քո կամքը լինի։ Եւ հրեշտակ երեւեցաւ նո-
րան երկնքից, եւ զօրացնում էր նորան, եւ
տագնապի մէջ լինելով, աւելի եռանդով էր ա-
44 ղօթք անում։ Եւ նորա քրտինքն էր ինչպէս ար-
իւնի կաթիլք, որ թափվում են երկրի վերայ։
45 Եւ աղօթքից վերկացաւ եկաւ իր աշակերտ-
ների մօտ, եւ նորանց քնի մէջ գտաւ տրտմու-
46 թիւնից. Եւ ասաց նորանց. Ինչո՞ւ էք քնում.
վերկացէք, աղօթք արէք, որ փորձութեան մէջ
չմտնէք։
47 Եւ նա տակաւին խօսելիս, ահա մի ամբոխ.

եւ Յուդայ կոչուածը՝ այն տասներկուսից մէկը՝
գնում էր նոցանից առջեւ. եւ մօտեցաւ Յիսու-
48 սին, որ համբուրէ նորան։ Յիսուսն էլ նորան
ասաց. Յուդա, համբոյրով ես Որդին մարդոյ
49 մատնում։ Երբոր նորա հետ լինողները տեսան,
թէ ի՞նչ է լինելու, նորան ասացին. Տէր, սրով
50 զարկէ՞նք։ Եւ նորանցից մէկը քահանայապետի
ծառային զարկեց, եւ նորա աջ ականջը կտրեց։
51 Յիսուսն էլ պատասխանեց եւ ասաց. Թող տը-
ւէք մինչ այդ վայր. եւ նորա ականջին մօտե-
52 ցաւ եւ բժշկեց նորան։ Եւ Յիսուսը ասաց ի-
րան վերայ եկած քահանայապետներին եւ տա-
ճարի իշխաններին եւ ծերերին. Ինչպէս մի ա-
ւազակի՞ վերայ դուրս եկաք սրերով եւ բիրերով։
53 Ես որ ամեն օր ձեզ հետ էի տաճարումը, ձեռք
չձգեցիք ինձ վերայ. բայց սա ձեր ժամն է եւ
խաւարի իշխանութիւնը։
54 Եւ նորան բռնեցին տարան, եւ մտցրին քա-
հանայապետի տունը. Պետրոսն էլ հեռուանց գը-
55 նում էր նորա ետեւից։ Եւ երբոր սրահի մէջ
կրակ էին վառել եւ չորս կողմով նստել, Պետ-
56 րոսն էլ նստեց նոցանց միջումը։ Մի աղախին
տեսնելով նորան՝ լուսոյ մօտ նստած, անդրեց
նորա վերայ եւ ասաց. Սա էլ նորա հետ էր։
57 Բայց նա ուրացաւ եւ ասաց. Ով կին, ես նո-
58 րան չեմ գիտում։ Եւ քիչ մի յետոյ ուրիշը տե-
սաւ նորան եւ ասաց. Դու էլ նորանցից ես.
59 Պետրոսն էլ ասաց. Ով մարդ, չեմ։ Եւ մէկ ժա-
մու չափ էլ որ անցաւ, մէկ ուրիշը վիճում էր
եւ ասում. Ճշմարիտ որ սա էլ նորա հետ էր.
60 վասն զի Գալիլեացի է։ Պետրոսն էլ ասաց.
Մարդ, չգիտեմ, թէ դու ի՞նչ ես ասում. եւ իս-

61 կոյն նա դեռ ասելիս՝ հաւը խօսեց։ Եւ Տէրը
դարձաւ մտիկ տուաւ Պետրոսին, եւ Պետրոսը
յիշեց Տիրոջ խօսքը, որ ասաց նորան. թէ Մին-
չեւ հաւի խօսելը, երեք անգամ կ'ուրանաս ինձ։
62 Եւ դուրս գնաց Պետրոսը դառնապէս լացաւ։
63 Եւ Յիսուսին պահող մարդիկը ծաղր էին ան-
64 ում նորան եւ ծեծում։ Եւ նորա աչքերը ծածկում
էին եւ երեսին զարկում, եւ նորան հարցնում
էին եւ ասում. Մարգարէացիր՝ ո՞վ է նա, որ
65 քեզ զարկեց։ Եւ ուրիշ շատ բաներ էլ հայհո-
յանքով խօսում էին նորա դէմ։
66 Եւ երբոր առաւօտ եղաւ, ժողովրդի ծերա-
կոյտը՝ քահանայապետներն եւ դպիրները ժողով-
վուեցան, եւ նորան հանեցին տարան իրանց
ատեանը, եւ ասացին. Եթէ դու Քրիստո՞սն ես,
67 ասա մեզ։ Եւ նորանց ասաց. Եթէ ասեմ ձեզ,
68 դուք չէք հաւատայ։ Եւ եթէ ձեզ հարցնեմ էլ,
ինձ պատասխան չէք տայ, կամ ինձ արձակել։
69 Բայց այսուհետեւ Որդին մարդոյ նստած կ'լինի
70 Աստուծոյ զօրութեան աջ կողմը։ Եւ ամենքն
ասացին. Ուրեմն դո՞ւ Աստուծոյ Որդին ես. եւ
նա ասաց նորանց. Դուք էք ասում, որ ես եմ։
71 Նորանք էլ ասացին. Էլ ի՞նչ պէտք է մեզ վը-
կայութիւն, վասն զի մենք ինքներս լսեցինք
դորա բերանից։

ԳԼ. ԻԳ

1 Եւ նորանց բոլոր բազմութիւնը վերկացաւ, եւ
2 նորան տարան Պիղատոսի մօտ։ Եւ սկսեցին
չարախօսութիւն անել նորանից եւ ասել. Սորան
գտանք որ ազգին ծռում էր՝ եւ արգելում էր

կայսեր հարկ տալ՝ ինքն իրան համար ասելով,
3 թէ Քրիստոս՝ թագաւորն է։ Բայց Պիղատոսը
հարցրեց նորան եւ ասաց. Դո՞ւ ես Հրէից թա-
գաւորը. Նա պատասխանեց նորան եւ ասաց.
4 Դու ասացիր։ Պիղատոսն էլ ասաց քահանայա-
պետներին եւ ժողովուրդներին. Ես մի յանցանք
5 չեմ գտնում այս մարդումը։ Բայց նորանք սաստ-
կացնում էին եւ ասում. թէ ժողովուրդները
խռովեցնում է բոլոր Հրէաստանի մէջ սովորե-
ցնելով՝ Գալիլեայիցն սկսած մինչեւ այստեղ։
6 Պիղատոսն էլ երբոր Գալիլեան լսեց, հարցրեց,
7 թէ այդ մարդը Գալիլեացի՞ է։ Եւ իմանալով թէ
Հերովդէսի իշխանութիւնիցն է. տանել տուաւ
նորան Հերովդէսի մօտ, որ նա էլ այն օրերը Ե-
րուսաղէմումն էր։
8 Հերովդէսն էլ Յիսուսին տեսնելով շատ ուրա-
խացաւ. վասն զի շատ ժամանակից ուզում էր
տեսնել նորան. որովհետեւ նորա համար շատ
բաներ էր լսել. եւ յոյս ունէր թէ մի նշան կը
9 տեսնէ նորանից եղած։ Շատ խօսքերով հարց-
նում էր նորան, բայց նա ոչինչ պատասխան չը
10 տուաւ նորան։ Քահանայապետներն եւ դպիր-
ները կանգնած էին, եւ շատ սաստիկ չարախօս-
11 ում էին նորանից։ Հերովդէսն էլ իր զինուորների
հետ անարգեց նորան. եւ ծաղր անելով՝ մի ըս-
պիտակ հանդերձ հագցրեց նորան, եւ ետ տա-
12 նել տուաւ Պիղատոսի մօտ։ Եւ Պիղատոսն ու
Հերովդէսը բարեկամ եղան այն օրը միմեանց հետ.
վասն զի առաջ իրար դէմ թշնամութեան մէջ
էին։
13 Պիղատոսն էլ կանչեց քահանայապետներին եւ
14 իշխաններին եւ ժողովրդին, Եւ նորանց ասաց.

Դուք այս մարդն ինձ մօտ բերիք իբրեւ ժողո-
վուրդը մոլորեցնող. եւ ահա ձեր առջեւ դատե-
լով ոչ մի յանցանք չգտայ այս մարդումն այն
բաների համար, որ դուք չարախօսում էք դո-
15 րանից։ Եւ ոչ էլ Հերովդէսը. վասն զի ձեզ տա-
նել տուի նորա մօտ. եւ ահա մեռնելու արժանի
16 ոչինչ չէ գործել դա։ Արդ խրատեմ դորան՝ եւ
17 արձակեմ։ Վասն զի հարկաւոր էր, որ տօնի ժա-
18 մանակին մի [illegible] արձակէր նորանց համար։ Իսկ
նորանք բոլոր բազմութեամբ աղաղակում էին
եւ ասում. Վեր առ դորան, եւ արձակիր մեզ
19 համար Բարաբբային. Որ քաղաքումն եղած մի
խռովութեան եւ մարդասպանութեան համար
20 բանտն էր գցուած։ Եւ Պիղատոսն դարձեալ խօ-
սեց դէպի նորանց. կամենալով արձակել Յիսու-
21 սին։ Իսկ նորանք աղաղակում էին եւ ասում.
22 Խաչիր, խաչիր դորան։ Եւ նա երրորդ անգամ
ասաց նորանց. Ապա ի՞նչ չար բան գործեց սա.
ոչինչ մեռնելու յանցանք չգտայ սորանում. կը
23 խրատեմ սորան եւ կ'արձակեմ։ Բայց նորանք
բարձր ձայնով ստիպում էին եւ խնդրում էին,
որ նա խաչուի. եւ նորանց եւ քահանայապետ-
24 ների աղաղակը զօրանում էր։ Եւ Պիղատոսը
25 վճռեց, որ նորանց խնդիրքը լինի։ Արձակեց նո-
րանց համար խռովութեան եւ մարդասպանու-
թեան համար բանտի մէջ գցուածը, որին խընդ-
րում էին. եւ Յիսուսին մատնեց նորանց կա-
մացը։
26 Եւ երբոր նորան տանում էին, Սիմոն Կիւրե-
նացի [illegible] մէկին բռնեցին, որ յանդիցը գա-
լիս էր. խաչը նորա վերայ դրին, որ Յիսուսի
27 ետեւից տանէ։ Եւ շատ ժողովուրդ էր գնում

նորա ետեւից. եւ կանայք էլ, որ կոծ եւ սուգ
28 էին անում նորա վերայ: Յիսուսն էլ դարձաւ՝
նորանց ասաց. Երուսաղէմի աղջիկներ, լաց մի
լինիք ինձ վերայ, այլ լաց եղէք ձեզ վերայ եւ
29 ձեր որդոց վերայ: Վասն զի ահա օրեր կ'գան,
որ կ'ասեն. Երանի ամուլներին եւ այն փորե-
րին, որ չծնան, եւ այն ծծերին, որ չծծեցրին:
30 Այն ժամանակ կ'սկսեն ասել լեռանց. Մեզ վե-
31 րայ ընկէք, եւ բլուրներին՝ ծածկեցէք մեզ: Վա-
սըն զի եթէ կանանչ փայտին այս բաներն են
անում, ապա չորին ի՞նչ կ'լինի:

32 Ուրիշ երկու չարագործ մարդիկ էլ տարան,
33 որ նորա հետ սպանեն: Եւ երբոր եկան այն
տեղը որ Գագաթն էր կոչվում, այնտեղ խաչե-
ցին նորան. եւ այն չարագործներին, մէկը աջ
34 կողմը եւ միւսը ձախ կողմը: Եւ Յիսուսը ասաց.
Հայր, թողիր դորանց. վասն զի չեն գիտում
թէ ինչ են անում. եւ նորա հանդերձները բա-
35 ժանելիս, վիճակ գցեցին: Եւ ժողովուրդը կանգ-
նած նայում էր. իշխաններն էլ նորանց հետ
ծաղր էին անում՝ եւ ասում. Ուրիշներին ապ-
րեցրեց, թող իրան էլ ապրեցնէ, եթէ դա է
36 Քրիստոսն, Աստուծոյ ընտրուածը: Զինուորներն
էլ էին ծաղր անում նորան. եւ մօտ գալով քա-
37 ցախ էին տալիս նորան. Եւ ասում. Եթէ դու
38 ես Հրէից թագաւորը, փրկիր քո անձը: Եւ մի
գիր էր գրուած նորա վերայ, Յունարէն, Հռով-
մայեցերէն եւ Եբրայեցերէն գրերով, Թէ Սա է
Հրէից թագաւորը:

39 Եւ այն կախուած չարագործներից մէկը հայ-
հոյում էր նորան եւ ասում. Եթէ դու ես Քրիս-
40 տոսը. փրկիր քո անձը եւ մեզ: Իսկ միւսը պա-

տասխանեց սաստելով նորան՝ եւ ասաց. Եւ դու
չե՞ս վախենում Աստուածանից, որ հէնց նոյն
41 պատժի մէջ ես: Ու մենք իրաւունքով ենք պատ-
ժուած. վասն զի մեր արած գործքերին արժանի
հատուցումն ենք առնում. իսկ սա ոչ մի ան-
42 տեղի բան չգործեց: Եւ ասաց Յիսուսին. Տէր
ինձ յիշիր, երբոր գաս քո թագաւորութիւնովը:
43 Եւ Յիսուսը ասաց նորան. Ճշմարիտ ասում
եմ քեզ. Դու այսօր ինձ հետ դրախտումը կ'լի-
նիս:

44 Եւ ժամը վեցի դէմ էր. եւ բոլոր երկրի վե-
45 րայ խաւար եղաւ մինչեւ ինն ժամը. Եւ արե-
գակը խաւարեցաւ, եւ տաճարի վարագոյրը մի-
46 ջիցը ճղուեցաւ: Եւ Յիսուսը մեծ ձայնով կան-
չեց եւ ասաց. Հայր, հոգիս քո ձեռքն եմ ա-
ւանդում. եւ այս ասելով հոգի տուաւ:

47 Եւ հարիւրապետը եղածը տեսնելով, Աստու-
ծոյն փառք տուաւ եւ ասաց. Յիրաւի՛ այս մար-
48 դըն արդար էր: Եւ բոլոր ժողովուրդները, որ
այս տեսարանը դիտելու համար եկել էին, եղած
բաները տեսնելով՝ իրանց կուրծքերը թակում
49 էին եւ յետ դառնում: Նորա բոլոր ծանօթներն
էլ հեռուանց կանգնած էին, եւ այն կանայքն
էլ, որ Գալիլեայիցը նորա ետեւից եկել էին եւ
տեսնում էին այս բաները:

50 Եւ ահա մի մարդ՝ անունը Յօսէփ, որ խոր-
51 հըրդական էր, բարեգործ եւ արդար մարդ: (Սա
չէր միաբանուել նորանց խորհրդի եւ գործքերի
հետ.) Հրէաների Արիմաթիա քաղաքիցը, որ ին-
քըն էլ հէնց սպասում էր Աստուծոյ արքայու-
52 թեանը: Սա գնաց Պիղատոսի մօտ եւ Յիսուսի
53 մարմինը խնդրեց: Եւ վայր բերաւ նորան, ազ-

նիւ կտաւով պատեց, եւ քարից փորած գերեզ-
մանի մէջ դրաւ՝ ուր երբէք մի մարդ դրուած
54 չէր։ Եւ օրը ուրբաթ էր, եւ շաբաթ էր լու-
սանում։
55 Եւ այն կանայքն էլ, որ Գալիլեայից նորա
հետ եկել էին՝ գնում էին նորա ետեւից, տե-
սան գերեզմանը, եւ թէ ինչպէս դրուեցաւ նորա
56 մարմինը։ Եւ յետ դարձան, խունկեր եւ իւղեր
պատրաստեցին. բայց շաբաթ օրը հանդարտ մնա-
ցին պատուիրանքի համեմատ։

ԳԼ. ԻԴ

1 Բայց մէկ շաբթի օրը առաւօտանց կանուխ ե-
կան գերեզմանը, եւ բերին այն խունկերը, որ
2 պատրաստեցին. եւ ոմանք էլ նորանց հետ։ Եւ
3 քարը գերեզմանից հեռու թաւալած գտան։ Եւ
երբոր ներս մտան, Տէր Յիսուսի մարմինը չգը-
4 տան։ Եւ եղաւ երբոր նորա համար շատ հիա-
ցել էին, եւ ահա երկու մարդ հասան նորանց
5 լուսաւոր հանդերձներով։ Եւ երբոր նորանք
ահով լցուեցան, եւ իրանց երեսները դէպի եր-
կիր խոնարհեցրին, նորանց ասացին. Ի՞նչ էք
6 կենդանին մեռելների մէջ որոնում։ Այստեղ չէ,
այլ յարութիւն առաւ. յիշեցէք ինչպէս նա ձեզ
7 հետ խօսեց, երբոր Գալիլեայումն էր. Որ աս-
ում էր. թէ Պէտք է Որդին մարդոյ մեղաւոր
մարդկանց ձեռքը մատնուի՝ եւ խաչուի եւ եր-
8 րորդ օրը յարութիւն առնէ։ Եւ նորա խօսքերը
9 յիշեցին։ Եւ գերեզմանից ետ դարձան եւ այս
բոլոր բաները պատմեցին տասնումէկին եւ բո-
10 լոր ուրիշներին։ Եւ էին Մարիամ Մագդաղենա-
ցին, եւ Յօհաննան, եւ Յակոբայ Մարիամը, եւ

նորանց հետ ուրիշներն էլ, որ այս բաները աս-
11 ում էին առաքեալներին։ Եւ նորանց խօսքերը
ցնորք երեւեցաւ նորանց առջեւ, եւ չէին հա-
12 ւատում նորանց։ Բայց Պետրոսը վեր կացաւ
վազեց գերեզմանը, եւ ծռելով տեսաւ կտաւները
մենակ դրուած. եւ գնաց իր մտքումն զարմա-
նալով եղածի վերայ։
13 Եւ ահա նորանցից երկուսը մի եւ նոյն օրը մի
գիւղ էին գնում, որ վաթսուն ասպարէզ Երու-
14 սաղէմից հեռու էր, անունն Էմմաուս։ Եւ նո-
րանք իրար հետ խօսում էին այն բոլոր անցած
15 բաների համար։ Եւ եղաւ որ նորանք խօսելիս
եւ վիճաբանելիս, հէնց ինքն Յիսուսը մօտեցաւ
16 եւ գնում էր նորանց հետ։ Բայց նորանց աչքե-
17 րը բռնուած էին, որ չճանաչեն նորան։ Եւ նո-
րանց ասաց. Այդ ի՞նչ բաներ են, որոնց հա-
մար իրար հետ վիճում էք գնալիս, եւ տրտմած
18 էք։ Եւ պատասխանեց նորանցից մէկը, անունը
Կղէոպաս, եւ ասաց նորան. Դո՞ւ ես միայն ըն-
նակւում Երուսաղէմումն, որ չիմացար այն բա-
19 ները, որ այս օրերը եղան նորանում։ Եւ նա
ասաց նորանց. Ո՞ր բաներ. եւ նորանք ասացին.
Յիսուս Նազօրեցու մասին, որ մի մարգարէ մարդ
էր, զօրաւոր գործքերով Աստուծոյ եւ բոլոր ժո-
20 ղովրդի առջեւ։ Թէ ինչպէս մեր քահանայապետ-
ներն եւ իշխանները մահու դատաստանի մատ-
21 նեցին նորան, եւ խաչեցին նորան։ Իսկ մենք
յոյս ունէինք թէ նա է, որ Իսրայէլին փրկելու
էր. այլ այսու ամենայնիւ սա երրորդ օրն է, որ
22 այս բաները եղան։ Բայց մի քանի կանայք էլ
մեր միջից զարմացրին մեզ, որ առաւօտանց
23 կանուխ գնացին գերեզմանը, Եւ նորա մարմինը

չգտած՝ եկան եւ ասացին․ թէ Հրեշտակների
տեսիլք էն տեսել, որ ասում էին թէ նա կեն-
24 դանի է։ Եւ մեզանից ոմանք գնացին գերեզմա-
նը, եւ իսկ այնպէս գտան, ինչպէս կանայքն ա-
25 սացին, բայց նորան չտեսան։ Եւ նա ասաց նո-
րանց․ Ով անմիտներ եւ թուլասիրտներ, հաւա-
տալու այն բոլոր բաներին, որ մարգարէները
26 խօսեցան։ Չէ՞ որ պէտք էր՝ որ Քրիստոսը այս
չարչարանքները քաշէր եւ իր փառքը մտնէր։
27 Եւ սկսեց Մովսէսից եւ բոլոր մարգարէներից,
մեկնում էր նորանց՝ ինչ որ գրքերի մէջ գրուած
28 էր իր մասին։ Եւ մօտեցան այն գիւղին, ուր
գնում էին․ եւ նա այնպէս էր ցոյց տալիս,
29 թէ աւելի հեռու տեղ է գնում։ Եւ բռնադատե-
ցին նորան եւ ասացին․ Մնա մեզ հետ, վասն
զի իրիկուայ դէմ է եւ օրս իջել է․ եւ մտաւ
30 որ նորանց հետ մնայ։ Եւ եղաւ երբոր նա նո-
րանց հետ սեղան նստեց, հաց առաւ՝ օրհնեց,
31 կտրեց եւ տուաւ նորանց։ Եւ նորանց աչքերը
բացուեցան եւ նորան ճանաչեցին․ եւ նա անե-
32 րեւոյթ եղաւ նորանցից։ Եւ իրար ասացին, Չէ՞
որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբ-
որ ճանապարհին մեզ հետ խօսում էր, եւ ինչ-
պէս գրքերը բաց էր անում մեզ համար։
33 Եւ նոյն ժամին վերկացան՝ յետ դարձան Ե-
րուսաղէմ, եւ այն տասնումէկին ժողովուած
34 գտան, եւ նորանց հետ լինողներին․ Եւ ասա-
ցին․ թէ Արդարեւ Տէրը յարութիւն է առել, եւ
35 երեւացել Սիմօնին։ Եւ նորանք պատմում էին
այն որ ճանապարհին եղաւ, եւ թէ ինչպէս իրան
ճանաչեցրեց իրանց՝ հաց կտրելու ժամանակին։
36 Եւ նորանք այս խօսելիս, Յիսուս ինքն կանգ-

նեց նորանց միջումը եւ նորանց ասաց․ Խաղա-
37 ղութիւն ձեզ։ Եւ նորանք զարհուրելով վախե-
38 ցած, համարում էին, թէ հոգի են տեսնում։ Եւ
նորանց ասաց․ Ինչո՞ւ էք շփոթուած․ ինչո՞ւ
համար խորհուրդներ են վերկենում ձեր սրտե-
39 րումը։ Տեսէք իմ ձեռները եւ իմ ոտները, որ
ես ինքս եմ․ շօշափեցէք ինձ եւ տեսէք՝ քանզի
հոգին՝ մարմին եւ ոսկերք չունի, ինչպէս ինձ
40 էք տեսնում որ ունիմ։ Եւ սա որ ասաց, ձեռ-
41 ները եւ ոտները ցոյց տուաւ նորանց։ Եւ քանի
որ դեռ չէին հաւատում ուրախութիւնից եւ զար-
մացած էին, ասաց նորանց․ Կերակուր ունի՞ք
42 այստեղ։ Եւ նորանք խորոված ձկան կտոր տուին
43 նորան՝ եւ մեղրախորիսխ։ Եւ առաւ կերաւ նո-
44 րանց առջեւ։ Եւ ասաց նորանց․ Այս այն բա-
ներն են՝ որ ձեզ հետ խօսեցի, քանի որ ձեզ հետ
էի, թէ պէտք է կատարուի Մովսէսի օրէնքումն
եւ մարգարէներումն եւ սաղմոսներումը բոլոր
45 ինձ համար գրուածները։ Այն ժամանակ նորանց
46 միտքը բացաւ, որ գրքերն իմանան։ Եւ նորանց
ասաց․ թէ Այսպէս է գրուած, եւ այսպէս պէտք
էր, Քրիստոսին չարչարուել եւ երրորդ օրը մե-
47 ռելների միջից յարութիւն առնել․ Եւ նորա ա-
նունովը ապաշխարութիւն եւ մեղաց թողու-
թիւն քարոզուել բոլոր ազգերի մէջ Երուսաղէ-
48 մից սկսած։ Եւ դուք այս բաների համար վկա-
49 ներ էք։ Եւ ահա ես իմ Հօր աւետիքը կ'ու-
ղարկեմ ձեզ վերայ․ դուք էլ նստեցէք Երուսա-
ղէմ քաղաքումը, մինչեւ վերեւից զօրութիւն
հագնիք։
50 Եւ նորանց հանեց մինչեւ Բեթանիա․ եւ իր
51 ձեռները բարձրացրեց եւ օրհնեց նորանց։ Եւ

եղաւ որ նա նորանց օրհնելիս, ջոկուեց նորան-
52 ցից, եւ վերանում էր երկինքը։ Եւ նորանք եր-
կրպագեցին նորան, եւ մեծ ուրախութիւնով
53 յետ դարձան Երուսաղէմ։ Եւ ամեն ժամանակ
տաճարումն էին. գովում եւ օրհնում էին Աս-
տուծոյն։ Ամէն։

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Սկզբումն էր Բանը. եւ Բանն Աստուծոյ մօտ
2 էր. եւ Աստուած էր Բանը։ Նա սկզբումն Աս-
3 տուծոյ մօտ էր։ Ամեն ինչ նորանով եղաւ, եւ
4 առանց նորան ոչինչ չեղաւ, ինչ որ եղաւ։ Նո-
րանով էր կեանք, եւ կեանքը մարդկանց լոյսն
5 էր։ Եւ լոյսը խաւարումը լոյս է տալիս, եւ խա-
ւարը չիմացաւ նորան։

6 Մի մարդ եղաւ Աստուածանից ուղարկուած,
7 անունը Յօհաննէս։ Սա վկայութեան համար ե-
կաւ, որ այն Լուսոյ համար վկայէ. որ ամենքը
8 նորանով հաւատան։ Նա չէր Լոյսն, այլ որ Լու-
սոյն համար վկայէ։

9 Էր ճշմարիտ Լոյսն, որ ամեն մարդուն լու-
10 սաւորում է, որ գալիս է աշխարհքը։ Աշխարհ-

քումն էր, եւ աշխարհքը նորանով եղաւ, եւ
11 աշխարհքը նորան չճանաչեց։ Իրանների մէջ
12 եկաւ, եւ իրանները նորան չընդունեցին։ Բայց
որոնք որ նորան ընդունեցին, իշխանութիւն
տուաւ նորանց Աստուծոյ որդիք լինելու՝ նո-
13 րանց, որ նորա անուանը հաւատում են։ Որոնք
ոչ արիւնից եւ ոչ մարմնոյ կամքից, եւ ոչ մար-
14 դոյ կամքից, այլ Աստուածանից ծնուեցան։ Եւ
Բանը մարմին եղաւ՝ եւ բնակեց մեր մէջ. եւ
նորա փառքը տեսանք՝ ինչպէս Հօրից եղած միա-
ծնի փառք. շնորհքով եւ ճշմարտութիւնով լիքն։

15 Յօհաննէս վկայում է նորա համար. եւ աղա-
ղակեց եւ ասաց. Սա էր, որի համար ասում էի.
Թէ Ինձանից յետոյ եկողը, ինձանից առաջ եղաւ.
16 վասն զի ինձանից առաջ էր։ Եւ նորա լիու-
թիւնից մենք ամենքս առինք շնորհք շնորհքի
17 տեղ։ Քանզի օրէնքը Մօսէսի ձեռովը տրուե-
ցաւ. շնորհքը եւ ճշմարտութիւնը Յիսուսի Քրիս-
18 տոսի ձեռովն եղաւ։ Աստուծոյն ոչ ով երբէք
չէ տեսել. Բայց միածին Որդին, Հօր ծոցումը
լինողը, նա պատմեց։

19 Եւ այս է Յօհաննէսի վկայութիւնը, երբոր
Հրէաներն Երուսաղէմից քահանաներ եւ Ղեւ-
տացիներ ուղարկեցին նորա մօտ, որ հարցնեն
20 նորան. Թէ Դու ո՞վ ես։ Եւ նա խոստովանեցաւ
եւ չուրացաւ. եւ խոստովանեցաւ. Թէ Ես չեմ
21 Քրիստոսը։ Եւ նորան հարցրին. Ապա ո՞վ. Եղի-
ա՞ն ես. եւ ասաց. Չեմ. Մարգարէ՞ն ես դու.
22 եւ պատասխանեց. Ոչ։ Արդ ասացին նորան.
Ապա ո՞վ ես, որ պատասխան տանք մեզ ուղար-
23 կողներին. ի՞նչ ես ասում քեզ համար։ Ասաց.
Ես եմ ձայն կանչողի անապատումը, Թէ ուղղե-

ցէք Տիրոջ ճանապարհը, ինչպէս Եսայի մարգա-
24 րէն ասաց։ Եւ ուղարկուածները Փարիսեցիներից
25 էին։ Եւ նորան հարցրին եւ ասացին. Ապա ինչո՞ւ
ես մկրտում, եթէ դու ոչ Քրիստոսն ես եւ ոչ Եղի-
26 ան, եւ ոչ մարգարէն։ Յոհաննէսը պատասխա-
նեց նորանց եւ ասաց. Ես ջրով եմ մկրտում.
բայց ձեր միջումը կայ Մէկը, որին դուք չէք գի-
27 տում։ Նա է ինձանից յետոյ եկողը, որ ինձա-
նից առաջ եղաւ. որ ես արժանի չեմ, նորա կօ-
28 շիկների կապը արձակելու։ Սա Բեթաբրայումն
եղաւ, Յորդանանի այն կողմը. ուր Յոհաննէսը
մկրտում էր։
29 Հետեւեալ օրը Յոհաննէս տեսնում է Յիսու-
սին իրան մօտ գալիս, եւ ասում է. Ահա Աս-
տուծոյ Գառն, որ վեր է առնում աշխարհքի
30 մեղքը։ Սա է, որի համար ես ասում էի, Թէ ին-
ձանից յետոյ մի մարդ է գալիս, որ ինձանից
31 առաջ եղաւ, վասն զի ինձանից առաջ էր։ Եւ
ես նորան չէի գիտում. այլ որ յայտնի լինի Իս-
րայէլին, նորա համար ես եկայ ջրով մկրտելու։
32 Եւ վկայեց Յոհաննէսը եւ ասաց. Թէ Տեսնում
էի Հոգին, որ աղաւնու պէս վայր էր գալիս եր-
33 կնքից եւ նորա վերայ մնում։ Եւ ես չէի գի-
տում նորան. բայց նա որ ինձ ուղարկեց ջրով
մկրտելու, նա ասաց ինձ. Թէ Որի վերայ որ
տեսնես Հոգին վայր գալիս եւ նորա վերայ մը-
34 նում, նա է Սուրբ Հոգով մկրտողը։ Եւ ես տե-
սայ եւ վկայեցի, Թէ Սա է Աստուծոյ Որդին։
35 Հետեւեալ օրն դարձեալ կանգնած էր Յոհան-
36 նէսը, եւ նորա աշակերտներից երկուսը։ Եւ
մտիկ տուաւ Յիսուսին, որ ման էր գալիս, եւ
37 ասաց. Ահա Աստուծոյ Գառն։ Եւ այն երկու

աշակերտները լսեցին նորանից՝ որ խօսում էր,
38 եւ Յիսուսի ետեւից գնացին։ Յիսուսն էլ դար-
ձաւ նորանց տեսաւ, որ գնում էին իր ետեւից,
եւ ասաց նորանց. Ի՞նչ էք ուզում. Նորանք ա-
սացին նորան. Ռաբբի, (որ թարգմանուած աս-
39 վում է՝ վարդապետ. ո՞րտեղ ես կենում։ Նորանց
ասաց. Եկէք եւ տեսէք. եկան եւ տեսան Թէ
որտեղ էր կենում. եւ այն օրը նորա մօտ մնա-
40 ցին. ժամն էլ տասնի մօտ էր։ Անդրէասը՝ վէմ
Սիմօնի եղբայրն՝ այն երկուսից մէկն էր, որ Յո-
հաննէսից լսեցին եւ նորա ետեւից գնացին։
41 Սա առաջ իր Սիմօն եղբօրն է գտնում եւ նո-
րան ասում. Մեսիան գտել ենք, (որ թարգման-
42 վում է Քրիստոս)։ Եւ բերաւ նորան Յիսուսի
մօտ. Յիսուսն էլ նորան մտիկ տուաւ եւ ասաց.
Դու Սիմօնն ես՝ Յօնանի որդին. դու պիտի կոչ-
ուիս Կեփաս, (որ թարգմանվում է Պետրոս։)
43 Հետեւեալ օրը կամեցաւ Յիսուսը դուրս գնալ
Գալիլեա. եւ գտնում է Փիլիպպոսին, եւ աս-
44 ում նորան. Իմ ետեւից եկ։ Փիլիպպոսն էլ Բեթ-
սայիդայից էր՝ Անդրէասի եւ Պետրոսի քաղա-
45 քից։ Փիլիպպոսն էլ գտնում է Նաթանայէլին
եւ ասում նորան. Նա որի մասին գրեց Մօսէս
օրէնքումը, եւ մարգարէներն էլ, գտանք՝ Յօսէ-
46 փի որդի Յիսուսին՝ Նազարէթից։ Եւ Նաթա-
նայէլ նորան ասաց. Կարելի՞ է Նազարէթից մի
բարի բան լինիլ. Փիլիպպոսը նորան ասաց. Եկ
47 եւ տես։ Յիսուսը տեսաւ Նաթանայէլին իրան
մօտ գալիս՝ եւ ասաց նորա համար. Ահա ճիշդ
48 Իսրայէլացի, որում նենգութիւն չկայ։ Նաթա-
նայէլ ասում է նորան. Ի՞նչ տեղից ես ճանա-
չում ինձ. Յիսուսը պատասխանեց եւ ասաց նո-

րան․ Փիլիպպոսը դեռ քեզ չկանչած, քեզ տե-
49 սայ որ թզենու տակն էիր։ Նաթանայէլ պա-
տասխանեց եւ ասաց․ Ռաբբի, դու Աստուծոյ
50 Որդին ես․ Դու ես Իսրայէլի թագաւորը։ Յի-
սուսը պատասխանեց եւ ասաց նորան․ Որով-
հետեւ ասացի քեզ թէ թզենու տակ տեսայ քեզ,
հաւատում ես, սորանցից էլ աւելի մեծ բաներ
51 կ՚տեսնես։ Եւ նորան ասաց․ Ճշմարիտ ճշմա-
րիտ ասում եմ ձեզ, այսուհետեւ կ՚տեսնէք եր-
կինքը բացուած, եւ Աստուծոյ հրեշտակներին
ելնելիս եւ իջնելիս Որդւոյ մարդոյ վերայ։

ԳԼ․ Բ

1 Եւ երրորդ օրը հարսանիք էր Գալիլեայի Կա-
2 նայումը, եւ Յիսուսի մայրն այնտեղ էր։ Յի-
սուսն էլ կանչուեցաւ այն հարսանիքը եւ նորա
3 աշակերտներն էլ։ Եւ երբոր գինին պակասեց,
4 Յիսուսի մայրը ասաց նորան․ Գինի չունին։ Յի-
սուսը նորան ասաց․ Քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ
5 կին․ իմ ժամանակը դեռ չէ հասել։ Նորա մայրն
ասաց սպասաւորներին․ Ինչ որ ասէ ձեզ, արէք։
6 Այն տեղ վեց քարէ կարաս կային Հրէաների մաք-
րուելու համար, որոնցից ամեն մէկը երկու կամ
7 երեք մար էին տանում։ Յիսուսը նորանց ասաց․
Այդ կարասները ջրով լցրէք․ եւ նորանց լցրին
8 մինչեւ վեր։ Եւ նորանց ասաց․ Հիմա առէք եւ
տարէք սեղանապետի համար․ եւ նորանք տա-
9 րին։ Եւ երբոր վերակացուն այն գինի դառած
ջուրը ճաշակեց, (եւ չէր գիտում թէ ինչ տեղից
է․ բայց սպասաւորները գիտէին՝ որ ջուրն լցրել
10 էին) սեղանապետը փեսային կանչեց, Եւ նորան

ասաց․ Ամեն մարդ առաջ լաւ գինին է տալիս․
եւ երբոր արբենան, այն ժամանակ վատը․ դու
11 լաւ գինին մինչեւ հիմա պահեցիր։ Նշանների
սկիզբը Յիսուս այս արաւ Գալիլեայի Կանա-
յումը․ եւ իր փառքը յայտնեց․ եւ նորա աշա-
կերտները հաւատացին նորան։
12 Սորանից յետոյ Յիսուսն իջաւ Կափառնայում,
ինքն եւ իր մայրը եւ իր եղբայրները եւ իր ա-
շակերտները, եւ շատ օրեր չմնացին այնտեղ։
13 Եւ Հրէից զատիկը մօտ էր, եւ Յիսուսն ելաւ
14 Երուսաղէմ։ Եւ տաճարումը գտաւ եզներ եւ
ոչխարներ եւ աղաւնիներ ծախողներին, եւ սե-
15 ղանաւորներին նստած։ Եւ չուանից խարազան
շինեց, եւ ամենին տաճարիցը դուրս հանեց՝ ոչ-
խարներն էլ եւ եզներն էլ, եւ սեղանաւորների
պղինձները ցրուեց եւ տախտակները կործա-
16 նեց։ Եւ աղաւնի ծախողներին ասաց․ Դորանց
վեր առէք այստեղից․ իմ Հօր տունը մի անէք
17 առուտուրի տուն։ Եւ նորա աշակերտները յի-
շեցին, թէ գրուած է․ Քո տան նախանձը կե-
րաւ ինձ։
18 Արդ Հրէաները պատասխանեցին եւ ասացին
նորան․ Ի՞նչ նշան ես ցոյց տալիս մեզ, որ ան-
19 ում ես այդ։ Յիսուսը պատասխանեց եւ ասաց
նորանց․ Քանդեցէք այդ տաճարը, եւ երեք օր-
20 ում կ՚կանգնեցնեմ դորան։ Հրէաներն էլ ասա-
ցին․ Այս տաճարը քառասուն եւ վեց տարում
շինուեցաւ, եւ դու երեք օրումն կ՚կանգնեցնե՞ս
21 դորան։ Բայց նա իր մարմնոյ տաճարի համար
22 էր ասում։ Ապա երբոր նա մեռելների միջից
յարութիւն առաւ, նորա աշակերտները յիշեցին,
թէ նա ասաց նորանց այս բանը․ եւ հաւատա-

ցին գրքին՝ եւ այն խօսքին որ ասաց Յիսուսը։
23 Եւ երբոր Երուսաղէմումն էր, զատկի տօնին,
շատ մարդիկ հաւատացին Նորա անուանը. տես-
24 նելով Նորա այն նշանները, որ անում էր։ Բայց
ինքն Յիսուս իր անձը չէր հաւատում նորանց.
25 քանզի ինքն ամենը գիտէր։ Եւ որովհետեւ պէտք
չէր որ մէկը վկայէր մարդու համար. քանզի
ինքը գիտէր, թէ ինչ կար մարդումը։

Գլ. Գ.

1 Եւ Փարիսեցիներիցն մի մարդ կար՝ անունը
2 Նիկոդիմոս՝ Հրէաների իշխան։ Սա գիշերը Յի-
սուսի մօտ եկաւ եւ ասաց նորան. Ռաբբի, գի-
տենք որ Աստուածանից վարդապետ ես եկել.
քանզի ոչ ով չէ կարող այդ նշաններն անել՝ որ
դու ես անում, եթէ Աստուած նորա հետ չլի-
3 նի։ Յիսուսը պատասխանեց եւ ասաց նորան.
Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ. Եթէ մէկը
վերստին չծնուի կարող չէ Աստուծոյ արքայու-
4 թիւնը տեսնել։ Նիկոդիմոս նորան ասաց. Մարդ
ի՞նչպէս կարող է ծնուիլ՝ որ ծեր է. մի՞թէ կա-
րող է երկրորդ անգամ իր մօր արգանդը մտնել
5 եւ ծնուիլ։ Յիսուս պատասխանեց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ քեզ. Եթէ մէկը Ջրից եւ
Հոգուց չծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքա-
6 յութիւնը մտնել։ Մարմնուցը ծնուածը մարմին
7 է. եւ Հոգուցը ծնուածը հոգի է։ Մի զարմա-
նար՝ որ ասացի քեզ. թէ Պէտք է ձեզ վերըս-
8 տին ծնուիլ։ Քամին որտեղ ուզում է՝ փչում
է, եւ նորա ձայնը լսում ես. բայց չգիտես թէ
ո՞րտեղից է գալիս եւ ո՞րտեղ է գնում. այսպէս
9 է ամեն Հոգուցը ծնուածը։ Նիկոդիմոսը պա-
տասխանեց եւ ասաց նորան. Այդ ի՞նչպէս կա-
10 րող է լինիլ։ Յիսուսը պատասխանեց եւ ասաց
նորան. Դու ես Իսրայէլի վարդապետը, եւ այս
11 չե՞ս գիտում։ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ
քեզ. թէ ինչ որ գիտում ենք՝ խօսում ենք, եւ
ինչ որ տեսանք՝ վկայում ենք. եւ մեր վկայու-
12 թիւնը չէք ընդունում։ Եթէ երկրաւոր բաներն
ասացի ձեզ, եւ չէք հաւատում. ապա ի՞նչպէս
13 կ'հաւատաք, եթէ երկնաւոր բաներն ասեմ։ Եւ
ոչ ով վեր չելաւ երկինքը, եթէ ոչ երկնքից իջ-
14 նողը՝ Որդին մարդոյ՝ նա որ երկնքումն է։ Եւ
ինչպէս Մովսէս օձը բարձրացրեց անապատումը,
այնպէս պէտք է մարդոյ Որդոյն բարձրացուել.
15 Որ ամեն նորան հաւատացողը չկորչի, այլ յա-
16 ւիտենական կեանքն ունենայ։ Վասն զի Աստ-
ուած այնպէս սիրեց աշխարհքը, որ իր միածին
Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը
չկորչի, այլ յաւիտենական կեանքն ունենայ։
17 Քանզի Աստուած իր Որդին չուղարկեց աշխարհ-
քը, որ աշխարհքին դատէ, այլ որ աշխարհքը
18 նորանով փրկուի։ Նորան հաւատացողը չի դա-
տապարտուիլ, իսկ չհաւատացողն արդէն դատա-
պարտուած է. որովհետեւ չհաւատաց Աստուծոյ
19 միածին Որդոյ անուանը։ Եւ սա է դատաստա-
նըն, որ լոյս եկաւ աշխարհքը, եւ մարդիկ խա-
ւարն աւելի սիրեցին քան թէ լոյս, վասն զի
20 նորանց գործքերը չար էին։ Քանզի ամեն չար
գործողը ատում է լոյսին, եւ չէ գալիս դէպի լոյս,
21 որ նորա գործքերը չյանդիմանուեն։ Իսկ ճշմար-
տութիւն գործողը գալիս է դէպի լոյս, որ նո-
րա գործքերն յայտնուեն, վասն զի Աստուծով
գործուեցան։

22 Սորանից յետոյ եկաւ Յիսուսը եւ նորա աշա-
կերտները Հրէաստանի երկիրը. եւ այնտեղ նո-
23 րանց հետ ման էր գալիս եւ մկրտում էր։ Եւ
Յոհաննէսն էլ Այնոնումն էր մկրտում՝ Սաղե-
մայ մօտ. որովհետեւ այնտեղ շատ ջուր կար.
24 եւ գալիս էին եւ մկրտվում էին։ Վասն զի Յո-
հաննէսը դեռ բանտի մէջ չէր գցուած։
25 Արդ Յոհաննէսի աշակերտները Հրէաների հետ
26 վէճ ունեցան մաքրութեան համար։ Եւ Յոհան-
նէսի մօտ եկան եւ ասացին նորան. Ռաբբի, նա
որ Յորդանանի այն կողմումն էր քեզ հետ, որի
համար դու վկայեցիր, ահա նա մկրտում է, եւ
27 ամէնքը նորա մօտ են գալիս։ Յոհաննէսը պա-
տասխանեց եւ ասաց. Մարդ չէ կարող ոչինչ
վեր առնել, եթէ երկնքից տրուած չլինի նո-
28 րան։ Դուք ինքներդ վկայում էք ինձ համար,
որ ասացի ձեզ. թէ Ես Քրիստոսը չեմ, այլ թէ
29 նորա առջեւից ուղարկուած եմ։ Հարսն ունե-
ցողն է փեսայ. բայց փեսայի բարեկամը, որ
կանգնած է եւ լսում է նորան, ուրախութիւ-
նով ուրախանում է փեսայի ձայնի համար. արդ
30 իմ այս ուրախութիւնը լցուած է։ Նորան պէտք
31 է աճել, եւ ինձ փոքրանալ։ Վերեւից եկողն
ամենից վեր է. երկրից լինողը երկրից է եւ
32 երկրից է խօսում։ Երկնքից եկողն ամենից վեր
է. ինչ որ տեսաւ եւ լսեց, նա է վկայում. եւ
33 նորա վկայութիւնը ոչ ով չէ ընդունում։ Նորա
վկայութիւնն ընդունողը կնքեց, թէ Աստուած
34 ճշմարիտ է։ Քանզի նա որին Աստուած ուղար-
կեց, Աստուծոյ բանն է խօսում. վասն զի Աստ-
35 ուած Հոգին չափով չէ տալիս։ Հայրը սիրում
է Որդուն, եւ ամէն բան նորա ձեռքն է տուել։

36 Որդուն հաւատացողը յաւիտենական կեանք ու-
նի. իսկ Որդուն չհնազանդողը կեանքը չի տես-
նիլ, այլ Աստուծոյ բարկութիւնը մնում է նորա
վերայ։

Գլ. Դ

1 Եւ երբոր Տէրն իմացաւ, որ Փարիսեցիները
լսեցին, թէ Յիսուսը աւելի աշակերտներ է ան-
2 ում եւ մկրտում քան թէ Յոհաննէսը։ (Թէպէտ
եւ Յիսուս ինքն չէր մկրտում՝ այլ նորա աշա-
3 կերտները.) Հրէաստանի երկիրը թողեց եւ դար-
4 ձեալ եկաւ Գալիլեա։ Եւ պէտք էր որ Սամա-
5 րիայի միջովն անցնէր։ Արդ նա Սամարիայի մի
քաղաքն եկաւ, անունը Սիւքար, այն տեղի
6 մօտ, որ Յակոբ տուաւ իր որդի Յովսէփին։ Եւ
Յակոբի մի աղբիւրը կար այնտեղ. եւ Յիսուսը
ճանապարհից վաստակած այն աղբիւրի վերայ
նստեց. եւ ժամը վեցին դէմ էր։
7 Արդ Սամարիայից մի կին եկաւ, որ ջուր հա-
նէ. Յիսուսը նորան ասաց. Ինձ ջուր տուր խը-
8 մեմ։ Վասն զի նորա աշակերտներն քաղաքն էին
9 գնացել, որ կերակուր առնեն։ Սամարացի կինն
էլ ասաց նորան. Դու որ Հրէայ ես, ի՞նչպէս ես
ինձանից ջուր ուզում խմել, որ մի Սամարացի
կին եմ. որովհետեւ Հրէաները չեն խառնվում
10 Սամարացոց հետ։ Յիսուսը պատասխանեց եւ
ասաց նորան. Եթէ Աստուծոյ պարգեւը գիտե-
նայիր, եւ թէ ով է նա, որ քեզ ասում է, Բե
Տուր ինձ խմել, ապա դու նորանից կ՚խնդրէիր,
11 եւ նա կենդանի ջուր կ՚տար քեզ։ Կինը նորան
ասաց. Տէր, դու դոյլ էլ չունիս, եւ հորը խոր
12 է. ապա ո՞րտեղից ունիս կենդանի ջուրը։ Մի՞-

թէ դու աւելի մեծ ես քան մեր Հայր Յակոբը,
որ այս հորը տուաւ մեզ. եւ ինքն սորանից խը-
մեց, եւ նորա որդիքը եւ նորա անասունները։
13 Յիսուսը պատասխանեց եւ ասաց նորան. Ամեն
այդ ջրիցը խմողը դարձեալ կ՚ծարաւի. բայց ով
որ խմէ այն ջրիցը, որ ես կ՚տամ նորան, նա
14 յաւիտեան չի ծարաւիլ։ Այլ այն ջուրն, որ ես
կ՚տամ նորան, ջրի աղբիւր կ՚լինի նորանում, որ
15 յաւիտենական կենաց մէջ կ՚բղխէ։ Կինը նորան
ասաց. Տէր, տուր ինձ այն ջուրը, որ չծարա-
16 ւիմ, եւ չգամ այստեղ ջուր հանելու։ Յիսուսը
նորան ասաց. Գնա կանչիր քո մարդուն, եւ եկ
17 այստեղ։ Կինը պատասխանեց եւ ասաց. Ես մարդ
չունիմ. Յիսուսը նորան ասաց. Լաւ ասացիր,
18 թէ մարդ չունիմ։ Վասն զի դու հինգ մարդ ես
ունեցել, եւ նա որ հիմա ունիս, քո մարդը չէ.
19 դա ճշմարիտ ասացիր։ Կինը նորան ասաց. Տէր,
20 տեսնում եմ որ դու մարգարէ ես։ Մեր հարքն
այս լեռանումը երկրպագութիւն արին. եւ դուք
ասում էք, թէ Երուսաղէմումն է այն տեղն,
21 ուր պէտք է երկրպագութիւն անել։ Յիսուսը
նորան ասաց. Կին, հաւատայ ինձ, որ ժամա-
նակ կ՚գայ, որ այն ժամանակ ոչ այս լեռանումն
կ՚երկրպագէք Հօրը, եւ ոչ էլ Երուսաղէմումը։
22 Դուք երկրպագում էք նորան, որ չէք գիտում.
մենք երկրպագում ենք նորան, որ գիտում ենք.
23 որովհետեւ փրկութիւնը Հրէաներիցն է։ Բայց
ժամանակ կ՚գայ, եւ հիմա է, որ ճշմարիտ եր-
կըրպագողները հոգով եւ ճշմարտութիւնով կ՚եր-
կըրպագեն Հօրը, քանզի Հայրն էլ այսպէս է
24 ուզում իր երկրպագողներին։ Աստուած Հոգի
է, եւ նորան երկրպագողները պէտք է հոգով եւ

25 ճշմարտութիւնով երկրպագեն։ Կինն ասաց նո-
րան. Գիտեմ, որ Մեսիան պիտի գայ (որ Քրիս-
տոս է կոչվում). երբոր նա կ՚գայ, ամեն բան
26 կ՚պատմէ մեզ։ Յիսուսը նորան ասաց. Ես եմ,
27 որ քեզ հետ խօսում եմ։ Եւ սորա վերայ եկան
նորա աշակերտները, եւ զարմանում էին, որ
կնոջ հետ խօսում էր. բայց ոչ ոք չասաց. Ի՞նչ
ես ուզում, կամ ի՞նչ ես խօսում դորա հետ։
28 Կինն էլ իր կուժը թողեց, եւ գնաց քաղաք, եւ
29 մարդկանց ասաց. Եկէք տեսէք մի մարդ, որ
ինձ ասաց բոլորը ինչ որ գործել եմ. արդեօք
30 նա՞ է Քրիստոսը։ Եւ դուրս եկան քաղաքիցը,
եւ նորա մօտ էին գալիս։
31 Եւ այն միջոցին աշակերտները խնդրում էին
32 նորան եւ ասում. Ռաբբի, կեր։ Նա էլ ասաց նո-
րանց. Ես կերակուր ունիմ ուտելու, որ դուք
33 չէք գիտում։ Աշակերտներն էլ իրար ասում
էին. Արդեօ՞ք մի մարդ դորան բան բերաւ ու-
34 տելու։ Յիսուսը ասաց նորանց. Իմ կերակուրը
նա է, որ ինձ ուղարկողի կամքն անեմ, եւ նո-
35 րա գործը կատարեմ։ Մի՞թէ դուք չէք ասում.
թէ Դեռ չորս ամիս կայ, եւ հունձքը կ՚գայ. ա-
հա ես ասում եմ ձեզ. Բարձրացրէք ձեր աչքե-
րը, եւ տեսէք արտերը, որ սպիտակացել են եւ
36 արդէն հնձին հասել։ Եւ հնձողը վարձք է ստա-
նում, եւ յաւիտենական կենաց մէջ պտուղ ժո-
ղովում. որ սերմողը եւ հնձողը իրար հետ ու-
37 րախանան։ Քանզի սորանում ճշմարիտ է այն
խօսքը. թէ Ուրիշ է սերմողը, եւ ուրիշ է հըն-
38 ձողը։ Ես ուղարկեցի ձեզ հնձել այն, որ դուք
չաշխատեցիք. ուրիշներն աշխատեցին, եւ դուք
նորանց աշխատանքի մէջ մտաք։

39 Եւ Սամարացոց այն քաղաքից շատերը հա-
ւատացին նորան այն կնոջ խօսքի համար, որ
վկայում էր. թէ Ասաց ինձ բոլորը ինչ որ գոր-
40 ծել էի: Արդ երբոր Սամարացիք նորա մօտ ե-
կան, նորան աղաչեցին, որ իրանց մօտ մնայ.
41 եւ երկու օր մնաց այնտեղ: Եւ էլ շատերը հա-
42 ւատացին նորա՝ նորա խօսքի համար: Եւ այն
կնոջ էլ ասում էին. թէ Այլ եւս քո խօսքերի
պատճառով չենք հաւատում. վասն զի մենք
ինքներս լսեցինք, եւ գիտենք որ ճշմարտապէս
սա է աշխարհքի Փրկիչը՝ Քրիստոսը:
43 Եւ երկու օրից յետոյ այնտեղից դուրս եկաւ
44 գնաց Գալիլեա: Վասն զի Քրիստոս ինքն վկա-
յեց. թէ Մարգարէն իր հայրենիքումը պատիւ
45 չունի: Բայց երբոր Գալիլեա եկաւ, Գալիլեա-
ցիներն ընդունեցին նորան. տեսնելով այն բո-
լորն, որ տօնին արաւ Երուսաղէմումը. քանզի
նորանք էլ եկել էին այն տօնին:
46 Եւ Յիսուսը դարձեալ եկաւ Գալիլեայի Կա-
նան, ուր ջուրը գինի արաւ. մի Թագաւորացեղ
մարդ կար, որի որդին Կափառնայումի մէջ հի-
47 ւանդ էր: Նա լսելով թէ Յիսուսը Հրէաստանի-
ցըն եկել է Գալիլեա. եկաւ նորա մօտ եւ աղա-
չում էր, որ իջնէ եւ իր որդուն բժշկէ. վասն
48 զի մեռնելու մօտ էր: Յիսուսն էլ նորան ասաց.
Եթէ նշաններ եւ հրաշքներ չտեսնէք՝ չէք հա-
49 ւատալ: Թագաւորացեղը նորան ասաց. Տէր,
50 իջիր դեռ քանի որ չէ մեռել տղաս: Յիսուսը
նորան ասաց. Գնա, քո որդին կենդանի է. եւ
մարդը հաւատաց այն խօսքին՝ որ Յիսուսը նո-
51 րան ասաց, եւ գնաց: Եւ դեռ որ իջնում էր,
նորա ծառաները նորան դիմաւորեցին եւ աւե-

տիս տուին եւ ասացին. թէ Քո տղան կենդանի
52 է: Նա էլ նորանց հարցնում էր այն ժամի հա-
մար, ում սկսեց լաւանալ. եւ նորան ասացին,
թէ Երէկ ժամը եօթնին տենդը թողեց նորան:
53 Այն ժամանակ հայրն իմացաւ, թէ նոյն ժամին
է, որ Յիսուսը նորան ասաց. թէ Քո որդին կեն-
դանի է. եւ հաւատաց ինքն եւ նորա բոլոր
54 տունը: Սա դարձեալ երկրորդ նշան արաւ Յի-
սուսը, երբոր Հրէաստանից եկաւ Գալիլեա:

Գլ. Ե

1 Սորանից յետոյ տօն էր Հրէաների. եւ Յիսու-
2 սը վեր եկաւ Երուսաղէմ: Եւ Երուսաղէմի մէջ
Պրոբատիկէ աւազանի մօտ, որ Եբրայեցերէն
3 Բեթհեզդա է կոչւում, հինգ սրահ կայ: Նորան-
ցում խիստ շատ հիւանդներ կային՝ պառկած.
կոյրեր, կաղեր, չորացածներ, որ ջրի շարժուելուն
4 էին սպասում: Վասն զի Տիրոջ հրեշտակը ժա-
մանակ ժամանակ վայր էր գալիս այն աւազանը
եւ ջուրը շարժում. եւ ջրի շարժուելուց յետոյ
նորա մէջ առաջ մտնողը բժշկւում էր՝ ինչ հի-
5 ւանդութիւն էլ որ ունենար: Եւ այն տեղ մի
մարդ կար, որ երեսուն եւ ութ տարի էր հի-
6 ւանդութեան մէջ: Երբոր Յիսուսը նորան պառ-
կած տեսաւ, եւ գիտաց, թէ արդէն շատ ժա-
մանակից է, նորան ասաց. Կամենո՞ւմ ես ողջ
7 լինել: Հիւանդը պատասխանեց նորան. Տէր,
մարդ չունիմ, որ՝ երբոր ջուրերը շարժւում է՝
ինձ աւազանի մէջ գցէ. եւ մինչեւ որ ես գալիս
8 եմ, ուրիշն ինձանից առաջ իջնում է մէջը: Յի-
սուսը նորան ասաց. Վեր կաց, մահիճդ առ եւ

9 ման եկ։ Եւ մարդն իսկոյն ողջացաւ, եւ վեր
առաւ իր մահիճը եւ ման էր գալիս. եւ օրը
10 շաբաթ էր։ Հրէաներն էլ ասացին բժշկուածին.
Շաբաթ է. արժան չէ քեզ, որ մահիճդ վեր առ-
11 նես։ Նա պատասխանեց նորանց. Նա՝ որ ինձ
բժշկեց, նա ասաց ինձ. Մահիճդ առ եւ ման
12 եկ։ Արդ հարցրին նորան եւ ասացին. Ո՞վ է
այն մարդն, որ քեզ ասաց. Մահիճդ առ եւ ման
13 եկ։ Բայց բժշկուածը չէր գիտում, թէ ո՞վ է.
վասն զի Յիսուսը այնտեղի ամբոխի պատճառո-
14 վը խոյս տուաւ։ Սորանից յետոյ Յիսուսը նորան
գտաւ տաճարումը՝ եւ նորան ասաց. Ահա ող-
ջացար, այլ եւս չմեղանչես, որ էլ աւելի չար
15 բան չլինի քեզ։ Մարդը գնաց եւ Հրէաներին
պատմեց, թէ Յիսուսն է, որ նորան առողջա-
ցրել է։
16 Եւ նորա համար Հրէաները Յիսուսին հալա-
ծում էին, եւ ուզում էին նորան սպանել, որ
17 շաբաթ օրն անում էր այն բանը։ Եւ Յիսուսը
պատասխանեց նորանց. Իմ Հայրը մինչեւ հիմա
18 գործում է, եւ ես էլ գործում եմ։ Նորա հա-
մար Հրէաներն էլ աւելի ուզում էին սպանել
նորան. որ ոչ թէ միայն շաբաթ օրն էր քան-
դում, այլ Աստուծոյն էլ իրան Հայր էր ասում,
19 իր անձն Աստուծոյն հաւասար անելով։ Յիսուսը
պատասխանեց եւ ասաց նորանց. Ճշմարիտն
ճշմարիտն ասում եմ ձեզ. Ոչ Որդին իրանից
կարող չէ ոչինչ անել, թէ որ չտեսնէ Հօրն ա-
նելիս. վասն զի ինչ որ նա անում է, հէնց Որ-
20 դին էլ այն բանը նորա նման է անում։ Վասն
զի Հայրը սիրում է Որդոյն, եւ ամեն բան ցոյց
է տալիս նորան, որ ինքն անում է, եւ սորան-

ցից էլ աւելի մեծ մեծ գործքեր ցոյց կ'տայ նո-
21 րան, որ դուք զարմանաք։ Վասն զի ինչպէս որ
Հայրը մեռելներին յարուցանում է եւ կենդանի
անում, այնպէս էլ Որդին, որոնց որ կամենում
22 է, կենդանի է անում։ Վասն զի Հայրը ոչ մէկին
էլ չէ դատում, այլ ամեն դատաստանը տուաւ
23 իր Որդոյն։ Որ ամենքը պատուեն Որդոյն, ինչ-
պէս որ պատուում են Հօրը. Որդոյն չպատուո-
ղը՝ Հօրն էլ չէ պատուում, որ ուղարկեց նո-
24 րան։ Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ
իմ խօսքիս լսողը, եւ ինձ ուղարկողին հաւա-
տացողը, յաւիտենական կեանք ունի. եւ դա-
տաստան չի մտնիլ, այլ մահից փոխուեցաւ դէ-
25 պի կեանք։ Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ
ձեզ. թէ ժամանակ կ'գայ՝ եւ հիմա է, որ մե-
ռելները Աստուծոյ Որդոյն ձայնը կ'լսեն, եւ լսող-
26 ները կ'ապրին։ Քանզի ինչպէս որ Հայրն իր ան-
ձումը կեանք ունի, այնպէս էլ Որդոյն տուաւ՝
27 որ իր անձումն կեանք ունենայ։ Եւ նորան իշ-
խանութիւն տուաւ, որ դատաստան էլ անէ.
28 որովհետեւ Որդոյ մարդոյ է։ Սորա վերայ մի
զարմանաք. որովհետեւ ժամանակ կ'գայ, որ ա-
մենքն՝ որ գերեզմաններումն են, նորա ձայնը կը
29 լսեն, Եւ դուրս կ'գան, նորանք, որ բարի են
գործել, դէպի կենաց յարութիւնը, եւ նորանք,
որ չար են արել, դէպի դատաստանի յարութիւ-
30 նը։ Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել. ինչ-
պէս լսում եմ՝ այնպէս եմ դատում, եւ իմ դա-
տաստանն արդար է. քանզի իմ կամքը չեմ ո-
31 րոնում, այլ ինձ ուղարկող Հօր կամքը։ Եթէ
ես ինձ համար վկայեմ, իմ վկայութիւնը ճշմա-
32 րիտ չէ։ Ուրիշն է որ ինձ համար վկայում է.

եւ գիտեմ որ ճշմարիտ է այն վկայութիւնը, որ
33 վկայում է ինձ համար։ Դուք ուղարկեցիք Յո-
հաննէսի մօտ․ եւ նա վկայութիւն տուաւ ճըշ-
34 մարտութեանը։ Իսկ ես ոչ թէ մարդկանցից եմ
առնում վկայութիւնը․ այլ սա ասում եմ, որ
35 դուք ապրիք։ Նա այն ճրագն էր՝ որ վառվում
էր եւ լոյս էր տալիս․ եւ դուք կամեցաք մի
36 առ ժամանակ ուրախանալ նորա լուսովը։ Բայց
ես աւելի մեծ վկայութիւն ունիմ քան թէ Յո-
հաննէսը, այսինքն այն գործքերն, որ Հայրն ինձ
տուաւ, որ կատարեմ նորանց․ նոյն այն գործ-
քերն՝ որ գործում եմ, ինձ համար վկայում են,
37 թէ Հայրն ուղարկեց ինձ։ Եւ ինձ ուղարկող
Հայրն ինքն ինձ համար վկայեց․ դուք ոչ նորա
ձայնը լսեցիք երբէք, եւ ոչ նորա կերպարանքը
38 տեսաք․ Եւ ոչ նորա խօսքն ունիք բնակած ձե-
զանում․ վասն զի այն որ նա ուղարկեց, դուք
39 չէք հաւատում նորան։ Քննեցէք գրքերն․ որ
դուք կարծում էք թէ նորանցով ունիք յաւի-
տենական կեանք՝ եւ նորանք են, որ ինձ հա-
40 մար վկայում են։ Եւ չէք կամենում ինձ մօտ
41 գալ, որ կեանք ունենաք։ Ես մարդկանցից
42 փառք չեմ առնում։ Բայց ճանաչում եմ ձեզ, որ
43 Աստուծոյ սէրը չունիք ձեր անձներումը։ Ես
իմ Հօր անունովն եկայ, եւ ինձ չէք ընդունում․
եթէ ուրիշը գայ իր անունովն, նորան կ'ընդու-
44 նիք։ Ի՞նչպէս կարող էք դուք հաւատալ, որ
իրարից էք փառք առնում, եւ այն փառքն որ
45 միայն Աստուածանից է, չէք որոնում։ Մի կար-
ծէք, թէ ես Հօր մօտ կ'չարախօսեմ ձեզանից․
կայ մէկը որ ձեզանից չարախօսում է՝ Մովսէսն,
46 որի վերայ դուք ձեր յոյսը դրել էք։ Վասն զի

եթէ դուք Մովսէսին հաւատայիք, ինձ էլ կ'հա-
47 ւատայիք, քանզի նա ինձ համար գրեց։ Բայց
եթէ նորա գրքերին չէք հաւատում, ի՞նչպէս իմ
խօսքերին կ'հաւատաք։

Գլ․ Զ

1 Սորանից յետոյ գնաց Յիսուսը Գալիլեայի Տի-
2 բերեա ծովի միւս կողմը։ Եւ շատ ժողովուրդ
գնում էր նորա ետեւից․ որովհետեւ տեսնում
էին նորա նշանները, որ անում էր հիւանդների
3 վերայ։ Յիսուսն էլ վեր ելաւ լեառը, եւ նստեց
4 իր աշակերտների հետ այնտեղ։ Եւ Հրէաների
զատիկ տօնը մօտ էր։
5 Յիսուսն էլ իր աչքերը բարձրացրեց եւ տե-
սաւ, որ շատ ժողովուրդ էր գալիս իրան մօտ․
ասաց Փիլիպպոսին․ Ի՞նչ տեղից հաց առնենք,
6 որ դորանք ուտեն։ Բայց այս ասաց՝ նորան փոր-
ձելով․ վասն զի ինքն գիտէր, թէ ինչ պիտի ա-
7 նէր։ Փիլիպպոսը պատասխանեց նորան․ Երկու
հարիւր դահեկանի հաց բաւական չէ դորանց,
8 որ դորանից ամեն մէկը մի քիչ առնէ։ Նորա
աշակերտներից մէկն, Անդրէասը՝ վէմ Սիմոնի
9 եղբայրն՝ ասաց նորան․ Այս տեղ մէկ տղայ կայ,
որ հինգ գարէ հաց ունի եւ երկու փոքր ձուկ,
10 բայց սա ի՞նչ է այնչափ մարդկանց համար։ Յի-
սուսն էլ ասաց․ Մարդկանցը նստեցրէք․ եւ շատ
խոտ կար այնտեղը․ եւ մարդիկը նստեցան հա-
11 մարով իբր հինգ հազար։ Եւ Յիսուսը հացերն
առաւ՝ գոհացաւ եւ բաժանեց աշակերտներին,
եւ աշակերտներն էլ նստողներին․ նոյնպէս էլ
12 ձկներից որչափ որ կամեցան։ Եւ երբոր կըշ-

տացան, ասաց իր աշակերտներին. Ժողովեցէք
13 աւելցած կտորները՝ որ բան չկորչի։ Եւ ժողո-
վեցին, եւ կտորներից տասներկու կողով լցրին
այն հինգ գարէ հացերից, որ ուտողներից աւե-
14 լացաւ։ Բայց մարդիկն՝ երբոր տեսան այս նշանն
որ արաւ Յիսուսը, ասում էին՝ թէ Սա է ճըշ-
մարտապէս այն մարգարէն որ պիտի աշխարհ
15 գար։ Յիսուսն էլ իմանալով թէ գալու են իրան
յափշտակելու, որ թագաւոր շինեն իրան, դարձ-
16 եալ գնաց լեառը մէնակ։ Եւ երբոր իրիկուն ե-
17 ղաւ, նորա աշակերտները իջան ծովի եզրը. Եւ
նաւը մտնելով գնացին ծովի այն կողմը՝ Կափառ-
նայում. եւ արդէն մթնցել էր, եւ Յիսուսը չէր
18 եկել նորանց մօտ։ Եւ ծովն էլ սաստիկ քամու
19 փչելուցը յուզվում էր։ Եւ երբոր քսան եւ հինգ
կամ երեսուն ասպարէզի չափ առաջ գնացել է-
ին, տեսան Յիսուսին ծովի վերայ գալիս, որ
20 նաւին մօտենում էր եւ վախեցան։ Նա էլ ա-
21 սաց նորանց. Ես եմ մի վախենաք։ Եւ կամե-
նում էին նորան ընդունել նաւի մէջ. եւ նաւը
շուտով հասաւ այն երկիրն, որ գնում էին։
22 Հետեւեալ օրն այն ժողովուրդը, որ ծովի այն
կողմն էր, տեսնելով որ ուրիշ նաւ չկար այն
տեղ մէկիցը ջոկ՝ որ նորա աշակերտները նորա
մէջ մտան. եւ որ Յիսուսը իր աշակերտների
հետ նաւը չէր մտած, բայց միայն նորա աշա-
23 կերտները գնացին։ Բայց Տիբերիայիցը ուրիշ
նաւեր եկան այնտեղի մօտ, ուր հացը կերան
24 Տիրոջ գոհանալովը։ Արդ երբոր ժողովուրդը
տեսաւ, որ Յիսուսն այնտեղ չէ, եւ ոչ էլ նորա
աշակերտները, իրանք էլ նաւերը մտան եւ ե-
25 կան Կափառնայում, Յիսուսին որոնելով։ Եւ

երբոր նորան ծովի այն կողմին գտան, նորան
26 ասացին. Ռաբբի, ե՞րբ եկար այս տեղ։ Յիսու-
սը պատասխանեց նորանց եւ ասաց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ. Դուք ինձ որոնում
էք՝ ոչ թէ նորա համար որ նշաններ տեսաք,
27 բայց որ հացից կերաք եւ կշտացաք։ Գործե-
ցէք ոչ թէ կորչելու կերակուրը, այլ այն կե-
րակուրն, որ մնացող է յաւիտենական կեանքի
մէջ, որ Որդին մարդոյ կ'տայ ձեզ. վասնզի Աստ-
28 ուած Հայրը կնքեց նորան։ Արդ նորան ասա-
ցին. Ի՞նչ անենք, որ Աստուծոյ գործքերը գոր-
29 ծենք։ Յիսուսն էլ պատասխանեց եւ նորանց
ասաց. Սա է Աստուծոյ գործը, որ հաւատաք
30 նորան, որին նա ուղարկեց։ Եւ նորան ասա-
ցին. Ապա դու ի՞նչ նշան ես անում, որ տես-
31 նենք եւ հաւատանք, ի՞նչ ես գործում։ Մեր
հարքն անապատումը մանանայ կերան. ինչպէս
գրուած է թէ՝ Երկնքից հաց տուաւ նորանց ու-
32 տելու։ Յիսուսն էլ նորանց ասաց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ. Ոչ թէ Մօւէսը տը-
ւաւ ձեզ այն հացը երկնքից, այլ իմ Հայրը տա-
33 լիս է ձեզ երկնքից ճշմարիտ հացը։ Վասնզի
Աստուծոյ հացը նա է՝ որ երկնքից է իջնում,
34 եւ որ աշխարհքին կեանք է տալիս։ Նորանք
էլ ասացին. Տէր, ամեն ժամանակ տուր մեզ
35 այդ հացը։ Յիսուսն էլ նորանց ասաց. Ես եմ
կենաց հացը. ինձ մօտ եկողը չի սովի, եւ ինձ
36 հաւատացողը երբէք չի ծարաւի։ Բայց ասացի
ձեզ, թէ տեսաք էլ ինձ, եւ չէք հաւատում։
37 Այն ամենը որ Հայրն ինձ է տալիս, ինձ մօտ
կ'գայ. եւ ինձ մօտ եկողին դուրս չեմ հանիլ։
38 Վասնզի ես իջայ երկնքից, որ ոչ թէ իմ կամքն
39 անեմ, այլ ինձ ուղարկողի կամքը։ Սա է ինձ

ուղարկող Հօր կամքը, որ այն ամենն որ Նա
ինձ տուաւ․ նորանից չ՚կորցնեմ․ այլ յետին օ-
40 րումը յարուցանեմ նորան։ Եւ սա է ինձ ու-
ղարկողի կամքն․ որ ամեն ով որ տեսնէ Որ-
դուն եւ հաւատայ նորան, յաւիտենական կեանք
ունենայ․ եւ ես յետին օրումը կ՚յարուցանեմ նո-
րան։
41 Հրեաներն էլ տրտնջում էին նորանից, որ ա-
42 սաց, Թէ Ես եմ երկնքից իջած հացը։ Եւ ասում
էին․ Չէ՞ որ սա Յիսուսն է Յօսէփի որդին, որի
հայրը եւ մայրը ճանաչում ենք․ արդ սա ի՞նչ-
43 պէս է ասում, Ես երկնքիցն եմ իջել։ Յիսուսն
էլ պատասխանեց եւ ասաց նորանց․ Մի տրտըն-
44 ջաք իրար հետ։ Ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ,
եթէ Հայրն՝ որ ինձ ուղարկեց՝ չ՚քաշէ նորան․
45 եւ ես յետին օրումը կ՚յարուցանեմ նորան։ Գըր-
ուած է մարգարէների մէջ Թէ՝ Եւ ամենքն Ա-
տուածանից սովորած կ՚լինին․ արդ ամեն ով որ
Հօրից լսում եւ սովորում է, գալիս է ինձ
46 մօտ։ Իբր չէ թէ մէկը տեսել է Հօրն․ բայց
միայն Նա, որ Աստուածանից է․ Նա տեսել է
47 Հօրը։ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ․ Ինձ
48 հաւատացողը յաւիտենական կեանք ունի․ Ես
49 եմ կենաց հացը։ Ձեր հարքը մանանան կերան
50 անապատումը, եւ մեռան։ Սա է այն հացն, որ
երկնքիցն է իջնում որ եթէ մէկը նորանից ու-
51 տէ, չի մեռնիլ։ Ես եմ կենդանի հացն, որ եր-
52 կընքիցն է իջել։ Եթէ մէկն այս հացիցն ուտէ,
յաւիտեան կ՚ապրի․ եւ այն հացն՝ որ ես կ՚տամ՝
իմ մարմինն է, որ ես նորան աշխարհքի կենաց
համար կ՚տամ։
53 Հրեաներն էլ իրար հետ կռւում էին եւ ա-

սում․ Սա ի՞նչպէս կարող է իւր մարմինը տալ
54 մեզ ուտելու։ Յիսուսն էլ նորանց ասաց․ Ճըշ-
մարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ․ Եթէ Որ-
դոյ մարդոյ մարմինը չուտէք եւ նորա արիւնը
55 չ՚խմէք, կեանք չունիք ձեր անձերումը։ Իմ
մարմինը ուտողը եւ իմ արիւնը խմողը յաւի-
տենական կեանք ունի․ եւ ես յետին օրումը
56 կ՚յարուցանեմ նորան։ Վասնզի իմ մարմինը ճըշ-
մարտապէս կերակուր է, եւ իմ արիւնը ճշմար-
57 տապէս խմելիք է։ Իմ մարմինն ուտողը եւ իմ
արիւնը խմողը մնում է ինձանում, եւ ես նո-
58 րանում։ Ինչպէս ինձ ուղարկեց կենդանի Հայ-
րը, եւ ես կենդանի եմ Հօր համար․ այնպէս էլ
նա որ ինձ ուտում է, կենդանի կ՚լինի ինձ հա-
59 մար։ Սա է այն հացն՝ որ երկնքիցն է իջել․ ոչ
թէ ինչպէս ձեր հարքը մանանան կերան եւ մե-
ռան․ այս հացն ուտողը յաւիտեան կ՚ապրի։
60 Այս ասաց ժողովարանումը երբ որ Կափառ-
նայումի մէջ սովորեցնում էր։
61 Եւ նորա աշակերտներից շատերը որ լսեցին,
ասացին․ Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել
62 դորան։ Բայց երբոր Յիսուսը գիտաց իւր անձ-
նումը, թէ իր աշակերտները տրտնջում էին դո-
րա համար, նորանց ասաց․ Դա՞ է գայթակղե-
63 ցընում ձեզ։ Ապա եթէ Որդին մարդոյ տեսնէք՝
64 վեր գնալիս, ուր առաջ էր։ Հոգին է կենդա-
նացնողը, մարմինը ոչինչ օգուտ չէ տալիս․ այն
բանն որ ես ձեզ հետ խօսեցի, հոգի է եւ կեանք
65 է։ Բայց ձեզանից կան ոմանք, որ չեն հաւա-
տում, վասնզի Յիսուսը սկզբիցը գիտէր, ո՞վ
են չհաւատացողները, եւ ով է նա՝ որ պիտի
66 մատնէր իրան։ Եւ ասաց․ Նորա համար ասացի

ձեզ՝ թէ ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ, եթէ
իմ Հօրից տրուած չլինի նորան։
67 Սորանից յետոյ նորա աշակերտներից շատերը
յետ գնացին, եւ այլեւս ման չէին գալիս նորա
68 հետ։ Յիսուսն էլ ասաց այն տասներկուսին,
69 Միթէ դուք էլ ուզում էք գնալ։ Սիմօն Պետ-
րոսն էլ պատասխանեց նորան. Տէր, ո՞ւմ մօտ
գնանք. յաւիտենական կենաց խօսքեր ունիս
70 դու։ Եւ մենք հաւատացինք եւ ճանաչեցինք,
թէ դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ որ-
71 դին։ Յիսուսը պատասխանեց նորանց. Չէ՞ որ
ես ձեզ տասներկուսիդ ընտրեցի, եւ ձեզանից
72 մէկը սատանայ է։ Եւ սա Իսկարիովտացի Սի-
մօնեան Յուդային էր ասում. քանզի նա էր մատ-
նելու նորան. եւ ինքը տասներկուսից մէկն էր։

Գլ. Է

1 Եւ սորանից յետոյ Յիսուսը ման էր գալիս Գա-
լիլեայի մէջ, վասն զի չէր կամենում Հրէաստա-
նումը ման գալ, որովհետեւ Հրէաները որոնում
էին սպանել նորան։
2 Եւ Հրէաների տաղաւարահարաց տօնը մօտիկ
3 էր։ Եւ նորա եղբայրներն ասացին նորան. Այս
տեղից դուրս եկ եւ գնա Հրէաստան, որ քո
աշակերտներն էլ տեսնեն քո գործքերը, որ գոր-
4 ծում ես. Վասն զի ոչ ով չկայ՝ որ թագուն մի
բան անէ, եւ ուզէ ճանաչուած լինել, եթէ դու
այդ բաները գործում ես, քո անձը յայտնիր աշ-
5 խարհքին։ Որովհետեւ իր եղբայրներն էլ չէին
6 հաւատում նորան. Յիսուսն էլ ասաց նորանց.
Իմ ժամանակը դեռ հասած չէ, բայց ձեր ժա-

7 մանակը միշտ պատրաստ է։ Աշխարհքը կարող
չէ ձեզ ատել. բայց ինձ ատում է, վասն զի ես
նորա համար վկայում եմ, թէ նորա գործքերը
8 չար են։ Դուք գնացէք այն տօնը, ես դեռ չեմ
գնում այն տօնը, որովհետեւ իմ ժամանակը դեռ
9 լրացած չէ։ Սա որ նորանց ասաց, մնաց Գա-
10 լիլեայում։ Երբոր նորա եղբայրները գնացին,
այն ժամանակ ինքն էլ գնաց այն տօնը, ոչ թէ
յայտնի, այլ իբր գաղտնաբար։
11 Եւ Հրէաները որոնում էին նորան այն տօնու-
12 մը եւ ասում. Ո՞ւր տեղ է նա։ Եւ ժողովրդոց
մէջ շատ զրոյցք կար նորա համար. ոմանք աս-
ում էին. թէ Բարի մարդ է. ուրիշներն էլ աս-
ում էին. Ոչ, այլ ժողովրդին մոլորեցնում է։
13 Սակայն ոչ ով համարձակ չէր խօսում նորա
վերայ՝ Հրէից վախի համար։
14 Երբոր տօնն արդէն կէս եղաւ, Յիսուսը
15 վեր ելաւ տաճարը եւ սովորեցնում էր։ Եւ Հր-
էաները զարմանում էին եւ ասում. Սա ի՞նչ-
պէս է գիտում գիրքերը, առանց սովորած լինե-
16 լու։ Յիսուսը պատասխանեց նորանց եւ ասաց.
Իմ վարդապետութիւնն իմս չէ, այլ ինձ ուղար-
17 կողինն է։ Եթէ մէկը կամենում է նորա կամքն
անել, նա կ'իմանայ այս վարդապետութեան հա-
մար, թէ արդեօք Աստուածանի՞ց է, կամ եթէ
18 ես իմ անձիցն եմ խօսում։ Իր անձից խօսողը,
իր անձի փառքն է որոնում. բայց նա որ իրան
ուղարկողի փառքն է որոնում, նա ճշմարիտ է
19 եւ անիրաւութիւն չկայ նորանում։ Չէ՞ որ Մօ-
սէս տուաւ ձեզ օրէնքը, եւ ձեզանից ոչ ով չէ
20 կատարում օրէնքը։ Ի՞նչո՞ւ էք ուզում ինձ ս-
պանել։ Ժողովուրդը պատասխանեց եւ ասաց.

21 Դեւ ունիս. ո՞վ է ուզում քեզ սպանել։ Յիսու-
սը պատասխանեց եւ ասաց նորանց. Մէկ գործ
22 գործեցի, եւ ամենքդ զարմացել էք։ Նորա հա-
մար Մովսէս ձեզ տուաւ թլփատութիւնը, (ոչ թէ
Մովսէսից է, այլ հայրերից.) եւ շաբաթ օրը
23 մարդ էք թլփատում։ Եթէ մարդ շաբաթ օրու-
մըն թլփատութիւն է ընդունում, որ Մովսէսի
օրէնքը չքանդուի, ինձ բարկանո՞ւմ էք, որ ես
24 ամբողջ մարդ բժշկեցի շաբաթ օրը։ Աչքի երեւ-
թով մի դատէք, այլ ուղիղ դատաստան արէք։
25 Արդ Երուսաղէմացիներից ոմանք ասում էին.
26 Չէ՞ որ սա նա է, որին ուզում են սպանել։ Եւ
ահա համարձակ խօսում է, եւ ոչինչ չեն աս-
ում դորան. մի գուցէ իրաւ իշխաններն էլ ի-
27 մացան, որ սա է ճշմարտապէս Քրիստոսը։ Բայց
սորան գիտենք, թէ որտեղից է. իսկ Քրիստոսն
երբոր գայ, ոչ ոք չի գիտենալ թէ որտեղից է։
28 Յիսուսն էլ՝ մինչ սովորեցնում էր, այն տեղն
աղաղակեց տաճարումն ասելով՝ Ինձ էլ էք գի-
տում եւ գիտում էլ էք թէ ինչ տեղից եմ. եւ
ես իմ անձից չեմ եկել. այլ ճշմարիտ է ինձ
29 ուղարկողը. որին դուք չէք գիտում։ Իսկ ես
30 գիտեմ նորան, վասն զի նորանից եմ, եւ նա
ուղարկեց ինձ։ Եւ ուզում էին բռնել նորան.
բայց ոչ ով ձեռք չձգեց նորա վերայ. քանզի նորա
31 ժամը դեռ չէր հասել։ Եւ ժողովրդից շատերը
հաւատացին նորան եւ ասում էին. Թէ Քրիս-
տոս երբոր գայ, արդե՞օք դորանցից աւելի նշան-
ներ կ՚անէ, քան որ սա արաւ։
32 Եւ Փարիսեցիները լսեցին ժողովրդից, որ այդ-
բաները տրտնջում էին նորա համար. եւ Փա-
րիսեցիներն եւ քահանայապետներն սպասաւոր-

33 ներ ուղարկեցին, որ բռնեն նորան։ Յիսուսն էլ
ասաց նորանց. Դեռ մի քիչ ժամանակ ձեզ հետ
34 եմ, եւ գնում եմ ինձ ուղարկողի մօտ։ Ինձ կ՚ո-
րոնէք եւ չէք գտնիլ, եւ որ տեղ որ ես եմ, դուք
35 չէք կարող գալ։ Հրէաներն էլ իրար ասացին.
Դա ո՞ր տեղ է գնալու, որ մենք չգտնենք դորան.
արդե՞օք Հելլենացոց ցրուած ժողովուրդների մօ-
տըն է գնալու եւ Հելլենացիներին է սովորե-
36 ցնելու։ Ի՞նչ է այն խօսքն, որ ասաց. Թէ Ինձ
կ՚որոնէք եւ չէք գտնիլ, եւ որ տեղ որ ես եմ,
դուք չէք կարող գալ։
37 Եւ տօնի վերջին մեծ օրումը Յիսուսը կանգ-
նած էր աղաղակեց եւ ասաց. Եթէ մէկը ծարաւ
38 է, թող ինձ մօտ գայ, եւ խմէ։ Ինձ հաւատա-
ցողը, ինչպէս գիրքն ասում է, Նորա փորից
39 կենդանի ջրերի գետեր կ՚բղխեն։ Սա ասաց Հո-
գոյն համար, որ ընդունելու էին նորան հաւա-
տացողները, քանզի դեռ Հոգին Սուրբ տրուած
չէր, որովհետեւ Յիսուսը դեռ չէր փառաւոր-
40 ուած։ Արդ ժողովրդից շատերը, երբոր այս խօս-
քը լսեցին, ասում էին. Սա ճշմարտապէս այն
41 մարգարէն է։ Ուրիշներն ասում էին. Սա Քրիս-
տոսն է. եւ էլ ուրիշներն ասում էին. Մի՞թէ
42 Քրիստոսը Գալիլեայից կ՚գայ։ Չէ՞ որ գիրքն
ասում է. Քրիստոս Դաւթի սերունդից եւ Բեթ-
43 ղեհէմ գիւղից կ՚գայ, որ տեղ Դաւիթն էր։ Եւ
տարաձայնութիւն եղաւ ժողովրդի մէջ նորա
44 համար։ Եւ նորանցից ոմանք կամեցան բռնել
նորան. բայց ոչ ոք ձեռք չձգեց նորա վերայ։
45 Եւ սպասաւորները եկան քահանայապետների
եւ Փարիսեցիների մօտ. եւ սորանք ասացին նո-
46 րանց. Ինչո՞ւ համար նորան չբերիք։ Սպասա-

ւորները պատասխանեցին. Երբէք մի մարդ այս-
47 պէս չխօսեց ինչպէս այս մարդը։ Փարիսեցիքն
էլ պատասխանեցին եւ ասացին. Մի՞թէ դուք
48 էլ մոլորուեցաք։ Մի՞թէ իշխաններից կամ Փա-
49 րիսեցիներից մէկը հաւատա՞ց նորան։ Այլ այդ
ռամիկ ժողովուրդը, որ օրէնքը չէ գիտում, ա-
50 նիծուած են։ Նիկոդիմոսը, որ գիշերը նորա մօտ
էր եկել, նորանցից մէկը լինելով, ասաց նորանց.
51 Մի՞թէ մեր օրէնքը մի մարդի դատում է, եթէ
առաջ չլսէ նորանից եւ չգիտենայ, թէ ինչ է
52 գործում։ Պատասխանեցին եւ ասացին նորան.
Մի՞թէ դու էլ Գալիլեայից ես. քննիր եւ տես,
53 որ Գալիլեայիցը մարգարէ դուրս չէ եկել։ Եւ
ամէն մէկը գնաց իր տունը։

ԳԼ. Ը

1 Եւ Յիսուսը գնաց Ձիթենեաց լեառը։ (2) Եւ
առաւօտանց դարձեալ եկաւ տաճարը, եւ բոլոր
ժողովուրդը նորա մօտ էր գալիս. եւ նստած
3 սովորեցնում էր նորանց։ Դպիրները եւ Փարի-
սեցիները մի կին բերին նորա մօտ՝ շնութեան
մէջ բռնուած, եւ նորան մէջտեղը կանգնեցնե-
4 լով. Նորան ասացին. Վարդապետ, այս կինը
5 բռնուել է յայտնապէս շնանալիս։ Եւ օրէնքումը
Մօսէս պատուիրեց մեզ, որ այսպիսիները քար-
6 կոծուին. հիմա դու ի՞նչ ես ասում։ Բայց այս
բանն ասում էին նորան փորձելով, որ չարախօ-
սեն նորանից։ Բայց Յիսուսը դէպի ցած ծռե-
7 լով՝ գրում էր հողի վերայ։ Բայց երբոր բանի-
պում էին հարցնելով նորան, վեր նայեց՝ եւ ա-
սաց. Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ նա

8 քար գցէ դորա վերայ։ Եւ դարձեալ դէպի ցած
9 ծռելով՝ գրում էր հողի վերայ։ Նորանք էլ երբ-
որ ** լսեցին եւ իրանց խղճմտանքիցը յանդի-
մանուեցան՝ մէկը մէկի ետեւից դուրս էին գը-
նում. ծերերիցն սկսած մինչեւ յետինները. եւ
Յիսուսը միայն մնաց, եւ կինը կանգնած մէջ
10 տեղը։ Յիսուսն էլ վեր նայեց, ոչ ոքի չտեսաւ
այն կնկանից ջոկ, եւ ասաց նորան. Ով կին,
ո՞ւր են այն քո գանգատաւորները. ոչ ով քեզ
11 չդատապարտե՞ց։ Նա էլ ասաց. Ոչ, ով տէր.
եւ Յիսուսն էլ ասաց նորան. Ես էլ չեմ քեզ
դատապարտում. գնա, եւ այսուհետեւ մեղք մի
գործեր։
12 Արդ Յիսուսը դարձեալ խօսեց նորանց հետ եւ
ասաց. Ես եմ աշխարհքի լոյսը. ով որ ինձ ե-
տեւից գայ, նա խաւարումը չի գնալ, այլ կե-
13 նաց լոյսը կ'ընդունի։ Փարիսեցիներն էլ ասացին
նորան. Դու քո անձի համար ես վկայում. քո
14 վկայութիւնը ճշմարիտ չէ։ Յիսուսը պատաս-
խանեց եւ ասաց նորանց. Թէ եւ ես վկայեմ իմ
անձի համար, իմ վկայութիւնը ճշմարիտ է. վա-
սըն զի գիտեմ թէ որ տեղից եկայ եւ որ տեղ եմ
գնում. բայց դուք չէք գիտում, թէ որ տեղից
15 եմ գալիս, եւ որ տեղ եմ գնում։ Դուք ըստ
մարմնոյ էք դատում. ես չեմ դատում ոչ մէկին
16 էլ։ Եւ եթէ ես դատեմ էլ, իմ դատաստանը ճըշ-
մարիտ է. վասն զի ես միայն չեմ, այլ ես եւ
17 ինձ ուղարկող Հայրը։ Եւ ձեր օրէնքումն էլ
գրուած է. թէ Երկու մարդկանց վկայութիւնը
18 ճշմարիտ է։ Ես եմ, որ ինձ համար վկայում եմ,
եւ վկայում է ինձ համար ինձ ուղարկող Հայրը։
19 Եւ ասում էին նորան. Ո՞ւր է քո Հայրը. Յի-

սուսը պատասխանեց. Ոչ ինձ էք գիտում, եւ
ոչ իմ Հօրը. եթէ ինձ գիտենայիք, իմ Հօրն էլ
կ'գիտենայիք։
20 Այս բանը Յիսուսը գանձատան մէջ խօսեց
նորանց հետ տաճարումը սովորեցնելիս. եւ ոչ
ով չբռնեց նորան, վասն զի դեռ նորա ժամը
չէր հասել։
21 Յիսուսը դարձեալ ասաց նորանց. Ես գնում
եմ, եւ ինձ կ'որոնէք. եւ ձեր մեղաց մէջ կ'մեռ-
նիք. որ տեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող
22 գալ։ Հրէաներն էլ ասում էին. Միթէ ինքն ի-
րան կ'սպանէ, որ ասում է. թէ Որ տեղ որ ես
23 եմ գնում, դուք չէք կարող գալ։ Եւ ասաց նո-
րանց. Դուք ներքեւիցն էք, ես վերեւիցն եմ.
դուք այս աշխարհքիցն էք, ես այս աշխարհքի-
24 ցը չեմ։ Արդ ասացի ձեզ. թէ Ձեր մեղաց մէջ
կ'մեռնիք. քանզի եթէ չհաւատաք թէ ես եմ,
25 ձեր մեղաց մէջ կ'մեռնիք։ Եւ ասացին նորան.
Դու ո՞վ ես. եւ Յիսուսը ասաց նորանց. Առաջ
26 այն, որ խօսում էլ եմ ձեզ հետ։ Շատ բան ու-
նիմ ձեզ համար խօսելու եւ դատելու. բայց ինձ
ուղարկողը ճշմարիտ է. եւ ես ինչ որ նորանից
27 լսեցի, այն եմ խօսում աշխարհքի մէջ։ Չիմա-
ցան, թէ Հօր համար էր ասում նորանց։
28 Յիսուսն էլ ասաց նորանց. Երբոր Որդոյն
մարդոյ կ'բարձրացնէք, այն ժամանակ կ'իմա-
նաք, թէ ես եմ. եւ իմ անձիցն ոչինչ չեմ ան-
ում. այլ ինչպէս իմ Հայրը սովորեցրեց ինձ, այն
29 եմ խօսում։ Եւ ինձ ուղարկողն ինձ հետ է.
ինձ մէնակ չէ թողել Հայրը, վասն զի ես միշտ
նորան հաճելի բաներն եմ անում։
30 Երբոր նա այս բաները խօսում էր, շատերը

31 հաւատացին նորան։ Եւ Յիսուսը իրան հաւա-
տացած Հրէաներին ասաց. Եթէ դուք իմ խօս-
քի մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներն
32 էք։ Եւ ճշմարտութիւնը կ'ճանաչէք. եւ ճշմար-
33 տութիւնը կ'ազատէ ձեզ։ Պատասխանեցին նո-
րան. Մենք Աբրահամի զաւակ ենք, եւ ոչ ոքի
երբէք չենք ծառայել. դու ի՞նչպէս ես ասում, թէ
34 ազատ կ'լինիք։ Յիսուսը պատասխանեց նորանց.
Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ Ամեն
35 ով որ մեղք է գործում, մեղքի ծառայ է։ Ծա-
ռան էլ յաւիտեան չի կենում տան մէջ. որդին
36 կենում է յաւիտեան։ Ուրեմն եթէ Որդին ազա-
37 տէ ձեզ, յիրաւի ազատ կ'լինիք։ Գիտեմ որ Աբ-
րահամի զաւակ էք. բայց ուզում էք ինձ սպա-
նել. վասն զի իմ խօսքը տեղ չունի ձեզանում։
38 Ես ինչ որ տեսայ իմ Հօր մօտ, խօսում եմ. եւ
դուք՝ ինչ որ ձեր հօրիցը տեսաք, անում էք։
39 Պատասխանեցին եւ ասացին նորան. Մեր հայրն
Աբրահամն է. Յիսուսը նորանց ասաց. Եթէ Աբ-
րահամի որդիք լինէիք, Աբրահամի գործքերը կը
40 գործէիք։ Բայց հիմա ուզում էք ինձ սպանել,
մի մարդի, որ ճշմարտութիւնն եմ խօսել ձեզ.
որ Աստուածանից լսեցի. այդ բանն Աբրահամ
41 չարաւ։ Դուք ձեր հօր գործքերն էք անում.
եւ ասացին նորան. Մենք պոռնկութիւնից չենք
ծնուած. մէկ Հայր ունինք, այսինքն Աստուած։
42 Յիսուսն էլ նորանց ասաց. Եթէ ձեր Հայրն
Աստուած լինէր, ինձ կ'սիրէիք. վասն զի Աստ-
ուածանից դուրս եկայ եւ եկայ. որովհետեւ ոչ
թէ իմ անձիցն եկայ, այլ նա ուղարկեց ինձ։
43 Ինչու՞ համար իմ խօսքը չէք իմանում. նորա
44 համար որ դուք չէք կարող իմ խօսքը լսել։ Դուք

սատանայ հօրիցն էք, եւ կամենում էք ձեր հօր
ցանկութիւններն անել. Նա սկզբիցը մարդասա-
պան էր, եւ ճշմարտութեան մէջ չկեցաւ, որով-
հետեւ ճշմարտութիւն չկայ նորանում. երբոր
սուտն է խօսում, իրաններիցն է խօսում, քանզի
45 ստախօս է եւ նորա (ստութեան) հայրը։ Բայց
ես, որովհետեւ ճշմարտութիւն եմ խօսում, ինձ
46 չէք հաւատում։ Ձեզանից ո՞վ կարող է ինձ մե-
ղաց համար յանդիմանել. բայց եթէ ճշմարտու-
թիւնն եմ ասում, ինչո՞ւ չէք հաւատում ինձ։
47 Աստուածանից լինողը Աստուծոյ խօսքերը լս-
ում է. Նորա համար դուք չէք ականջ դնում,
48 որ Աստուածանից չէք։ Հրէաները պատասխա-
նեցին եւ ասացին նորան. Չէ՞ որ մենք լաւ ենք
ասում, թէ դու Սամարացի ես, եւ դեւ ունիս։
49 Յիսուսը պատասխանեց. Ես դեւ չունիմ, այլ
իմ Հօրը պատուում եմ, եւ դուք անպատուում
50 էք ինձ։ Եւ ես իմ փառքը չեմ որոնում. կայ
51 որոնողը եւ դատողը։ Ճշմարիտ ճշմարիտ աս-
ում եմ ձեզ. Եթէ մէկն իմ խօսքը պահէ, նա
52 մահ չի տեսնիլ յաւիտեան։ Հրէաներն էլ ասա-
ցին նորան. Հիմա իմացանք, որ դեւ ունիս.
Աբրահամը մեռաւ եւ մարգարէներն էլ. եւ դու
ասում ես. Եթէ մէկն իմ խօսքս պահէ, մահ չի
53 ճաշակիլ յաւիտեան։ Մի՞թէ դու աւելի մեծ ես
քան մեր հայր Աբրահամը, որ մեռաւ եւ մար-
գարէներն էլ մեռան. դու քեզ ո՞վ ես անում։
54 Յիսուսը պատասխանեց. Եթէ ես իմ անձը փա-
ռաւորեմ, իմ փառքը ոչինչ է. Հայրն է ինձ փա-
ռաւորողը, որի համար դուք ասում էք. թէ
55 Ձեր Աստուածն է. Եւ չէք ճանաչում նորան.
բայց ես գիտում եմ նորան. եւ եթէ ասեմ. թէ

Չեմ գիտում նորան, ձեզ նման կ՚լինիմ ստա-
խօս. բայց գիտում եմ նորան, եւ նորա խօսքը
56 պահում եմ։ Աբրահամ՝ ձեր հայրը զուարճացաւ
որ իմ օրը տեսնէ, եւ տեսաւ, եւ ուրախացաւ
57 էլ։ Հրէաները նորան ասացին. Դու դեռ յիսուն
58 տարեկան չես, եւ Աբրահամի՞ն տեսար։ Յիսու-
սը նորանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտ աս-
ում եմ ձեզ. Աբրահամի լինելուցն առաջ եմ
59 ես։ Եւ քարեր վեր առան, որ նորա վերայ գը-
ցեն. բայց Յիսուսը ծածկուեցաւ, եւ դուրս ե-
լաւ գնաց տաճարից՝ նորանց միջովն անցնելով,
եւ այսպէս գնաց հեռացաւ։

Գլ. Թ

1 Եւ անցկենալիս մի մարդ տեսաւ կոյր ՚ի ծնէ։
2 Եւ նորա աշակերտները հարցրին նորան եւ ա-
սացին. Ռաբբի, ո՞վ է մեղանչել, սա՞ թէ իր ծը-
3 նո՞ղքը, որ կոյր ծնուեցաւ։ Յիսուսը պատաս-
խանեց. Ոչ դա է մեղանչել, եւ ոչ էլ իր ծնող-
քը. այլ որ Աստուծոյ գործքերը յայտնի լինին
4 դորանում։ Ինձ պէտք է նորա գործքերը գոր-
ծել, որ ինձ ուղարկեց, մինչեւ որ օր կայ. գի-
շերը գալիս է, որ այն ժամանակ ոչ ով կարող
5 չէ գործել։ Քանի որ աշխարհքումն եմ, լոյս եմ
6 աշխարհքի. Այս ասելով թքեց գետինը, եւ թը-
քիցը ցեխ շինեց, եւ ցեխը քսեց կոյրի աչքերի
7 վերայ, Եւ նորան ասաց. Գնա՝ լուացուիր Սե-
լովամայ աւազանումը, որ թարգմանվում է՝ ու-
ղարկուած. եւ գնաց լուացուեցաւ, եկաւ եւ
8 տեսնում էր։ Բայց դրացիները եւ նորանք որ
առաջուց տեսել էին նորան, որ կոյր էր, ասում

9 էին՝ Չէ՞ որ սա է այն նստող մուրացողը․ Ու-
րիշներն ասում էին, թէ Նա է․ ուրիշներն էլ,
թէ Նորան նման է․ բայց ինքն ասում էր թէ
10 Ես եմ։ Եւ նորան ասում էին․ Ապա աչքերդ
11 ի՞նչպէս բացուեցան։ Նա պատասխանեց եւ ա-
սաց․ Մի մարդ՝ անունը Յիսուս, ցեխ շինեց եւ
աչքերիս քսեց, եւ ինձ ասաց․ Գնա Սելօամ ա-
ւազանը, եւ լուացուիր․ գնացի եւ լուացուեցայ,
12 եւ տեսնում եմ։ Եւ նորան ասացին․ Ո՞ւր է Նա․
ասաց․ Չեմ գիտում։
13 Փարիսեցիների մօտ տարան նորան, որ մի ժա-
14 մանակ կոյր էր։ Եւ շաբաթ օր էր, երբոր Յի-
սուսը ցեխը շինեց եւ նորա աչքերը բացաւ։
15 Փարիսեցիները դարձեալ հարցնում էին նորան,
թէ ի՞նչպէս տեսաւ․ եւ նա նորանց ասաց․ Ցեխ
դրաւ իմ աչքերի վերայ, եւ լուացուեցայ, եւ
16 տեսնում եմ։ Եւ Փարիսեցիներից ոմանք ասա-
ցին․ Այն մարդն Աստուածանից չէ, վասն զի
շաբաթը չէ պահում․ ուրիշներն ասում էին, Ի՞նչ-
պէս կարող է մի մեղաւոր մարդ այսպիսի նշան-
ներ անել․ եւ բաժանմունք կար նորանց մէջ։
17 Դարձեալ ասացին կոյրին․ Դու ի՞նչ ես ասում
նորա համար, որ աչքերդ բացաւ․ եւ նա ասաց,
18 թէ Մարգարէ է։ Եւ Հրէաները չէին հաւատում
նորա համար, թէ կոյր էր եւ բացուեցաւ․ մին-
19 չեւ որ աչքը բացուածի ծնողքը կանչեցին․ Նո-
րանց հարցրին եւ ասացին․ Սա՞ է ձեր որդին,
որի համար ասում էք դուք, թէ կոյր ծնուե-
20 ցաւ․ ապա ի՞նչպէս է տեսնում հիմա։ Նորա
ծնողքն պատասխանեցին եւ ասացին․ Գիտում
ենք, որ սա է մեր որդին, եւ թէ կոյր ծնուե-
21 ցաւ․ Բայց թէ հիմա ի՞նչպէս է տեսնում, չգի-

տենք կամ ո՞վ բացաւ նորա աչքերը մենք չգի-
տենք․ ինքն չափահաս է․ իրան հարցրէք, թող
22 ինքն խօսի իրան համար։ Նորա ծնողքն այս ա-
սացին․ վասն զի Հրէաներիցը վախենում էին․
քանզի Հրէաները արդէն միասին որոշել էին,
որ եթէ մէկը Քրիստոս դաւանէ նորան, ժողո-
23 վարանիցը դուրս լինի։ Նորա համար նորա ծը-
նողքը ասացին, թէ Ինքն չափահաս է, իրանից
24 հարցրէք։ Յետոյ երկրորդ անգամ կանչեցին այն
մարդուն, որ կոյր էր, եւ նորան ասացին․ Ա-
ստուծոյ փառք տուր, մենք գիտենք, որ այն
25 մարդը մեղաւոր է։ Նա էլ պատասխանեց եւ
ասաց․ Թէ մեղաւոր է, ես չգիտեմ․ մէկ բան
եմ գիտում, որ կոյր էի եւ հիմա տեսնում եմ։
26 Եւ դարձեալ ասացին նորան․ Ի՞նչ արաւ քեզ․
27 ի՞նչպէս բացաւ աչքերդ։ Նորանց պատասխա-
նեց․ Արդէն ձեզ ասացի եւ չլսեցիք․ ի՞նչու էք
դարձեալ կամենում լսել․ մի՞թէ դուք էլ էք կա-
28 մենում նորան աշակերտ լինել։ Նորանք հայ-
հոյեցին նորան եւ ասացին․ Դու ես նորա աշա-
կերտ․ իսկ մենք Մօսէսի աշակերտներն ենք։
29 Մենք գիտենք, որ Աստուած Մօսէսի հետ խօ-
սեց․ բայց սորան չենք գիտում, թէ ո՞ր տեղից
30 է։ Մարդը պատասխանեց եւ նորանց ասաց․
Հէնց դա է զարմանալին որ դուք չէք գիտում,
թէ ո՞ր տեղից է, եւ նա իմ աչքերը բացաւ։
31 Եւ գիտենք, որ Աստուած մեղաւորներին չէ լը-
սում, այլ եթէ մէկը աստուածապաշտ է՝ եւ նորա
32 կամքը կատարում է, նորան լսում է։ Յաւիտե-
նից հետէ չէ լսուած որ մէկը կոյր ծնուածի աչ-
33 քերը բացաւ։ Եթէ սա Աստուածանից չէր, ո-
34 չինչ չէր կարող անել։ Պատասխանեցին եւ նո-

րան ասացին. Դու բոլորովին մեղքի մէջ ես
ծնուել, և դո՞ւ ես մեզ սովորեցնում. և դուրս
արին նորան։
35 Յիսուսը լսեց, որ նորան դուրս արին. և
նորան գտաւ և ասաց նորան. Դու հաւատա՞ում
36 ես Աստուծոյ Որդուն։ Նա պատասխանեց և
ասաց. Տէր, ո՞վ է նա՝ որ հաւատամ նորան։
37 Յիսուսն էլ նորան ասաց. Տեսար էլ նորան. և
38 քեզ հետ խօսողն էլ նա ինքն է։ Եւ նա ասաց.
Հաւատում եմ, Տէր, և երկրպագեց նորան։
39 Եւ Յիսուսը ասաց. Ես դատաստանի համար եկայ
այս աշխարհքը, որ չտեսնողները տեսնեն, և
տեսնողները կուրանան։
40 Եւ Փարիսեցիներից ոմանք, որ նորա հետ էին,
լսեցին այս, և ասացին նորան. Միթէ մենք էլ
41 կոյր ենք։ Յիսուսը նորանց ասաց. Եթէ կոյր
լինէիք, մեղք չէիք ունենալ. բայց հիմա ասում
էք, թէ՝ Տեսնում ենք, նորա համար ձեր մեղ-
քերը մնում են։

Գլ. Ժ

1 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ով որ
դռնովն չէ մտնում ոչխարների գաւիթը, այլ ու-
րիշ կողմից է վեր ելնում, նա գող է և աւա-
2 զակ։ Բայց դռնովը մտնողը, ոչխարների հովիւն
3 է։ Դռնապանը նորա համար բաց է անում. և
ոչխարները նորա ձայնին լսում են, և իր ոչ-
խարներն իրանց անունովը կանչում է, և նորանց
4 դուրս է հանում։ Եւ երբոր իր ոչխարները դուրս
է հանում, նորանց առջևից գնում է, և ոչ-
5 խարները նորա ետևից գնում են. վասն զի նո-

րա ձայնը ճանաչում են։ Բայց օտարի ետևից
չեն գնում. այլ նորանից փախչում են, որովհե-
տև օտարների ձայնը չեն ճանաչում։
6 Այս առակը Յիսուսը ասաց նորանց. բայց նո-
րանք չէին գիտում, թէ ինչ էր այն որ խօսում
7 էր նորանց հետ։ Յիսուսը դարձեալ նորանց ա-
սաց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ
8 Ես եմ ոչխարների դուռը։ Ամենքն՝ որ ինձա-
նից առաջ եկան, գողեր են և աւազակներ. և
9 ոչխարներն էլ չլսեցին։ Ես եմ դուռը. եթէ մէկն
ինձանով ներս մանէ, կ'ապրի. և կ'մանէ և
10 դուրս կ'գայ, և արօտ կ'գտնէ։ Գողն չէ գալիս,
բայց միայն որ գողանայ և սպանէ և կորցնէ.
Ես եկայ որ կեանք ունենան, և էլ աւելի ու-
11 նենան։ Ես եմ բարի հովիւը. բարի հովիւն իր
12 անձն դնում է ոչխարների վերայ։ Բայց վարձ-
կանն որ հովիւ չէ, որ ոչխարներն իրը չեն.
տեսնում է գայլին գալիս, և թողում է ոչխար-
ներն և փախչում. և գայլը յափշտակում է
13 նորանց և ցրվում է ոչխարներին։ Եւ վարձ-
կանն փախչում է, որովհետև վարձկան է, և
14 ոչխարների համար հոգս չունի։ Ես եմ բարի Հո-
վիւը, և իմիններին ճանաչում եմ, և իմիննե-
15 րիցն էլ ճանաչվում եմ։ Ինչպէս Հայրն է ինձ
ճանաչում, ես էլ ճանաչում եմ Հօրը, և իմ
16 անձը դնում եմ ոչխարների համար։ Եւ ուրիշ
ոչխարներ էլ ունիմ, որ այս գաւիթիցը չեն, և
նորանց էլ պէտք է, որ բերեմ. և իմ ձայնին
17 կ'լսեն, և մէկ հօտ և մէկ հովիւ կ'լինին։ Նո-
րա համար իմ Հայրը սիրում է ինձ, որ իմ անձը
դնում եմ, որպէս զի դարձեալ առնեմ նորան։
18 Ոչ ով նորան վեր չառնում ինձանից. այլ ես

իմքս ինձանից եմ դնում նորան. իշխանութիւն
ունիմ նորան դնելու եւ իշխանութիւն ունիմ
նորան դարձեալ առնելու. այս պատուէրն առի
իմ Հօրիցը։
19 Արդ դարձեալ բաժանմունք եղաւ Հրէից մէջ
20 այս խօսքերի համար։ Եւ նորանցից շատերն աս-
ում էին. Թէ Դեւ ունի, եւ գժվում է. ինչո՞ւ
21 էք ականջ դնում դորան։ Ուրիշներն ասում է-
ին. Այս խօսքերը դիւահարի խօսքեր չեն. մի՞թէ
դեւը կարող է կոյրի աչքերը բանալ։
22 Այն ժամանակ Երուսաղէմումը նաւակատիք
23 տօն եղաւ, եւ ձմեռն էր։ Եւ Յիսուսը ման էր
24 գալիս տաճարումը Սողոմոնի սրահի մէջ։ Հրէա-
ներն էլ նորան շրջապատեցին եւ ասացին նո-
րան. Մինչեւ ե՞րբ մեր հոգիները թափում ես.
եթէ դու ես Քրիստոսը, համարձակ ասիր մեզ։
25 Յիսուսը պատասխանեց նորանց. Ասացի ձեզ,
եւ չէք հաւատում. այն գործքերը որ իմ Հօր
անունովը գործում եմ, նորանք վկայում են ինձ
26 համար։ Բայց դուք չէք հաւատում. վասն զի
իմ ոչխարներիցը չէք, ինչպէս որ ասացի ձեզ։
27 Իմ ոչխարներն իմ ձայնին լսում են, եւ ես ճա-
նաչում եմ նորանց, եւ իմ ետեւից գալիս են։
28 Եւ ես յաւիտենական կեանք եմ տալիս նորանց,
եւ յաւիտեան չեն կորչիլ, եւ ոչ ով չյափշտա-
29 կիլ նորանց իմ ձեռքիցը։ Իմ Հայրն որ նորանց
տուաւ ինձ, ամենից մեծ է, եւ ոչ ով կարող
30 չէ իմ Հօր ձեռքիցն յափշտակել նորանց։ Ես եւ
Հայրը մէկ ենք։
31 Հրէաները դարձեալ քարեր վեր առան, որ նո-
32 րան քարկոծեն։ Յիսուսը նորանց պատասխա-
նեց. Շատ բարի գործքեր ցոյց տուի ձեզ իմ

Հօրիցը. նորանցից ո՞ր գործի համար էք ինձ
33 քարկոծում։ Հրէաները պատասխանեցին եւ ա-
սացին. Բարի գործքի համար քեզ չենք քար-
կոծում, այլ հայհոյութեան համար. եւ որ դու
34 մարդ գոլով՝ քո անձն Աստուած ես անում։ Յի-
սուսը նորանց պատասխանեց. Գրուած չէ՞ ձեր
օրէնքումը. Ես ասացի՝ թէ դուք աստուածներ էք։
35 Եթէ նորանց աստուածներ է ասում, որ Աստու-
ծոյ խօսքն եղաւ նորանց. (եւ կարելի չէ որ
36 գիրքը եղծանուի.) Ապա նորան որ Հայրը սրբեց
եւ ուղարկեց աշխարհք, դուք ասում էք. Թէ
Հայհոյում ես, որ ասացի. Թէ Աստուծոյ Որդի
37 եմ։ Եթէ իմ Հօր գործքը չեմ գործում, մի հա-
38 ւատաք ինձ։ Ապա եթէ գործում եմ, թէ եւ
ինձ էլ չհաւատաք, գոնէ գործքերին հաւատա-
ցէք, որ ճանաչէք եւ հաւատաք, թէ Հայրն ին-
ձանում է եւ ես նորա մէջ։
39 Եւ դարձեալ ուզում էին նորան բռնել, բայց
40 նորանց ձեռքիցը դուրս եկաւ։ Եւ դարձեալ գնաց
Յորդանանի այն կողմը, այն տեղը, որ Յոհան-
նէսն էր առաջուց եւ մկրտում էր. եւ այնտեղ
41 էր կենում։ Եւ շատերը նորա մօտ եկան եւ աս-
ում էին. Թէ Յոհաննէսը ոչ մի նշան չգործեց։
42 Բայց բոլորն ինչ որ Յոհաննէսը նորա համար
ասաց, ճշմարիտ էր. եւ այնտեղ շատերը հա-
ւատացին նորան։

ԳԼ. ԺԱ

1 Եւ մի հիւանդ կար, անունը Ղազարոս, Բեթա-
նիայիցը, Մարիամի եւ նորա քոյր Մարթայի գիւ-
2 ղիցը։ Մարիամն էլ նա էր, որ Տիրոջը իւղով

օծեց եւ նորա ոտները սրբեց իր մազերովը․ որի
3 եղբայրը Ղազարոս հիւանդ էր։ Եւ նորա քոյ-
րերն ուղարկեցին նորա մօտ եւ ասացին․ Տէր,
ահա նա՝ որին դու սիրում ես՝ հիւանդացել է։
4 Յիսուսն էլ երբոր լսեց, ասաց․ Այն հիւանդու-
թիւնը մեռնելու համար չէ, այլ Աստուծոյ փա-
ռաց համար․ որ Որդին Աստուծոյ նորանով փա-
5 ռաւորուի։ Եւ Յիսուսը սիրում էր Մարթային
6 եւ նորա քրոջը եւ Ղազարոսին։ Եւ երբոր լսեց,
թէ նա հիւանդ է, այն ժամանակ երկու օր մը-
7 նաց այն տեղը, ուր էր։ Ապա նորանից յետոյ ա-
սաց աշակերտներին․ Եկէք դարձեալ գնանք Հրէ-
8 աստան։ Աշակերտներն ասացին նորան․ Ռաբբի,
հիմա Հրէաներն ուզում էին քեզ քարկոծել․ եւ
9 դարձեալ այն տե՞ղ ես գնում։ Յիսուսը պատաս-
խանեց․ Չէ՞ որ օրը տասներկու ժամ ունի․ եթէ
մէկը ցերեկը ման գայ, չի գայթակղիլ․ վասն
10 զի այս աշխարհքի լոյսը տեսնում է։ Իսկ եթէ
մէկը գիշերը ման գայ, կ'գայթակղի․ որովհետեւ
11 լոյս չկայ նորանում։ Այս ասաց, եւ սորանից
յետոյ ասաց նորանց․ Մեր Ղազարոս բարեկամը
քնեց, բայց կ'գնամ, որ զարթնեցնեմ նորան։
12 Եւ նորա աշակերտներն ասացին նորան․ Տէր,
13 թէ որ քնել է կ'առողջանայ։ Բայց Յիսուսը նո-
րա մահուան համար էր ասել․ բայց նորանք
կարծում էին, թէ քուն քնելու համար էր աս-
14 ում։ Այն ժամանակ Յիսուսը յայտնի ասաց նո-
15 րանց․ Ղազարոսը մեռաւ։ Եւ ես ուրախ եմ
ձեզ համար, որ դուք հաւատաք ինձ, որ ես
16 այն տեղ չէի․ Բայց գնանք նորա մօտ։ Եւ ասաց
Թօմաս (Երկուորեակ կոչուածն) աշակերտակից-
ներին․ Մենք էլ գնանք նորա հետ մեռնինք։

17 Յիսուսն էլ եկաւ՝ նորան արդէն չորս օր գե-
18 րեզմանի մէջ դրուած գտաւ։ Եւ Բեթանիա մօտ
էր Երուսաղէմին տասն եւ հինգ ասպարէզի չա-
19 փով։ Եւ Հրէաներից շատերը եկել էին Մար-
թայի եւ Մարիամի մօտ, որ մխիթարեն նորանց
20 իրանց եղբօր մասին։ Արդ երբոր Մարթան լսեց,
թէ Յիսուսը գալիս է, գնաց նորան դիմաւորե-
21 լու․ բայց Մարիամը տանը նստած էր։ Եւ ա-
սաց Մարթան Յիսուսին․ Տէր, եթէ այս տեղ լի-
22 նէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ։ Բայց հիմա էլ
գիտեմ, թէ ինչ որ Աստուածանից խնդրես,
23 Աստուած կ'տայ քեզ։ Յիսուսը նորան ասաց․
24 Քո եղբայրը յարութիւն կ'առնէ։ Մարթան նո-
րան ասաց․ Գիտեմ որ յարութիւն կ'առնէ յա-
25 րութիւնումն՝ յետին օրը։ Յիսուսը նորան ա-
սաց․ Ես եմ յարութիւնը եւ կեանքը․ ինձ հա-
26 ւատացողը թէ եւ մեռնի էլ, կ'ապրի։ Եւ ամեն
ով որ կենդանի է եւ ինձ հաւատում է, յաւիտ-
27 եան չի մեռնիլ․ հաւատո՞ւմ ես սորան։ Նորան
ասաց․ Այո, Տէր, ես հաւատացել եմ, թէ դու
ես Քրիստոսն՝ Աստուծոյ Որդին, թէ պէտք է
28 աշխարհք գայիր։ Եւ երբոր այս ասաց, գնաց
թաքուն կանչեց իր Մարիամ քրոջը, եւ ասաց․
29 Վարդապետը եկել է եւ կանչում է քեզ։ Նա
երբոր լսեց, շուտով վերկացաւ, եւ եկաւ նորա
30 մօտ։ Յիսուսը դեռ չէր եկել գիւղը, այլ այն տեղն
31 էր, ուր Մարթան եկաւ նորա առջեւը։ Բայց
Հրէաներն, որ տանը նորա հետ էին եւ նորան
մխիթարում էին, երբոր Մարիամին տեսան, թէ
շուտով վերկացաւ եւ գնաց, նորա ետեւից գնա-
ցին․ ասելով՝ թէ Գերեզմանն է գնում, որ
32 այն տեղ լայ։ Բայց Մարիամ երբոր այն տեղ ե-

կաւ, ուր Յիսուսն էր, եւ տեսաւ նորան, նորա
ոտներն ընկաւ եւ ասաց նորան. Տէր, եթէ այս
33 տեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ։ Յիսուսն
էլ երբոր նորան տեսաւ որ լաց էր լինում, եւ
նորա հետ եկած Հրէաներն էլ՝ որ լաց էին լի-
34 նում, իր հոգւովը խռովեցաւ եւ յուզուեցաւ։ Եւ
ասաց. Ո՞ւր դրիք նորան. նորան ասացին. Տէր,
35 եկ եւ տես։ Յիսուսը արտասուեց։ (36) Հրէա-
ներն ասում էին. Տես ի՜նչպէս էր սիրում նո-
37 րան։ Նորանցից էլ ոմանք ասում էին. Մի՞թէ
սա որ կոյրի աչքերը բացաւ, չէր կարող անել՝
38 որ սա էլ չմեռնի։ Եւ Յիսուսը դարձեալ խռո-
ված եկաւ գերեզմանը. եւ այն մի քարայր էր,
39 եւ մի քար նորա վերայ դրուած։ Յիսուսը ա-
սաց. Այդ քարը վեր առէք. մեռելի քոյրը՝ Մար-
թան ասաց նորան. Տէր, արդէն հոտած է, վա-
40 սըն զի չորս օրուան է։ Յիսուսը նորան ասաց.
Չասացի՞ քեզ, որ եթէ հաւատաս, Աստուծոյ
41 փառքը կ՚տեսնես։ Եւ քարը վեր առին, ուր որ
մեռելը դրուած էր. Յիսուսն էլ իր աչքերը դէ-
պի վեր բարձրացրեց եւ ասաց. Հայր, գոհա-
42 նում եմ քեզանից, որ ինձ լսեցիր։ Եւ ես գիտէի
որ միշտ լսում ես ինձ. բայց այս չրջակայ ժո-
ղովրդի համար ասացի, որ հաւատան թէ դու
43 ուղարկեցիր ինձ։ Եւ այս ասելով՝ մեծ ձայնով ա-
44 ղաղակեց. Ղազարէ, եկ դուրս։ Եւ մեռելը դուրս
եկաւ՝ ոտները եւ ձեռները պատանով կապած,
եւ երեսը վարշամակով պատած։ Յիսուսը նո-
րանց ասաց. Արձակեցէք դորան եւ թողէք գնայ։
45 Եւ Հրէաներից շատերը, որ Մարիամի մօտ
էին եկել եւ տեսան ի՜նչ որ արաւ Յիսուսը, հա-
46 ւատացին նորան։ Եւ նորանցից էլ ոմանք գնա-

ցին Փարիսեցիների մօտ, եւ ասացին նորանց.
ի՜նչ որ Յիսուսը արաւ։
47 Եւ քահանայապետները եւ Փարիսեցիները ա-
տեան ժողովեցին, եւ ասացին. Ի՞նչ անենք, որ
48 այդ մարդը շատ նշաններ է անում։ Եթէ դորան
այդպէս թողենք, ամենքը կ՚հաւատան դորան,
եւ Հռոմայեցիք կ՚գան վեր կ՚առնեն մեր երկիրն
49 էլ եւ ազգն էլ։ Եւ նորանցից մէկը՝ Կայիափան,
որ այն տարուայ քահանայապետն էր, ասաց նո-
50 րանց. Դուք ոչինչ չգիտէք, Եւ չէք էլ մտա-
ծում, թէ լաւ է մեզ համար՝ որ մէկ մարդ մեռնի
ժողովրդի վերայ, քան թէ բոլոր ազգը կորչի։
51 Բայց սա իրանից չասաց. այլ որովհետեւ այն
տարուայ քահանայապետն էր, մարգարէացաւ՝
52 թէ Յիսուսը պիտի մեռնէր ազգի համար։ Եւ ոչ
թէ միայն ազգի համար, այլ որ Աստուծոյ ցըր-
ուած որդիքն էլ մէկ տեղ ժողովէ։
53 Արդ այն օրից հետէ խորհուրդ արին, որ նո-
54 րան սպանեն։ Յիսուսն էլ համարձակ չէր ման
գալիս Հրէից մէջ. այլ այն տեղից գնաց մի եր-
կիր, անապատի մօտ, Եփրայեմ ասուած քաղա-
քը. եւ այն տեղ էր կենում իր աշակերտների
հետ։
55 Եւ Հրէաների զատիկը մօտ էր, եւ այն գա-
ւառից շատերը զատկից առաջ վեր եկան Երու-
56 սաղէմ, որ իրանց անձները սրբեն։ Եւ որոնում
էին Յիսուսին, եւ իրար ասում էին՝ տաճարումը
կանգնած. Ի՞նչպէս է երեւում ձեզ. մի՞թէ այս
տօնին չի գալ. բայց քահանայապետները եւ Փա-
րիսեցիները հրաման էին տուել, որ՝ եթէ մէկը
գիտենայ թէ ուր է, իմաց տայ, որ բռնեն նորան։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Յիսուսը զատկից վեց օր առաջ եկաւ Բե-
թանիա, որ տեղ մեռեալ Ղազարոսն էր, որին
2 մեռելներից յարոյց։ Եւ այն տեղ հացկերութիւն
արին նորա համար. եւ Մարթա ծառայում էր,
եւ Ղազարոսը նորա հետ նստողներից մէկն էր։
3 Մարիամն էլ մի լիտր նարդոսի ազնիւ մեծագին
իւղ առաւ, Յիսուսի ոտները օծեց, եւ իր մա-
զերովը սրբում էր նորա ոտները. եւ տունը լցո-
4 ւեցաւ իւղի հոտովը։ Եւ ասաց նորա աշա-
կերտներից մէկը՝ Յուդա Սիմոնեան Իսկարիօ-
5 տացին, որ նորան մատնելու էր. Ինչո՞ւ համար
այդ իւղը երեք հարիւր դենարի չծախուեցաւ,
6 եւ աղքատներին տրուեցաւ։ Բայց նա ասաց,
ոչ թէ որովհետեւ աղքատների համար նորա հոգն
էր. այլ որ գող էր՝ եւ քսակը ունէր, եւ ըն-
7 կածը պահում էր։ Յիսուսն էլ ասաց. Թոյլ տուր
դորան, նա իմ պատանքի օրուան համար էր պա-
8 հել այդ։ Քանզի աղքատներին միշտ ձեզ հետ
ունիք. բայց ինձ միշտ չ'ունիք։
9 Եւ Հրէաներից շատ ժողովուրդ գիտաց, թէ
նա այն տեղ է, եւ եկան, ոչ թէ միայն Յիսուսի
համար, այլ որ Ղազարոսին էլ տեսնեն, որին
10 մեռելներից յարոյց։ Քահանայապետներն էլ խոր-
11 հուրդ արին, որ Ղազարոսին էլ սպանեն։ Վասն
զի Հրէաներից շատերը նորա պատճառովը գը-
նում էին եւ հաւատում էին Յիսուսին։
12 Նորա հետեւեալ օրը շատ ժողովուրդ, որ ե-
կել էին տօնը, երբոր լսեցին, թէ Յիսուսը գա-
13 լիս է Երուսաղէմ. Արմաւի ծառերի ճղեր առին,
եւ դուրս գնացին նորա առջեւը, աղաղակում

էին. Ովսաննայ, օրհնեալ որ Տիրոջ անունովը
14 գալիս ես, ով Իսրայէլի Թագաւոր։ Եւ Յիսուսը
մի յաւանակ գտաւ, եւ նորա վերայ նստեց. ինչ-
15 պէս գրուած է՝ թէ. Մի վախենար, Սիօնի աղ-
ջիկ, ահա քո Թագաւորը գալիս է՝ իշու յաւա-
16 նակի վերայ նստած։ Եւ նորա աշակերտներն
առաջ չ'իմացան այս բանը. բայց երբոր Յիսուսը
փառաւորուեցաւ՝ այն ժամանակ յիշեցին, թէ այս
նորա համար գրուածն էր. եւ այն բանը արին
17 նորան։ Եւ ժողովուրդն՝ որ նորա հետ էր, վը-
կայում էր, թէ Ղազարոսին գերեզմանիցը դուրս
18 կանչեց. եւ մեռելներից յարոյց նորան։ Եւ նորա
համար էլ ժողովուրդը գնաց նորա առջեւը, վա-
19 սըն զի լսեցին թէ նա արել էր այն նշանը։ Բայց
Փարիսեցիներն իրար մէջ ասում էին. Տեսնո՞ւմ
էք, որ ոչինչ օգուտ չունիք. ահա աշխարհքը
նորա ետեւից գնաց։
20 Եւ կային ոմանք Հելլենացիք՝ նորանցից, որ
եկել էին այն տեղ, որ երկրպագեն այն տօնումը։
21 Նորանք եկան Փիլիպպոսի մօտ որ Գալիլեայի
Բեթսայիդայիցն էր, նորան խնդրում էին եւ
ասում. Տէր, կամենում ենք Յիսուսին տես-
22 նել։ Փիլիպպոսը գալիս է Անդրէասին ասում.
Անդրէասն եւ Փիլիպպոսն ասում են Յիսուսին։
23 Յիսուսն էլ պատասխանեց նորանց՝ եւ ասաց.
Ժամը հասաւ, որ Որդին մարդոյ փառաւորուի։
24 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթէ ցո-
րենի հատը հողի մէջ չ'ընկնի եւ մեռնի, ինքը
մէնակ կ'մնայ. բայց եթէ մեռնի, շատ պտուղ
25 կ'բերէ։ Իր անձը սիրողը՝ կ'կորցնէ նորան, եւ
իր անձն ատողը այս աշխարհքումը, յաւիտե-
26 նական կեանքի մէջ կ'պահէ նորան։ Եթէ մէկը

ծառայէ ինձ, թող նա իմ ետեւից գայ· եւ ուր
ես եմ, այն տեղ էլ իմ պաշտօնեան կ՚լինի· եթէ
27 մէկը ծառայէ ինձ, Հայրը կ՚պատուէ նորան։ Հիմա
իմ անձը խռոված է· եւ ի՞նչ ասեմ· Հայր, ա-
զատիր ինձ այս ժամիցը· սակայն խկ սորա հա-
28 մար եկայ այս ժամի մէջ։ Հայր, փառաւորիր քո
անունը։ Եւ երկնքից ձայն եկաւ, Թէ փառաւո-
29 րեցի էլ եւ դարձեալ կ՚փառաւորեմ։ Եւ ժողո-
վուրդն, որ կանգնած էր եւ լսում էր, ասում
էին, Որոտմունք եղաւ· ուրիշներն ասում էին·
30 Հրեշտակ խօսեց նորա հետ։ Յիսուսը պատաս-
խանեց եւ ասաց· Այս ձայնը ոչ թէ ինձ համար
31 եղաւ, այլ ձեզ համար։ Հիմա դատաստան է այս
աշխարհքի· հիմա այս աշխարհքի իշխանը դուրս
32 կ՚գցուի։ Եւ ես երբոր բարձրանամ երկրից,
33 ամենքին կ՚քաշեմ ինձ մօտ։ Եւ այս ասում էր,
որ ցոյց տայ, թէ ինչպիսի մահով պիտի մեռնի։
34 Ժողովուրդը պատասխանեց նորան· Մենք օրէն-
քից լսեցինք, թէ Քրիստոսը յաւիտեան կ՚կենայ·
եւ դու ի՞նչպէս ես ասում, թէ պէտք է Որդին
մարդոյ բարձրանայ· ո՞վ է այն Որդին մարդոյ։
35 Յիսուսն էլ ասաց նորանց· Մի քիչ ժամանակ
դեռ լոյսը ձեզ հետ է· գնացէք, քանի որ լոյսն
ունիք, որ խաւարը ձեզ չ՚հասնէ· եւ խաւարումը
36 գնացողը չէ գիտում, Թէ ո՞ւր է գնում։ Քանի որ
լոյսն ունիք, հաւատացէք լուսոյն, որ լուսոյ որ-
դիք լինիք։ Յիսուսը այս բաները խօսեց, եւ գնաց
թաքցուեցաւ նորանցից։
37 Եւ թէպէտ այնքան նշաններ նա արել էր նո-
րանց առջեւ· նորանք չէին հաւատում նորան·
38 որ Եսայի մարգարէի խօսք կատարուի, որ ասաց·
Տէր, ո՞վ հաւատաց մեր խօսքին, եւ Տիրոջ բա-

39 զուկը ո՞ւմ յայտնուեցաւ։ Նորա համար չէին կա-
րողանում հաւատալ· վասն զի Եսային դարձեալ
40 ասում է· Նորանց աչքերը կուրացրեց, եւ նո-
րանց սրտերը թմրացրեց, որ աչքով չ՚տեսնեն,
եւ սրտով չ՚իմանան, եւ դառնան՝ եւ ես բժշկեմ
41 նորանց։ Եսային սա ասաց, երբոր նորա փառքը
42 տեսաւ, եւ նորա համար խօսեց։ Բայց եւ այն-
պէս իշխաններից շատերը հաւատացին նորան·
սակայն Փարիսեցիների պատճառով չէին դա-
43 ւանում, որ ժողովարանից դուրս չ՚գցուին։ Վա-
սըն զի մարդկանց փառքն աւելի սիրեցին քան
թէ Աստուծոյ փառքը։
44 Եւ Յիսուսը աղաղակում էր եւ ասում· Ինձ
հաւատացողը չէ թէ ինձ է հաւատում, այլ ինձ
45 ուղարկողին։ Եւ ինձ տեսնողը, ինձ ուղարկո-
46 ղին է տեսնում։ Ես լոյս եկայ աշխարհքը, որ
ամեն ինձ հաւատացողը խաւարի մէջ չ՚մնայ։
47 Եւ եթէ մէկն իմ խօսքերին լսէ եւ չ՚հաւատայ,
ես չեմ դատիլ նորան· քանզի ես չ՚եկայ որ աշ-
48 խարհքը դատեմ, այլ որ փրկեմ աշխարհքը։ Ինձ
անարգողը եւ իմ խօսքերը չ՚ընդունողը ունի իրան
դատողին, այն խօսքն՝ որ ես խօսեցի, նա կ՚դա-
49 տէ նորան յետին օրը։ Որովհետեւ ես իմ ան-
ձից չ՚խօսեցի· բայց ինձ ուղարկող Հայրը, նա
պատուէր տուաւ ինձ, թէ ինչ պիտի ասեմ եւ
50 ինչ պիտի խօսեմ։ Եւ գիտեմ, որ նորա պատ-
ուիրանքը յաւիտենական կեանք է· ուրեմն ինչ
որ ես խօսում եմ, ինչպէս Հայրն ասաց ինձ՝
այնպէս եմ խօսում։

ԳԼ· ԺԳ

1 Զատկի տօնիցն առաջ՝ Յիսուսը գիտաց, որ իր

ժամը հասել է, որ այս աշխարհքիցը փոխուի
դէպի Հայրը, իրաններին՝ որ այս աշխարհքումն
են՝ սիրեց. եւ մինչեւ վերջը սիրեց նորանց։
2 Եւ երբոր ընթրիք էր լինում, սատանան ար-
դէն Յուդա Սիմօնեան Իսկարիօտացու սրտի մէջ
3 էր գցել, որ մատնէ նորան. Յիսուսը գիտենա-
լով որ Հայրն ամեն բան իր ձեռքն է տուել, եւ
որ Աստուածանից դուրս եկաւ, եւ Աստուծոյ
4 մօտ է գնում. Ընթրիքիցը վերկացաւ եւ հան-
դերձները վայր դրաւ, եւ մի ղենջակ առաւ իր
5 մէջքը պատեց. Յետոյ ջուր ածեց կոնքը, եւ
սկսեց աշակերտների ոտները լուանալ, եւ այն
6 ղենջակովը սրբել որ մէջքին պատած էր։ Եւ
Սիմօն Պետրոսի մօտ եկաւ. եւ նա նորան ասաց.
7 Տէր, դո՞ւ ես իմ ոտները լուանում։ Յիսուսը
պատասխանեց եւ ասաց նորան. Ինչ որ ես ա-
նում եմ, դու հիմա չես իմանում, բայց սորա-
8 նից յետոյ կ'իմանաս։ Պետրոսը նորան ասաց.
Դու իմ ոտները չես լուանալ յաւիտեան. Յի-
սուսը պատասխանեց նորան. Եթէ քեզ չլուա-
9 նամ, ինձ հետ բաժին չունիս։ Սիմօն Պետրոսը
ասաց նորան. Տէր, ոչ թէ իմ ոտները միայն,
10 այլ իմ ձեռները եւ գլուխն էլ։ Յիսուսը նորան
ասաց. Լուացածին բան պէտք չէ, բացի ոտները
լուանալ. այլ բոլորովին մաքուր է. եւ դուք
11 մաքուր էք, բայց ոչ թէ ամենքդ։ Վասն զի գի-
տէր իրան մատնիչին. նորա համար ասաց. Ոչ
12 թէ ամենքդ մաքուր էք։ Եւ երբոր նորանց ոտ-
ները լուացաւ, իր հանդերձներն առաւ՝ եւ դարձ-
եալ սեղան նստեց, եւ նորանց ասաց. Գիտէ՞ք
13 ես ինչ արի ձեզ։ Դուք ինձ կանչում էք Վար-
դապետ եւ Տէր, եւ լաւ էք ասում, քանզի եմ։

14 Արդ եթէ ես՝ Տէրս եւ Վարդապետս՝ ձեր ոտ-
ները լուացի, դուք էլ պէտք է իրար ոտները
15 լուանաք. Վասն զի ձեզ օրինակ տուի, որ ինչ-
16 պէս ես ձեզի արի, դուք էլ անէք։ Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ. Ծառան իր տիրոջիցն
մեծ չէ. ոչ էլ ուղարկուածը մեծ է իրան ուղար-
17 կողիցը։ Եթէ այս գիտէք, երանելի էք՝ թէ որ
18 այս անէք։ Ձեր բոլորիդ համար չեմ ասում. ես
գիտեմ նորանց, որ ընտրեցի. բայց որ գիրքը
կատարուի, թէ Նա որ ինձ հետ հաց էր ուտում,
19 ինձ դէմ իրան կրունկը բարձրացրեց։ Հիմիկուց
ասում եմ ձեզ՝ լինելուց առաջ, որ երբոր լինի՝
20 հաւատաք թէ ես եմ։ Ճշմարիտ ճշմարիտ ա-
սում եմ ձեզ. Ով որ ընդունէ նորան, որ ես կ'ու-
ղարկեմ, ինձ է ընդունում. եւ ինձ ընդունողը
ինձ ուղարկողին է ընդունում։
21 Յիսուսն այս ասելով տրտմեցաւ հոգովը, եւ
վկայեց եւ ասաց. Ճշմարիտ ճշմարիտ ասում
22 եմ ձեզ, թէ Ձեզանից մէկը կ'մատնէ ինձ։ Աշա-
կերտներն էլ իրար մտիկ էին տալիս տարակու-
23 սած, թէ ո՞ւմ համար է ասում։ Եւ նորա աշա-
կերտներից մէկը Յիսուսի գոգին նստած էր, որին
24 Յիսուսը սիրում էր։ Սիմօն Պետրոսը նորան ակ-
նարկեց հարցնել՝ թէ նա ո՞վ է, որի համար ա-
25 սում է։ Եւ նա Յիսուսի լանջքումը ընկած, ասաց
26 նորան. Տէր, ո՞վ է. Յիսուսը պատասխանեց.
Նա է՝ որ ես պատառը թաց կ'անեմ եւ նորան
կ'տամ. եւ պատառը թաց արաւ եւ տուաւ Յուդա
27 Սիմօնեան Իսկարիօտացուն։ Եւ պատառիցն յետոյ
սատանան մտաւ նորա մէջ. եւ Յիսուսը նորան
28 ասաց. Ինչ որ անում ես շուտով արա։ Եւ այս
բանը սեղան նստողներից ոչ ով չիմացաւ, թէ

29 ի՞նչ պատճառով ասաց նորան։ Վասն զի ոմանք
կարծում էին, թէ՝ որովհետեւ Յուդան քսակն
ունէր, Յիսուսը նորան ասաց, Թէ առ՝ ինչ որ
այս տօնին պէտք է մեզ. կամ թէ՝ աղքատնե-
30 րին բան տայ։ Եւ նա երբոր պատառն առաւ,
շուտով դուրս գնաց. եւ գիշեր էր։
31 Եւ երբոր դուրս գնաց, Յիսուսն ասաց. Հիմա
Որդին մարդոյ փառաւորուեցաւ. եւ Աստուած
32 նորանում փառաւորուեցաւ։ Եթէ Աստուած նո-
րանում փառաւորուեցաւ, Աստուած էլ նորան
կ'փառաւորէ իր անձումը. եւ շուտով կ'փառա-
33 ւորէ նորան։ Որդեակք, տակաւին մի քիչ ժա-
մանակ էլ ձեզ հետ եմ. ինձ կ'որոնէք, եւ ինչ-
պէս Հրէաներին ասացի, թէ Որ տեղ որ ես եմ
գնում, դուք չէք կարող գալ. եւ հիմա էլ ձեզ
34 եմ ասում։ Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ,
որ իրար սիրէք. ինչպէս ես ձեզ սիրեցի. որ
35 դուք էլ իրար սիրէք։ Սորանով կ'գիտենան ա-
մենքը թէ իմ աշակերտներն էք, եթէ իրար վերայ
36 սէր ունենաք։ Սիմոն Պետրոս նորան ասաց. Տէր,
ո՞ւր ես գնում. Յիսուսը պատասխանեց նորան.
Որ տեղ որ գնում եմ, դու հիմա չես կարող իմ
37 ետեւից գալ. բայց յետոյ իմ ետեւից կ'գաս։ Պետ-
րոսը նորան ասաց. Տէր, ինչո՞ւ չեմ կարող հիմա
քո ետեւից գալ. իմ անձը քեզ համար կ'դնեմ։
38 Յիսուսը պատասխանեց նորան. Քո անձը՞ կ'դնես
ինձ համար. ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ,
որ Հաւը դեռ չի խօսիլ, որ դու երեք անգամ
կ'ուրանաս ինձ։

ԳԼ. ԺԴ

1 Ձեր սրտերը թող չխռովին. Աստուծոյն հաւա-

2 տացէք, եւ ինձ հաւատացէք։ Իմ Հօր տանը
շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզ
կ'ասէի. գնում եմ ձեզ համար տեղ պատրաս-
3 տելու։ Եւ եթէ գնամ եւ ձեզ համար տեղ պատ-
րաստեմ, դարձեալ կ'գամ եւ ձեզ ինձ մօտ կառ-
4 նեմ. որ ուր ես եմ, դուք էլ լինիք։ Եւ որ տեղ
որ ես գնում եմ՝ գիտէք, եւ ճանապարհը գիտէք։
5 Թօմասը նորան ասաց. Տէր, չենք գիտում
որ տեղ ես գնում. եւ ի՞նչպէս կարող ենք ճա-
6 նապարհը գիտենալ։ Յիսուսը նորան ասաց. Ես
եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը.
ոչ ով չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով։
7 Եթէ ինձ գիտենայիք, իմ Հօրն էլ կ'գիտենայիք.
եւ սորանից յետոյ կ'գիտենաք նորան եւ տեսաք
նորան։
8 Փիլիպպոսը նորան ասաց. Տէր, Հայրը ցոյց
9 տուր մեզ, եւ բաւական է մեզ։ Յիսուսը նո-
րան ասաց. Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, եւ
ինձ չճանաչեցի՞ր, Փիլիպպոս. ինձ տեսնողը Հօրը
տեսաւ. եւ դու ի՞նչպէս ես ասում. Հայրը ցոյց
10 տուր մեզ։ Չե՞ս հաւատում, որ ես Հօր մէջ եմ,
եւ Հայրն ինձանում է, այն բանն՝ որ ես խօս-
ում եմ ձեզ հետ, իմ անձիցը չեմ խօսում. բայց
Հայրն՝ որ ինձանում բնակած է, նա է գործում
11 գործքերը։ Հաւատացէք ինձ, որ ես Հօր մէջ
12 եմ, եւ Հայրն ինձանում է։ Ապա թէ ոչ, իսկ
այն գործքերի համար հաւատացէք ինձ. Ճշմա-
րիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Թէ ինձ հաւա-
տացողը այն գործքերն որ ես գործում եմ, նա
էլ կ'գործէ, եւ նորանից էլ աւելի մեծ բաներ
կ'գործէ. վասն զի ես իմ Հօր մօտ եմ գնում։
13 Եւ ինչ որ էլ խնդրէք իմ անունովը, այն կ'ա-

14 նեմ, որ Հայրը փառաւորուի Որդումը։ Եթէ իմ
15 անունովը մի բան խնդրէք, ես կ'անեմ։ Եթէ ինձ
սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք։
16 Եւ ես Հօրը կ'աղաչեմ, եւ ուրիշ Մխիթարիչ կը
17 տայ ձեզ, որ մնայ ձեզ հետ յաւիտեան. Ճշմարտութեան Հոգին, որին աշխարհքս կարող
չէ ընդունել. վասն զի չէ տեսնում նորան. եւ
ոչ ճանաչում նորան. բայց դուք նորան ճանաչում էք, վասն զի ձեզ մօտ է մնում եւ ձեզ
18 հետ կ'լինի։ Ձեզ որբ չեմ թողնիլ. կ'գամ ձեզ
19 մօտ։ Մի փոքր ժամանակ էլ, եւ աշխարհքն էլ
չի տեսնիլ ինձ, բայց դուք կ'տեսնէք ինձ. վասն
զի ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կ'լինիք։
20 Այն օրը դուք կ'ճանաչէք, որ ես իմ Հօր մէջ
21 եմ, եւ դուք ինձանում, եւ ես ձեզանում։ Ով
որ իմ պատուիրանքներն ունի եւ նորանց պահում է, նա է ինձ սիրողը. եւ ինձ սիրողը իմ
Հօրիցը կ'սիրուի. եւ ես կ'սիրեմ նորան, եւ ինձ
կ'յայտնեմ նորան։
22 Ասաց նորան Յուդան՝ ոչ թէ Իսկարիովտացին,
Տէր, ի՞նչ է, որ մեզ կ'յայտնես քեզ՝ եւ աշխարհ-
23 քին ոչ։ Յիսուսը պատասխանեց եւ նորան ասաց. Եթէ մէկն ինձ սիրում է, իմ խօսքը կը
պահէ եւ իմ Հայրը կ'սիրէ նորան. եւ նորա մօտը կ'գանք եւ բնակութիւն կ'անենք նորա մօտ։
24 Ինձ չսիրողը իմ խօսքերը չէ պահում. եւ այն
խօսքը որ լսում էք՝ իմս չէ, այլ ինձ ուղարկող
25 Հօրը։ Այս խօսեցի ձեզ հետ՝ քանի որ ձեզ մօտ
26 եմ։ Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը
կ'ուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կ'սովորեցնէ ձեզ, եւ կ'յիշեցնէ ձեզ ամեն ինչ որ
27 ձեզ ասացի։ Խաղաղութիւն եմ թողում ձեզ,

իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ.
28 ձեր սիրտը չ'խռովի եւ չ'վախենայ։ Լսեցիք, որ
ես ասացի ձեզ, Բե Գնում եմ, եւ կ'գամ ձեզ
մօտ. եթէ ինձ սիրէիք, ապա ուրախ կ'լինէիք՝
որ ասացի, Հօր մօտ եմ գնում. վասն զի իմ
29 Հայրը մեծ է ինձանից։ Եւ հիմա ասացի ձեզ՝
լինելուց առաջ. որ երբոր լինի, հաւատաք։
30 Այլ եւս շատ չեմ խօսիլ ձեզ հետ, վասն զի այս
աշխարհքի իշխանը գալիս է, եւ ինձանում ոչ
31 ինչ չունի։ Այլ որպէս զի աշխարհքը գիտենայ, թէ ես սիրում եմ Հօրը. եւ ինչպէս Հայրը
պատուիրեց ինձ, այնպէս եմ անում. վեր կացէք, գնանք այս տեղից։

Գլ. ԺԵ

1 Ես եմ ճշմարիտ որթը, եւ իմ Հայրը մշակն է։
2 Ամեն ճիւղ, որ ինձանում է եւ պտուղ չէ բերում, նորան կտրում է. եւ ամեն պտուղ բերողին մաքրում է, որ էլ աւելի պտղաբեր լինի։
3 Դուք արդէն մաքուր էք այն խօսքի համար, որ
4 ձեզ հետ խօսեցի։ Կացէք ինձանում՝ եւ ես ձեզանում. ինչպէս որ ճիւղն իր անձիցը կարող չէ
պտուղ բերել, եթէ որթումը չ'մնայ. այսպէս ոչ
5 էլ դուք՝ եթէ ինձանում չ'մնաք։ Ես որթն եմ՝
և դուք ճիւղերը. նա՝ որ ինձանում է մնում,
եւ ես նորանում, նա շատ պտուղ է բերում.
որովհետեւ առանց ինձ չէք կարող ոչինչ անել։
6 Եթէ մէկն ինձանում չէ մնում, նա դուրս կը
գցուի ինչպէս ճիւղը, եւ կ'չորանայ. եւ ժողովում են նորանց եւ կրակի մէջ գցում, եւ այր-

7 վում է։ Եթէ կենաք ինձանում՝ եւ իմ խօսքերը
ձեզանում կենան, ինչ որ էլ կամենաք, կ՚խնդրէք,
8 եւ կ՚լինի ձեզ։ Սորանով փառաւորուեցաւ իմ
Հայրը, որ շատ պտուղ բերէք. եւ իմ աշակերտ-
ները լինիք։
9 Ինչպէս իմ Հայրն ինձ սիրեց, ես էլ ձեզ սի-
10 րեցի. կացէք իմ սիրոյ մէջ։ Եթէ իմ պատուի-
րանքները պահէք, իմ սիրոյ մէջը կ՚կենաք. ինչ-
պէս ես իմ Հօր պատուիրանքները պահեցի, եւ
11 կենում եմ նորա սիրոյ մէջ։ Այս խօսեցի ձեզ
հետ, որ իմ ուրախութիւնը ձեզանում մնայ, եւ
12 ձեր ուրախութիւնը լցուած լինի։ Սա է իմ պատ-
ուիրանքը, որ իրար սիրէք, ինչպէս ես ձեզ սի-
13 րեցի։ Ոչ ով նորանից աւելի մեծ սէր չունի, որ
մէկն իր անձը դնէ իր բարեկամների համար։
14 Դուք իմ բարեկամներն էք, եթէ անէք ինչ որ
15 ես պատուիրում եմ ձեզ։ Այլ եւս ծառայ չեմ
ասում ձեզ, վասն զի ծառան չէ գիտում, թէ
իր տէրն ինչ է գործում. բայց ձեզ բարեկամ
ասացի, վասն զի ամեն ինչ որ լսեցի իմ Հօրիցն,
16 իմացրի ձեզ։ Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք. այլ
ես ընտրեցի ձեզ, եւ ձեզ դրի, որ դուք գնաք
եւ պտուղ բերէք. եւ ձեր պտուղը մնայ. որ-
պէս զի ինչ որ իմ Հօրիցը խնդրէք իմ անունովը,
17 տայ ձեզ։ Սա եմ պատուիրում ձեզ, որ իրար
սիրէք։
18 Եթէ աշխարհքը ձեզ ատում է, գիտացէք, որ
19 ինձ ձեզանից առաջ է ատել։ Եթէ այս աշ-
խարհքիցը լինէիք, ապա աշխարհքն իրանը կը
սիրէր. բայց որովհետեւ աշխարհքիցը չէք. այլ
ես ձեզ ընտրեցի աշխարհքից, նորա համար աշ-
20 խարհքն ատում է ձեզ։ Յիշեցէք այն խօսքն,

որ ես ասացի ձեզ. Թէ ծառան իր տիրոջիցը
մեծ չէ. եթէ ինձ հալածեցին, ձեզ էլ կ՚հալա-
ծեն, եթէ իմ խօսքը պահեցին՝ ձերն էլ կ՚պա-
21 հեն։ Բայց այս ամենը կ՚անեն ձեզ իմ անունի
համար. քանզի չ՚ճանաչեցին ինձ ուղարկողին։
22 Եթէ ես չէի եկել եւ նորանց հետ խօսացել,
նորանք մեղք չէին ունենալ. բայց հիմա պատ-
23 ճառ չունին իրանց մեղաց համար։ Ինձ ատողն
24 իմ Հօրն էլ է ատում։ Եթէ այն գործքերը չէի
գործել նորանց միջումն, որ մէկ ուրիշը չ՚գոր-
ծեց, մեղք չէին ունենալ. բայց հիմա տեսան
25 էլ, եւ ատեցին ինձ էլ եւ իմ Հօրն էլ։ Այլ
որպէս զի այն խօսքը կատարուի, որ նորանց
օրէնքումը գրուած է, թէ, Զուր տեղն ատեցին
26 ինձ։ Բայց երբոր Մխիթարիչը կ՚գայ, որ ես Հօրիցը
կ՚ուղարկեմ ձեզ, ճշմարտութեան Հոգին, որ
Հօրիցն է դուրս գալիս, նա կ՚վկայէ ինձ հա-
27 մար։ Եւ դուք էլ կ՚վկայէք, վասն զի սկզբիցն
ինձ հետ էք։

ԳԼ. ԺԶ

1 Այս խօսեցի ձեզ հետ, որ չգայթակղիք։ (2) Ի-
րանց ժողովարաններիցը ձեզ դուրս կ՚հանեն.
բայց ժամանակ կ՚գայ՝ որ ամեն ով որ սպանէ
ձեզ, կ՚կարծէ, թէ Աստուծոյ պաշտօն է մատու-
3 ցանում։ Եւ սա կ՚անեն ձեզ. որովհետեւ ոչ Հօ-
4 րը ճանաչեցին եւ ոչ ինձ։ Բայց այս էլ խօսեցի
ձեզ հետ, որ երբոր ժամանակը գայ, նորանք
յիշէք, թէ ես ասացի ձեզ։ Բայց այս բաներն
սկզբից չասացի ձեզ. քանզի ես ձեզ հետ էի։
5 Բայց հիմա ինձ ուղարկողի մօտ եմ գնում.

եւ ձեզանից ոչ մէկը չէ հարցնում ինձ. Թէ Ո՞ւր
6 ես գնում։ Այլ որովհետեւ այս բաները խօսեցի
7 ձեզ հետ, տրտմութիւնը լցրեց ձեր սիրտը։ Բայց
ես ճշմարտութիւնն եմ ասում ձեզ, Թէ լաւ է
ձեզ համար, որ ես գնամ. վասն զի եթէ չգնամ,
Մխիթարիչը չի գալ ձեզ մօտ. բայց եթէ գնամ,
8 նորան կ'ուղարկեմ ձեզ մօտ։ Եւ նա՝ երբոր գայ՝
աշխարհքին կ'յանդիմանէ մեղաց համար, եւ ար-
դարութեան համար, եւ դատաստանի համար։
9 Մեղաց համար, որովհետեւ ինձ չեն հաւատում։
10 Արդարութեան համար, որովհետեւ ես իմ Հօր
11 մօտ եմ գնում, եւ ինձ այլ եւս չէք տեսնել։ Եւ
դատաստանի համար, որովհետեւ այս աշխարհքի
12 իշխանը դատապարտուած է։ Տակաւին շատ
բան ունիմ ձեզ ասելու, բայց հիմա չէք կարող
13 տանիլ։ Բայց երբոր նա՝ ճշմարտութեան Հոգին
կ'գայ, նա կ'առաջնորդէ ձեզ ամէն ճշմարտու-
թեան մէջ. վասն զի իր անձիցը չի խօսիլ, այլ
ինչ որ կ'լսէ՝ կ'խօսի, եւ գալու բաները կ'պատ-
14 մէ ձեզ։ Նա ինձ կ'փառաւորէ, վասն զի իմիցը
15 կ'առնէ եւ կ'պատմէ ձեզ։ Ամէն ինչ որ Հայրն
ունի՝ իմն է. նորա համար ասացի ձեզ, Թէ իմի-
16 ցը կ'առնէ եւ կ'պատմէ ձեզ։ Մի քիչ ժամանակ
էլ, եւ չէք տեսնել ինձ. եւ դարձեալ մի քիչ, եւ
կ'տեսնէք ինձ. որովհետեւ ես Հօր մօտ եմ գնում։
17 Նորա աշակերտներից ոմանք իրար ասում էին.
Սա ի՞նչ է, որ ասում է մեզ. Մի քիչ ժամանակ՝
եւ չէք տեսնել ինձ, եւ դարձեալ մի քիչ, եւ կը
տեսնէք ինձ. եւ, Թէ Ես Հօր մօտ եմ գնում։
18 Եւ ասում էին. Ի՞նչ է այն որ ասում է՝ Քիչ
19 ժամանակ. չենք գիտում, Թէ ինչ է խօսում։ Եւ
Յիսուսն իմացաւ, որ ուզում էին հարցնել իրան,

եւ ասաց նորանց. Դորա՞ համար էք հարցնում
իրար, որ ասացի. Թէ Մի քիչ ժամանակ, եւ չէք
տեսնել ինձ, եւ դարձեալ մի քիչ, կ'տեսնէք ինձ։
20 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. որ դուք
լաց կ'լինիք եւ կ'ողբաք եւ աշխարհքը կ'ուրա-
խանայ. դուք կ'տրտմիք, այլ ձեր տրտմութիւնն
21 ուրախութիւն կ'լինի։ Կինն, երբոր ծնում է,
տրտմութիւն ունի, վասն զի նորա ժամանակն
հասել է, բայց երբոր երեխան ծնեց, նեղութիւ-
նըն էլ չէ յիշում այն ուրախութեան համար, որ
22 մի մարդ ծնուեցաւ աշխարհքի մէջ։ Եւ դուք էլ
հիմա տրտմութիւն ունիք, բայց դարձեալ կ'տես-
նեմ ձեզ, եւ ձեր սիրտը կ'ուրախանայ. եւ ձեր ու-
23 րախութիւնը ոչ ոք չի առնել ձեզանից։ Եւ այն
օրը ոչինչ չէք հարցնել ինձ. Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ ձեզ, Թէ ինչ որ Հօրիցը խնդրէք իմ
24 անունովը կ'տայ ձեզ։ Մինչեւ հիմա ոչինչ չը
խնդրեցիք իմ անունովը. խնդրեցէք եւ կ'առ-
նէք, որ ձեր ուրախութիւնը կատարեալ լինի։
25 Այս բաներն առակով խօսեցի ձեզ հետ. բայց
ժամանակ կ'գայ, որ էլ առակով չեմ խօսիլ ձեզ
հետ. այլ յայտնապէս կ'պատմեմ ձեզ Հօր հա-
26 մար։ Այն օրումն իմ անունովը կ'խնդրէք. եւ
չեմ ասում ձեզ, Թէ ես ձեզ համար կ'աղաչեմ
27 Հօրը։ Քանզի Հայրն ինքն սիրում է ձեզ. ո-
րովհետեւ դուք ինձ սիրել էք եւ հաւատացել
28 էք, Թէ ես Աստուածանից դուրս եկայ։ Հօրիցը
դուրս եկայ եւ եկայ աշխարհք. դարձեալ թող-
ում եմ աշխարհքը եւ Հօր մօտ գնում։
29 Աշակերտները նորան ասացին. Ահա հիմա
յայտնի ես խօսում, եւ ոչ մի առակ չես ասում։
30 Հիմա գիտենք, որ դու բոլորը գիտում ես. եւ

պէտք չէ, որ մէկը հարցնէ քեզ. սորանով հա-
ւատում ենք, թէ դու Աստուածանից դուրս ե-
31 կար։ Յիսուսը պատասխանեց նորանց. Հիմա
32 հաւատո՞ւմ էք։ Ահա ժամանակ կ'գայ, եւ հիմա
եկած է, որ ամեն մէկդ կ'ցրուիք իր տեղը, եւ
ինձ մէնակ կ'թողէք. բայց մէնակ չեմ. վասն զի
33 Հայրն ինձ հետ է։ Այս խօսեցի ձեզ հետ, որ
ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհ-
քումը նեղութիւն կ'ունենաք. բայց քաջացէք,
ես յաղթել եմ աշխարհքին։

Գլ. ԺԷ

1 Յիսուսն այս խօսեց, եւ իր աչքերը բարձրա-
ցրեց դէպի երկինքն եւ ասաց. Հայր, ժամը
հասել է, փառաւորիր քո Որդոյդ, որ քո Որդին
2 էլ քեզ փառաւորէ։ Ինչպէս նորան իշխանու-
թիւն տուիր ամեն մարմնոյ վերայ որ յաւիտենա-
կան կեանք տայ այն ամենին՝ որ տուիր նորան։
3 Եւ սա է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն
քեզ միայն ճշմարիտ Աստուած. եւ նորան, որ
4 ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին։ Ես քեզ փա-
ռաւորեցի երկրի վերայ. այն գործը կատարեցի,
5 որ տուիր ինձ՝ որ անեմ։ Եւ հիմա, փառաւորիր
ինձ դու, Հայր, քեզ մօտ այն փառքովն, որ աշ-
6 խարհքի լինելուցն առաջ ունէի քեզ մօտ։ Քո
անունն յայտնեցի այն մարդկանց, որ աշխարհ-
քիցը տուիր ինձ. քո էին, եւ ինձ տուիր նո-
7 րանց. եւ քո խօսքը պահեցին։ Հիմա իմացան,
8 որ այն ամենն որ ինձ տուիր՝ քեզանից է. Ո-
րովհետեւ այն խօսքն՝ որ ինձ տուիր, նորանց
տուի. եւ նորանք ընդունեցին, եւ ճշմարտու-

թեամբ իմացան, որ քեզանից դուրս եկայ. եւ
9 հաւատացին, թէ դու ուղարկեցիր ինձ։ Ես նո-
րանց համար եմ աղաչում. ոչ թէ աշխարհքի
համար եմ աղաչում. այլ նորանց համար՝ որ ինձ
10 տուիր, վասն զի քո էին։ Եւ ինչ որ իմն է,
բոլորը քո է. եւ ինչ որ քո է՝ իմն է. եւ ես
11 փառաւորուած եմ նորանցում։ Եւ ես՝ այլ եւս
աշխարհքումն չեմ, իսկ նորանք աշխարհքումն
են, եւ ես քեզ մօտ եմ գալիս. ով Հայր Սուրբ,
պահիր նորանց քո անունովը, որոնց տուիր ինձ.
12 որ մէկ լինին, ինչպէս մենք։ Երբոր աշխարհ-
քումը նորանց հետ էի, ես էի պահում նորանց
քո անունովը. նորանց որ տուիր ինձ, պահեցի,
եւ նորանցից ոչ մէկը չկորաւ. բայց միայն կորու-
13 տի որդին, որ գիրքը կատարուի։ Բայց հիմա
քեզ մօտ եմ գալիս. եւ այս բանը խօսում եմ
աշխարհքումը, որ իմ ուրախութիւնը կատար-
14 եալ ունենան իրանց անձներումը։ Եւ քո խօսքը
նորանց տուի, եւ աշխարհքը նորանց ատեց,
քանզի աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ աշխարհ-
15 քիցը չեմ։ Ես չեմ աղաչում, որ աշխարհքիցը
վեր առնես նորանց. այլ որ նորանց պահես չա-
16 րիցը։ Այս աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ աշ-
17 խարհքիցը չեմ։ Նորանց սուրբ արա քո ճշմար-
18 տութիւնովը. քո խօսքը ճշմարտութիւն է։ Ինչ-
պէս ինձ ուղարկեցիր աշխարհք, ես էլ նորանց
19 ուղարկեցի աշխարհք։ Եւ ես նորանց վերայ իմ
անձը սուրբ եմ անում, որ նորանք էլ ճշմար-
20 տութիւնով սրբուած լինին։ Բայց ոչ թէ միայն
նորանց համար եմ աղաչում, այլ նորանց համար
21 էլ, որ նորանց խօսքովը կ'հաւատան ինձ։ Որ
ամենքը մէկ լինին, ինչպէս դու, Հայր, ինձա-

նում, և ես քեզանում, որ նորանք էլ մեզա-
նում մէկ լինին. որ աշխարհքը հաւատայ, թէ
22 դու ուղարկեցիր ինձ։ Եւ ես այն փառքն՝ որ
ինձ տուիր՝ նորանց տուի, որ մէկ լինին՝ ինչպէս
23 մենք էլ մէկ ենք։ Ես նորանցում՝ և դու ին-
ձանում, որ կատարեալ լինին միութիւնում, որ-
պէս զի աշխարհքը գիտենայ, թէ դու ուղար-
կեցիր ինձ. և սիրեցիր նորանց՝ ինչպէս ինձ
24 սիրեցիր։ Հայր, նորանք որ ինձ տուիր, կամե-
նում եմ, որ ինչ տեղ որ ես եմ՝ նորանք էլ ինձ
հետ լինին. որ իմ փառքը տեսնեն, որ տուիր
ինձ. որովհետև աշխարհքի հիմնելուցն առաջ
25 սիրեցիր ինձ։ Հայր արդար. և աշխարհքը չը
ճանաչեց քեզ. բայց ես ճանաչեցի քեզ, և սո-
26 րանք ճանաչեցին որ դու ուղարկեցիր ինձ։ Եւ
քո անունը ճանաչեցրի նորանց, և կ'ճանաչե-
ցրնեմ. որ այն սէրն, որով ինձ սիրեցիր՝ նորան-
ցում լինի, և ես էլ նորանցում։

ԳԼ. ԺԸ

1 Յիսուսը այս ասելուց յետոյ իր աշակերտների
հետ դուրս գնաց Կեդրոնի ձորի միւս կողմը, որ
տեղ մի պարտէզ կար. որի մէջ մտաւ ինքն և
2 իր աշակերտները։ Յուդան՝ նորան մատնողն
էլ գիտէր այն տեղը. վասն զի Յիսուսը շատ
անգամ ժողովուել էր այն տեղ իր աշակերտների
3 հետ։ Եւ Յուդան զինուորներէ գունդը և քահա-
նայապետներից և Փարիսեցիներից սպասաւոր-
ներ առնելով եկաւ այն տեղ ջահերով և լապ-
4 տերներով և զէնքերով։ Բայց Յիսուսը՝ երբոր
տեսաւ այն ամենն, որ իր վերայ էր գալիս.

դուրս եկաւ նորանց ասաց. Ո՞ւմ էք ուզում։
5 Պատասխանեցին նորան. Յիսուս Նազօրեցոյն.
Յիսուսը նորանց ասաց. Ես եմ. Յուդան՝ նորան
6 մատնողն էլ կանգնած էր նորանց հետ։ Երբոր
ասաց նորանց թէ Ես եմ. ետ ետ գնացին, և
7 գետնի վերայ ընկան։ Եւ դարձեալ հարցրեց նո-
րանց, Ո՞ւմ էք ուզում. և նորանք ասացին.
8 Յիսուս Նազօրեցոյն։ Յիսուսը պատասխանեց.
Ձեզ ասացի թէ Ես եմ. արդ թէ որ ինձ էք ու-
9 զում, թող տուէք դորանց, որ գնան։ Որ կա-
տարուի այն խօսքն որ ասաց, թէ Նորանց որ
10 ինձ տուիր, նորանցից ոչ մէկն էլ չ'կորցրի։ Բայց
Սիմօն Պետրոսն, որ սուր ունէր, քաշեց նորան
և քահանայապետի ծառային զարկեց, և նորա
աջ ականջը կտրեց. և այն ծառայի անունը
11 Մաղքոս էր։ Յիսուսն էլ Պետրոսին ասաց. Սուրդ
դցիր իր պատեանի մէջ. այն բաժակն որ իմ
Հայրը տուաւ ինձ, ես այն չ'խմե՞մ։
12 Եւ զինուորներէ գունդը և հազարապետը և
Հրէաների սպասաւորները բռնեցին Յիսուսին,
13 և կապեցին նորան. Եւ տարան նորան առաջ
Աննայի մօտ. քանզի Կայիափայի աներն էր. որ
14 այն տարուայ քահանայապետն էր։ Սա այն Կայիա-
փան էր, որ Հրէաներին խրատ տուաւ, թէ Լաւ
15 է, մէկ մարդ կորչի ժողովրդի վերայ։ Եւ Սի-
մօն Պետրոսը և միւս աշակերտը գնում էին Յի-
սուսի ետևից։ Այն աշակերտը ճանաչ էր քա-
հանայապետին, և Յիսուսի հետ մտաւ քահա-
16 նայապետի սրահը։ Պետրոսն էլ դրան մօտ կանգ-
նած էր դուրսը. այն միւս աշակերտն, որ քա-
հանայապետին ճանաչ էր, դուրս եկաւ և դռ-
նապանին ասաց, և Պետրոսին ներս մտցրեց։

17 Եւ այն աղջիկն՝ որ դռնապան էր՝ Պետրոսին
ասաց․ Չէ՞ որ դու էլ այն մարդու աշակերտ-
18 ներիցն ես․ եւ նա ասաց, Չեմ։ Ծառաներն ու
սպասաւորներն էլ կանգնել էին՝ կրակ արած,
վասն զի ցուրտ էր, եւ տաքանում էին․ Պետրոսն
էլ նորանց հետ կանգնած էր եւ տաքանում էր։
19 Եւ քահանայապետը Յիսուսին հարցրեց նորա
աշակերտների համար, եւ նորա վարդապետու-
20 թեան համար։ Յիսուսը պատասխանեց նորան․
Ես յայտնի խօսեցի աշխարհքին․ ես միշտ սո-
վորեցրի ժողովարանումը, եւ տաճարումը, որ
տեղ ամեն տեղից Հրէաները ժողովվում են, եւ
21 ծածուկ ոչինչ չ'խօսեցի։ Ինչո՞ւ ես ինձ հարց-
նում․ լսողներին հարցրու, թէ ինչ խօսեցի նո-
րանց․ ահա նորանք գիտեն, ես ինչ եմ ասել։
22 Երբոր նա սա ասաց, սպասաւորներից մէկն, որ
այն տեղ կանգնած էր, Յիսուսին ապտակ տուաւ
եւ ասաց․ Այդպէ՞ս ես պատասխանում քո քա-
23 հանայապետին։ Յիսուսը նորան պատասխանեց․
Եթէ չար խօսեցի, վկայիր այն չարի համար․
բայց եթէ բարի ասացի, ինչո՞ւ ես զարկում ինձ։
24 Եւ Աննան նորան կապած ուղարկեց Կայիափա
25 քահանայապետի մօտ։ Եւ Սիմօն Պետրոսը կանգ-
նած տաքանում էր․ նորան ասացին, Չէ՞ որ դու
էլ նորա աշակերտներիցն ես․ նա ուրացաւ եւ
26 ասաց՝ Չեմ։ Եւ քահանայապետի ծառաներիցը
մէկն, որ ազգական էր նորան, որի ականջը
Պետրոսը կտրեց, ասաց․ Չէ՞ որ ես տեսայ քեզ
27 այն պարտէզումը նորա հետ։ Եւ Պետրոսը դարձ-
եալ ուրացաւ․ եւ շուտով հաւը խօսեց։
28 Եւ Յիսուսին Կայիափայի տնիցը տարան կառա-
վարչի պալատը․ եւ առաւօտ էր․ եւ իրանք չը

մտան պալատի մէջ, որ չ'պղծուէին, այլ որ զա-
29 տիկն ուտեն։ Եւ Պիղատոսը դուրս եկաւ նորանց
մօտ եւ ասաց․ Այդ մարդու դէմ ի՞նչ գանգատ
30 էք առաջ բերում։ Պատասխանեցին եւ ասացին
նորան․ Եթէ սա չարագործ չ'լինէր, ապա նո-
31 րան չ'էինք մատնել քեզ։ Պիղատոսն էլ նորանց
ասաց․ Դուք առէք նորան, եւ ձեր օրէնքի հա-
մեմատ դատեցէք նորան։ Հրէաներն էլ նորան
32 ասացին․ Մեզ օրէնք չէ ոչ ոքի սպանել։ Որ
Յիսուսի խօսքը կատարուի, որ ասաց, ցոյց տա-
33 լով՝ թէ ինչպիսի մահով է մեռնելու։ Պիղատոսը
դարձեալ մտաւ պալատը, Յիսուսին կանչեց եւ
նորան ասաց․ Դո՞ւ ես Հրէաների թագաւորը։
34 Յիսուսը նորան պատասխանեց․ Դու քեզա՞նից
ես ասում այդ, թէ ուրիշներն ասացին քեզ ինձ
35 համար։ Պիղատոսը պատասխանեց․ Միթէ ես
է՞լ Հրէայ եմ․ քո ազգը եւ քահանայապետները
36 քեզ մատնեցին ինձ․ ի՞նչ ես արել։ Յիսուսը պա-
տասխանեց․ Իմ թագաւորութիւնն այս աշխարհ-
քից չէ․ եթէ իմ թագաւորութիւնն այս աշխարհ-
քից լինէր, ապա ծառաներս կռիւ կ'անէին որ
չ'մատնուէի Հրէաների ձեռքը․ բայց հիմա իմ
37 թագաւորութիւնն այս տեղից չէ։ Պիղատոսն էլ
ասաց նորան․ Ապա ուրեմն դու թագաւոր ես․
պատասխանեց Յիսուսը․ Դու ես ասում որ ես
թագաւոր եմ․ ես դորա համար եմ ծնուել եւ
եկել աշխարհք, որ ճշմարտութեանը վկայեմ․
ամեն ով որ ճշմարտութիւնիցն է՝ իմ ձայնին լը-
38 սում է։ Պիղատոսը նորան ասաց․ Ի՞նչ է ճըշ-
մարտութիւնը։ Եւ սա ասելով դարձեալ դուրս
գնաց Հրէաների մօտ եւ նորանց ասաց․ Ես ոչ
39 մի յանցանք չեմ գտնում նորանում։ Բայց ձեզ

սովորութիւն է, որ զատկին մի մարդ արձակեմ
ձեզ համար. արդ կամենո՞ւմ էք, որ Հրէաների
40 թագաւորն արձակեմ ձեզ համար։ Եւ ամենքն
դարձեալ աղաղակեցին եւ ասում էին, Ոչ թէ
դորան՝ այլ Բարաբբային. եւ այդ Բարաբբան մի
աւազակ էր։

ԳԼ. ԺԹ

1 Այն ժամանակ առաւ Պիղատոսը Յիսուսին եւ
2 ծեծեց։ Եւ զինուորները փշերից պսակ շինեցին,
նորա գլխին դրին, եւ ծիրանի հանդերձ հագ-
3 ցրին նորան։ Եւ ասում էին. Ողջ կաց, Հրէից
թագաւորը. եւ ապտակներ էին տալիս նորան։
4 Պիղատոսը դարձեալ դուրս գնաց եւ նորանց
ասաց. Ահա նորան դուրս եմ բերում ձեզ մօտ,
որ գիտենաք թէ՝ ես ոչ մի յանցանք չեմ գտնում
5 նորանում։ Եւ Յիսուսը դուրս եկաւ եւ փշեղէն
պսակն եւ ծիրանի հագուստը հագած. եւ նո-
6 րանց ասաց. Ահա այն մարդը։ Երբոր քահա-
նայապետները եւ սպասաւորները նորան տեսան,
աղաղակեցին՝ եւ ասացին. Խաչիր խաչիր։ Պի-
ղատոսը նորանց ասաց. Դուք առէք դորան, եւ
խաչեցէք. վասն զի ես յանցանք չեմ գտնում
7 դորանում։ Հրէաները պատասխանեցին նորան.
Մենք օրէնք ունինք, եւ մեր օրէնքի համեմատ
պէտք է մեռնի. վասն զի իր անձն Աստուծոյ
8 Որդի արաւ։ Երբոր Պիղատոսը այս խօսքը լսեց,
9 էլ աւելի վախեցաւ։ Եւ դարձեալ մտաւ պա-
լատը, եւ Յիսուսին ասաց. Դու ի՞նչ տեղից ես.
10 եւ Յիսուսը չպատասխանեց նորան։ Պիղատոսն
էլ ասաց նորան. Ինձ հետ չե՞ս խօսում. մի՞թէ

չես գիտում, որ իշխանութիւն ունիմ քեզ խա-
չելու, եւ իշխանութիւն ունիմ քեզ արձակելու։
11 Յիսուսը պատասխանեց. Դու ոչինչ իշխանու-
թիւն չէիր ունենալ ինձ վերայ, եթէ վերեւից
տրուած չլինէր քեզ. նորա համար՝ նա որ ինձ
12 մատնեց քեզ, նորա մեղքն աւելի մեծ է։ Եւ
նորանից յետոյ Պիղատոսն ուզում էր նորան ար-
ձակել. բայց Հրէաներն աղաղակում էին եւ ա-
սում. Եթէ դորան արձակես՝ կայսերի բարեկամ
չես. ամեն ով որ իր անձը թագաւոր է կոչում,
13 նա կայսերին հակառակ է։ Պիղատոսն էլ երբոր
այս խօսքը լսեց, Յիսուսին դուրս բերաւ, եւ
բեմի վերայ նստեց, այն տեղն՝ որ Քարայատակ
14 էր կոչվում, եւ Եբրայեցերէն Կաբբաթա։ Եւ
զատկի ուրբաթն էր՝ ժամը իբր վեցը, եւ Հրէա-
15 ներին ասաց. Ահա ձեր թագաւորը։ Իսկ նորանք
աղաղակում էին, Վեր առ, վեր առ՝ եւ խաչիր
դորան. Պիղատոսը նորանց ասաց. Ձեր թագա-
ւո՞րը խաչեմ։ Քահանայապետները պատասխա-
նեցին. Մենք թագաւոր չունինք բացի Կայսե-
16 րից։ Այն ժամանակ նորան տուաւ նորանց ձեռքը,
որ խաչուի։
17 Եւ նորանք առին տարան Յիսուսին. եւ խա-
չափայտն ինքն վերկալած, դուրս գնաց այն տեղն,
որ գագաթան էր ասվում, որ Եբրայեցերէն գող-
18 գոթա է կոչվում։ Այն տեղ խաչ հանեցին նո-
րան. եւ նորա հետ երկու ուրիշին՝ այս կողմը
19 եւ այն կողմը, եւ Յիսուսին մէջ տեղը։ Պիղա-
տոսը մի տախտակ էլ գրեց, եւ խաչի վերայ
դրաւ. եւ գրուած էր. ՅԻՍՈՒՍ ՆԱԶՕՐԵՑԻ
20 ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ։ Եւ այս տախտակը Հրէա-
ներից շատերը կարդացին. վասն զի քաղաքին

մօտ էր այն տեղն որ Յիսուսը խաչուեցաւ․ եւ
գրուած էր Եբրայեցերէն, Յունարէն եւ Լատի-
21 ներէն։ Եւ Հրէաների քահանայապետներն ասա-
ցին Պիղատոսին․ Մի գրիր Թագաւոր Հրէից,
22 այլ թէ նա ասաց, Թէ Թագաւոր եմ Հրէից։ Պի-
ղատոսը պատասխանեց․ Ինչ որ գրեցի՝ գրեցի։
23 Բայց զինուորներն՝ երբոր Յիսուսին խաչ հա-
նեցին, նորա հանդերձներն առին՝ եւ չորս բա-
ժին արին, ամեն մէկ զինուորի համար մի բա-
ժին․ բայց պատմուճանը՝ որովհետեւ առանց կարի
24 էր, վերեւիցը վայր բոլորը հիւսուած․ Ուստի
իրար ասացին․ Դորան չպատառենք, այլ վիճակ
գցենք դորա վերայ, թէ ումը լինի․ որ գիրքը կա-
տարուի, որ ասում է․ Թէ Իմ հանդերձներն իրանց
մէջ բաժանեցին եւ իմ պատմուճանի վերայ
վիճակ գցեցին․ եւ զինուորներն արին այդ բանը։
25 Եւ Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նորա
մայրը, եւ նորա մօր քոյրը՝ Մարիամ Կղէօպայի
26 կինը, եւ Մարիամ Մագդաղենացին։ Յիսուսն էլ
տեսնելով իր մօրը եւ այն աշակերտին՝ որ սի-
րում էր, որ մօտիկ կանգնած էր, իր մօրն ա-
27 սաց․ Ով կին, ահա քո որդին։ Յետոյ ասաց ա-
շակերտին․ Ահա քո մայրը․ եւ այն ժամանակից
28 այն աշակերտն իրան մօտ առաւ նորան։ Սորա-
նից յետոյ Յիսուսը իմանալով, որ ամեն բան ար-
դէն կատարուած է, որպէս զի գիրքը կատարուի,
29 ասաց․ Ծարաւ եմ։ Եւ մի աման կար քացախով
լիքն․ եւ նորանք մի սպունգ լցրին քացախով
եւ զոպայի մշտիկի վերայ դրած նորա բերանին
30 մօտեցրին։ Եւ երբոր Յիսուսը քացախն առաւ՝
ասաց․ Կատարուած է․ եւ գլուխը խոնարհեցրեց
հոգին աւանդեց։

31 Բայց Հրէաները, որովհետեւ ուրբաթ օր էր,
որպէս զի մարմինները չմնան խաչի վերայ շա-
բաթ օրը, վասն զի այն շաբաթ օրը մեծ օր էր, Պի-
ղատոսին աղաչեցին, որ նորանց սրունքները ջար-
32 դեն․ եւ վեր առնուին։ Զինուորներն էլ եկան
եւ առաջինի սրունքները ջարդեցին, այնպէս էլ
33 միւսինը որ նորա հետ խաչուած էր։ Բայց երբոր
Յիսուսի մօտ եկան եւ տեսան նորան արդէն մե-
34 ռած, նորա սրունքները չջարդեցին։ Այլ զինուոր-
ներից մէկը գեղարդով նորա կողը խոցեց, եւ
35 շուտով արիւն եւ ջուր դուրս եկաւ։ Եւ նա որ
այս տեսաւ՝ վկայեց․ եւ նորա վկայութիւնը ճըշ-
մարիտ է․ եւ նա գիտէ որ ճշմարիտ է ասում,
36 որ դուք հաւատաք։ Վասն զի սա եղաւ, որ
գիրքը կատարուի, Թէ Նորա ոսկորը չպիտի փըշ-
37 րուի։ Եւ դարձեալ մի ուրիշ գիրք ասում է, Թէ
Մտիկ կ'տան նորան, որ խոցեցին։
38 Սորանից յետոյ Պիղատոսին աղաչեց Յօսէփը,
որ Արիմաթեայեցն էր, (որ աշակերտ լինելով
Յիսուսին, բայց Հրէից վախին պատճառովը ծած-
կուած էր) որ Յիսուսի մարմինն վեր առնէ․ եւ
Պիղատոսը հրաման տուաւ․ եւ նա եկաւ եւ վեր
39 առաւ Յիսուսի մարմինը։ Նիկոդիմոսն էլ եկաւ՝
(որ առաջ Յիսուսի մօտ էր եկել գիշերով․) եւ
զմուռս բերաւ հալուէի հետ խառնած՝ հարիւր
40 լտրի չափ։ Եւ Յիսուսի մարմինն առին, եւ այն
խնկերի հետ կտաւներով պատեցին, ինչպէս Հրէ-
41 աներին օրէնք էր պատել։ Եւ այն տեղը, որ խաչ-
ուեցաւ, մի պարտէզ կար, եւ այն պարտէզումը
մի նոր գերեզման, որում երբէք ոչ ոք չէր դըր-
42 ուած։ Եւ այն տեղ դրին Յիսուսին Հրէաների ուր-
բաթի համար, որովհետեւ գերեզմանը մօտ էր։

Գլ. Ի

1 Եւ մէկ շաբթի օրը Մարիամ Մագդաղենացին
առաւօտանց՝ տակաւին մութ՝ գալիս է գերեզ-
մանը, եւ տեսնում քարը գերեզմանից վեր ա-
2 ռած։ Ապա վազում է գալիս Սիմոն Պետրոսի
եւ միւս աշակերտի մօտ, որին Յիսուսը սիրում
էր, եւ ասում նորանց. Տիրոջը վեր առին գե-
րեզմանից, եւ չենք գիտում, թէ որ տեղ դրին
3 նորան։ Եւ դուրս եկաւ Պետրոսը եւ միւս ա-
4 շակերտը, եւ գալիս էին գերեզմանը. Եւ եր-
կուքը միասին վազում էին. եւ միւս աշակերտը
վազեց շուտով անցաւ Պետրոսից, եւ առաջ
5 եկաւ գերեզմանը։ Եւ ծռելով տեսնում է կտաւ-
6 ները դրած. բայց ներս չմտաւ։ Սիմոն Պետրոսն
էլ հասաւ որ նորա ետեւից գալիս էր, եւ մտաւ
գերեզմանը, եւ տեսնում է կտաւները դրած.
7 Եւ վարշամակն՝ որ նորա գլխի վերայ էր, կտաւ-
ների հետ չէր, այլ ջոկ ծալած մի առանձին տեղ։
8 Այն ժամանակ միւս աշակերտն էլ ներս մտաւ,
նա որ առաջ էր գերեզմանը եկել, տեսաւ եւ
9 հաւատաց։ Վասն զի տակաւին չէին գիտում
գիրքը, թէ Պէտք է նա մեռելներից յարութիւն
10 առնէ։ Եւ աշակերտներն դարձեալ իրար մօտ
եկան։
11 Բայց Մարիամը գերեզմանի մօտ կանգնած էր
դուրսը եւ լաց էր լինում. եւ լաց լինելիս ծռեց
12 [illegible] գերեզմանի մէջ։ Եւ տեսնում է եր-
կու հրեշտակ՝ սպիտակ հանդերձներով նստած,
մէկը գլխի կողմը եւ միւսը ոտների կողմը, որ
13 տեղ Յիսուսի մարմինը դրուած էր։ Եւ նորանք
ասացին նորան. Ով կին, ինչո՞ւ ես լաց լինում.

նորանց ասաց. Նորա համար որ իմ Տիրոջը վեր
14 առին, եւ չգիտեմ՝ թէ ուր դրին նորան։ Եւ
երբոր սա ասաց, դարձաւ իր յետին կողմը, եւ
Յիսուսին տեսաւ՝ կանգնած. եւ չգիտէր թէ Յի-
15 սուսն է։ Յիսուսը նորան ասաց. Կին, ինչո՞ւ ես
լաց լինում, ո՞ւմ ես որոնում. նա էլ կարծելով
թէ պարտիզպանն է, ասաց նորան. Տէր, եթէ
դու վեր առիր նորան, ասա ինձ՝ ո՞ւր ես դրել
16 նորան, որ ես վեր առնեմ նորան։ Յիսուսը նո-
րան ասաց. Մարիամ. եւ նա դարձաւ եւ ասաց
նորան. Ռաբբունի, որ կ'թարգմանուի Վարդա-
17 պետ։ Յիսուսը նորան ասաց. Մի դպչիր ինձ,
որովհետեւ դեռ չեմ վեր ելել իմ Հօր մօտ. բայց
դու գնա իմ եղբայրների մօտ, եւ նորանց ասա.
Ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ՝ եւ ձեր Հօր մօտ,
18 իմ Աստուծոյ մօտ եւ ձեր Աստուծոյ մօտ։ Մա-
րիամ Մագդաղենացին գալիս է աշակերտներին
պատմում, թէ Տեսաւ Տիրոջը եւ այս բանն իրան
ասաց։
19 Եւ մէկշաբթի օրը, երբոր իրիկուն էր՝ եւ դռ-
ները փակուած, այն տեղ որ աշակերտները ժո-
ղովուած էին Հրէաների վախից, Յիսուսը եկաւ
եւ նորանց մէջ կանգնեց, եւ նորանց ասաց.
20 Խաղաղութիւն ձեզ։ Եւ սա ասելով, իր ձեռները
եւ իր կողը ցոյց տուաւ նորանց. եւ աշակերտ-
21 ներն ուրախացան՝ երբոր Տիրոջը տեսան։ Յի-
սուսը դարձեալ ասաց նորանց. Խաղաղութիւն
ձեզ, ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ
22 ձեզ եմ ուղարկում։ Եւ սա ասելով փչեց նորանց
23 վերայ եւ ասաց. Առէք Սուրբ Հոգին. Որոնց
մեղքը որ թողէք՝ թողուած կ'լինի նորանց. որոն-
ցը որ բռնէք՝ բռնուած կ'լինի։

24 Բայց Թօմասը՝ տասներկուսից մէկը՝ Երկուոր-
եակ կոչուածը, նորանց հետ չէր, երբոր Յիսուսը
25 եկաւ։ Միւս աշակերտներն ասում էին նորան.
Թէ Տիրոջը տեսանք. իսկ նա ասաց նորանց.
Եթէ նորա ձեռներումն բեւեռների նշանը չտես-
նեմ, եւ իմ մատը չդնեմ բեւեռների տեղը, եւ
իմ ձեռքը չկոխեմ նորա կողը, չեմ հաւատալ։
26 Եւ ութ օրից յետոյ աշակերտները դարձեալ
ներսումն էին, եւ Թօմասն էլ նորանց հետ. Յի-
սուսը՝ դռները փակ լինելով՝ եկաւ եւ նորանց
միջումը կանգնեց եւ ասաց. Խաղաղութիւն ձեզ։
27 Յետոյ Թօմասին ասաց. Բեր քո մատը այստեղ,
եւ տես իմ ձեռները, եւ քո ձեռքը բեր՝ եւ իմ
կողը կոխիր, եւ մի լինիր անհաւատ՝ այլ հաւա-
28 տացեալ։ Եւ Թօմասը պատասխանեց եւ ասաց
29 նորան. Իմ Տէրը, եւ իմ Աստուածը։ Յիսուսը
նորան ասաց. Որովհետեւ տեսար ինձ՝ հաւա-
տացիր. երանի նորանց, որ չեն տեսնում եւ
հաւատում են։

30 Յիսուսն ուրիշ էլ շատ նշաններ արաւ իր ա-
շակերտների առջեւ, որ չեն գրուած այս գրքու-
31 մը։ Բայց սորանք գրուեցան՝ որ հաւատաք, թէ
Յիսուսն է Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին. եւ որ
հաւատալով կեանք ունենաք նորա անունովը։

ԳԼ. ԻԱ.

1 Սորանից յետոյ Յիսուսը դարձեալ իր անձը
յայտնեց իր աշակերտներին Տիբերեայ ծովի եզ-
2 րին մօտ. եւ այսպէս յայտնեց։ Միասին էին Սի-
մօն Պետրոսը, եւ Երկուորեակ անուանուած
Թօմասը, եւ Նաթանայէլն՝ որ Գալիլեայի Կա-

նայիցն է, եւ Զեբեդէայի որդիքը, եւ նորա աշա-
3 կերտներիցն ուրիշ երկուք էլ։ Սիմօն Պետրոսը նո-
րանց ասաց. Գնում եմ ձուկ բռնելու. նորան
ասացին. Մենք էլ գանք քեզ հետ. գնացին եւ
շուտով մտան նաւը, եւ այն գիշերը ոչինչ չբռնե-
4 ցին։ Երբոր արդէն առաւօտ եղաւ, Յիսուսը ծո-
վի եզրումը կանգնած էր, սակայն աշակերտնե-
5 րը չճանաչեցին, թէ Յիսուսն է։ Իսկ Յիսուսը
նորանց ասաց. Տղայք, ուտելու բան ունի՞ք.
6 պատասխանեցին նորան. Ոչ։ Նա էլ ասաց նո-
րանց. Ուռկանը նաւի աջի կողմը գցեցէք, եւ
կ'գտնէք. նորանք էլ գցեցին, եւ՝ էլ չէին կարո-
ղանում քաշել՝ ձկների շատութեան պատճառո-
7 վը։ Այն աշակերտն՝ որ Յիսուսը սիրում էր նո-
րան՝ Պետրոսին ասաց. Տէրն է նա։ Սիմօն Պետ-
րոսն երբոր լսեց՝ Տէրն է, վերարկուն իրան վե-
րայ առաւ, քանզի մերկ էր, եւ գլուխն ծովը
8 գցեց։ Իսկ միւս աշակերտները գալիս էին նա-
ւակովը. վասն զի ցամաքիցը հեռու չէին, այլ
երկու հարիւր կանգունի չափ, եւ ուռկանը ձըկ-
9 ներովը քաշում էին։ Երբոր դուրս եկան ցամա-
քը, տեսան ածուխի կրակ վառած, եւ նորա
10 վերայ ձուկ դրած եւ հաց։ Յիսուսը նորանց ա-
սաց. Բերէք այդ ձկներից՝ որ հիմա բռնեցիք։
11 Սիմօն Պետրոսը մտաւ եւ ուռկանը քաշեց դէպի
ցամաքը՝ մեծ մեծ ձկներով լիքն՝ հարիւր յիսուն
եւ երեք հատ. եւ այդքան լինելով՝ գործիքը չը
12 պատառուեցաւ։ Յիսուսը նորանց ասաց. Եկէք
ճաշեցէք. եւ աշակերտներիցը ոչ ով չէր հա-
մարձակւում հարցնել՝ թէ Դու ո՞վ ես. վասն զի
13 գիտէին, որ Տէրն է։ Յիսուսն էլ եկաւ՝ եւ հացն
առաւ՝ եւ նորանց տուաւ, եւ նոյնպէս էլ ձու-

14 կը ։ Սա երրորդ անգամը է որ Յիսուսը իր ա-
շակերտներին երեւեցաւ, մեռելներից յարութիւն
առնելուց յետոյ ։
15 Եւ երբոր ճաշեցին, Յիսուսը ասաց Սիմօն
Պետրոսին․ Սիմօն Յօնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ
դորանցից աւելի․ նորան ասաց․ Այո, Տէր, դու
գիտես՝ որ սիրում եմ քեզ․ նորան ասաց․ Արա-
16 ծեցրու իմ գառները ։ Դարձեալ ասաց նորան․
Սիմօն Յօնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ․ նորան ա-
սաց․ Այո, Տէր, դու գիտես որ սիրում եմ քեզ․
17 Նորան ասաց․ Արածեցրու իմ ոչխարները ։ Եր-
րորդ անգամն ասաց նորան․ Սիմօն Յօնանի որ-
դի, սիրո՞ւմ ես ինձ ։ Պետրոսը տրտմեցաւ․ ո-
րովհետեւ երրորդ անգամ նորան ասաց՝ թէ Սի-
րո՞ւմ ես ինձ․ եւ նորան ասաց․ Տէր, դու ամեն
բան գիտես, դու գիտես, որ սիրում եմ քեզ․
Յիսուսը նորան ասաց․ Արածեցրու իմ ոչխար-
18 ները ։ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ․ երբ-
որ պատանի էիր՝ ինքդ էիր գօտիդ կապում՝ եւ
ման գալիս որ տեղ որ ուզում էիր․ բայց երբոր
կ՚ծերանաս, ձեռքերդ կ՚մեկնես․ եւ ուրիշը գօտի
19 կ՚կապէ, եւ կ՚տանէ՝ որ տեղ որ չես ուզիլ ։ Սա
ասաց՝ ցոյց տալով թէ նա ի՞նչ մահով կ՚փառա-
ւորէ Աստուծոյն․ եւ սա ասելուց յետոյ, նորան
20 ասաց․ Իմ ետեւից եկ․ Պետրոսն էլ դարձաւ՝
տեսաւ այն աշակերտին, որին Յիսուսը սիրում
էր, որ ետեւիցը գալիս էր, նա՝ որ էլ նորա լանջ-
քումն ընկաւ եւ ասաց․ Տէր, ո՞վ է քեզ մատ-
21 նողը ։ Պետրոսը սորան տեսնելով, Յիսուսին ա-
22 սաց․ Տէր, բայց սա ի՞նչ ։ Յիսուսը նորան ա-
սաց․ Եթէ կամենում եմ, որ դա կենայ, մինչեւ
23 որ գամ․ քեզ ի՞նչ, դու իմ ետեւից եկ ։ Եւ այս

խօսքը դուրս եկաւ եղբայրների մէջ, թէ այն
աշակերտը չի մեռնիլ․ եւ Յիսուսը չասաց նո-
րան, թէ չի մեռնիլ․ այլ՝ եթէ կամենում եմ որ
դա կենայ մինչեւ ես գամ․ քեզ ի՞նչ ։
24 Սա այն աշակերտն է, որ այս բաների համար
վկայում է, եւ այս բաներն էլ գրեց, եւ գիտենք
25 որ նորա վկայութիւնը ճշմարիտ է ։ Բայց ուրիշ
էլ շատ բաներ կան, որ Յիսուսը արաւ, որոնք
եթէ մէկ մէկ գրուած լինէին, կարծում եմ թէ
աշխարհքս էլ բաւական չէր լինիլ այն գրուած
գրքերը տանելու ։ Ամէն ։

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաջին պատմութիւնն արի, ով Թէոփիլէ, ա-
մեն բանի համար, որ Յիսուսը սկսեց անել եւ
2 սովորեցնել, Մինչեւ այն օրն, որ Սուրբ Հոգոյ
ձեռամբն պատուէր տուաւ իր ընտրած առաքեալ-
3 ներին, եւ վերացաւ․ Որոնց էլ իր չարչարանքից
յետոյ իրան կենդանի կանգնացրեց շատ ապա-
ցոյցներով քառասուն օրուայ միջոցին երեւելով
նորանց՝ եւ Աստուծոյ արքայութեան համար խօ-
4 սելով․ Եւ նորանց միասին ժողովուած ժամա-
նակը, պատուէր էր տալիս նորանց՝ Երուսաղէ-
մից չհեռանալ, այլ սպասել Հօր աւետիքին․ որ՝
5 ասաց՝ ինձանից լսեցիք ։ Որովհետեւ Յօհաննէսը
յիրաւի Ջրով մկրտեց․ բայց դուք Սուրբ Հոգով
կ՚մկրտուիք, ոչ թէ շատ օրեր սորանից յետոյ ։

6 Եւ նորանք մէկ տեղ գալով հարցնում էին նո-
րան եւ ասում. Տէր, այս ժամանակո՞ւմն ես
7 կանգնեցնում Իսրայէլի թագաւորութիւնը։ Եւ
ասաց նորանց. Ձեր բանը չէ գիտենալ ժամերը
եւ ժամանակները, որ Հայրն իր իշխանութիւ-
8 նումն դրաւ։ Բայց դուք զօրութիւն կ'առնէք՝
երբոր Հոգին ձեզ վերայ կ'գայ, եւ իմ վկաները
կ'լինիք Երուսաղէմումն եւ բոլոր Հրէաստանի
եւ Սամարիայի մէջ, մինչեւ երկրի ծայրերը։
9 Եւ երբոր այս ասաց, նորանք նայելիս՝ վերա-
ցաւ. եւ մի ամպ վեր առաւ նորան նորանց աչ-
10 քերիցը։ Եւ դեռ որ նորանք աչքերը ուղղած
մտիկ էին տալիս դէպի երկինքը նորա գնալոյն,
եւ ահա երկու մարդիկ երեւեցան նորանց սպի-
11 տակ հանդերձներով, Որ եւ ասացին. Ով Գա-
լիլեացի մարդիկ, ի՞նչ էք կանգնել եւ մտիկ էք
անում դէպի երկինքը. այս Յիսուսը, որ ձեզանից
վերացաւ երկինքը, այսպէս կ'գայ ինչպէս նորան
12 տեսաք երկինքը գնալիս։ Այն ժամանակ Ձիթե-
նեաց անուանուած լեառնիցը ետ դարձան Երու-
սաղէմ. որ մօտ է Երուսաղէմին շաբաթ օրուայ
ճանապարհի չափ։
13 Եւ երբոր մտան, վեր ելան վերնատունը՝ որ
տեղ բնակած էին. Պետրոսը եւ Յակոբոսը, եւ
Յովհաննէսը եւ Անդրէասը, Փիլիպպոսը եւ Թօ-
մասը, Բարթողիմէոսը եւ Մատթէոսը, Յակոբոս
Ալփեանը եւ Սիմօն Նախանձայոյզը՝ եւ Յուդա
14 Յակոբեանը։ Սորանք ամենքը միշտ միաբան
աղօթք եւ աղաչանք էին անում կանանց հետ,
եւ Յիսուսի մայր Մարիամի եւ նորա եղբայր-
ների հետ։
15 Եւ այն օրերումը Պետրոսը վերկացաւ եղբայր-

ների մէջ եւ ասաց, եւ այն տեղ հարիւր եւ քսան
16 հոգիների չափ բազմութիւն կային. Մարդիկ եղ-
բարք, պէտք էր այն գրուածը կատարուէր. որ
առաջուց ասաց Սուրբ Հոգին Դաւթի բերանովը
Յուդայի համար, որ Յիսուսի բռնողներին առաջ-
17 նորդ եղաւ։ Որ՝ նա մեզ հետ համարուած էր.
եւ այս պաշտօնի վիճակը նորան էլ հասել էր։
18 Արդ սա անիրաւութեան վարձքովը մի ագարակ
ստացաւ. եւ գլխի վայր ընկնելով միջիցը ճեղ-
քուեցաւ, եւ նորա բոլոր փորը դուրս թափուե-
19 ցաւ։ Եւ յայտնի եղաւ Երուսաղէմի բոլոր բնա-
կիչներին. մինչեւ որ այն ագարակի անունն ի-
րանց լեզուովը Ակեղդամայ կոչուեցաւ. որ է
20 ասել՝ Արիւնի ագարակ։ Վասն զի Սաղմոսաց գըր-
քումն գրուած է, Թէ Նորա բնակութիւնը աւե-
րակ պիտի լինի, եւ նորանում բնակող չլինի.
21 եւ նորա կարգը ուրիշն առնէ։ Հիմա պէտք է
այս մարդկանցիցը, որ մեզ հետ են եղել այն
բոլոր ժամանակն, որ Տէր Յիսուսը մեզ հետ մտաւ
22 եւ դուրս ելաւ, Յովհաննէսի մկրտութիւնիցն սկը-
սած մինչեւ այն օրն, որ մեզանից վերացաւ.
սորանցից մէկը մեզ հետ վկայ լինի նորա յարու-
23 թեանը։ Եւ երկու հոգի կանգնեցրին՝ Յօսէփին՝
որ Բարսաբա էր կոչվում, որ Յուստոս անուան-
24 ուեցաւ, եւ Մատթիային։ Եւ աղօթք անելով
ասացին. Դու, Տէր, ամենի սրտագէտ, այս եր-
25 կուսից մէկը յայտնիր, որին ընտրեցիր, Որ այս
պաշտօնի եւ առաքելութեան վիճակն առնէ, ո-
րից Յուդան ընկաւ՝ իր տեղը գնալու համար։
26 Եւ նորանց վերայ վիճակ գցեցին, եւ վիճակն
ընկաւ Մատթիային վերայ, եւ նա տասնումէկ
առաքելոց հետ համարուեցաւ։

ԳԼ. Բ

1 Եւ երբոր Պէնտէկոստէի օրերը լրացան, ամէնքը
2 միաբան մէկտեղ էին։ Եւ յանկարծակի երկնքից
մի հնչիւն եղաւ՝ սաստիկ փչող քամու պէս. եւ
3 լցրեց բոլոր տունը՝ ուր նստած էին։ Եւ երեւե-
ցան նորանց բաժանուած լեզուներ ինչպէս կրա-
4 կից. եւ նստեց նորանց ամէն մէկի վերայ։ Եւ
ամէնքը Սուրբ Հոգով լցուեցան, եւ սկսեցին
ուրիշ լեզուներով խօսել, ինչպէս որ Հոգին նո-
5 րանց խօսել էր տալիս։ Եւ Երուսաղէմումը բը-
նակած էին Հրէաներ Աստուածավախ մարդիկ՝
6 երկնքի տակի ամէն ազգերից։ Եւ երբոր այս
ձայնը եղաւ, բազմութիւնն եկաւ մէկտեղ եւ
կխռուեցաւ. որովհետեւ ամէն մէկը լսում էր նո-
7 րանց, որ իր լեզուովը խօսում էին։ Եւ ամէնքը
հիանում էին եւ զարմանում, եւ իրար ասում
էին. Չէ՞ որ ահա սորանք ամէնքը, որ խօսում
8 են, Գալիլեացի են։ Եւ ի՞նչպէս մենք ամէն մէկս
մեր լեզուովը լսում ենք որ նորանում ծնուած
9 ենք. Պարթեւներ եւ Մարք եւ Եղամացիք, եւ
բնակողներ Միջագետի, Հրէաստանի եւ Կապա-
10 դովկիայի, Պոնտոսի եւ Ասիայի մէջ։ Փռիւգայի
եւ Պամփիլիայի մէջ, Եգիպտոսումն, եւ Լիբիա-
յոյ կողմերումը Կիւրէնէի մօտ, եւ նորաեկ Հը-
11 ռոմայեցիք. Հրէաներ եւ նորահաւատներ, Կրէ-
տացիք եւ Արաբացիք, լսում ենք, որ նորանք
մեր լեզուներովը Աստուծոյ մեծամեծ բաները
12 խօսում են։ Եւ հիանում էին ամէնքն եւ զար-
մանում, եւ մէկը միւսին ասում էին, Սա ի՞նչ
13 պիտի լինի։ Իսկ ուրիշները ծաղր անելով ասում
էին, քաղցուով արբած են։

14 Եւ վերկացաւ Պետրոսը այն տասնումէկի հետ,
իր ձայնը բարձրացրեց, եւ նորանց հետ խօսեց.
Ով Հրէաստանցի մարդիկ, եւ ամէնքդ՝ որ բնա-
կած էք Երուսաղէմումը, սա ձեզ յայտնի լինի,
15 եւ իմ խօսքերին ականջ դրէք։ Քանզի չէ թէ,
ինչպէս դուք էք կարծում, սորանք արբած են.
16 որովհետեւ օրուայ երրորդ ժամն է։ Այլ այս Յո-
17 վել Մարգարէի ձեռովն ասուածն է, Եւ կ՚լինի
յետոյ օրերումն, ասում է Աստուած, որ իմ Հո-
գուցը կ՚թափեմ ամէն մարմնոյ վերայ, եւ ձեր
որդիները եւ ձեր աղջիկները կ՚մարգարէանան.
եւ ձեր երիտասարդները տեսիլքներ կ՚տեսնեն,
18 եւ ձեր ծերերը երազներ կ՚տեսնեն։ Եւ իմ ծա-
ռաների վերայ եւ իմ աղախինների վերայ էլ այն
օրերումն իմ Հոգուցը կ՚թափեմ, եւ կ՚մարգա-
19 րէանան։ Եւ նշաններ կ՚տամ վերեւն երկնքումն,
եւ նշաններ ներքեւն երկրումը, արիւն եւ կրակ
20 եւ ծխի մրրիկ։ Արեգակը խաւար կ՚դառնայ, եւ
լուսինն արիւն, Տիրոջ մեծ եւ երեւելի օրը դեռ
21 չեկած։ Եւ կ՚լինի, ամէն ով որ Տիրոջ անունը
22 կ՚կանչէ՝ կ՚փրկուի։ Ով Իսրայէլացի մարդիկ, այս
խօսքերը լսեցէք. Յիսուս Նազօրեցին՝ այն մարդը՝
որ Աստուածանից ցոյց տրուեցաւ ձեզանում զօ-
րութիւններով եւ հրաշքներով եւ նշաններով,
որ Աստուած նորա ձեռովն արաւ ձեր միջումը.
23 ինչպէս դուք էլ գիտէք. Նորան, որ Աստուծոյ
սահմանուած խորհրդովն եւ կանխագիտութեամբը
մատնուած էր, առիք անօրէնների ձեռքով փայ-
24 տի վերայ բեւեռած, սպանեցիք. Որին Աստուած
յարոյց՝ մահի ցաւերը լուծելով. վասն զի կարելի
25 չէր, որ նա բռնուի նորանից։ Քանզի Դաւիթ
ասում է նորա համար. Առաջուց տեսնում էի

Տիրոջն ամէն ժամանակ իմ առջեւ. վասն զի իմ
26 աջ կողմն է, որ չսասանիմ։ Սորա համար իմ
սիրտն ուրախ եղաւ, եւ լեզուս ցնծացաւ, եւ
27 իմ մարմինն էլ յուսով կ՚ընակէ։ Որովհետեւ իմ
անձը չես թողիլ դժոխքումը, եւ ոչ էլ քո Սըր-
28 բոյն ապականութիւն տեսնել կ՚տաս։ Կեանքի
ճանապարհները ճանաչեցրիր ինձ. քո երեսի ու-
29 րախութիւնովը կ՚լցնես ինձ։ Մարդիկ եղբարք,
պէտք է համարձակութեամբ ասեմ ձեզ Դաւիթ
նահապետի համար. թէ նա մեռաւ էլ՝ թաղուե-
ցաւ էլ. եւ նորա գերեզմանը մինչեւ այսօր մեր
30 միջումն է։ Իսկ որովհետեւ մարգարէ էր, եւ
գիտէր, որ Աստուած երդումով երդուաւ նորան,
որ նորա երանքի պտղիցը մարմնոյ կողմանէ յա-
րուցանէ Քրիստոսին նորա աթոռի վերայ նըս-
31 տեցնելու համար։ Առաջուց իմացած՝ խօսեց
Քրիստոսի յարութեան համար, թէ նորա հոգին
դժոխքումը չթողուեցաւ՝ եւ ոչ էլ նորա մար-
32 մինն ապականութիւն տեսաւ։ Սոյն այս Յիսու-
սին Աստուած յարոյց՝ որի վկաներն ենք մենք
33 ամենքս։ Արդ Աստուծոյ աջովը բարձրացած.
եւ Սուրբ Հոգոյ աւետիքը Հօրիցն առած, թա-
փեց այս, որ դուք հիմա տեսնում եւ լսում էք։
34 Քանզի ոչ թէ Դաւիթ վեր ելաւ երկինքը. բայց
ինքն ասում է, Տէրն իմ Տիրոջն ասաց. Իմ աջ
35 կողմը նստիր, Մինչեւ քո թշնամիները քո ոտից
36 պատուանդան դնեմ։ Հիմա թող ստոյգ գիտենայ
Իսրայէլի բոլոր տունը, որ Աստուած նորան Տէր
եւ Օծեալ արաւ, սոյն այս Յիսուսին, որին դուք
խաչեցիք։
37 Եւ երբոր այս լսեցին, խրա՜ց սրտերումը զղջա-
ցին. եւ ասացին Պետրոսին եւ միւս առաքեալ-

38 ներին, Ի՞նչ անենք, մարդիկ եղբարք։ Պետրոսն
էլ նորանց ասաց. Ապաշխարեցէք՝ եւ ձեզանից
ամէն մէկն թող մկրտուի Յիսուս Քրիստոսի ա-
նունովը՝ մեղաց թողութեան համար, եւ Սուրբ
39 Հոգոյ պարգեւը կ՚ընդունիք։ Վասն զի ձեզ եւ
ձեր որդոց համար է այս աւետիքը, եւ այն ամէն
հեռաւորների համար, որոնց մեր Տէր Աստուածը
40 կ՚կանչէ։ Եւ ուրիշ շատ խօսքերով վկայութիւն
էր դնում, եւ յորդորում եւ ասում. Ազատուե-
41 ցէք այս թիւր ազգիցը։ Եւ նորանք որ նորա
խօսքը յօժարութեամբ ընդունեցին՝ մկրտուեցան.
եւ այն օրն երեք հազարի չափ հոգիք աւելա-
42 ցան։ Եւ միշտ հետեւում էին առաքելոց վար-
դապետութեանը եւ հաղորդութեանը, եւ հացի
կտրելոյն՝ եւ աղօթքներին։
43 Եւ ամէն անձի վերայ վախ եկաւ. շատ հրաշք-
ներ եւ նշաններ էլ էին գործվում առաքելոց ձեռ-
44 քովը։ Եւ բոլոր հաւատացեալներն իրար հետ
մէկ տեղ էին, եւ ամէն բան հասարակաց ունէին։
45 Եւ ապրանքները եւ բոլոր բաները ծախում էին,
եւ բաշխում էին այն ամենին, ում ինչ բան որ
46 պէտք էր լինում։ Ամէն օր միաբանութեամբ
տաճարումն էին լինում, եւ հաց էին կտրում
տներումը, եւ ուրախութիւնով եւ սրտի միա-
47 մտութիւնով կերակուր էին ուտում. Աստուծոյն
օրհնում էին, եւ բոլոր ժողովրդի առջեւ շնորհք
ունէին. եւ Տէրն ամէն օր փրկուածներին ա-
ւելացնում էր եկեղեցու հետ։

ԳԼ. Գ

1 Պետրոսն եւ Յօհաննէսը գնում էին միասին տա-

2 ճարն իններորդ ժամի աղօթքին ։ Եւ մի մարդ
կար իր մօր որովայնից կաղ, որին վերկալած՝
ամեն օր դնում էին տաճարի այն դրան մօտ, որ
Գեղեցիկ էր կոչվում, տաճարը մտնողներից ո-
3 ղորմութիւն խնդրելու համար ։ Երբոր նա տե-
սաւ Պետրոսին եւ Յօհաննէսին, որ գնում էին
մտնելու տաճարը, աղաչում էր, որ ողորմութիւն
4 առնէ նորանցից ։ Պետրոսը Յօհաննէսի հետ մտիկ
5 արաւ նորան եւ ասաց. Մեզ նայիր ։ Նա էլ ուշը
դարձրեց դէպի նորանց, սպասելով որ մի բան
6 առնէ նորանցից ։ Պետրոսն էլ ասաց. Արծաթ
եւ ոսկի չունիմ. բայց ինչ որ ունիմ, այն քեզ
կ'տամ. Յիսուսի Քրիստոսի՝ Նազօրեցու անու-
7 նովը վեր կաց եւ ման եկ ։ Եւ աջ ձեռից բռը-
նեց՝ վերկացրեց նորան. եւ շուտով հաստա-
8 տուեցան նորա սրունքը եւ բարձքը ։ Վեր թռաւ
կանգնեց եւ ման էր գալիս, եւ նորանց հետ
մտաւ տաճարը ման գալով եւ վազ տալով՝ եւ
9 Աստուծոյն օրհնելով ։ Եւ բոլոր ժողովուրդը տե-
սաւ նորան, որ ման էր գալիս եւ Աստուծոյն
10 օրհնում էր ։ Եւ ճանաչում էին նորան, որ սա
էր, որ ողորմութեան համար նստում էր տա-
ճարի Գեղեցիկ դրանը. եւ լցուեցան երկիւղով
եւ զարմանքով այն եղած նշանի համար ։
11 Եւ քանի որ այն բժշկուած կաղը Պետրոսին
եւ Յօհաննէսին բռնած էր, բոլոր ժողովուրդը
վազեց նորանց մօտ այն սրահն, որ Սողոմոնի
12 սրահ էր կոչվում՝ զարմացած ։ Երբոր Պետրոսը
տեսաւ, պատասխանեց ժողովրդին. Ով Իսրայէ-
լացի մարդիկ, ինչո՞ւ էք զարմացել սորա վերայ,
կամ մե՞զ վերայ էք ինչո՞ւ սաստիկ նայում, իբր
թէ մենք մեր զօրութիւնով եւ քաջութիւնով

13 տրած լինինք, որ դա ման գայ ։ Աբրահամի եւ
Իսահակի եւ Յակոբի Աստուածը՝ մեր հարանց
Աստուածը փառաւորեց իր Որդի Յիսուսին. որին
դուք մատնեցիք, եւ ուրացաք Պիղատոսի առ-
ջեւ երբոր նա դատում էր՝ որ արձակէ նորան ։
14 Եւ դուք այն Սուրբին եւ Արդարին ուրացաք,
եւ խնդրեցիք մի մարդասպան մարդ շնորհել ձեզ ։
15 Իսկ կենաց Առաջնորդին սպանեցիք, որին Աստ-
ուած մեռելներից յարոյց. որի վկաներն ենք մենք ։
16 Եւ նորա անունի հաւատքովը սորան՝ որ տես-
նում էք եւ ճանաչում էք, նորա անունը հաս-
տատեց. եւ հաւատքն՝ որ նորանով է՝ այս ա-
ռողջութիւնը տուաւ դորան ձեր ամենի առջեւ ։
17 Եւ հիմա, եղբարք, գիտեմ, որ անգիտութեամբ
18 արիք՝ ինչպէս ձեր իշխաններն էլ ։ Բայց Աստ-
ուած, ինչ որ առաջուց բոլոր մարգարէների բե-
րանովը պատմեց՝ Քրիստոսի չարչարուելու հա-
19 մար, այնպէս էլ կատարեց ։ Ուրեմն զղջացէք
20 եւ ետ դարձէք, որ ձեր մեղքերը ջնջուեն. Որ
Տիրոջ երեսից հանգստանալու ժամանակները
գան. եւ ուղարկէ առաջուց ձեզ համար քարոզ-
21 ուած Յիսուս Քրիստոսին. Որին երկինքը պէտք
է ընդունի, մինչեւ այն ամեն բաների հաստա-
տուելու ժամանակները. որոնց համար խօսեց Աստ-
ուած իր բոլոր սուրբ մարգարէների բերանովը
22 յաւիտենից հետէ ։ Քանզի Մօսէս հարանցն ա-
սաց, թէ Ձեր Տէր Աստուածը մարգարէ վեր
կ'կացնէ ձեզ համար ձեր եղբայրների միջից ինձ
նման, նորան լսեցէք ամեն բանի համար՝ ինչ որ
23 խօսի ձեզ ։ Եւ կ'լինի, որ ամեն անձն՝ որ այն
մարգարէին չլսէ, նա ժողովրդի միջից թող սա-
24 տակուի ։ Եւ բոլոր մարգարէներն որ Սամուէլից

հետէ մարգարէացան, այս օրերը պատմեցին ։
25 Դուք էք այն մարգարէների որդիքը՝ եւ այն
ուխտի, որ Աստուած մեր հարանց հետ հաստա-
տեց, եւ Աբրահամին ասաց․ Եւ քո զաւակովը
26 պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը ։ Աստուած
առաջ ձեզ համար վերկացրեց իր Որդին Յիսու-
սին, եւ նորան ուղարկեց՝ որ նա ձեզ օրհնէ, որ
ամեն մէկը յետ դառնաք ձեր չարութիւններիցը ։

Գլ․ Դ

1 Եւ նորանք տակաւին ժողովրդի հետ խօսելիս,
քահանայապետները եւ տաճարի իշխանը եւ Սա-
2 դուկեցիք նորանց վերայ հասան, Սաստիկ բար-
կացած նորա համար՝ որ նորանք ժողովրդին սո-
վորեցնում էին, եւ քարոզում էին Յիսուսի ձե-
3 ռովը մեռելներից յարութիւն առնելը ։ Եւ իրանց
ձեռները գցեցին նորանց վերայ, եւ բանտի մէջ
դրին մինչեւ առաւօտը․ վասն զի արդէն իրիկուն
4 էր ։ Եւ այս խօսքը լսողներից շատերը հաւա-
տացին․ եւ մարդկանց համարը հինգ հազարի
չափ եղաւ ։
5 Եւ հետեւեալ օրը եղաւ, որ նորանց իշխան-
ները եւ երէցները եւ դպիրները ժողովուեցան
6 Երուսաղէմ ։ Եւ Աննա քահանայապետը եւ Կա-
յիափան, եւ Յոհաննէսը եւ Աղէքսանդրոսը, եւ
7 այն ամենը որ քահանայական ցեղից էին ։ Եւ
նորանց կանգնեցնելով մէջտեղը՝ հարցնում էին․
Դէ ի՞նչ զօրութիւնով կամ ո՞ր անունով արիք
8 դուք այս ։ Այն ժամանակ Պետրոսը Սուրբ Հո-
գով լցուած նորանց ասաց․ Ով ժողովրդի իշ-
9 խաններ՝ եւ Իսրայէլի երէցներ․ Եթէ մենք այսօր

հարցաքննվում ենք մի տկար մարդու երախտիք
անելու համար, թէ ում ձեռովը սա բժշկուեցաւ․
10 Թող յայտնի լինի ձեզ ամենիդ՝ եւ բոլոր Իս-
րայէլի ժողովուրդիդ, որ Յիսուսի Քրիստոսի՝
Նազօրեցու անունովը՝ որին դուք խաչեցիք, եւ
որին Աստուած յարոյց մեռելներից․ նորանով սա
11 հիմա ձեր առջեւ առողջ կանգնած է ։ Նա է ձե-
զանից՝ շինողներիցդ անարգուած քարը, որ ան-
12 կիւնի գլուխ եղաւ ։ Եւ էլ մի ուրիշ ոչ մէկով
փրկութիւն չկայ․ որովհետեւ ուրիշ անուն էլ
չկայ երկնքի ներքեւ մարդկանց տրուած, որով
13 կարելի լինի մեզ փրկուել ։ Եւ Պետրոսի եւ Յո-
հաննէսի համարձակութիւնը տեսնելով, եւ գի-
տենալով, որ տառից ուսմունքի եւ տգէտ մար-
դիկ են, զարմանում էին․ միայն ճանաչում էին
14 նորանց՝ որ Յիսուսի հետ էին ։ Եւ այն բժշկուած
մարդուն էլ տեսնելով նորանց հետ կանգնած,
15 ոչինչ չունէին պատասխանելու ։ Եւ հրամայեցին
նորանց, որ ատեանիցը դուրս գնան, եւ իրար
16 հետ խորհուրդ արին, Եւ ասացին․ Ի՞նչ անենք
այս մարդկանցը, որ երեւելի նշան եղաւ սորանց
ձեռովը․ որ Երուսաղէմի մէջ բոլոր բնակողնե-
17 րին յայտնի է, եւ կարող չենք ուրանալ ։ Այլ
որպէս զի աւելի չտարածուի ժողովրդի մէջ,
սաստիկ սպառնանք նորանց, որ այլ եւս այն ա-
18 նունովը չխօսեն մարդկանց ոչ մէկի հետ ։ Եւ
նորանց կանչեցին՝ պատուէր տուին, որ ամենե-
ւին չխօսեն, եւ ոչ էլ սովորեցնեն Յիսուսի ա-
19 նունովը ։ Բայց Պետրոսը եւ Յոհաննէսը պա-
տասխանեցին նորանց եւ ասացին․ Եթէ արժա՞ն
է Աստուծոյ առջեւ՝ որ ձեզ աւելի ականջ դնենք
20 քան թէ Աստուծոյն, դուք դատեցէք ։ Վասն զի

մենք չենք կարող այն որ տեսանք եւ լսեցինք,
21 չխօսել ։ Իսկ նորանք սպառնալով արձակեցին
նորանց, եւ ոչինչ չգտնելով թէ ինչպէս պատիժ
տան նորանց՝ ժողովրդի պատճառովը. վասն զի
ամենքն էլ այն եղածի համար փառք էին տալիս
22 Աստուծոյն ։ Քանզի այն մարդը քառասուն տա-
րուց աւելի էր. որի վերայ այս բժշկութեան
նշանը եղաւ ։
23 Եւ արձակուելուց յետոյ եկան իրանցների
մօտ, եւ պատմեցին ինչ որ քահանայապետները
24 եւ երէցները ասացին նորանց ։ Եւ նորանք երբ-
որ լսեցին, միաբանութեամբ իրանց ձայները
բարձրացրին դէպի Աստուած եւ ասացին. Տէր,
դու ես Աստուած, որ արիր երկինքը եւ երկիրը՝
25 ծովը եւ նորանց մէջի բոլոր բաները ։ Որ քո
Դաւիթ ծառայի բերանովը խօսեցիր եւ ասա-
ցիր. Ի՞նչու համար ազգերը խռովեցան՝ եւ ժո-
26 ղովուրդները ունայն բաներ մտածեցին ։ Երկրի
թագաւորները վերկացան, եւ իշխանները մէկ
տեղ հաւաքուեցան Տիրոջ դէմ եւ նորա Օծեալի
27 դէմ ։ Վասն զի արդարեւ հաւաքուեցան քո սուրբ
Որդի Յիսուսի վերայ, որին օծեցիր. Հերովդէսը
եւ Պոնտացի Պիղատոսը՝ հեթանոսների հետ եւ
28 Իսրայէլի ժողովուրդների հետ, Որ անեն՝ ինչ որ
քո ձեռը եւ կամքը առաջուց սահմանեց լինե-
29 լու ։ Եւ հիմա, Տէր, նայիր նորանց սպառնալի-
քին, եւ տուր քո ծառաներին, բոլոր համարձա-
30 կութիւնով քո խօսքը խօսել. Որ քո ձեռը մեկ-
նես, որ բժշկութիւն, եւ նշաններ եւ հրաշքներ
31 լինին, քո սուրբ Որդի Յիսուսի անունովը ։ Եւ
նորանք աղօթք անելիս՝ շարժուեցաւ այն տեղը,
ուր որ ժողովուած էին, եւ ամենքը Սուրբ Հո-

ղով լցուեցան. Եւ Աստուծոյ խօսքը խօսում էին
համարձակութեամբ ։
32 Եւ հաւատացեալոց բազմութեան սիրտը եւ հո-
գին մէկ էր. եւ ոչ ոք չէր ասում իր ապրանքի
մէկի համար՝ թէ իրանն են. այլ նորանց համար
33 ամեն բաները հասարակաց էր ։ Եւ առաքեալնե-
րը մեծ զօրութիւնով վկայութիւն էին տալիս
Տէր Յիսուսի յարութեան համար. եւ մեծ շնորհք
34 կար նորանց ամենի վերայ ։ Որովհետեւ նորանց
մէջ ոչ մէկը կարօտութիւն չունէր. վասն զի
նորանք որ ագարակների կամ տների տէր էին,
ծախում էին, եւ ծախուածի գինը բերում էին,
35 Առաքելոց ոտների մօտ էին դնում. եւ ամեն
մէկին տրվում էր ինչ որ պէտք էր ունենում ։
36 Եւ Յօսէսը որ առաքեալներից Բառնաբաս կոչ-
ուեցաւ, որ Մխիթարութեան որդի կ՚թարգման-
37 ուի, Ղեւտացի, ծննդեամբ Կիպրացի. Նա մի
ագարակ ունէր, ծախեց եւ գինը բերաւ առա-
ռաքելոց ոտների մօտ դրաւ ։

Գլ. Ե

1 Եւ մի մարդ՝ անունն Անանիա, իր Սափիրա
2 կնոջ հետ՝ մի կալուածք ծախեց ։ Եւ նորա գնի-
ցը թաքցրեց, որ կինն էլ գիտէր. եւ մի բաժի-
3 նը բերաւ առաքելոց ոտների մօտ դրաւ ։ Եւ
Պետրոսը ասաց. Անանիա, ինչո՞ւ համար սա-
տանան քո սիրտը լցրեց, որ դու սուտ խօսես
Սուրբ Հոգուն, եւ ագարակի գնիցը թաքցնես ։
4 Չէ՞ որ նա որ կենում էր՝ քոնն էր, եւ ծախ-
ուած էլ քո իշխանութեան տակն էր. ի՞նչ է՝ որ
այս բանը դրիր քո սրտի մէջ. ոչ թէ մարդկանց

5 սուտ խօսեցիր, այլ Աստուծոյն։ Եւ Անանիան
հէնց որ այս խօսքը լսեց, վայր ընկաւ եւ հոգին
հանեց. եւ մեծ վախ եղաւ ամենքի վրայ, որ
6 այդ լսեցին։ Երիտասարդներն էլ վերկացան՝ պա-
7 տանեցին նորան, եւ տարան թաղեցին։ Եւ եղաւ
երբոր երեք ժամի չափ անցաւ, նորա կինն որ
8 չէր գիտում եղածը՝ ներս մտաւ։ Պետրոսը պա-
տասխանեց նորան եւ ասաց. Ասա ինձ՝ թէ ա՞յն-
չափի ծախեցիք ագարակը. նա էլ ասաց. Այո,
9 այն չափի։ Պետրոսն էլ ասաց նորան. Ի՞նչ է՝
որ միաբանեցաք դուք, որ Տիրոջ Հոգին փոր-
ձէք. ահա քո մարդը թաղողների ոտները դրան
10 մօտ են, քեզ էլ կ՚հանեն։ Եւ իսկոյն վայր ըն-
կաւ նորա ոտների առջեւ՝ եւ հոգին հանեց. ե-
րիտասարդներն էլ ներս մտան՝ նորան մեռած
գտան, եւ հանեցին՝ իր մարդի մօտ թաղեցին։
11 Եւ մեծ ահ եղաւ բոլոր եկեղեցու վրայ, եւ
ամենքի վրայ որ այս լսեցին։
12 Եւ առաքեալների ձեռովը շատ նշաններ եւ
հրաշքներ էին լինում ժողովրդի մէջ. ամենքը
13 միաբան Սողոմոնի սրահումն էին։ Եւ ուրիշնե-
րից ոչ ոք չէր համարձակւում յարիլ նորանց.
14 բայց ժողովուրդը մեծարում էր նորանց։ Եւ ա-
ւաւել եւս շատանում էին Տիրոջ հաւատացեալ-
ները, եւ եղաւ մի բազմութիւն մարդկանց եւ
15 կանանց։ Մինչեւ որ հիւանդներին հանում էին
հրապարակները, եւ իրանց պատգարակներումն
եւ մահիճներումն այն տեղ էին դնում, որ Պետ-
րոսը անցնելիս, գոնէ նորա հովանին նորանցից
16 մէկի վրայ ընկնէ։ Եւ չրջակայ քաղաքներից
բազմութիւնը հաւաքվում էին Երուսաղէմ, որ
բերում էին հիւանդներին եւ պիղծ ոգիներից

չարչարուածներին, որ ամենքն էլ բժշկվում էին։
17 Եւ վերկացաւ քահանայապետը եւ ամենքն որ
նորա հետ էին, եւ Սադուկեցոց աղանդը, եւ
18 նախանձով լցուեցան. Եւ ձեռք գցեցին առաք-
եալներին, եւ նորանց դրին հասարակաց բանտի
19 մէջ։ Բայց Տիրոջ հրեշտակը գիշերով բանտի
դուռները բացաւ, եւ նորանց դուրս հանելով
20 ասաց. Գնացէք եւ կանգնեցէք տաճարի մէջ եւ
այս կեանքի բոլոր հրամանները խօսեցէք ժողո-
21 վրդի հետ։ Եւ երբոր լսեցին, առաւօտանց մտան
տաճարը եւ սովորեցնում էին. քահանայապետն
էլ եկաւ եւ նորանք էլ որ նորա հետ էին, եւ
կանչեցին ատեանը եւ Իսրայէլի որդոց բոլոր
ծերակոյտն մէկ տեղ, եւ ուղարկեցին բանտը որ
22 բերեն նորանց։ Եւ երբոր սպասաւորներն եկան,
նորանց չգտան բանտի մէջ, եւ ետ դարձան
23 պատմեցին, Եւ ասացին. թէ Բանտը բոլոր ըզ-
գուշութեամբ փակած գտանք, եւ պահապան-
ներն էլ՝ դուրսը դրան մօտ կանգնած. բայց երբ-
24 որ բաց արինք՝ ներսումն ոչ ովին չգտանք։ Եւ
երբոր քահանայապետը եւ տաճարի իշխանը այս
խօսքը լսեցին, հիանում էին նորանց համար, թէ
25 սա ինչ պիտի լինի։ Եւ մէկն եկաւ նորանց պատ-
մեց. թէ Ահա այն մարդիկն, որ բանտի մէջ դը-
րիք, տաճարումը կանգնած սովորեցնում են ժո-
26 ղովրդին։ Այն ժամանակ իշխանն սպասաւորնե-
րին հետ գնաց՝ նորանց բերաւ առանց բռնու-
թեան. քանզի ժողովրդիցը վախենում էին՝ որ
27 չքարկոծեն։ Եւ երբոր բերին նորանց՝ կանգնեց-
րին ատեանումը. եւ քահանայապետը հարցրեց
28 նորանց, Եւ ասաց. Չէ՞ որ պատուիրելով պատ-
ուիրեցինք ձեզ՝ չսովորեցնել այդ անունովը. եւ

անա Երուսաղէմը լցրիք ձեր ուսմունքովը, եւ
կամենում էք այն մարդու արիւնը մեզ վերայ
բերել։
29 Պետրոսը եւ առաքեալները պատասխանելով
ասացին. Աստուծոյ պէտք է աւելի հնազանդել
30 քան թէ մարդկանց։ Մեր հարանց Աստուածը
յարոյց Յիսուսին՝ որին դուք փայտից կախած
31 սպանեցիք։ Աստուած նորան Առաջնորդ եւ Փըր-
կիչ բարձրացրեց իր աջովը, որ Իսրայէլին ա-
32 պաշխարութիւն եւ մեղաց թողութիւն տայ։ Եւ
մենք նորա վկաներն ենք այս բաների համար,
եւ Սուրբ Հոգին էլ, որ Աստուած իրան հնա-
33 զանդողներին տուաւ։ Եւ նորանք երբոր լսեցին,
կատաղում էին, եւ խորհում էին, որ նորանց
սպանեն։
34 Բայց մի Փարիսեցի վերկացաւ ատեանումը՝
անունը Գամաղիէլ, օրէնքի վարդապետ՝ բոլոր
ժողովրդի առջեւ պատուական, հրամայեց ա-
35 ռաքեալներին մի քիչ դուրս տանել, Եւ նորանց
ասաց. Իսրայէլացի մարդիկ, զգուշացէք այս
36 մարդկանց համար, թէ ի՞նչ պիտի անէք։ Քանզի
այս օրերից առաջ Թեւդասը վերկացաւ՝ ասելով
թէ ինքն մի բան է. որ թուով չորս հարիւրի
չափ մարդիկ նորան յարեցան. որ ինքն սպան-
ուեցաւ՝ եւ ամենքն էլ՝ որ նորան հնազանդել
37 էին, ցրուեցան եւ ոչինչ եղան։ Նորանից յետոյ
Գալիլեացի Յուդան վերկացաւ աշխարհագրի օ-
րերումը. եւ շատ ժողովուրդ ապստամբեցրեց
իրան յետեւը. նա էլ կորաւ՝ եւ ամենքն էլ որ
38 նորան հնազանդել էին, ցիրուցան եղան։ Եւ հիմա
ասում եմ ձեզ. Հեռու կացէք այդ մարդկանցից,
եւ թողէք դորանց. քանզի եթէ այդ խորհուրդը

39 կամ այդ գործը մարդկանցից է, կ'քանդուի. Բայց
եթէ Աստուածանից է, չէք կարող քանդել դո-
րան. մի գուցէ Աստուծոյ դէմ կռիւ անող էլ
40 գտնուիք։ Նորանք էլ համոզուեցան նորան. եւ
առաքեալներին կանչեցին՝ ծեծեցին, եւ պատ-
ուէր տուին, որ չխօսեն Յիսուսի անունովը.
41 եւ արձակեցին նորանց։ Իսկ նորանք ուրախա-
նալով գնացին ատեանի երեսից. որովհետեւ
արժանի եղան նորա անունի համար անարգուիլ։
42 Եւ բոլոր օրը չէին դադարում տաճարումը եւ
տներումը սովորեցնել եւ Յիսուսին Քրիստոսին
աւետարանել։

Գլ. Զ

1 Եւ այն օրերումն՝ երբոր աշակերտները շատա-
ցան, Հելլենացոց կողմանէ տրտունջ եղաւ Եբ-
րայեցոց դէմ. թէ նորանց որբեւայրիքը ամեն
օրուան մատակարարութեանց մէջ անտես էին
2 լինում։ Եւ տասներկուքը կանչեցին աշակերտ-
ների բազմութիւնը եւ ասացին. Մեզ վայել չէ
որ Աստուծոյ խօսքը թողած սեղանին ծառայենք։
3 Հիմա, եղբարք, ձեզանից եօթը վկայուած մար-
դիկ ընտրեցէք, Սուրբ Հոգով եւ իմաստութիւ-
նով լցուած, որոնց այս պիտոյից վերայ դնենք։
4 Իսկ մենք աղօթքին եւ խօսքի պաշտամունքին
5 հետեւինք։ Եւ այս խօսքը բոլոր բազմութեան
առջեւ հաւանելի երեւեցաւ. եւ ընտրեցին Ստե-
փաննոսին որ Սուրբ Հոգով եւ հաւատքով լըց-
ուած մարդ էր, եւ Փիլիպպոսին եւ Պրոխորո-
նին եւ Նիկանորին եւ Տիմօնին եւ Պարմենային
6 եւ Անտիոքացի նորահաւատ Նիկողայոսին։ Նո-

րանց կանգնեցրին առաքելոց առջեւ․ եւ աղօթք
7 անելով ձեռք դրին նորանց վերայ։ Եւ Աստու-
ծոյ խօսքը աճում էր եւ աշակերտների համարը
խիստ շատանում էր Երուսաղէմում․ եւ քահա-
նաներից էլ շատ բազմութիւն հնազանդվում էին
հաւատքին։
8 Ստեփաննոսն էլ հաւատքով եւ զօրութիւնով
լցուած, մեծ մեծ հրաշքներ եւ նշաններ էր ա-
9 նում ժողովրդի մէջ։ Եւ վերկացան ոմանք այն
ժողովարանից՝ որ Լիբերտինացոց էր կոչվում․
եւ Կիւրենացիներից եւ Աղէքսանդրացիներից եւ
նորանցից որ Կիլիկիայից եւ Ասիայից էին, եւ
10 վիճաբանում էին Ստեփաննոսի հետ․ Եւ չէին
կարողանում դէմ կենալ այն իմաստութեանը՝ եւ
11 այն հոգուն, որով նա խօսում էր։ Այն ժամա-
նակ մի քանի մարդկանց հրապուրեցին որ ասեն,
թէ Մենք լսեցինք դորանից, որ հայհոյութեան
բաներ էր խօսում՝ Մօսէսի եւ Աստուծոյ դէմ։
12 Եւ ժողովրդին եւ երէցներին եւ դպիրներին
գրգռեցին․ եւ վերայ հասան յափշտակեցին նո-
13 րան՝ եւ տարան ատեանը․ Եւ սուտ վկաներ
կանգնեցրին, որ ասում էին․ Այս մարդը չէ դա-
դարում այս սուրբ տեղոյ եւ օրէնքի դէմ հայ-
14 հոյութեան բաներ խօսելուց։ Քանզի մենք լսե-
ցինք դորանից՝ որ ասում էր, թէ Այս Յիսուս
Նազօրեցին այս տեղը կ'քանդէ, եւ կ'փոխէ Մօ-
15 սէսի մեզ տուած սովորութիւնները։ Եւ ատեա-
նումը նստողների ամենը երբոր մտիկ տուին նո-
րան՝ նորա երեսը հրեշտակի երեսի նման տեսան։

ԳԼ․ Է

1 Եւ քահանայապետն ասաց․ թէ Արդեօք այդ

2 բաներն այդպէ՞ս են։ Նա էլ ասաց․ Մարդիկ եղ-
բարք եւ հարք, լսեցէք․ Փառաց Աստուածն ե-
րեւեցաւ մեր հայր Աբրահամին, որ Միջագե-
տումն էր, դեռ Խառանի մէջ չբնակուած․ եւ
3 ասաց նորան․ Դուրս եկ քո երկրիցը եւ քո ազ-
գիցը, եւ եկ այն երկիրն՝ որ ես ցոյց կ'տամ քեզ։
4 Այն ժամանակ Քաղդէացոց երկրիցը դուրս եկաւ՝
Խառանումն բնակեցաւ․ եւ այն տեղից նորա հօր
մեռնելուց յետոյ՝ նորան փոխադրեց, եւ պան-
դխտացրեց այս երկրումը, որում դուք հիմա
5 բնակած էք։ Եւ սորանում ժառանգութիւն չը
տուաւ նորան, եւ ոչ էլ մի ոտքի քայլի տեղ,
եւ խոստացաւ նորան այս տեղը ստացուածք տալ
նորան․ եւ նորանից յետոյ՝ նորա զաւակին, նա
6 դեռ որդի չունեցած։ Եւ Աստուած այսպէս խօ-
սեց․ թէ Նորա զաւակը պանդուխտ կ'լինի օտար
երկրի մէջ․ եւ կ'ծառայեցնեն նորան, եւ կ'չար-
7 չարեն չորս հարիւր տարի։ Եւ այն ազգին, որին
կ'ծառայեն, նորան ես կ'դատեմ, ասաց Աստուած․
եւ սորանից յետոյ դուրս կ'գան՝ եւ այս տեղ ինձ
8 կ'պաշտեն։ Եւ նորան թլփատութեան ուխտը
տուաւ․ եւ յետոյ Իսահակին ծնաւ, եւ ութերորդ
օրը թլփատեց նորան․ եւ Իսահակը Յակոբին,
9 եւ Յակոբը տասներկու նահապետներին։ Եւ նա-
հապետները նախանձելով Յօսէփին վերայ ծա-
խեցին Եգիպտոս․ եւ Աստուած նորա հետ էր։
10 Եւ փրկեց նորան իր բոլոր նեղութիւններիցը․
եւ նորան շնորհք եւ իմաստութիւն տուաւ Ե-
գիպտոսի Փարաւօն թագաւորի առջեւ․ եւ նո-
րան իշխան կանգնեցրեց Եգիպտոսի եւ իր բոլոր
11 տան վերայ։ Եւ սով եկաւ Եգիպտոսի բոլոր եր-
կիրը՝ եւ Քանան էլ, եւ մեծ նեղութիւն․ եւ մեր

12 հարքը կերակուր չէին գտնում։ Եւ Յակոբը լը-
սելով թէ Եգիպտոսումը ցորեն կայ, մեր հարանցն
13 ուղարկեց առաջին անգամը։ Եւ երկրորդումը
Յօսէփ իրան ճանաչել տուաւ իր եղբայրներին.
14 եւ Յօսէփի ազգը յայտնի եղաւ Փարաւօնին։ Յօ-
սէփ էլ ուղարկեց եւ կանչեց իր հայր՝ Յակոբին,
եւ բոլոր ազգատոհմին՝ եօթանասուն եւ հինգ հո-
15 գիք։ Եւ Յակոբ իջաւ Եգիպտոս, եւ վախճանե-
16 ցաւ ինքն եւ մեր հարքը։ Եւ փոխադրուեցան
Սիւքեմ, դրուեցան այն գերեզմանում, որ Աբ-
րահամ Սիւքեմի հօր Եմօրայի որդիներիցն առաւ
17 արծաթով։ Եւ երբոր աւետիքի ժամանակը մօ-
տեցաւ՝ որ Աստուած Աբրահամին երդումով խոս-
տացել էր, ժողովուրդը աճեց եւ շատացաւ Ե-
18 գիպտոսումն. Մինչեւ որ մի ուրիշ թագաւոր
վերկացաւ Եգիպտոսումը՝ որ Յօսէփին չէր ճա-
19 նաչում։ Նա հնարք գործեց մեր ազգի դէմ,
եւ մեր հարանցը չարչարեց՝ որ իրանց երեխա-
20 ները դուրս գցեն, որ չապրին։ Որ այն ժամա-
նակ Մօսէսն էլ ծնուեցաւ, եւ գեղեցիկ էր Աս-
տուծոյ առջեւ. որ իր հօր տանն երեք ամիս կե-
21 րակրուեցաւ։ Եւ երբոր դուրս գցեցին նորան,
Փարաւօնի աղջիկը վեր առաւ նորան եւ մեծաց-
22 րեց նորան՝ իրան իբրեւ որդի։ Եւ Մօսէս վար-
ժուեցաւ Եգիպտացոց բոլոր իմաստութիւնովը.
23 եւ զօրաւոր էր խօսքերով եւ գործքերով։ Եւ
երբոր նորա քառասուն տարեկան ժամանակը լը-
րացաւ, նորա սրտի մէջ ընկաւ՝ որ իր եղբայր-
ներին՝ Իսրայէլի որդիքներին այցելութիւն անէ։
24 Եւ երբոր տեսաւ, որ մէկը զրկուած էր, պաշտ-
պանեց եւ այն զրկուածի վրէժն առաւ՝ Եգիպ-
25 տացուն սպանելով։ Կարծում էր թէ նորա եղ-

բարքը կ'իմանան, որ Աստուած նորա ձեռովը
փրկութիւն պիտի տայ նորանց. բայց նորանք
26 չիմացան։ Եւ հետեւեալ օրն երեւեցաւ նորանց,
որ կռիւ էին անում, եւ յորդորեց նորանց դէպի
խաղաղութիւն, ասելով. Մարդիկ, դուք եղբարք
27 էք, ինչո՞ւ էք իրար զրկում։ Բայց նա՝ որ ըն-
կերին զրկում էր, մերժեց նորան եւ ասաց. Քեզ
ո՞վ կանգնեցրեց մեզ վերայ իշխան եւ դատա-
28 ւոր։ Մի՞թէ դու կամենում ես ինձ էլ սպանել,
29 ինչպէս երէկ Եգիպտացոյն սպանեցիր։ Եւ փա-
խաւ Մօսէս այս խօսքիցը, եւ պանդուխտ եղաւ
Մադիամի երկրումը. ուր երկու որդիք ծնաւ։
30 Եւ երբոր քառասուն տարի լրացաւ, Սինա լե-
ռան անապատումը Տիրոջ հրեշտակն երեւեցաւ
31 նորան կրակի բոցով մորենումը։ Եւ Մօսէս երբ
որ տեսաւ՝ զարմացաւ այն տեսիլքի համար, եւ
երբոր մօտենում էր որ մտիկ անէ, Տիրոջ ձայնն
32 եղաւ նորան. Ես եմ քո հարանց Աստուածը,
Աբրահամի Աստուածը եւ Իսահակի Աստուածը
եւ Յակոբի Աստուածը. եւ Մօսէսը զարհուրած
33 չէր համարձակւում նայել։ Եւ Տէրն ասաց նորան.
Կօշիկներդ հանիր ոտներիցդ, քանզի այդ տեղը
34 որ դու կանգնել ես, սուրբ երկիր է։ Տեսնելով
տեսայ իմ ժողովրդի չարչարանքներն որ Եգիպ-
տոսումն է, եւ լսեցի նորանց հառաչանքը եւ
իջայ որ նորանց փրկեմ. եւ հիմա եկ, քեզ ու-
35 ղարկեմ Եգիպտոս։ Սոյն այն Մօսէսին՝ որին ու-
րացան եւ ասացին. Քեզ ո՞վ կանգնեցրեց մեզ վե-
րայ իշխան եւ դատաւոր, Աստուած նորան իշ-
խան եւ փրկիչ ուղարկեց հրեշտակի ձեռովը, որ
36 մորենումն երեւեցաւ նորան։ Նա հանեց նորանց՝
եւ հրաշքներ եւ նշաններ արաւ Եգիպտոսի երկ-

բումը, եւ Կարմիր ծովումն, եւ անապատումը
37 քառասուն տարի։ Սա այն Մովսէսն է, որ ասաց
Իսրայէլի որդոցը. Ձեր Տէր Աստուածը մի մար-
գարէ վեր կ՚կացնէ ձեզ համար ձեր եղբայրնե-
38 րիցն ինձ նման. նորան լսեցէք։ Սա է՛ որ եղաւ
ժողովրդի մէջ անապատումն այն հրեշտակի հետ,
որի հետ Սինայ լեռանումը խօսեց՝ եւ մեր հա-
րանց հետ. որ կենդանի պատգամներ առաւ՝ որ
39 տայ մեզ։ Որին մեր հայրքը չկամեցան հնազանդ
լինել. այլ մերժեցին եւ իրանց սրտերովը ետ
40 դարձան Եգիպտոս։ Եւ Ահարօնին ասացին. Մեզ
համար աստուածներ շինիր, որ մեր առջեւ գը-
նան. քանզի այն Մովսէսն՝ որ Եգիպտոսի երկ-
րիցը մեզ հանեց, չենք գիտում ի՞նչ եղաւ նո-
41 րան։ Եւ այն օրերումն մի հորթ շինեցին, եւ
զոհ մատուցին կուռքին եւ ուրախանում էին
42 իրանց ձեռաց գործքերովը։ Եւ Աստուած երեսը
դարձրեց եւ նորանց մատնեց՝ որ երկնքի զօրու-
թեանը պաշտեն. ինչպէս որ գրուած է մարգա-
րէների գրքումն. Միթէ զոհեր եւ պատարագ-
ներ բերիք ինձ քառասուն տարի անապատումն,
43 ով Իսրայէլի տունը. Եւ Մողոքի վրանն առիք,
եւ ձեր Հռեմփա աստուծոյ աստղն. այն պատ-
կերներն որ արիք նորանց երկրպագութիւն տա-
լու համար. եւ ձեզ կ՚փոխադրեմ Բաբելոնից այն
44 կողմը։ Վկայութեան խորանը մեր հարանց հետ
անապատումն էր. ինչպէս հրաման տուաւ Մով-
սէսի հետ խօսողը, որ նորան անէ այն օրինակի
45 պէս՝ որ տեսաւ։ Որ նորան մեր հայրքն էլ առին
բերին Յեսուայ հետ այն ազգերի կալուածքը,
որ Աստուած դուրս արաւ մեր հարանց երեսից.
46 մինչեւ Դաւթի օրերը. Որ Աստուծոյ առջեւ շը-

նորհք գտաւ, եւ խնդրեց՝ որ Յակոբի Աստուծոյ
47 համար բնակարան գտնէ։ Բայց Սողոմոնը շինեց
48 նորա համար տուն։ Սակայն Բարձրեալն ոչ թէ
ձեռագործ տաճարներում է բնակում, ինչպէս
49 մարգարէն ասում է. Երկինքն իմ աթոռն է, եւ
երկիրն իմ ոտից պատուանդան. ի՞նչպիսի տուն
պիտի շինէք ինձ համար, ասում է Տէրը, կամ
50 ո՞րն է իմ հանգիստ առնելու տեղը։ Չէ՞ որ իմ
51 ձեռն արաւ այս ամենքը։ Խստապարանոցներ՝
եւ սրտերով եւ ականջներով չթլփատուածներ.
դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակում էք. ինչ-
52 պէս ձեր հայրքն՝ այնպէս էլ դուք։ Մարգարէ-
ներից ո՞րին չհալածեցին ձեր հայրքը, եւ սպա-
նեցին նորանց՝ որ առաջուց պատմեցին այն Ար-
դարի գալստեան համար, որի դուք հիմա մատ-
53 նիչներն եւ սպանողներն եղաք. Որ օրէնքն ա-
ռիք հրեշտակների մատակարարութեամբն եւ չը
պահեցիք։
54 Եւ այս խօսքերը լսելով, իրանց սրտերումը
կատաղում էին, եւ ատամները կրճտեցնում էին
55 նորա վերայ։ Իսկ նա լցուած Սուրբ Հոգով՝ դէ-
պի երկինքը նայեց եւ Աստուծոյ փառքը տե-
սաւ, եւ Յիսուսին կանգնած Աստուծոյ աջ կող-
մումը. եւ ասաց. Ահա տեսնում եմ երկինքը
բացուած, եւ մարդոյ Որդին կանգնած Աստու-
56 ծոյ աջ կողմումը։ Իսկ նոքա մեծաձայն աղա-
ղակելով խփեցին իրանց ականջները, եւ միա-
57 սին յարձակուեցան նորա վերայ։ Եւ քաղաքից
դուրս հանելով նորան քարկոծում էին. եւ վկա-
ները իրանց հանդերձները դնում էին մի երի-
58 տասարդի ոտից մօտ՝ որ Սօղոս էր կոչվում։ Եւ
քարկոծում էին Ստեփաննոսին, որ կանչում էր

59 եւ ասում. Տէր Յիսուս ընդունիր իմ հոգին։ Եւ
ծունկ դրաւ՝ եւ բարձր ձայնով աղաղակեց. Տէր,
այդ մեղքը մի համարիր դորանց համար. եւ այս
ասելով ննջեց. Եւ Սօղոս կամակից էր նորա ըս-
պանուելուն։

ԳԼ. Ը

1 Եւ այն օրերումը մեծ հալածմունք եղաւ Երու-
սաղէմումն լինող եկեղեցու վերայ. եւ ամենքն
ցրուեցան Հրէաստանի եւ Սամարիայի երկիրնե-
2 րի մէջ, բացի առաքեալներից։ Եւ Աստուածա-
վախ մարդիկ Ստեփաննոսին վեր առին՝ եւ մեծ
3 սուգ արին նորա վերայ։ Բայց Սօղոս վնաս էր
տալիս եկեղեցուն. եւ տնից տուն էր մտնում,
եւ մարդկանց եւ կանանց քաշում մատնում
բանտի մէջ։
4 Իսկ ցրուածները ման էին գալիս՝ խօսքն ա-
5 ւետարանելով։ Եւ Փիլիպպոս իջաւ Սամարիայի
մի քաղաքը՝ եւ Քրիստոսին քարոզում էր նո-
6 րանց։ Ժողովուրդներն էլ միաբան ականջ էին
դնում Փիլիպպոսի խօսածներին, լսելով եւ տես-
7 նելով այն նշանները, որ անում էր։ Վասն զի
պիղծ ոգիներ ունեցողների շատերից մեծաձայն
8 աղաղակելով դուրս էին գալիս։ Եւ շատ անդա-
9 մալոյծներ եւ կաղեր բժշկվում էին։ Եւ մեծ ու-
րախութիւն եղաւ քաղաքումը։ Եւ մի մարդ՝ ա-
նունը Սիմօն, առաջուց այն քաղաքումն մոգու-
թիւն էր անում, եւ Սամարացոց ազգին ապշեց-
նում էր. ասելով թէ ինքն մի մեծ բան է։
10 Որին ամենն էլ՝ փոքրից մինչեւ մեծը մտիկ էին
անում, եւ ասում. Թէ Սա է Աստուծոյ այն մեծ

11 զօրութիւնը։ Եւ մտիկ էին անում նորան. վասն
զի շատ ժամանակ մոգութիւններով ապշեցրել
12 էր նորանց։ Բայց երբոր հաւատացին Փիլիպպո-
սին, որ աւետարանում էր Աստուծոյ արքայու-
թեան եւ Յիսուսի Քրիստոսի անուան բաները,
ամենքն էլ մկրտվում էին՝ թէ մարդիկ եւ թէ
13 կանայք։ Եւ Սիմօն ինքն էլ հաւատաց, եւ երբ-
որ մկրտուեցաւ՝ միշտ Փիլիպպոսի հետ էր. եւ
տեսնելով այն նշաններն եւ մեծ մեծ զօրութիւն-
14 ներն, որ լինում էին, զարմանում էր։ Երբոր
Երուսաղէմ լինող առաքեալքը լսեցին, թէ Սա-
մարիան Աստուծոյ խօսքը ընդունեց, Պետրոսին եւ
15 Յօհաննէսին ուղարկեցին նորանց մօտ։ Որոնք
իջան եւ աղօթք արին նորանց վերայ, որ Սուրբ
16 Հոգին առնեն. Վասն զի դեռ նորանցից ոչ մէկի
վերայ չէր իջել. միայն Տէր Յիսուսի անունովը
17 մկրտուած էին։ Այն ժամանակ ձեռները դրին
նորանց վերայ, եւ նորանք ընդունում էին Սուրբ
18 Հոգին։ Սիմօնն երբոր տեսաւ՝ թէ առաքելոց
ձեռք դնելովը՝ Սուրբ Հոգին տրվում է, փող
19 բերաւ նորանց եւ ասաց. Ինձ էլ տուէք այս
իշխանութիւնն, որ ում վերայ ձեռք դնեմ՝ Սուրբ
20 Հոգին առնէ։ Պետրոսն էլ ասաց նորան. Քո
արծաթը քեզ հետ կորչի. որովհետեւ դու կար-
ծեցիր, թէ Աստուծոյ պարգեւը փողով կ'առնը-
21 ուի։ Դու բաժին եւ վիճակ չունիս այդ բանու-
մը. վասն զի սիրտդ ուղիղ չէ Աստուծոյ առ-
22 ջեւ։ Արդ ապաշխարիր քո այդ չարութիւնիցը՝
եւ Աստուծոյն աղաչիր, որ թերեւս թողուի քեզ
23 քո սրտի չար խորհուրդը։ Վասն զի տեսնում
եմ քեզ՝ որ դառն մաղձի եւ անիրաւութեան կա-
24 պանքի մէջ ես։ Սիմօնն էլ պատասխանեց եւ

ասաց. Դուք ինձ համար աղօթք արէք Տիրոջը,
որ ինձ վերայ մի բան չգայ նորանցից, որ դուք
25 ասացիք։ Եւ նորանք վկայութիւն տալով եւ
Տիրոջ խօսքը խօսելով, ետ դարձան Երուսա-
ղէմ. եւ Սամարացոց շատ գիւղերի մէջ աւե-
տարանում էին։
26 Եւ Տիրոջ հրեշտակը խօսեց Փիլիպպոսի հետ
եւ ասաց. Վեր կաց եւ գնա հարաւային կողմն՝
այն ճանապարհը, որ Երուսաղէմից իջնում է
27 Գազայ, որ է անապատ։ Եւ վերկացաւ գնաց.
եւ ահա մի Եթովպացի մարդ, Եթովպացոց Կան-
դակա թագուհու ներքինի մի իշխանը, որ նորա
բոլոր գանձի վերայ էր, որ եկել էր Երուսաղէմ
28 երկրպագութիւն անելու։ Եւ ետ դառնալիս իր
կառքումը նստած կարդում էր Եսայեայ մարգա-
29 րէի գիրքը։ Հոգին էլ Փիլիպպոսին ասաց. Մօ-
30 տեցիր եւ հասիր այդ կառքին։ Եւ Փիլիպպոս
առաջ վազելով լսեց որ Եսայեայ մարգարէի գիրքն
էր կարդում, եւ ասաց. Հասկանո՞ւմ ես արդ-
31 եօք կարդացածդ։ Նա էլ ասաց՝ Ի՞նչպէս կ'կա-
րենամ, եթէ մէկը չառաջնորդէ ինձ. եւ Փիլիպ-
պոսին աղաչեց, որ վեր ելլէ նստէ նորա հետ։
32 Եւ գրքի պարունակութիւնն որ կարդում էր՝
այս էր. Ինչպէս ոչխար վարուեցաւ մորթուե-
լու. եւ ինչպէս գառն իր խուզողի առջեւ լուռ
33 կացած՝ այնպէս չէ բանում իր բերանը։ Նորա
խոնարհութիւնովը նորա դատաստանը վեր առ-
նուեցաւ, նորա ցեղն ո՞վ պիտի պատմէ. վասն
34 զի նորա կեանքը երկրիցս վեր է առնվում։ Եւ
ներքինին պատասխանեց Փիլիպպոսին եւ ասաց.
Աղաչում եմ քեզ, մարգարէն սա ո՞ւմ համար
է ասում. իրա՞ն համար, թէ մի ուրիշի՞ համար։

35 Փիլիպպոսն էլ իր բերանը բացաւ, եւ այս գրքից
36 սկսած՝ Յիսուսն աւետարանեց նորան։ Երբոր
ճանապարհումը գնում էին, եկան մի ջրի մօտ,
եւ ներքինին ասաց. Ահա ջուր, ի՞նչ է ար-
37 գելում ինձ, որ մկրտուիմ։ Եւ նորան ասաց Փի-
լիպպոսը. Եթէ բոլոր սրտից հաւատում ես, կա-
րելի է. եւ նա պատասխանեց եւ ասաց. Հա-
ւատում եմ՝ թէ Աստուծոյ Որդին է Յիսուս
38 Քրիստոսը։ Եւ հրաման տուաւ որ կառքը կանգ-
նէ. եւ երկուսն էլ իջան ջուրը՝ Փիլիպպոսը եւ
39 ներքինին, եւ մկրտեց նորան։ Եւ երբոր ջրից
դուրս եկան, Տիրոջ Հոգին Փիլիպպոսին յափշ-
տակեց, եւ ներքինին այլ եւս չտեսաւ նորան.
եւ ուրախութեամբ գնում էր իր ճանապարհը։
40 Եւ Փիլիպպոսը գտնուեցաւ Ազոտոսումը, եւ
ման գալով աւետարանում էր ամեն քաղաքնե-
րին մինչեւ որ եկաւ Կեսարիա։

ԳԼ. Թ

1 Բայց Սօղոսը՝ դեռ սպառնալիք եւ մահ շնչելով
Տիրոջ աշակերտների վերայ, քահանայապետի
2 մօտ եկաւ, Եւ նորանից թղթեր խնդրեց Դա-
մասկոս՝ ժողովարանների վերայ. որ եթէ մէկին
գտնէ այն ճանապարհին հետեւող՝ մարդիկ կամ
3 կանայք, նորանց կապած բերէ Երուսաղէմ։ Եւ
նա գնալիս մօտեցաւ Դամասկոսին, եւ յանկար-
ծակի նորա չորս կողմովը լոյս փայլեց երկնքի-
4 ցը։ Եւ գետնի վերայ ընկած մի ձայն լսեց, որ
ասում էր նորան. Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ ես
5 ինձ հալածում։ Եւ նա ասաց. Ո՞վ ես, Տէր. եւ
Տէրն ասաց. Ես Յիսուսն եմ, որին դու հալա-

ծում ես. դժուար է քեզ՝ խթանին քացի տալ։
6 Եւ դողալով ու զարհուրելով ասաց. Տէր, ինչ
7 ես կամենում որ անեմ։ Եւ Տէրն ասաց նորան.
Կանգնիր եւ մտիր քաղաքը, եւ կ՚ասուի քեզ՝
թէ ինչ է պէտք քեզ անել. բայց այն մարդիկն՝
որ նորա հետ գնում էին, ապուշ կանգնած էին.
ձայնը լսում էին, բայց ոչինչ չէին տեսնում։
8 Սօղոսն էլ վերկացաւ գետնիցը, իր աչքերը բաց
անելով ոչ ոքին չէր տեսնում, եւ նորա ձեռիցը
9 բռնած մտցրին Դամասկոս։ Եւ երեք օր չէր տես-
նում. եւ ոչ ուտում եւ ոչ խմում էր։
10 Եւ Դամասկոսումն մի աշակերտ կար՝ անունն
Անանիա, եւ Տէրը տեսիլքի մէջ նորան ասաց.
11 Անանիա. եւ նա ասաց. Ահա ես, Տէր։ Եւ Տէ-
րը նորան ասաց. Վեր կաց՝ գնա այն փողոցն՝ որ
կոչվում է Ուղիղ, եւ Յուդայի տանը որոնիր
մի Սօղոս անուն Տարսոնացի մարդ, քանզի ահա
12 աղօթք է անում։ Եւ տեսիլքի մէջ տեսաւ մի
Անանիա անուն մարդ, որ մտաւ եւ ձեռն դրաւ
13 իրան վերայ, որ տեսնէ։ Անանիան էլ պատաս-
խանեց. Տէր, ես այն մարդու համար շատերից
լսեցի, թէ որչափ չարիք արաւ քո սուրբերին
14 Երուսաղէմումը։ Եւ այս տեղ էլ քահանայապետ-
ներիցն իշխանութիւն ունի, որ այն ամենքին
15 կապէ, որ քո անունը կանչում են։ Տէրն էլ ա-
սաց նորան. Գնա, վասն զի նա ինձ համար
ընտրուած անօթ է, որ իմ անունը տանէ հե-
թանոսների, թագաւորների՝ եւ Իսրայէլի որդոց
16 առջեւը։ Վասն զի ես ցոյց կ՚տամ նորան, ինչ
որչափ պիտի չարչարուի իմ անուան համար։
17 Եւ Անանիան գնաց՝ եւ մտաւ այն տունը. եւ
ձեռները դրաւ նորա վերայ, եւ ասաց. Սաւուղ

եղբայր, Տէրն ուղարկեց ինձ, այն Յիսուսն որ
երեւեցաւ քեզ ճանապարհումը, որ գալիս էիր,
18 որ տեսնես՝ եւ Սուրբ Հոգով լցուիս։ Եւ շու-
տով նորա աչքերիցը կեղեւների պէս վայր ըն-
կան, եւ իսկոյն տեսաւ, եւ վերկացաւ՝ մկրտ-
19 ուեցաւ. Եւ կերակուր առաւ՝ զօրացաւ։ Եւ
Սօղոսը մի քանի օր Դամասկոսումը լինող աշա-
կերտների հետ եղաւ։
20 Եւ շուտով ժողովարաններումը Քրիստոսին
21 քարոզեց, թէ Սա է Աստուծոյ Որդին։ Ամենքն
էլ՝ որ լսում էին, զարմանում էին եւ ասում.
Չէ՞ որ սա էր՝ որ Երուսաղէմումը հալածում էր
այս անունը կանչողներին. եւ հէնց նորա հա-
մար է այս տեղ եկել, որ սորանց կապած տանէ
22 քահանայապետների մօտ։ Բայց Սօղոսն աւելի
եւս զօրանում էր՝ եւ յաղթում էր այն Հրէա-
ներին, որ Դամասկոսումն բնակած էին. ապա-
23 ցուցանելով թէ սա է Քրիստոսը։ Երբոր բաւա-
կան օրեր լրացան, Հրէաները խորհուրդ արին՝
24 որ սպանեն նորան։ Բայց նորանց նենգութիւնը
յայտնուեցաւ Սօղոսին, քանզի գիշեր եւ ցերեկ
25 դռները պահում էին՝ որ նորան սպանեն։ Աշա-
կերտներն էլ նորան գիշերով առին, եւ զամբիւ-
ղով պարսպիցը կախելով իջեցրին։
26 Եւ երբոր Սօղոսը Երուսաղէմ եկաւ, ջանք էր
անում, որ աշակերտների հետ միաւորուի. եւ
ամենքը նորանից վախենում էին, եւ չէին հա-
27 ւատում՝ թէ աշակերտ է։ Բայց Բառնաբասը
նորան առաւ տարաւ առաքեալների մօտ. եւ
նորանց պատմեց՝ թէ ինչպէս ճանապարհումը
Տիրոջը տեսաւ, եւ թէ նորա հետ խօսեց, եւ
ինչպէս Դամասկոսումը համարձակ քարոզեց Յի-

28 սուսի անունը։ Եւ նորանց հետ էր Երուսաղէ-
մումը մտնելով եւ դուրս գալով, եւ Տէր Յի-
29 սուսի անունը համարձակ քարոզելով։ Եւ Հել-
լենախօսների հետ էլ խօսում էր՝ եւ վիճաբա-
նութիւն էր անում. եւ նորանք որոնում էին,
30 որ սպանեն նորան։ Եւ եղբարքն իմանալով,
նորան իջեցրին Կեսարիա, եւ ուղարկեցին նո-
րան Տարսոն։

31 Բայց եկեղեցիները բոլոր Հրէաստանի՝ Գա-
լիլեայի եւ Սամարիայի մէջ խաղաղութիւն ու-
նէին, շինվում էին եւ Տիրոջ երկիւղին հետե-
ւում. եւ Սուրբ Հոգոյ մխիթարութեամբը շա-
տանում էին։

32 Եւ եղաւ երբոր Պետրոսը ման էր գալիս ամեն
տեղ, եկաւ այն սրբերի մօտ, որ Լիւդիայի մէջ
33 բնակած էին։ Եւ այն տեղ մի մարդ գտաւ, ա-
նունը Ենեա որ ութ տարի մահիճի մէջ անդա-
34 մալոյծ դրած էր։ Եւ Պետրոսը ասաց նորան.
Ենեա, Տէր Յիսուս Քրիստոսը քեզ բժշկէ, վեր
կաց եւ անկողինդ շինիր. եւ շուտով վերկացաւ։
35 Եւ տեսան նորան ամենքն որ բնակած էին Լիւ-
դիայի եւ Սարոնի մէջ, որոնք դարձան դէպի
36 Տէրը։ Եւ Յոպպէի մէջ մի աշակերտ եղած կին
կար՝ անունը Տաբիթա, որ թարգմանուած աս-
վում է Այծեմնիկ. սա լիքն էր բարի գործքե-
37 րով եւ ողորմութիւններով, որ անում էր։ Եւ
եղաւ այն օրերումն, որ նա հիւանդացաւ եւ
մեռաւ. եւ նորան լուացին դրին վերնատունը։
38 Եւ Լիւդիան Յոպպէին մօտիկ լինելով, աշակերտ-
ները լսեցին՝ թէ Պետրոսը այն տեղ է, նորա մօտ
երկու մարդ ուղարկեցին աղաչելու, որ չուշա-
39 նայ նորանց մօտ գալ։ Եւ Պետրոսը վերկացաւ

եկաւ նորանց հետ. եւ երբոր եկաւ, նորան հա-
նեցին այն վերնատունը. եւ ամեն որբեւայրի-
ները նորա չորս կողմովը կանգնեցին, լաց էին
լինում եւ ցոյց տալիս այն հագուստները եւ այն
հանդերձները որ Այծեմնիկը շինում էր, քանի
40 որ նորանց հետ էր։ Եւ Պետրոսը ամենին դուրս
հանեց, ծունկ դրաւ՝ աղօթք արաւ. եւ դարձաւ
դէպի մարմինն եւ ասաց. Տաբիթա, վեր կաց.
եւ նա աչքերը բաց արաւ. եւ Պետրոսին որ
41 տեսաւ ուղիղ նստեց։ Եւ նա ձեռը տուաւ նո-
րան՝ եւ վեր կացրեց նորան. եւ կանչեց սուր-
բերին եւ որբեւայրիներին, եւ նորանց առջեւ կեն-
42 դանի կանգնեցրեց նորան։ Եւ յայտնի եղաւ բո-
լոր Յոպպէի մէջ, եւ շատերը հաւատացին Տի-
43 րոջը. Եւ նա շատ օր մնաց Յոպպէումը՝ մի կա-
շեգործ Սիմոնի մօտ։

ԳԼ. Ժ

1 Կեսարիայումը մի մարդ կար՝ անունը Կոռնե-
լիոս՝ հարիւրապետ, Իտալացի կոչուած գնդից.
2 Բարեպաշտ եւ աստուածավախ իր բոլոր տու-
նովը. շատ ողորմութիւններ էր անում ժողո-
վրդին, եւ ամեն ժամանակ աղօթք անում դէպի
3 Աստուած։ Նա օրուան իբրեւ իններորդ ժամին
տեսիլքի մէջ յայտնի տեսաւ Աստուծոյ հրեշտա-
կը, որ մտնելով նորան մօտ՝ ասում էր նորան.
4 Կոռնելիոս։ Նա էլ նորան նայելով շատ վախով
բռնուեցաւ, եւ ասաց. Ի՞նչ է, Տէր. եւ նա
ասաց նորան. Քո աղօթքներն ու քո ողորմու-
թիւնները վեր ելան Աստուծոյ առջեւ՝ յիշատակի
5 համար։ Եւ հիմա մարդիկ ուղարկիր Յոպպէ, եւ

6 կանչիր Սիմոնին, որ Պետրոս է կոչվում։ Նա
հիւր է մի կաշեգործ Սիմոնի մօտ, որի տունը
ծովի մօտ է. նա կ՚ասէ քեզ ինչ պէտք է անել։
7 Եւ երբոր գնաց այն հրեշտակն՝ որ Կոռնելիոսի
հետ խօսում էր, իր ծառաներից երկուսին՝ եւ
իր սպասաւորներից մէկ բարեպաշտ զինուոր կան-
8 չեց. Եւ բոլորը պատմեց նորանց, եւ ուղարկեց
նորանց Յոպպէ։
9 Եւ հետեւեալ օրն երբոր նորանք ճանապարհ
ընկան, եւ այն քաղաքին մօտեցան, Պետրոսը
վեր ելաւ կտուրը վեց ժամի մօտերը աղօթք ա-
10 նելու։ Սովեց՝ եւ կամենում էր ճաշել, եւ նո-
րանց կերակուր պատրաստելիս՝ յափշտակութիւն
11 եղաւ նորա վերայ։ Եւ տեսաւ երկինքը բաց-
ուած. եւ մի մեծ կտաւի պէս անօթ չորս ծայ-
12 րից կապած՝ իջաւ երկրի վերայ, Որի մէջ կային
երկրի ամեն կերպ չորքոտանիները եւ գազան-
ները եւ սողունները եւ երկնքի թռչունները։
13 Եւ ձայն եղաւ նորան. Վեր կաց, Պետրոս, մոր-
14 թիր՝ եւ կեր, Պետրոսն էլ ասաց. Քաւ լիցի,
Տէր, որովհետեւ ես երբէք պիղծ կամ անմաքուր
15 բան չկերայ։ Եւ դարձեալ երկրորդ անգամ ձայն
եկաւ նորան, Այն որ Աստուած սրբեց, դու պիղծ
16 մի համարիր։ Այս երեք անգամ եղաւ, եւ այն
17 անօթը վերացաւ երկինքը։ Եւ երբոր Պետրոսը
զարմացած էր իր մտքումը, թէ ինչ պիտի լինի
այն տեսիլքը՝ որ տեսաւ. եւ ահա Կոռնելիոսից
ուղարկուած մարդիկը՝ Սիմոնի տունը որոնելով
18 դրան մօտ կանգնեցին. Եւ կանչելով հարցնում
էին, թէ Սիմոնն՝ որ Պետրոս է կոչվում՝ այս
19 տե՞ղ է հիւր։ Եւ դեռ Պետրոսը այն տեսիլքի
համար միտք էր անում, Հոգին նորան ասաց.

20 Ահա երեք մարդիկ քեզ որոնում են։ Բայց վեր
կաց իջիր. եւ գնա նորանց հետ առանց խղճ-
մտանք անելու, վասն զի ես եմ ուղարկել նո-
21 րանց։ Եւ Պետրոսը իջաւ այն մարդկանց մօտ
որ Կոռնելիոսից նորա մօտ էին ուղարկուած
եւ ասաց. Ահա ես եմ, որ որոնում էք. Ի՞նչ
22 բան կայ, որի համար եկաք դուք։ Նորանք էլ
ասացին. Կոռնելիոս հարիւրապետն՝ արդար եւ
աստուածավախ մարդ, որ Հրէաների բոլոր ազ-
գից բարի վկայութիւն ունի. նա հրաման առաւ
սուրբ հրեշտակից, որ քեզ կանչէ իր տունը եւ
23 քեզանից խօսքեր լսէ։ Եւ ներս կանչեց նորանց՝
եւ ընդունեց իբրեւ հիւր։
Եւ հետեւեալ օրը Պետրոսը նորանց հետ գը-
նաց. եւ այն եղբայրներիցն՝ որ Յոպպէյումն էին,
24 մի քանիսը նորա հետ եկան։ Եւ հետեւեալ օրը
մտան Կեսարիա. եւ Կոռնելիոս իր ազգական-
ներին եւ ընտանի բարեկամներին կանչել էր,
25 եւ սպասում էր նորանց։ Եւ եղաւ երբոր Պետ-
րոսը ներս էր մտնում, Կոռնելիոսը դիմաւորեց
26 նորան, եւ ոտներն ընկած երկրպագեց։ Պետ-
րոսն էլ կանգնեցրեց նորան եւ ասաց. Վեր կաց,
27 ես ինքս էլ մարդ եմ։ Եւ նորա հետ խօսելով ներս
մտաւ. եւ այն տեղ շատ մարդ ժողովուած գտաւ։
28 Եւ նորանց ասաց. Դուք գիտէք, ինչպէս ապօ-
րէն բան է Հրէայ մարդու համար մի այլազգու
դպչիլ կամ մօտենալ. բայց Աստուած ինձ ցոյց
տուաւ, ոչ մէկ մարդի էլ պիղծ կամ անմաքուր
29 չասել։ Սորա համար էլ առանց ընդդէմ խօսե-
լու եկայ, երբոր կանչուեցայ. հիմա հարցնում
30 եմ, ի՞նչ բանի համար կանչեցիք ինձ։ Եւ Կոռ-
նելիոսն ասաց. Չորս օրից առաջ մինչեւ այս

ժամը՝ ծոմ էի պահում եւ իններորդ ժամին իմ
տան մէջ աղօթք էի անում, եւ ահա մի մարդ
կանգնեց իմ առջեւ սպիտակ հանդերձներով, եւ
31 ասաց. Կոռնելիոս, քո աղօթքը լսուեցաւ, եւ
քո ողորմութիւնները յիշուեցան Աստուծոյ առ-
32 ջեւ։ Հիմա ուղարկիր Յոպպէ, եւ կանչիր Սի-
մոնին՝ որ Պետրոս է կոչւում. սա մին կաշե-
գործ Սիմոնի տանն հիւր է՝ ծովի մօտ. որ նա
33 գայ, քեզ հետ խօսի։ Եւ ես իսկոյն քեզ մօտ
ուղարկեցի. դու էլ լաւ արիր, որ եկար. հիմա
մենք ամենքս Աստուծոյ առջեւ կանգնած ենք,
որ լսենք այն ամենն՝ որ Տէրից քեզ հրամայ-
ուած է։
34 Պետրոսը իր բերանը բանալով ասաց. Ճշմար-
տութեամբ հասկանում եմ, որ Աստուած երես-
35 պաշտ չէ. Այլ ամեն ազգումն, ով որ վախե-
նում է նորանից՝ եւ արդարութիւն է գործում,
36 ընդունելի է նորան։ Այն խօսքը որ ուղարկեց
Իսրայէլի որդոյն համար, խաղաղութիւն աւե-
տարանել Յիսուսի Քրիստոսի ձեռովն. (սա է
37 ամենի Տէրը.) Դուք ինքներդ գիտէք այն բանն,
որ եղաւ բոլոր Հրէաստանումը Գալիլեայից սկը-
սած այն մկրտութիւնից յետոյ, որ Յօհաննէսը
38 քարոզեց. Այն Յիսուսին որ Նազարէթիցն է, թէ
ինչպէս նորան Աստուած Սուրբ Հոգով եւ զօ-
րութիւնով օծեց. որ նա եկաւ բարի անելով
եւ սատանայից բոլոր հարստահարուածները բը-
39 ժշկելով. վասն զի Աստուած նորա հետ էր։ Եւ
մենք վկայ ենք այն ամեն բաներին, որ Հրէից
երկրումը եւ Երուսաղէմումն արաւ. որին փայ-
40 տից կախած սպանեցին։ Նորան Աստուած յա-
41 րոյց երրորդ օրը. եւ յայտնի արաւ նորան։ Ոչ

թէ բոլոր ժողովրդին, այլ մեզ՝ Աստուածանից
յառաջագոյն ընտրուած վկաներիս. որ կերանք
եւ խմեցինք նորա հետ՝ նորա մեռելներից յա-
42 րութիւն առնելուց յետոյ։ Եւ պատուիրեց մեզ
ժողովրդին քարոզել՝ եւ վկայութիւն դնել, թէ
ինքն է Աստուածանից սահմանուած դատաւորը
43 մեռելոց եւ կենդանեաց։ Բոլոր մարգարէները
վկայութիւն են տալիս նորան, որ նորա անու-
նովը մեղաց թողութիւն կ'առնէ ամեն նորան
հաւատացողը։
44 Եւ Պետրոսը դեռ այս բանը խօսելիս, Սուրբ
Հոգին իջաւ այն խօսքը լսողների բոլորի վե-
45 րայ։ Եւ զարմացան Պետրոսի հետ եկող հաւա-
տացեալները, որ թլփատութիւնից էին. որ հե-
թանոսների մէջ էլ Սուրբ Հոգոյ պարգեւը թափ-
46 ւում էր։ Որովհետեւ լսում էին՝ որ նորանք
լեզուներով խօսում եւ Աստուծոյն փառաւորում
47 էին։ Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց.
Միթէ մէկը կարող է ջուրը արգելել, որ սո-
րանք չմկրտուեն, որ Սուրբ Հոգին ընդունեցին
48 ինչպէս եւ մենք։ Եւ նորանց հրամայեց որ
Տիրոջ անունովը մկրտուեն. այն ժամանակ ա-
ղաչեցին նորան՝ որ մի քանի օր մնայ այն տեղ։

ԳԼ. ԺԱ

1 Եւ առաքեալներն եւ այն եղբայրներն՝ որ
Հրէաստանի կողմերումն էին, լսեցին, որ հե-
թանոսներն էլ ընդունեցին Աստուծոյ խօսքը։
2 Բայց երբոր Պետրոսը վեր ելաւ Էկ— Երուսա-
ղէմ, այն հաւատացեալներն որ թլփատութիւ-
3 նից էին՝ վիճում էին նորա դէմ, Եւ ասում

էին, թէ Նա անթլփատ մարդկանց մօտ մտաւ,
4 եւ նորանց հետ կերաւ։ Եւ Պետրոսը սկսեց
5 կարգով պատմել նորանց՝ եւ ասաց. Ես Յոպպէ
քաղաքումն աղօթք էի անում՝ եւ յափշտակու-
թեան մէջ տեսիլք տեսայ. որ մեծ կտաւի պէս
մի անօթ՝ չորս ծայրից կախուած՝ երկնքից
վայր էր գալիս, եւ եկաւ մինչեւ ինձ մօտ։
6 Երբոր աչքս նորա մէջ գցած նայում էի, եւ
տեսայ երկրի չորքոտանիները, եւ գազանները,
7 եւ սողունները, եւ երկնքի թռչունները. Եւ
ձայն լսեցի, որ ասում էր ինձ. Վեր կաց, Պետ-
8 րոս, մորթիր եւ կեր։ Եւ ասացի. Քաւ լիցի,
Տէր. որովհետեւ երբէք պիղծ կամ անմաքուր
9 բան իմ բերանը չէ մտած։ Ձայնը երկնքից
ինձ երկրորդ անգամ պատասխանեց. Նա որ
10 Աստուած սրբեց, դու պիղծ մի համարիր։ Եւ
այս երեք անգամ եղաւ, եւ բոլորը դարձեալ
11 վերացաւ երկինքը։ Եւ ահա շուտով երեք մար-
դիկ եկան կանգնեցին այն տան առջեւն, ուր ես
12 էի, Կեսարիայից ինձ մօտ ուղարկուած։ Եւ
Հոգին ինձ ասաց, որ նորանց հետ գնամ՝ ա-
ռանց խղճմտանք անելու. այս վեց եղբարքն
էլ ինձ հետ եկան, եւ մտանք այն մարդու տու-
13 նը։ Եւ պատմեց մեզ, թէ ինչպէս տեսաւ
հրեշտակին իր տանը, որ կանգնած էր՝ եւ ա-
սում էր նորան. Ուղարկիր Յոպպէ, եւ կանչիր
14 Պետրոս կոչուած Սիմօնին. Նա քեզ հետ բա-
ներ կ'խօսի, որ նորանով կ'փրկուիս դու՝ եւ քո
15 բոլոր տունը։ Եւ երբոր սկսեցի խօսել, Սուրբ
Հոգին իջաւ նորանց վերայ. ինչպէս եւ մեզ
16 վերայ սկզբումը։ Եւ յիշեցի Տիրոջ այն խօսքն՝
որ ասում էր. Յովհաննէս ջրով մկրտեց. բայց

17 դուք Սուրբ Հոգով կ'մկրտուիք։ Ուրեմն եթէ
Աստուած մի եւ նոյն պարգեւը տուաւ նորանց,
ինչպէս եւ մեզ, որ Տէր Յիսուս Քրիստոսին
հաւատացինք. ապա ես ո՞վ էի որ կարողանայի
18 Աստուծոյն արգելել։ Եւ երբոր լսեցին այս,
լռեցին եւ փառաւորում էին Աստուծոյն՝ եւ
ասում էին. Ուրեմն հեթանոսներին էլ Աստուած
կենաց համար ապաշխարութիւնը տուաւ։
19 Եւ նորանք որ ցրուած էին այն նեղութիւ-
նից, որ Ստեփաննոսի վերայ եղաւ, մինչեւ
Փիւնիկէ եւ Կիպրոս եւ Անտիոքիա հասան. եւ
ոչ ոքի չէին խօսում Աստուծոյ խօսքը, բայց մի-
20 այն Հրէաներին։ Եւ նորանցից ոմանք կային՝
Կիպրացի եւ Կիւրենացի մարդիկ, որ Անտիոք
մտած խօսում էին Հելլենախօսների հետ՝ աւե-
21 տարանելով Տէր Յիսուսը։ Եւ Տիրոջ ձեռը նո-
րանց հետ էր. եւ բազմաթիւ մարդիկ հաւա-
22 տացին՝ եւ դէպի Տէրը դարձան։ Այս բանի
լուրը հասաւ Երուսաղէմի եկեղեցու ականջին,
եւ Բառնաբասին ուղարկեցին որ գնայ մինչեւ
23 Անտիոք։ Նա երբոր եկաւ, եւ Աստուծոյ շնորհ-
քը տեսաւ՝ ուրախ եղաւ, եւ խնդրում էր ամե-
նին՝ որ սրտի յօժարութեամբ Տիրոջ հետ մնան։
24 Վասն զի նա բարի եւ Սուրբ Հոգով եւ հա-
ւատքով լցուած մարդ էր. եւ շատ ժողովուրդ
25 աւելացաւ Տիրոջ համար։ Եւ Բառնաբասը դուրս
եկաւ գնաց Տարսոն, որ Սօղոսին որոնէ, եւ
26 նորան գտաւ բերաւ Անտիոք։ Եւ եղաւ որ
նորանք մի բոլոր տարի ժողովւում էին եկեղե-
ցու մէջ, եւ շատ ժողովուրդ էին սովորեցնում,
եւ աշակերտներն առաջ Անտիոքումը Քրիստոն-
եայ անուանուեցան։

27 Եւ այն օրերումն Երուսաղէմից մարգարէներ
28 իջան Անտիոք։ Եւ նորանցից մէկն՝ անունն Ա-
գաբոս, վերկացաւ՝ Հոգումն իմաց տուաւ, թէ
բոլոր աշխարհքի վերայ մեծ սով է լինելու, որ
29 Կղօդիոս կայսեր ժամանակին եղաւ էլ։ Բայց
այն աշակերտներիցն ամեն մէկն ինչպէս որ կա-
րող էր, որոշեցին օգնութիւն ուղարկել Հրէաս-
30 տանումն բնակած եղբայրներին. Որ արին էլ,
եւ ուղարկեցին երէցների մօտ՝ Բառնաբասի եւ
Սօղոսի ձեռովը։

Գլ. ԺԲ

1 Այն ժամանակին Հերովդէս թագաւորը ձեռք
2 գցեց, որ եկեղեցուցն մի քանիսին չարչարէ։ Եւ
3 Յակոբին՝ Յօհաննէսի եղբօրը սրով սպանեց։ Եւ
տեսնելով Հրէաներին հաճոյ է, նորա վերայ Պետ-
րոսին էլ բռնեց. (եւ բաղարջակերաց օրերն էր։)
4 Նորան՝ երբ որ բռնեց՝ բանտը դրաւ, եւ մատ-
նեց չորս չորրորդ զինուորների՝ որ պահեն նո-
րան. եւ կամենում էր զատկից յետոյ նորան բե-
5 րել ժողովրդի առջեւ։ Եւ Պետրոսը բանտումը
պահուած էր. բայց նորա համար անդադար ա-
ղօթք էր լինում եկեղեցուցն դէպի Աստուած։
6 Եւ երբոր Հերովդէսը կամեցաւ նորան դուրս բե-
րել. այն գիշերը Պետրոսը քնած էր երկու զին-
ուորների մէջ երկու շղթայով կապուած. եւ պա-
հապանները դրան առջեւ բանտը պահում էին։
7 Եւ ահա Տիրոջ հրեշտակը էկաւ կանգնեց, եւ
տան մէջ լոյս ծագեց. եւ խթեց Պետրոսի կո-
ղին՝ նորան արթնացրեց՝ եւ ասաց. Վեր կաց
շուտով. շղթաները վայր ընկան նորա ձեռնե-

8 րիցը։ Եւ հրեշտակն ասաց նորան. Գօտիդ կա-
պիր եւ հողաթափներդ հագիր ոտներիդ. եւ այն-
պէս արաւ. եւ ասաց նորան. Հանդերձներդ քեզ
9 վերայ գցիր՝ եւ իմ ետեւից եկ։ Եւ դուրս եկաւ
գնում էր նորա ետեւից, եւ չէր գիտում, թէ
ճշմարիտ է հրեշտակից եղածը. վասն զի կար-
10 ծում էր թէ երազ է տեսնում։ Եւ երբոր նո-
րանք անցան առաջի պահապաններից եւ երկ-
րորդից, եկան մինչեւ երկաթի դուռն՝ որ դէպի
քաղաքն էր տանում. որ ինքն իրանից բացուե-
ցաւ նորանց համար, եւ նորանից դուրս գալով մի
փողոց անցան, եւ շուտով հրեշտակը նորանից
11 հեռացաւ։ Եւ Պետրոսը ինքն իրան գալով ա-
սաց. Հիմա ճշմարիտ իմացայ, որ Տէրն իր հրեշ-
տակն ուղարկեց, եւ փրկեց ինձ Հերովդէսի ձեռ-
քիցը, եւ Հրէաների ժողովուրդի բոլոր սպասած
12 բաներիցը։ Եւ մտածելով եկաւ Մարկոս կոչ-
ուած Յօհաննէսի մայր՝ Մարեմայ տունը. ուր
13 շատերը ժողովուած՝ աղօթք էին անում։ Եւ
դուռը որ թակեց, մի աղախին՝ անունն Հռոդէ
14 մօտ եկաւ, որ ականջ դնէ. Եւ Պետրոսի ձայնը
ճանաչեց, ուրախութիւնիցը դուռը բաց չարաւ.
ներս վազեց եւ պատմեց, թէ Պետրոսը դրանը
15 կանգնած է։ Նորանք էլ ասացին նորան՝ գժուել
ես. իսկ նա հաստատում էր, թէ այսպէս է. եւ
նորանք ասում էին, թէ Նորա հրեշտակն է։
16 Բայց Պետրոսը կանգնած դուռը թակում էր.
երբոր բաց արին, տեսան նորան եւ զարմացան։
17 Եւ նա ձեռով նշան արաւ նորանց որ լուռ կե-
նան. եւ պատմեց նորանց, թէ ինչպէս Տէրը
բանտիցն իրան հանեց. եւ ասաց, Այս բանը
պատմեցէք Յակոբին եւ եղբայրներին. եւ դուրս

18 եկաւ գնաց ուրիշ տեղ։ Եւ երբոր առաւօտ ե-
ղաւ՝ մեծ խռովութիւն կար այն զինուորների
19 մէջ, թէ Պետրոսը ի՞նչ եղաւ։ Բայց Հերովդէս
երբոր նորան ուզեց եւ չգտաւ, պահապաններին
քննեց եւ հրամայեց սպանել. եւ Հրէաստանից
իջաւ Կեսարիա՝ եւ այն տեղ էր լինում։
20 Եւ Հերովդէս շատ բարկացած էր Տիւրացոց եւ
Սիդոնացոց վերայ. եւ նորանք միաբան եկան
նորա մօտ. եւ Բղաստոսին՝ թագաւորի ներսի
տան վերակացուին՝ համոզելով խաղաղութիւն
էին խնդրում. քանզի նորանց երկիրը՝ արքու-
21 նիքից էր կերակրվում։ Մի հանդիսաւոր օր,
Հերովդէսը թագաւորական զգեստ հագած ատեա-
նումը նստած էր, եւ ամենի առջեւ ատենաբա-
22 նում էր դէպի նորանց։ Եւ ամբոխն աղաղակում
էր, թէ Դա Աստուծոյ ձայն է, եւ ոչ թէ մար-
23 դու։ Եւ իսկոյն Տիրոջ հրեշտակը զարկեց նո-
րան, քանզի Աստուծոյն չտուաւ փառքը. եւ
որդներով լցուեցաւ՝ մեռաւ։
24 Եւ Աստուծոյ խօսքն աճում էր եւ շատանում։
25 Բառնաբաս եւ Սօղոս պաշտամունքը կատարե-
լով Երուսաղէմից ետ դարձան. եւ իրանց հետ
էին առել Յօհաննէսին էլ որ Մարկոս էր կոչ-
ուած։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Անտիոքումն՝ այն տեղի եկեղեցու մէջ կային
մի քանի մարգարէներ եւ վարդապետներ. Բառ-
նաբասը՝ եւ Նիգէր ասուած Սիմոնը, եւ Ղու-
կիոս Կիւրենացին, եւ Հերովդէս չորրորդապետի
2 սննդակից Մանայէնը, եւ Սօղոսը։ Սորանք երբ
որ Տիրոջը պաշտօն էին մատուցանում եւ ծոմ

էին պահում, Սուրբ Հոգին ասաց. Ինձ համար
որոշեցէք Բառնաբասին եւ Սօղոսին այն գործի
3 համար, որ ես դորանց կանչել եմ։ Այն ժամա-
նակ ծոմ պահեցին եւ աղօթք արին, նորանց
վերայ ձեռք դրին՝ արձակեցին։
4 Եւ նորանք էլ Սուրբ Հոգուցն ուղարկուած՝
իջան Սելեւկիա, եւ այն տեղից նաւով գնացին
5 Կիպրոս։ Եւ Սաղամինա հասնելով Աստուծոյ
խօսքը պատմում էին Հրէաների ժողովարաննե-
6 րումը. Յօհաննէսին էլ պաշտօնեայ ունէին։ Ման
եկան կղզին մինչեւ ի Պափոս. եւ մի մոգ գտան՝
սուտ մարգարէ՝ Հրէայ, որի անունը Բարյեսու
7 էր։ Որ փոխանակ բդեշխի՝ Սէրգիոս Պօղոսի՝ ի-
մաստուն մարդու հետ էր. սա Բառնաբասին եւ
Սօղոսին իրան մօտ կանչելով՝ ուզում էր որ Ա-
8 ստուծոյ խօսքը լսէ։ Բայց նորանց հակառակ կա-
ցաւ Էլիմաս մոգը. վասն զի այսպէս է թարգ-
մանվում նորա անունը. սա ուզում էր փոխա-
9 նակ բդեշխին հաւատքիցը փոխել։ Բայց Սօղոս,
որ Պօղոս է կոչվում՝ Սուրբ Հոգով լցուած մտիկ
10 տուաւ նորան, Եւ ասաց. Ով ամեն խաբեբայու-
թիւնով եւ ամեն խորամանկութիւնով լցուած,
սատանայի որդի, ամեն արդարութեան թշնամի.
չես դադարում Տիրոջ ուղիղ ճանապարհները
11 ծռելուց։ Եւ հիմա ահա Տիրոջ ձեռն քեզ վերայ
է, եւ կոյր կ՚լինիս՝ որ չտեսնես արեգակը՝ մին-
չեւ մի ժամանակ. եւ իսկոյն մութ եւ խաւար
ընկաւ նորա վերայ, եւ ման գալով ձեռք բռնող
12 մարդիկ էր որոնում։ Այն ժամանակ փոխանակ
բդեշխն երբոր տեսաւ այդ եղածը, հաւատաց,
եւ Տիրոջ վարդապետութեան վերայ զարմացաւ։
13 Եւ Պօղոսն եւ հետը լինողները Պափուից դուրս

եկան՝ եկան Պամփիւլիայի Պերգէ քաղաքը. բայց
Յօհաննէս նորանցից բաժանուեց եւ դարձաւ
14 Երուսաղէմ: Եւ նորանք Պերգէից գնացին՝ եկան
Պիսիդիայի Անտիոքը. եւ շաբաթ օրը ժողովա-
15 րանը մտան նստեցին: Եւ օրէնքն ու մարգարէ-
ները կարդալուց յետոյ, ժողովրդապետները նո-
րանց մօտ ուղարկեցին եւ ասացին. Մարդիկ
եղբարք, եթէ դուք այդ ժողովրդին համար յոր-
16 դորական խօսքեր ունիք՝ խօսեցէք: Պօղոսն էլ
վերկացաւ՝ ձեռը շարժեց եւ ասաց. Ով Իսրայէ-
լացի մարդիկ, եւ դուք՝ որ Աստուածանից վա-
17 խում էք, լսեցէք: Այս Իսրայէլացի ժողովրդի
Աստուածը ընտրեց մեր հարանցը. եւ ժողովուր-
դը բարձրացրեց պանդխտութիւնումն՝ Եգիպտոսի
երկրի մէջ. եւ բարձր բազուկով նորանց այն
18 տեղից դուրս հանեց: Եւ քառասուն տարու չափ
19 ժամանակ նորանց կերակրեց անապատումը: Եւ
Քանանու երկրումն եօթն ազգեր խորտակեց եւ
20 նորանց երկիրը նորանց ժառանգել տուաւ: Եւ
սորանից յետ չորս հարիւր եւ յիսուն տարի յե-
տոյ նորանց դատաւորներ տուաւ մինչեւ Սա-
21 մուէլ մարգարէն: Եւ ապա թագաւոր ուզեցին,
եւ Աստուած տուաւ նորանց Կիսի որդի Սաւու-
ղը՝ մի մարդ Բենիամէնի ցեղից, քառասուն
22 տարի: Եւ նորան փոխելով. Դաւթին նորանց
համար թագաւոր կանգնեցրեց, որ նորա համար
էլ վկայութիւն տուաւ եւ ասաց. Յեսսէի որդի
Դաւթին գտայ իմ սրտի ուզածի պէս մարդ, որ
23 նա իմ բոլոր կամքը կ'անէ: Սորա զաւակից
Աստուած իր աւետիքի պէս Իսրայէլացոց հա-
24 մար Յիսուս Փրկիչը վերկացրեց: Որ Յօհաննէսը՝
նորա մանելուց առաջ, կանխաւ ապաշխարու-

թեան մկրտութիւնը քարոզեց Իսրայէլի բոլոր
25 ժողովրդին: Եւ երբոր Յօհաննէսն վերջացնում
էր իր ընթացքը՝ ասում էր. Ինձ համար ո՞վ էք
կարծում որ լինիմ. ես այն չեմ. բայց ահա իմ
ետեւից գալիս է նա, որ ես չեմ արժանի նորա
26 ոտից կօշիկն արձակելու: Մարդիկ եղբարք,
Աբրահամի ցեղի որդիքներ, եւ ով որ ձեզանում
աստուածավախ են. ձեզ ուղարկուեցաւ այս
27 փրկութեան խօսքը: Քանզի Երուսաղէմում բը-
նակողները, եւ նորանց իշխանները՝ չճանաչեցին
նորան, եւ ոչ մարգարէների ձայները, որ ամեն
շաբաթ օրեր կարդացվում են՝ դատաստան անե-
28 լով կատարեցին: Եւ թէպէտ մի մահու պատ-
ճառ չգտան, Պիղատոսիցն ուզեցին՝ որ նա ըս-
29 պանուի: Եւ երբոր այն ամենը՝ որ նորա համար
գրուած էր, կատարեցին, փայտից վայր բերին՝
30 դրին գերեզման: Բայց Աստուած նորան մեռել-
ներից յարոյց, որ շատ օրերով երեւեցաւ նո-
31 րանց, Որ նորա հետ Գալիլեայից ելել էին Ե-
րուսաղէմ, որոնք նորա համար վկաներ են ժո-
32 ղովրդի առջեւ: Եւ մենք աւետարանում ենք
ձեզ այն խոստմունքը, որ հարանցն եղած էր.
33 Որ Աստուած այն կատարեց մեզանում՝ որ նո-
րանց որդիքն ենք, Յիսուսին յարուցանելով. ինչ-
պէս երկրորդ սաղմոսումն գրուած է. Դու իմ
34 Որդին ես. ես այսօր ծնայ քեզ: Եւ թէ մեռել-
ներից յարոյց նորան, որ էլ չպիտի դառնայ ա-
պականութեան մէջ՝ այսպէս ասաց. Թէ Ձեզ
կ'տամ Դաւթի հաւատարիմ սուրբ խոստումները:
35 Քանզի ուրիշ տեղում էլ ասում է. Քո սրբոյն
36 չես տալ ապականութիւն տեսնել: Բայց Դա-
ւիթն իր դարումը ծառայեց Աստուծոյ կամքին,

եւ ննջեց, եւ իր հարանց հետ դրուեցաւ եւ
37 ապականութիւն տեսաւ։ Բայց նա, որին Աստ-
38 ուած յարոյց, ապականութիւն չտեսաւ։ Արդ
թող յայտնի լինի ձեզ, մարդիկ եղբարք, որ սո-
րանով մեղաց թողութիւն է աւետարանվում
ձեզ. եւ այն ամեն բաներիցն, որ Մովսէսի օ-
39 րէնքովը չկարողացիք արդարանալ։ Սորանով
40 ամեն հաւատացողը կ'արդարանայ։ Արդ զգոյշ
կացէք՝ որ չլինի թէ ձեզ վերայ գայ մարգարէ-
41 ներից ասուածը Թէ. Տեսէք, անարգողներ, եւ
զարմացէք եւ փճացէք. վասն զի ես մի գործ
եմ գործում ձեր օրերումը. մի գործ, որ նորան
չէք հաւատալ եթէ մէկը պատմէ ձեզ։
42 Եւ երբոր Հրէից ժողովարանիցը դուրս եկան,
աղաչում էին հեթանոսները որ միւս շաբաթումն
43 էլ այն բանը խօսեն իրանց համար։ Երբոր ժո-
ղովուրդն արձակուեցաւ, Հրէաներից՝ եւ նորա-
հաւատ աստուածապաշտ մարդկանցից շատերը
գնում էին Պօղոսի եւ Բառնաբասի ետեւից. ո-
րոնք նորանց հետ խօսելով նորանց համոզում
44 էին Աստուծոյ շնորհքի մէջ կենալ։ Եւ երբոր
միւս շաբաթն եկաւ, համարեա թէ բոլոր քաղա-
45 քը հաւաքուեցաւ՝ Աստուծոյ խօսքը լսելու։ Երբ-
որ Հրէաներն ամբոխը տեսան՝ նախանձով լց-
ուեցան, եւ Պօղոսից ասուած խօսքերին դէմ
46 խօսելով հակառակում եւ հայհոյում էին։ Պօղո-
սն եւ Բառնաբասն էլ համարձակութեամբ աս-
ում էին. Առաջ պէտք էր որ Աստուծոյ բանը
ձեզ խօսուէր. բայց որովհետեւ դուք մերժում
էք նորան եւ արժան չէք համարում ձեզ յաւի-
տենական կենացը, ահա դէպի հեթանոսներն ենք
47 դառնում։ Վասն զի Տէրն այսպէս պատուիրեց

մեզ. Թէ Քեզ հեթանոսների լոյս դրի, որ դու
48 փրկութիւն լինես մինչեւ երկրի ծայրերը։ Հե-
թանոսներն այս լսելով ուրախանում էին, եւ
Տիրոջ խօսքը փառաւորում էին, եւ հաւատա-
ցին քանիքը որ կարգուած էին դէպի յաւիտե-
49 նական կեանքը։ Եւ Տիրոջ խօսքը փռվում էր
50 այն բոլոր քաղաքը։ Բայց Հրէաները գրգռեցին
աստուածապաշտ եւ պարկեշտ կանանցը եւ քա-
ղաքի գլխաւորներին, եւ հալածանք վերկացնե-
լով Պօղոսի եւ Բառնաբասի վերայ՝ նորանց դուրս
51 արին իրանց սահմաններիցը։ Եւ նորանք իրանց
ոտների փոշին թօթափեցին նորանց վերայ, եւ
52 եկան Իկոնիոն։ Եւ աշակերտները լցվում էին
ուրախութիւնով՝ եւ Սուրբ Հոգիով։

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղաւ Իկոնիոնումն որ նորանք միասին մըտ-
նում էին Հրէաների ժողովարանը, եւ այնպէս
խօսում որ Հրէից՝ եւ Յոյներից մեծ բազմու-
2 թիւն հաւատացին։ Բայց չհաւատացող Հրէա-
ները հեթանոսների սրտերը գրգռեցին եւ չա-
3 րացրին եղբայրների դէմ. Եւ շատ ժամանակ
ման էին գալիս համարձակ խօսելով Տիրոջ վե-
րայ, որ վկայում էր իր շնորհաց խօսքին. եւ
նշաններ եւ հրաշքներ էր լինել տալիս նորանց
4 ձեռովը։ Եւ տարաձայնութիւն եղաւ քաղաքի
բազմութեան մէջ. եւ ոմանք Հրէաների կողմն
5 էին, եւ ոմանք առաքեալների կողմը։ Երբոր
հեթանոսներն եւ Հրէաներն իրանց իշխաննե-
րովը նորանց վերայ յարձակեցան, որ նորանց
6 նախատեն եւ քարկոծեն, Նորանք իմացան՝ եւ

փախան Լիկայոնացոց Լիւստրա եւ Դերբէ քա-
ղաքները եւ նորանց շրջակայքը, եւ այնտեղ
աւետարանում էին։
7 Եւ Լիւստրայումը մի մարդ՝ ոտներով տկար՝
նստած էր, որ իր մօր փորիցը կաղ էր ծնուած,
8 եւ երբէք ման եկած չէր։ Սա լսեց Պօղոսի խօս-
քերը. նա էլ նորա վերայ նայեց, եւ երբոր տե-
9 սաւ թէ հաւատք ունի փրկուելու, Մեծ ձայնով
ասաց. Ոտներիդ վերայ ուղիղ կանգնիր. եւ նա
10 վազում էր եւ ման էր գալիս։ Եւ ժողովուրդը
Պօղոսի արածը տեսնելով, իրանց ձայնը բարձ-
րացրին Լիկայոներէն՝ եւ ասացին. Աստուածնե-
րը մարդկանց նման եղած վայր եկան մեզ մօտ։
11 Եւ Բառնաբասին Դիոս էին կոչում, եւ Պօղոսին
Հերմէս. որովհետեւ նա էր խօսքի առաջնորդը։
12 Բայց Դիոսի քահանան՝ որ քաղաքի առջեւ կար,
արջառներ եւ պսակներ բերաւ դռների մօտ եւ
այն բազմութեան հետ՝ կամենում էր զոհ մոր-
13 թել։ Եւ երբոր Բառնաբաս եւ Պօղոս առաք-
եալները լսեցին, իրանց հանդերձները պատա-
ռած՝ ամբոխի մէջ վազեցին. մեծ ձայնով կան-
14 չում էին, Եւ ասում. Մարդիկ այդ ի՞նչ էք ան-
ում. մենք էլ ձեզ նման կարօտութիւն ունեցող
մարդիկ ենք. որ աւետարանում ենք ձեզ՝ այդ-
պիսի ունայն բաներից ետ դառնալ դէպի կեն-
դանի Աստուածը. որ ստեղծեց երկինքն եւ եր-
կիրը եւ ծովը՝ եւ ամեն ինչ որ նորանց մէջ է։
15 Որ անցած դարերումը թոյլ տուաւ ամեն հե-
թանոսներին՝ որ իրանց ճանապարհներովը գնան.
16 Թէպէտեւ ինքն իրան առանց վկայութեան չթո-
ղեց, բարերարութիւն անելով երկնքիցը տուաւ
ձեզ անձրեւներ եւ պտղաբեր ժամանակներ, կե-

րակուրներով եւ ուրախութիւնով ձեր սրտերը
17 լցնելով։ Եւ այս ասելով՝ հազիւ թէ ժողովուրդ-
ները դադարեցրին որ զոհ չմորթեն իրանց հա-
մար։
18 Եւ Անտիոքից եւ Իկոնիոնից Հրէաներ եկան՝
ժողովուրդներին համոզեցին եւ Պօղոսին քարկոծ
անելով՝ քաղաքիցը դուրս քաշեցին, եւ կար-
19 ծում էին թէ մեռած է։ Եւ երբոր աշակերտնե-
րը նորան շրջապատեցին, վերկացաւ մտաւ քա-
ղաքը. եւ հետեւեալ օրը Բառնաբասին հետ
20 դուրս եկաւ գնաց Դերբէ։ Այն քաղաքումն էլ
աւետարանեցին, եւ շատերին աշակերտ շինե-
ցին. եւ ապա ետ դարձան Լիւստրա՝ եւ Իկո-
21 նիոն՝ եւ Անտիոք. Աշակերտների սրտերը հաս-
տատեցին, եւ յորդորեցին որ հաստատ կենան
հաւատքի մէջ. եւ թէ շատ նեղութիւններով
պէտք է մեզ մտնել Աստուծոյ արքայութիւնը։
22 Նորանց ամեն մէկ եկեղեցիների համար երէցներ
ձեռնադրեցին. աղօթք արին ծոմ պահելով, եւ
նորանց յանձնեցին այն Տիրոջը որին հաւատա-
23 ցել էին։ Եւ Պիսիդիայի մէջ ման գալով եկան
24 Պամփիլիայ։ Եւ երբոր Պերգէի մէջ Տիրոջ խօս-
25 քը խօսեցին, իջան Ատտալիա։ Եւ այնտեղից
նաւով գնացին Անտիոք, որ այնտեղից Աստու-
ծոյ շնորհքին յանձնուած էին՝ այն գործի համար՝
26 որ կատարեցին։ Եւ երբոր եկան՝ ժողովեցին ե-
կեղեցին պատմեցին ինչ որ Աստուած արաւ ի-
րանց հետ. եւ թէ նա հեթանոսների համար հա-
27 ւատքի դուռը բացաւ։ Եւ շատ ժամանակ այն-
տեղ մնացին աշակերտների հետ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ Հրէաստանից ոմանք իջել էին, եղբայրներին
սովորեցնում էին որ եթէ չթլփատուիք Մովսէսի
2 օրէնքի պէս, չէք կարող փրկուել։ Եւ Պօղոս
եւ Բառնաբաս նորանց հետ բաւական հակա-
ռակութիւն եւ վէճ անելուց յետոյ. վճռեցին որ
Պօղոս եւ Բառնաբաս եւ նորանցից մի քանիսն
այն խնդրի համար վեր գնան Երուսաղէմ առաք-
3 եալների եւ երէցների մօտ։ Նորանք էլ եկեղե-
ցուցը ճանապարհ դցուեցան, եւ Փիւնիկէի եւ
Սամարիայի միջովը անցնելով պատմում էին հե-
թանոսների դառնալը, եւ մեծ ուրախութիւն է-
4 ին անում բոլոր եղբայրներին։ Եւ երբոր հասան
Երուսաղէմ, եկեղեցուցն եւ առաքեալներիցն եւ
երէցներիցն ընդունուեցան, եւ պատմեցին ինչ
5 բաներ որ Աստուած իրանց հետ արաւ։ Փարի-
սեցոց հերձուածից մի քանի հաւատացեալներ
վերկացան եւ ասում էին, թէ Պէտք է թլփա-
տել դորանց եւ պատուիրել որ Մովսէսի օրէնքը
պահեն։
6 Եւ առաքեալներն եւ երէցներն ժողովուե-
7 ցան, որ տեսնեն այս բանի համար։ Եւ շատ
քննութիւն լինելուց յետոյ Պետրոսը վերկացաւ
եւ նորանց ասաց. Մարդիկ եղբարք, դուք գի-
տէք, որ առաջին օրերից ձեր միջումն Աստ-
ուած ընտրեց որ իմ բերանովը հեթանոսներն
8 աւետարանի խօսքը լսեն եւ հաւատան։ Եւ
սրտագէտն Աստուած վկայութիւն տուաւ նո-
րանց, Սուրբ Հոգին տալով նորանց ինչպէս եւ
9 մեզ։ Եւ ոչինչ խտրութիւն չարաւ նորանց եւ
մեր մէջ, հաւատքով սրբելով նորանց սրտերը։

10 Եւ հիմա ինչո՞ւ էք Աստուծոյն փորձում, որ մի
լուծ դնէք աշակերտների վզի վերայ, որ ոչ մեր
11 հարքը՝ եւ ոչ մենք կարողացինք տանել։ Այլ
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը հաւատում
ենք ապրել, ինչպէս նորանք էլ։
12 Եւ բոլոր բազմութիւնը լռեց, եւ լսում էին
Բառնաբասին եւ Պօղոսին որ պատմում էին թէ
Աստուած որչափ նշաններ եւ հրաշքներ արաւ
13 նորանց ձեռքովը հեթանոսների մէջ։ Եւ երբոր
նորանք լռեցին, Յակոբոսը պատասխանեց եւ ա-
14 սաց. Մարդիկ եղբարք, ինձ լսեցէք. Սիմօնը
պատմեց, թէ ինչպէս Աստուած առաջուց այց
արաւ, որ հեթանոսներիցը ժողովուրդ առնէ իր
15 անուան համար։ Եւ սորա հետ միաբանվում են
մարգարէների խօսքերը. ինչպէս էլ գրուած է.
16 Սորանից յետոյ կ'դառնամ՝ եւ Դաւթի վայր ըն-
կած բնակարանը կ'շինեմ, եւ նորա քանդուած-
ները նոր կ'շինեմ՝ եւ կ'կանգնեցնեմ նորան.
17 Որ մարդկանց մնացածները Տիրոջը խնդրեն.
եւ այն բոլոր հեթանոսներն՝ որոնց վերայ իմ
անունը կոչուած է, ասում է Տէրը. նա որ այս
18 բոլորն անում է։ Յաւիտենից հետէ յայտնի է
19 Տիրոջը իր բոլոր գործքերը։ Նորա համար ես
էլ յարմար եմ համարում, նեղութիւն չտալ նո-
րանց՝ որ հեթանոսներիցն են դառնում դէպի
20 Աստուած։ Բայց որ թուղթ գրուի նորանց, որ
յետ քաշուին կուռքերի կերակուրներից, եւ պո-
ռնկութիւնից, եւ խեղդուածից եւ արիւնից։
21 Վասն զի Մովսէս առաջին դարերից հետէ ամեն
քաղաքներում իրան քարոզիչներն ունի եւ ժո-
ղովարանների մէջ ամեն շաբաթ օր կարդաց-
վում է։

22 Այն ժամանակ հաճոյ երեւեցաւ առաքեալնե-
րին եւ երէցներին բոլոր եկեղեցու հետ, որ ի-
րանցից ընտրուած մարդիկ ուղարկեն Անտիոք՝
Պօղոսի եւ Բառնաբասի հետ, Բարսաբայ կոչ-
ուած Յուդային, եւ Շիղային՝ որ գլխաւոր մար-
23 դիկ էին եղբարց մէջ։ Եւ նորանց ձեռովը գրե-
ցին այս բանը.

Առաքեալներս եւ երէցներս եւ եղբայրներս,
Անտիոքի եւ Սուրիայի եւ Կիլիկիայի մէջ լինող
24 եղբայրներիդ՝ որ հեթանոսներից էք՝ ողջոյն։ Ո-
րովհետեւ լսեցինք, թէ ոմանք մեր միջից դուրս
գալով խռովեցրին ձեզ խօսքերով եւ ձեր անձնե-
րը խախտեցին, ասելով թէ պէտք է թլփատուիլ՝
եւ օրէնքը պահել. որոնց մենք չհրամայեցինք.
25 Մեզ միաբան ժողովուածներիս հաճոյ երեւեցաւ,
որ ընտրուած մարդիկ ուղարկենք ձեզ մօտ մեր
26 սիրելիների՝ Բառնաբասի եւ Պօղոսի հետ։ Այն-
պիսի մարդիկ, որ իրանց անձները նուիրած են
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անուան համար։
27 Արդ Յուդային եւ Շիղային ուղարկեցինք. որ
28 իրանք էլ խօսքով միեւնոյն բանը պատմեն։ Քան-
զի Սուրբ Հոգուն եւ մեզ հաճոյ երեւեցաւ, ա-
ւելի ոչինչ բեռը չդնել ձեզ վերայ այս հարկա-
29 ւոր բաներից ջոկ. Որ հեռու կենաք կուռքի զոհ-
ուածից եւ արիւնից՝ եւ խեղդուածից՝ եւ պո-
ռնկութիւնից. որ սորանցից ձեր անձները պա-
հելով լաւ կ'անէք. ողջ կ'ացէք։

30 Եւ նորանք արձակուեցան՝ եկան Անտիոք, եւ
ժողովուրդը հաւաքեցին՝ եւ թուղթը տուին։
31 Եւ կարդալով ուրախացան այն մխիթարութեան
32 վերայ։ Եւ Յուդան եւ Շիղան, որովհետեւ նո-
րանք էլ մարգարէք էին, շատ խօսքերով մխի-

33 թարեցին եւ հաստատեցին եղբայրներին։ Եւ մի
ժամանակ այն տեղ կենալուց յետոյ, եղբայրների-
ցը խաղաղութիւնով արձակուեցան դէպի առաք-
34 եալները։ Եւ Շիղային հաճոյ երեւեցաւ՝ այն տեղ
35 մնալ։ Բայց Պօղոս եւ Բառնաբաս Անտիոքի մէջ
ման էին գալիս, եւ Տիրոջ խօսքը շատ ուրիշ
բաների հետ սովորեցնում էին եւ աւետարա-
նում։

36 Բայց մի քանի օրերից յետոյ Պօղոս ասաց
Բառնաբասին. Դառնանք եւ այցելութիւն անենք
մեր եղբայրներին ամեն քաղաքներում, որոնց
մէջ Տիրոջ խօսքը քարոզեցինք, տեսնենք թէ ինչ-
37 պէս են։ Եւ Բառնաբասը կամենում էր Մարկոս
38 կոչուած Յօհաննէսին էլ վեր առնել։ Բայց Պօ-
ղոսն արժան էր համարում, որ Պամփիւլիայի մէջ
իրանցից ջոկուածին, եւ նորանց հետ գործի մէջ
39 չեկածին իրանց հետ չառնեն։ Եւ այսպէս գըժ-
տութիւն եղաւ, մինչեւ որ ջոկուեցան իրարից.
Բառնաբասը Մարկոսին առաւ որ նաւով գնայ
40 Կիպրոս։ Եւ Պօղոսը Շիղային ընտրեց ճանա-
պարհ ելաւ, եղբայրներիցն Աստուծոյ շնորհքին
41 յանձնուած։ Եւ Սուրիայի եւ Կիլիկիայի կողմերը
ման էր գալիս, եւ եկեղեցիները հաստատում էր։

Գլ. ԺԶ

1 Եւ եկաւ հասաւ Դերբէ եւ Լիւստրա. եւ ահա
մէկ աշակերտ կար այն տեղ՝ անունը Տիմոթէոս.
որ մի հաւատացեալ Հրէայ կնոջ՝ եւ Յոյն հօր
2 որդի էր։ Որ բարի վկայութիւն ունէր Լիւստ-
3 րացի եւ Իկոնիացի եղբայրներիցը։ Պօղոսը կա-
մեցաւ, որ սա գնայ իր հետ. եւ առաւ թլփա-

տեց նորան՝ այն տեղերումը լինող Հրէաների
պատճառովը, վասն զի ամենքը գիտէին որ նո֊
4 րա հայրն Յոյն էր։ Եւ երբոր անցնում էին այն
քաղաքներովը, աւանդում էին նորանց պահել
այն հրամանները, որ Երուսաղէմումն լինող ա֊
ռաքեալներից և երէցներից պատուիրուած
5 էին։ Եւ եկեղեցիները հաւատքով հաստատվում
էին, և օրէ ցօր թւով աւելանում էին։

6 Եւ Փռիւգիան և Գաղատացոց երկիրը ման
եկան, Սուրբ Հոգուցն արգելուելով որ Ասիայի
7 մէջ Աստուծոյ խօսքը չխօսեն։ Երբոր եկան Միւ֊
սիայի կողմերը, ջանք էին անում որ գնան դէպի
Բիւթանիա, և Հոգին թոյլ չտուաւ նորանց։
8 Եւ Միւսիայովն անցնելով իջան Տրովադա։ (9) Եւ
գիշերումը տեսիլք երեւեցաւ Պօղոսին. մէկ Մա֊
կեդոնացի մարդ կանգնած էր, աղաչում էր նո֊
րան՝ և ասում. Անցիր Մակեդոնիա՝ և օգնիր
10 մեզ։ Եւ երբոր տեսաւ տեսիլքը, չուտով ուզե֊
ցինք դուրս գալ Մակեդոնիա. հասկանալով որ
Տէրն է հրաւիրել մեզ, որ աւետարանենք նո֊
րանց։

11 Տրովադայից դուրս եկած՝ ուղիղ գնացինք Սա֊
12 մոթրակէ. և հետեւեալ օրը Նէապօլիս. Եւ այն
տեղից Փիլիպպէ, որ Մակեդոնացոց բաժնի ա֊
ռաջինն է՝ Կոլոնիա քաղաք. և մենք քաղա֊
13 քումը մի քանի օր մնացինք, Եւ շաբաթ օրը
քաղաքիցը դուրս գնացինք դէպի գետը, ուր սո֊
վոր էին աղօթք անելու. և նստած խօսում է֊
14 ինք ժողովուած կանանց հետ։ Եւ մի կին՝ անու֊
նը Լիդիա՝ ծիրանավաճառ, Թիւատիր քաղաքի֊
ցը, աստուածավախ, լսեց. որի սիրտը Տէրը բա֊
15 ցաւ, որ Պօղոսի խօսածներին մտիկ անէ։ Եւ

երբոր նա և իր տունը մկրտուեցաւ, աղաչեց
ասելով. Եթէ ինձ Տիրոջը հաւատացած համա֊
րէք, մտէք իմ տունը՝ մնացէք, և բռնադատեց
տարաւ մեզ։

16 Եղաւ որ մենք աղօթքի գնալիս, մի աղախին
պատահեց մեզ՝ որ կախարդութեան ոգի ունէր,
որ կախարդութիւնովն իր տէրերին շատ շահ էր
17 բերում։ Սա Պօղոսի և մեր ետեւից ընկած՝
աղաղակում էր և ասում. Այս մարդիկը Բարձ֊
րեալ Աստուծոյ ծառաներն են, որ ձեզ պատ֊
18 մում են փրկութեան ճանապարհը։ Եւ շատ օ֊
րեր այս բանն անում էր. Պօղոսն էլ զայրացած
յետ դարձաւ և ասաց այն ոգուն. Յիսուսի Քրիս֊
տոսի անունովը պատուիրում եմ քեզ, Դուրս
եկ դորանից. և նոյն ժամումը դուրս եկաւ։
19 Եւ երբոր նորա տէրերը տեսան, թէ իրանց շահի
յոյսը կորուեցաւ, Պօղոսին և Շիղային առին՝
20 քաշեցին հրապարակն իշխանների մօտ։ Եւ նո֊
րանց տարան զօրագլուխների մօտ և ասացին.
Այս մարդիկը խռովեցնում են մեր քաղաքը՝ ի֊
21 րանք Հրէաներ լինելով. Եւ այնպիսի սովորու֊
թիւններ են քարոզում, որ մեզ արժան չէ ըն֊
22 դունել, և ոչ էլ անել. որ Հռոմայեցի ենք։ Եւ
ամբոխը կիտուեցաւ նորանց վերայ. և զօրա֊
գլուխները նորանց հանդերձները հանեցին, և
23 հրաման տուին որ ծեծեն։ Եւ նորանց շատ խո֊
ցեր տալուց յետոյ բանտը գցեցին, բանտապե֊
տին պատուիրելով, որ նորանց զգուշութեամբ
24 պահէ։ Նա էլ այն պատուէրն առած, նորանց
ներսի բանտը գցեց. և նորանց ոտները պնդաց֊
րեց կոճղումը։

25 Եւ կէս գիշերին Պօղոս և Շիղան աղօթք ա֊

նելով օրհնում էին Աստուծոյն. եւ բանտարկ-
26 ուածներն էլ նորանց ականջ էին դնում։ Եւ
յանկարծակի մեծ շարժ եղաւ՝ մինչեւ որ բանտի
հիմունքներն էլ շարժվում էին. եւ իսկոյն բոլոր
դուռները բացուեցան, եւ ամէնքի կապանքներն
27 արձակուեցան։ Երբոր բանտապետն էլ զարթ-
նելով տեսաւ բանտի դուռները բացուած, սուրը
քաշեց՝ եւ կամենում էր ինքն իրան սպանել.
վասն զի կարծում էր՝ թէ կապուածները փա-
28 խել են։ Եւ Պօղոսը մեծ ձայնով կանչեց եւ ա-
սաց. Անձիդ չար բան չանես, քանզի ամէնքս
29 այս տեղ ենք։ Ճրագ ուզեց եւ ներս վազեց. եւ
30 դողալով Պօղոսի եւ Շիղայի առջեւ ընկաւ։ Եւ
նորանց դուրս հանեց եւ ասաց. Տէրեր, ես ի՞նչ
31 պէտք է անեմ որ փրկուիմ։ Եւ նորանք ասա-
ցին. Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին եւ կը
32 փրկուիս դու՝ եւ քո տունը։ Եւ Տիրոջ խօսքը
խօսեցին նորան՝ եւ այն ամէնքին, որ նորա տանն
33 էին։ Եւ նորանց վեր առաւ գիշերի նոյն ժա-
մումը եւ խոցերից լուացաւ. եւ իսկոյն մկըր-
34 տուեցաւ ինքը՝ եւ նորա բոլոր ընտանիքը։ Եւ
նորանց տարաւ իր տունը, նորանց առջեւ սեղան
դրաւ. եւ ուրախ եղաւ բոլոր ընտանիքովն՝ Աս-
35 տուծոյն հաւատալով։ Եւ երբոր լուսացաւ, զօ-
րագլուխները նուիրակներին ուղարկեցին եւ ա-
36 սացին. Արձակիր այն մարդկանցը։ Եւ բանտա-
պետն այս խօսքերը պատմեց Պօղոսին, թէ Զօ-
րագլուխներն ուղարկեցին՝ որ արձակուիք. ու-
րեմն հիմա դուրս եկէք, գնացէք խաղաղութեամբ։
37 Բայց Պօղոս ասաց նորանց. Հրապարակաւ ծե-
ծեցին մեզ՝ անմեղներիս որ Հռօմայեցի մարդիկ
ենք, եւ բանտը գցեցին. եւ հիմա մեզ թաքո՞ւն

են հանում. ոչ. այլ թող իրանք գան մեզ հա-
38 նեն։ Եւ նուիրակներն այն խօսքերը պատմեցին
զօրագլուխներին. եւ նորանք վախեցան՝ երբոր
լսեցին թէ Հռօմայեցի են. եւ եկան աղաչեցին
39 նորանց։ Եւ երբոր հանեցին, խնդրում էին որ
40 քաղաքիցը գնան։ Եւ բանտիցը դուրս եկան՝
մտան Լիդիայի տունը. եւ եղբայրներին տեսնե-
լով, նորանց մխիթարեցին եւ գնացին։

Գլ. ԺԷ

1 Եւ Ամփիպօլիսի եւ Ապողոնիայի միջովը ման
գալով՝ եկան Թեսաղոնիկէ, ուր էր Հրէից ժո-
2 ղովարանը։ Եւ Պօղոսը իր սովորութեան պէս
մտաւ նորանց մօտ, եւ երեք շաբաթ օրեր նո-
3 րանց հետ խօսեց գրքերիցը. Բաց էր անում՝ եւ
առջեւնին դնում, թէ պէտք էր՝ Քրիստոսը չար-
չարուէր՝ եւ մեռելներիցը յարութիւն առնէր. եւ
թէ Քրիստոսը այս Յիսուսն է որ ես պատմում
4 եմ ձեզ։ Եւ նորանցից ոմանք հաւատացին, եւ
Պօղոսի եւ Շիղայի հետ միացան. եւ աստուա-
ծապաշտ Յոյներից էլ շատ բազմութիւն, եւ գըլ-
5 խաւոր կանանցից էլ ոչ սակաւ։ Բայց չհաւա-
տացող Հրէաները նախանձելով եւ փողոցից մի
քանի անպիտան մարդիկ առնելով ամբոխ արին
եւ քաղաքի մէջ շփոթութիւն շինեցին. եւ Յա-
սոնի տան մօտ հաւաքուած՝ ուզում էին, որ նո-
6 րանց տանեն հրապարակը։ Եւ երբոր չգտան նո-
րանց՝ Յասոնին եւ մի քանի եղբայրներին քաշե-
լով տանում էին քաղաքապետների մօտ, եւ սաս-
տիկ աղաղակում՝ թէ այս աշխարհքը շփոթեց-
7 նողներն այս տեղ էլ հասան. Որոնց Յասոնն ըն-

դունել է. եւ սրանք ամէնքը կայսեր հրաման-
ներին հակառակ են գործում. ասելով թէ մի ու-
8 րիշն է թագաւոր՝ Յիսուսը։ Եւ շփոթեցրին ժո-
ղովուրդին եւ քաղաքապետներին, որ լսում էին
9 այս բաները։ Եւ Յասոնիցն ու ուրիշներիցն ե-
րաշխաւորութիւն առին, եւ նրանց արձակե-
10 ցին։ Բայց եղբայրները Պօղոսին եւ Շիղային
շուտով գիշերանց ճանապարհ դցեցին դէպի Բե-
րիա. որ երբոր այն տեղ հասան, գնացին Հրէից
11 ժողովարանը։ Բայց սրանք աւելի ազնիւ էին
քան նրանք՝ որ Թեսաղոնիկէումն էին, որ խօս-
քը բոլոր յօժարութեամբ ընդունեցին. ամէն օր
գրքերը քննում էին, թէ այս բաները այսպէ՞ս է։
12 Եւ նրանցից շատերը հաւատացին. եւ Յոյն
պարկեշտ կանանցից եւ մարդկանցից էլ ոչ սա-
13 կաւ։ Բայց երբոր Թեսաղոնիկէի Հրէաները գի-
տացին, թէ Բերիայի մէջ էլ Աստուծոյ խօսքը
պատմուեցաւ Պօղոսից, այն տեղ էլ եկան ժո-
14 ղովուրդները դրդելով։ Այն ժամանակ եղբայր-
ները Պօղոսին շուտով ուղարկեցին՝ որ մինչեւ
ծովը գնայ. եւ Շիղան եւ Տիմօթէոսն այն տեղ
15 մնացին։ Եւ Պօղոսին տանողները նրան մինչեւ
Աթէնք տարան. եւ պատուէր առնելով Շիղայի
եւ Տիմօթէոսի համար՝ որ շուտով գան նրա
մօտ, գնացին։
16 Եւ երբոր Պօղոսն Աթէնքումը նրանց սպա-
սում էր, նրա հոգին սաստիկ զայրանում էր ի-
րանում որ տեսնում էր քաղաքը կուռքերով լի-
17 քը։ Եւ խօսում էր ժողովարանումը Հրէաների
եւ աստուածպաշտների հետ եւ փողոցումն ա-
18 մէն օր պատահողների հետ։ Եպիկուրեան եւ
Ստոյիկեան փիլիսոփաներից ոմանք նրա հետ

հակառակում էին. եւ ոմանք ասում էին. Այս
սերմանաքաղն ի՞նչ է ուզում ասել. բայց ու-
րիշներն էլ. Երեւում է, որ օտար աստուածնե-
րի քարոզիչ է. որովհետեւ Յիսուս եւ յարու-
19 թիւն էր աւետարանում։ Եւ առին նրան տա-
րան Արիսպագոսն՝ ասելով. Կարո՞ղ ենք իմա-
նալ, թէ ինչ է քո այդ խօսած նոր վարդապե-
20 տութիւնը. Վասն զի մի օտար բան ես բերում
մեր ականջներին. հիմա կամենում ենք իմանալ՝
21 թէ սա ինչ բան պիտի լինի։ Վասն զի բոլոր
Աթենացիք եւ այն տեղ կենող օտարները՝ ուրիշ
ոչ մի բանի չէին պարապում, բայց միայն նոր
բան ասել կամ լսել։
22 Պօղոս էլ կանգնեց Արիսպագոսի միջին եւ ա-
սաց. Ով Աթենացի մարդիկ, ես ձեզ ըստ ամե-
23 նայնի կրօնասէր եմ տեսնում. Քանզի ման գա-
լիս եւ ձեր պաշտամունքներին մտիկ տալիս, մի
սեղան էլ գտայ, որի վերայ գրած էր, ԱՆԾԱ-
ՆՕԹ ԱՍՏՈՒԾՈՅՆ. այն որ դուք առանց ճա-
նաչելու պաշտում էք. ես նրան եմ պատմում
24 ձեզ։ Այն Աստուածն, որ աշխարհքս եւ ամէն
բան՝ որ նրանում կայ՝ արաւ, նա երկնքի եւ
երկրիս Տէրը լինելով ձեռագործ տաճարներում
25 չէ բնակւում։ Եւ ոչ էլ մարդկանց ձեռքով է
պաշտվում իբր թէ մի բանի կարօտ. նա է ամե-
26 նի կեանք եւ շունչ՝ եւ ամէն բան տուողը։ Եւ
նա մէկ արիւնից մարդկանց բոլոր ազգերն արաւ,
որ երկրի բոլոր երեսի վերայ բնակեն. որոշուած
ժամանակներ եւ նրանց բնակութեան սահման-
27 ները հաստատեց որ Աստուծոյն խնդրեն. Որ
լինի թէ զննեն նրան եւ գտնեն. թէ եւ ինքը
28 հեռու չէ մեր ամէն մէկիցը։ Վասն զի մենք նո-

բանով ենք ապրում եւ շարժվում եւ կանք. ինչ-
պէս ձեր բանաստեղծներից ոմանք էլ ասացին.
29 Թէ Նորա ազգիցն էլ ենք։ Արդ որովհետեւ Ա-
ստուծոյ ազգիցն ենք, պէտք չէ համարենք թէ
Աստուածութիւնը նման լինի ոսկու կամ արծա-
թի կամ քարի՝ մարդու վարպետութեամբ եւ
30 մտքով քանդակուած։ Բայց Աստուած անգիտու-
թեան ժամանակներին անտես անելով, հիմա մարդ-
կանց պատուիրում է, ամենքին ամեն տեղ ապաշ-
31 խարել։ Վասն զի մէկ օր հաստատեց որ նորանում
աշխարհքս արդարութեամբ պիտի դատէ այն
մարդու ձեռովն, որ սահմանեց նորանով ա-
մենքին հաւատք տալ, որին մեռելներից յարոյց։
32 Երբոր լսեցին մեռելների յարութիւնը, ոմանք
ծաղր էին անում. ոմանք էլ ասում. Այդ բանի
33 համար քեզանից դարձեալ կլսենք։ Եւ այսպէս
34 Պօղոս նորանց միջիցը դուրս եկաւ։ Բայց մի
քանի մարդիկ նորա կողմն անցնելով հաւատա-
ցին, որոց հետ էր Դիոնէսիոս Արիսպագացին,
եւ մի կին՝ անունը Դամարիս, եւ ուրիշներ ալ
անոնց հետ։

Գլ. ԺԸ

1 Սորանից յետոյ Պօղոս Աթենացիներից բաժան-
2 ուեց եկաւ Կորնթոս։ Եւ մի Հրէայ գտաւ՝ ա-
նունը Ակիւղաս, ազգով Պոնտացի, եւ նորա
Պրիսկիղա կինն էլ, Իտալիայից նոր եկած, Կղօ-
դիայի հրամանի համեմատ՝ որ բոլոր Հրէաները
3 Հռօմից հեռանան. եւ նորանց մօտ գնաց։ Եւ
որովհետեւ արհեստակից էր, մնաց նորանց մօտ
եւ բան էր անում. վասն զի արհեստով խորա-

4 նակար էին։ Եւ խօսում էր ժողովարանումն ա-
մեն շաբաթ օր եւ Հրէաներին եւ Յոյներին հա-
5 մոզում էր։ Եւ երբոր Շիղան եւ Տիմօթէոսն
իջան Մակեդոնիայից, Պօղոսը հոգովը վառվում
էր վկայելով Հրէաներին թէ Յիսուսն է Քրիստոսը։
6 Եւ երբ որ նորանք հակառակում էին եւ հայհո-
յում, հանդերձները թօթափեց եւ ասաց նո-
րանց. Ձեր արիւնը ձեր գլուխը, ես անպարտ
7 եմ, այսուհետեւ հեթանոսներին եմ գնում։ Եւ
այն տեղից գնաց մտաւ մէկի տունն՝ որի անու-
նը Յուստոս էր, մի աստուածապաշտ մարդ, որ
8 նորա տունը ժողովարանի կից էր։ Կրիսպոս
ժողովրդապետը հաւատաց Տիրոջն իր բոլոր
տունովը. եւ Կորնթացիներից շատերը երբոր
9 լսեցին՝ հաւատացին եւ մկրտուեցան։ Եւ Տէրն
ասաց գիշերումը տեսիլքով Պօղոսին, Մի վա-
10 խենար՝ այլ խօսիր՝ եւ լուռ մի կենար։ Վասն զի
ես քեզ հետ եմ, եւ ոչ ով քեզ դէմ չի կենալ՝
քեզ վնասելու. քանզի ես շատ ժողովուրդ ու-
11 նիմ այս քաղաքումը։ Եւ այն տեղ մէկ տարի եւ
վեց ամիս նստեց՝ եւ նորանց սովորեցնում էր
Աստուծոյ խօսքը։
12 Եւ երբոր Գալլիոսը բդեշխի փոխանորդ էր
Աքայիայում, Հրէաները միաբան վեր կացան
13 Պօղոսի վերայ, եւ նորան տարան ատեանը. Ա-
սելով, թէ Սա օրինաց հակառակ հրապուրում է
14 մարդկանց Աստուած պաշտել։ Եւ երբոր Պօղոսն
իր բերանը ուզում էր բանալ, Գալլիոն Հրէա-
ներին ասաց. Ով Հրէաներ, եթէ մի անիրաւու-
թիւն կամ մի չար նենգութիւն լինէր, ինձ ար-
15 ժան էր որ լսէի։ Բայց եթէ խնդիրը խօսքի եւ
անունների եւ ձեր օրէնքի համար է. դուք

խնդիրդ տեսէք. վասն զի այդպիսի բաների դա-
16 տաւոր չեմ ուզում լինել։ Եւ նորանց հանեց
17 դատաստանիցը։ Եւ բոլոր Յոյները Սոսթենէս
ժողովրդապետին բռնեցին եւ ատեանի առջեւը
ծեծում էին. եւ Գալլիոն սորանց համար ոչինչ
հոգս չէր անում։
18 Բայց Պօղոսը տակաւին շատ օրեր մնալուց
յետոյ, եղբայրներիցը հրաժարուելով, նաւով
գնում էր դէպի Ասորիք, եւ Պրիսկիղան եւ Ա-
կիւղան նորա հետ, Կենքրայումը գլուխը խու-
19 զեց. վասն զի ուխտ ունէր։ Եւ երբոր հասաւ
Եփեսոս, նորանց այն տեղ թողեց. եւ ինքը ժո-
ղովարանը մտնելով Հրէաների հետ խօսում էր.
20 Եւ երբոր նորանք աղաչում էին նորան՝ որ շատ
21 ժամանակ այն տեղ մնայ, յանձն չառաւ։ Բայց
նորանցից հրաժարեց եւ ասաց. Անպատճառ
պէտք է ես առաջիկայ տօնը Երուսաղէմումն
անեմ. Աստուծոյ կամքովը դարձեալ ձեզ մօտ
22 կ՚գամ. եւ Եփեսոսիցը վերկացաւ։ Եւ իջաւ
Կեսարիա, վեր ելաւ, եւ բարեւ տուաւ եկեղե-
23 ցուն, եւ վայր եկաւ Անտիոք։ Եւ այն տեղ մի
առ ժամանակ մնալուց յետոյ, դուրս եկաւ՝ որ
կարգով ման գայ Գաղատացոց աշխարհքումն
եւ Փռիւգիայումը, բոլոր աշակերտները հաս-
տատելով։
24 Եւ մի Հրէայ՝ անունը Ապողոս, ազգով Աղէք-
սանդրացի, ճարտարախօս մարդ՝ եկաւ հասաւ
25 Եփեսոս, որ զօրաւոր էր Գրքերովը։ Սա Տիրոջ
ճանապարհին տեղեկացած էր, եւ հոգով վառ-
ուած՝ Տիրոջ համար խօսում էր՝ եւ ստոյգ սո-
վորեցնում էր. բայց միայն Յօհաննէսի մկրտու-
26 թիւնն էր գիտում։ Սա սկսեց ժողովարանումը

համարձակ խօսել. եւ երբոր Ակիւղան եւ Պրիս-
կիղան նորանից լսեցին, նորան իրանց մօտ ա-
ռին, եւ էլ աւելի ստոյգ Աստուծոյ ճանապարհն
27 բացատրեցին նորան։ Եւ երբոր նա կամեցաւ
գնալ Աքայիա, եղբայրները քաջալերելով գրե-
ցին աշակերտներին, որ նորան ընդունեն. երբոր
նա այն տեղ հասաւ, հաւատացեալներին շատ
28 օգնութիւն էր տալիս շնորհքի ձեռովն։ Վասն զի
խիստ սաստիկ յանդիմանում էր Հրէաներին
հրապարակաւ գրքերիցը ցոյց տալով, թէ Քրիս-
տոսը Յիսուսն է։

ԳԼ. ԺԹ

1 Եւ եղաւ որ Ապողոսը Կորնթոսումն եղած ժա-
մանակ, Պօղոսը որ վերի կողմերումն ման էր
եկել՝ եկաւ Եփեսոս. եւ մի քանի աշակերտներ
2 գտնելով՝ Ասաց նորանց. Արդեօք Սուրբ Հոգին
ընդունեցի՞ք՝ երբոր հաւատացիք. նորանք ա-
սացին նորան. Մենք չենք էլ լսել, թէ Սուրբ
3 Հոգի կայ։ Եւ ասաց նորանց. Ապա ինչո՞վ
մկրտուեցաք. նորանք էլ ասացին. Յօհաննէսի
4 մկրտութիւնովը։ Եւ Պօղոսն ասաց. Յօհաննէսը
ժողովրդին ապաշխարութեան մկրտութիւնովն
էր մկրտում եւ ասում, թէ Նա՝ որ նորա ե-
տեւից պիտի գայ, նորան հաւատան. այսինքն
5 է՝ Քրիստոս Յիսուսին։ Եւ երբոր լսեցին, Տէր
6 Յիսուսի անունովը մկրտուեցան։ Եւ երբոր
Պօղոսը ձեռք դրաւ նորանց վերայ, Սուրբ Հո-
գին եկաւ նորանց վերայ. եւ լեզուներ էին խօ-
7 սում եւ մարգարէանում։ Եւ ամէնքը տասներ-
8 կու մարդու չափ էին։ Եւ ժողովարանի մէջ

մտած երեք ամիս համարձակ խօսում էր . եւ
Աստուծոյ արքայութեան մասին համոզում էր ։
9 Եւ երբոր մի քանիսը յամառում էին եւ ընդդի-
մանում այն ճանապարհը բամբասելով բազմու-
թեան առջեւ, նա բաժանուեցաւ նորանցից՝ եւ
աշակերտներին ջոկեց . եւ ամեն օր խօսում էր
10 մի Տիւրանի ժողովարանումը ։ Եւ այս եղաւ մի
երկու տարի, մինչեւ որ Ասիայի բոլոր բնակիչ-
ները՝ Հրէաները եւ Յոյները Տիրոջ խօսքը լսե-
11 ցին ։ Եւ Աստուած ոչ սակաւ զօրութիւններ
12 էր անում Պօղոսի ձեռքովը ։ Մինչեւ որ նորա
մարմնի վերայից թաշկինակներ եւ վարշամակ-
ներ տանում էին դնում հիւանդների վերայ եւ
ցաւերը հեռանում էին նորանցից , եւ չար ոգի-
13 ներ դուրս էին գալիս ։ Եւ թափառական Հրէա-
ներից ոմանք , որ երդմնեցուցիչ էին , համար-
ձակեցին Տէր Յիսուսի անունը կանչել չար ո-
գիներ ունեցողների վերայ՝ ասելով . Երդում ենք
տալիս ձեզ այն Յիսուսովը՝ որ Պօղոսը քարո-
14 զում է ։ Սկեւի Հրէայ քահանայապետի եօթն
15 որդիքն էին , որ այս անում էին ։ Չար ոգին
պատասխանեց եւ ասաց . Յիսուսին գիտում եմ,
եւ Պօղոսին ճանաչում եմ , բայց դուք ո՞վ էք ։
16 Եւ այն մարդն՝ որ նորանում չար ոգի կար՝ յար-
ձակելով նորանց վերայ բռնեց , նորանց յաղ-
թահարեց , մինչեւ որ մերկ եւ խոցուած այն
17 տանից փախան ։ Եւ այս յայտնի եղաւ բոլոր
Հրէաներին եւ Յոյներին , որ Եփեսոսումն բնա-
կած էին . եւ ահ ընկաւ նորանց ամենի վերայ .
18 եւ Տէր Յիսուսի անունը մեծանում էր ։ Եւ հա-
ւատացեալներից շատերը գալիս էին՝ խոստովա-
նում էին , եւ իրանց գործքերը պատմում էին ։

19 Եւ կախարդութեան հետեւողներից շատերը է-
րանց գրքերը բերում էին , եւ ամենի առջեւ այ-
րում էին . եւ նորանց գինը համարեցին՝ եւ
20 գտան յիսուն հազար արծաթի ։ Եւ այսպէս Տի-
րոջ խօսքը աճում էր եւ զօրանում ։
21 Եւ երբոր այս կատարուեցաւ , Պօղոսը միտքը
դրաւ՝ որ Մակեդոնիայի եւ Աքայիայի միջովն
անցնելով՝ գնայ Երուսաղէմ . ասելով՝ թէ Իմ
այն տեղ գնալուց յետոյ , պէտք է ինձ Հռոմ էլ
22 տեսնել ։ Եւ իր պաշտօնեաներից երկուսին՝
Տիմոթէոսին եւ Երաստոսին ուղարկեց Մակե-
դոնիա , եւ ինքը մի առ ժամանակ մնաց Ասիա-
23 յում ։ Եւ այն ժամանակ ոչ սակաւ խռովութիւն
24 եղաւ այն ճանապարհի համար ։ Վասն զի մի ար-
ծաթագործ՝ անունը Դեմետրիոս , Արտեմիս չ–+է
արծաթէ տաճարներ շինելով ոչ սակաւ շահ էր
25 տալիս վարպետներին . Որոնց հետ եւ այս ար-
հեստի բանուորներին ժողովեց եւ ասաց . Ո՛վ
մարդիկ , դուք ինքներդ գիտէք , որ այս գործից
26 է մեր շահը ։ Եւ տեսնում էք ու լսում էք՝ որ
այս Պօղոսը չէ թէ միայն Եփեսացիներից , բայց
համարեա թէ բոլոր Ասիացիներից շատ ժողո-
վուրդ համոզելով այն կողմը դարձրեց . որ ա-
սում է թէ Ձեռքով շինուածները աստուածներ
27 չեն ։ Եւ այս բանը ոչ թէ միայն մեր մասն է
վտանգի մէջ գցում որ անարգուի , բայց մեծ աս-
տուածուհու Արտեմեայի տաճարն էլ ոչինչի տեղ
է համարվում . եւ նորա մեծութիւնն էլ կ՚քան-
դուի , որին բոլոր Ասիան՝ եւ աշխարհքը պաշ-
28 տում է ։ Եւ այս լսելով՝ բարկութեամբ լցուե-
ցան եւ աղաղակում էին եւ ասում , Մեծ է Եփե-
29 սացոց Արտեմիսը ։ Եւ բոլոր քաղաքը շփոթու-

թիւնով լցուեցաւ . ամենքն էլ միասին վազեցին
թատրոնը՝ քաշելով Գայիոսին եւ Արիստարքոս
Մակեդոնացուն՝ Պօղոսի ճանապարհակիցներին ։
30 Բայց Պօղոսը երբոր կամեցաւ ամբոխի մէջ մըտ-
31 նել, աշակերտները չթողին նորան ։ Ասիայի գըլ-
խաւորներից ոմանք էլ, որ նորա բարեկամներն
էին, ուղարկեցին նորա մօտ՝ եւ աղաչում էին,
32 որ թատրոնի մէջ չգնայ ։ Եւ ամեն մէկը մի ու-
րիշ բան էր աղաղակում . քանզի ժողովքը խը-
ռովուած էր . եւ նորանցից շատերը չէին գի-
33 տում, թէ ինչո՞ւ համար են հաւաքուած ։ Եւ
այն բազմութեան միջից Աղէքսանդրոսին առաջ
բերին . եւ երբոր Հրէայք նորան առաջ քաշե-
ցին, Աղէքսանդրոսը ձեռն շարժեց՝ եւ կամե-
34 նում էր ամբոխին պատասխանել ։ Բայց երբոր
գիտացին՝ թէ Հրէայ է, ամէնքն էլ մէկ ձայնով
երկու ժամի չափ աղաղակում էին . թէ Մեծ է
35 Եփեսացոց Արտեմիսը ։ Բայց ատենադպիրը ամ-
բոխին հանդարտեցնելուց յետոյ, ասաց . Ո՛վ Ե-
փեսացի մարդիկ, ո՞վ է այն մարդն՝ որ չէ գի-
տում թէ Եփեսոս քաղաքը մեծ Արտեմիս աստ-
ուածուհու եւ Դիոպետի տաճարների պաշտօն-
36 եան է . Եւ որովհետեւ այդ անվիճելի կերպով
այդպէս է, պէտք է ձեզ հանդարտ կենաք եւ
37 յանդգնութեամբ բան չգործէք ։ Քանզի այդ
մարդկանցը բերիք այս տեղ, որ ոչ կռքի տուն
կողոպտողներ եւ ոչ ձեր աստուածոյն հայհոյանք
38 տուողներ են ։ Ուրեմն՝ եթէ Դեմետրիոսը եւ
նորա հետ լինող վարպետները մէկի հետ բան
ունին, ատեան կայ եւ փոխանակ բդեշխի կայ,
39 թող մի միանցից գանգատ անեն ։ Իսկ եթէ մի
ուրիշ բանի համար է ձեր խնդիրը, թող օրինա-

40 ւոր ժողովքում վճռուի ։ Քանզի մեզ էլ մեծ վը-
տանգ կայ այս օրուայ կռուի համար որ ամբաս-
տանուինք . որովհետեւ մի պատճառ չկայ, որ
այս ժողովքի համար կարող լինէինք պատասխան
տալ . եւ այս ասելով՝ ժողովուրդին արձակեց ։

Գլ. Ի

1 Եւ աղմուկը դադարելուց յետոյ՝ Պօղոսն աշա-
կերտներին կանչեց, եւ հրաժարական ողջոյն
տուաւ՝ եւ դուրս եկաւ որ գնայ Մակեդոնիա ։
2 Եւ այն կողմերը ման գալով եւ նորանց շատ խօս-
3 քերով մխիթարելով, եկաւ Եղլադա ։ Եւ երբոր
երեք ամիս կացաւ, Հրէաները նենգութեան խոր-
հուրդ արին նորա համար, երբոր կամենումէր
դուրս գալ Սիւրիա . նոյն էլ խորհուրդ արաւ՝ որ
4 Մակեդոնիայի միջովը յետ դառնայ ։ Եւ մինչեւ
Ասիա նորա հետ գնումէր Սոպատրոս Բերիացին .
եւ Թեսաղոնիկեցիներից Արիստարքոսն եւ Սե-
կունդոսը՝ եւ Գայիոս Դերբացին եւ Տիմոթէոսը,
5 եւ Ասիացիք՝ Տիւքիկոսն եւ Տրոփիմոսը ։ Սո-
րանք առաջ գնալով սպասում էին մեզ Տրոա-
6 դայումը ։ Եւ մենք բաղարջակերաց օրերիցն յե-
տոյ նաւով գնացինք Փիլիպպայիցն, եւ մինչեւ
հինգ օրն եկանք Տրոադա նորանց մօտ . ուր
եօթն օր դադարեցանք ։
7 Եւ միաշաբաթ օրը դեռ որ ժողովուած էինք
հաց կտրելու համար, Պօղոսը նորանց հետ խօ-
սումէր՝ քանզի հետեւեալ օրը գնալու էր . եւ
8 խօսքն երկարացրեց մինչեւ կէս գիշեր ։ Եւ շատ
լապտերներ կային այն վերնատանն, ուր որ մենք
9 ժողովուած էինք ։ Եւ Եւտիքոս անունով մի ե-

րիտասարդ պատուհանի վերայ նստած էր․ Պօ–
ղոսի երկար խօսելու ժամանակ խոր քնի մէջ էր
մտել․ Նա խոր քնով բռնուած տան երրորդ դըս–
տիկոնիցը վայր ընկաւ, եւ վեր առնուեցաւ մե–
10 ռած։ Եւ Պօղոսը իջաւ նորա վերայ ընկաւ․ եւ
գիրկն առնելով նորան՝ ասաց․ Մի չփոթուիք,
11 վասն զի հոգին իրանումն է։ Եւ վեր ելաւ հացը
կտրեց եւ կերաւ․ եւ շատ խօսեց մինչեւ առա–
12 ւօտը, եւ յետոյ դուրս ելաւ գնաց։ Եւ այն պա–
տանուն բերին կենդանի, եւ մխիթարուեցան
13 անչափ։ Իսկ մենք նաւը մտանք՝ գնացինք Ասօն․
որ Պօղոսին դարձեալ այն տեղից մեզ հետ առ–
նէինք․ վասն զի այնպէս էր պատուիրել՝ որով–
14 հետեւ ինքն ցամաքովն էր գնալու։ Եւ երբոր
Ասօնումն հանդիպեցաւ մեզ, վեր առինք նորան
15 եկանք Մետիլինէ։ Եւ այն տեղից նաւով գնա–
ցինք՝ հետեւեալ օրը եկանք Քիոսի դիմացը, եւ
միւս օրը հասանք Սամոս․ եւ Տրոգիլիոնումը մը–
16 նալով եւ հետեւեալ օրն եկանք Մելիտոս։ Քանզի
Պօղոսը որոշել էր՝ որ Եփեսոսի մօտովն նաւով
անցնէ՝ որ չլինի թէ նա Ասիայի մէջ ժամանակ
կորցնէ․ վասն զի շտապում էր, որ եթէ կարելի
լինի նորան՝ Պենտեկոստէի օրը Երուսաղէմումը
լինի։
17 Եւ Մելիտոսից ուղարկեց Եփեսոս՝ եկեղեցու
18 երէցներին կանչեց։ Եւ երբոր եկան նորա մօտ,
ասաց նորանց․ Դուք գիտում էք՝ որ այն առա–
ջին օրից հետէ որ Ասիա եկայ, ինչպէս եղայ
19 ամեն ժամանակ ձեզ հետ, Ամենայն խոնարհու–
թեամբ Տիրոջը ծառայելով եւ շատ արտասու–
քով եւ փորձութիւններով որ Հրէաների նեն–
20 գութիւններից պատահեցան ինձ․ Որ ինչպէս

յետ չպահեցի ոչ մի օգտակար բան, որ չպատ–
մեմ եւ սովորեցնեմ ձեզ՝ թէ հրապարակներում
21 եւ թէ տան մէջ։ Հրէաներին եւ Յոյներին վը–
կայութիւն տալով՝ ապաշխարել դէպի Աստուած,
22 եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին հաւատալ։ Եւ
հիմա ահա ես հոգով կապուած գնում եմ Երու–
սաղէմ․ եւ չեմ գիտում՝ թէ այն տեղ ինչ պիտի
23 պատահէ ինձ։ Միայն թէ Սուրբ Հոգին քաղա–
քից քաղաք վկայում է եւ ասում, թէ կապանք–
24 ներ եւ նեղութիւններ սպասումեն ինձ։ Բայց
ես մի բանի տեղ չեմ դնում եւ իմ անձն էլ պատ–
ուական չեմ համարում՝ որ ուրախութեամբ կա–
տարեմ իմ ընթացքը, եւ այն պաշտօնը որ Տէր
Յիսուսից առի, որ Աստուծոյ շնորհաց աւետա–
25 րանին վկայեմ։ Եւ հիմա ահա ես գիտեմ, որ իմ
երեսն այլ եւս չէք տեսնիլ դուք ամենքդ, որ ձեր
մէջըն ման եկայ Աստուծոյ արքայութիւնը քարո–
26 զելով։ Սորա համար այս օրուայ օրը վկայութիւն
եմ դնում ձեզ՝ որ ամենիդ արիւնից անմեղ եմ։
27 Քանզի յետ չքաշուեցայ Աստուծոյ բոլոր կամքը
28 ձեզ պատմելուց։ Արդ զգոյշ կացէք ձեր անձներիդ՝
եւ բոլոր հօտիդ, որի մէջ Սուրբ Հոգին ձեզ վերա–
կացուներ դրաւ, որ արածեցնէք Աստուծոյ ե–
29 կեղեցին, որ իր արիւնովն ստացաւ։ Քանզի ես
գիտեմ, որ իմ հեռանալուց յետոյ յափշտակող
գայլեր կ'գան ձեր մէջը, որ հօտիդ չեն խնայիլ։
30 Եւ հէնց ձեզանից մարդիկ վեր կ'կենան, որ ծուռ
բաներ կ'խօսին, որ աշակերտներին իրանց ետե–
31 ւից քաշեն։ Սորա համար արթուն կացէք, յի–
շելով որ երեք տարի գիշեր եւ ցերեկ չդադա–
32 րեցի ամեն մէկիդ արտասուքով խրատել։ Եւ
հիմա՝ ձեզ Աստուծոյն եմ յանձնում՝ եղբարք,

եւ նորա շնորհաց խօսքին, որ նա կարող է շի-
նել՝ եւ ամեն սրբուածների հետ ձեզ ժառանգու-
33 թիւն տալ։ Ձեզանից մէկի արծաթին կամ ոս-
34 կուն կամ հանդերձին չցանկացայ։ Դուք ինք-
նե՛րդ գիտէք, որ այս ձեռները վաստակեցան իմ
35 պէտքը, եւ նորանց էլ՝ որ ինձ հետ էին։ Ամեն
բան ցոյց տուի ձեզ՝ որ այսպէս պէտք է աշխա-
տել, եւ տկարներին հոգ տանել, եւ Տէր Յի-
սուսի խօսքը յիշել, որ ինքն ասաց. Աւելի ե-
36 րանելի է տալը քան թէ առնելը։ Եւ երբոր այս
ասաց. ծունկ դրաւ ամենի հետ՝ եւ աղօթք ա-
37 րաւ։ Եւ ամենքն էլ շատ լաց էին լինում. եւ
Պօղոսի վզովն ընկած՝ նորան համբուրում էին։
38 Ցաւում էին մանաւանդ այն խօսքի համար՝ որ
ասում էր, թէ նորա երեսը այլ եւս պիտի չտես-
նեն. եւ նորան ճանապարհ գցեցին դէպի նաւը։

ԳԼ. ԻԱ

1 Եւ երբոր եղաւ՝ որ մենք դուրս եկանք եւ նո-
րանցից բաժանուեցանք, ուղիղ գնալով եկանք
Կով, եւ հետեւեալ օրը՝ Հռոդոս, եւ այն տեղից՝
2 Պատարա։ Եւ մի նաւ գտանք, որ Փիւնիկէ էր
3 գնում, նորա մէջ մտանք գնացինք։ Եւ երբոր
Կիպրոսն երեւեցաւ, նորան թողինք ձախ կող-
մը, եւ նաւն ուղղեցինք դէպի Սիւրիա եւ իջանք
Տիւրոս, վասն զի նաւը բեռը այն տեղ պիտի թա-
4 փէր։ Եւ աշակերտներին գտնելով այն տեղ եօթն
օր մնացինք. նորանք Սուրբ Հոգոյ ձեռովը Պօ-
ղոսին ասում էին, որ վեր չելլէ Երուսաղէմ։
5 Եւ երբոր մենք այն օրերը կատարեցինք, դուրս
եկանք գնացինք. ամենքը՝ կանանցով եւ որդի-

ներով մեզ ճանապարհ գցեցին մինչեւ քաղաքի
դրսի կողմը. եւ ծովի եզրին մօտ ծունկ դրինք
6 աղօթք արինք։ Եւ իրարից բաժանուելով
վեր ելանք նաւը. եւ նորանք ետ դարձան ի-
7 րանց տեղերը։ Եւ մենք ծովի ճանապարհորդու-
թիւնը վերջացնելով Տիւրոսից դուրս եկանք հա-
սանք Պտղոմայիդա. եւ եղբայրներին ողջոյն տը-
8 ուինք՝ եւ նորանց մօտ մէկ օր մնացինք։ Եւ
հետեւեալ օրն այն տեղից դուրս ելանք մենք՝
Պօղոսի ընկերներս՝ եկանք Կեսարիա. եւ Փիլիպ-
պոս աւետարանչի տունը մտնելով, որ այն եօթ-
9 նիցն էր, նորա մօտ մնացինք։ Նա չորս կոյս
աղջիկներ ունէր, որ մարգարէութիւն էին ան-
10 ում։ Եւ երբոր մենք այն տեղ շատ օրեր մնում
էինք, Հրէաստանից մի մարգարէ իջաւ անունն
11 Ագաբոս։ Եւ մեզ մօտ եկաւ, Պօղոսի գօտին ա-
ռաւ իր ձեռները եւ ոտները կապեց եւ ասաց.
Սուրբ Հոգին այսպէս է ասում. Այն մարդուն՝
որի գօտին է այս, Հրէաները Երուսաղէմումը
այսպէս կ՚կապեն, եւ հեթանոսների ձեռքն կը
12 մատնեն։ Եւ երբոր այս լսեցինք, աղաչում էինք
մենք, եւ այն տեղացիք էլ, որ վեր չելլէ Երու-
13 սաղէմ։ Այն ժամանակ Պօղոսը պատասխանեց
եւ ասաց. Ի՞նչ էք անում, ինչո՞ւ համար էք լաց
լինում եւ սիրտս ճմլում. քանզի ես ոչ միայն
կապուելու բայց Երուսաղէմումը մեռնելու էլ
պատրաստ եմ Տէր Յիսուսի եւ Քրիստոսի ան-
14 ուան համար։ Եւ երբոր նա ականջ չդրաւ, լուռ
կեցանք՝ եւ ասացինք. Տիրոջ կամքը լինի։
15 Եւ այն օրերից յետոյ պատրաստուած վեր ե-
16 լանք Երուսաղէմ։ Եւ այն Կեսարացի աշակերտ-
ներից էլ մեզ հետ եկան, եւ տանում էին մեզ

մի Մնասոն անուն Կիպրացի մարդու՝ առաջին
17 աշակերտի մօտ, որ նորա մօտ կմնանք։ Եւ երբ-
որ մենք Երուսաղէմ մտանք, եղբարք մեզ ու-
18 րախութեամբ ընդունեցին։ Բայց հետեւեալ օրը
Պօղոսը մեզ հետ գնաց Յակոբի մօտ, եւ բոլոր
19 երէցները եկան։ Եւ ողջոյն տալով նորանց՝ մին
մին պատմում էր ինչ որ Աստուած հեթանոսնե-
20 րի մէջ արաւ իր ծառայութիւնովը։ Եւ նորանք
լսելով, փառաւորում էին Տիրոջը. եւ ասում
էին նորան. Եղբայր, տեսնո՞ւմ ես, քանի բիւ-
րաւոր հաւատացեալ Հրէաներ կան, եւ ամենքն
21 օրէնքի նախանձաւոր են։ Բայց քեզ համար ի-
մացել են, թէ հեթանոսների մէջ լինող ամեն
Հրէաներին ուսուցանում ես Մօսէսից ետ քաշ-
ուիլ, ասելով որ իրանց որդիներին չթլփատեն,
22 եւ սովորութեանց պէս չվարուեն։ Հիմա ի՞նչ
կլինի. անպատճառ պէտք է բազմութիւնը մէկ
23 տեղ գայ, քանզի կլսեն որ եկել ես։ Հիմա սա
արա՝ որ քեզ ասում ենք. Մեզանում չորս մարդ
կան, որ ուխտ են դրած իրանց անձների վերայ։
24 Նորանց առ՝ եւ նորանց հետ սրբուիր. եւ նո-
րանց վերայ ծախք արա՝ որ իրանց գլուխները
ածիլեն. եւ ամենքն գիտենան, թէ ինչ որ քեզ
համար իմացել էին՝ ոչինչ է. այլ թէ դու էլ մի-
25 աբան ես՝ օրէնքը պահելով։ Բայց այն հաւա-
տացեալ հեթանոսների համար մենք ուղարկե-
ցինք՝ որոշելով, որ նորանք այնպիսի բան չպա-
հեն, բայց միայն զգուշանան կուռքի զոհից եւ ար-
26 իւնից եւ խեղդուածից եւ պոռնկութիւնից։ Այն
ժամանակ Պօղոսն այն մարդկանցն առաւ, հե-
տեւեալ օրը նորանց հետ սրբուեցաւ, եւ տա-
ճարը մտաւ իմաց տալով սրբութեան օրերի լը-

րանալը. մինչեւ որ նորանց ամեն մէկի վերայ
պատարագը մատուցուեցաւ։
27 Եւ երբոր այն եօթն օրը լրանալու մօտ էին,
Ասիացի Հրէաները նորան տեսան տաճարում,
եւ բոլոր ամբոխին նորա վերայ թափեցին, եւ
28 նորան ձեռք ձգելով՝ աղաղակում էին. Ով Իս-
րայէլացի մարդիկ, օգնեցէք. սա այն մարդն է՝
որ ժողովրդի եւ օրէնքի եւ այս տեղի հակառակ
ամենին ամեն տեղ սովորեցնում է. մինչեւ որ
Յոյներ էլ մտցրեց տաճարի մէջ եւ այս սուրբ
29 տեղը պղծեց։ Վասն զի Տրոփիմոս Եփեսացոյն
առաջուց նորա հետ քաղաքումը տեսել էին. եւ
կարծում էին, թէ Պօղոսը նորան մտցրեց տա-
30 ճարի մէջ։ Եւ բոլոր քաղաքը դղրդեց, եւ ժո-
ղովուրդը կիտուեցաւ. եւ Պօղոսին բռնած տա-
ճարից դուրս քաշեցին, եւ շուտով դուռները
31 փակուեցան։ Եւ երբոր ուզում էին նորան ըս-
պանել, լուր հասաւ գնդի հազարապետին, թէ
32 բոլոր Երուսաղէմը տակն ի վեր է եղել։ Նա էլ
իսկոյն զինուորներ եւ հարիւրապետներ առաւ
նորանց վերայ վազեց. եւ նորանք երբոր հազա-
րապետին եւ զինուորին տեսան, Պօղոսին ծե-
33 ծելուց դադարեցան։ Այն ժամանակ հազարա-
պետը մօտեցաւ բռնեց նորան եւ հրամայեց, որ
երկու շղթայով կապեն. եւ հարցնում էր, թէ
34 ո՞վ է, եւ ի՞նչ է արել։ Եւ ամեն մէկը ամբոխի
մէջ մի ուրիշ բան էին աղաղակում. երբոր ամ-
բոխի շփոթութիւնից չկարողացաւ ստոյգն իմա-
35 նալ հրամայեց նորան տանել բանակը։ Եւ երբ-
որ հասաւ աստիճաններին, պէտք եղաւ որ ամ-
բոխի բռնութեան պատճառով զինուորները նո-
36 րան վեր առնեն բերեն։ Որովհետեւ ժողովրդի

բազմութիւնը ետեւից գնում էր աղաղակելով.
37 Վեր կալ զորան։ Եւ դեռ քանի որ Պօղոսը բա-
նակը մտնելու վերայ էր, հազարապետին ասաց.
Կարելի՞ է ինձ արդեօք, որ քեզ հետ խօսեմ.
38 Նա էլ ասաց՝ Յունարէն գիտե՞ս։ Արդե՞օք դու
այն Եգիպտացին չես, որ այս օրերից առաջ շը-
փոթութիւն արաւ՝ եւ չորս հազար սիկարեան
39 (աւազակ) մարդիկ հանեց անապատը։ Եւ Պօ-
ղոսը ասաց. Ես Հրէայ մարդ եմ՝ Կիլիկեցոց
Տարսոնիցը, ոչ թէ աննշան քաղաքի քաղաքա-
ցի. աղաչում եմ քեզ՝ հրաման տուր ինձ, որ
այդ ժողովրդի հետ խօսեմ։
40 Եւ երբոր նա հրամայեց, Պօղոսն աստիճան-
ների վերայ կանգնեց եւ դէպի ժողովուրդը ձե-
ռը շարժեց. եւ երբոր շատ լուռ կացան, սկսեց
Եբրայեցոց լեզուով խօսել՝ եւ ասաց.

ԳԼ. ԻԲ

1 Մարդիկ եղբարք եւ հարք, հիմա իմ ձեզ պա-
2 տասխան տալոյս լսեցէք։ Եւ երբոր լսեցին՝ թէ
Եբրայեցոց լեզուով էր նորանց հետ խօսում, էլ
3 աւելի լուռ կացան։ Եւ նա ասաց. Ես Հրէայ
մարդ եմ Կիլիկեցոց Տարսոնումը ծնուած՝ այս
քաղաքումը մեծացած Գամաղիէլի ոտքի մօտ,
հայրենական օրէնքի ճշմարտութեան պէս վար-
ժուած. Աստուծոյ մասին նախանձաւոր էի՝ ինչ-
4 պէս այսօր դուք ամենքդ էք։ Որ այս ճանա-
պարհը հալածեցի մինչեւ ի մահ. որ մարդկանց
եւ կանանց կապում էի եւ մատնում բանտերի
5 մէջ։ Ինչպէս քահանայապետն էլ ինձ վկայում
է՝ եւ ծերերի բոլոր ժողովն էլ. որոնցից թղթեր

էլ առած գնում էի Դամասկոս եղբայրների մօտ,
որ այն տեղ լինողներին էլ կապած բերեմ Երու-
6 սաղէմ, որ պատժուին։ Եւ եղաւ որ երբ ես գը-
նալիս Դամասկոսին մօտենում էի, կէս օրուայ
դէմ յանկարծակի երկնքից մի սաստիկ լոյս փայ-
7 լեց իմ չորս կողմովը։ Եւ վայր ընկայ գետինը,
եւ մի ձայն լսեցի՝ որ ասում էր ինձ. Սաւուղ
8 Սաւուղ, ինձ ինչո՞ւ ես հալածում։ Եւ ես պա-
տասխանեցի. Տէր՝ դու ո՞վ ես. եւ ինձ ասաց.
Ես Յիսուս Նազովրեցին եմ՝ որին դու հալածում
9 ես. Բայց ինձ հետ լինողները լոյսը տեսնում
էին եւ վախով լցվում էին, բայց ինձ հետ խօ-
10 սողի ձայնը չէին լսում։ Եւ ասացի. Ի՞նչ անեմ՝
Տէր. եւ Տէրն ասաց ինձ. Վեր կաց՝ գնա Դա-
մասկոս, եւ այն տեղ կ'ասուի քեզ ամէն բանի
11 համար, որ քեզ հրաման է անել։ Եւ երբոր այն
լուսոյ փառքից չէի տեսնում, ինձ հետ լինող-
ները ձեռքիցս բռնեցին՝ եւ մտայ Դամասկոս։
12 Եւ մի Անանիա մարդ՝ օրէնքի համեմատ աստ-
ուածավախ, որ Դամասկոսում բնակող բոլոր Հը-
13 րէաներից բարի վկայութիւն ունէր. Նա եկաւ
ինձ մօտ կանգնեց եւ ասաց. Սաւուղ եղբայր,
14 վեր նայիր։ Եւ ես նոյն ժամումն վեր նայեցի
դէպի նա, եւ նա ինձ ասաց. Մեր հարանց Աստ-
ուածն առաջուց քեզ ընտրեց, որ նորա կամքը
ճանաչես, եւ այն Արդարին տեսնես, եւ նորա
15 բերանից ձայն լսես. Որ նորա վկայ լինիս բո-
լոր մարդկանց առջեւ այն բաների համար, որ
16 տեսար եւ լսեցիր։ Եւ հիմա ինչո՞ւ ես ուշանում,
վեր կաց մկրտուիր եւ քո մեղքերը լուա Տիրոջ
17 անունը կանչելով։ Եւ եղաւ երբոր ետ դարձայ
Երուսաղէմ, եւ տաճարումն աղօթք էի անում,

18 յափշտակութիւն ինձ բռնեց. Եւ նորան տեսայ
որ ինձ ասում էր. Շտապիր, շուտ դուրս ել
Երուսաղէմից. քանզի չեն ընդունիլ քո վկայու-
19 թիւնը, որ ինձ համար տալիս ես։ Եւ ես ասա-
ցի. Տէր՝ նորանք գիտեն՝ որ ես բանտն էի դը-
նում եւ ժողովարաններումը ծեծում էի քեզ հա-
20 ւատացողներին. Եւ երբոր քո Ստեփանոս վը-
կայի արիւնը թափվում էր, ես ինքս նորա մօտ
կանգնած էի, եւ նորա սպանմանը կամակից
էի, եւ նորա սպանողների հանդերձները պա-
21 հում էի։ Եւ ասաց ինձ. Գնա, քանզի ես հե-
ռու հեթանոսների մէջ կ'ուղարկեմ քեզ։
22 Եւ մինչեւ այս խօսքն ականջ էին դնում նո-
րան. եւ իրանց ձայները բարձրացրին՝ եւ ասա-
ցին. Այդպիսի մարդուն երկրիցս վեր առ. քան-
23 զի պէտք չէ դա ապրի։ Եւ երբոր նորանք ա-
ղաղակում էին եւ հանդերձները վեր գցում, եւ
24 փոշին օդի մէջ ցանում. Հազարապետը հրամայեց
որ նա բանակը տարուի. ասելով թէ պէտք է
ծեծելով հարցնել նորան, որ գիտենայ, թէ ինչ
յանցանքի համար էին նորա վերայ այնպէս ա-
25 ղաղակում։ Եւ երբոր նորան կաշէ փոկերով
պինդ կապեցին, Պօղոսը ասաց մօտը կանգնած
հարիւրապետին. թէ Արժա՞ն է որ դուք Հռօ-
մայեցի եւ չդատապարտուած մարդուն ծեծէք։
26 Եւ երբոր լսեց հարիւրապետը, մօտեցաւ հա-
զարապետին պատմեց եւ ասաց. Զգուշացիր թէ
ինչ ես կամենում անել, քանզի այս մարդը Հը-
27 ռօմայեցի է։ Եւ հազարապետը մօտ եկաւ եւ
նորան ասաց. Ասա ինձ թէ դու Հռօմայեցի՞ ես.
28 եւ նա ասաց. Այո։ Եւ հազարապետը պատաս-
խանեց. Ես շատ փողով ստացայ այս զինուո-

րութիւնը, եւ Պօղոսը ասաց. Ես հէնց [illegible]
29 ծնուած եմ։ Եւ նորանք՝ որ նորան ծեծելով հար-
ցաքննելու էին, շուտով հեռացան նորանից. եւ
հազարապետն էլ վախեցաւ երբոր իմացաւ թէ
Հռօմայեցի է. վասն զի կապել էր նորան։
30 Եւ հետեւեալ օրը կամենալով ճշմարիտն իմա-
նալ, թէ ի՞նչ է Հրէաների չարախօսութիւնը,
նորան արձակեց կապերիցը եւ հրամայեց որ քա-
հանայապետները եւ բոլոր ատեանը կանչեն. եւ
Պօղոսին էլ բերաւ նորանց մէջ կանգնեցրեց։

ԳԼ. ԻԳ.

1 Եւ Պօղոսը ատեանին մտիկ տուաւ՝ եւ ասաց.
Մարդիկ եղբարք, ես բոլորովին բարի խղճմը-
տանքով վարուել եմ Աստուծոյ առջեւ մինչեւ
2 այսօր։ Եւ Անանիա քահանայապետը ծառանե-
3 րին հրամայեց որ նորա բերանին զարկեն։ Այն
ժամանակ Պօղոսը ասաց նորան. Աստուած պի-
տի քեզ զարկէ՝ բաւ ծեփած պատ. եւ դու նըս-
տե՞լ ես ինձ օրէնքի պէս դատելու, եւ օրէն-
քի հակառակ հրամայում ես, որ ես զարկուիմ։
4 Եւ նորա մօտ կանգնածներն ասացին. Աստու-
5 ծոյ քահանայապետի՞ն ես հայհոյանք տալիս։ Եւ
Պօղոսը ասաց. Եղբարք, ես չէի գիտում՝ որ
քահանայապետ է. քանզի գրուած է՝ ՚Ի քո ժո-
6 ղովրդի իշխանին չհայհոյես։ Երբոր Պօղոսը իմա-
նալով թէ մէկ մասը Սադուկեցիներից է՝ եւ
միւս մասը Փարիսեցիներից, ատեանի մէջ ա-
ղաղակում էր. Մարդիկ եղբարք, ես Փարիսեցի
եմ՝ եւ Փարիսեցու որդի, յուսոյն եւ մեռելների
7 յարութեան համար եմ դատվում։ Եւ երբոր նա

այս ասաց, Փարիսեցոց եւ Սադուկեցոց մէջ երկ-
պառակութիւն ընկաւ. եւ բազմութիւնը բա-
8 ժանուեցաւ։ Որովհետեւ Սադուկեցիք ասում
են. թէ Ոչ յարութիւն կայ, ոչ հրեշտակ, եւ ոչ
հոգի. բայց Փարիսեցիք երկուսն էլ դաւանում
9 են։ Եւ մեծ աղաղակ եղաւ. եւ Փարիսեցոց կող-
մից դպիրները վերկացան, հակառակում էին եւ
ասում. Ոչինչ չարութիւն չենք գտնում այս մար-
դումը. բայց եթէ հոգի խօսեց դորանում կամ
հրեշտակ. մենք Աստուծոյ հետ չմարտնչինք։
10 Եւ երբոր խռովութիւնը շատացաւ, հազարապե-
տը վախեցաւ՝ մի գուցէ Պօղոսը նորանցից պա-
տառուի, զինուորներին հրամայեց, որ իջնեն
նորան նորանց միջից յափշտակեն, եւ բերեն
11 բանակը։ Եւ հետեւեալ գիշերը Տէրը կանգնեց
նորա մօտ եւ ասաց. Քաջացիր, Պօղոս, վասն
զի ինչպէս ինձ համար Երուսաղէմումը վկայե-
ցիր, այնպէս էլ պէտք է Հռօմումը վկայես։
12 Եւ երբոր առաւօտ եղաւ Հրէաներից ոմանք
միաբանեցան եւ իրանց անձները նզովեցին ասելով,
որ չուտեն՝ եւ չխմեն, մինչեւ որ Պօղոսին սպա-
13 նեն։ Եւ քառասունից աւելի էին այս երդումն
14 իրար հետ անողները։ Նորանք քահանայապետ-
ներին եւ երէցներին մօտ եկան եւ ասացին. Նզով-
քով նզովեցինք մեր անձները՝ որ ոչինչ չճաշա-
15 կենք մինչեւ որ Պօղոսին սպանենք։ Բայց դուք
հիմա ատեանի հետ իմաց արէք հազարապետին.
որ էգուց նորան վայր բերէ ձեզ մօտ, իբր թէ
կամենում էիք աւելի եւս ճշմարտութեամբ բան
իմանալ նորա համար. մենք էլ նորա մօտ գալուց
16 առաջ պատրաստ ենք սպանելու նորան։ Եւ Պօ-
ղոսի քրոջ որդին երբոր նորանց այս դաւաճա-

նութիւնը լսեց, եկաւ մտաւ բանակը եւ Պօղո-
17 սին պատմեց։ Եւ Պօղոսը հարիւրապետներից
մէկին կանչեց իրան մօտ եւ ասաց. Այս պա-
տանին տար հազարապետի մօտ. վասն զի բան
18 ունի նորան պատմելու։ Եւ նա առաւ նորան
հազարապետի մօտ տարաւ եւ ասաց. Կապուած
Պօղոսն ինձ կանչեց եւ աղաչեց, այս պատանին
քեզ մօտ բերել, որ բան ունի քեզ խօսելու։
19 Հազարապետը նորա ձեռիցը բռնեց, գնաց ա-
ռանձին տեղ, հարցնում էր, թէ Ինչ բան ունիս
20 ինձ ասելու։ Եւ նա ասաց. թէ Հրէաները միա-
բանեցան քեզ աղաչելու, որ էգուց Պօղոսին
վայր բերես ատեանը, իբր թէ կամենում էին
աւելի ճշմարիտ քննութիւն անել անոր համար։
21 Բայց դու մի հաւատար նորանց. որովհետեւ նո-
րանցից քառասունից էլ աւելի մարդիկ դարան
են մտել նորա համար, որ իրանց անձներն էլ
նզովեցին, որ չուտեն եւ չխմեն մինչեւ որ նո-
րան սպանեն. եւ հիմա պատրաստ են եւ քո
22 հրամանին են սպասում։ Ապա հազարապետն
այն պատանուն արձակեց եւ պատուէր տուաւ,
թէ ոչ ոքի չասես, որ այս բանն իմաց արիր ինձ։
23 Եւ հարիւրապետներից երկուսին կանչեց եւ ա-
սաց. Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք,
որ գնան մինչեւ Կեսարիա. եւ եօթանասուն
ձիաւոր եւ երկու հարիւր էլ տիգաւոր՝ գիշե-
24 րուայ ժամը երեքից։ Եւ գրաստներ էլ պատ-
րաստեն, որ Պօղոսին հեծցնեն եւ ապահով հաս-
25 ցնեն Փելիքս կուսակալի մօտ։ Եւ մի նամակ
26 գրեց, որի օրինակն այս էր։ Կղօդիոս Լիւսիաս.
27 պատուական կուսակալ Փելիքսին ողջոյն. Այս
մարդուն որ Հրէաներից բռնուած էր եւ նո-

րանցից սպանուելու մօտ էր, զինուորներով վե-
րայ հասայ պրծացրի, իմանալով որ Հռոմայեցի
28 է ։ Եւ ուզելով որ նորա յանցանքն իմանամ՝ ո-
րի համար զանգատ էին անում դորանից, վայր
29 բերի դորան նորանց ատեանը ։ Եւ գտայ նորան
իրանց օրէնքի մի խնդիրների համար ամբաս-
տանուած, եւ մեռնելու կամ կապուելու ար-
30 ժանի ոչինչ յանցանք չունէր ։ Եւ երբոր ականջս
հասաւ, որ Հրէաների կողմից այն մարդու հա-
մար նենգութիւն կայ, նորան իսկոյն քեզ մօտ
ուղարկեցի. եւ չարախօսներին էլ հրաման
տուի, որ դորանից քո առջեւ խօսեն. Ողջ կաց ։
31 Եւ զինուորները իրանց հրամայուածի պէս՝
Պօղոսին առին եւ գիշերով տարան Անտիպատ-
32 րիս ։ Եւ հետեւեալ օրն ձիաւորներին թողին,
որ նորա հետ գնան, եւ իրանք յետ դարձան բա-
33 նակը ։ Եւ նորանք մտան Կեսարիա. եւ թուղ-
թը կուսակալին տուին. եւ Պօղոսին էլ նորա
34 առջեւ ներկայացրին ։ Եւ երբոր կարդաց՝ կու-
սակալը հարցրեց թէ ո՞ր գաւառից է. եւ երբոր
35 տեղեկացաւ թէ Կիլիկիայեցի է, Ասաց. Կ'լսեմ
քեզ՝ երբոր քո չարախօսներն էլ կ'գան. եւ հրա-
մայեց՝ որ Հերովդէսի պալատումը պահեն նորան ։

ԳԼ. ԻԴ

1 Եւ հինգ օրից յետոյ Անանիա քահանայապետը
ծերերի եւ մի ճարտարախօս Տերտիւղոս անուն
մարդու հետ իջաւ, եւ իմաց արին կուսակա-
2 լին Պօղոսի համար ։ Եւ երբոր նորան կանչեց,
3 Տերտիւղիոսը սկսեց ամբաստանել եւ ասել. Ո-
րովհետեւ քեզանով շատ խաղաղութիւն ենք

գտել՝ եւ այս ազգի համար շատ բաների կար-
գադրութիւն է եղել քո խնամք տանելով, ա-
մեն կերպով եւ ամեն տեղ շատ գոհութեամբ
չնորհակալ ենք քեզանից, ով պատուական Փե-
4 լիքս ։ Բայց որպէս զի աւելի նեղութիւն չտամ
քեզ, աղաչում եմ՝ որ համառօտաբար լսես մեզ
5 քո հեզութեամբը ։ Քանզի մենք գտանք այս
մարդուն որ ապականիչ եւ խռովարար է այն
ամեն Հրէաներին, որ բոլոր աշխարհքումը կան.
6 եւ Նազօրեցոց հերձուածի առաջնորդ է. Որ
տաճարն էլ ուզեց պղծել. որին բռնեցինք էլ.
եւ մեր օրէնքի պէս ուզեցինք դատաստան էլ
7 անել ։ Բայց Լիւսիաս հազարապետն եկաւ՝ եւ
8 մեծ բռնութեամբ մեր ձեռներիցը հանեց, Հրա-
մայելով որ նորա դատախազներն էլ գան քեզ
մօտ. որ դու վերաքննելով կարող ես տեղեկա-
նալ այն ամեն բանի համար, որ մենք գանգա-
9 տում ենք դորանից ։ Հրէաներն էլ միաբան ե-
ղած ասացին. թէ Այդպէս է ։
10 Պօղոսն էլ պատասխանեց՝ երբոր կուսակալը
նորան ակնարկեց որ խօսէ. Գիտենալով որ դու
շատ տարուց հետէ այս ազգի դատաւորն ես,
աւելի յօժարութեամբ իմ մասին պատասխան
11 եմ տալիս ։ Վասն զի դու կարող ես գիտենալ,
որ տասներկու օրից աւելի չէ՝ որ ես եկայ եր-
12 կրպագութիւն անել Երուսաղէմումը ։ Եւ ոչ
տաճարումն են գտել ինձ մի մարդու հետ խօ-
սելիս, կամ շատ մարդ մէկ տեղ հաւաքելիս,
13 եւ ոչ ժողովարանումը, Եւ ոչ էլ քաղաքումը.
եւ ոչ էլ կարող են քո առջեւ ցոյց տալ այն,
որոնց համար հիմա չարախօսում են ինձանից ։
14 Բայց սա եմ խոստովանում քեզ, թէ այն ճանա-

պարհովը՝ որ ասում են հերձուած, այնպէս պաշ-
տում եմ հայրենական Աստուծոյն, ամեն բա-
ների հաւատալով՝ որ օրէնքումն եւ մարգարէ-
15 ներումն գրուած է. Յուսալով այն Աստուծոյն
որին դորանք էլ սպասում են, թէ արդարների
16 եւ մեղաւորների յարութիւն պիտի լինի։ Որ
հէնց սորա համար ինքս ջանք եմ անում, որ
ամեն ժամ մաքուր խղճմտանք ունենամ Աստու-
17 ծոյ առջեւ եւ մարդկանց առջեւ։ Արդ շատ
տարիներից յետոյ եկայ որ իմ ազգին ողորմու-
18 թիւն անեմ եւ ընծաներ բերեմ. Որ այդ բանի
մէջ մի քանի Ասիացի Հրէաներ ինձ գտան տա-
ճարումը սրբուած, ոչ շատերի եւ ոչ էլ ամբո-
19 խի հետ։ Որ նորանց պէտք էր գալ քո առջեւ
եւ գանգատ անել, եթէ մի բան ունենային ին-
20 ձանից։ Կամ հէնց սորանք իրանք թող ասեն,
թէ ինձանում ինչ անիրաւութիւն գտան՝ դեռ
21 քանի որ ատեանումը կանգնած էի։ Բայց այս
մէկ խօսքի համար, որ նորանց միջումն կանգ-
նած աղաղակեցի, թէ Մեռելների յարութիւն
անելոյն համար եմ ես այսօր դատվում ձե-
զանից։

22 Փիլիքսն էլ երբոր լսեց այս բաները, նորանց
ուշացրեց, վասն զի շատ լաւ տեղեկացած էր
այն ճանապարհի համար, եւ ասաց. Երբ որ
Լիւսիաս հազարապետը կ'իջնէ, կ'տեղեկանամ
23 ձեր գործին։ Եւ հարիւրապետին հրամայեց՝ որ
Պօղոսին պահէ՝ բայց ընդարձակութիւն տայ. եւ
նորա մարդկանցից ոչ մէկին չարգելէ՝ նորան
ծառայութիւն անելու կամ նորա մօտ գնալու։
24 Եւ մի քանի օրից յետոյ Փելիքս եկաւ իր
Դրուսիլա կնոջ հետ, որ Հրէայ էր, Պօղոսին

կանչեց՝ եւ նորանից Քրիստոսի հաւատքի հա-
25 մար բան լսեց։ Եւ երբոր նա խօսում էր ար-
դարութեան եւ ժուժկալութեան եւ գալու դա-
տաստանի համար, Փելիքս շատ ահով բռնուե-
ցաւ, եւ պատասխանեց. Դու հիմա գնա. երբոր
26 ժամանակ կ'ունենամ, կ'կանչեմ քեզ։ Բայց նա
յոյս էլ ունէր, որ Պօղոսից մի բան կ'տրուի ի-
րան. որ նորան արձակէ եւ նորա համար շատ
անգամ կանչում էր նորան եւ նորա հետ խօ-
27 սում։ Եւ երբոր երկու տարին լրացաւ, Փե-
լիքսի տեղ եկաւ Փեստոս Պորկիոս. եւ որով-
հետեւ Փելիքսը կամեցաւ Հրէաներին մի շնորհք
անել, Պօղոսին կապած թողեց։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Փեստոսը երբոր իշխանութեան հասաւ, ե-
րեք օրից յետոյ Կեսարիայից վեր ելաւ Երուսա-
2 ղէմ։ Եւ քահանայապետն եւ Հրէից գլխաւոր-
ները Պօղոսի համար իմացում տուին նորան,
3 Եւ աղաչում էին՝ այս շնորհքը խնդրելով նորա-
նից, որ Երուսաղէմ կանչէ նորան. քանզի դա-
րան էին գործել՝ որ ճանապարհին սպանեն նո-
4 րան։ Բայց Փեստոսը պատասխանեց, թէ Պօղոս
Կեսարիայումը կ'պահուի. եւ ինքն էլ շուտով
5 այն տեղ է գնալու։ Եւ ձեզանից որոնք որ կա-
րող են, ասաց, թող ինձ հետ գան. եւ եթէ այն
մարդումը մի յանցանք կայ՝ թող նորանից գան-
6 գատ անեն։ Եւ այն տեղ տասն օրից աւելի մը-
նալով իջաւ Կեսարիա. եւ հետեւեալ օրը ատ-
7 եան նստեց, եւ հրամայեց Պօղոսին բերել։ Եւ
նա երբոր եկաւ՝ նորա չորս կողմովը կանգնե-

ցան Երուսաղէմից եկած Հրէայքը. շատ եւ ծանր
յանցանք բերելով Պօղոսի դէմ որ չէին կարո-
8 ղանում ապացուցանել: Քանզի նա պատասխան
էր տալիս, թէ՝ Ոչ Հրէից օրէնքի, եւ ոչ տա-
ճարի, եւ ոչ կայսեր դէմ մի մեղք եմ գործել:
9 Բայց Փեստոսը՝ կամենալով Հրէաներին շնորհք
անել, պատասխանեց Պօղոսին եւ ասաց. Կա-
մենո՞ւմ ես Երուսաղէմ գնալ՝ եւ այն տեղ այդ
10 բաների համար դատուիլ իմ առջեւ: Պօղոսն էլ
ասաց. Կայսեր ատեանումն եմ կանգնած, որ
այն տեղ պէտք է ես դատուիմ. Հրէաներին ո-
չինչ վնաս չեմ տուել, ինչպէս դու էլ լաւ գի-
11 տում ես: Բայց թէ որ անիրաւութիւն ունիմ
եւ մեռնելու արժանի բան եմ գործել՝ մեռնելուց
չեմ քաշվում. բայց եթէ այնպիսի մի բան չկայ,
որ սորանք ինձանից գանգատում են, ոչ ով ինձ
կարող չէ դորանց շնորհել. ես դէպի կայսրն եմ
12 բողոքում: Այն ժամանակ Փեստոսը խորհրդակ-
ցաց հետ խօսեց՝ եւ պատասխանեց, Դէպի կայսրը
բողոքեցիր, կայսեր մօտ գնա:
13 Երբոր մի քանի օր անցաւ, Ագրիպպաս թա-
գաւորը եւ Բերնիկէն եկան Կեսարիա՝ Փեստո-
14 սին շնորհաւորելու: Եւ երբոր այն տեղ շատ օ-
րեր անցկացրին, Փեստոսը Պօղոսի համար ի-
մացրեց թագաւորին՝ եւ ասաց. Այս տեղ մի մարդ
15 է մնացել Փելիքսից կապուած. Որի համար՝
երբոր Երուսաղէմ էի, քահանայապետներն ու
Հրէից գլխաւորներն իմացրին ինձ, խնդրելով
16 նորա դատապարտութիւնը: Որոնց պատասխա-
նեցի թէ Հռոմայեցիներին օրէնք չէ՝ որ մի մարդ
կորստեան շնորհուի մինչեւ որ ամբաստանեալն
իր ամբաստանողներին իր դիմացը չունենայ՝ եւ

այն չարախօսութեան համար պատասխան տա-
17 լու պատեհութիւն չառնէ: Եւ երբոր նորանք
այս տեղ եկան՝ ընաւ չուշացրի, այլ հետեւեալ
օրը ատեան նստած՝ հրամայեցի այն մարդուն բե-
18 րել: Եւ երբոր ամբաստանողներն առաջ եկան,
ոչ մի յանցանք յառաջ չէին բերում իմ կասկա-
19 ծածներից: Այլ թէ իրանց կրօնքի համար մի
քանի վէճեր ունէին նորա հետ. եւ մի մեռած
Յիսուսի համար՝ որ նորա համար Պօղոսը ասում
20 էր՝ թէ կենդանի է: Բայց երբոր ես դժուարա-
ցայ այսպիսի բաները քննելու՝ ասացի. Արդեօք
կամենո՞ւմ է Երուսաղէմ գնալ՝ եւ այն տեղ դատ-
21 ուիլ այդ բաների համար: Բայց երբոր Պօղոսը
բողոքեց, որ վերահաս Կայսեր քննութեան հա-
մար պահուի, հրաման տուի՝ նորան պահել, մին-
22 չեւ որ ուղարկեմ կայսեր մօտ: Ագրիպպաս էլ
Փեստոսին ասաց. Ես էլ կ՚կամենայի լսել այդ
մարդուն. եւ նա ասաց. Էգուց կ՚լսես:
23 Եւ հետեւեալ օրն երբոր Ագրիպպան եւ Բե-
րնիկէ՝ մեծ հանդէսով եկան, եւ հազարապետ-
ների՝ եւ քաղաքի պատուաւոր մարդկանց հետ
ատեանը մտան, Փեստոսը հրամայեց՝ եւ Պօղո-
24 սին բերին: Եւ Փեստոսը ասաց. Ով Ագրիպպաս
թագաւոր, եւ բոլոր մարդիկ որ մեզ հետ էք,
տեսնում էք սորան, որի համար Հրէից բոլոր
ժողովուրդն իմ առջեւ եկան Երուսաղէմումն եւ
այս տեղ՝ աղաղակելով թէ նա այլ եւս պիտի
25 չապրի: Բայց ես տեղեկացայ, որ դա ոչինչ մեռ-
նելու արժանի բան չէ գործել. եւ երբոր դա
ինքն դէպի Վերահասը բողոքեց, խորհուրդ արի
26 որ ուղարկեմ: Որի համար մի հաստատ բան չու-
նիմ՝ որ գրեմ իմ տիրոջը. Նորա համար դորան

բերի ձեր առջեւը, եւ մանաւանդ քո առջեւը,
ով Ագրիպպաս թագաւոր, որ վերաքննելով մի
27 բան ունենամ գրելու։ Բանզի ինձ անպատշաճ
է երեւում, որ մի կապած մարդ ուղարկեմ, եւ
նորա դէմ տրուած յանցանքները չիմացնեմ։

Գլ. ԻԶ

1 Եւ Ագրիպպասը Պօղոսին ասաց. Քեզ հրաման
է որ քո մասին խօսես. այն ժամանակ Պօղոսը
2 ձեռը մեկնեց՝ եւ պատասխան էր տալիս. Այն
ամենի համար՝ որի մասին Հրէաները գանգա-
տում են ինձանից, ով Ագրիպպաս թագաւոր,
իմ անձը երանելի եմ համարում, որ այսօր քո
3 առջեւ պատասխան պիտի տամ։ Մանաւանդ որ
դու տեղեակ ես Հրէից բոլոր սովորութիւններին
եւ վէճերին. նորա համար աղաչում եմ, որ համ-
4 բերութեամբ լսես ինձ։ Արդ իմ կեանքին, որ
տղայութիւնիցս հետէ 'ի սկզբանէ իմ ազգի մէջ
Երուսաղէմումն եմ եղել, բոլոր Հրէայքը տեղ-
5 եակ են. Բանզի վաղուց գիտեն, (եթէ կամե-
նան վկայութիւն տալ,) որ ես մեր կրօնքի ճըշ-
մարտագոյն կուսակցութեան համեմատ Փարի-
6 սեցի եմ ապրել։ Եւ հիմա Աստուածանից մեր
հարանցն եղած աւետիքի յուսոյ համար ատեա-
7 նումը կանգնած դատվում եմ. Որին մեր տասն-
երկու ցեղը գիշեր եւ ցերեկ անդադար պաշտե-
լով սպասում են հասնել. եւ այդ յուսոյն համար
ամբաստանվում եմ Հրէաներիցն, ով Ագրիպպաս
8 արքայ։ Ի՞նչ, անհաւատալի բան է երեւո՞ւմ
ձեզ, որ Աստուած մեռելներին յարուցանում է։
9 Եւ հէնց ես ինքս հարկաւոր էի համարում, որ

Յիսուս Նազօրեցոյ անունի հակառակ շատ բա-
10 ներ գործեմ. Որ Երուսաղէմումն արի էլ. եւ
սրբերից շատերին ես բանտարկեցի քահանայա-
պետներիցն իշխանութիւն առած, եւ նորանք
11 սպանուելիս հաւանութիւն էի տալիս։ Եւ բոլոր
ժողովարաններումը շատ անգամ պատիժ տալով
նորանց բռնադատում էի որ հայհոյեն. եւ էլ
աւելի նորանց վերայ կատաղած՝ հալածում էի
12 մինչեւ դրսի քաղաքները։ Որով եւ երբոր քա-
հանայապետների իշխանութիւնովն եւ հրամա-
13 նովն գնում էի Դամասկոս, Կէս օրուայ ժամա-
նակին ճանապարհի վերայ տեսայ, ով արքայ, որ
երկնքիցն արեգական լուսիցն աւելի մի լոյս ծա-
գեց իմ չորս կողմովս՝ եւ նորանցով էլ՝ որ ինձ
14 հետ գնում էին։ Եւ երբոր մենք ամենքս գետնի
վերայ ընկանք՝ մի ձայն լսեցի, որ եբրայեցոց
բարբառով ինձ ասում էր. Սաւուղ Սաւուղ, ին-
չո՞ւ ես ինձ հալածում. դժուար է քեզ՝ խթանի
15 դէմ քացի տալ։ Եւ ես ասացի. Դու ո՞վ ես,
Տէր. եւ նա ասաց. Ես Յիսուսն եմ, որին դու
16 հալածում ես։ Բայց վեր կաց՝ եւ ոտներիդ վե-
րայ կանգնիր, վասն զի նորա համար երեւեցայ
քեզ, որ քեզ ձեռքս առնեմ պաշտօնեայ եւ վկայ
լինելու այն բաներին՝ որ դու տեսար, եւ այն
17 բաներին որոնցով պիտի երեւամ քեզ. Որ ազա-
տեմ քեզ այդ ժողովրդիցը եւ հեթանոսներիցը,
18 որոնց մէջ ես հիմա քեզ ուղարկում եմ. Նորանց
աչքերը բանալու, եւ խաւարիցը դէպի լոյսը դար-
ձնելու, եւ սատանայի իշխանութիւնիցը դէպի
Աստուած. որ նորանք մեղաց թողութիւն՝ եւ
սրբերի հետ ժառանգութիւն առնեն՝ ինձ հաւա-
19 տալով։ Ուստի, ով Ագրիպպաս արքայ, անհնա-

20 զանդ չեղայ այն երկնային տեսիլքին ։ Այլ առաջ
նորանց՝ որ Դամասկոսումն եւ Երուսաղէմումն
էին եւ բոլոր Հրէաստանի երկրումը եւ հեթա-
նոսներին պատմեցի, ապաշխարել եւ դառնալ
դէպի Աստուծոյն, ապաշխարութեան արժանի
21 գործքեր գործելով ։ Սորա համար Հրէաներն ինձ
22 տաճարումը բռնելով՝ ուզում էին սպանել ։ Իսկ
որովհետեւ Աստուածանից ինձ օգնութիւն հա-
սաւ՝ մինչեւ այսօր կանգնած վկայում եմ փոք-
րին եւ մեծին . նորանից դուրս ոչինչ չասելով՝
որ մարգարէներն, եւ Մովսէսը խօսեցին այն լի-
23 նելու բաների համար . Թէ Քրիստոսը պիտի չար-
չարուի, եւ նա առաջինը մեռելներից յարութիւն
առած՝ լոյս պիտի քարոզէ ժողովրդին եւ հեթա-
նոսներին ։
24 Եւ նա այս պատասխանը տալիս, Փեստոսը
մեծ ձայնով ասաց . Գժւում ես, Պօղոս, շատ
25 կարդացողութիւններդ մոլորեցնում են քեզ ։ Նա
էլ ասաց . Չեմ գժւում, ով ազնիւ Փեստոս, այլ
ճշմարտութեան եւ հեզութեան խօսքեր եմ խօ-
26 սում ։ Վասն զի թագաւորն էլ այս բաները գի-
տէ, որի հետ էլ համարձակ խօսում եմ . քանզի
չեմ կարծում որ սորանցից մէկն էլ նորանից ծած-
կուած լինի . վասն զի այս բանը անկիւնի մէջ
27 եղած չէ ։ Հաւատո՞ւմ ես մարգարէներին, ով
Ագրիպպաս արքայ . գիտեմ որ հաւատում ես ։
28 Ագրիպպան էլ Պօղոսին ասաց . Քիչ է մնում որ
29 ինձ համոզես քրիստոնեայ լինել ։ Եւ Պօղոսն ա-
սաց . Աստուածանից կ'խնդրէի՝ թէ քիչ թէ շատ՝
ոչ միայն դու, այլ այն ամենքն էլ՝ որ այսօր լը-
սում են ինձ, այնպէս լինէին ինչպէս ես եմ,
այս կապանքներիցը զատ ։

30 Եւ երբոր նա այս ասել էր, վերկացաւ թա-
գաւորը եւ կուսակալը եւ Բերենիկէն, եւ նո-
31 րանց հետ նստողները . Եւ գնալիս, իրար հետ
խօսում էին եւ ասում . թէ Այս մարդը մեռնե-
լու կամ կապանքի արժանի բան չէ գործել ։
32 Բայց Ագրիպպասը Փեստոսին ասաց . Կարելի էր
այս մարդուն արձակել՝ եթէ դէպի կայսրն չէր
բողոքել ։

ԳԼ. ԻԷ

1 Երբոր հրաման եղաւ մեզ, որ նաւով գնանք
Իտալիա, Պօղոսին եւ ուրիշ մի քանի կապուած-
ներ էլ տուին մի հարիւրապետի, որի անունը
2 Յուլիոս էր՝ Սեբաստոսի գնդիցը ։ Եւ մտնելով
մի Անդրամիտացի նաւ՝ որ գնալու էր Ասիացոց
կողմերը, ճանապարհ ընկանք . Արիստարքոս Մա-
3 կեդօն Թեսաղոնիկեցին էլ մեզ հետ էր ։ Եւ միւս
օրը իջանք Սիդօն . եւ Յուլիոսը մարդասիրու-
թիւն ցոյց տալով Պօղոսին՝ հրամայեց որ բարե-
4 կամների մօտ գնայ՝ եւ խնամք գտնէ ։ Եւ այն
տեղից ճանապարհելով նաւով գնացինք Կիպրոսի
ցած կողմովը՝ քամու ներհակ լինելու պատճա-
5 ռովը ։ Այն ժամանակ Կիլիկիայի եւ Պամփիւ-
լիայի ծովի միջով գնալով՝ իջանք Լիկիացոց Մի-
6 ռան ։ Եւ հարիւրապետն այն տեղ մի Աղէքսանդ-
րացի նաւ գտաւ՝ որ Իտալիա էր գնում, եւ մեզ
7 նորա մէջ մտցրեց ։ Եւ շատ օրեր ծանր նաւե-
լով հազիւ հասանք Կնիդի կողմերը . եւ երբոր
քամին չթողեց մեզ, նաւով գնացինք Կրետէի
8 ցած կողմը Սաղմոնեայի մօտ ։ Եւ երբոր նորա-
նով դժուարաւ անցանք՝ եկանք մի տեղ, որ

կոչվում էր Գեղեցիկ Նաւահանգիստ․ որին մօտ
էր Ղասեայ քաղաքը։
9 Եւ որովհետեւ շատ ժամանակ էր անցել՝ եւ
նաւով գնալու համար վտանգաւոր էր, ծոմի ժա-
10 մանակն էլ արդէն անցած լինելով, Պօղոսը խրատ
էր տալիս, Նորանց ասելով․ Ով մարդիկ, տես-
նում եմ որ այս նաւարկութիւնը նեղութիւնով
եւ շատ վնասով է լինելու, ոչ թէ միայն բեռ-
11 նին եւ նաւին, այլ մեր անձներին էլ։ Բայց հար-
իւրապետը նաւապետին եւ նաւավարին աւելի
էր ականջ դնում քան թէ Պօղոսի խօսքերին։
12 Որովհետեւ այն նաւահանգիստն անյարմար էր
երեւում ձմեռն անցկացնելու համար, շատերը
խորհեցին որ այն տեղից գնան․ որ ձմեռն մնա-
լու համար դուցէ կարողանան Փիւնիկէն հաս-
նել՝ Կրէտացոց այն նաւահանգիստն որ դէպի
արեւմտեան հարաւի կողմը եւ դէպի արեւմըտ-
13 եան հիւսիսն էր նայում։ Եւ երբոր հարաւի քա-
մին փչեց, կարծում էին թէ իրանց նպատակին
կ'հասնեն․ եւ ճանապարհ ընկած անցնում էին
14 Կրետէի մօտովը։ Եւ շատ ժամանակ չէր անցել՝
որ նորա վերայ մի մրրկալից հողմ ընկաւ, որ
15 Եւրակլիդոն էր կոչվում։ Եւ երբոր նաւը բըռ-
նուեցաւ՝ եւ հողմի դէմ չկարողացաւ դիմանալ,
16 բաց ընկած գնում եւ գալիս էինք։ Եւ դիմելով
մի կղզու՝ որ Կղօդա էր կոչվում, հազիւ կարո-
17 ղացանք մակոյկը բռնել։ Որն առնելով օգնու-
թեան գործածեցին եւ նաւը տակից կապեցին,
եւ վախելով՝ որ յորձանուտն չընկնեն, առա-
գաստը իջեցրին, եւ այնպէս գնում եւ գալիս
18 էին։ Եւ երբոր մենք շատ նեղութիւն էինք քա-
շում, հետեւեալ օրը իրանց ծովի մէջ էին գը-

19 ցում։ Եւ երրորդ օրը մեր ձեռովը նաւի գոր-
20 ծիքը դուրս թափեցինք։ Եւ երբոր շատ օրեր՝
ոչ արեւ եւ ոչ աստղեր էին երեւում, եւ փո-
թորիկն էլ քիչ չէր որ մեզ վերայ կար, ապա
21 մեր ազատուելու բոլոր յոյսը կտրուեցաւ։ Եւ
որովհետեւ շատ օր սոված էին, այն ժամանակ
Պօղոսը նորանց մէջ կանգնած ասաց․ Ով մար-
դիկ, պէտք էր ձեզ՝ ինձ լսէիք, եւ Կրետէից
դուրս չգայիք՝ եւ այս նեղութիւնից եւ վնա-
22 սից պրծնէիք։ Եւ հիմա էլ խրատում եմ ձեզ՝
որ սրտապինդ կենաք․ վասն զի ձեզանից ոչ մէկի
անձին էլ վնաս չի լինիլ, բացի այդ նաւից։
23 Քանզի այս գիշերում երեւեցաւ ինձ այն Աս-
տուծոյ հրեշտակն՝ որինն ես եմ, եւ որին էլ
24 պաշտում եմ․ Եւ ասաց․ Մի վախենար Պօղոս․
պէտք է քեզ՝ Կայսեր առջեւ կանգնիս․ եւ ահա
Աստուած շնորհել է քեզ այդ բոլոր քեզ հետ
25 նաւորդները։ Սորա համար սրտապինդ կացէք,
ով մարդիկ․ վասն զի հաւատում եմ Աստուծոյն,
26 որ այսպէս կ'լինի ինչպէս ինձ հետ խօսեց։ Բայց
պէտք է մի կղզի ընկնինք։
27 Երբոր տասնուչորսերորդ գիշերն եղաւ՝ քանի
որ դեռ Ադրիեայի անդունդներումն տարուբեր-
վում էինք, կէս գիշերումը նաւավարները կար-
28 ծում էին՝ թէ մի ցամաքի հասած լինին։ Եւ
գնդերը գցելով քսան գիրկ խոր գտան․ եւ մի
քիչ էլ առաջ գնալով էլի գցեցին՝ եւ տասնու-
29 հինգ գիրկ գտան։ Եւ որովհետեւ վախեցան որ
մի դուցէ քարոտ տեղերի մէջ ընկնին․ յետի կող-
մից չորս խարիսխ գցեցին եւ սպասում էին
30 լուսանալուն։ Բայց երբոր նաւավարներն ուզում
էին՝ որ նաւից փախչեն եւ մակոյկը իջեցրին

ծովը. այն պատճառանքով՝ իբր թէ առջևի
31 կողմիցն էլ պիտի խարիսխ գցեն. Պօղոսը հար-
իւրապետին և զինուորներին ասաց. Եթէ դո-
րանք նաւումը չմնան, դուք չէք կարող ապրել։
32 Այն ժամանակ զինուորները մակոյկի չուանները
33 կտրեցին՝ և նորան դէն գցեցին։ Եւ երբոր ու-
զում էր առաւօտ լինել, Պօղոսը ամենին աղա-
չում էր՝ որ կերակուր ուտեն, ասելով. Այսօր
տասնուչորսերորդ օրն է՝ որ դուք սպասելով՝
34 անօթի էք մնացել, և մի բան չէք կերել։ Նո-
րա համար աղաչում եմ ձեզ որ կերակուր ու-
տէք, քանզի սա ձեր ազատութեան համար է.
վասնզի ձեզանից մէկի գլխից մի մազ չի ընկ-
35 նիլ։ Եւ սա ասելով, հաց առաւ ամենքի առջև
Աստուածանից գոհացաւ, կտրեց և սկսեց ու-
36 տել։ Եւ ամենքը քաջալերուեցան, և իրանք
37 էլ կերակուր առին։ Եւ նաւի մէջ ամէնքս եր-
կու հարիւր եօթանասուն և վեց հոգի էինք։
38 Երբոր այն կերակրովը կշտացան, նաւը թե-
թևացրին՝ և ցորենը ծովը թափեցին։
39 Եւ երբոր առաւօտ եղաւ՝ երկիրը չէին ճանա-
չում, բայց մի ծոց էին տեսնում՝ որ ծովեզր
էր. և մտածում էին որ եթէ հնար լինի, նաւն
40 այն տեղ պրծացնեն։ Եւ խարիսխները վեր առ-
նելով ծովը գցեցին. ղեկերի կապերը թուլացրին.
և առագաստը վեր առին քամուն տուին դէպի
41 ծովի եզրի կողմը։ Եւ մի տեղ ընկան՝ որ երկու
կողմից ծով ունէր. և նաւը նստեցրին. և
նաւի առջևի կողմը խրուած անշարժ մնաց,
և յետի կողմն ալիքների սաստկութիւնից
42 քանդվում էր։ Եւ զինուորները խորհուրդ
էին արել՝ որ կապեալներին սպանեն, մի՛ գուցէ

43 մէկը լողալ փախչի։ Բայց հարիւրապետը կամե-
նալով Պօղոսին ապրեցնել, նորանց այն խոր-
հուրդից արգելեց. և հրամայեց որ՝ լող տալ կա-
րողացողներն առաջ ընկնեին և դուրս գնան ցա-
44 մաքը։ Եւ մնացեալներն էլ ոմը տախտակներով
և ոմը նաւի ուրիշ բաներով. և այնպէս եղաւ
որ ամենքը պրծան դուրս եկան ցամաքը։

ԳԼ. ԻԸ

1 Եւ երբոր ազատուեցանք, այն ժամանակ գի-
տացինք՝ որ այն կղզու անունը Մելիտէ էր. բայց
բարբարոսները ոչ սակաւ մարդասիրութիւն ցոյց
2 տուին մեզ։ Վասն զի կրակ վառեցին և մեզ ա-
մենքիս ընդունեցին մեր վերայ եկած անձրևի և
3 սաստիկ ցրտի համար։ Եւ Պօղոսը՝ երբոր շատ խռիւ
էր հաւաքել և կրակի վերայ էր դնում, տա-
քութիւնից մի իժ դուրս եկաւ և նորա ձեռի-
4 ցը բռնեց։ Եւ երբոր բարբարոսները տեսան գա-
զանը նորա ձեռիցը կախուած, իրար ասում էին.
այս մարդն անպատճառ մարդասպան է, որ ծո-
վիցը ազատուելուց յետոյ արդար իրաւունքը չը
5 թողեց որ ապրի։ Եւ նա այն գազանը կրակին
մէջ թափ տուաւ. և նորան ոչինչ վնաս չե-
6 ղաւ։ Իսկ նորանք սպասում էին, թէ կամ կ'ու-
ռենայ կամ յանկարծակի մեռած վայր կ'ընկնի.
և երբոր շատ սպասեցին, և տեսան որ վնաս
չեղաւ նորան, իրանց խօսքը դարձրին, և աս-
7 ում էին. թէ Սա մի աստուած է։ Եւ այն տեղի
չորս կողմովը կային այն կղզու գլխաւորի գիւ-
ղերը, որի անունը Պոպլիոս էր. որ մեզ երեք
8 օր իրան մօտ առաւ և սիրով ընդունեց։ Եւ ե-

ղաւ որ Պօպլիոսի հայրը ջերմով եւ թանչքով
հիւանդացած պառկած էր. Պօղոսը նորա մօտ
մտաւ՝ եւ աղօթք արաւ, եւ ձեռը նորա վերայ
9 դրաւ, եւ նորան բժշկեց: Եւ երբոր այս եղաւ,
ուրիշ հիւանդներ էլ որ այն կղզումը կային, գա-
10 լիս էին եւ բժշկվում: Որոնք շատ պատւով էլ
պատուեցին մեզ. եւ երբոր գնացինք, ինչ որ
պէտք էր տուին:

11 Եւ երեք ամսից յետոյ վեր ելանք մի Ա-
ղէքսանդրացի նաւ, որ ձմեռը այն կղզումն
էր անցկացրել եւ Դիոսկուրացոց նշանն ու-
12 նէր: Եւ իջանք Սիրակուսա, եւ երեք օր այն
13 տեղ մնացինք: Այն տեղից գնացինք հասանք
Հռեգիոն. եւ մէկ օրից յետոյ երբոր հարաւի քա-
14 մին փչեց, երկրորդ օրը եկանք Պոտիոլոս: Ուր
եղբայրներ էլ գտանք, որոնք աղաչեցին որ եօթն
օր այն տեղ մնանք. եւ այսպէս եկանք Հռոմ:
15 Եւ երբոր այն տեղից եղբայրները մեր մասին
լսեցին, մեր առաջը դուրս եկան մինչեւ Ապփի-
ոսի վաճառանոցը եւ Երեք խանութները. Պօ-
ղոսն որ նորանց տեսաւ, Աստուածանից գոհա-
ցաւ եւ քաջութիւն առաւ:

16 Եւ երբոր մտանք Հռոմ հարիւրապետը կապ-
եալները զօրապետին յանձնեց. եւ Պօղոսին հը-
րաման եղաւ որ իր պահապան զինուորի հետ
17 առանձին կենայ: Եւ երեք օրից յետոյ եղաւ որ
Պօղոսը Հրէից գլխաւորներին կանչեց. եւ երբոր
եկան, նորանց ասաց. Մարդիկ եղբարք, ես ժո-
ղովրդի կամ հայրենական կրօնքի հակառակ մի
բան չգործած, Երուսաղէմից կապուած մատ-
18 նուեցայ Հռոմայեցոց ձեռքը: Որոնք ինձ դատե-
լով կամեցան թող տալ, վասն զի ինձանում

19 մեռնելու ոչինչ յանցանք չկար: Բայց երբոր Հը-
րէաները հակառակում էին, ստիպուեցայ դէպի
կայսրը բողոքել. ոչ թէ իբր իմ ազգիցը մի չա-
20 րախօսելու բան ունէի: Եւ այս պատճառի հա-
մար աղաչեցի ձեզ հիմա որ տեսնեմ եւ խօսեմ,
վասն զի Իսրայէլի յուսոյն համար եմ ես այս
21 շղթայովը կապուած: Նորանք էլ ասացին նորան.
Մենք քեզ համար Հրէաստանից ոչ թուղթ ենք
առացել՝ եւ ոչ էլ եղբայրներից մէկը եկաւ պատ-
22 մեց՝ կամ քեզ համար մի չար բան խօսեց: Բայց
կ'բաղձայինք քեզանից լսել թէ ինչ ես խոր-
հում. որովհետեւ այդ հերձուածի համար մեզ
յայտնի է, որ ամեն տեղ դորա դէմ են խօսում:
23 Երբոր նորա հետ մէկ օր որոշել էին, շատ մար-
դիկ եկան նորա մօտ այն հիւրանոցը, որոնց Ա-
ստուծոյ արքայութիւնը վկայութիւնով պատմում
էր, եւ Յիսուսին համար նորանց համոզում էր
Մօսէսի օրէնքիցն եւ մարգարէներիցն առաւօ-
24 տանից մինչեւ իրիկունը: Եւ ոմանք խօսքերին
համոզվում էին, իսկ ոմանք չէին հաւատում:
25 Եւ իրար հետ չմիաբանուած արձակուեցան, երբ-
որ Պօղոսը այս մէկ խօսքն ասաց. թէ Սուրբ Հո-
գին Եսայի մարգարէի ձեռովը մեր հարանց հետ
26 լաւ խօսեց, Եւ ասաց. Գնա ժողովրդի մօտ եւ
ասա. Դուք լսելով կ'լսէք եւ չէք իմանալ. եւ
27 տեսնելով կ'տեսնէք եւ չէք տեսնել: Վասն զի
այս ժողովրդի սիրտը թանձրացաւ, եւ իրանց ա-
կանջներովը ծանր լսեցին, եւ իրանց աչքերը
խփեցին, որ մի գուցէ աչքով տեսնեն եւ ա-
կանջներովը լսեն, եւ սրտով իմանան եւ ետ
28 դառնան, եւ ես բժշկեմ նորանց: Եւ հիմա յայտ-
նի լինի ձեզ, որ Աստուծոյ փրկութիւնն ուղար-

կուեցաւ հեթանոսներին, եւ նորանք կ'լսեն ։
29 Եւ երբոր նա այս ասաց․ Հրէաները դուրս գը-
նացին նորանից․ եւ իրանց մէջ շատ վիճաբա-
նութիւն ունէին ։
30 Եւ Պօղոսը ամբողջ երկու տարի, իր վարձքա-
31 վըն այն տեղ մնաց․ Եւ ամեն իրան մօտ եկող-
32 ներին ընդունում էր․ Աստուծոյ արքայութիւնը
քարոզելով, եւ Տէր Յիսուս Քրիստոսի համար
սովորեցնելով, անխափան ամենայն համարձա-
կութեամբ ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2

1382
0028300
1382
ՀՀ Ազգային գրադարան
NL0028300
1382